22
3-85



٠٤٧

٢٧٤
٢.

02000

u 8.

191-ԱԶ

№ 375/5.

272

ԳԻՐՔ
Անուանեալ
ԿՇԻՌ ԺԱՄԱՆԱԿԻ։

Ցորում ցուցանի զանազանութիւն
'ի մէջ. ժամանակաւորին, և յաւիտենականին :

Արարեալ 'ի Յովհաննու Եւսեբիոսէ Ներիմբերգեանց 'ի միաբանութենէ յիսեանց :

Թարգմանեալ յիտալական լեզուէ 'ի
հայ բարբառ 'ի հօր Զաքարիայ
վարդապետէ ախնեցւոյ յաշակերտէ Մխիթարայ Մեծի
Աբբայի :

'Ի հայրապետութեան տն Ղազարու Հայոց կաթուղիկոսի :
Յամի տն ·1750 : Իսկ 'ի թուին
Հայոց · ՌՃՂԹ :

'Ի ՎԵՆԵՏԻԿ

'Ի տպարանի Բորտոլեան Սեբաստիանոսի
Հրամանաւ մեծաւորաց :

1354-50

Առ բանասէր ընթերցօղս։

Ո՛ր օրինակ մարդն կոչեցաւ 'ի փիլիսոփայից փոքր աշխարհ յաղագս կերպի՛ ինչ երևելոյ 'ի նմա հաւաքելութեանց էից, որք 'ի մեծի աշխարհի. նոյնգունակ մարթ է կոչել զգիրս զայս փոքր գրատուն յաղագս բովանդակելոյ 'ի սմա կարճ 'ի կարճոյ երկարաձիգ բանից վարդապետաց, ճոռոմաբան ճառից իմաստասիրաց, լայնատարածում խօսից վիպասանաց, և գեղեցիկ ասացուածոց առակաբանաց։ Ի սմա գտցես ճառս զօրաւորս 'ի վարժութիւն հոգևորական կենաց ըստ երից ճանապարհացն՝ ըստ մաքրողականին, ըստ լուսաւորչականին, և ըստ միաւորչականին։ Եւ յոյս իմ հաստատեալ է 'ի տր̅, թէ որ զսա ընթեռնու, 'ի սէր սորա բորբոքի, սմա գիրկս արկանէ, և 'ի գեղորայատեալ կայ միայն աչօք։ Զի լի է սա ընտիր օրինակօք, հեշտական նմանութեամբք, և պէսպէս վարդապետութեամբք ըստ անուանի հեղինակաց, ըստ երևելի արանց, և ըստ տեղեաց տեղեաց ա̅ծային գրոց։ 'Ի սմա վճռեալք զօրաւոր խորհրդովք, և բանք իմաստասիրական կարգօք, և յորդորականք ընտիր բանիւք։ Եւ սա կերակուր քաղցր և խորտիկ համադամ, որ թէ ուտես անյագութբ̅, և սաստիկ տենչմամբ, ոչ կրեսցես զամօթ, այլ առցես անուշ շնոր-

'ւոյ անուանք, և զուարճասցիս 'ի փափկութե նորա, և ոչ ձանձրասցիս: Ապաքէն ընկա՛լ զգիրսդ, և պարծի՛ր ընդ քեզ, ուր և երթասցես սա ոչ եղիցի քեզ խափան գործոց, և ոչ զբաղանս անոպէ, ոչ ելեան ինչ ծախք, և ոչ վատնումն դրամոց, և ոչ կորուստ ժամանակի: Համարեաջի՛ր զսա իբրև զմի 'ի վերարկուացդ, և իբրև զքսակ [illegible], ուստի հանցես երբեմն քեզ և այլոց նիւթ բարի խորհրդոց: Եղիցի սա քեզ իբրև ընկեր առաքինի՝ և սիրելի: Սովաւ ուսուսցես զքրիստոնէական վարդապետութե․ սա զնա քարոզեսցես առաքելաբար․ և սովաւ վարժեսցես՝ զորս սիրեն լինել առաւել բարիս: Սա կշիռ արդար, զոր հրամայէ Տէրն ունել մեզ, զի զանցաւորութի ժամանակաւորիս, և զանեղծութի յաւիտենականին յայտ առնէ: Սա նաւապետ ուղիղ ունի առաջի յայտնել քեզ զերկնային ճանապարհն, ընդ որս հարկ է անցանել անվրէպ, զի խութեն ասեմ զերկնոյ յաւիտենականացն՝ զերանութեն և զթշուառութէ: Զորս թէ [illegible] զմտաւ ածցես կենդանի հանապազորդ, լինիցիս երջանիկ աստ 'ի կեանս՝ և անդ 'ի հանդերձելումն: Անդ՝ զի ժառանգեսցես զած․ և սաստ՝ զի ոչ վրիպեսցէ քեզ Ծ: Զի՛ և յերկարեցից զբանս իմ առաւելեայ գործոյս․ զի հարկաւոր էր մեզ բանիւ զբովանդակն ասել, յաւելով ևէթ զանուն յօրինողի գրոյս: Քանզի բաւական է ասել, թէ զսա յօրինեաց հայրն յովհաննէս եւսեբիոս, յայտ արարեալ, թէ զորինչ գրեաց նա, գրեաց միշտ զբանս գերիմաստս, և զօրինակս վարուց սրբութե: Այդ համարձակիմ ասել, թէ զօրօրինակ մշտնջենաւո-

րարութեն է իբրև զծով, յոր հոսեալ հեղեղանէին առ գետք ժամանակաց ․ Նոյնպէս ՚ի յայս մատեան, որ ճառէ յղգ̄ս ժամանակի և մշտնջենաւորութե, ժողովեալ են բովանդակքն յառաջնէ անտի լծէ առ մեզ, և գեղեցիկ և բազմածին իմաստք գրոցն այլոց ։ Ջանջի՛ր այդպայ առնէ զօգուտ անձինք, որում և ես ցանկացայ փափաքանօք գործակից լինել Նախանձայոյլ եմ քրիստոնէութե ընկերերք իմոյ, և փառաց Տ̄ն Ա̄յ, որում ընծայ մատուցանեմ զդոյն վաստակջեռայս ՚ի թարգմանութե սորա, յաւուր անկաշառ վարձուցն հատուցման, ՚ի ժա̄ յա̄ ՚ի փր̄ մեր․ որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն ։



ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Յաղագս զանազանութեան 'ի մէջ ժամանակաւորին եւ յաւիտենականին:

ԳԼՈՒԽ Ա:

ԱՌ ԲԱՐՒՈՔ ՎԱՐԵԼՈՅ զերան հարկէ զի կանխեսցէ յառաջագոյն ուղիղ վարկումն նր̃. եւ քան զվարկումն ճանաչումն նր̃. որ 'ի յերկրաւոր ծէս այնչափ պակասաւոր եւ նսեմ է, մինչեւ ոչ ձգել նմա 'ի գաւա՛ռ անդր երկնային եւ յաւ՛իտենական. վ̃ն որոյ ստեղծաք: Վ̃ն ոչ ինչ զարմանք են, թէ լինելով յաւ՛իտենականացն հեռաձիգ 'ի մարդկայինն մտաց, տակա՛ւ ճանաչելեացն 'ի մէնջ, որովհետև տեսանեմք, և ձեռօք իսկ շօշափեմք, թէ նաև զժամանակաւորացս, յորս կենցաղիմք, ունիմք զճանաչումն աղջամղջին։ Զի՞արդ հնար է մեզ իմանալ զիրս հանդերձեալ կենցաղին. որք ոչ ճանաչեմք և զայնս, յորս բնակեալ եմք։ Մեծութիւնք. հեշտութիւնք. պատիւ և ամբարիք կենցաղիս վասն այն տուփս նոքք խնդրին յորդւոց մարդկանէ, զի ոչ ճանաչին։ Ուստի իրաւամբք ասաց առաքեալն Պետրոս ցսրբն Կղէմէս Հռոմայեցին յուսուցանելն զնա. թէ կենցաղս է իբրև զտուն ինչ լի ծխով։ Զի որպէս որ բնակէ՝ ի ծխալից տան, չէ նմա հնար համարձակ տեսանել, համարձակ նկատել զոր ՚ի ներքս, զոր արտաքս՝ խափան գոլով ծխոյն աչացն տեսութեան. սոյնպէս և նոքա որք են յկենցաղիս, ոչ տեսանեն զորս են յկենցաղի. և ոչ զորս են արտաքոյ կենցաղի. և ոչ համարին մեծ ինչ, ոչ զյաւիտենին զանչափութիւն, և ոչ զժամանակաւորին զանարգութիւն, միապէս անդէտ լեալ երկնայնոց և երկրայնոց։ Եւ յաղագս պակասութեան ճանաչմանն փոփոխեն զկշիռն վարկման իւրեանց կշռելով զյաւիտենականս կշռով ժամանակաւորաց, և առնելով զերկնայնոց զհաշիւն զայն, զոր արժան էր առնել զանցաւոր և զկորստական իրաց։ Եւ այս է մոլորութիւն մեծ յոյժ, զոր քաջ ծանոյց երանելին Գրիգորիոս, յորժամ ողբալով ասաց, աքսոր կենցաղոյս. համարեալ լինի ընէկ հայրենի. խաւա՛ր պատիր իմաստութեն մարդկան՝ իբրև զլոյս անաղարտելի. և ընթացք պանդխտութեն՝ հաստատուն վայր բնակութե: Եւ՛ վնկ չարիքն իբրև բարիք, և բարիքն իբրև չարիք ձևացեալ կեղծին: Վա՜ այսպիսի շփոթութե մարդկային դատաստանի և մոլաց աղաչէր դա՛ւիթ զո՛ր տալ նմա ուսուցիչ, յորմէ հրահանգեալ ուսցի. թէ որք իցեն ստուգի՛ ճշմարիտ բարիք, յասելն անդ իւրում. թէ. ո՛ ցուցցէ մեզ զբարութիւն: վնկ ասէ այսպ, զի ոչ եգիտ զոք, որ ճանաչէ զնա, և զբարիսն, որք են 'ի նմա, այլ և ոչ զայն, որ է 'ի ձեռս իւր, նմանեալ ամենեցին որդւոցն իէլի, որք թէպէտ ունէին առաջի աչաց, և 'ի ձեռս իւրեանց զմանանայն. սակայն ոչ ճանաչէին զնա, ուստի և ասէին, զի՞նչ է այս, զի՞նչ է այս: Բայց զինչ: նաև խոյզ և խնդիրս այս պակաս է առ 'ի մէնջ: Իցէ՞ ոք երբէք որ խնդրիցէ կամ հարցցէ, թէ զինչ են մեծութիքս. որոց վն գնեն մարդիկ զանձինս յանբաւ վտանգս մահու: զինչ են բարձր աստիճանք և պաշտօնք, որոց վասն սիրտք մարդկան հերձեալ ճարճատին յամբարհաւաճութէ, և 'ի նախանձուէ: զինչ են հեշտութիք, որոց վասն կործանի առողջութիւն և կարճի կեանքն:

Զինչ են բարիք ձիս․ որք աստ միայն վայելեալ լինին, և 'ի մոռանել յայն աշխարհ չքացեալ սպառելոց են, որպէս սպառեալ հառաչ մանանայն 'ի մոռանել որդւոցն Իսրայէլի յերկիրն աւետեաց : Վասն այսորիկ յիրաւի քն̃ փրկիչն մեր կոչեաց զմ̃նայն 'ի Գիր․ յայտնութէ․ Բ․ ԺԷ։ մանանայ թագուցեալ․ զի առձեռն ունելով զայն որդիքն Իսրայէլի՝ ոչ ճանաչէին զնա : Ըստ այսմ օրինակի թագուցեալ կան 'ի հեշտալիրաց իրք կենցաղոյս․ զի թէպէտ և ձեռօք շօշափեն զայնս, այլ ոչ ճանաչեն և շփոթեն զգին նոցա, զի առնեն վս̃ ժամանակաւորաց զայն, զոր պարտ էին առնել վս̃ յաւիտենականաց․ և արհամարհեն զյաւիտենականս վս̃ մեծ ինչ համարելոյ զժամանակաւորս, զորս արժան էր անարգել:

2․ Զարթիցեն մահկանացուք, բացցեն զաչս, տեսցեն զզանազանութիւն, որ է 'ի մէջ ժամանակաւորին և յաւիտենականին․ զի մարթասցին տալ իւրաքանչիւր իրաց զիւրեանց արդար կշիռն, այսինքն արհամարհելով զայն ամ̃, որ վերջանայ ընդ ժամանակին, և մեծ համարելով զայն, որ պահի, և կայ մնայ 'ի յաւիտեան : Եւ՞ պարտ է խնդրել զմշտնջենաւորութիւն 'ի ժամանակի աստի կենացս․ զի ժամանակաւորքս լինին մեզ առիթ տանելոյ զյաւիտենականս , զի առանց ճանաչման սոցա չէ հնար տանել զնոսա: Ս՝ատանայն, որ առաւաւ որդւոցն իսրայէլի. մինչդեռ պանդխտէին յանապատի, մինչև 'ի հասանել նց̃ յերկիրն աւետեաց , 'ի մէջ բազմաց խորհրդաւոր նշանակութեց̃ իւրոց , ունէր և զայս. զի էր օրինակ բարեաց սատի կենաց. յորում պանդխտիմք՝ մինչև հասցուք յերկիրն աւետեաց յաւիտենական երանութե̃ : Վս̃ այսորիկ վաղվաղակի նեխեալ լուծանիւր, որպէս և պատահի ա̃մ իւրաց աշխարհիս . և միայն ոչ նեխէր և հալէր, որ ժողովեալ լինէր առ 'ի պահել վս̃ աւուր շաբաթու , որ է օրինակ փառացն յաւիտենից : Քանզի վախճանն ; որոյ սակս ժողովեալ լինէր , կարող էր առնել զնա յապականացուէ անտի անա̃կան և մշտնջենաւոր . որպէս նշանակեաց հնագոյն վարդապետն Բաղզովինոս Ներհուն թարգմանն ա̃ծաշունչ գրոց : Մեծ է, և յոյժ մեծ ակնակառոյց լեալ յառիլ 'ի բարձունս երկնից . և յանանց բարիս, որպէս զի և կիրառութե̃ ժամանակաւոր և կորստական իրացս կարող լիցի տալ մեզ տանել զյաւիտենականսն. և փոխարկել զփոքրն 'ի մեծ , զփոփոխելն յանփոփոխ և 'ի հաստատունն, զմահկանացուն յանմահ, և յանվախճան :

3. Ոմանք 'ի փիլիսոփայից, որք քաջ ծանեան զիրս կենցաղոյ՝ առանց հայելոյ 'ի յաճախումնականն, գտին 'ի նուազագոյն պակասութիւնս, զորս իմաստասէր կայսրն Անտոնինոս օրեղիոս բովանդակեալ համառօտեաց յերիս, այսինքն, թէ են փոքրիկք, փոփոխականք, և ապականացուք: Եւ ամենայն հանգամանքս այսոքիկ կարեն տեսանիլ և 'ի մանկանայն. Քանզի փոքրկութիւն նորա էր այնպիսի, մինչև ըստ վկայելոյ ածաշունչ գրոց, էր մանր իբրև զսերմն գնձոյ աղացեալ յանկանի: Անկայունութիւն նորին, և փոփոխականութիւն էր յոյժ յայտնի. զի էր 'ի բնմս ոմանց քաղցր և պալարուտ. և ոմանց դառն և վոխտ. և էր այնչափ կարճատև, մինչև յետ աւուր միոյ անցանելոյ, եռայր 'ի նմա որդն: 'ի վերայ երից պարագայից այսոցիկ յաւելեալ լինէր և աշխատութիւն մեծ առ 'ի վայելել զայն: Վասնզի պարտ էր յառաջ քան զուտելն՝ լուալ զայն յանկանի, և առնել փոշի մանրամաղ. եփել զայն 'ի պուտան. և առնել զայլ աշխատաւոր հոգս ընտրելաւ. Նման ամենայն բարեաց կենցաղոյս, որք առանց մեծամեծ վշտաց և չարչարանաց ոչ կարեն ստացեալ, և վայելեալ լինիլ հանդերձ ամենայն պակասութեամբ իւրեանց: Բաց յայսմանէ ոչ վայելէին ամենեքեան զխակու-

թի

ւթե̃ մանանայն, զի ոչ գտանէին 'ի նմա զհամն զայն, որում յաճախ տենչային. քանզի քիմք մեղաւորաց վրիպեալ լինէին 'ի քաղցրութե̃ անալի նորին: Այսպէս ըստ ամ̃ի և մեք 'ի բաց բառնամք մոլութե̃ մերով զհամն 'ի բնական իրաց, որպէս հանդերձեալ եմք ասել յիւրում տեղւոջ: Ճշմարիտ է, թէ ունէր մանանայն զտեսիլ պայծառ և փայլուն. զի որպէս ասեն եօթանասունն թարգմանիչքն, նման էր մաքուր և թափանցանց սառին: Այսպէս են և բարիք աշխարհիս, զի են պայծառք, և գեղեցկատեսիլք. բայց բեկանաւորք առաւել քան զապակի. են սակաւաւոր, անկայուն, ապականացու. կարճ տական. և մահկանացու. և միայն որպէս աղօտ իմն լոյս պատիր, որք զաչս մեր խաբեն. և խնդրեալք լինին 'ի մէնջ իբրև բարիք մեծամեծք, և մշտնջենաւորք:

4. 'Ի բաց թողցուք զտեսիլն կեղծեալ, և զերևոյթն արտաքին, և նկատեսցուք յէութե̃ն և 'ի ճշմարտութե̃ն իրաց. և գացուք. զի ամ̃ ժամկաւոր բարիքս են յոյժ նուաստ, և փոքրիկ: իսկ յաւիտենականքն մեծ, և հաստատուն: Ժամկաւորքս սուղ և անցաւոր. իսկ յաւիտենականքն յարմնից, անանց, և մշտնջենաւոր: Ուստի ասէ սբ̃ն Գրիգորիոս. (Գիրք. Ա̄. Եպ. ԳԼ. ԺԲ̄.) Աշ

չափ է, որում չիք եզր և սահման. և փոքր է, որում վաղ հասանէ վախճան :

5. Ո՜վ որոյ սկիզբն արասցուք բառնալ 'ի բաց զվարագոյրս զայս, և յայտ առնել զհեռաւորութիւն մեծ, որ է 'ի մէջ բարեացն երկնի, և երկրի, ըստ այնմ՝ որ մինն է յաւիտենկն. և միւսն ժամանակաւոր : Այս փաղփաղակի խօսեսցուք զանարգութէ ժմկաւորաց. և զազնուութէ յաւիտենկնաց : Զի ոպ ասէ ոմն 'ի փիլիսոփայից, չիք քան զլոյս յայտնագոյն, և չիք քան զնա խրթնագոյն : Եւ այս կարէ ասիլ նաև զայլոց իրաց, որք թէպէտ համարել լինին իբրև իմն լուսապայծառ, այլ սակայն ոչ կարեն իմացեալ լինիլ : 'Ի մէջ որոց ոչ նուազ մթին են ժմկն և յաւիտենկնութիւն : Եւ վն փոյթ յանձին կալցուք առաւել ևս պարզաբանել, և յայտնի առնել զսոսա նպաստիւք լուսոյն հաւատոյ. և վարդապետութե սրբոց. և 'ի ձեռն սկզբանց իմաստասիրաց :

ԳԼՈՒԽ. Բ:

Թէ որչափ զօրաւոր իցէ մտածութիւն յաւիտենականութե̅ վ̅ս փոխելոյ զմարդ ՚ի լաւ անդր :

Սուրբն Օգոստինոս կոչէ զմտածութիւն յաւիտենականութե̅. մեծ խորհուրդ. (՚Ի Վ̄ր, Հզ. սաղմոսին :) Վ̅զի յիշատակն յաւիտենականութե̅ տայ մեզ զմեծ ուրախութի̅. մեղաւորաց զմեծ զարհուրանս, և երկաքանչիւրոցն զմեծ օգտութի̅ : Տայ գործել զմեծամեծս. վ̅զի տայ արհամարհել զընչսն իբրև ոչի̅ : Եւ արդ՝ կամիմ սկիզբն առնել լուսովս այսուիկ բանալ զգաղտնի նուազութե̅, խաբէութե̅. և անարգութե̅ ժամանակաւորաց : Եւ ուժգին տպաւորել զխոկումն յաւիտենական բարեաց, իբրև այն, յոր ուսեալք ՚ի դաւթայ պարտիմք յառել զաչս խոկման մերոյ : Քանզի սա եղև զնա սարսափմամբ, մինչդեռ ՚ի մեղս էր. իսկ իբրև եղև ա̅պ. զօրացոյց զնա զարդանալ միշտ ՚ի սրբութե̅. և յայնմ̅հետէ եհան նա ՚ի խոկմանէ անտի յաւիտենանականութեան զանպատմելի օգուտս անձին իւրոյ : Վասնզի ոչ միայն բազում անգամ կրկնէ զյիշատակ նորա 'ի սաղմոսս իւր, որ յաւէտ լուեալ լինին բանքս այսոքիկ, յամենայն ժամ, կամ յաւիտեան · և կամ 'ի յաւիտեանս յաւիտենից · այլ նաև 'ի վերնագիրսն · և յարձանագիրսն: Քանզի չիք ինչ վերնագիր առաւել յարմարագոյն նմա, քան զայս · 'ի հաստատած : Վասնզի նա գրէր համդերձ խոկմամբ յաւիտենականութեան, որ կատարածի աստի կենաց զհետ գայ :

2. Արդ՝ զայս յաւիտենականութիւն խոկայր մարգարէն 'ի տուէ · զսա զմտաւ ածէր 'ի գիշերի : Սա ստիպէր զնա աղաղակել յերկինս : սա տայր նմա կարդալ առ Աստուած : սա առնէր զնա համր, և կալ լռիկ ընդ մարդկան : սա գրեթէ սառուցանէր զարիւն նորա, և դադարեցուցանէր զզարկ բազկին : սա դնէր նմա զօշինդր դառնութեան 'ի մէջ հեշտալի քաղցրութեան կենցաղոյս: սա տայր նմա մտանել յանձն իւր առ 'ի առնել զնրբաքննին և զսաստիկ դատաստան խղճի մտաց իւրոց : այլև սա էած զնա 'ի զարմանալի իմն փոփոխութիւն վարուց · և 'ի նորասքանչ իմն եռանդն ծառայելոյ Աստուծոյ : Եւ ամենայն ներգործութիւնքս ծնեալք 'ի յիշատակէ յաւիտենականութեան երևին 'ի սաղմոսն · Հզքուր 'ի մէջ այլոց բանիցն ասէ · Ժամա-

նեցին պահոց աչք իմ . խռովեցայ . և ոչ խօսեցայ : Եւ ապա 'ի վր̄ ածէ վաղվաղակի զպատճառն, և ասէ . Խորհեցայ զաւուրս զառաջինս . և զամս յաւիտենից յիշեցի : Այս խոկումն պատճառ եղև ջերմեռանդն հսկմանց և տքնութեց նր̄ . քանզի զայն յառաջ քան զծագել արևուն ածէր զմտաւ . և յետ մտանելոյ նր̄ կրկնէր ը̄ ժամս ժամս զնոյն, զոր հուրեալ 'ի յաւիտենականութէ այնչափ, մինչզի ոչ̄ ինքն ասէ . տառապիւր յիս հոգի իմ : Որ և ահաբեկ լինէր 'ի խոկալն զերկուս զայսոսիկ . կմ̄ մտանիլ 'ի հուր գեհենի 'ի յաւիտեանս . և կմ̄ վայելել յերանութեն 'ի յան վախճան յաւիտեանս : Եւ չէ իսկ զարմանք թէ խոկմամբք այսուիկ յաւիտենականութե̄ զարհուրեալ սաստանի այսպիսի ոմն որ թագաւոր . քանզի և մարգարէն ամբակում ասաց : Բլուրք տիեզերաց խոնարհեցան յերեւաց գնացիցն յաւիտենականութեան նր̄ (Ամբակ. գ. զ.) Սր̄ պատանին Յովասափ յորժամ զմտաւ էած զյաւիտենականութիւն դժոխոց, և արքայութե̄, եկաց մնաց զարհուրեալ առանց կարող լինելոյ յառնել յանկողնոյ, իբրև հարեալ 'ի մահաբեր ինչ խօթութէ : Այլև փիլիսոփայք անհաւատք և վայրենաբարոյք, թէպէտ և նուաղ ունէին զլոյսն իմաստից . սակայն զարհուրէին 'ի նմանէ : Այնկ առ

1354-50 272

ՀԱՅԿ. ՍՍՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
Арм. ССР
им. А. Мясникяна

'ի յերեւակայել զյաւիտենականութ̃ին, 'ի ձեռս առնուլին զսոսկալի օրինակս: Քանզի ոմանք նկարագրէին զայն 'ի ձեւ արքայիկ օձին, որ է դժնեայ և առաւել սարսափելի քան զայլ օձս. որ տեսութ̃ն եւեթ ոչ միայն ահաբեկ առնէ, այլ և սպանանէ. զի չիք ինչ, որ առաւել սարսափեցուցանէ զմեզ քան զյաւիտենականութ̃ե տանջանաց:

3. Ըստ այսմ և սուրբ յօհան դամասկացին ձեւացուցանէ զմշտակայ յաւիտենականութ̃ին 'ի կերպ դժնեայ և ահագին վիշապի, որ կացեալ 'ի խորխորատ իմն մեծ, ունի բացեալ զբերան իւր, և հայի 'ի մարդիկ առ 'ի կլանել զնո̃ կենդանւոյն: Այլք ձեւացուցանէին զնա նկարելով զահարկու և ըզսարսափելի վիհ ինչ խորին, որոյ 'ի մուտսն էին քառեակ սատիճանք, մինն երկաթի, և միւսն պղնձի. երրորդն արծաթի. և չորրորդն ոսկի. յորս կային մանկունք, և խաղային պէսպէս հրճուալի իրօք, ոչ նայելով 'ի վտանգն գահավէժ լինելոյ 'ի խորխորին վիհ անդր: Այսպիսի ինչ ուրուականօք նմանուեց ստուերագրեցին զյաւիտենականութ̃ին, ոչ միայն վս̃ ցուցանելոյ զահարկութեն̃, այլ մանաւանդ զյիմարութ̃ե մարդկան, որք զուարճանան. և ծիծաղին, և խայտան 'ի վր̃ իրաց կենցաղոյս, առանց ընդ միտս ածելոյ. թէ գուցէ

գադահավէժ լինելն 'ի սանդարամետս դժոխոց ։ Բայց մարգարէն դաւ̂իթ (այլուստեք ,) խոստանայ յանուն ա̃ն , թէ նմա , որ ննջէն 'ի մէջ երկուց վիճակաց , այսինքն որ հանդարտութ̃ խորին աղօթից մտածէ զյաւ̂իտենականութի̃ արքայութե̃ ․ և զյաւ̂իտենականութե̃ դժոխոց , տու̂եալ լինին արծաթապատ թևք աղաւ̂նւոյ , որ է առաւ̂ել թեթև 'ի մէջ թևոց թռչնոց թռուցելոց ։ Նոյնպ̃ տու̂եալ լինի նմա նաև թիկնամէջ 'ի գոյն ոսկւոյ ։ Քանզի հոգևորական կեանքն ոչ միայն կայանայ յայս, թէ ոք գործեսցէ զբարին յինքենէ, այլ զի կրեսցէ և զչարիս յայլոց։ Եւ̂ զայս մեկնեաց մարգարէն օրինակաւ̂ այնց իրաց , որք համարին 'ի մարդկանէ առաւ̂ել մեծագին , ա̃է արծաթ, և ոսկի ։ Եւ̂ զի ը̃ս հասարակ կարգի առաւ̂ել դժուա̂րին է կրել զչարիս ․ քան գործել զբարիս , նոյնպէս և առաւ̂ել արդիւնաւ̂որ է կրելն , քան գործելն ․ (թէպէտ երկաքանչիւրն է̃ գերազանց իմն և սքանչելի ․) Վ̃ն այսորիկ ասաց մարգարէն , թիկնամէջ նո̃ 'ի գոյն ոսկւոյ ․ և թևքն արծաթապատ ։ Սոյնպէս և Յակոբ նահապետն համարէր զայս որպէս զբարի ինչ այնչափ մեծ , մինչզի զայն ետ յօրհնութի̃ որդւոյ իւրում իսաքարայ , ասելով ցնա ․ Իսաքար ցանկացեալ 'ի մէջ վիճակաց ․ որով ասել կամէր, թէ նա ուշադրութեան խոհականց է զերկոսին վերջին վախճանն զայնոսիկ, այ՟ զյաւիտենական երանութիւն, և զմշտնջենաւոր թշուառութիւն :

* * *

ԳԼՈՒԽ Գ:

Թէ յիշատակ յաւիտենականութեան ըստ ինքեան զօրաւորագոյն է քան զյիշատակ մահուան :

Որպէս յիշատակ երկաքանչիւրոց այսոցիկ յոյժ պիտանի և օգտակար է, սակայն յիշատակն յաւիտենականութեան առաւել զօրաւոր, հզօրագոյն. և պտղաւէտ է առ 'ի գործել զբարին : Վ՟ս նորա կուսանք պահեցին զմաքրութիւն կուսական. ճգնաւորք ետուն զանձինս 'ի խստագոյն վիշտս և 'ի ճգնութիւնս. և մարտիրոսք կրեցին զսաստիկ և զանողորմ չարչարանս զօրացեալք 'ի տանջանս իւրեանց ոչ այնչափ յերկիւղէ մահուան, որչափ 'ի մե՟ երկիւղէ յաւիտենականութեան, և 'ի սիրոյն այ՟ :

2. Անհաւատ փիլիսոփայք թէպէտ և ոչ ունէին անմահական կենաց

յետ մահուան: ոչ ունիմք մեք քրիստոնեայքս. այլ այն զօրութբ̄ յիշատակի մահուան ևեթ հրաժարէին յունայնութէ ծի. արհամարհէին զմեծութի նր̄. կարգաւորէին զգործս իւրեանց. և ուղղէին զվարս ըս̄ կանոնի բանականութե, և առաքինութե :

3. Եպիկտետոս տայր խրատ. թէ պարտ է, զի խորհուրդք մտաց լիցին զբաղեալ շուրջ զխոկմամբ մահուան. զի ասէ, Այսպէս ոչ երբէք զնուաստ ինչ խոկասցիս. և ոչ ինչ առաւելապէս ցանկասցիս : (Եպի. Գլ. իա̄:) Պղատոն ասէր. այնչափ ոք իմաստնագոյն եղիցի, որչափ ուժգնագոյնս խոկասցէ զմահուանէ : և վս̄ այսորիկ հրամայէր աշակերտաց իւրոց գնալ միշտ զճնպհ բոկ ոտիւք, նշանակելով՝ թէ 'ի ճնպհի աստի կենաց պարտ և արժան է մեզ զվախճանն, ըս̄ զմահն միշտ առաջի աչաց ունիլ : Բայց քրիստոնեայքն, որք հաւատով գիտեն զհանդերձեալ կեանսն. պարտին յաւելուլ 'ի վր̄ յիշատակի մահուան նաև զյիշատակն յաւիտենականութե : Այլ թէ որչափ օգտակարագոյն է յիշատակն յաւիտենականութե քան զյիշատակ մահուան, մարթ է տեսանել 'ի զանազանութէ, որ է 'ի մէջ ժամանակաւորին. և յաւիտենականին : Շարժումն, որ լինէր 'ի փիլի̄սոփայս 'ի յիշատակէ մահուան, էր վն̄

այսորիկ, զի համարէին, թէ մահուամբ վերջանային ամ՟ իրք աղցաւոր կենացս: Ոմանց ցանկալի էր մահն վս՟ այսորիկ, զի նովաւ վերջանային թշուառութիւնք նց՟: Արդ՝ եթէ մահն զայսքան սարսափումն պատճառէ միայն վս՟ այսորիկ, զի բառնայ զբարիս աստի կենաց որք սովոր են այլ բիւր եղանակօք պակասիլ 'ի մէնջ· և ըստ ինքեանց նաև յառաջ քան զկորնչիլ ստացողին, 'ի ներքոյ են կորստեան, և են պակասաւորք, և լի վտանգօք և անձկութե՟: և եթէ կէսք վս՟ այն ցանկային մահուան, իբր զի ազատէ 'ի ժամանակաւոր թշուառութեանց կենցաղոյս· որք թեթև իմն են:

4· Ապա ըն՟ է՛ր ոչ զօրէ շարժել զմեզ առաւել ուժգնակի յաւիտենականութիւն: որովհետև հաւատոյ առնէ մեզ զմշտնջենաւոր, և զմեծամեծ բարիս· և սպառնայ մեզ զանվախճան, և զսաստիկ չարիս:

5· Զենոն փիլիսոփայն փափաքելով ունել զզօրաւոր միջնորդ իմն վս՟ կանոնաւորելոյ զվարս իւր, և սանձելոյ զախորժակն զգայական, և պահելոյ զօրէնս առաքինութե՟, գնաց առ բադին մի խրատ առնուլ 'ի նմանէ: Եւ նա առաջի եդ նմա զյիշատակն մահուան, զի ասաց ցնա: Երթ առ մեռեալս, և հարց զնս՟· և ուսցիս 'ի նոցանէ ցնէ թէ ոչ արժանէ քեզ կանոնաւորել զվարս քո։ Քանզի տեսեալ քո, թէ մեռեալք չունին այնուհետեւ զայն, զոր երբեմն ունէին, եւ թէ ընդ կենաց նց 'ի միասին սպառեցան ամ երջանկութիւնք նց, ուսցիս առ ոչ ինչ համարիլ զնս, եւ ոչ փքանալ բնաւին նոքօք։ Վս այսր պատճառի ոմանք 'ի փիլիսոփայից ուտէին, եւ ըմպէին զանկիւք մեռելոց առ 'ի յիշել հանապազ, թէ մեռանելոց են. եւ այսպիսի սանձիւ յետս ընկրկէին զամ հեշտութն կենցաղոյս։ Նոյնպէս եւ մեծամեծ թագաւորք 'ի ձեռս առին զյիշատակ մահուան 'ի դեղթափ բարեբաստութն իւրեանց. որպէս զի բարեյաջողութն մի խանդարեսցէ զվարս նց։ Փիլիպպոս արքայն մակեդոնացւոց հրամայեաց միում 'ի սպասաւորաց իւրոց. զի յամ առաւօտու երիցս կրկնեսցէ նմ զբանս զայս։ Յիշեա Փիլիպպէ, զի մարդ ես դու, եւ մահուամբ թողլոց ես զամ ինչ։ Կայսրն Մաքսիմիանոս աւուրքն երդ՝ չորս ամօք յառաջ քան զմեռանիլն եւ շինել զտապան մի. եւ ուր եւ գնայր, կամէր ունիլ զայն ը̃ ինքեան առ 'ի լսել զանբարբառ խօսս նր, եթէ խորհեսցի, զի մեռանելոց ես, եւ թողլոց զամ ինչ։ Այլ եւ կայսերքն արեւելեան, 'ի մէջ այլոց նշանաց վեհափառութն, կրէին 'ի ձախու ձեռին իւրեանց զմատեան մի ոսկի թիթղամբ, և զայն կոչէին, անմեղութի. և լի էր այն հողով և փոշւով մն̃ օրինակաւ ցուցանելոյ զմահկանացու գոլն մարդոյ, և մն̃ նորոգելոյ 'ի միտս զվաղեմի վճիռն զայն, եթէ հող ես, և 'ի հող դառնալոց ես: Արդարև զիմաստալից խորհուրդս ունէր օրինակն այնր մատենի, զի տայր մեզ 'ի միտ առնուլ, թէ որչափ մեծ վարդապետութի է յիշատակն մահուան, և որչափ զարմանաքանչ դպրոց է առ 'ի հանել զմեզ 'ի մոլորութեց, և 'ի խաբէութեց: Խորհրդաւոր էր նաև ոսկեզինութին թիթղանց. և կրելն զմատեանն ձախու ձեռամբ, որ հուպ է առաւել սրտին. զի ցուցանէ մեզ, թէ յոյժ ազնիւ է դպրութիւս այս, որ հանէ զմեզ 'ի մոլորութեց և 'ի խաբէութեց, և թէ պարտիմք ունիլ զայն տպաւորեալ 'ի սրտի մերում: Իրաւամբք կոչիւր մատեանն այն՝ անմեղութի, քանզի ո՛չ է, որ համարձակեսցի մեղանչել, յորժամ դիտէ, թէ մեռանելոց է: Իսկ և կայսերքն եթովպիոյ եղեն ժրաջանք առ 'ի ունիլ զուսումն այսչափ օգտակար: Քանզի յաւուր՝ յորում թագիւ պսակէին, 'ի մէջ այլոց արարողութեց իւրեանց ունէին և զայս, զի տանէին զանօթ մի լի հողով, և զգանկ մեռելոյ, Ուստի 'ի սկզբանէ անտի 'ի միտ առնուլին, եթէ վերջանալոց է թագաւորութին իւրեանց : Եւ՛ միանգամայն առացից, համաձայն գտան յոյժ ամ փիլիսոփայք, թէ բովանդակ իմաստասիրութին ոչ այլ ինչ է, եթէ ոչ խոկումն մահուան :

6. Իսկ արդ՝ զառաւել մեծագոյն նիւթ փիլիսոփայութե կարկառէ իրաւամբք յաւիտենականութին, քան թէ մահն : Քանզի առաւել սարսափելի է մշտնջենաւորութին պատժոց և տանջանաց դժոխոց՝ քան թէ մեծամեծ թագաւորութեանց վաղվաղակի վերջանալն: Առաւել զարհուրելի է չարեաց և թշուառութեանց անվախճան տևելն . քան բարեաց կենցաղոյս ընդ սակաւուց անցանելն : Առաւել զարմանալի և սքանչելի է անմահ գոլն հոգւոյ մերոյ, քան վաղվաղակի վերջանալն մահուամբ մերոյս մարմնոյ : Վս այսորիկ քրիստոնեայքն, մանաւանդ նք, որք 'ի խնդիր են կատարելութե, առաւել պարտին դնել զջան խոկալ զյաւիտենականութին . քան թէ երկնչիլ 'ի մահուանէ: Պարտ և արժան էր, զի բազում անգամ հնչէր 'ի սիրտս մեր բարբառն այն ահեղագոչ . յաւիտենականութի, յաւիտենկնութի : Եւ՛ թէ՝ ոչ միայն մեռանելոց ես, այլ և սպասեալ մնայ քեզ յետ մահուանդ յաւիտենականութին : Յիշեա . թէ ո՞յ դժոխք անվախ-

վախճան․ և դոյ փառք արքայութեան մշտնջենին։ Առաւել յորդորեսցէ զքեզ ՚ի պահպանութեն ածայինն օրինաց, յիշել, թէ պահելովդ զայն, կմ անցանելովդ զայնու, հաստուսցես քեզ վարձս յաւիտենին, և կմ պատիժ մշտնջենկին, քան գիտել, թէ վն քո վերջնոց են բարիք կենցաղոյս։ Ածէ յիշեա զյաւիտենականութեն, և հնչեսցի ՚ի խորս հոգւոյ քո ձայնս այս, յաւիտենականութեն․ յաւիտենականութեն։ Վն այսորիկ սբ եկեղեցին ՚ի ձեռնադրութե եպիսկոպոսաց յիշեցուցանէ նց զայսպիսի զօրաւոր յիշատակս յաւիտենականութե, ասելով զբանն դաւթի․ Խորհեաց զաւուրսն զառաջինս, և զամսն յաւիտենից յիշեա։ (Սաղմ․ ՀԶ։) Երբ ՚ի ժմկի կացուցման և թագադրութե քահանայապետին հռովմայ միոյն ՚ի կղերիկոսաց այրէ առաջի աչաց նր զռաւկաւ մի վուշ․ ասելով այսպէս․ Հայր սբ, ըստ այսմ օրինակի անցանեն փառք աշխի։ որպէսզի տեսութե անցաւոր և կարճատև նշոյլից հրոյն այնորիկ ՚ի միտս նր անկցին բոցքն յաւիտենականք։ Երբ առի զպապէն Մարտինոսէ հինգերորդէ, թէ ՚ի պահպանութե անձին իւրոյ՝ ետ նկարել զպատկեր ինչ հրոյ․ ՚ի վր որոյ այրեալ լինէին միթր մի քհնյապետական․ թագ մի կայսերական, պսակ մի արքայական․ և խոյր մի կարդինարական ։ որով ծանուցանել կամիմ · զի եթէ նք̄ , որք ունին զայսոսիկ , ոչ կատարեսցեն զպարտս պաշտօնի իւրեանց , այրեսցին յետ սակաւուց 'ի դժոխս յաւիտեան · զորոյ զպատկերն կամեցաւ ունիլ միշտ առաջի աչաց իւրոց այսու շահաւէտ օրինակաւ ։

Յօդուած երկրորդ ։

Անունս խաչքար , զորմէ յիշեցաք 'ի վերադրոյնդ , թէ օրհնեցաւ 'ի հօրէն իւրմէ յակոբայ · զի հանդուցել̄ մնալոց էր 'ի մէջ երկուց մեծակաց · ըդ̄ 'ի մէջ երկուց վերջնոց յաւիտենականութեն , թարգմանի՝ այր վարջա · և նշանակէ զնա , որ յիշմամբն առնու զվարձս · և այսպիսի խորհրդաւոր անուամբ ծանուցանէ մեզ հոգին սբ̄ զյիշատակն յաւիտենական վարձուց ։ Եւ զի գիտասցուք , թէ որչափ ազնիւ է այսպիսի յիշատակս առաջի այ̄ , և որչափ օգտակար է մեզ , հրամայեաց տր̄ քանդակել զանունս խաչքար , 'ի վր̄ սուտակ ակամն պատուականի , (որ և ասի ամեթօս) զոր կրէր քահանայն մեծ 'ի վր̄ տախտակի դատաստանաց ։ Եւ յայտնեցաւ սբ̄յն յօհաննու աւետարանչին , թէ այն էր մի 'ի քարանց , որ 'ի հիմունս քաղաքին այ̄ ։ Եւ երանելին ան սելմոս ասէ, թէ նշանակէ այն զյիշատակն յաւիտենականութեան. որ է գլխաւորագոյն հիմն շինուածոյ կատարելութեան մերոյ: Եւ յիրաւի, եթէ նկատեսցուք զյատկութիւնս ականս այսորիկ, տեսանեմք զբովանդակն 'ի յիշատակի յաւիտենականութեան, և բարեացն զորս ստանալոց է հոգին մտածելով զայն: Սուտակն նախ պատճառէ զարթնութեան: Եւ արդ՝ զի՞նչ պարտի առնել զոք առաւել արթուն և զգաստ, քան խոկալն, թէ կայ 'ի մէջ երկուց ծայրից, այսինքն է՝ փառացն յաւիտենից. և տանջանացն անվախճանից: Ո՛րպէս կարէ ննջել ոք, որ վասն անցանելոյ 'ի միոյ բարձրագոյն ժայռէ, որոյ յատակն է յոյժ խոր՝ յայլ միւս ժայռ չունի 'ի կամուրջ զայլ ինչ, բայց միայն զդերան մի կէս ոտնաչափ լայն, և յայնմ վայրի շնչեն սաստիկ հողմունք, որք յամենայն րոպէի դնեն զնա 'ի վտանգի արկանելոյ 'ի վիհն յայն զարհուրելի: Արդ չէ՞ փոքրագոյն վտանգն աստի կենաց քան զայս: Վասն զի ճանապարհն, որ առաջնորդէ 'ի յերկինս, է յոյժ նեղ և անձուկ. հողմք փորձութեանց սաստկահնչիւնք են յոյժ: վտանգք և առիթք մեղաց են յաճախագոյնք: Վնասք չար օրինակաց են մեծագոյնք. նենգութիւնք վատթար խրատատուաց են բազմագոյնք, և անհամարք: Դարձեալ՝ պատմեն զսուտակէ , թէ ոչ միայն տայ զարթնութն , այլև բառնայ զվատթար խորհուրդս 'ի նմանէ , որ ունի զայն 'ի վր իւր : Եւ ոչ գիտեմ ես , թէ զի՞ արդ. կմ ոմն ունիլ կարէ զվատթար խորհուրդս նա , որ խորհի զյաւիտենականութին : Ոմն կարէ 'ի միտ ածել զկարճատև հեշտութիւնս մարմնոյ , որ խոկայ , թէ յոր տանջանս պատժոց լինի դատապարտեալ հոգի իւր . եթէ տայ զհաւանութն ծանր ինչ , կամ մահուչափ մեղաց : Նոյնպ սուտակն պահէ յարբեցութէ , և առնէ զգաստ և լուրջ զնա , որ կրէ զայն : Այլ չիք ինչ յարմարագոյն պահել ամբիծ զմիտս մարդկան 'ի մէջ գինւոյ հեշտութեց կենցաղոյս , քան զյիշատակն հանդերձեալ Ցին : Բայց յայտնանէ սուտակն է վանիչ թունից . և բառնայ զմահացուցիչ զօրութիւն 'ի թունից : Եւ արդ՝ զի՞նչ լաւագոյն , և զի՞նչ զօրեղագոյն անթեղայ գտանիլ կարէ ընդդէմ թունից մեղաց , քան խոկալ ուշադրութբ զտանջանս դժոխոց , որոց արժանի է վս մեղաց . և զփառս արքայութե , զոր մեղօք կորուսանէ : Դարձեալ՝ սուտակն խաղաղացուցանէ զխռովութիւն մտաց : այլ ասամ աղաչեմ որպիսի զօրեղագոյն պատճառ գտանիլ կարէ , որով հանդարտ և խաղաղ լիցի ոք վս իւրաց աստի կենացս . և ընդ սանձիւք կալցէ զթափին ագահութե · և զսպեսցէ զդառնութի ամբարհաւաճութե, քան խոկալն զյաւիտենական բարիս, որոց ակն ունին խոնարհք, և աղքատք հոգւով: Եւ դարձեալ՝ սուտակն տայ և բերէ զարդասաւորութի, այսպէս և մեծ խոկումն յաւիտենականութե է արդասաւոր բարի գործոց: Զի ո՛վ է, որ կենդանի հանապազ խոկայ, թէ վս առաքինի գործոց, թէ և իցեն վայրկենականք և թեթեւք, տուեալ լինի մեծաւ կշռով յաւիտենական փառք, և ոչ քաջալերեսցի տանել զաշխատութս, և կրել զյոլովս վս այ: Ո՛վ, որպիսի գերազանցից և մեծայնագոյն գործոց բերրի է մր խոկումն սր: Փառքն յաւիտենական իմն սպասեալ մեզ · յաղթանակք մարտիրոսաց · մրցանակք կուսանաց, և պսակք խոստովանողաց են պտուղք և գործք այսմ խոկմանս: Ո՛վ խոկումն մր · ո՛վ պատուական ակնդսուտակ, որ այսպէս զգաստս և արթունս գործես զանզգոյշս: Որ այսպ լուսաւորես զմոլորեալս: որ այսպէս կատարելագոյնս բժշկես զաւերեալս, և զխաթարեալս: Որ այսպէս հաւատարմագոյնս խաղաղես զմեծամեծ մըրրիկս ցանկութեց մերոց: և որ այսչափ առատօրէն արգասաւոր առնես մր գործովք զլքեալս սրտից, և զամուլս 'ի յառաքինութեց:

2․ Ո՞չ թէ քրիստոնեայքն քանդակեալ ունիցէին զայն ՚ի սիրտս իւրեանց առ ՚ի ոչ ջնջիլ երբէք։ Որչափ զանազան երեւէր վարք նոցա ՚ի գործս իւրեանց։

3․ Քանզի թէպէտ յիշատակն չորից վերջնոց մարդոյն ունի զմեծ կարողութի նորոգելոյ զվարս մարդոյ․ սակայն յիշատակն յաւիտենականութեն է հինգերորդ գոյութի․ յոր զօրութի այլոց բնաւից միաւորի։

ԳԼՈՒԽ Դ․

Յաղագս ողորմելի կացութեն մարդկան ՚ի կեանս յայս․ որք մոռանան զյաւիտենականութին։

1․ ՅԱռաջ քան թէ բուռն հարցուք բացայայտել զորպիսութեան յաւիտենականութեն, որ է յոյժ հարկաւոր առ ՚ի կեալ առաքինօրէն, բացցուք սակաւ մի առաջի աչաց զխաբէութի, և զողբալի մոռացութի որդւոց ադամայ ՚ի յայսպիսի ծանրակշիռ խրատութե․ որովհետև կեն այնքան անհոգ, որոց ժամէ ՚ի ժամ սպառնայ յաւիտենականութեն· և չեն յայնմանէ հեռի առաւել՝ քան որչափ է տարակացութի մատին միոյ , ո՛պ ասաց ոմն 'ի փիլիսոփայից : Քանզի 'ի մէջ նաւամրդաց , և մահուան զինչ հեռաւորութի՛ն գոյ · եթէ ոչ տտուարութեն տախտակի միոյ , որ կայ եդեալ 'ի միջի , զինչ այլ ինչ կայ 'ի մէջ բարկացողին , և յաւիտենականութեն , եթէ ոչ սրութեն սուսերի միոյ , զինչ կայ 'ի մէջ զօրականին · և վախճանի կենաց նր · եթէ ոչ ժամանումն գընտակի միոյ հրացանի առ նա , զինչ կայ 'ի մէջ աւազակին , և կախաղանի , եթէ ոչ վայրկն այն , որով հեռի է այն 'ի բանտէ: Եւ՛ միանգամայն ասացից · ո՞ր հեռաւորութի է 'ի մէջ առողջ և ուժեղ մրդոյ և յաւիտենականութե, եթէ ոչ այն, որ է'ի մէջ կենաց , և մահու . որ յա՛մ բոպէի անհամար Ճպհաւ կարէ հատանել 'ի վր մեր : Զի կեանք մարդոյ ոչ այլ ինչ է · եթէ ոչ վտանգաւոր իմն արշաւանք , որ ընդ երկար ձգի զափամբ յաւիտենականութե · անվրէպ իմն հարկի անկանելոյ յաւուր միում յանեզր և յանտահման ծոցն յայն : Ապա զիա՞րդ կեամք անքոյթ , և անհոգ :

2. Վայելուչ իմն բացայայտեաց մեզ սբ Յոհան դմսկացին զայսպիսի վտանգըս՝ Ճարտար և գեղեցիկ օրինակաւ միով , յորում յայտ յանդիման կացու-

ցանէ մեզ զորպիսութիւն աստի կենացս ։ Զի ասէ, թէ այր մի փախուցեալ վաղէր յերեսաց կատաղի միեղջերուին միոջ, որ ահեղ կոչմամբ դողացուցանէր զլերինս, և անդրէն հնչեցուցանէր զձորս ։ Եւ ՚ի փախչելն իւրում ոչ դիտելով, թէ յո՛ երթայ, անկաւ ՚ի վիրապ մի մեծ. և խորին ։ Բայց յանկանիլն (ըստ բարեբաստութեանն.) իբրև արձակեալ զձեռն իւր ձգեաց ունիլ ինչ, կալաւ ճիւղ մի ՚ի ծառոյն, որ բուսեալ էր ՚ի բերան գբոյն, և պինդ կալեալ զնոսա նր̄ ամ̄ զօրութ̄բ, եկաց մնաց ՚ի վր̄ ծառոյն զուարճացեալ յոյժ և համարեցաւ, թէ զերծաւ ՚ի վտանգէն ։ Սակայն իբրև հայեցաւ յարմ̄ն ծառոյն, ետես զերկուս մեծամեծ մկունս, զմինն սեաւ, և զմիւսն սպիտակ, որք անդադար կրծէին զայն, մինչ զի երևէր, եթէ սակաւ մնայր հատանիլ ծառոյն, և անկանիլ ՚ի վայր ։ Ապա հայեցեալ ետես յատակս գբոյն վիշապ մի ահագին, յորոյ աչացն հատանէին բոցք հրոյ, և նայէր ՚ի նա ահարկու տեսլեամբ բացեալ զժանիսն, և մնայր անկման նր̄ առ ՚ի կլանել զնա ։ Ապա վաղվաղակի դարձուցեալ զաչսն հայիլ յայն կողմն խորխորատին, ուստի ծառն բուսեալ էր, ետես, զի անտի ելանէին չորք գլուխք թունաւոր իժից, առ ՚ի խածանել զնա, և մահացուցանել ։ Եւ յետ այսորիկ հայեցեալ ՚ի ներքեւս ծառոյն․ ետես, զի իջանէին կաթիլք ինչ մեղեր, որոյ տեսլեամբն ուրախացեալ յոյժ անմիտն այն․ և մոռացեալ զամենայն վտանգս, որք յամենայն կողմանց ապառնային նմա, սկսաւ զբաղիլ ՚ի ժողովել չիթ առ չիթ զմեղրն, առանց նայելոյ յայլ ինչ․ և ոչ խորհելով, ոչ զմեծեղջերուին կատաղութիւն, որ ՚ի վերուստ, ոչ զվիշապին դժնէութիւն, որ ՚ի ստորէ, ոչ զմկանցն կրծումն, զոր առնէին, ոչ զիժիցն թունաւորութիւն, զոր ՚ի կողմանցն ունէր․ ոչ զծառոյն թուլութիւն, որ մերձ էր ՚ի հատանիլ․ և ոչ զվտանգն սահելոյ ոտիցն, և ընկենլոյ ՚ի վիհ այն ։ Վասնզի առ ՚ի բաղձանալ զայս ամենայն ՚ի միտս նորա, բռնաւորեալ էր կաթիլ մի մեղր, որ զնա ողջոյն պատրաստեցուցեալ էր որկորամոլութեամբ ՚ի ճաշակել զայն ։

4․ ՚Ի պատկերիս յայսմիկ տեսանեմք երեւիլ զողորմութիւն մարդկանց․ որք մոռացեալ զվտանգս, որովք լի է կեանքս մեր, մատնեն զանձինս իւրեանց յորս հաճութեան բաղձանաց իւրեանց, Քանզի միեղջերուն նշանակէ զմահն, որ յորմէ հետէ ծնանի մարդն, մինչ հետամուտ լինի նմա անխոնջ ։ Իսկ գուբ վիրապին աշխարհս է՝ լի ամենայն թշուառութեամբ և չարեօք ։ Ծառն է ընթացք կենաց մերոց։ Մկունքն սեաւ, և սպիտակ, որք կրծելին զայն, են տիւ՛նս և գիշերին· որք շարունակեալ ՝ի ժամս, և ՝ի բռապէս սպառեն զկեանս մեր։ Չորեքին իժքն են չորս տարերքն, կմ՛ հիւթքն, որք բաղկացուցանեն զկազմուն մարմնոյ մերոյ· որոց թէ մինն պակասեսցի, կամ յաւելցի, խանգարէ զներդաշնակաւորութն կազմուն մարմնոյ մերոյ, և սպառէ զկեանս մեր։ Իսկ ահեղ և սարսափելի վիշապն է յաւիտենականութեն դժոխոց, որ միշտ բացեալ ունի զբերան իւր լայն և ընդարձակ առ ՝ի կլանել զմեղաւորս։ Կաթիլք մեղեր են ախորժմունք և զբօսանք կենցաղոյս։ Եւ՛ անմտութ մարդկան է այնչափ մեծ· մինչզի վս՛ կարճառօտ հեշտութ միոյ ոչ հայելն յայնքան վտանգս, որք պաշարեալ ունին զնա։ Եւ՛ թէպէտ անհամար են վտանգք մահու· զորօրինակ պատճառք և զանազանութիւք նց, և են բնաւքն բերանք և դրունք յաւիտենականութ· սակայն կան զմայլեալք քաղցր լիզմամբ վայրկենական մեղեր հեշտութեն երիք երկրաւորի, զոր փոխելոց են դառն ցաւով յաւիտեանս յաւիտենից։

4· Անհոգութ և անմտութ մարդկան։ Եթէ ոք մտանէր ՝ի դաշտ ինչ լի որոգայթիւք, և դարանակալութ՛ք, ուր է՛ պատահել ատեյն միում ՝ի նոցանէ, անկանէր ՝ի վ՛ր սլաքաց, կամ սուսերաց . և կամ 'ի բերան վիշապի միոյ . և տեսանէր աչօք , թէ նաև այլք , որք ընդ նմա մտին , անկան 'ի մէջ այնց տանջանաց , և կտտամահ լեալ , կորեան : և նա այսու ամիւ երթայր անզգուշութ̃ ը̃ այն դաշտ խաղալով և խայտալով և անվեհեր սրտի՜ւ . ով է , որ՞ ոչ ասասցէ . թէ յիմար է սա : Ո՛հ առաւե՜լ յիմար ես դու . որ տեսեր զբարեկամ քո արդ անկեալ 'ի ժանիս մահու , և զդրացիդ արդ կլեալ 'ի յաւիտենականուէ . և զեղբայրդ արդ մտեալ 'ի խորս դերեզմանի . և դու կաս անհոգ և աներկևան , ո՛չ թէ չէ պատրաստեալ քեզ այնպիսի ինչ : Եւ՛ այն զի թէև անհաւաստի իմն իցէր մեռանիլդ , պարտ էր բաւական լինիլ քեզ առ 'ի արթուն կալ՝ ամ̃ վտանգ , յոր դու անկանիլ կարէիր , թէպէտ և թէ թևք իցէին : Ապա զի՛նչ պարտիս առնել . որովհետև հաւաստի ես , թէ կմ̃ անագան . և կամ վաղվաղակի հարկ է քեզ մտանել 'ի բերան յաւիտենականուէ :

5. Զարմանալի է զգուշուէն , որով մարդիկ զգուշանան յանհաւաստի և 'ի հեռաւոր վտանգաց : Զի յորժամ լսեն , թէ աւազակք ունին զճ̃պհն . և կողոպտեն զանցաւորս , ոչ ոք անցանէ ը̃ այն , մինչև չիցէ քաջ զինու վառեալ . և չիցէ ը̃ կարավանի , կամ ը̃ ընկե_

րաց

րայ բազմաց : Յորժամ դոյ համբաւ և լուր ժամանակին. ընկճանայ ամոք 'ի խնդիր դեղոց, և հնարից, ոչ խնայելով 'ի ջանս և 'ի վաստակս, նաև յիրս մանունս : Յորժամ դոյ կասկած առվու, յառաջադոյն լցեալ լինին շտեմարանք ցորենոյ : Ապա զի՞արդ իցէ մեզ այս. զի դիտելով հաւաստեաւ, թէ դոյ մահ. դոյ դատաստան նոյ. դոյ դժոխք, և դոյ յաւիտենականութիւն. ոչ կեամք զգուշութ՟, չառնեմք զպատրաստութի ինչ, և կամք 'ի քուն թմրութե : Բացցուք զաչս, նայեցուք 'ի վտանգս, ակնարկցուք 'ի տեղին, ուր դնեմք զոտս, զի մի կորիցուք : Քանզի որպիսութի կենցաղոյս է յոյժ վտանգաւոր : Ուստի և յԻսիդորոսէ կլարիոսէ վայելչապէս նմանեցուցանի կամրջի յոյժ նեղագունի, ուր հազիւ հազ գտանի կոխ ոտից. 'ի ներքոյ որոյ կայ լիճ մի. յորում լի են օձք, և թունաւոր սողունք. և դժնեայ ճճիք. որք կերակրին անկելովքն 'ի վայր 'ի կամրջէն. աստի և անտի դոն պարտէզք, և դալարիք. ջըրբուղխք աղբերաց, և շինուածք դեղեցիկ յօրինուածոց : Արդ՝ ո՞չ յիմարութ՟ է նմա, որ յանցանելն ը՟ այն՝ ը՟ նեղ և ը՟ անձուկ կամուրջն, հայեցեալ ըզուարճացի ը՟ դալարիս խոտոց. և ը՟ շինուածս ապարանից, ոչ հայելով 'ի ջուրսն. Այսպէս անմիտք եմք, որք յանցանել ը̄ կեանս այս, կորնչին ուրախութ̄ և թերկրութ̄ բարեացս անցաւորաց · և ոչ հայցին 'ի գնացս գործոց իւրեանց ։ Յաւելու Կեսարիոս Արելատացին · թէ մեծագոյն վտանգն կամրջիս այսորիկ է 'ի վախճանի · Վն̃զի անդ մեծ է անձկութիւն և առաւելանխորշելի է գահավիժութիւն, և անցքս այս անձկագոյն, է անցքն մահու ։ Աղէ հայեաց, մինչդեռ կենդանի ես, դիր զոտսդ 'ի տեղի ապահով առ 'ի ժառանգել զարքայութիւն երկնից · ոպ̃զի 'ի մահուան մի՛ լիցի վրիպակ ինչ ոտիցդ, և կորիցես 'ի յաւիտեան ։ Ո՞վ յաւիտենականութիւն, յաւիտենականութիւն, որչափ սակաւք են նորա, որք արժանաւոր պատրաստութ̄ ը̄ առաջ լինին քեզ ։ Ո՞վ յաւիտենականութիւն վտանգաց վտանգ, և քան զամ̃ ինչ վտանգաւոր, եթէ ոք մեռցի 'ի մեղս ։ Զիա՞րդ ոչ պատրաստին մարդիկ առ քեզ, ա̃յ ոչ զարհուրին 'ի քէն ։ Զի կեանքս այս ունի սուղ ինչ ժամանակ մնալ · և զօրութ̄իք մեր պակասեալ սպառեացին · զգայինք մեր թուլացին · մեծութիւնք բարձցին · հեշտութիւնք փախիցեն · ազէք քաղցեցին · և ծա վար' ացէ և հալածեացէ զմեզ յիւրմէ ։ Ապա զիա՞րդ ոչ հայիմք յայն, որ հանդերձեալ է պատահել մեզ յետ ելից մերոց ։ Գնալ ունիմք յայլ աշխարհ · և ոչ գիտեմք, ցորչափ մնալոց եմք անդ։ Ընդէր ապա ոչ խորհիմք այժմ, զոր ինչ յայնժամ առնելոց եմք անդ։

5. Արդ՝ ոչ̃ղէ մեծ համարեսցուք զայս. և ուսցուք ոչ̃ արժանն է. 'ի մէջ առից զայլ առակ մի, զոր գրէ ոէ̃ Յօհան դամասկացին։ Էր ասէ քաղաք մի մեծ, և բազմամարդ. որոյ բնակիչքն ունէին սովորութիւն ընտրել իւրեանց թագաւոր զօտարական ոք, որ ոչ գիտէր զհանգամանս թագաւորութեանն, և ոչ զկարգ օրինի կառավարութեան նր̃։ և է̃ ամ մի ողջոյն թողուին նմա ըս̃ հաճութեան իւրում առնել, զոր կամէր։ Բայց ահա երբև խոկայր յերջանկութեան իւրում թագաւորել զամ̃ աւուրս կենաց իւրոց. յարուցեալ ամ̃ ժողովուրդ դըն 'ի վե̃ նր̃, վաղվաղակի մերկէին զնա 'ի յարքայականն զգեստուց. և մերկ շուրջ ածել ը̃ հրապարակս քաղաքին, տանէին 'ի կղզի ինչ հեռաւոր, ուր կրէր զյետին աղքատութի, չունելով ինչ ուտել, կմ̃ զգենուլ։ և այսպ̃ է̃ հակ̃ակ խոկման իւրոյ դառնայր երջանկութիւնն 'ի թշուառութի. մեծութիւն յաղքատութի. ուրախութիւն 'ի տրտմութի, ամե̃ա սեղանն 'ի քաղց, և 'ի ծր̃ւ. և արքունի ծիրանին՝ յողորմելի մերկութի։ Այսպէս դէպ եղև միանգամ ամ մի, զի ոմն, որ ընտրեցաւ 'ի թագաւոր. էր այր խորագէտ և իմաստուն յոյժ. սա ծանեաւ յումեմնէ 'ի խորհրդակա-

նաց զչար սովորութիւն զայն քաղաքացւոց. և զզարմանալի փոփոխականութեանց. և ոչ հպարտացեալ իշխանութեամբ թագաւորութեանն։ Ջանայր միայն կարգել զինչսն այնպէս, զի երբ իջուցեալ ՚ի թագաւորութենէն, աքսորեսցի յայն կղզի. մի կորիցէ անդ սովամահ, որպէս պատահեցաւ այլոց։ Կերպն, զոր կալաւ նա, եղև այսպիսի. Մինչդեռ ունէր իշխանութիւն իւր, ետ անցուցանել զանխլաբար զամենայն զգանձսն քաղաքին յայն կղզի, ուր կային ծնայլին նմա։ Իբրև արար զասացեալ պատրաստութիւնս, և կին քաղաքացիքն ՚ի վերջանալ տարւոյն մեծաւ գոռոզմամբ իջուցանել զնա յաթոռոյն, ընդ որում առնէին յառաջադոյն նստելոց, և առաքել զնա յաքսորս։ Իսկ նա յօժարութեամբ գնաց յանմարդաբնակ կղզին յայն, իբրև այն, որ յառաջագոյն յղեալ էր անդր զգանձս իւր. և այսպէս բազում առատութեամբ. և բարեբախտութեամբ, և մեծութեամբ վարեաց անդ զկեանս իւր. և ոչ եղև որպէս զայլ թագաւորս սովամահ։ Արդ՝ այս է ամենեքին, որ և ընդ կենցաղս ընդ այս անցանէ, և զոր խոհեմն և իմաստունն պարտի առնել։ Քանզի քաղաքն այն նշանակէ զաշխարհս, գլխովին խելացնոր, ունայն, և անկայուն, որ զամենեսին, որք կարծեն կալ հաստատուն յաթոռ իւրեանց, ՚ի միում բոպէի մերկացուցեալ յոտից մինչև ցգլուխ առաքէյաք սորա տապանի, յորժամ ոչ ակն ունէին այնմ, և կային զբաղեալ 'ի վայելել յանցաւոր և 'ի կորստական բարիս ոպ̃ յանանց և 'ի մշտակայ բարիս՝ ոչ ունելով զյիշատակ ինչ յաւիտենականութեան, որ է գաւառ հեռաւոր յոյժ 'ի մտաց նոցա. ուր գտցին մերկ, և անխնամ, և թողեալք 'ի բաց, և մատնեալք 'ի կորուստ յաւիտենական մահուան։ Թէպէտ և ոչ մեռանին, այլ կենդանի են միայն առ 'ի տանջել անդ, որ է երկիր մահու, և խաւարի, և մթին, երկիր աղջամղջին, և մառախլապատ, ուր ոչ է լոյս, այլ սարսափիւն մշտնջենաւոր։ Վ̃ն այսորիկ խոհեմ և իմաստուն է նա, որ խոկալով զայն ամ̃. որ յետ սակաւուց պատահելոց է նմա, յառաջ քան զեղանելն յաշխարհէ աստի, պատրաստի վասն հանդերձելոյն, և դնէ 'ի պահեստի զբազում ճոխութիս 'ի ժամանակի աստի կենաց՝ առ 'ի գտանել զայն 'ի յաւիտենականութեան, այսինքն բարեգործէ, ապաշխարէ, առնէ ողորմութիս, և կարգաւորեալ ուղղէ զկեանս իւր, և սոքօք անցուցանէ զգանձս իւր յայն աշխարհ, ուր ունելոց է զբնակութիւն իւր մշտնջենաւոր։

6. Քանզի ը̃ սբ̃յն Գրիգորի՝ խոկումն

յաւիյանխոհեմականութեն օրինակեցաւ ՚ի պատրաստեալ տուն գինւոյն, յոր ասէ Հարսն, թէ եմոյծ զիս քեռայն, և կարգեաց յիս զսէր, (Երգ. բ:) Վ՟զի ասէ նա, թէ ով որ ուշադրութբ ՚ի միտ ածէ զյանխոհեմականութեն, կարէ պարծիլ և ասել, կարգեաց յիս զսէր, զի պահէ զուղիղ կարգ ՚ի սէրն, սիրելով զանձն իւր պակաս քան զած, և միայն վն այ, Ուստի ասեմ, թէ նաև զժամանակաւոր բարիսն, հարկաւոր է ՚ի կիր արկանել ըստ ուղիղ կարգի առ յաւիտենկն բարիսն :

ԳԼՈՒԽ

* * *

ԳԼՈՒԽ. Ե։

Թէ զի՞նչ է յաւիտենականութիւն ըստ սրբոյն
Գրիգորի Աստուածաբանին. և ըստ սրբոյն
Դիոնեսիոսի ։

1. Արդ՝ սկիզբն արասցուք պարզաբանել և մեկնել փոքր ինչ զայն, որ անմեկնելին է․ և հասու լինել մտօք այնմ, որ անհասանելին է, ոչ զի քրիստոնեայք իմանալով զայն, կամ լաւագոյն ասացից, սակաւ անդրադառնալով թէ զի՞նչ է յաւիտենականութիւն․ և թէ զարհուրեսցին գործել զմեղս, և թողուլ զգործս առաքինութեան ։ Ագրեպինայ հռոմայեցին մայրն Ներոնի կայսեր տեսեալ զշռայլութիւն որդւոյն, որ ցրուէր զոսկին և զարծաթն ոչ կշռու, կամեցաւ զսպել զառատիկ վատնումն նորա ։ Ուստի յաւուր միում երբեմն հրամայեաց Ներոն պարգևել ումեք զբազմութիւն դրամոց իբրև զհազարս հազարաց, ետ մայրն կուտել զայնչափ բազմութիւն դրամոց, և տեսեալ զայն

ի

՚ի վ՟ր տախտակի , եցոյց նմա զընտաւն ՚ի միասին · ոչզի տեսեալ աչօքն թէ որչափ ինչ էր այն , զոր պարգևէր ան կարգապէս , չափ դիցէ անձին իւրում ։ Ըստ այսմ օրինակի չիք այլ ինչ ճար և հնար կործանման և յիմարութեան մահկանացուաց , եթէ ոչ դնել առաջի աչաց նց՟ զայն , զոր կորուսանեն, և խանգարեն վ՟ր իւրեք ախորժման , որ է ընդդէմ օրինացն ա՟յ ։ որովհետև վայրկենական իմն հեշտութ՟ անփոյթ լինին զմշտնջենաւորոք ։ Յայսմ վայրի մտածել պարտին , թէ զի՛նչ է մշտնջենաւորն , կամ անվախճանն , զի ոչ այլ ինչ է · եթէ ոչ տևել հանապազ , և մնալ ՚ի յաւիտեան · բայց ո՛ է որ զայն զայս կարող իցէ մեզ պարզաբանել · որովհետև յաւիտենականութիւնն է ովկիանոս իմն անչափ , և անյատակ , է անդունդ ինչ խորին և խաւարին, ուր ընկղմեալ սուզի բովանդակ բնածին կարողութիւն մարդկային մտաց , և է շրջապտոյտ · և խառնախորդ իմն լաբիւրինթոս , յորմէ ոչ ոք կարէ ելանել ։ է մշտակայ իմն ներկայութ՟ ։ որ չունի զանցեալ և զապառնի ։ է անընդհատ իմն բոլորակ , որ ունի զմիջակէտն յա՟մ մասունս · իսկ զշրջաբերութիւն յոչ իմիք մասին ։ է երկարաձիգ իմն տարի , որ միշտ է՚ի սկզբան․և ոչ երբեք վերջանայ ։ Եւ միանգամայն ասացից , յաւիտենականութիւնն է այնպիսի ինչ. որում ոչ ոք կարէ հասու լինիլ. և միշտ զոյն պարտ է ուսանիլ և հասկանալ: Բայց լռեալ զսոցանէ, տեսցուք զոր ինչ

ասեն սբ̃ վարդապետք:

Գ. Սբ̃ Գրիգոր ա̃ծաբանն փոխանակ ասելոյ, թէ զի՞նչ է յաւիտենականութիւն, զայս միայն դիտէ ասել թէ զի՛նչ ոչ է: Քանզի ասէ, յաւիտենականութիւն ոչ է ժամանակ. և ոչ մասն ժամանակի: Վասնզի ժամանակն, և մասունք իւր անցանեն: այլ յաւիտենականութիւն ոչ անցանէ. և ոչ անցցէ: Որովհետև ա̃մ տանջանք, զոր սկսանի կրել հոգի մի ընդ մտանելն 'ի դժոխս, այնպէս անթերի, և չարաչար տանջելոց են զնա զկնի բիւրաւոր ամաց, որպէս եղեն 'ի սկզբան անդ: Եւ 'ի բնաւից զուարճութեանց զոր ընդունին սբ̃ ոք է̃ մտանելն յերկինս, ոչ երբէք պակասի և ոչ դոյզն ինչ: Յատկութիւն է ժամանակին ծնանիլ զունակութիւնս, և դիւրել զդժուարինս, և բառնալ զխստութիւնս յիրաց: Ուստի որ ինչ 'ի սկզբան է նոր և դժուարին. 'ի յառաջ ընթանալն սովորութեամբ եղանի դիւրին: Բայց յաւիտենականութիւն միշտ ամբողջ և անթերի է, միշտ նոյն է. և ոչ ինչ բարձեալ լինի յիւրմէ. և 'ի յիւրոցն, կայ և մնայ մի և նոյն: Ոչ ունի զուար-

ճու

ձութիւն նոր ընդ հին զձանձրութիւն. և ոչ տանջանք նոր զթուլութիւն ինչ:

3. Եւ ըստ այսմ յաւիտենականութիւն ըստ սրբոյն Դիոնեսիոսի Արիոպագացւոյն է անփոփոխութիւն անմահութի, և անապականութիւն իւն բոլոր ՚ի միում վայրկենի, որ ոչ անցանէ, և ոչ կորնչի. այլ միշտ կայ և մնայ ՚ի նոյն գոլ: Վասնզի որպէս ասէ իմաստունն. Եթէ անկցի փայտն ՚ի հարաւ, և կամ ՚ի հիւսիս, ուր անկցի փայտն, անդ կայցէ: (Ժողով. ԺԱ. Գ:) Եթէ անկցիս որպէս խանձող դժոխոց ՚ի խորս անդնդոց, անդ այրեսցիս միշտ ըստ յաւերժական կայից քոց, ո՛վ եղև յանկանիլդ ՚ի յայն բոց և ոչոք գոյցէ քեզ օգնական հանել զքեզ ՚ի խորոց անտի; և որչափ մեծ է մեծ, անդ և դու կայցես. և ոչ կարող լիցիս շրջել զքեզ կողմանէ ՚ի կողմն:

2. Անփոփոխ է յաւիտենականութիւն. զի ոչ միաբանի ընդ նմա փոփոխութիւն. անմահ և անվախճան է, զի ոչ ունի զեզր և զսահման: և անապական է. զի չէ ՚ի ներքոյ անկեալ ապականութեան: Չարիք կենցաղոյս՝ որչափ և անտանելիք իցեն, ունին ընդ ինքեանց զայս մխիթարութիւն. զի կամ փոփոխին թեթևանան. կամ մահուամբ վերջանան. և կամ ապականութեամբ պակասին: Յորոց զուրկք են յաւիտենական չարիք,

զի ոչ փոփոխութիւն նց՟ տայ զթեթեւութիւն ինչ . ոչ վերջանալն կհնար ինչ . և ոչ մեղմանալն զմխիթարութիւն ինչ : Արդ՝ եթէ ախորժաճաշակ և առողջարար կերակուրն, որոյ նմանն ոչ եղև յաշխարհի . այ՟ է մանանայն, միայն մի՟ հանապազորդութեամբն տաղտկալի եղև մարդկան . ապա զինչ եղիցին տանջանք խստագոյնք, մնալով յաւէտ 'ի նոյն որպիսութեան : Ծովն ունի զմակընթացութիւն և զտեղատուութիւն, այսինքն զաճումն, և զնուազումն ջուրց : Գետք ունին զյորդութիւնս իւրեանց : Մոլորակք զայլևայլութիւն հայեցուածոց : Ամն զչորեքին եղանակս իւր : Խիստ բորբոքմունք տենդից, զկնի սաստիկ զայրանալոյն, զիջանին : Ցաւն առաւել սաստիկ և զօրեղ՝ իբրև ելանէ 'ի վերջին աստիճան դառնութեան . անդրէն խոնարհի . և մեղմանայ : Եւ միայն յաւիտենական տանջանքն չունին զայս կանոն : Ուստի որ ինչ եղեն տանջանք կայենի մինչև ցայժմ՝ իբրև զամս եօթն հազար . նոյն են և այժմ զկնի այսքան դարուցս : Եւ որ ինչ են այժմ, նոյն մնասցեն յետ այսչափ ամաց ևս: Եւ մասունք նց՟ հաւասարին ը՟ յաւիտենականութեանն այ՟ . և տևողութիւն թշուառութեան նր՟ զուգընթաց է տևողութեան փառացն այ՟ : Կեան եղկելի դատապարտելքն առ 'ի տանջիլ . և մեռանին առ 'ի ոչ վայելել: և ոչ ունին ոչ զհանգիստ կենաց. և ոչ զեզր մահուան. այլ մանաւանդ 'ի մեծագոյն տանջանս ունին զտագնապ մահուան, և զտևողութիւն կենաց: Բայց դու եկ, և տես ինձ զհակադարձն սոցա 'ի յարդարն, թէ որչափ երջանիկ է բախտ նց՟, որ 'ի մեռանիլն է բարեկամ և սիրելի այ՟. քանզի փառք նց՟ եղիցի անվախճան, անտրտում, և անեզրական. երջանկութիւն նց՟ անփոփոխ և անծերանալի: Պսակ նց՟ անապական, և անթառամ: Ուր հաստատուն կացցէ միշտ օր զուարճութեց. ուր միշտ նոր մնասցէ ուրախութիւն. և նորոգեսցի փառքն 'ի դարս մշտնջենաւորս: Ուստի երանութիւն այն, զոր սբ՟ Միքայել հրեշտակապետն սկսաւ վայելել, յորմէ և այսօր են ամք իբրև եօթն հազար այնպէս նոր է այսօր, ոպ՟ եղև յաւուրն առաջնում, և այն աստի մինչև ցեօթն բիւրաւոր հազարս ամաց ոչ նուազեսցի 'ի նորուէ, այլ մնասցէ այնպէս, ոպ՟ և է այսօր:

ԳԼՈՒԽ. Զ։

Թէ զի՞նչ իցէ յաւիտենականութիւնն ըստ Բոէսիոսի և ըստ Պղոտինոսի։

1. Նեսցուք 'ի լսել և զբանս իմաստից, զոր Բոեսիոս սեւերինոս ածաբանն, և Պղոտինոս քաջ իմաստասէրն ասեն զյաւիտենականուէ։ Զի ըստ Բոեսիոսի յաւիտենականութիւնն է անսահմարուելի կենաց՝ բոլորն միանգամայն, և կատարեալ ժառանգութի։ Եւ այս սահման թէպէտ և ուղղաբար պատշաճի յաւիտենականութեն այ, սակայն կարէ պատշաճիլ և յաւիտենականութե բանական արարածոց, զոր ժռնգեն։ Քանզի և մք ունիմ զամբողջ և զկատարեալ ժառանգութի բարեաց յանեզրական կեանս, որում չի՛ք վախճան։ Յիրաւի կոչեաց զայն ժառանգութի, զի չիք եղանակ ինչ լաւագոյն և կատարելապէս վայելելոյ յինչ, եթէ ոչ ունիլ զկատարեալ ամբողջութի ժառանգութե զայնմանէ. զի որ ունի զինչ 'ի պահեստ, կամ 'ի վարձու, թէպէտ վայելէ զայն, բայց ոչ կա-

կամաց ոմն լերին. և ոչ ը̅ իւր կամացն: Յաւ̂ելու ասել, թէ ժառանգութիւն այս է բոլոր և միանգամայն, և կատարեալ. վ̃զի ունի զա̃մ բարի, առանց երբէք պակասութե̃. և է համասարապէս ամենեցուն. զի չիք հարկ մինչ ՚ի վայելել ՚ի բարիս յայնոսիկ, թէ մինն յաջորդեսցէ միւսոյն, զի կարեն ամենեքեան ՚ի միասին վայելեալ լինել: Բայց չունին զայս մեծագոյն կատարելութիւն բարիք կենցաղոյս: Ուստի թէ և ոք ունիցի զա̃մ բարիս, ոչ կարէ միանգամայն վայելել ՚ի նոսին, այլ յաջորդութբ̃ մի զհետ միոյ: Եղիովգաբաղոս կայսրն, որ քան զա̃մ մարդ ջանս եդ վայելել ՚ի բարիս կենցաղոյս, թէպէտ և մեծաւ հոգատարութբ̃ փութայր վայելել յամենեսեան միանգամայն, սակայն հազիւ կարաց գտանել զերկուս, կամ զչորս ՚ի մի և ՚ի նոյն ժամանակի: Քանզի մինչ կայր ՚ի խրախճանս, ոչ կարէր հայել ՚ի կաքաւ̂մունս. և մինչ կայր ՚ի խնջոյս կաքաւ̂չաց, ոչ կարէր երթալ ՚ի զնին խաղարկուեց, և ՚ի կրկէսս. և մինչ ՚ի յայսոսիկ զբաղէր, ոչ զուարճանայր երաժշտական երգով: Եւ յորժամ ՚ի լուր սոցա պատաղէր, ոչ կարէր բերկրել որսորդութբ̃ ընդ դաշտս, ընդ լերինս, և ընդ անտառս. և յորժամ յանտառս, և ի դարաստանս լինէր, ոչ կարէր տալ զանձն 'ի ցանկութիւնս գաղտնածածուկ վաւաշոտութեան: Վասն որոյ առ 'ի վայելել 'ի բերկրութեան եւ 'ի հեշտութեան միում, հարկ էր թողուլ նմա զմիւսն: Եւ վասն այսմ ոչ միայն ոչ կարաց զբնաւսն ընդ ձեռամբ ունիլ, որովհետեւ չունէր զայնս, զոր այլք մասնաւորաբար վայելէին, այլ նաեւ 'ի նոյն բարիս, որք առ նմա, չկարաց վայելել յամենեսին միահաղոյն: Բայց 'ի յերկինս ոչ պակասի արդարոց բարի ինչ, եւ չիք հարկ վայելել 'ի մինն զհետ միւսոյ. զի 'ի բնաւս 'ի միասին վայելեն: Սոյնպէս կատարեալ է եւ ժառանգութիւն, կամ ստացուածն երանութեան վասն իւրոյ ապահովութեանն, զի ոչ կարէ վրդովիլ յումեքէ 'ի ձեռն կռուոյ, կամ գողութեան, եւ կամ այլ իմն չփոթութեան:

2. Եւ վասն այսր իրի ասաց եւ Պղոտինոս, թէ յաւիտենականութիւն է կեանք լիապատար, եւ բովանդակն 'ի միասին: Քանզի 'ի նմա եղիցին լիապատար եւ կատարեալ ամենայն հանգամանք կենաց. զի 'ի նմա եղիցի կեանք ականջաց լիապատար. վասնզի լցցի քաղցրաձայն երգօք, կեանք հոտոտելեաց եղիցի լիապատար բուրմամբ անուշահոտութեանց, կեանք աչաց եղիցի լիալիր տեսութեամբ ամենայն գեղեցկութեան. կեանք մտաց եղիցի լի եւ պատարուն ճանաչ-

մամբ ստեղծողին, կեանք կամացն եղ՟ցի լիակատար սիրելով, վայելելով, և հրճուելով ՚ի յա՟ծ : Բայց ժամանակաւոր կեանքս ոչ կարէ ունիլ զայս լիութիւն, և յագեցուցանել. և ոչ գոնէ յիրս մանունս. ուստի պարապումն յիր ինչ ը՟ միոյ զգայութե՟, արգել լինի միւսոյն. և մարմինն հեշտութ՟բ իւրով հակառակ կայ հեշտութե՟ հոգւոյն : Այլ ՚ի յաւիտենական երջանկութե՟ անդ լիապատար եղիցի կեանքն, բոլոր ժառանգութե՟ն, և կատարեալ զմայլումն ուրախութե՟, ուր ոչ վ՟ն առարկային տկարութե՟, ոչ վ՟ն զգայութեցն արգելման, ոչ վ՟ն հոգւոյն անընդունակութե՟. և ոչ վ՟ն կարճութե՟ տեւողութե՟ խափանիցի վայելել ՚ի բարիս ա՟մ զգայութ՟բ, և կարողութ՟բ նոցա :

3. Զորոյ զհակառակն է տեսանել յեղկելի մեղաւորս, որք ՚ի մշտնջենաւոր թշուառութե՟ իւրեանց ունին զնոյն հանգամանս ՚ի կարգի առ չարն, զոր արդարք ունին ՚ի կարգի առ անանց բարին : Քանզի բովանդակ մարմնովն, և բովանդակ գոյութ՟բ իւրեանց կեցցեն եղկելիքն ՚ի տանջանս, ոչ ո՟պ ՚ի փոխառեալ իրս, այլ ո՟պ ՚ի ժառանգել և ՚ի ստացեալ իրս իւրեանց այնպիսի իմն յատկութ՟բք, որք ոչ կարեն երբեք հեռացուցանել զայնս : Ուստի

ոչ միայն ինքեանք սաստացին զչարիսն զայնոսիկ, այլեւ չարիքն իսկ գրաւեացեն զն՟ս բոլորովին: Վ՟զի զգայարանք, անդամք, և ա՟մ մանրիկ մասունք մարմնոյն, ընդ որս և զօրութիւնք հոգւոյն, և կարողութիւնք ն՟ր հոգեկանք ստացեալ լըցին 'ի հրոյ, 'ի դառնութէ, 'ի ցաւոյ, յանարգութէ, 'ի մոլեգին ցասմանէ. և յանիծից: Չիք թշուառութի՟ ինչ, որ ոչ գտցի անդ: Ուստի ոչ պակասեսցի անդ ճաշակելեաց լեղի, ախորժակին քաղց. լեզուին ծարաւ, տեսանելեաց սարսափ, լսելեաց զարհուրանք. հոտոտելեաց գարշահոտութի՟, սրտին տագնապ, երեւակայութեն արհաւիրք. և իւրաքանչիւր անդամոց ցաւ. նաև աղեաց և փորոտեացն իսկ հուր: Եւ այս ա՟մ չարիք մարմնոյ իբրեւ զհեղեղս հասցին միշտ մեղաւորաց: Արդ՝ եթէ մի միայն կաթիլ կարող է փոս գործել 'ի քարն. և քառասնօրեայ անձրեւք ջրոյ բաւական եղեն ջնջել զ՟ս ըստ բանիցն ա՟յ: Ապա զի՞նչ լինիցի, յորժամ արդարութի՟ն ն՟ր տեղասցի 'ի վ՟ր մերոյ դատապարտեցելոյ զհուր, զծծումբ, և զմրրիկ ոչ զաւուրս քառասուն, այլ յանբաւ յաւիտեանս, այսինքն որչափ ա՟ծ է ա՟ծ: Եւ ոչ միայն ստացուն այն աղէտալի կուտեսցէ զա՟մ չարիս 'ի մի և 'ի նոյն ժամանակի. այլեւ բազմութե՟ տանջանաց ոչ բարձցի ամենեւին ՚ի դատապարտեցելոց ըզգալն, եւ ոչ թուլասցի սաստկութ՟ի տանջանաց, այլ մանաւանդ, որ կրէն զայնոսիկ, եղիցի այնպէս զգաստ, լուրջ, եւ առողջ առ ամ՟ տանջանս, ոպ՟ առ մինն եւեթ : Վ՟ս որոյ խօսելով միայն զհրոյն, ասեմ, թէ ոչ միայն թափանցէ յոսկերս, ՚ի սիրտ, եւ ՚ի յաղիս․ այլ եւ անմիջապէս այրէ անշէջ եւ անվախճան տոչորմամբ եւ հրդեհմամբ զհոգին : Քանզի ասացումն թշուառութեան մեղաւորաց եղիցի բոլորական, կատարեալ․ եւ լիալիր : Բոլորական, զի կրեսցէ զբոլոր չարիս․ Կատարեալ, զի բովանդակապէս կրեսցէ զայնոսիկ․ եւ լիալիր, զի կրեսցէ, ամ՟ զգայութ՟ք, կարողութ՟ք․ եւ զօրութ՟ք, որք ընդունակք են կրել զպատիժս տանջանաց:

ԳԼՈՒԽ. Է։

Պարզաբանի, թէ զինչ իցէ յաւիտենականութիւն ըստ մտաց սրբոյն Բեռնարդոսի։

1. ԱՅԼ իմն օրինակաւ պարզաբանէ սուրբն Բեռնարդոս զյաւիտենականութիւն ('ի Ճառ. յղգս տօնի ամ սրբց.) զի ասէ, թէ յաւիտենականութիւն պարփակեալ բովանդակէ զամ ժամանակ. զանցեալ, զներկայ, և զապառնի, ուստի ոչ ամք, ոչ աւուրք, և ոչ դարք բաւեն յագեցուցանել զյաւիտենականութիւն։ Զի նա կլանէ զամ կարելի, և զերևակերպելի ժամանակս։ և յարժամ միայն քունակ փորձի կլանել զայլ ևս ժմկս։ Բայց յայսմանէ պարունակէ նա զամ ժմնակ. զի յամ բոպէի ունի, զոր ինչ ունելոց է յանբաւ յաւիտեանս։ Վս այսորիկ 'ի Մարսիլիոսէ փիկինեայ կոչեցաւ յաւիտենականութիւն բոպէ, կամ վայրկեան ինչ մշտնջենաւոր. և Լեոնարդոս Լեսիոսն մեր ասէ, թէ նա միանգամայն երկարագոյն է, և կարճագոյն, զի 'ի միում վայրկենի պարփակէ, զոր ինչ

յանվախճան ժամանակս ունիլ կարէ: Եւ՛ զորօրինակ, ժամանակն է վայրկեան մի անցողական, և գնացական, զի չիք մեզ այլ ինչ 'ի ժամանակէ, եթէ ոչ ներկայ վայրկեանն, որ միշտ հոսի և գնայ. այսպէս և յաւիտենականութիւն ոչ այլ ինչ է, եթէ ոչ վայրկեան մի անշարժ և կայուն, որովհետև ընդ նմա՛ անցանեն յաջորդութիւք ժամանակք, և նա յամենայն 'ի նմին անփոփոխ և ներկայ գտանի: Ժամանակն, և նմա ժամանակաւո՛րքս են որպէս զգետ իմն արագընթաց, ուր ալիք վարեն զմիմեանս շտապ տագնապաւ՛, առանց դադարելոյ 'ի յընթացմանէ և 'ի փոփոխմանէ: Բայց յաւիտենականութիւն է որպէս զգետակ իմն ամուր և հաստատուն, կամ որպէս յատակ գետոյ, 'ի վերայ որոյ սահին ջուրք և գնան: Ուստի թէպէտ ալիք մի զկնի միոյ խաղացեալ ընթանան. և անյայտ լինին. սակայն նա կայ և մնայ 'ի կայի իւրում: Եւ՛ դարձեալ նման է յաւիտենականութիւն կիտոյ, որ է 'ի կեդրոնի շրջանակի. և նայի առ բոլոր շրջանակն. և առ իւրաքանչիւր կէտ նորին հաւասարապէս: Այսպէս և յաւիտենականութիւն է վայրկեան մի, որ արժողութեամբ հաւասար է անվախճան ժամանակաց. և նայի առ իւրաքանչիւրն. և զայն նմա որ ընդ նմա դարս գալոց է, զարմա-

նասնաաջանչ իմն եղանակաւ՛ ունի ներկայ:

2. Վս՟ այսորիկ առաջին առնէ մեզ զիր իմն յոյժ նկատելի, որէ այս՝ թէ բարին, ընդ որում միաւորեալ կայ յաւիտենականութիւն, է անհնարապէս բարեգոյն. և այս կրկին կերպիւ՛. մ՟ կըրկին անհնութբ՟. սոյնպ՟ և չարիքն, ը՟ որոց միաւորեալ է յաւիտենականութիւն, են անհնարապէս չարագոյն. և այս նոյնպէս կրկին կերպիւ՛: Խօսելով նախ զառաջին կերպէն ասեմ. թէ այն է անվախճան տևողութի. զոր բարին, կմ՟ չարիքն ընդունին՝ ի յաւիտենականութէ. Քանզի որչափ առաւ՛ելու է ինչ, այնչափ մեծ համարի, ուստի, եթէ անվախճան տևեսցէ, անչափապ՟ մեծ համարել լինի: Այսպ՟ և չար ինչ տևողութբ՟ անվախճան, թէ և իցէ ըս՟ քանակութն թեթև անցանէ զանցանէ քան զամ՟ դժնդակագոյն չար, որ չէ անվախճան: Ուստի եթէ ումեք առաջի դնիցիւր ընտրել զմին յերկուց աստի, կմ՟ կալ կենդանւոյն 'ի հնոց բորբոքեալ կրոյ. և բաց յայսմանէ կրել զամ՟ ախտս հիւանդութե, որք վերաբերին առ բժիշկս. այլև զամ՟ ազգս տանջանաց. զոր կրեցին մարտիրոսք, և չարագործք. և զայս ամ՟ ոչ ը՟ սուղ ինչ ժամանակ, այլ ը՟ երկերիւր հազարս բիւրաւոր ամաց, միայն թէ վերջասցի: Եւ՛ կամ՟

կրել զգլխացաւութիւն ինչ. կմ՟ զսոսկ իմն ցաւ ատամանց յաւիտեանս յաւիտենից, այնպիսին պարտ էր ընտրել յաւէտ զայն ամ՟ շեղջակուտեալ տանջանս, քան թէ զայն մի միայն ցաւ: Վ՟նզի թէպէտ այնոքիկ գերազանցեն քան զայս մեծութ՟. սակայն սա գերազանցէ քան զայնոսիկ տեւողութ՟:

3· Եկեսցեն այժմ առնել զհաշիւ վճռատուք իրաց ժամանակաւորաց, և պ՟տխնի տացեն, յորժամ ձեռնարկեմ ես այսպէս: Եթէ խստագոյն տանջանք դժոխոց էին տանելիք, եթէ իցէին ժամանակաւորք, և ընտրելիք էին այնք, քան թեթև իմն ցաւ յաւիտենական, ապա ո՞չ և զիարդ ոչ յանձն առնուն մարդիկ տանիլ համբերութ՟ զթեթև իմն վիշտ ը՟ այս սուղ ժամանակ կենաց մերոց առ 'ի չկրել զտանջանս դժոխոց 'ի յաւիտեան: Ո՞չ ոչ շարժէ զմեզ դժոխքըն յաւիտենական. որովհետև երկնչիմք 'ի ժամանակաւոր ինչ ցաւոյ: Ո՞չ ոչ ապաշխարեմք, ո՞չ ոչ համբերեմք 'ի չարիս մեր: ո՞չ ոչ յանձն առնումք զո և իցէ դժնդակագոյն վիշտ կենցաղոյս առ 'ի չկրել զտանջանս ը՟ ամ՟ յաւիտենիս: Զսոյնս կարեմք առնել և զբարեաց կենցաղոյս, թէ իմաստութ՟ առնէր եթէ ոք զամ՟ գանձս երկրի, և զամ՟ բերկրութիս զգայարանաց, զորս ստանալոցէր միայն 'ի բիւրաւոր ամս. և ոչ այլ ևս անդըր , փոխեցէր ը̃ մի միայն անվախճան բերկրութեն : Արդ եթէ այս այսպէս է , զի՞րդ փոխեմք ապա զանցաւոր և զերկրաւոր բերկրութի մի ը̃ անչափ խնդութեացն , որք պատրաստեալ կան մեզ 'ի յերկինս ժառանգել յաւիտեան : Արժան և իրաւ էր տալ զա̃մ ժամանակաւոր բարիս Զի առ 'ի հաւաստի առնել գտանել զմինն որ տևէ 'ի յաւիտեան : Ապա վա̃ էր չառնեմք հաւաստի զանանց բարիս , զրկելով զմեզ գոնէ երբեմն 'ի ժամանկ̃աւոր ինչ բարւոյ : Արդ առ 'ի պարզաբանել գործադրաբար զայս ճշմարտութի որչափ կարելի է . ասեմ, թէ նոյն ինքն գոլն զոր ունի ա̃ծ , եթէ լինէր միայն ժամանակեայ , կարէր յետադրել գոլոյն որ իցէր յաւիտենական : Եւ սակայն թուի , թէ առաւել շատանայ ագահն այնու ժամանակեայ և դոյզն գանձիւն , որ 'ի վաղիւն բառնի 'ի նմանէ մահուամբ, և գուցէ թէ այսօր իսկ յափշտակեսցէ 'ի նմանէ զայն աւազակն , քան թէ ցրուելով զայն ջանայ ստանալ զյաւիտենական գանձս երկնից : Յիրաւի թէ և ա̃ծ ոչ խոստանայր մեզ 'ի հանդերձեալ կեանս զայլ ինչ , բայց միայն զհեշտութի ինչ միոյ զգայութե̃ անվախճան , պարտ և պատշաճ էր թողուլ մեզ զա̃մ հեշտութի̃ կենցաղոյս : Եւ դու տես ապա , թէ որչափ մեծ է անմտութի մարդկան : Խոստացեալ լինի մեզ Է ամ յաւիտեանս անվախճան բերկրութի, և մեք ոչ թողումք զաղցաւոր, և զգուշանաքեայ ինչ բերկրութի :

4. Խօսելով զերկրորդ կերպէն, կամ զյատկութէն յաւիտենականութե, ասեմ թէ նա ոչ միայն 'ի բարիս կամ 'ի չարիս աճեցուցանէ զապառնին տեւողութի, այլ և ներկայ առնէ զանցեալն : Ուստի արդարքն 'ի յերկինս ոչ միայն վայելեն 'ի ժամուս յայսմիկ զփառսն զոր ունին, և զոր առ յապայն ունելոց են, այլ և զայն, զոր երբեմն ունէին. և չեն բնաւ դադարելոց 'ի խնդակից լինելոյ 'ի վերայ առաքինութեց, և բարի գործոց իւրեանց : Ուստի ամ բարիք, անցեալ, ներկայ, և ապագայ խռնին 'ի միասին ընդթանան առ կատարելութի և մեծութի խնդութե նոցա, և կուտակեալ բարդի յերջանկութե նոցա ամ բարի : Բայց տեսցուք, թէ որչափ տարբեր են ժամանակաւոր բարիքս, որով հետև ներկայքն իսկ ոչ վայելեալ լինին կատարելապէս : Զի չիք ուրախութի և բերկրութի ինչ ժամանակաւոր. զոր ոչ պակասութի ինչ, կամ տառապանք. և կամ վտանգ եղծանիցէ և կամ վրդովեսցէ. նա զի և ոչ յապագայն թողացուցանին 'ի վայելումն. զի ոչ է հաստատուն սպասումն նոցա : Ուստի ոչ միայն չհաղորդեն զապագայ վայե֊

վայելուչս ումեք, այլ մանաւանդ բառնան զհամն ՚ի ներկայէն երկիւղիւ կորուսանելոյ զայնս, կամ զրկեալ լինելոյ յայնց: Եւ ահա երկիւղս և կասկածս այս ոչ թողու, թէ անցեալն բերցէ ՚ի յիշողութեն զմխիթարութիւն. այլ մանաւանդ յերկիւղէ կորստեան յառաջ գայ այնչափ մեծ վիշտ և անձկութին, որչափ մեծ էր բերկրութիւնն, զոր յառաջն ունէր:

5. Արդ յորմէ կողմանէ և նկատեսցուք, միշտ բարեգոյն են բարիքն յաւիտենականք: Վա՛ որոյ առ այնս պարտիմք հառաչել, այնց փափաքել. և այնց ջանս դնել ՚ի հասանել, թէև հարկ լիցի մեզ տալ վ՛ն նց զա՛մ կենցաղականս: Այլ բարեգոյն կերպ յղ՛փս այսորիկ է զհետ երթալ յաւիտենականութեն ՚ի կեանս յայսոսիկ որչափ հնար է, և պատրաստիլ առ այն կըրթութբ երից առաքինութեց, զորս առաջի կացուցանէ մեզ երանելին Բեռնարդոս. ՚ի ճառն. ա՛. յղ՛փս փծնախմբ. ա՛մ ոբյ.) ասելով: Աշխատութբ. հեշտութբ. և ողբով նորոգի ՚ի հոգին նմանութե իմն, և պատկեր յաւիտենականութե, որ բովանդակեալ պարունակէ զա՛մ ժամանակ: Զի աշխատութբ ապառնոյ զապագայս, հեշտութբ իւր առնէ զներկայս. և ոգով ապաշխարութե վերստին ստանայ զանցեալսն:

6. Արդարև, որ մեծ համարիմ զյա-

ւիտենականն, ոչ պարտի յայլ ինչ առաւել ջանիւ պարապիլ, քան թէ 'ի կրթութ՟ի այսոցիկ երից առաքինութ՟եց :

7. Զառաջինն՝ պարտ և արժան է, զի անջատեսցի յա՟մ ժամանակաւորաց աղքատութ՟բ հոգւոյ, և փոխանակելով զայն ը՟ յաւիտենականին : Երկ՟դ՝ հեզութ՟բ և համբերութ՟բ ջանալ գործել զբարին, և յաղթահարել զդժուարին խոչս առաքինութ՟եց գիտելով թէ վ՟ն այսպիսի թեթև վշտաց և աշխատութ՟եց գանձեալ պահին վարձք մեծամեծք :

8. Ո՞վ է, որ տեսեալ զերկինս, և զդժոխս բացեալ, և յերկաքանչիւրսն զմիշտն, ոչ քաջալերեսցի անցանել քաջութ՟բ հոգւոյ ընդ հուր և ընդ ջուր առ 'ի հաճեցուցանել զփրկիչն իւր : Գրէ Հռուփինոս, թէ եղբայր ոմն եկն առ հայրն աքիլէս. և ասէ, հայր նեղեն զանձն իմ խորհուրդք ձանձրութ՟ե և տրտմութ՟ե՝ նստիլ հանապազ 'ի սենեկի : Պատասխանի ետ ծերն իմաստուն; և ասէ, որդեակ վ՟նկ լինի քեզ այդ, զի ոչ 'ի միտ ածես դու զտանջանս մշտնջենականս, որք հանդերձեալ են մեզ. և ոչ զանմահ և զանանց ուրախութ՟իս որք քաջալերատան մեզ: Զի թէ զմտաւ ածէիր զայսոսիկ, թէև լի լինէր որդամբք սենեակ քո, և դու թաղեալ մինչև ցպարա-

նոց քո, ոչ ընաւ՛ ելանէիր անտի, այլ անձանձիր և անտաղտուկ յարատևեն՟ մնայիր 'ի մէջ նց՟:

9. Երրորդ առաքինութիւն, յորում պարտիմք կրթիլ, է ցաւ՛ և սուգ ինչ առաքինի և գովելի, որով մեղուցեալն պարտի հայցել զքաւութի միղաց իւրոց, և վճարել վս՟ նց՟ արտասուալից զղջմամբ, և դառնութ՟ բեկեալ սրտիւ. քանզի կեանքն յաւիտենից, որ մեղօք կորուսեալ է. ապաշխարութ՟ վերստին ստացեալ լինի: Եւ՛ թէպէտ ստոյգ է ասել. թէ եղելայն չիք ճար. և 'ի վր՟ անցելոյն չիք զօրուի և հնար, սակայն այնպէս զօրաւո՛ր է առաքինութի՟ս այս ուժեղակ, մինչզի եղծեալ 'ի չիք դարձուցանէ զարարեալն, և ձգէ զո՟րութի իւր 'ի վր՟ անցելոյն. որովհետև բառնայ 'ի միջոյ զմեղս անցեալս այնպէս, ոպ՟ թէ չեն լեալ երբեք գործեցեալ:

* * *

ԳԼՈՒԽ. Ը։

Թէ զի՛նչ իցէ որ ունիցին յաւիտենականութէ զիմացման ։

1. Չե՛ն բաւական տակաւին մեր պարզաբանութիւնք և սահմանքս այսորիկ յաւիտենականութեան տալ մեզ իմանալ իսկութիւն զմեծութիւն նորին, այլ մանաւանդ ասել կարէ զնմանէ այն, զոր ասաց Սիմոնիդէս, յորժամ հարցաւ ՚ի Յերոնէ արքայէն Սիկիլեայ պարզաբանել, թէ զի՛նչ է Աստուած. Իսկ փիլիսոփայն խնդրեաց զօր մի առ ՚ի պատասխանել. որպէս զի կարող լիցի յայնմ վայրի խոկալ ՚ի վերայ այնորիկ։ Իբրև էանց օր մի, ասաց թէ պիտոյ է ինձ աւելի ժամանակ. և խնդրեաց զայլ երկուս աւուրս, և յետ նորա զայլ չորս աւուրս ։ Եւ իբրև անցին այնք աւուրք, ասէ, որչափ առաւել խորհիմ և մտածեմ, այնչափ աւելի նիւթս գտանեմ խորհելոյ, և ոչ զկերպ ինչ գտանել կարեմ առ ՚ի բացայայտել զայն ։ Սոյնս այս ասել կարէ և զյաւիտենականութենէ, թէ նա է անդունդ ինչ այնպէս խորխորին, և ահագին, մինչզի չկարէ միտք

մտօք մարդկային մտանել 'ի քննութիւն և 'ի յըմբռնումն նորին առանց հեղձամուղձ լինելոյ: Եւ՞ ոչ սուրբն Դիոնեսիոս արիսպագացին ասաց զայս. Թէ մտծ ոչ կարէ ասել այն ինչ, որ է, այլ միայն այն ինչ, որ ոչ է, և այս վեր քան զոր էն: այսպէս և զյաւիտենականութիւն կարէ ասել. Թէ նա ոչ է այն, որ ինչ է ըստ մերս իմացման. այլ 'ի վեր քան զոր էն: Վասն զի ոչ է նա ժամանակ. և ոչ միջոց ժամանակի. ոչ դարք. և ոչ բիւրք դարուց. այլ է 'ի վեր քան զբիւրս բիւրուց յաւիտեանից, և 'ի վեր քան զամենայն ժամանակ, և քան զամենայն միջոց ժամանակի: Չէ յաւիտենականութիւն կեանքս այս, զոր դու վայելես, որ և վաղվաղակի սպառելոց է: չէ յաւիտենական ուժեղութիւն. որ 'ի քեզ երևի: չէն յաւիտենական զբօսանք քո: չէն յաւիտենական ստացուածք քո: չէն յաւիտենական գանձք քո: չէն մշտնջենական զօրաւոր մեծատունքն այնք, յորս դուն յուսաս: չէն մշտնջենական բարիքս այսոքիկ, զորս դուն սիրես: Մեծ, և մեծ ինչ է արդեօք յաւիտենականութիւն. և 'ի վեր քան զսոսա են յաւիտենականքն. զի 'ի վեր են քան զթագաւորութիւնս. 'ի վեր են քան զինքնակալ պետութիւնս, և 'ի վեր են քան զայլ ամենայն երջանկութիւն.

Վա

Վասն այսորիկ Լակտանտիոս . և այլք վարդապետք պարզաբանեալ զյաւիտենականութիւն , ասեն , թէ է այն ինչ , որ ոչ է : և ոմանք 'ի նոցանէ ասեն , թէ յաւիտենականութիւն է , որ ոչ ունի զսկիզբն : այլք՝ թէ չէ 'ի ներքոյ անկեալ փոփոխութե̃ն . և կէսք թէ չունի զհամեմատութի̃ ընդ իմիք , քզ̃ թէ չունի զեզր սպառուածոյ , ոչ զփոփոխութի̃ . և ոչ ամենևին զբաղդատութի .

Յօդուած Երկրորդ:

Այեցեալ յառաջին սահման անդր յաւիտենականութե̃ , որ է չունելն նր̃ զսկիզբն , ասաց Կեսարիոս , թէ յաւիտենականութիւն է տիւ մի , որ չունի երբէք զերեկոյ : Զի սրբոցն յաւիտենականութի̃ ոչ տեսանէ երբէք զմուտն արևու իւրոյն պայծառութե̃ : Իսկ մեղաւորացն է գիշեր իմն խաւարամած , ուր ոչ լինի երբէք լոյս արեգական . վ̃զի կեցցեն 'ի մշտնջենաւոր նսեմութե̃ և 'ի խաւարի , ուր մարմինք եղկելեացն այրեսցին . և հոգիք նց̃ կատաղեալ ցնորեսցին 'ի խստութէ տանջանաց : Արդ . եթէ ջերմամբ ախտացելոյն , յորմէ քունն փախչի , թէև անկեալ դնի 'ի փափկագոյն մահճի , մի ժամ գիշերոյն թուի նմա յաւիտեան մի • կամ ամս հազար՝ մինչև եկեսցէ նմա առաւօտն. Զինչ ապա եղիցի նմ՟ կալ առանց ննջելոյ զգիշերն զայն յաւիտենական հանդերձեալ կենաց, որք ննջեցին ՚ի կեանս յայս՝ մինչդեռ ժամ էր արթուն կալոյ, և չարչարիլ անդանտանելի կտտանօք ՚ի հրեղէն մահճի առանց յուսոյ տեսանելոյ երբէք զառաւօտ։ Զսոյն զայս ոչ ունիլն յաւիտենականութե՟ զվախճան օրինակեցին հինք ՚ի ձև մանեկի ։ Բայց առաւել գեղեցիկ իմն խորհրդեամբ կոչեաց զնա պսակ մարգարէն դաւիթ, զի բոլորութի՟ պսակին ո՟չ ծանուցանէ Դիոնեսիոս կարթուսեանն հանգոյն բոլորութե՟ մանեկի չունի զծայր, կամ զաւարտ • որով յայտ առնէ մեզ. թէ ՚ի յաւիտենականութե՟, որ չունի զվախճան, կամ զաւարտ՝ պսակեալ եղիցին գործք մեր բարիք • և պատժեալ լիցին գործք չարք ։ Պարտ և արժան էր զահի հարեալ դողալ ՚ի բարբառոյ սաստի, անվախճան ; կամ անէզրական , վ՟ չար գործոց մերոց ։ Նոյնպ՟ և ուրախանալ ՚ի բարբառոյ անտի անվախճան, վ՟ բարի գործոց մերոց ։

2. Եթէ դատապարտեալ ք , ո՟չ ասէ երանելին բոնաւենտուրայ , ՚ի հարիւր ամէ ՚ի հարիւր ամ հեղոյր զմի միայն կաթիլ արտասուաց, և ՚ի յայն

չափ ժամանակս պահեալ գանձեալ կայցէին այնք , մինչ զի զկնի անհամար բիւրաւ̂որ ամաց հաւ̂ասարէին ջուրցն ծովու , տե՛ս դու : Թէ քանի բիւրք ամաց պիտէին լինել առ ՚ի զուգահաւ̂ասարել ջուրցն ծովու , թող ասեմ հաւ̂ասարել ովկիանոսի . այլև հազազարաւ̂որ ամք պիտէին առ ՚ի հաւ̂ասարել առաւ̂ել միում Արդ՝ միթէ կարէ՛ր ասել , զկնի լցեալ լինելոյ այսպիսի ծովու արտասու̂աց ՚ի շրջանս բիւրուց յաւ̂իտենից . թէ ահա այս է յաւ̂իտենականութեան , ասա ահա էառ զվախճան , քաւ̂ լիցի . ոչ ամենևին , այլ մանաւ̂անդ կարէր ասել , ասա սկսաւ̂ արդ զսկիզբն կալաւ̂ :

3. Դարձցին դնել միւսանգամ ՚ի միասին յետ այնչափ դարուց կաթիլք արտասու̂աց դատապարտեցելոյն այնորիկ . և լցցի միւսանգամ ովկիանոս արդեօք զկնի այսչափ բիւրաւ̂որ յաւ̂իտենից վերջանայր յաւ̂իտենականութեն , ոչ , ոչ . այլ մանաւ̂անդ սկսանէր ո՞չ ՚ի նախկին օրն ոչ աւ̂ելի . և ոչ նուա̂զ : Երեքկնեսցի . և բազմապատկեսցի փորձն այն տասնիցս . քսանիցս . և հարիւր հազարիցս . և լցցեն , զեղցին , յորդեսցին բիւր ովկիանոսք հանդերձ վայրիւքն . և հեռաւ̂որութեն յաւ̂իտենանցն արդ իսկ ասացելոց , արդեօք կարելի՞ էր ՚ի վախճանի ժամա-

նել 'ի յատակ անդր յաւ̂իտենականութեն , ոչ , այլ գտանէաք զմեզ 'ի վր̄ անման : Մինչ թիւ̂ , և ոչ ինչ արհեստ թուաբանական կարէ բովանդակել զանման յաւ̂իտենականութեն : Վս̄ զի եթէ ա̄մ երկինք լինէին մագաղաթք՝ լցեալք ներքոյ և արտաքոյ թուաշօք . ոչ կարէին հասանել բնաւ̂քն 'ի միասին մուծանել 'ի գումար զփոքրիկ մասն ինչ յաւ̂իտենականութեն :

4. 'Ի ժամանակս արքիմեդեայ էին ոմանք փիլիսոփայք , որք ասէին , եթէ թիւ̂ աւ̂ազոյ ծովուն է անեզրական : Այլք թէպէտ խոստովանէին , թէ եզրական է , սակայն ոչ համարէին , թէ թուելի իցէ : Արդ առ 'ի եղծել զերկաքանչիւրոցն զմոլորութի̄ , շարադրեաց արքիմեդէս գիրք մի նրբին և իմաստալից . և նուիրեաց գեղոնի արքային սիրակուսայ , յորում ցուցանէ . թէ նաև եթէ բովանդակ աշխարհս լի աւ̂ազովք լինէր , և առաւ̂ել մեծ քան զոր էն , ոչ լինէր տակաւ̂ին վե̄կ այն ա̄մ բազմութին աւ̂ազոյ անթիւ̂ . այլ կարէր վերածիլ 'ի թիւ̂ : Եւ̂ արքիմեդէս արդարև առնէ զգումար հաշուին : Եւ̂ զկնի փիլիսոփայիս այսորիկ նաև հայրն կլաւ̂իոս յայտ արար թուաբանական ապացուցիւ̂ , թէ որչափ հատիւք աւ̂ազոյ կարէր լնանել բովանդակ միջոցն

'ի

'ի հաստատութէ՟ մինչև 'ի հողն, ուր կան ջուր, օդ· հուր· և պարունակք մոլորակաց: Արդ՝ եղեալ թէ այս ամ՟ միջոց լի իցէ աւազովք, և եղեալ թէ իւրաքանչիւր հատ աւազոյ այնչափ փոքրիկ և անբաժանելի իցէ· մինչ զ' բիւր մի 'ի նոցանէ եղիցի ա՟ չափու հատի միոջ մեկոնի: կամ մանանխոյ, տակաւին կարէ գումար այնչափ բազմութեն աւազոց դնել 'ի փոքրիկ միջոցի· զոր նա սեղմեալ բովանդակեաց 'ի միում և եթ տողի: Վ՟ զի բոլոր գումարն ոչ պարունակէ աւելի քան զմի միուն· և զյիսուն և մի զրօ· Արդ՝ ենթադրեալ, թէ այսչափ բազմութին բիւրաւոր հատից աւազոց· (զորոչզօրէ միտ մարդոյ ըմբռնել·) պարունակի 'ի յայսպիսի փոքրիկ գումարի միում· արժան է ձեռնարկել, թէ ապա որչափ անթիւ և անհամար իցեն ամք յաւիտենականութեն· որոց ոչ գոյ գումար, և ոչ գումարտակ· վ՟ զի ասեմ, ոչ եթէ ճակատ մատենի միոյ, այլ եթէ բովանդակ մատեան մի ամբողջ լինէր հաշիւ թուոց, և ոչ միայն մատեան մի, այլ բովանդակ միջոցն յերկրէ մինչև ցհաստատութիւնն լի լինէր թղթովք և բոլոր հաստատութիւն, լի լինէր գրեալ թուովք· ոչ կարէին պարունակել ընւքն զանէ զյետին մասն յաւիտենականութեն: Վ՟ այսորիկ քաջ խօսեցաւ Լոկտամնտիոս յասել անդ խորում. Ո՛ր անօթ յագել չարէ յաւիտենականութեն, որում չէ՞ վախճան: Բարձ 'ի յաւիտենիցնուէ զայնքան ամս, զորչ̃ կաթիլս ջրոյ ունի ծովն, զորքան շամանդաղս ունի օդն, զորքան տերևս ունին անտառք և դաշտք, զորքան հատս աւազոյ ունի երկիր, և որչափ աստեղք են 'ի յերկինս, նա մնայ տակաւին ամբողջ, և անթերի: Յաւել զդոյնչափ ևս 'ի վր̃ նր̃, և ոչ լիցի նա յաղագս այդորիկ մեծ, կամ հեռի 'ի վախճանէ իւրմէ, որում հետև է նա անվախճան, և անսկիզբն. Պատկերացո՛ քեզ զլեառն մի աւազոյ, որ հասանէ յերկրէ յերկինս. յորմէ հրեշտակ մի 'ի հազար ամս միանգամ 'ի բաց բառնայ զհատ մի աւազոյ: Արդ քանի՞ անթիւ և անհամար բիւրք ամաց պարտին անցանել, մինչև տեսցես զայն լեառն հարթեալ: Եւ սակայն լինէր ժամանակ, որ մինչև ցվերջին հատն լինէր 'ի բաց բարձեալ: Բայց անկարելի է թէ ժամանիցէր յեզր, կամ 'ի վախճան յաւիտենականութեն: Սպառէր լեառն այն, և 'ի յաւիտենականութենէ անտի ոչինչ թերենայր: Թուի թէ զայս նշանակեալ ծանոյց մարգարէն ամբակում. յորժամ ասաց. Բլուրք տիեզերաց խոնարհեցան յերեսաց գնացից մշտնջենաւորութե նր̃: Ամբակ. 3. 6: Քանզի բիւր ովկիանոսք, և բիւր լերինք հանդոյն

Ոչիմ

Ողիմպեայ կարեն եղծանիլ անբաւիցս , մինչև յաւիտենականութ՟ե մեղաւորաց անցցէ առանց երբէք անցանելոյ · զի անցցեն եղկելիքն այնոքիկ 'ի մէջ կլանող հրոյն , և 'ի մէջ մշտնջենաւոր տանջանաց հազարիցս հազար , և բիւրիցս բիւր ամօք ոչ երբէք ժամանելով յեզր սպառուածոյ ն՟ր այլ յետ այնչափ ամացն այնպէս լիցի · ո՟պ էրն յառաջնում աւուր , յորում զսկիզբն կալան :

Յօդուած երրորդ :

Ո՛ է , որ հանդուրժել կարիցէ , եթէ խորովեալ լիցի ը՟ մի կողմն մարմնոյն ամ մի ողջոյն : Այլ զի՞ ասեմ խորովեալ լինիլ ը՟ մի կողմն · ո՛ է որ հանդուրժել կարիցէ ընկողմանեալ մնալ ամ մի ողջոյն 'ի մի կողմն մարմնոյն առանց փոխելոյ կողմն 'ի կողմանէ : Երանի՞ թէ յա՟մ աւուր առնէաք զխոկումն ինչ 'ի վ՟ր ա՟ր 'ի միջոցի կէս ժամու և եթ , յայնժամ այլազգ արդարև քաղաքավարէաք : Զօրութ՟ի խոկմանս այսորիկ քաջ և ուժգին որոշեցեալ երևի 'ի յետագայ դիպուածս , զոր պատմէ Բեռնարդոս Հռենատեան , թէ էր աշխարհասէր ոմն , որ ստունդանելով բոլորովին զմերկութին հոգւոյն , նկայր անառակութե՟ : Սա որպէս մատնեալ էր զանձն յամենայն հաճոյս մարմնոյ և աշխարհի , այսպէս և ոչ կամէր զրկել յայնց ննջելով Ընդ երկար , և մեղկութե՟ : Այլ դէպ եղև , զի 'ի գիշերի միում մնաց արթուն , և ոչ կարաց 'ի քուն լինել . վ՟ս անցոյց զգիշերն ողջոյն դառնալով և թաւալելով մերթ 'ի մի կողմն , և մերթ 'ի միւսն , և թուէր նմա իմ՟ բոպէ տարի մի մինչև 'ի լուսանալ աւուրն : Եւ մինչդեռ թաւալէր այնպէս , սկսաւ խոկալ զայս , և ասել . Ապա որչափ անհանդուրժելի եղիցի քեզ ով անձն իմ կալ ը՟ այսմ օրինակի 'ի խաւարի յերկուս , կմ՟ յերիս ամս անը՟հատ առանց կենակցելոյ ը՟ բարեկամս քո , և առանց զբօսանաց խաղուցդ . Թէև լիցի անկողինդ այսպ՟ փափուկ յօրինեալ : արդարև անտանելի պատիժ իմն լինէր քեզ այս . Արդ՝ ծանիր , զի ոչ կարես զերծանիլ յայսմանէ , եթէ ոչ 'ի լաւ անդր փոխեսցես զվարս քո : Անկեալ կայցես յաւուր միում հիւանդ 'ի մահճի , ուր անցցեն գիշերք վշտագինս 'ի վ՟ր քո . եթէ չմեռանիցես յանկարծակի յեղակարծումն ժամու , որ է չարագոյն քան զառաջինն : Եւ զինչ այս մահճիս , ուր քեզ սպասեալ մնայ մայն, 'ի միտ ած և զմիւս մահիճն, որ վ̅ն քոյ պահեալ կայ: Զի մարմին քո փոխանակ անկողնոյ ունիցի զհողն կոշտ. և խիստ, և ծածկեսցի յորդանց անտի: Իսկ վ̅ն հոգւոյդ զո՞ր ստուգու̃ն ունիս դու: Ստուգիւ եթէ նկատել հայեսցիս 'ի վարս քո առաջակայ, չիք քեզ տեղի' ուր դիցես զգլուխ քո, եթէ ոչ 'ի գեհեանն անշէջ: Անդ կան անկողինք հրաբորբոք. և սոսկալիք, ուր ոչ ամս երկուս, կամ երիս, այլ 'ի բովանդակ յաւիտենականութ̃ն անդ ստիպեսցիս կալ 'ի խաւարի, և 'ի տանջանս մշտնջենականս. և ոչ կարասցես 'ի բիւրս բիւրուց ամաց վճարել զոնէ զմասն ինչ միում 'ի յանառակ և յանպատեհ հեշտութեանց քոց: Անդ ոչ տեսցես երբէք զարեգակն: ոչ զերկինս, և ոչ զա̃ծ: Վա՜յ ինձ թշուառականիս, ո՛վ, կ̃մ զիարդ հանդուրժել կարացից մշտնջենաւոր տանջանաց, եթէ ոչ կարեմ բառնալ զայս սուղ և թեթև արթնութիս: Արդ' զինչ շահ է ինձ 'ի խոկմանէ սատի, եթէ ոչ փոխեցից զշաւիղս գնացից իմոց, որովհետև նովիմբ առանց կարծեաց դամ 'ի կորուստ: Այսպիսի խորհրդով կալաւ զնա ահ, և սոսկումն վ̅ն յաւիտենականութ̃ն, այնպ̃ զի ոչ արէր հրաժարել 'ի խոկմանէ անտի, մինչև հաստատեաց զմիտսն մտանել 'ի կրօն ասելով բազում անգամ ցանձն իւր, զինչ կայ ինձ եղկելւոյս ընաւ յշ̃ի։ Զի թէ զայն վայելեմ, վայելումն այն լիցի ինձ 'ի դառնութ̃ և յանօգուտս. զի անբաւք գործին ը̃դէմ կամացս. և զոր կամիմն, ոչ գտանեմ. և յանօգուտս տառապիմ զհետ բարեաց կենցաղոյս. այլ զինչ վարձք, կամ արդիւնք մնայ ինձ 'ի սնոտի հոգոց անտի։ Ոչ վայելեցի գոնէ 'ի միոջն ամբողջապէս, բայց թէ և զայն վայելէի, ցորչափ արդեօք տևէր ինձ այն։ Ոչ տեսանեմ անձն իմ եղկելի յամ̃ աւուր զնոսին, որք մեռանին, և մտանեն 'ի յաւիտենականութիւն անեզրական։ Ո՜վ յաւիտենականութ̃, յաւիտենականութ̃, եթէ չես 'ի յերկինս, ուր և իցես, ծանր ես և տաժանելի, թէ և իցես յաղնիւ, 'ի փափուկ և 'ի ծաղկաւէտ անկողնի։ Արդ՝ զարքայութիւն մեզ ապահով արասցուք, և մի՛ զբազումն և զյոլովն վ̃ սակաւուց կորուսցուք։ Զայս այսպէս ասաց, և կատարեաց լինելով կրօնաւոր 'ի կարգին Կեստելեանց։

Յօդուած Չորրորդ :

Յա՟մ գործս մեր պարտիմք մտածել զայս, թէ յանբաւ յաւիտեանս տացեն մեզ վարձս վ՟ս բարի գործոց մերոց . և 'ի յաւիտեան խստագոյնս ընկալցուք զտանջանս վասն չար գործոց մերոց: Սովլիմբ քաջալերեսցի քրիստոնեայն գործել միշտ զբարին, և առնել բարւոք : Գրէ Եղիանոս զԻսմենեայ դեսպանէն թեբայեցւոց, թէ յորժամ գնացեալ առ արքայն պարսից առնել զդեսպանութի՟ իւր, և զի պարտ էր յառաջքան զխօսելն, երկիր պագանել նմա, թուեցաւ Իսմենեայ աւելորդ իմն այնչափ պատիւ յարգութե՟ թագաւորի միում բարբարոսի . ուստի վարեցաւ այսպիսի ինչ հնարիւք : Զի էհան զմատանին 'ի ձեռացն, յորում էր կնիք արքայից իւրոյ, որ 'ի հին ժամանակ անդր էր նշան պատուոյ և իշխանութե՟ ունողին զայն, և 'ի ծածուկ ընկէց զայն առ ոտիւք թագաւորին . և յորժամ անկաւ 'ի վ՟ր երեսաց իւրոց երկիր պագանել նմա, ասէ 'ի միտս իւր, ոչ քեզ, այլ մատանւոյդ երկիր պագանեմ: Արդ եթէ և մեք այսպէս յամ

գ՟ր.

գործս մեր յառնել ունէաք զհայեցուածս մտաց մերոց 'ի յաւիտենականութիւն, յոր ինչ բարի գործս գտանէաք զզուարճութիւն: Օրհնեալ է ա՟ծ, որ հաճի տալ մեզ զվարձս անանց և անեզրական կենաց վ՟ն սուղ և դուզնաքեայ վշտաց, զորս մինչև եմք սկսեալ 'ի կրել, վերջանան նոքին: Գերահռչակ բանաստեղծն 'ի մէջ յունաց Եւրիպիդէս տառապեալ վշտանայր երբեմն վ՟ն ոչ կարելոյն առնել 'ի մէջ երից աւուրց զերիս տաղաւոր տունս, կրելով և զմեծ անձկութիւն վ՟ն ն՟յ: Եւ այլ ոմն բանաստեղծ Ալկեստիդէս անուն ասէ ցնա. մի միայն օր բաւական է ինձ առնել դիւրաւ զհարիւր տուն տաղաւորս: Յայնժամ ասէ ցնա Եւրիպիդէս, չէ ինչ զարմանք այդ, որովհետև տաղաւոր երգք քո մնան միայն զերիս աւուրս, և ոչ աւելի. բայց երգք իմ մնան յաւիտեան:

2. Այնպէս և Զեւքսի՝ գերահռչակ նկարչին. և հանդարտօրէն գործօղն իբրև հարցաւ, թէ վ՟ն է՞ր այդչափ յապաղես գալ 'ի գլուխ գործոյդ, կ՟մ սկիզբն առնել նկարմանդ. պ՟տխի ետ, և ասէ. ես նկարեմ յուշիկ և հանդարտ, զի նկարեմ առ 'ի մնալ 'ի յաւիտեան: Արդ խաբեցան սոքա, զի միոյն և ոչ հետք նկարուցն մնացին

մինչև ցայժմ . իսկ յոլով գործք Եւ́րիպիդեայ կորեան 'ի միջոյ : Բայց և ոչ մի 'ի գործոց արդարոյն կորիցէ . և 'ի մտանել զկեանս յաւիտենից չիք մեզ հարկ ծախել գոնէ և զօր մի տառապանօք . վասն զի միով ներգործութե̃ ապաշխարութե̃ և կատարեալ դարձի կարեմք ստանալ զուրախութիւն անվախճան : Ուստի պարտիմք 'ի գործ դնել և մեք զխոկումն Եւ́րիպիդեայ և զեւսեայ` ոչ միայն առ'ի գործել զբարին , այլ և գործել բարւոք . և նախանձիլ ա̃յ հօրն արսենիոսի . որ յետ բազում ամաց վարուցն սրբութե̃ . իբրև թէ նոր սկիզբն առնէր , ասէր բազում անգամ ը̃ դաւ́թի . Ասացի , այժմ սկսայ : Զ: պարտ մեզ դարձուցանել զաչս յայս , զոր արարաքն , յոր վաստակեցաքն , այլ ջանասցուք , քաջասցուք և եւս վաստակիլ վ̃ն ա̃յ , ո̃պ առնէր ա̃ռ առաքեալն Պօղոս , որ ասէր , զա 'ի յետոյսն մոռացեալ եմ , և յառաջադէմսն նկրտիմ : Զայս ասէր առաքեալն յետ արդ իսկ առաւ́ելեալ լինելոյն . և վաստակելոյն վ̃ն ա̃յ 'ի յօգուտ և 'ի փրկութե̃ հոգւոց այնպիսի մեծամեծ ծառայութե̃ . որով գերազանցեաց ք̃ զայլ առաքեալսն : Յետ համարձակ մտանելոյն 'ի ժողովրդանոցն դամասկոսի քարոզել հրապարակաւ́ զՅ̃ս Ք̃ս յայտնի վտանգաւ՛ կատարամահ լինելոյ. եթէ չէր փախուցե͞լ իջուցե͞լ 'ի պարսպէ անտի քաղաքին։ Յետ լուսաւորելոյն զբազում ժողովրդ 'ի յարաբիայ ։ Յետ դարձուցանելոյն զմեծ բազմութ͞ն յանտիոք, և 'ի տարսոն ։ Յետ բազում անգամ շրջելոյն 'ի փոքրն ասիայ, ընդ բոլոր տունն յունաց. և 'ի մեծագոյն մասն Եւրոպիոյ՝ լուսաւորելով զանհամար բազմութ͞ն ժողովրդոյ։ Յետ կրելոյն զանբաւ՛ հալածանս ։ Յետ բազում անգամ քարկոծ լինելոյն, յորոց 'ի միումն թողաւ՛ կիսամահ ։ Յետ յոլով անգամ ձաղկեալ. և բանտարկեալ լինելոյն ։ Յետ յափշտակելոյն մինչև յերրորդ երկինս, և գործելոյն զբազում նշանս սքանչելեաց ։ Արդ՝ զկնի այսոցիկ բնաւից ոչ թուէր նմա, եթէ կրեալ. կ͞մ գործեալ իցէ ինչ վ͞ս Ք͞ի. ուստի մառայեալ զ͞ամ, կայր այնպէս, ո͞րպ յառաջնում աւուր դարձին իւրոյ, ցանկանալով առնել զբազումս, կրել զյոլովս, վաստակիլ առաւել ևս, և համարելով զանձն յետ այնչափ աշխատութեանց, և այնչափ ծառայութեանց իբրև ծառայ անպիտան և ոչինչ՝ ը͞ս բանից տ͞ն, որ ասէ ։ Իբրև առնիցէք զ͞ամ հրամայեալսն ձեզ, ասասջիք. ծառայք անպիտանք եմք. զոր պարտ էաքն առնել, արարաք ։ Ղուկ. 17։ Արդ՝ եթէ համա մատուցէ ոք զվիշտն · զնախանձն , զքարոզութին · և զսէր իւր մշտայ, քարոզումն · և սիրոյ առաքելոյն , գտցէ զանձն իւր չև սկսեալ տակաւին 'ի բարին : Այլ արդ եթէ առաքեալն յետ բարձրանալոյն յայսչափ վեհագոյն արդիւնս բարեաց , մոռացեալ զամ , ձեռնարկէ վերստին սկսանել · զիա՞րդ ապա մեք , որք չեմք տակաւին զսկիզբն արարեալ · լուծեալ և պատրաստեալ կամք նախ քան զսկսանելն : Ադէ՛ սկսեսցուք նորոգ համապատ, որովհետև յաւիտենական կեանքըն , որ մեզ սպասեն՝ նոյն միշտ է նոր , և միշտ է 'ի սկիզբն իւր : Վայ ասէ Դիոնեսիոս կարթուսեանն ('ի վէ հզ· աաղմ·) Մի պարծեսցուք յարդիւնս անցելոց մերոց · և մի համարեսցուք ինչ , այլ հանապազ այնպէս եռացեալ հոգւով, և նորոգապէս գործեսցուք , որպէս թէ յայնմ աւուր նախ սկսանիմք , և յայնմ աւուր մեռանելոց իցեմք :

ԳԼՈՒԽ Թ։

Թէ յաւիտենականութիւն է անփոփոխ։

1. Երկրորդ թէութե̃ն յաւիտենականութենն է կալ և մնալն նր̃ անփոփոխ, զոր ծանուցին մեզ հինք բազում խորհրդաւոր առակօք և օրինակօք։ Ոմանք նկարագրեցին զնա 'ի ձև աթոռոյ ը̄ մարգարէին Եսայեայ. որ ետես զՏր̃ նստեալ յաթոռ բարձրութե̃ և վերացելոյ, առաջի դնելով մեզ սովաւ զմեծութի̃ յաւիտենականութե̃։ Ուստի և աւետարանիչն Յօհաննէս բազում անգամ յիշէ զաթոռն ա̃յ 'ի գիրս յայտնութե̃ ցուցանելով նովաւ զանեղութի̃ նր̃։ Բայց յայտնագոյն ևս մարգարէն դանիէլ, յորժամ ետես զա̃ծ յաւիտենական, կոչեաց զնա՝ հին աւուրց. զի ետես զհերս նորա սպիտակ իբրև զասր ոչ̃, և զի նստեալ կայր 'ի վերայ աթոռոյ։ Յայս միտս դոյր սովորութի̃ ինչ առ. Նասամոնեցիս, որք էին ժողովուրդք ափրիկոյ. զի յորժամ մեռանելոց էր ոք 'ի նոցանէ, նստուցա

նէին զնա 'ի վր̅ աթոռոյ, զի նստելով աւանդեսցէ զօդին, և այնու ձևով մարմնոյն ցուցանէին զկացութիւն, յոր մտանելոց էր հոգին, որ̅ է յաւիտենականութիւն։ Նաև յայս և 'ի սոյն միտս դնէին զմեռեալս 'ի գերեզմանս, և 'ի դամբարանս նստեալս․ և ոչ ընկողմանեալս, որով ցուցանէին նմանապ̅ թէ չէ արժան խնդրել զհանգիստ յաստի կեանս, այլ միայն զկնի մահուան, յորժամ մտանեմք առ դրունս յաւիտենականութեան։ Քանզի չէ կարգեալ կեանքս այս մեզ 'ի հանգիստ․ և չեմք հաստատելոց զմեզ 'ի նմա։ Որովհետև վիշտք և տառապանք նր̅ տան մեզ ճանաչել ա̅ բաւականին, թէ ոչ արար զնա ա̅ծ, զի 'ի նմա դիցուք զսէր և զխինդ մեր, այլ թէ 'ի փոխ, կամ յաւանդ տուեալ մեզ զայն գիտասցուք։ Ուստի չէ բանաւոր յարել 'ի նա, այլ փութալ և երագել պարտ է մեզ 'ի լեառն յաւիտենականութեան։ Կեանքս այս լի այսչափ թշուառուբ̅ ցուցանէ ինքնին, թէ դոյ այլ իմն կեանք, ուր գտանեմք զհանգիստն զայն, որ աստ 'ի սնոտիս խնդրի։ 'Ի յերկինս վերջացեալ դադարեսցին ա̅մ թշուառութիւնք մեր։ Անդ սրբեսցին արտասուք արտասուաց վայրիս։ Անդ մխիթարեսցուք 'ի տառապանաց մերոց։ և անդ

պտղի

գոյցի կեդրոնն ի, ուր հաստատեսցի անհանգստութիւն սրտից մերոց ։

2. Այլք նկարագրեցին զյաւ̂իտենականութիւն 'ի ձև օձի առ 'ի ցուցանել նովիմբ զանփոփոխութիւն նր̄ ։ Քանզի ոպ̄ չիք կենդանւոյս այս ծայր ոտից. նոյնպէս չիք յաւ̂իտենականութե̄ ծայր վախճանի ։ Դրձլ ոմ̄ օձք, թէպէտ չունին զոտս, զձեռս. զթևս, զթեփս. և զայլ արտաքին բնական կազմածս. սակայն շարժին թեթև և արագ այնպ̄, մինչև գերազանցեն յընթացս զայլ կենդանիս. որք ունին զոտս. և զձեռս. և այս ամ̄ ընձեռի նց̄ 'ի յուժոյ ողեացն ։ Այսպէս է և յաւ̂իտենականութիւն. զի չունի զտիւ̂. և զգիշեր. և զյաջորդութի̄. որք են իբրև ոտք տուէ̂ք ընթացից ժամանակի կենցաղոյս ։ Դարձեալ օձք ունին զայնպիսի երկարատև կեանս մինչզի ը̄ վկայելոյն Փիղոնի բիբղեայ, եթէ ոչ հարցին և սպանցին յայլոց. զրեթէ ոչ մեռանին ։ Ուստի հաղիւ̂ գտանին բնական մահուամբ մահացեալք ։ Քանզի ոչ փոփոխին հանգոյն այլոց կենդանեաց յերիտա̄րդութէ 'ի ծերութի̄ մնալով 'ի զուամութէ մինչև մեռանիցին. և կմ̄ յառողջութէ 'ի խօթութի̄. այլ միշտ պահեն զմատաղութի̄ իւրեանց յաճախակի փոխելով զհին խորխն. որով և նորոգին ։

Եւ՛ դարձեալ ոչ ունին օձք զորոշեալ չափս • կ՛՛ եղերս ամենայն խուբեանց • ոչ՛ զայլ կենդանիս • այլ միշտ անձին • և զօրանան : Այսպէս և յաւ՛իտենականութիւն ոչ ունի զչափ և զմէջ • ոչ զշրջանս • և ոչ զփոփոխումն ինչ : Այսպարագայ յաւ՛իտենականութեան է ահռելի և սոսկալի իմն դատապարտելոց • այսինքն կալ և մնալ միշտ 'ի մի և 'ի նոյն տանջանս՝ առանց ունելոյ զփոփոխումն ինչ գոնէ փոխմամբ տանջանաց՝ միոյ յայլ : Ասէ սրբն Պաւ՛ղինոս զերանելոյն Մարտինոսէ հայրապետէն • թէ հանդիստ իւր էր փոփոխել զաշխատութիւն : Քանզի ստուգիւ • Թէև ոք ոչ դադարիցէ 'ի վշտաց • սակայն փոխելն զմի վիշտ՝ նաև ընդ այլում հաւ՛ասար վշտի է ազգ ինչ հանգստեան : Իսկ դատապարտեալքն ոչ ունիցին և զայս ազգ հանգստեան • որ է յոյժ սոսկալի իմն , և զարհուրելի • թէ մարդն այն , որ 'ի սկզբան աշխարհիս դատապարտեալ անկաւ՛ 'ի դժոխս • յետ այնորիկ մինչև ցայսօր • յորմէհետէ անցեալ է դրեթէ եօթն հազար ամ • կացցէ անդ չունելով զմխիթարութիւն ինչ գոնէ իւիք փոփոխութեամբ • Եւ՛ դու տես • թէ որչափ անհամար փոփոխութիւնք եղեալք են յաշխարհի յայնմ հետէ մինչև ցայսօր : Ապականեալ կո-

րեաւ՛

թէեւ երբեմն ջրհեղեղաւ աշխարհս ամ՟, մնացեալ ութն միայն ոգիք կենդանի: Ապա զհետ եկին մեծամեծ փոփոխութ՟իք եւ կործանմունք, զի զառաջինն իբրեւ ամ՟ ոք կայր ը՟ս իւրում յօժարութե՟ն եւ ազատութե՟ն, յարեան եւ եղեն նախ բռնա՛ւորք ասորեստանեայք, եւ կալան քաջութ՟բ յա՟ձն զմիահեծան տէրութ՟ի աշխարհի: Էանց ապա կայսերութիւն ՚ի յերեսուն եւ վեց ինքնակալաց յետ հազար երկերիւր եւ քառասուն ամաց յայլ կողմն աշխարհի․ այ՟ ՚ի մարս եւ ՚ի պարթեւս, եւ հաստատեցա՛ւ ՚ի նոսա, որք վեր ՚ի վայր արարին գրեթէ զբովանդակ մեծն ասիա:

3․ Ապա յետ երեք հարիւր ամաց իբրեւ էանց ՚ի պարսս, եւ ՚ի նոցանէ առ յոյնս, մինչ անդամ վեր ՚ի վայր եղեւ աշխարհս ամ՟․ Անտի էանց առ հռոմայեցիս․ եւ այս եղեւ մեծագոյն փոփոխութե՟ն քան զանցեալսն: Բայց նաեւ ինքնակալութե՟ն սոցա էառ զկատարած իւր հանգոյն ն՟ց: Եւ՛ ՚ի մէջ ամ՟ այլայլութե՟նց եւ փոփոխութե՟նց այսոցիկ եղկելի դատապարտեալն ՚այն ոչ ետես ՚ի մ՟տ իւր զփոփոխումն ինչ: Եւ՛ դարձեալ տեսցուք, քննեսցուք․ զի ոչ մնաց այլայլութե՟ն ինչ, զոր ոչ կրեաց աշխարհս․ կամ ընութե՟ն ՚ի շրջանս այսքան դարուց: Քանի կղզիք ընկլուզեալք կորեան 'ի ջուրցն ծովու: յորոց մին, որ ընկղմեցաւ 'ի ջուրց՝ ասէ Պղատոն, թէ էր մեծագոյն քան զափրիկէ, և քան զեւրոպէ: և քանի են. որք նորոգ երևեցան 'ի ծովու: Իսկ դետնաշարժութիւք, զո՞ր բնակութի, կամ զո՞ր քաղաք, և կամ զոր չէն թողին անվտանգ և կանգուն, և կամ լա՛ւ ևս ասացից, զո՞ր լերինս, զո՞ր բարձունս, և կամ զո՞ր բլուրս. Քանի քաղաքք դետնասայզ կորեան. քանի վտակք գետոց ցամաքեցան. և 'ի զնոյն շաւիղս զարտուղեցան: Ո՞ր բարձրաբերձ շինուածք կացին մնացին անկործան: Ո՞ր պարսպեալք և ամրոցք մնացին անեղծ և անքակ. Ո՞ր յիշատակ մնաց անկորուստ: Քանի պէսպէս և ազգի ազգի օրինակք փոփոխեցան երբեք: Քանիցս հոլովեալ դարձա՛ւ ամս, կամ տարիս: Քանի դարունք և քանի աշունք հոլովեցան: Քանի տի՛ւք. և քանի գիշերք: Իսկ եղկելին այն կայ մնայ միշտ 'ի մթին և 'ի խաւարին յայն գիշեր՝ ո՛չ յառաջին աւուր, յորժամ եմուտ անդր: Ե՞ւ այն զի արեգակն, յորմէ հեռէ նա կայ 'ի տանջանս, ունի շրջանս առեալ զտարրական աշխարհաւս դրեթէ երկերիւր և քան բիւրիցս: Իսկ եղկելւոյն այնմիկ ոչ տուաւ դոնէ միանգամ քայլ մի ոտին արտաքս քան զիւր տեղին ուր անկաւ զառաջինն 'ի դժոխս ։ Եւ դարձեալ, զոր միշտ տառապանաց, և զոր շատ տագնապի ոչ կրեցին մինչև ցայսօր անբաւ մարդիկ, որք արդ ևս անցեալ պակասեցան ։ Բայց և ոչ մի ցաւ, և ոչ մի տանջանք եղկելւոյն այնորիկ 'ի մէջ եօթն հազար ամացս էանց, կամ նուազեցաւ ։ Գոչէր Պտղոմէոս վն ցաւոյ թիւնաւոր կաթուածոյն ։ Տառապեալ նեղէր Արիստարգոս 'ի ջրգողուէն իւրմէ ։ Կրէր Կամբիւսէս զմեծ ճնչարդիւթն ։ Նեխեալ մաշէր Թէոպոմպոս Է թոքացաւութբ իւրով ։ Վշտացեալ տառապէր Տօբիթ 'ի կուրութէ իւրմէ ։ Տագնապեալ տանջիւր երանելին Յոբ չարաչար կեղով իւրով ։ Բայց սակայն նմ ցաւքս այսոքիկ առին զվախճան իւրեանց ։ Իսկ չարիք եղկելւոյն այնորիկ ոչ ունին և ոչ իսկ ունիցին երբէք զվախճան, կամ զկատարած ։ Ողոցեցան երբեմն Է մէջ Հռաբաթացիք ։ Այլք կենդանւոյն կկզան 'ի հնոցս աղիւսոյ ։ Կէսք Է մէջ կորեալ դէշադէշ կորեան, բայց և ոչ մի ազգ տանջանացս մնացին մինչև ցարդ ։ Պերիղղոս խորովեցաւ 'ի մէջ պղնձի ցլու ։ այլ այժմ անցեալ մեկնեցաւ այն պատիժ տան

ջաքանաց, սակայն վիշտք տառապանաց եղկելոյն այն ոչ առնէին զվախճան, մանաւա՛նդ դեռ ոչ ակնկալէին արարին ՚ի մեկնել . կամ ա՛նճարել . զի անտի մինչև ցհարիւր հազար ամս եղեցին այնպէս, որպ ՚ի սկզբան անդ, ոչ աճէին, և ոչ նուա՛զ: Արդ՝ ո՛ր յուսահատութեն ոչ պատեալ պաշարեացէ զնա, յորժամ տեսանէ յամ իբրև զայնչափ փոփոխութեն, իսկ ՚ի տանջանս իւր և ոչ զմի ՚ի նուազանէ : Այլ և եթէ բերկրութիւնք կենցաղոյս ոչ այլայլեցէին երբեմն, լինէին տանջանք, և ոչ բերկրութիւնք, ապա զիարդ կարեն տարեալ լինել պատիժք տանջանաց . որք ոչ փոփոխին երբէք : Ո՛ր կատաղութեն ոչ պաշարեացէ զեղկելին զայն . յորժամ տեսանէ, թէ բոցք հրոյ նոյն Լաւրենտիոսի . տանջանք նոյն Կղեմայ Անկիւրացւոյ . խաչն նոյն Անդրէի առաքելոյ . պահք նոյն Հիլարիոնի : Խարազն նոյն Սիմէոնի սիւնակեցին : Զաղանք նոյն Դոմինիկոսի . և ամենայն տանջանք մարտիրոսաց . և ճգնութիւնք խոստովանողաց անցին : և փոխեցան ՚ի մշտնջենաւո՛ր մխիթարութե . Իսկ տանջանք իւր ոչ անցանեն . և ոչ փոփոխին, և չիք յոյս . թէ դադարեսցին : Այս է,

որք

որ պայթուցանէ զսիրտ նորա 'ի սրտցաւութէ · սա է, որ տայ նմա տեսանել յայնժամ թէ չիք ճար կամ հնար զերծանելոյ անտի, որ 'ի ժամանակի իւրում էր դիւրագոյն իմն ։ Անդ տեսցէ զխորտակաճաշ մեծատունն · որ կարող էր փշրանօք սեղանոյն ստանալ զխնդութէն յաւիտենականն · եւ յայնժամ ոչ տուեալ լինի նմա գոնէ և կաթիլ մի ջրոյ ։

4. Աւա՜ղ բացցէ զաչս իւր քրիստոնեայն, և այժմ մինչդեռ կարէ՛ խնդրեսցէ զդեղ և զդարման այնմ, զոր ոչ կարէ, երբ կամիցի ։ Այժմ է ժամանակ ընդունելի ։ այժմ է ժամանակ փրկութե ։ այժմ է ժամանակ քաւութեան · և յոբելեան ներողութե ։ այժմ 'ի միում րոպէի կարէ ստացեալ լինել այն, որում 'ի յաւիտենականութե չիք ճար և հնար ։ Արդ զի՞նչ արդեօք նշանակեալ ցուցանէ բոցն այն բաբելոնական հնոցին, որ բարձրանայր 'ի քառասուն և յինն կանգուն, և ոչ 'ի յիսուն, որպէս ասէ ս̃բ գիրն · և զի այնչափ ճշդի՞ւ դնէ զհաստատուն չափ բոցոյն այնորիկ ։ Ահաւասիկ քեզ խորհուրդ նորին ։ Թի՛ւն յիսնեակ էր թի՛ւ յոբելեան թողութե ·

ուստի ցուցանէ զներումն, և զթողութի : Եւ զի բոցք գժոխոց օրինակեալ բաբելոնական հնոցին, որչափ և սաստկասցին քան զտանջանս աստի կենաց, ոչ երբէք կարեն շահել զյոբելեանն թողութեն. և թուլացուցման պատժոց, թէև տևեսցեն 'ի բիւրս դարուց:

5. Ո՞վ զորչափ պարտս պատժոց վճարէր դատապարտեալ ոք, եթէ կարող իցէր առնել զապաշխարութի 'ի միջոցի չորից մասին ժամու միոյ աւուր բովանդակ շաբաթուն, զոր մարդիկ 'ի զուր կորուսանեն : Մի՛ լինիցուք անառակք և վատնիչք այսպիսի ազնուագին իրիս. մի կորուսցուք զժամանակն, կորուսանելով 'ի նմա զփառս երկնից. և զրաւելով յանձինս զգեհեանն անշէջ. Քանզի ժամանակ աստի կենացս այնչափ արժէ. մինչև երանելին բեռնարդոս մեծացուցանելով. կամ վերաչուութք ասաց զայս : Այնչափ արժէ ժամանակն. որչափ ած, որովհետև կարեմք նովաւ ստանալ զած : Մի՛ ընդունայն վատնեսցուք զայսպիսի մեծագին գանձս, այլ 'ի գործ արկցուք զպարապորդութիս զայս, այսինքն ստանալ 'ի ձեռն ժամանակի զյաւիտենականութին, և զնոյն ինքն

դա̃ծ զո̃րն յաւիտենականութե̃ : Աշխարհասէրքն յիմարեալք ասեն, վայելեսցուք այժմ 'ի բարութեան . իսկ իմաստունք և առաքինիք ասեն . բարեգոյն է թողուլ զայժմոյս վայելումն առ 'ի վայելել յանանց բարիս 'ի յաւիտեան , Աշխարհասէրքն ասեն , կեցցուք այժմ հեշտութե̃ , և հանգստեամբ . իսկ ծառայքն Քի̃ ասեն , մեռցուք այժմ ըստ մարմնոյ , զի կեցցուք 'ի յաւիտեան : Մեղաւորքն ասեն , ընկղմեալ պարապեսցուք 'ի բերկրութիս աշխարհի : Իսկ երկիւղածք ա̃ծ ասեն . փախիցուք այժմ 'ի լպրծիւն և յանկայուն աշխարհէ աստի , զի յաւիտեան լիցուք երանեալ 'ի յերկինս :

ԳԼՈՒԽ Ժ:

Թէ յաւիտենականութիւն է անհամեմատ · և անբաղդատ :

Որպէս չիք համեմատութի՟ ՚ի մէջ հունաւորին, և անհնոյն, այսպէս չիք բաղդատութի՟ ՚ի մէջ ժամանակաւորին, և յաւիտենականին: Ուստի ոչ առ մեծութ՟ն ա՟յ միայն ոչինչ են հատն աւազոյ, և լեառն ողիմպեայ, այլ ՚ի յաւիտենականութե այնչափ խոտարաձիգ է հազար ամ, որչափ թարթել մի ական: Վա՜հ ասէ պոետին, թէ առաւել համեմատէին երերաց վայրկեան մի ժամանակի, և բիւր ամք · քան բիւր ամք ընդ յաւիտենականութե: Յաղագս այսորիկ և մարգարէն դաւիթ, յորժամ սկսաւ խորհել զանցեալ ժամանակն, յորմէ հետէ ստեղծաւ յայս աշխարհս, անուանեաց զշրջանս դարուցն այնոցիկ մինչև ցժամանակ իւր աւուրս, յասել անդ իւրում. Խորհեցայ զաւուրս զառաջինս: Եւ չէ ինչ զարմանք, թէ զայս այսպէս անուանեաց, որովհետև յայլում վայ

րի

լի ատայց։ Հաշուր ամ յաւուր ա՟ին, որ՟ օր երէկէ, ղէ եամց։ Բայց առաւել զօրաւոր կերպիւ նշանակեաց զայս աւետաւրանիչն Յօհաննէս, յորժամ զա՟մ ամս ՚ի ժամանակէ իւրմէ մինչեւ ցկատարած աշխարհի կոչեաց ժամ մի։ Իսկ մարգարէն Դանիէլ ՚ի բացայայտելն զփառս առաքելաշնորհ և ա՟ծարեալ սրբոց ասէ ՚ի Թիւս պարգեւաց ն՟ց. Թէ փայլեսցին իբրեւ զաստեղս ՚ի մշտնջենաւոր յաւիտենականութեան։ Այլ զինչ բարբառին մարգարէք, զինչ. կոչեն զնա արդարեւ ամք յաւիտենից, կոչեն զնա մշտնջենաւոր յաւիտենականութիւն. կոչեն զնա յաւիտեանս յաւիտենից. այլ այս ն՟մ է իբրեւ ոչ ինչ առ. ՚ի մեկնաբանել մեզ զանվախճան, զանսպառ. և զանեզրական տեւողութիւն նորին։ Արդ՝ զինչ կայր մնայր կայենի, եթէ ապրեալ էր մինչեւ ցարդ. և վայելեալ յա՟մ երջանկութիւն աշխարհի, և ՚ի սոյն րոպէի մեռեալ, ապաքէն ոչ ինչ։ Զինչ աւելի մնայր նմա ՚ի յայնչափ աւուրց. ստուգիւ և ոչ ինչ, բայց միայն սպանութիւն եղբօր իւրոյ Աբելի. զոր յորմէ հետէ սպան նա, են մնացեալ ամք վեցհազար և եօթն հարիւր. ուստի առ հասարակ սպառեալ չքացան ամք երկոցունցն։ Այլ և զինչ մնայր նմա

՚ի

'ի հեշտութենց իւրոց · այլ ոչինչ · բայց եթէ վճարել զպարտս պատժոց 'ի խառնարհին ժամանակի · և յանհամար անուրս յաւիտենականութե̄ : Քանզի ըստ բանից իմաստնոյն : Նեղութի̄ միոյ ժամու՝ 'ի մոռացօնս արկանէ զփափկութի̄ս ճծաճծս : Սիրաք · 11 · 29 : Արդ եթէ նեղութի̄ միոյ ժամու տառապանաց յաւիտենականութե̄ 'ի մոռացօնս լինին հեշտութի̄ք ամաց բազմաց · ապա ո՞պ̄ ոչ լուծեալ չքասցի վայրկենական հեշտութի̄ քո · որ զահավէժ առար զքեզ 'ի գեհեանն : Զի եթէ վայրկեան մահու մարմնոյն մերկէ զմարդն յա̄մ հեշտութե̄ց ն̄ր · զինչ ապա արասցէ յաւիտենականութի̄ մահու հոգւոյն : 'Ի ժամուն , յորում մեռաւ Եղիովգաբեղոս արքայն փափկասէր , և զբօսասէր զինչ մնաց նմա 'ի զբօսանաց իւրոց · ապաքէն ոչինչ : և զինչ ունիցի այժմ յայսչափ ամս յորմէհետէ թաղեցաւ յանդունդս անշէջ գեհենին . այլ ոչ ինչ , բայց եթէ տանջանս 'ի վ̄ր տանջանաց · ցաւս 'ի վ̄ր ցաւոց , պատիժս 'ի վ̄ր պատժոց և թշուառութիւնս 'ի վ̄ր թշուառութե̄ց · և որ սոսկալին է , կացցէ մնասցէ անդ ցորչափ ա̄ծ է ա̄ծ : Մարդիկ յելս իւրեանց աշխարհէ հաւասարք են ամենեքին 'ի կարգի իրաց կենցաղոյս. թէ նա որ ապրեցաւն ը՟ երկար. և թէ նա, որ եկեաց սակաւ: թէ նա որ վայելեաց ՚ի բազումս, և թէ նա որ ՚ի սակաւս: թէ նա որ անցոյց զկեանս ՚ի մեծամեծ հեշտութիւս, և թէ նա որ ՚ի չարաչար տառապանս: Վ՟ զի բովանդակն վերջացեալ անարտեցաւ. և ոչ մինն այժմ զգայ զբերկրութիւն իւր: և ոչ միւսն զվիշտս տառապանաց իւրոց: ՚Ի ժամուն յորում վախճանեցաւ ս՟րն Ռոմվալդոս յետ հարիւրամեայ խստակրօն վարուցն, զինչ մնաց այլ ևս նմա ՚ի խստութեց. և ՚ի ճգնութեց իւրոց: Սոյնպէս յորժամ փոխեցաւ սքանչելին Սիմէոն սիւնակեացն, մի թէ ըզգաց այլ ևս զվիշտ ինչ ՚ի յութսնամեայ անտանելի ճգնութեց իւրոց: տանջեաց այլ ևս զնա խարազն խոշոր. զոր յայնչափ ժամանակս կրէր յանձին զօրն, և զգիշեր: Նեղեցին զնա այլ ևս հանապազորդեայ պահք, և աղօթք իւր: Արդարև ոչ զգաց զցաւ ինչ աւելի քան թէ կեցեալ իցէր զմի աւուրս կենաց իւրոց իբրև ըզՍարդանապաղոս ՚ի մեղկական հեշտութիւս: Այսպէս կրեաց ինչ արդեօք ս՟ր Կղեմէս Անկիւրացին ՚ի քսան և ութնամեայ տանջանաց իւրոց, զոր ետուն նմա անօրէն բռնաւորք. ՚ի ժամուն յորում մեռաւ: Արդարև ոչ կրեաց զցաւ ինչ աւելի. քան թէ վայելեալ իցէր յաման յայնոսիկ յում երկրաւոր փափկութիւնս. այլ մանաւանդ նոքօք ստացաւ զփառս յաւիտենականս.

2. Արդ նկատեսցէ քրիստոնեայն, թէ զինչ ընտրէ. զի միապէս վերջանան բերկրութիւնք, որովք մեղանչէ, և ապաշխարութիւնքն, որովք հատուցանէ զպարտս մեղաց իւրոց. նոյն օրինակ միապէս մնան անվախճան տանջանքն, որոց արժանի գտանի մեղօք. և խնդութիւնք զմայլմանցն, զորս շահի բարեգործութբ. և ընտրեսցէ ըզբարին և զօգուտն իւր: Տեսցէ արդ, թէ որչափ բարի է նմա շահել վասն իւր զմեծութիւն յաւիտենական փառաց թեթև, և վայրկենական վշտօք ապաշխարութեն. զի թէև տևեսցէ այն 'ի հարիւր ամս, սակայն առ յաւիտենականութբ վայրկեան մի է: Ուստի ոչ ոք ապաշխարող սրտաբեկ լիցի վս երկարութեն կենաց. զի չիք երկար ինչ առ յաւիտենականութբ. վս քաջ խօսեցաւ սբն Օգոստինոս զի ասաց, թէ Ամենայն, որ ունի վախճան, սուղ է, և չարաչար: Ունէին զվախճան հազար ամք. ունէին զերդ հարիւր հազարք. և ունէին զկատարած բիւրք բիւրուց: Ուստի ամ ժամանակքս այ-

սոքիկ, որք երեւին անբաւք, են վայրկեան մի, եթէ համեմատեսցին յաւիտենականութեան։ Եւ ամ̃ ը̃ հաստատահիմն մարմնոյ իրիք չունի զաւելի համեմատութիւն անբաժանելի մակերեւոյթ մի մաթեմաթիզական. քան թէ հարիւր հազարքն. որովհետեւ բնաւքն 'ի միասին ոչ առաւել քան զմի միայն բաւեն կացուցանել զմասն ինչ հաստատահիմն մարմնոյ։ Սոյնպ̃ առ յաւիտենականութիւն չէ փոքր, կամ նուաղ մի ամ̃, քան թէ տասն բիւր ամքն. և ոչ տասն բիւրքն, քան զմին։ Զի եթէ բովանդակ երկիրս բաղդատեալ երկնից, որ ունի զեզր և զչափ մեծութեան իւրոյ, է կէտ մի, մեծ ինչ է արդեօք. թէ բովանդակ ժամանակն իցէ իբրև վայրկեան մի համեմատեալ յաւիտենականութեան, որ է անեզր և անվախճան։ Ով մարդկային կուրութեան, որք մեծ ինչ համարեալ զժամանակս, խնդրեն մեծաւ ջանիւ զհեշտութիւն 'ի կեանս, և զյիշատակ 'ի մահուան, և 'ի մահու, և 'ի կեանս զանուն, և զհամբաւ քաջութեան։ Եւ վ̃ ոյր այս ամ̃, վ̃ միոյ բոպէի, վ̃ միոյ վայրկեան ժամանակի։ Արդ՝ եթէ տայր քեզ ա̃ծ կեանս միայն 'ի չորից մասին միոյ ժամու. և դու գիտէիցէիր, թէ զկնի մահուան քոյ վերջանալոց է ամ̃ս յետ միոյ ժամու. ծախէիր արդեօք զփոքրիկ ժամ̃նկն զայն 'ի հոգալ. և 'ի ստանալ համբաւս զկնի մահուանդ արդարև ոչ: Բայց ուր թողցուք զայն, զոր աւետարանիչն Յօհաննէս ասէր, մինչ կենդանին էր, թէ մերձեալ է կատարած աշխարհիս. քանզի ասէ յետին ժամանակ է, թէպէտ և անցելոց էր ամս բազումս: Վ̃ զի բովանդակ ամքս այսոքիկ բաղդատեալ յաւիտենականութեն են ժամ մի միայն: Արդ՝ ո̃պ ոչ խորհէիր թողուլ զյիշատակ ինչ զքէն յաշխարհի. յորժամ մնայր ժամ մի միայն կատարածի նորին. այնպէս և ոչ այժմ պարտիս խորհել զայդ թէև գիտիցես, թէ անցելոց է 'ի շրջանս բազում դարուց:

3, Եթէ հաւաստի էիր ապրել ամս հարիւր, և 'ի նմ̃ չունէիր ինչ վ̃ ուտելոյ. և շահելոց էիր զապրուստ կենացդ 'ի մի միայն ժամու, (և ոչ յայլ ժամանակս). և այն լինելոց էր ըստ այսմ պայմանի. զ̃ թէ հրաման տայր քեզ մեծ թագաւոր մի հանել յայս ինչ ժամու 'ի գանձէ իւրմէ, զորչափ ինչ և կարես, կորուսանէի՞ր արդեօք ընդ վայր զժամն զայն դատարկութ̃, կամ զբաղեալ պարապէի՞ր 'ի ժողովս դատարկապորտից: Արդարև ոչ դադարէիր աշխատել, և փութալ. զի բարձեալ տարցես զգանձն զայն: Արդ՝ ո̃պ. կամ զիարդ այդչափ անհոգ ես 'ի հոգևոր շահն քո, որովհետև գիտես,

տես, թէ 'ի յաւիտենականութեն անդ․ յորում կելոց է հոգի քո․ չունիս զայլ ինչ․ եթէ ոչ զոր ստացար, կամ շահեցար 'ի կեանս յայս։ Ուստի հայեա՛ց 'ի սուղ և 'ի սակաւ ժամանակդ, որ տուաւ քեզ վն̃ նախատես լինելոյ յաղագս յաւիտենական կենաց։ Արդ զիարդ կեաս 'ի յայսպիսիս սուղ ժամանակի անհոգ․ այլ կարես պարապել 'ի զբօսանս, 'ի խաղս․ 'ի կատակս․ 'ի ծաղր, և 'ի հեշտութիւն փափկութե̃․ և ոչ մանաւանդ 'ի յողբս, և 'ի կրտտանս մարմնոյդ խստութք̃ և ապաշխարութք̃։ Վն̃կ յիրաւի ասաց սր̃ն Օգոստինոս, ('ի վր̃ լը̃․ սաղմոս․) Թէ վն̃ յաւիտենական հանգստեան, արժան է յանձն առնուլ զաշխատութի̃ ժամանակեական․ զի առ 'ի ստանալ զերջանկութիւն անէզրական, պարտիս յանձն առնուլ զմիշտ անվախճան։ Իսկ սաղոմոն առ 'ի ուսուցանել մեզ․ թէ որչափ մեծաւ ջանիւ և փութով պարտ և արժան է մեզ հոգալ զյաւիտենականս, քան զժամանակաւորս․ և նախամեծար առնել զառաքինութիւնս, քան զմեծութիւնս, և զպատիւս, ասէ․ Երկայն աւուրք․ և ամք կենաց 'ի յաջմէ նորա․ և յահեկէ նորա փառք․ և մեծութի̃։ Քանզի որպէս աջ ձեռն է զօրաւոր․ և ձախն տկար․ այսպէս 'ի պահպանութե̃ յաւիտենականաց պարտիմք ծախել զմ̃ զօբուլթիւս մեր . և ոչ 'ի խնամարկութե ժամանակաւորաց : զի զի՛նչ շահ օգտի կայ մեզ 'ի մեծամեծ բարեաց և փառաւոյ Տիս , որովհետև չէ նա մշտնջենաւոր :

◆

ԳԼՈՒԽ ԺԱ։

Թէ զինչ իցէ ժամանակն ըստ արիստոտէլի , և ըստ այլոց փիլիսոփայից . և յաղագս անկայունութե կենաց :

1. Թէպէտ յայնցանէ , զոր 'ի վերագոյնդ ասացաք , կարէ իմացեալ լինել , թէ զինչ իցէ ժամանակն . և զինչ ժամանակաւոր կեանքս , որ անցանէ ընդ ժամանակի , սակայն այժմ մանրակրկիտ ևս նկատեսցուք զոր ինչ ձեռնարկաք խօսել զյաւիտենականութէ , որպէս զի ընդ արժանւոյն , և սաստկագոյնս ծանիցուք զնուաստութի ժամանակաւորաց , և զմեծութի յաւիտենականաց : Արդ՝ արիստոտէլ սահմանէ զժամանակն ասելով , թէ է չափ շարժման . զի ուր չիք շարժումն , և յաջորդութի , չիք

անդ և ժամանակ ։ Ե՛ւ զայս պայծառագոյն բացայայտէ Սպեւ՛սիպպոս յաւե՛լուլն , թէ ժամանակն է չափ երագընթացութեան արեւու ։ Իսկ Պրոկղ ասէ , թէ է թի՛ւ ընթացից , և հոլովմանց երկնային մարմնոց ։ Պիւթագորեանք ասէին , թէ ժամանակն է վերջին պարունակ , որով այլք դառնան , զ̅ , թէ է յառաջին երկնի , որ անըմբռնելի իմն երագութ̅ թեթեւս շարժեալ հոլովի ։ Ը̅ կարծեաց որոց և մեծն Ալբերտոս ասէ , թէ ժամանակն է չափ շարժման առաջին շարժունին ։ Ապա յայտ է , թէ ժամանակն է պատահումն անկայուն իրի , զ̅ շարժման ։ Վ̅ն որոյ ասաց Աւիկեննա , թէ ժամանակն է տկարագոյն քան զշարժումն ։ Աղէ՛ տե՛ս · եթէ արժան իցէ յուսալ 'ի մարդկային կեանս · որովհետեւ է մանն այսպիսի անհաստատ , տկար , և սրընթաց իրի որ անցանէ , և վաղէ զուգաց ը̅ արեւու ։ և ը̅ աստեղս հաստատութե , որք անցանեն զանցանեն յընթացս արշաւանաց ոչ միայն քան զթռչունս արագաթռիչս , այլև քան զթեւս երագախաղաց հողմոց ։ Երագագոյնս խոյանայ քան զկայծակն բազէն յափշտակիչ · այլ քան զլաղէն երագս դիմէ նետն ը̅ օդս ձգեալ յորսորդէն 'ի հարկանել զթեւաւորս ։

E 3

Իսկ քա՛ն զնետոն շտապ քան զասելն վայրաքերի յերկնից շանթն յարձակեալ 'ի յամպոց ։ Բայց զինչ են առ աքշամատայր ընթացիւք մահու և ժամանակք այս ի՛մ նմանաբանութիք , որովհետև թռիչս առեալ ժամանակն ձգի զոյգ ը̄ հաստատութեն երկնից ։ որոյ երագընթացութիւն է այնչափ սաստիկ , որ 'ի միում ժամու ընթանայ միլիոն աւելի քան զչորեք հարիւր և քսան բիւրս ը̄ զարդիս կարծեաց հօրն Կլաւիասի ։ Զիարդ ապա չերկնչիս 'ի մահուանէ , որ առվեհն ընթացիւք դիմէ առ քեզ ։ Լարեալ է արդեակ զաղեղն առ քեզ · դիմել ձգի նետոն , և մերձի արդեակ առ քեզ · զի արդ գոնէ ոչ խոնարհես զգլուխդ , և ոչ 'ի վայր կորանաս , և ոչ ճանաչես զքեզ ։ Եթէ ծանիցես թէ ուղղել առ քեզ զհրացան ինչ ,կամին հուր հարկանել ·աք դիրս տարակուսել մայր ։ Թէ զինչ արպասցես յայնժամ ։ Ապա թէ ոք անդէն ասասցէ ցքեզ · աւանիկ ելեալ է ռումբն · ոչ ապաքէն մեռեալ մնայիր ը̄ տանուլ ն̄ը արտաքս ։ Արդ ծանի՛ր զի առաւել շտապ տաղնապաւ քան զայն հաստանեն քեզ ընթացք մահու , որ 'ի միջոցս չորիր մասին միոյ ժամու արշաւէ միլիոն հարիւր բիւր առ 'ի ժամանել քեզ , և ոչ դիտես , ուստի գայ դաւնոն · վ̄ն որոյ յո̄մ բոպէի պարտիս անձնուանիլ նմա . զի նա յամ բոպէի դիմեալ գայ :

2. Բայց 'ի յերագընթացութէ անտի, պարտ է նկատել և զհանգամանս ժամանակին, զոր եդ արիստոտէլ, թէ ժամանակն է չափ շարժման, ո՟ր որում բաղադրեալ է 'ի յաջորդական մասանց . այ՟ է, թէ զհետ գան միմեանց ժամանակք . և այս պարագայ եւ՝ ոպ՟ ասէ Աւերրոն է էական իմն ժամանակին . վ՟ն զի չէ նա կարօղ տալ զմիահաղոյն լինելութի, այլ յաջորդաբար զկնի միմեանց . ուստի ոչ լինին երկրորդքն . մինչև են անցեալ առաջինքն : Բարիքն, և զուարճութիքն, որով բերկրիմք 'ի մանկութե . 'ի բաց թողեալ լինին, երբ գան բարիք երիտասարդութե, և սոքա 'ի բաց մերժին, յորժամ գան բարիք ծերութե : Դարձցուք նկատեսցուք միանգամ յանցեալ կեանս մեր, և տեսցուք, թէ ուր իցէ մանկութի մեր . ուր պատանեկութին, և ուր երիտասարդութին : Երևին արդէն մեռեալք և չքացեալք 'ի մեզ : ո՟ր այսմ հայեա՛ց և յայլ հասակս, որք են 'ի կեանս մեր իբրու նոր կեանք ինչ . և տեսցես . զի մարդն բազում անգամ գտանի մեռեալ 'ի կեանս իւր : Վ՟ն բարւոք ասաց փիլիսոփայն . թէ չիք մեզ վայրկեան ինչ ժամանակի յորում ոչ մեռանիցիմք : Զի թէ ո՟ր ար

ժամանուոյն նկատեսցուք , ոչ կեամք , եթէ ոչ 'ի միում վայրկենի • վ͞ն զի չունիմք զայլ ինչ 'ի կենաց , եթէ ոչ զներկայ վայրկեանս : Ամք անցեալք արդէն մեկնեալք գնացին , և ը͞ն ն͞ց մեռեալ եմք : Ամք որք գալոց են • ոչ կեամք 'ի ն͞ց տակաւին • և ը͞ն ս͞ց դեռ ծնանելոց եմք : Օր երեկի արդէն սպառեալ չքացաւ , և օր վաղուին անստոյգ է , թէ լինիցի մեզ : Իսկ այսօր աւուր բազում ժամք անցեալ են , յորս այլ ևս ոչ կեաս , և որք գալոց են , ոչ գիտես , եթէ կարես կեալ 'ի նոսին : Եւ ը͞ն այսմ բովանդակեալ զգումար հաշուին , տեսանես , թէ ոչ կեաս • եթէ ոչ յայսմ վայրկենի • յորում արդ իսկ կեաս մեռանելով : Ուստի ոչ կարես կոչել այլ ինչ զկեանս քո • եթէ ոչ զմէջ վայրկենի • և անբաժանելի ինչ 'ի մէջ մահու և կենաց հատեալ յերկուս : Վ͞կ յիրաւի կոչի կեանքս այս ստուեր մահու , ո͞պ ասէ Զաքարիայ հայրն Յօհաննու մկրտչին • զի ը͞ն ստուերաւ կենաց մուտս առնէ առ մեզ մահն : Եւ զոր օրինակ յա͞մ քայլափոխս մարդոյ , քայլս փոխէ և ստուերն իւր • այսպ͞ս և ա͞մ քայլ կենաց ունի ը͞ն իւր զքայլ մահու : Եւ դու տե՛ս զհակառակն սորին 'ի յաւիտենականութե͞ն , որ միշտ սկսանի • ուստի է միշտ սկզբն ինչ մշտնջենաւոր , իսկ կեանքս այս միշտ աւ՛արտի ՚ուստի և կոչել կարէ աւ՛արտ, կամ վախճան իմն յարակայ. և անընդհատ մահ: Վ՟յ և բարիք այս պլոտի կենաց հանգոյն նմին ոչ կարեն վայելեալ լինել:

3. Արդ զոր հրճուանս բերկրուե՟ բերէր յաչս մեր երիվար մի պալարակապ և օդապարիկ զարդարեալ ՚ի վերջս փողփողեալս և ոսկեփայլ հերովք շքեզազարդեալ, և ականկապ պճնեալ, յորժամ արձակեցան; և մտրակ ՚ի կռուշտ՝ վազս առեալ Թռանիցի ը՟ տեսանելն: Ըստ այսմ և ժմկա՛ւորքս վ՟ն զի բարձեալ ՚ի կենաց անդրդէր վազս առեալ ընԹինն, չէ կարելի վայելել յայնս: Զայս հանդիմինս ժմկի քաջ ծանուցանէ անուննն իսկ, զոր անուանեաց իմաստասէր կայսրն մարկոս օրելիոս. յաւելն, ժամն գետական ջրոյ արագահոսն է: Քանզի ոչ ամենայն ալիք ծովու ՚ի միում վայրկենի զնա՛ւն ողջոյն ընկղմեալ ջրահեղձոյց առնեն, և ոչ Թողացուցանեն, զի նաւորդք և նաւաղք զուարճացեալ ՚ի վ՟ր ընչից բարձելոց ՚ի նմա. այն օրինակ առնէ և ժամանակն. յորժամ զա՟մ լինչ յափշտակեալ արագագոյնս վարէ:

ԳԼՈՒԽ. ԺԲ։

Թէ որչափ խոտելիք իցեն ամ. կենցաղականք վասն կարճութեան ժամանակէ ։

1. Չունի մարդն զինչ առաւել դիւրաբեկ, և կորստական, քան զկեանս իւր։ Վասն զի ստացուածք․ ժառանգութիւնք․ մեծութիւնք, պատիւ, համբաւք․ և այլ իրք մարդոյ միայն են յետ մարդոյն․ բայց ոչ ը̄նա երբեք կեանք նր․ որ և է այնչափ գողար, և փափուկ, մինչ զի և փոքր մի ցրտութեն, կամ տապ առաւելեալ, եղծանէ զայն․ սոյնպէս և հողմն ինչ ուժգին շնչեալ, կամ շունչ հիւանդ մարդոյ, և կամ կաթուած ինչ թիւնաւոր բաւական են ՚ի չիք դարձուցանել զնա։ Ուստի եթէ բարւոք նկատեսցուք․ գտանեմք զնա տկարագոյն քան զապակին։ Վն զի ապակին, թէ ոչ մերձեսցի ՚ի նա ձեռն, մնայ ը̄ երկար․ բայց կեանք մեր, թէ և ոչ ոք մերձեսցի ՚ի նա, ինքնին սպառի, և վերջանայ։ Ապակին ընդու-

դուշութե պաշտեալ , Տեառ ամբողջ 'ի բազում դարս ժամանակաց . բայց առ 'ի անկորուստ պահել զկեանս , ոչինչ զգուշութեն օգնէ : Զայս ամ քաջ ծանեաւ Դաւիթ , որ եղև առաւել բարեբաստիկ , և զօրաւոր իշխան 'ի մէջ ամ իշխանաց երբայեցւոց . և արքայ մեծի թագաւորութեն , որ ընդ իւրև ունէր զերկուս թագաւորութիս . զմ զյուդայի , և զիսրայէլի , և զամ երկիրս խոստացեալս յայ որդւոցն իսրայէլի , զոր 'ի ժամանակս նր միայն ժառանգեցին ըստ բոլորին . և բաց 'ի նոցանէ ընդարձակեաց զտրութեն իւր նաև յայլ բազում գաւառս : Իսկ գանձուք , և մեծութե էր այնչափ ճոխ , և ընչաւէտ մինչև լի լինել ոսկւով զօրաց և տան իւրոյ . յորոց եթող և որդւոյ իւրում սողոմոնի զկոյտս անբաւ գանձուց : Արդ՝ այսպիսի բարեբախտիկ թագաւորս խոկալով , թէ մեծութեն իւր վերջանալոց է , անդէն վաղվաղակի կոչեաց զամ ինչ ունայն և ոչինչ . և ոչ միայն զթագաւորութիս , և զգանձս , այլև զկեանս իւր զլխովին համարեցաւ ընդունայնութի . ուստի ասէ . Սաղմ. լը: Ահա չափով եդեր զաւուրս իմ . և կարողութե իմոյ որ ոչինչ է առաջի քո : Այսինքն , ամ ինչք իմ , ամ թագաւորութեն իմ , ամ կապուտ կողոպուտ յաղթութեանց իմոց , և ա̃մ ստացուածք , զոր ժառանգեմս այսպիսի հզօր թագաւորութե̃ , բովանդակն է ոչինչ ․ և քան զսոսին . և քան զայլ ա̃մ ինչ ոչնչագոյն է կեանք իմ ։ Այսպիսի չնչին համարման , և այսպիսի ունայնութե̃ ստորանկեալ կան ա̃մ իրք , թէև 'ի հազար ամս վայելեսցուք յայնս ։ Եւ զի հարկէ սոցա փաղփաղակի վերջանալ ․ առաւել քան զոր խորհիմքն , պարտ և պատշաճ է մեզ խոկալ , թէ զինչ առնելոց եմք ։ Ո՜վ թէ 'ի միտ առնուաք զկարճութե̃ կենացս , զի յայնժամ արհամարհեալ լինէին ա̃մ վայելչութիւնք նր̃ ։ Արդ՝ որչափ կարեւոր համարեաց զայս մեզ ա̃ծ , մինչ զի հրամայեաց գլխաւորին մարգարէից իւրոց ելանել 'ի ճանապարհս , և 'ի հրապարակս , և աղաղակել 'ի ձայն փողոյ , թէ որչափ սուղ , և դիւրաբեկ իցեն կեանք մեր ․ Քանզի մարգարէն եսայի իբրև մարգարէանայր զմեծամեծ , և զխորին խորհուրդս , զոր յայտնէր նմա ա̃ծ ․ ա̃յ է զխորհուրդ մարդեղութե̃ բանին ա̃յ , լուաւ փաղփաղակի զձայն տ̃ն , որ ասէր , ԳՈՉԵԱ , ԳՈՉԵԱ ։ և մարգարէն պատասխանի ետ , և ասէ ․ ո՛ տ̃ր , զինչ կամիս ․ զի գոչեցից , և քարոզ կարդացից ։ Եւ ասէ տ̃ր ․ ԳՈՉԵԱ , ա̃մ մարմին խոտ է: Քանզի ո̃պ խոտ երեկորին ցամաքեալ չորանայ մինչև ցառաւօտ. և 'ի բաց քաղի, և ծաղիկն իւրոյն թարշամի. այսպէս կեանք ա̃մ մարմնոց. գեղեցկութի̃, և վայելչութի̃ նց̃ անցանէ, և թարշամի 'ի միում աւուր:

2. Արդ կամեցաւ տ̃րն մեր, զի հրատարակեսցի 'ի մարգարէին բեկա նոտութի̃, և կարճութի̃ մարդկային կենաց խառն ընդ խորին, ը̃ գաղտնի. և ը̃ անքովանդակելի 'ի մարդկային մտաց՝ խորհրդոյ. այ̃ ը̃ մարդեղութե̃ բանին, և ը̃ եղանակի փրկութե̃ աշխարհիս, զոր և ոչ վեհագոյն սերովբէք զօրէին ճանաչել: Վ̃ն զի յոյժ հարկաւոր էր [illegible]որել զմարդիկ առ այս ճշմարտութի̃, զի ծանիցեն զկարճութի̃ կենացս, որովհետև առաջի աչաց ունին յա̃մ աւուր զօրինակս. և հնչէ յականջս նոցա այն, տակաւին ոչ հաւատան, թէ վերջանալոց են կեանք նց̃. ուստի է առ նոսա իբրև խորին և գաղտնի խորհուրդ, զոր ոչ կարեն ըմբռնել: Վ̃ն այսորիկ հրամայեաց ա̃ծ. զի իբրև ընտրագոյն իմն, և յոյժ կարևոր, հրատարակեսցէ զայն առ մեզ բարձրագոյն ձայնիւ մարգարէն, և առ 'ի նոյն յորդորեսցէ, ո̃պ զի թափանցեսցի 'ի սիրտ մարդկան ճշմարտութի̃ն այն: Աղէ՞ լուիցուք յո̃յ

զայս ճշմարտութի̃ն ․ թէ ամ̃ մարմին խոտ է ․ ամ̃ աւուրք կենաց սուղ են, ամ̃ ժամանակ արագագոյն թռանի ․ ամ̃ կեանք սպառեալ չքանայ , և բազմութի̃ ամաց ոչինչ է ։

3․ Արդ՝ թէ որչափ ճշմարիտ իցէ այս , կարեմք իմանալ և 'ի նոցանէ , որք է̃ երկար ապրելով , անցեալք են այնմ ․ վա̃յ լուիցուք ․ թէ զինչ դատաստան առնեն զկենաց ։ Յորժամ հաւաստի ես դու ապրիլ հարիւր ամ, երևի քեզ այս մեծ ինչ, և ընդերկար կեանք ։ Այլ լուր երանելոյն Յոբայ ․ որ եկաց ամս երկերիւր քառասուն և ութ, և եղև քաջ դատաւոր այսմ ․ թէ զինչ եղեն կեանք նո̃ թէ 'ի յաջողութի̃ս, և թէ 'ի վիշտս․ արդ՝ զինչ ասէ, ասէ ․ Զի ընդունայն են կեանք իմ ․ Յոբ․ 7․ 16։ Ահաւասիկ խոստովանի քեզ բերանով իւրով ։ թէ ոչինչ էին երեք հարիւր ամք կենաց իւրոց ։ Յայլում ևս բազում անգամ խօսի զկարճութե̃ կենաց՝ պարզաբանելով զայն նմանութե̃ , և օրինակաւ ։ Զի 'ի միում վայրի ասէ ․ թէ կեանք իմ թեթևագոյն են քան զսուրհանդակ, և կամ թէ իցեն նաւուց հետք առագաստիւք լցելոց 'ի ծովու ․ և կամ արծուոյ թռուցելոյ, որ խնդրեացէ զկերակուր ։ Յայլում վայրի ասէ , թէ կորեան կեանք իմ առաւել, քան զձորձոց կարելոց 'ի կարողէն : Եւ՛ 'ի միւսում վայրի ասէ, թէ կեանք մարդոյ է իբրև ըզ ծաղիկ ծառոց. որ ընդ երևելն, թօթափի, և կոխան լինի. և խոյս տայ իբրև ստուեր. և ոչ 'ի միում րոպէի կայ 'ի նոյն կացութե̃ : Եւ՛ չէ այս սքանչելի. զի զայն դատաստան արարին և նոքա. որք կեցին ոչ միայն ամս երեք հարիւր. այլ ամս աւելի քան զինն հարիւր. ո՞րչ̃ նոքա, որք էին յառաջ քան զջրհեղեղն, յորոց բազումք կան 'ի դժոխս : Արդ՝ լո՛ւր զբան նց̃. զոր 'ի մէջ բերէ իմաստունն, թէ ասասցեն 'ի դժոխս ամբարիշտք. Զի՞նչ շահ եղև մեզ հպարտութե̃. և զի՞նչ մեծութի̃ ամբարտաւանութե̃ն եբեր մեզ նպաստաւոր. Անց այն ամ̃ իբրև զստուեր : Իմաստ. 5. 8: Արդ՝ եթէ դատապարտեալք զինն հարիւրամեայ ժամանակս կենաց իւրեանց կոչեն ստուերս, և վճիռս հատանեն. թէ հազի՛ւ հազ ծնեալք էին, յորժամ մեռան. ապա ո՞րչ̃ ցնորեալ խորհիս դու կեալ ընդ երկար. որովհետև 'ի ժամանակս մեր մեծ ինչ է ժամանելն մինչև ցվաթսուն ամս կենաց : Վս̃ այսպիսիկ բաղդատեաց Հոմերոս զայսպիսի կարճատև կեանս տերևոց, որք հազի՛ւ կեան զեղանակ մի տարւոյն : Իսկ Պղատոն համեմատետեւաց քնոյ յաչս հսկողաց : Մանաւանդ թէ ոչոք 'ի փիլիսոփայից , կամ 'ի սրբոց կարաց գտանել զնմանութիւն , կամ զօրինակ ինչ բաւական առ 'ի բացայայտել զայս : Վասն զի ոչ սուրհանդակք 'ի յերկրի , ոչ թռիչք նաւարկութեանց ընդ ջուրս . և ոչ երագընթացութիւնք թռչնոց ընդ օդս կարեն համեմատիլ նմա : Ուստի այնչափ արագաթռիչ երեւեցաւ այս փիլեմոնի . մինչև ասաց . ոչ այլ ինչ է կեանքս այս , բայց եթէ ծնանիլ . և մեռանիլ : և թէ 'ի ծնանիլն , ելանեմք 'ի մթին ինչ գերեզմանէ , և 'ի մեռանիլն մտանեմք յայլ միւս մթագոյն . և խաւարչտին , և սոսկալի գերեզման : Եւ այն , զի 'ի յայսպիսի կարճատեւ կենաց բառնայ զերրորդ մասն ժամանակն քնոյ : այնպէս և ոչ դնեն 'ի հաշիւ , ժամանակն երախայութեան , կամ մանկութեան . և ժամանակն այլոց դիպուածոց . որք արգելուն զձանձրութիւն , և զպտուղն կենաց . ուստի դրեթէ հազիւ մնայ մեզ կէսն կենաց մերոց : Արդ՝ և այս կէս . որ թուի քեզ . թէ ունիս զայն անխառն , իցէ արդեօք ապահով , ոչ խորհիւդ . խաբիս խաբիս զայդ խորհելով . զի ասէ իմաստունն . Ոչ գիտէ մարդ զվախճան կենաց իւրոց , Վասն որոյ որպէս ձկունք , և թռչունք , մինչ դեռ յա պահովս և յանհոգս են. ըմբռնելն 'ի կարթս, և 'ի թակարդս. այսպէս և մահն յանկարծակի յառնէ 'ի վր̃ մարդկան 'ի ժամուն, յորում ոչ խոկան:

4. Եկ՛ արդ նկատեսցուք միանգամ, թէ զիարդ խոտանք իցեն ամ̃ ժամանակաւո՛րքս, և զիարդ ընկանուտք, և հոմանուտք իցեն փառք աշխարհիս, որովհետև բարիք կենցաղոյս ոչ առաւե՛լուն քան զկեանս մեր: և թէ սա այսպէս դուզնաքեայ իմն է. որչափ ապա նոքին. որք միայն վասն սորա են պատուա՛կանք:

5. Պատկերն Նաբուգոդոնոսորայ, թէպէտ էր կազմեալ 'ի մեծագին հանքից. ոպ̃ յոսկւոյ և յարծաթոյ. սակայն այն ամենայն հաստատեալ կայր 'ի վր̃ խեցեղէն ոտից. ուստի յորժամ հատեալ վէմ մի փոքրիկ 'ի լեռնէն եհար զնա, վաղվաղակի յերկիր կործանեցա՛ւ այն ամ̃ կազմած: Ո՛վ մեծութեց աշխարհիս, որք հիմն ունին զկեանս ղոյս ընկանուտ, որ սասանեալ և 'ի պատրաստի կայ եղծանիլ և քակիլ ոչ միայն 'ի փոքրիկ քարէ միոջէ, այլ նաև 'ի հատէ միոջէ խաղողոյ: Վս̃ այսորիկ յիրա՛ւի ասաց դա՛ւիթ, թէ ընդունայն է ամ̃ մարդ. մինչդեռ է

՚ի կեանս յայս: Քանզի շատ է կարճութիւն մարդկային կենացս առնել խօսման և ընդունայն զամենայն բարիս, որք կարեն վայելեալ լինել ՚ի մարդոյ: Ընդունայն են պատիւք, ընդունայն են հրճուանք. ընդունայն են մեծութիւնք և ընդունայն են ամենայն վայելչութիւնք կենացս, որովհետև նաև կեանքն իսկ գլխովին է ունայն և բեկանուտ:

6. Գուէրիկոս Դոմինիկեանն, որ նախ եղև փիլիսոփայ, և բժիշկ. և ապա քաջ ատենաբան, յորժամ լուաւ ընթեռնուլ զբանս հինգերորդ գլխոյ գրոցն Ծննդոց, ուր ս̅բ գիրն սկսանի պատմել զազգաբանութիւն որդւոցն իջելոց յադամայ, և եղանակ ճառիցն է այսպէս: Եւ եղեն ամենայն աւուրք ադամայ զոր եկեաց. ամք ինն հարիւր և երեսուն, և մեռաւ: Սոյնպէս ասէ և վասն սեթայ որդւոյ նորա: Եւ եղեն աւուրք սեթայ ամք ինն հարիւր և երկոտասան. և մեռաւ: ը̅ս այսմ ասէ և զայլոց, որ ՚ի կարգի: Սկսաւ հաշիւ առնել զկենաց իւրոց, և ասել, Եթէ այսքան մարդիկ զկնի ընդ երկար կենաց մեռան հուսկ յետոյ, չէ ապա ինձ արժան կորուսանել զդուզնաքեայ ժամանակս իմ յաշխարհի, այլ եդից զկեանս իմ յապահովի. զի մի կորիցէ, յոր-

ժամ զփախչման առնուցու : Եւ սովին մտածութեամբ եմուտ 'ի կրօն Ֆրեյ Հօրն Դոմինիկոսի , և եկեաց անդ սրբութեամբ վարուց : Ո՛վ որչափ 'ի ցնորս պատրանաց անկեալ կան մարդիկ , որոց կեանքն գոլով այսչափ կարճատև , ջանան , և հնարս գործեն կեալ ընդ երկար , նմին իրի ճշմարիտ է բանն սենեքայի . որ ասէ , ամենեքին կարեն կեալ առաջինորէն , բայց ոչ ոք կարէ կեալ երկարօրէն :

Յօդուած Երկրորդ.

Փոքր է ամենայն ինչ , որ ունի զկատարած . որովհետև ամենայն ինչ դիմէ 'ի յապականութիւն : Զիարդ ապա վասն սակաւուց կամիս կորուսանել զբազումս , և վասն առաջօք տևելեաց զճշմարտութիւնն . Հրաժարեա՛ց այժմ 'ի սակաւուց բերկրութեանց , զի մի զրկեալ գտցիս յամենայն բերկրութեանց 'ի յաւիտեան : և համբե՛ր սակաւուց վշտաց այժմ , զի զերծցես 'ի յանվախճան տանջանաց 'ի յաւիտեան : Վասն որոյ խրատամբք ասաց երանելին Օգոստինոս , բարի է այժմ փոքր ինչ դառնութի 'ի կոկորդս , քան զմշտնջենական տանջոնս 'ի ներքս 'ի փորոտիսն : Զամենայն ինչ , որ անցանէ ընդ ժամանակի , փոքր կոչեաց Քս̃ փըրկիչն մեր : Ուստի փոքր կոչեաց ըզժամանակն չարչարանաց իւրոց . Թէպէտ խստագոյնք էին տանջանքն , զոր 'ի նմին կրեաց . Փոքր կոչեաց զժամանակն նահատակութե̃ առաքելոց , Թէպէտ տանջանքն զորս կրեցին , էին մեծամեծք յոյժ : Փոքր է արդարև , և գրեթէ ոչինչ է՝ զոր կրեմք 'ի կեանս յայս համեմատեալ ամացն անվախճանից : Վասն որոյ ասէ երանելին Օգոստինոս : Այս առժամ̃ կէանքս ընդ երկար երևի մեզ . զի դեռ վարեմք զայն . բայց յորժամ վերջասցի . յայնժամ ծանիցուք, թէ որչափ փութանակեալ էր : Արդ՝ համարեսցուք ; թէ եմք յելս կենաց մերոց , և տեսցուք , թէ զիարդ փոքր է ամենայն ինչ , և թէ համեմատեալ ընդ մշտնջենաւորին ոչինչ է բովանդակն , որ մեզ երևի մեծ ո՛ և իցէ կերպիւ . Առ ոմն գերապատիւ կրօնաւոր , և հայր յընկերութէ̃ մերմէ̃ անուամբ Քրիստափոր Կարոս՝ առաքեաց Քս̃ տր̃ն մեր զհրեշտակ մի ասել ցնա , զի բարւոք մտածեալ քննեսցէ զերկոսին զատս , կամ բազում . կամ առժամ̃ : Որով կամէր տր̃ն մեր , թէ 'ի միտ ածցէ զբազումն , որ է յաւիտենա֊

կա֊

կանութեին անվախճան. և զսակաւն. որ է ժամանակ աստի կենացս : Զբազումն, որ է ա̃ծ, զոր միշտ ժառանգելոց եմք, և զսակաւն, որ է հեշտուե̃ն կենցաղոյս, զոր թողլոց եմք : Զբազումն, որ է թագաւորելն ընդ Քի̃, և զսակաւն, որ է գերի լինելն բաղձանաց մերոց : Զբազումն, որ է փառքն յաւիտենական, և զսակաւն, որ է կեալն նաև ընդ երկար յայսմիկ արտասւալից վայրի :

7. Մեծաւ իմաստութե̃ ոչ դադարէր երանելին Բեռնարդոս ասել բազում անգամ կրօնաւորաց իւրոց զայն բան ս̃բյն Հերոնիմոսի. Ոչինչ վիշտ պարտ է երևիլ խիստ, ոչինչ տանջանք ընդ երկար, եթէ նոքօք շահել կարեմք զփառս անեզրական : Սակաւք երևէին Յակոբայ եօթն ամքն, յորս ծառայեաց Լաբանու վասն սիրոյն Հռաքելի. իսկ մեզ ընդ երկար երևի ո՛ և իցէ ժամանակ, զոր ծախեմք ՚ի ծառայել ա̃յ. Տե՛ս թէ ում ծառայես, և վասն ո՛յր. և տե՛ս թէ ում ծառայէր Յակոբ, և վասն ո՛յր : Դու ծառայես Ճշմարտին ա̃յ վասն յաւիտենական փառաց. իսկ նա ծառայէր խաբեբայ կռապաշտի միում վասն անցաւոր գեղեցկութե̃ն : Արդ՝ համեմատեա

տեւմ զծառայութե̃ն քո ընդ ծառայութ̃ն յակոբայ , և տե՛ս թէ իցեն քան ամք , յորս ծառայես դու ա̃յ այնպէս · որպէս նա ծառայեաց Լաբանու , Տե՛ս թէ կարես առնել ճշմարտութ̃բ զայն , զոր ասաց Յակոբ : Զցերեկ այրեալ լինէի 'ի տօթոյ , և զցայգ 'ի ցրտոյ · հատեալ էր քուն յաչաց իմոց : (Ծննդ. 31. 40:)

8. Եթէ նա որ էր ծառայ ա̃յ , այսպիսի հաւ̂ատարմութ̃բ ծառայեաց հեթանոսի միում · ապա զոր հաւ̂ատարմութ̃ն պարտ է քեզ պահել առ ա̃ծ , եթէ ախորժիս լինել նորին ծառայ : Ա՞ ինչ պարտի քեզ փոքր երևիլ , որովհետև ծառայես ամենամեծ տ̃ն · և վ̃ն գերագոյն վարձուց : Տե՛ս թէ յորս արժան է քեզ ծախել զսակաւիկ աւուրս կենաց քոց որք քեզ տուա̂ն առ 'ի ծախել վ̃ն ստանալոյ զկեանս յաւ̂իտենից , և դու թողուս անցանել ը̃ մտաւունս քո առանց իրիք շահու : Վ̃կ բարուք ասաց ս̃բն Օգոստինոս , թէ ժամանակ աստի կենացս նմանի մանելոյ զթելս , որպէս նմանեցուցանէին հինք երիցքերց յառասպելս , որք մանէին զկեանս մարդկան : Զի թելն գործեալ և 'ի մատամանն պատեալ , զանցեալ ժամանակն նշանակէ : Որ դեռ մանեալ լինի մասամբ՝ զներկայն : Եւ՛ որ տա-

կամին յաղէկառն է՝ զապառնին : Քանզի ստուգիւ ոչ գիտեմք ըստ արժանւոյն ծախել զժամանակն մեր, պարապելով լիաձեռն 'ի նմին 'ի գործս բարիս · մանաւանդ թէ անխոհեմաբար վատնեմք զայն յանշահս, յանօգուտս, և յունայնս :

9· Արդ՝ հայեաց վայր մի, թէ որպէս խոշոր և դժնէհկական անկուած է ընթացք կենաց քոց · որովհետև ոչ հոգաս ծախել զժամանակ քո արժանապէս · և որ էանցն · այլ ոչ ևս դարձցի յետս : Քաջ ծանոյց և մեկնաբանեաց զայս մեզ մարգարէն դաւիթ, յորժամ ասաց · Ժամանակ ամաց մերոց անդադար որպէս սարդի : (Սաղմ· 89· 9:) Քանզի սարդք ոչ մանեն ասր, կամ կտաւս, այլ յաւելաւածովք աղեաց սկսանին գործել ոստայնս իւրեանց, որ և այնչափ անզօր է, մինչ զի խակոյն հերձոտեալ եղծանի, և չէ ինչ յօգուտ · բայց եթէ որսալ ըզճանճս : Այնպէս և կեանք մարդոյ լի է բովանդակին սնոտի վաստակօք · անօգուտ մտածութեմբ, հոգօք, մեքենական արհեստիւ, և զանազան պատկերակերպութեմբ, զորս արտաքուստ ևեթ 'ի գործ արկանեն . անկանելով, և շղթայելով պհոգս ընդ հոգոց, և աշխատելով որչափ կա-

կարենն՝ առնելով զկատարած միոյ զբաղման սկիզբն միւսոյն. ՝որոյ բովանդակն է անարգ և չնչին, ոչ թէ արարին զայն ոտիւք:

10. Արդ՝ խորհեցարուք, թէ զիարդ հնար է մեզ ստանալ զկեանս, որում ցանկամքն, զիարդ պահպանել զնա. զիարդ բազմապատիկ առնել, և զիարդ պահել պաշտպանել. որպէս զի մնասցէ ՝ի ձեռս մեր, և ոչ լիցի որպէս զոստայնս սարդի, որոյ աշխատասոյոյք և սնոտի վաստակք աւերածութ̃ միով չքացեալ կորնչին:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Թէ չափք իցէ ժամանակին առիբր յաւիտենական կենաց։

1։ Թէպէտ և փախստեայ, և կարճատև իմն է ժամանակն. բայց ունի զազնուագին իմն իսկուի, ղ̃, թէ կարէ լինել առիթ անմահական կենաց. որովհետև 'ի սուղ ժամանակի կարող եմք ստանալ զայն, յոր յաւիտեան վայելելոց եմք։ Վ̃ս այսորիկ ասող՝ ուր ասէ ս̃ըն Յօհաննէս։ Զի ժամանակս մերձ է, բնագիրն յունաց ասէ, Զի մերձ է առիթն։ Քանզի ժամանակ աստի կենացս է առիթ ստանալոյ զյաւիտենականն։ Ծանեան նախնիք զպատուականութի̃ և զկարևորութի̃ առթին. կամ զի ռամկօրէն ասացից, Փուսանտին։ Վ̃ս որոյ նկարագրեցին զնա 'ի ձև չ̃ծուհւոյ, առ 'ի պարզաբանել զմեծամեծ բարիսն՝ զորս առնէր նա նց̃, որք զնա մեծացուցանէին, և երկրպագանէին պատկերի նր̃, այսպիսի ինչ խորհրդա ո՞ր կերպարանօք ։ Զի եղեալ ունէին զնա 'ի վր̄ անուի , որ անընդհատ պտոյտքէր , և ունէր զթևս 'ի յուսն ևս 'ի ցուցանել զսրընթացութն̄ նր̄ ։ Ոչ երևէին երեսք նր̄ · զի ծածկեալ էին զայն գէսքն , որք յառաջոյ հոծք էին , և երկայնք ։ Վս̄ զի դժուա՛րին է ճանաչել զգալուստ առթին , ուստի երբ ներկայ է , և ունի զերեսսն առ քեզ , բուռն հար , և կալ զհերացն ։ Սակայն առ ծոծրակաւ՛ն գերծեալ ունէր զգլուխն պատկերն այն , մանաւա՛նդ թէ ճաղատ իսկ էր ։ Վս̄ զի 'ի դարձուցանել առթին զթիկունսն առ քեզ · ոչ կարես բուռն հարկանել զնմանէ , զի չունի գէսս 'ի յետուստ ։

գ· Յաւ՛ել Աւ՛քսոնիոս · առ 'ի նշանակել զզուգընթաց ապաշաւա՛ն նոցա · որք յանօգուտս կորուսանեն զառիթն և ասէ , ունէր պատկերն այն 'ի վր̄ թիկանց դրեալ զբառս՝ մեղայ , որ ցուցանէ զզղջումն · զի աս միայն մնայ յետ անցանելոյ առթին ։ Ե՛ւ այլք կերպարանէին զնա ունել 'ի ձեռս իւր զձիրս մեծամեծս , և զգանձս մեծութեց , որովք ձգէր առ ինքն զխուռն բազմութն̄ մարդկան , բայց ընթանայր ը̄ ժամանակին զգեցեալ հանդերձս պանդխտի · և ունէր ոչ զերկուս · այլ զչորս թևս ։

Վս̄կ

3· Վ՟սն վայելչապէս կոչեցաւ՛ 'ի Հեփոկրիտեայ՝ սրընթաց· և դուհամէժ· զի նոյնպիսի երագութ՟բ սահի· ո՟պ ոք 'ի ժայռէ 'ի խոնարհ անկանի։

4· Արդ՝ յաւելում ասել և զայս· Յորժամ իշխան ոք մեծազօր հրաման տայ ճարտար արհեստաւորի մ՟ի պատժով գլխապարտութ՟ն վաղվաղակի 'ի կատար հասուցանել զշինուած ինչ գերագոյն արուեստակերտեալ· որ հազի՛ւ կատարիլ կարէ 'ի միում ամի, և այն զի թերևս իշխանն կամի, թէ վաղագոյն ևս լինիցի։ Ասա՛ աղաչեմ· կարէ արհեստաւորն այն լինել անհոգ, և ոչ վաղագոյն զգործն վճարել· որովհետև գիտէ, զի եթէ զանց արասցէ, կորուսանէ զկեանսն։ Արդ եթէ սոյն օրինակ և մեք կարեմք ստանալ զկեանս յաւիտենից, կալով 'ի շնորհս ա՟յ, և անապական պահելով 'ի հոգիս մեր զպատկեր ն՟ր· զիարդ անհոգ և թմբրեալ կամք յայսմիկ· և թողումք անցանել առթի փրկութ՟ն մերոյ։ Կոչեցաւ՛ ժամանակն 'ի Թէոփրաստեայ, և 'ի Դիմոկրիտեայ ազնուագին ծախս· իսկ Զենոն ասէր, ոչ իմիք կարօտ է մարդն առաւել քան ժամանակի· և ոչինչ կարևոր է նմա քան զայն։ Եւ Պլինիոս այնչափ մեծ համարէր զժամանակն· մինչզի ոչ կամէր կորուսանել և ոչ զմի րոպէ 'ի նմանէ։ Վա՜յ տեսեալ երբեմն զեղբօրորդին շրջիլ դատարկութ̅, ՚ի յանդիմանելն, ասէ ցնա. կարէիր զայդ ժամանակդ յայլ պիտանի գործս ծախել ։ Եւ յաւուր միում մինչդեռ այր ընթեռնուլ միոյ ՚ի յընտանեաց զգիրս, և ինքն ունկնդիր լինէր. եղբօրորդին ետ կրկին ասել ընթերցողին զբանն, զոր յառեպէս շեշտեաց. և զի թուեցաւ նմա, թէ կրկնումն այն իցէ կորուստ ժամանակի, յանդիմանեաց զեղբօրորդին։ Այլ Սենեքայ համարէր զժամանակն պատուական և մեծագին քան զա̅մ ինչ. ուստի ասաց. Ո՞ է, որ զգին դնել կարօղ իցէ ժամանակի։ Արդ՝ եթէ հեթանոսք, որք ոչ նկատէին զժամանակն իբրև գին յաւիտենական կենաց. այսչափ մեծ և պատուական համարէին զնա, որչափ ապա մեք քրիստոնեայքս պարտիմք մեծ համարել զայն։

Յօդուած Երկրորդ.

Խորհեաց. թէ անվախճան եղիցի ապաշաւ քո, եթէ ոչ յօգուտ քեզ յեղափոխեսցես զառիթն կամ զպարապ ժամանակդ, արժանաւորելով նովաւ երկնից արքայութե̅ն, թեն, յորժամ տեսցես. թէ կարող էիր փոքր ինչ ջանիւ ստանալ զայն, բայց վն̄ սուղ և դուզնաքեայ հեշտութե̄ կորուսեր զայն : Ո՜վ որչափ եղև մոլեգնութի̄, և անտանելի վիշտ սրտին եսաւա՛յ, երբև 'ի յուշն դարձեալ՝ ետես, զի եղբայր իւր կրտսեր առեալ էր զօրհնութի̄ անդրանկութե̄ նր̄. զի վաճառեաց զայն յառաջագոյն ընդ միոյ սկտեղ ոսպնաթանի : Գոչէր, և 'ի սրտմտութէն մաշէր : Հայեաց 'ի քեզ յօրինակիս յայսմիկ թէ և դու վն̄ անարգ. և կարճատև հեշտութե̄ իբրև վաճառեցեր զարքայութիւն երկնից : Զինչ արտացես, յորժամ մատնեսցիս 'ի գեհեանն անշէջ, եթէ ոչ կոծել և լալ 'ի յաւիտեան զայն, զոր 'ի սուղ ժամանակի կորուսեր : Փեսայքն ղովտայ. որք յորդորեցան 'ի նմանէ ելանել ընդ նմա 'ի քաղաքէն, և կարէին դիւրաւ՛ խոյս տալ 'ի հրոյն, և ոչ կամեցան, և ծաղր եդեն 'ի խորհուրդս իւրեանց, յորժամ տեսին տեղալ 'ի վր̄ զհուր և զծծումբ. որ 'ի մոխիր դարձուցանէր զքաղաքն ողջոյն, զոր կսկիծս ցաւոց ոչ կրեցին յաղագս անարգելոյն զառիթն կամ զդիպաւորուին զայն բարի, որ եկն 'ի ձեռս նր̄ : Սոյնպէս և Աննոն արքայ որդւոյն ամմոնայ, որում մատուցաւ առիթ հեշտեաւ առնելոյ զխաղաղութիւն ընդ Դաւթի, յորժամ ետես զքաղաքն աւերեալ, և հուրբ դատեալ, և զբնակիչսն իբրև զոչխար 'ի սպանդ վարեալ, զո՞ր կսկիծ ոչ կրեաց, և զի՞նչ ոչ կամեցաւ տալ առ 'ի շահել զառիթն զայն մտերիմ բարեկամութեան ընդ այնպիսի մեծի արքայի, և վայելել 'ի խաղաղութեան զթագաւորութիւն իւր: Բայց զի՞նչ է այս առ անձկութեամբ, և առ անտանելի վշտօք մեղաւորին, յորժամ տեսանէ զինքն 'ի դժոխս մատնեալ, 'ի հուրն անշէջ. մշտակայ թշնամի երկնից արքային, և տարամերժեալ 'ի թագաւորելոյ ընդ մբա նր: Ո՞ր արտմութիւն. և որ մոլեգնութիւն ոչ պատեալ պաշարեսցէ զնա: Որչափ դառն են այժմ ողբք, և կոծք ձախակողմեան աւազակին, որ ընդ փրկչին աշխարհիս 'ի խաչ ելեալ էր. և ունէր ընկեր բարի առ 'ի փրկել. այլ ոչ գիտաց գիրկս արկանել այսմ առթիս: Եւ ո՞ր ապաշաւ ոչ պաշարեսցէ զխորտակմանձաչ մեծատունն, որոյ ընդ դուռն եմուտ առիթն բարի, որով կարօղ էր գտանել զթողութիւն մեղաց իւրոց, եթէ լինէր առատաձեռն առ Ղազարոս. բայց նա ոչ խնամարկէր նմա լինելով առաւել դժնեայ առ մուրացիկն քան զշունս, որք գթածագոյն գտան քան

զնա

զիր՟ իւրեանց լծելով յառաջադրոյն զվէրս նր՟ . և ապա մեկնելով անտի : Զի՞նչ ասասցէ այժմ եղկելին այն , որում պակասէր ամ՟ ինչ նաև մինչև ցկաթիլ մի ջրոյ . յաղագս ոչ տալոյ յողորմութիւն դանէ զփոքրիկ նշխարս մի հացի :

2. Արդ՝ թէպէտ և ճշմարիտ է , թէ ամ՟ ժամանակ յորում ապրիմք , իցէ առիթ ստանալոյ զփառս երկնից . սակայն յընթացս կենաց պատահին դիպուա՛ծք ինչ . յորոց առաւե՛լ մասնաւորապէս կախի փրկութիւն մեր , և յորս առաւե՛լ ո՟րն մեր դատանի մեզ անպարտ , կամ պարտական , որպ՟ երբեմն դատա՛ պարտական Նահապետին Յովսեփայ , յորժամ նա առ 'ի ոչ մեղանչել ընդդէմ արարչին իւրոյ , եթող զվերարկուն 'ի ձեռս տիկնոջն , և փախեա՛ 'ի նմանէ : Եւ՛ զի մեծ էր այս քաջագործութիւն , հաճոյ եղև յոյժ այ՟ . և արժանի դատա՛ բարձրանալ և ունիլ շնորհս առաջի նր՟ . որպ՟ և յետոյ իսկ եղև : Սոյնպէս և Շուշան 'ի մեծէ առթէ միոջէ օգտեցա՛ յոյժ , և արժանի եղև փրկել արդեամբք բազմա՛ , ո՟ր է , յորժամ ընտրեաց մահուա՛նն մեռանիլ , քան հաճա՛նիլ 'ի հրապոյրս պիղծ ցանկութե՟ անպատկառ և լկտի ծերոց : Ուստի և մեք ոչ պարտիմք հանել 'ի ձեռաց

զդիպուա̂ծս, յորս կարեմք վարիլ ընդ ա՟յ մեծագործութ՟ք, և հաճոյ լինիլ նմա քաջագործութ՟ք մեծամեծ առաքինութեանց, որ կախեալ կայ 'ի յառիթից : Զորմէ ասէ իմաստունն. Մի՛ զրկեսցիս յօրէ բարւոյ, և բաժնին բարւոյ սիրոյ մի՛ անցցէ զքեւ : (Սիրաք. 14:) Մարկոս Թուլլիոս սահմանէ զառիթն, մասն ժամանակի յարմարեալ առ կիրարկութե՟ն իրաց : Միթրիդատէս կոչէ զնա մայր ա՟մ իրաց առնելեաց : Եւ̂ Պոլիբէոս ասէ, թէ նա տիրէ յա՟մ իրս մարդկայինս : Վասն այսորիկ ասացին ոմանք թէ գլուխն 'ի գործ արկանել զառիթն առ 'ի առնել զգործս մեծի առաքինութե՟ն, է մեծ նշան նախասահմանութե՟ն : Տե՛ս թէ որպիսի փութով երագեաց Հռաքէլ թագուցանել զկուռսն գողացեալ 'ի հօրէ իւրմէ : Տե՛ս թէ որպիսի փութով ե՟ առաջ ել Աբիգեա Դաւ՛թի՝ առ 'ի ոչ կորուսանել զառիթն հաճելոյ զնա : Զի առանց կարծեաց, եթէ յապաղեցէր փոքր մի, ինքն, և այր իւր. և իւրքն ա՟մ 'ի սուր սուսերի մաշեալ լինէին : Տե՛ս թէ որպէս փութացա̂ւ Աբրահամ զհետ պնտիլ երից թագաւ̂որացն, որք դերի վարեալ տանէին զՂովտ զեղբօրորդին իւր, առ 'ի ոչ կորուսանել զառիթն ժամանելոյ ն՟ց : Տե՛ս և 'ի Սաւ̂ուղ, թէ որպէս վաղվաղակի գումարեաց զօրս առ 'ի յօգնութիւն ժամանել, որոց բնակէին յաբիս գաղայադու : Արդ՝ և մեզ ստուգիւ ոչ փոքր ջան կայ 'ի վր̅ առ 'ի ստանալ զարքայութիւն երկնից: Ապա մի՛ լինիցուք յայսմիկ պղերգ, տեսեալ, թէ այլք փոյթ են 'ի խնդրել զերկրաւորս : Ո՛ւշ դիցուք փութոյ և երագութեան, որով խրատէ զմեզ իմաստունն վաղվաղակի կատարել զխոստացեալն, ասելով, Որդեակ, եթէ եղեր երաշխաւոր բարեկամի քում . զերծո՛ զքեզ վաղվաղակի, զի անկար 'ի յետս ընկերի քոյ : (Առակ. 6. 1. 3. և 4:)

3. Նոքա, որք մեղօք անկեալ են ըն̅ իշխանութեամբ դիւին . նկատեսցեն, թէ որպիսի ջանիւ զերծանիլ պարտին անտի առանց կորուսանելոյ զառիթն, կամ զժամանակն : Իսկ որք պարտաւորեալք են այս վր̅ անբաւ բարերարութեց նորա, կամ վասն խոստմանցն, զոր նմա արարին, նկատեսցեն, թէ զիարդ պարտին անձկալ, և տենչալ 'ի հատուցանել զպարտսն: Ուստի իրաւամբք ծանուցանէ մեզ առաքեալն ասելով, Զայս ասեմ եղբարք, զի ժամանակս կարճեալ է: (1. Կորն. 7.) Չէ դատարկ 'ի բարի խրատուէ առակն այն, զոր պատմեն հեթանոսք, թէ ետ դիոս երբեմն ումեմն անօթ

մի լի ամ բարեօք, և նա վասն սաստկին խնդութեան 'ի վերայ մեծի պարգևին. յորում պարունակէր այն ամ, զոր խնդրէր նա տենչանօք, կամեցաւ վաղվաղակի վայելել 'ի նոսա. և զի պարտ էր վայելել 'ի յիւրաքանչիւրոցն 'ի զանազան ժամանակս, և ոչ խառն 'ի միասին, ը̄ բանալն զանօթն անխոհեմամբ առ 'ի վայելել, իսկոյն բնաւքն թռուցեալք յանօթոյն ցիր և ցան եղեն ը̄ օդս. և 'ի չիք դարձան: և թէպէտ փութացաւ խփանել զանօթն, սակայն արդէն ցնդեալ էին տարիքս, և ոչ մնաց նմա ինչ անտի. եթէ ոչ ակնկալութիւն: Յոյժ տարբեր է յայսմանէ յետին պարագայէ առակիս առ իրսն փրկութեան մերոյ. Վասն զի թէպէտ լի է այն՝ ամենայն բարութբ̄. բայց եթէ թռանիցի 'ի ձեռաց մերոց, ոչ թողու գոնէ մեզ զակնկալութիւն իւր. այլ յաջորդէ նմա ապաշաւն, և անձկութիւն յաւիտենական այնչափ առաւել, որչափ մեծ էին յանցանք մեր յաւերջանիկ վախմանեան նորա:

4. Յորժամ արքայն Յովաս Երիցս եհար նետիւք զգետինն, և եկաց. և մարգարէն Եղիսէէ ասաց ցնա, եթէ վեցիցս, կամ եօթնիցս հարեալ էր քո զգետինդ, իսպառ տերէիր ամենայն Ասորւոց. որպէս և դառնութե̄, և

տխրութե՟ ոչ լցա՛ւ, թէ ընդէր ոչ հարի վեցերցս, կամ եօթներցս: Արդ եթէ տխրեցոյց և ցա՛ւեցոյց զնա առիթն ունելոյ զայնչափ յաղթութես. և տ՟րութես, յաղագս ոչ վարելոյն նուա՛ւ, թէպէտ առանց երից յանցանաց. ապա որպիսի սուր սուսերա՛ւ խոցոտեսցին սիրտք թշուառական դատապարտելոց, յորժամ տեսցեն, թէ վասն յանցանաց իւրեանց կորեա՛ւ յանօգուտս առիթն երկնային բարութե՟ց. և թէ այլ ոչ ևս մնայ ՚ի նմ՟ յոյս ինչ. կամ ակնկալութի առ այն:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս պահապանութե՟ ՚ի մէջ
ժամանակաւորին և յաւէ
տենականին:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ.

Յաղագս վախճանի ժամանակաւոր
կենաց:

ՆԿԱՏԵՍՑՈՒՔ այժմ, թէ որչափ հակառակք են հանգամանք յաւիտենականութե՟՝ հանգամանաց ողբալի, և թշուառալի կենաց մերոց: Ե՛ս սկիզբն արարեալ զգլխաւորքէն, զ՟ թէ ունի զ՚ատարած. երկու ինչ են, զորս արժան է մեզ խոկալ: Մի՝ թէ ունի վերջանալ. և երկրորդ՝ եղանակ վերջանալոյն: Իսկ արդ՝ թէև վախճան կենացս անկեալ կայր ը՟ մարդկային բնութե՟, և թէև յիշխանութե՟ ուրուք իցէր կալ և մնալ յաշխարհիս , և եղանակ ելիցն ոչ եթէ զմերն տկարութ՟ք , կամ մահուամբ , այլ այլազան իմն եղանակաւ · սակայն ունիլն իրաց կենցաղոյս զկատարած՝ բաւական էր առնել զնո՟ խոտելի ։

2· Անօթ մի պատուական ապակեայ · եթէ իցէ երկարատև եթէ զոսկի , մեծ համարի արդեօք քան զոսկին · բայց վ՟ն բեկանոտութեն կորուսանէ զհամարումն , և զվարկումն , թէև ընդ երկար մնայ կարիցէ ։ Այլ առաւել քան զայս չնչին է կեանք մեր ։ Քանզի յոյժ առաւել է բեկանաւորութն իւր քան զապակւոյն , որովհետև յանհամար պատահարաց մնասիլ կարէ , յաղագս որոց խոտելի է ամ՟ բարեօքն հանդերձ · և ուր թողցուք , զի ինքնին եւս սպառեալ վերջանայ ։ Այս թէ ոք նկատեսցէ յեղանակն վերջանալոյ կենաց իւրոց մահուամբ , հիւանդութ՟ք , և ձախորդութ՟ք , որք նախընթաց լինին մահու , և են եթէ դեսպանք և արբանեակք նր՟ , և կամ եթէ ծննդեայք նորա · Թմբրեալ , և հիացեալ ապուշ մնայ , թէ զիարդ մարդ մահկանացու մեծ ինչ համարի զժամանակաւոր բարեբաստութիս , որովհետև տեսանէ զանհամար թշուառութիս , յորս անկեալ դնին ամ՟ յաջողութիք աշխարհիս · և

վե֊

վեհափառութիւնք մեծամեծ ինքնակալաց ։ Ասէ՞ տե՛ս դու ինձ , թէ յոր աղէտս թշու՜առութեանց , և չարեաց եհաս արքային անտիոքոս ․ որ էր տ̃ր և իշխան բազում աշխարհաց ։ Զի անկեալ գնիւր յանմխիթար , և 'ի մահացուցիչ ախտս տրտմուե̃ ․ և 'ի չարաչար տքնութե̃ , և 'ի խիթս դառնուե̃ , որ անդէն բառնայր զուշն 'ի նմանէ , և ոչ ներէր զցայգ և զցերեկ փակել զարտևանունսն ։ Անկեալ գնիւր 'ի զզու՜անս պագրալի ժայթքմանց մինչև գրեթէ աղեացն իսկ արտաքս ձգել ։ Անկեալ կայր յանտանելի ցա՜ւս ոսկերացն խորտակմանն լուծեալ լքեալ յա̃մ շարժութեանց ։ Եւ այն ինչ կամէր 'ի վերայ ալեաց ծովու սաստել ․ և լերանց հրաման տալ իշխանութե̃ ․ ոչ կարէր զանձն ուղղել , և կամ քայլ մի ոտին փոխել ։ Նա , որ զգենոյր բեհեզս և ծիրանիս , յորոց սփռէին բուրմունք անուշից , բուրէր այնուհետև զայնպիսի նեխութիւս հոտոց , մինչև չհանդուրժել ումեք կալ առ նմա վ̃ն անտանելի հոտոյն գարշուե̃ , և մինչև զօրացն ա̃մի նեղել տաղնապա՜ւ ։ Եւ մինչդեռ տակաւին կենդանի էր ․ յաչաց անտի , և 'ի մարմնոյն առհասարակ եռանդն որդանց բղխեալ սորսոքէին , և կրծէին զմարմինն ։ Այլ

'է

'ի վր̅ այսր ամի նա ինքն բարբառէր սրտմտութ̅ , և մոլեգին կատաղութ̅ ։

3. Արդ՝ հայեաց յանտիոքոս , յորժամ , քան զոսկի լուսաճաճանչ երևէր , հեծեալ յօդապարիկ և 'ի պաճուճակապ երիվար մեծագանձ , և ոսկեղէն . յորժամ դողացուցանէր զերկիր , և օրէնս կարգէր զօրացն ամի առ հասարակ ։ Եւ ապա հայեաց 'ի նա յորժամ անկեալ դնի 'ի մահիճս , լուծեալ , դեղնեալ , և ընդարմացեալ . նեխեալ , հոտեալ , և եղեալ աղբիւր որդանց , և լքեալ 'ի յիւրոց անտի պաշտողաց զնա , զորս հալածական առնէր մահահոտ ապականութե̅ նեխութեցն , որ 'ի վրանս զօրացն ամի տարածանէր յապականել . և ապա չարաչար հայհոյութ̅ սատակեալ եհան զոգին։ Աղէ , ո՛ է , որ տեսեալ զայսպիսի կատարած , նախանձեսցի ընդփառս անարգ իւրոյ ։ ո՞ է , որ զհետ լինիցի երջանկութեց կենցաղոյս , տեսեալ զայսպիսի չարաչար մահ ։ և ո՛ է , որ խոկացեալ զայսպիսի թշուառութի , հաճեսցի , և ուրախացեալ բերկրեսցի ը̅ պայծառութի իւրոյն բախտից ։ Տե՛ս թէ զոր վախճան կատարածի ունին բարիք կենցաղոյս , որք իբրև ականակիտ ջուրք յորդանանու սահին և իջանեն 'ի մահաշունչ դայուս մեռեալ ծովուն ։ Տե՛ս թէ զոր կա-

տարած մահու ժառանգեցին երկոքին Հերովդէսքն , մ̃ տակաղծնացին , և ագրիպպային զօրաւոր Թագաւորք : Զի մինն 'ի ցոփ և 'ի խենէշ զարդուց մեծութե̃ եղև արօտ անյագ որդանց պաղրութե̃ · իսկ միւսն եղև ճարակ զաղրալթօրմի ճճեաց :

4. Տե՛ս և 'ի յԱքաաբ արքային յաղթականն Թագաւորաց ասորւոց · և այլոց երեսուն և երկու Թագաւորաց : Թէ զիարդ էառ զկատարած Թագաւորութե̃ նր̃ · զի 'ի ձգել միոյ 'ի զօրաց Թշնամեաց զաղեղն կորովութ̃ , և ը̃ հարկանելն 'ի Թօքառաջան , եւ ողին , և արիւնն , որ հոսէր 'ի վերայ անտի , լնոյր զծոց կառացն արքունի · և շունք լզէին զարիւնն սեաւ և զաղրալի : Իսկ կատարած յովրամայ որդւոյ նր̃ եղև վատթարագոյն · զի և նա հարաւ ը̃ մէջ Թիկանցն · և ել նետն ը̃ սիրտ նր̃ , և եհան զոգի , և եղև կերակուր ագռաւուց , և Թռչնոց երկնից , և որ 'ի կենդանութե̃ տիրէր քաղում գաւառաց · ոչ կարաց ունել վս̃ դերեզմանի զեօթն Թիզ տեղի 'ի վր̃ հողոյ : Եւ ով է' որ ոչ զարմասցի 'ի տեսանել զինքնակալն կեսարիոս , որ յետ յաղթական լինելոյ , և ը̃ բռամբ ածելոյ զժողովուրդն յաղթանակօղ աշխարհի , անկանել 'ի տագնապ մահու ը̃ քսան և երիւք աղէկերբք ար-

եանց, որք հոսէին յանդամոց նր̃ իբրև նոյնչափ վիրաւորելոյ աշտէնիւ ։ Եւ ո՞ հաւատալ կարէ, եթէ Կիւրոս, որ էարկ ընդ իշխանութ̃ իւրով զմարս, զասորեստանեայս, և զարքայութին քաղդէացւոց. և յաղթութ̃ ամաց երեսնից հիացոյց զաշխարհս ամ̃, ապա նշաւակեալ մեռցի վրէժխնդրութ̃ կնոջ ։ Ուստի և այս միայն բաւական եղև յամօթ առնել զփառս երեսնամեայ իշխանութն նր̃ ։

5. Ո՛ է. որ հաւատալ կարէ, թէ Աղեքսանդր, որ 'ի սայր սուսերի իւ̃ բռամբ էարկ զհնդիկս, զմարս, և զբովանդակ աշխարհս. ապա ըմբռնեալ ախտին ջերման անկեալ դնիցի 'ի մահճիճս հիւանդացին, լուծեալ, այլագունեալ. 'ի ծարաւոյ տոչորեալ. տաղտուկ, զուրկ յամ̃ մխիթարութենց. խորանկեալ աչօք. հիւծեալ ըռնգօք. ուռուցեալ լանջօք, և անկարող 'ի յօդել զբարբառս բանից ։ Եւ արդարև զարմանալի է յոյժ. թէ տապ ջերման իբրև սպառեացէ զզօրութն, և զբարեբաստութն աշխարհին ։

6. Վասն այսորիկ կարէ իմաստութ̃ ասաց ոմն 'ի փիլիսոփայից, թէ գլուխ իրացս է կատարածն ։ և այս է իրաւացի յոյժ, Քանզի զոր օրինակ մարդիկ ճանաչէին 'ի դիմաց. այս

պէս և զիմն ինչ ճանաչել պարտիմք ՚ի կատարածէ նոցին ։ Այլ աստ՝ ինձ, զո՞ր կատարած ունի կեանքս, որ ոչ իցէ լի թշուառութբ̄, վա՜յ և կեանքն իսկ գլխովին, համարիլ պարտի թըշուառութբ̄ լի ։ Մի՞ իցէ ոք, որ անկցի ՚ի հրապոյրս խաբէութե̄ անողջութբ̄ զօրութե̄ց մարմնոյն, ճոխութբ̄ ընչից · շքով իշխանութե̄ · մեծութբ̄ բարեբաստութե̄ց ; մեծածախ յօրինուածով ապարանից ։ բազմութբ̄ ծառայից · ազնուութբ̄ զգեստուց, և փայլմամբ արժանապատուութե̄ · զի որչափ եղիցի երջանիկ, այնչափ եղիցի տարաբաստիկ · զի չիք այլ կատարած երջանկութե̄, եթէ ոչ թշուառութե̄ ։ Ուստի Աղեքսիդայոս իբրև լուաւ յոմանց, որք գովէին զարքայն պարսից, թէ երջանիկ և բախտաւոր է յոյժ · յանդիմանեաց զնոսա ասելով, լուեցէք փոքր մի · քանզի կեանք Պրիամոսի արքային վերջացաւ սաստկագոյն ցաւօք ։ Զի և ես յորժամ էի թագաւոր պարսից · բազումք էին այնք, որք նախանձէին ը̄ իս, քան որք գթային ։ Հաստատեաց զայս ճշմարտութե̄ Մագոնէս քաջ զօրագլուխն կարթագենեցւոց և եղբայրն Աննիբաղեայ, որ իբրև վիրաւորեալ առ ՚ի մահ, յոգւոց պարզել պատրաստական եղև · սկսաւ խօսել · և ասէ · ո՜վ թէ զի՛նչ իցէ կատարած կենաց, և բարեբաստուե̃ : Որչափ մեծ անմտութե̃ է ախորժել զբարձրանալն. զի մեծամեծք անկեալ կան ը̃ անհամար աղեկածուք̃, և վախճանն նոցա է 'ի կորուստ ապականութե̃ : Ո՜վ որչափ յողդողդ և անհաստատ է պատիւն մեծ : Սուտ է յոյս մարդոյ. սնոտի են ամենայն փառք, և հեշտանալք կան 'ի տուտակապատ շողոքորդութեա : Ո՜վ կեանք անհաւա՛ստք և երկրական, դատապարտեալ 'ի վիշտս մշտնջենաւորս : Զի՛նչ օգուտ բերէ ինձ այժմ կիզուլս հուրբ զմեծակառոյց ապարանս, և զպարսպաւո՛ր ամրոցս. յերկիր կործանել զքաղաքս, և վեր 'ի վայր առնել զաղինս : Զի՛նչ շահ մատուցանէ ինձ եղբայր, ունել զհոյակապ շինուա՛ծս ապարանից. զարդարեալ ոսկւով, կճով, և հիանալի մեծութե̃, որովհետև այժմ մեռանիմ բացօթեայ 'ի դաշտի : Որչափ խորհուրդք առից մեծագործութե̃ ընդմիտս քո տարրուբերլին, և ոչ գիտես, թէ որպիսի կատարած դառնութե̃ պահի նց̃ : Տե՛ս, զի ես արդ չու՛եմ, և ծանիր, զի և դու վաղվաղակի զկնի իմ եկեսցես :

Յօտ_

Յօդուած երկրորդ.

Արդ՝ ոչ արկցուք 'ի թիւ զնմ եղանակս մահուան, այլ զայն ևեթ, որ համարի բարեբաստիկ 'ի մէջ այլոց, զի է զայն, յորժամ ոչ մեռանի ոք բռնութ̃· կամ յեղակարծօրէն, այլ բնական մահուամբ 'ի ձեռն հիւանդութեան կրիք բնականի : Եւ՛ դու տե՛ս · թէ ո՛ր ողբոց արժանի է երջանիկ համարիլն զայն, որ է փոքր թշուառութի : Վ̃ զի զո՛ր տագնապ ոչ կրէ նա, որ այսու կերպիւ՛ մեռանի : Որչափ տանջեն զնա դիպուածք ցաւոց, և հիւանդութեանց : Տե՛ս թէ զիարդ տապ ջերմանն կիզու զփորոտիս նր̃ : զիարդ և ծարաւ՛ շրթանցն, որ և զխօսելն լռեցուցանէ : զիարդ ցաւ՛ գլխոյն զուշն վերացուցանէ : զիարդ անձկութի սրտին ընկճէ զոգիս մահացելոյ տրտմութ̃ : և զիարդ տանջեն խստագոյն հիւանդութեց ախտք, որք առաւել են քան զթիւ՛ անդամոց մարմնոյն, և բուժին միայն դեղովք, որք ոչինչ պակաս դառն և վշտադնէչք են քան զնոյն իսկ զհիւանդութին : Յաւելեալ բարդի 'ի վր̃ այսորիկ հոգն տառապեցուցիչ վս̃ նց̃, զորս թողու, և կամ զորս սիրէ : և

'ի

'ի վ̅ր այսորիկ անհաւաստի կայանն, ուր դնալոց է. ո̅յ գեհեանն, և կամ արքայութեն վերին :

7. Եւ՛ եթէ յիշատակ մահու ևեթ կոչի դառն, և զզուեցուցիչ. զի՞նչ եղիցի ապա ը̅ փորձ ն̅ր անցանելն : Թէպէտ քաջասիրտ և կորովի էր յոյժ Սաւուղ, սակայն 'ի լսելն. եթէ 'ի վաղիւն մեռցիս, անկաւ յերկիւղէն կիսամահ 'ի գետին : Վ̅ն զի զի՞նչ առաւել քան զի̅մ ինչ սոսկալի իցէ մեղաւորին քան զլսելն, թէ մեռանելոց է՝ և թողլոց զա̅մ հեշտութիւս իւր. և տալոց ա̅յ զմանրագոյնն համարս կենաց իւրոց : Եթէ արկցի վիճակ 'ի վ̅ր պարտաւորի ուրուք, զի կամ դատապարտեսցի 'ի մահ, և կամ բարձրասցի յաթոռ թագաւորութե, որպիսի սրտիւ ահն կալեալ մնայր՝ ելից վիճակին իւրոյ : Այլ զի՞նչ եղիցի տաղնապեցելոյն մահուամբ, որում չիք բողոքել առ ոք. այլ ապա մնալ միայ յետ սակաւուց լսել զվճիռ երկնաւոր դատաւորին վ̅ո անձին, ո̅յ կամ մտանել 'ի հուրն անշէջ, և կամ վերանալ 'ի փառս, և ժառանգել զանվախճան յաւիտենականութիւն, որ սպասէ նմա : Արդ՝ ասա՛ աղաչեմ. չէ՞ այս արդեօք թշուառութի մեծ : ապա զիարդ կարէ կոչիլ երջանիկ կեանք. որոյ երջանկու-

թիւն

թին է անմարթել այսպիսի թշուառութե̄ : Եւ ՚թէ ոչ հաւատաս ինձ , հարցցուք զայս ՚ի նմանէ, որ կայ ՚ի տագնապի մահու , և լուիցուք , թէ որպիսի ինչ երևի նմա յայնժամ կեանքս այս : Աղէ՛ հարցցուք՝ . թէ զի՞նչ ասէ նա վ̄ կենաց իւրոց , յորժամ խորանկեալ կան աչքն . հիւծեալ երևին ունչքն , մեռեալ կան ոտքն , սառուցեալ ծունկքն , այլագունեալ դէմքն . ձմլեալ սիրտն , դադարեալ դրեթէ զարկք բազկացն . վտանգեալ շնչառութիւն . և կալեալ ՚ի ձեռս զխաչելոյն , և զմոմեղէն . և յորժամ գոչեն յականջս նր̄ մերձակայքն օգնիչք բարբառ մեռանելոյ զբարբառս զայս , Յ̄ս , Յ̄ս ՚ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ , և յորդորեն զնա զղջանալ : Եւ լուեալք , զի բարբառեալ առ մեզ ասէ . որչափ երջանիկ եղև կեանքս իմ . այնչափ և սնոտի եղև վ̄ իմ . սուտ և երջանկութիւն իւր է պատիր և ընդունայն , որովհետև այսպիսի անցիւք վերջանայ :

8. Արդ զի՞նչ համարի նա յայնժամ զբարիս աշխարհի, հաւաստամ , թէ ոչ միայն համարի զայն ոչինչ , այլ և ախորժէր տալ զբազում ինչ առ ՚ի ոչ ունել զայնս մեծապանդամ , եթէ նոքօք առ յապայն մեղանչելոց

իցէ

էցէ առ ա̃ծ : ուստի կամէր զբովանդակն տալ առ 'ի ունիլ զզղջումն կատարեալ : Ո՞չ և փիլիպպոս եր̃րդ արքայն սպանիոյ կամէր փոխանակել զլինելըն ինքնակալ սպանիոյ , և ա̃յլ բազում թագաւորութենց 'ի զանազան կողմանս աշխարհի , ընդ դռնապանութիւն վանից աղքատ կրօնի միոյ : Այս մեծ և պայծառ է արդարև առ տաքս հանելոյ զմեզ 'ի պատրանաց կենցաղոյս մահն : Վ̃ա որոյ հայեաց յայն , զոր յայնժամ կամիս . թէ արարեալ էցես , և ոչ կարես . ուստի այժմ արա , զոր կարես : Այլ ասա դու ցիս , եթէ ոք մինչև ցէտ մահուան իւրոյ վայելեալ էցէ յա̃մ կենցաղական հեշտութիս . զի՞նչ եւս մնայ նմա յայնժամ . արդարև ոչինչ . այլ մանաւանդ բազում վշտա սրտի :

9. Իսկ որ ապաշխարութիւն , և վշտօք յանձն էառ վասն Ք̃ի դրեթէ զա̃մ վիշտս , և զտանջանս , զոր կրեցին ա̃մ նահատակք , զի՞նչ ցաւս զգայ յայնժամ , արդարև ոչինչ . այլ մանաւանդ զհաճուն մեծ , և զուրախութիւն :

10. Ողէ՞ խորհեցայց , թէ առ ինչ վախճան ետ քեզ ա̃ծ զերկարուն կենաց , որովհետև կարօղ էր 'ի միում բոպէի վերացուցանել զքեզ յերկինս :

Կարծես դու թերևս, թէ մ՟նկ ես , կամ՝ թէ բախտ քո յաջողեաց , զի վատնեսցես զա՟մ ժամանակդ յանասնական կեանս · մատնելով զանձնդ յանարգ հեշտութիւնս մարմնոյ · և ցնորեսցես միշտ յեղջերուաքաղս անոտի փառաց : Ոչ արդարև · քա՛ւ լիցի · այլ մ՟նդ · զի գործելով զառաքինութիւնս · ստանալ մարթասցիս զերկնից արքայութիւն, և ծանիցես, թէ պարտիս տալ զքաջ վկայութիւն հաւատարմութեան ամենակալ արարչին քում, կրելով զվիշտս վ՟ն ն՟ր : Վ՟նզ եդ զքեզ յամրոցի աշխարհիս , զի մատնեսցես զանձն քո ’ի վտանգս յաղագս պահելոյ զպատուէ՟ ն՟ր : Վ՟նզ գրեաց զքեզ իւր ’ի զինուորութի (զի այսպէս կոչէ զկեանս մեր երանելին Յոբ) ասուի կենացս , զի մարտիցես վ՟ն ա՟յ քոյ , և ’ի մէջ թշնամեաց ցուցցես զգործն յաղթանակի · որում նա սպասեալ մնայ :

12. Արդ՝ ո՞ր պատիժ չէ արժանի զօրականն այն , որ ’ի ժամ պատերազմին, մերկացեալ զզէնս, պարապի ’ի խաղս նարտից : Իսկ դու դատապարտեալդ առ ’ի մահ , և դիմօղդ զօրհանապազ առ այն, ծիծաղիս , և զբօսնուս : Տե՛ս, եթէ ծիծաղի դատապարտեալ ոք ’ի տանջանս մահու · ոչ բնա՛ւ , այլ մանաւանդ ցնորի ’ի մտաց : Տե՛ս եթէ ուրախանայ ածեալն

տա կախաղանս յորժամ մատուցանի նմա ծաղիկ մի: Ապա զիարդ ախորժէ մարդ բերկրել ծաղկամբ հեշտութեն իւրեք: որովհետեւ 'ի ժամէ անտի ելմանն 'ի մայրենի արգանդէն ընթանայ դատապարտեալ առ 'ի մահ . եւ ոչ գիտէ , եթէ 'ի կորուստ ընթանայ , թէ 'ի կեանս . եւ տարակոյս է զայսմանէ : Ուստի ո՞վ է վաճառականն այն , որ գիտելով . թէ 'ի հատանիլ նաւուն 'ի նաւահանգիստ . ընկղմելոց իցէ , կամիցի ինքն բառնալ եւ դնել 'ի նմա զմեծագին վաճառս . Քանզի գտանին , որք ունելով զբազում բարիս ժամանակաւորս , կորեան 'ի ժամու մահուան յաղագս ոչ արհամարհելոյն զայնս ըստ պատշաճին . մանաւանդ յաղագս ոչ հաճելոյն թողուլ զայնս եւ ոչ յայնժամ , երբ այնոքիկ թողուն 'ի նոցանէ : Պատմէ Ոսկեբերան յաղագս մեծատան միոյ . թէ յորժամ մերձ էր 'ի մեռանիլ , ետ բերել առաջի իւր զանօթս իւր զոսկեղէնս . եւ զարծաթեղէնս . եւ սկսաւ խօսիլ ընդ հոգւոյ իւրում այսպէս . Ով հոգի իմ . խոստանամ տալ քեզ 'ի վայելումն զայս ամ , զոր ունիմ . եթէ ոչ թողուս զմարմինս իմ . եւ յաւելից քեզ տալ դոյնչափ եւս , եւ աւելի եւս ստացուածս , եւ զմեծամեծ ապարանս , եթէ հաճիցիս մնալ ընդ լս : Իսկ յորժամ առաւել սաստկանան 'ի վերայ նորա ցաւքն, ապա կատաղութեամբ մեծաւ· Որովհետեւ ոչ կամիս հոգի իմ առնել զոր խնդրեմն, ո՛վ մայր իմ, երթ, չուեա՛ց 'ի ձեռս դիւին ո՛վ ապերախտ : Եւ 'ի բանս յայսոսիկ փչեաց թշուառաբար զոգին : Արդ քաջ կարէ իմացեալ լինել 'ի պատմութենէ աստի ունայնութիւն ժամանակաւոր իրացս, եւ վնասն, զոր բարձեալ բերեն, որոց զայնս ստանալ ախորժեն անկարգ տենչանօք : Քանզի զինչ ունայնութիւն մեծագոյն· քան զոչ լինելն կենցաղականացս նպատամատոյց 'ի կարիս մեծամեծս : Եւ զինչ վնաս մեծագոյն, քան զլինելն նոցա վնասակար հոգւոյն, յորժամ ոչ եւս կարեն օգտակար գոլ մարմնոյն : Պատմէ Հերբերտոս զլիկկեոսէ քահանայէն, թէ մինչ դեռ քաջալերեալ յորդորէր զհիւանդ ոք խոստովանել զմեղս իւր, եւ հոգալ զհոգի իւր· ընտանիք տանն զբաղեալ երթեւեկս առնէին, եւ շշնջէին՝ թէ ում որչափ ինչ անկանի յընչից մեռելոյն : Զայս տեսեալ հիւանդն, առաւել հայէր յայն, զոր 'ի նմանէ բառնայինն· քան թէ յայն, զոր նմա տայէին առ փրկութիւն իւր յաւիտենական : Ուստի հառաչելով աղաղակէր, եւ ասէր, վայ ինձ· վայ ինձ· տառապեցայ յոյժ

'ի

'ի ժողովել զմեծութիս, և այժմ ոչ միայն ակամայ թողում զայնս. այլև յառաջ քան զթողուլս տեսանեմ աչօքս, զի բառնին յինէն. ով մեծութիւք իմ. ով գոհար ակունք իմ, ով արծաթք և ոսկիք իմ յոյր ձեռն անցանելոց էք: Եւ մինչ դանդաչէրն այսպէս, փչեաց զոգին, ոչինչ հոդալով զնմանէ, որպէս թէ իցէր անա̃ծ ոք:

11. Սոյն օրինակ պատմէ Վինկենտիոս Բեղվակենեցին զառնէ միոջէ, թէ ետ ումեմն 'ի փոխ զդահեկան մի այսու պայմանաւ, զի առօրն զկնի չորից ամաց հատուսցէ նմա զերիս, և յայսմ վայրի հիւանդացեալ եհաս 'ի մեռանիլ. և եկեալ առ նա քահանայն յորդորէր 'ի զղջումն, և 'ի խոստովանութ̃ի: Իսկ եղկելին հոգեվարն զայլ ոչ ինչ ասէր. բայց եթէ զայս բան, պարտական է ինձ այն որ երիս դահեկանս վ̃ն միոյն, և կրկնեալ բազում անգամ զայս բան, մեռաւ թշուառաբար: Սոյնպէս և երանելին Բեռնարդոս պատմէ, թէ մինչ խոստովանահայր ոք ջանիւ մեծաւ յորդորէր յապաշխարութ̃ի զմեծատուն ոմն ագահ, նա ոչ այլ ինչ ասէր, եթէ ոչ հարցանել զնա, քանոյ արժէ այժմ ասրն. որչափ է գին նր̃: Եւ թէպէտ քահանայն գոչէր յա-

կանչս նոր տանելով, թող պարոն այժմ 'ի կաղմն մի զայդպիսի խորհուրդ. և խորհեայց միայն զհոգւոյդ: Սակայն հոգեվարն յայլ ցնորս անկեալ անէր, հայր ոչ կարելի է բազմացուցանել զինչս: երբ գան նաւ̂քն: դեռ կան 'ի նաւ̂ահանգստի : Զայսոսիկ և զայլսն նման բանս բարբառէր, զի այնչափ ընկղմեալ կայր 'ի ժամանակաւ̂որս, մինչև ոչ կարէր խօսիլ կամ խոկալ զայլ ինչ բաց յայնցանէ : Եւ̂ 'ի տեսանել քահանային , զի 'ի յուշն դարձցի. և զմեղսն խոստովանեսցի , լուա̂ւ̂ 'ի վախճանի զայս . Ոչ կարեմ հայր, ոչ կարեմ, և այսպ̃ առանց խոստովանութե̃ եհան զոգին:

12. Ահա̂ւասիկ այս է վարձն, զոր տան բարկք կենցաղոյս , որոց սիրենն զնա̃: Ո՛վ անմտութե̃ որդւոց ադամայ. շնորհեցաւ̂ մեզ սուղ կեանքս այս առ 'ի ստանալ զբարիսն երկնից, որք ունին մնալ յաւ̂իտեանս յաւ̂իտենից . իսկ մեք վատնեմք զայն 'ի խնդիր երկրաւ̂որացս , որք յական թօթափել կորնչին , և թէ յաւ̂ելորդս կուտ̂ին 'ի մեզ . տան մեզ կորուսանել և զայնոսիկ 'ի յաւ̂իտեանն:

Յօտ-

Յօդուած երրորդ:

Այլ զի՞նչ: համարեսջուք՝, թէ որք մեռանին խաղաղ և հանդարտ մահուամբ. բայց բաւական է մեզ տեսանել, թէ զիարդ անկեալ դնի նա զկնի աւանդման հոգւոյն. կամ զիարդ անկեալ կայ դիա՟կն դալչեալ. և զարհուրելի, յորմէ փախուցեալ մեկնին բարեկամքն, և ոչոք ախորժէ մնալ միայն ը՟ն միայնումն զմի միայն գիշեր: և ծնօղքն, և որք նմա պարտականք էին, յամէ՝ վաղվաղակի ջանան հալածել զնա 'ի տանէ եդեալ 'ի պատանս հնոտիս: և մեծ ինչ է, եթէ յետ թաղմանն ունիցին զյիշատակ նորա աւուրս ինչ: Եւ որում անձունք էին ընդարձակագոյն յարկք, զսպեալ բովանդակի 'ի տասն թիզ տեղիս. և որ պառակէր յանկողինս փափուկս 'ի հոտ անուշից, ունիցի փոխան անկողնոյ զհողն խիստ և դժնեայ. և որպէս ասէ մարգարէն Եսայի. 'ի ներքոյ ն՟ր մեցք տարածանեսցին, և 'ի վ՟ր ն՟ր որդն արկցի: և ոսկերք այլոց մեռելոց եղիցին նմա փոխանակ բարձի, և ծածկեսցի ը՟ն հողով, և պատուհեսցի ունելով 'ի վ՟ր իւր զվէմ մի տաշեալ. և մինչ նա 'ի զաղիր և

'ի

'ի զզօ՛ւելն որդանց կրծի, ժառանգս կալան ապերա՛խտք պարապլին ընչիւք նորա 'ի զուարճութիւն անառակուեց : Եւ որ զարդարեալ էր յանօթս ընտիրս, և երևէր հաճելի, և գեղեցիկ 'ի կաքաւս ոտից, կացցէ մնասցէ սառուցեալ և անշարժ ձեռօք, և անըզգայ յամի : Եւ որ հպարտութ յանդգնութն իւրոյ նեղէր, և ձանձրոյթ էր այլոց, լիցի յայնժամ կոխան ոտից ամենեցուն : Այս եթէ յետ աւուրց ինչ բացցի գերեզմանն, և հայեսցիս 'ի դի նորա, տեսցես, թէ որպէս ատակալի իմն տեսիլ լիցէ այն : Տե՛ս ահաւանիկ, թէ զո՛ դարմանես, և զո՛ գգուես ջանի՞ւ մեծա՞ւ. գգուես զմարմինդ, որ յետ քանի մի աւուրց եղիցի կերակուր յորդանց : տե՛ս, թէ յոյր վերայ հիմնես զամբարտակն մնա փառուն քո :

1. Պատմէ Աղեքսանդր փայաս, թէ երբեմն բացեալ եղև տապան կոմսի ուրումն մեծի, և որք անդն կային, տեսին, զի գորտն մի մեծ և սոսկալի ծածկեալ ունէր զերեսս իշխանին, և ուտէր զմիս երեսացն և զմարմնոյն ընդ բաղում այլ ճճեաց զաղըալեաց : Եւ երբև եհաս լուրս այս յականջս որդւոյ կոմսի մեռելոյն, որ յայնժամ էր 'ի ծաղկափթիթ հասակի, դիմեաց և նա վաղվաղակի 'ի

զինին այնր տեղեան , և տեսեալ զայնպիսի զզուանս դարշանաց . ասէ ցմերձակայսն, ապա ուրեմն այսպիսի ինչ են ո՞վ բարեկամք իմ . զորս յառաջ բերեմք, և սնուցանեմք մերովս հեշտախտութբ̃ : Զսոսա հանդուցանեմք 'ի փափուկ և 'ի ծաղկազարդ անկողինս , և 'ի տունս մեր նկարէնս , և զարդարեալս կողմանոցօք , ապա զի՞ ջանամք բազմացուցանել զնոսա պէսպիսութբ̃ անորժաճաշակ կերակրոց : Բարեգոյն է ապաքէն սատակել զնոսա պահօք , և ճգնութբ̃ . որպէս զի 'ի կենդանութ̃ն մերում մեռցին , զի մի յորժամ մեռցուք՝ զկնի մեր որդնեսցին : Սովիմբ արհամարհեալ զմեծութի̃ն իւր , և զնոտի փառս աշխարհի , կամեցաւ լինել աղքատ վասն Քի̃ . ուստի գնաց 'ի հռոմ , և անդ ետ զանձն 'ի խիստ ճգանս , կելով 'ի մե̃ երկիւղի տ̃ն , և եղև արուեստի ածխագործ : Եւ յաւուր միում մինչ դեռ երթայր 'ի հռոմ վաճառել զածուխս , կալաւ զնա հիւանդութի̃ ինչ խստագոյն , զոր սքանչելի համբերութբ̃ կրեաց . որով և մեռաւ իսկ : Բայց 'ի ժամուն յորում աւանդեաց 'ի ձեռս տ̃ն զսրբասնեալ հոգի իւր . ինքնին ամենայն զանգակք քաղաքին հնչեցին : և 'ի սքան չէլեալ անտի հիացեալ մնաց քահանայապետն հանդերձ ուխտիւն եկեղեցւոյ , և ծանեաւ 'ի մ՟ր կրօնաւորէ միոջէ , որում սովոր էր խոստովանել զամենայն վարս մեռելոյն : Այլև զօրականք , և ասպետք մեռեալ իշխանին որք յամենայն տեղիս խնդրէին զնա , գտանին յայնժամ 'ի հռօմ . և թէպէտ ոչ գտին զնա կենդանի , սակայն մեծաւ հանդիսիւ և փառօք բարձեալ տարան զմարմին ն՟ր յ՟ն նորին :

2. Այսպէս և զօրաւոր եղև յոյժ առ սուրբ Ֆռանչիսկոս Բելլինեցին (մինչդեռ իշխան էր լոմբայի) . տեսութեն գլխոյ թագուհւոյն եղիսաբեթի կնոջ կարողոսի, Ե, երրդի. որում յանձնեալ եղև տանել , և թաղել զնա 'ի գրանատայ : Եւ եղև 'ի հասանել նոցա անդր , բացին զտապանն արճճեայ , ուր ամփոփեալ կայր մարմինն , զի թաղեսցեն զնա , տեսին զերեսս նորա այնպէս զաղիր . զգու ելք . և ապականեալ . մինչ զի ամենեքին սոսկացան . և ոչ ոք համարձակէր երդմամբ ևս հաստատել . եթէ սա իցէ թագուհին եղիսաբեթ : Եւ բուրէր այնպիսի հոտ դարշութեն , և նեխութեց , մինչ զի ամենեքին փախեան չհանդուրժեալ դառնութեն հոտոյն : Արդ՝ ո՞վ է այնչափ

զա_

ղաչացու, որ ոչ տեսցէ աստ զունայնութի̃ աշխարհիս : Տե՛ս զի չիք յաշխարհի պատուա̂կան, և մեծ համարելի ինչ քան զթագա̂ւորս, և քան զթագուհիս, մինչ դեռ կենդանի են · իսկ յորժամ մեռանին, ամենայն թիկնապանք և ասպետք, որք ը̃ նոսա կենցաղէին, փախուցեալ հեռանան : Տե՛ս · զի երջանիկ համարիւր նա, որ կարողն էր մերձիլ, և խօսիլ ընդ նոսա, նաև 'ի դուռն իջանելով առաջի նոցա որպէս աստուծոց · բայց յետ մահուն ամենեքին 'ի բաց մերժեն զնոսա · և մատնեն 'ի ձեռս որդանց, և շանց · ո̃վ պատահեցա̂ւ թագուհւոյն եզաբէլայ : Արդ՝ մեք դարձցուք անդրէն 'ի գլուխ բանիցս : Յայնժամ ապուշ մնաց բոլորովին Փրանչիսկոս 'ի տեսանելն այնպէս զդժնոյն, և 'ի մտածելն, որ ինչ էրն յառաջադոյն · ուստի սկսա̂ւ ասել ցանձն իւր · Ո՞ւր են արդ դէմքն այն գեղեցիկ, և հրաշալի, որ այժմ փոխարկեալ են 'ի նեխութիւս, և յորդունս զազրալիս : Ո՞ւր է արդ վեհափառութի̃ն կերպարանաց, որ երևէր երջանիկ առնել զնա, որ կարող իցէր յարդել զայն : Իսկ այժմ հալածականս առնէ զն̃ա, որք առա̂ւել պարտականք էին պաշտել զնա: Ո՞ւր է իշխանութի̃ն, և գա̂ւազան տէրութե̃ն ·

ապաքէն ամենայն ինչ լուծանի՛ յապականութեն: Այսպիսի խոկմամբ հաստատեսցես զմիտսն արհամարհել զամենայն կենցաղականս, և ոչ խնդրել զայլ ինչ, բայց յայնցանէ, որք մնան յաւիտեան, և ոչ ծառայել ևս այնպիսի ո̃ն, որ կարող իցէ մահուամբ բառնիլ 'ի նմանէ:

4. Ո̃ք մեծաւ իմաստութ̃ փիլիսոփայքն բրակմննեանք ունէին առաջի դրանց տանց իւրեանց բացեալ զգերեզմանս, ո̃պ զի յելս և 'ի մուտս 'ի միտ ածցեն զմահն առ 'ի կեալ առաքինօրէն: Ուստի յայս միտս ճշմարիտ է բանն Պղատոնի, որ ասաց, թէ խոկումն մահուան է իմաստութիւն մեծ: Պատմեն վ̃ս ուրումն մեղաւորի. թէ զկնի խոստովանելոյ առքա զան պապին զմեղս իւր զմեծամեծս. յորժամ կամեցաւ՝ պապն դնել նմա ապաշխարանս, ասէ ցպապն, ոչ բնաւ կարեմ հայր ս̃բ պահել. կամ զխարազն զգենուլ. կամ խարազանս բազում ընկալ. և կամ զայլ ո̃ և իցէ այսպիսի խստութիւն յանձն առնուլ: Յայնժամ ս̃բ քահանայապետն յանձն արարեալ զնա ո̃յ ետ նմա զմատանի մի, յորում փորագրեալ կայր այս բան, Յիշեա, զի մեռանելոց ես. և ետ նմա իբրև ապաշխարանս. զի միշտ ընդ հայեսցի յայն մատանի. ըն-

թերցցի զգրեալն , և 'ի միտ ածցէ զմահն : Եւ նա 'ի միջոցի տակաւին ժամուց զգաց յանձին զայնպիսի զօրաւոր փոփոխութիւն 'ի յիշատակէ անտի . մինչզի յօժարութեամբ մատոյց զանձն քահանայապետին տանել զայն ամենայն , զոր նա հաճեսցի կարգել և հրամայել : Ահա այս է պատճառն , վասն որոյ ջանայ դևն հանել 'ի մտաց մերոց զյիշատակ մահուան : Ուստի սքանչելի իմն է , թէ զիարդ լոկ կասկած ինչ վնասու , կամ մեծի կորստեան կարող լիցէ մերժել զքունն 'ի մարդկանէ . իսկ ստուգութիւն մահուն , որ ահուելի է քան զամենայն ահուելիս՝ չիցէ կարող բերել զխորհուրդ ինչ բարի :

* * *

ԳԼՈՒԽ Բ:

Յայտնի հանգամանք կատարածի ժամանակաւորեալ կենաց :

ԲԱՑ 'ի թշուառութենց, որովք վերջնական բարեբաստութիւնք կենցաղոյս · զուգընթաց լինին և այլ հանգամանք կատարածի կենաց մերոց · որք քաջ նկատելիք են 'ի մեզ՝ առ 'ի կարող լինելոյ արհամարհել զմահ վայելչութեան նորին : Առժամս բաւեն հարցուք խօսել զերից միայն գլխաւորաց · որոց առաջինն է ստուգութիւն մահուան, որ ոչինչ ընծայիւք յետս նահանջել կարէ : Երկրորդն է անստուգութիւն նր̃, զի չէք ոք · որ զնր̃ զգիարդ և զերբն գիտել մարթասցի : Երրորդն է միութիւն · զի ը̃ առաքելոյն կայ մնայ մարդկան միանգամ մեռանել · ուստի և չէ հնար երկրորդ մահուամբ գտանել դարման չարեաց առաջնոյն :

2. Արդ 'ի վր̃ ստուգութեան մահու ասեմ՝, թէ ոչ եդ ա̃ծ զօրէնս ինչ այնպէս ան-

անբռնադատս , և անբռնազբօսելիս , ոչ զօրէնս մահուն , զի թէպէտ երբեմն անօրինեաց , և ելոյծ զհասարակ օրէնս բնութեն . բայց ոչ երբէք անօրինեաց , և ոչ անօրինեսցէ զօրէնս մահուան . մանաւանդ թէ անօրինեաց յայլս , զի սա հաստատ մնացէ : Վ̄ն որոյ վճիռ մեռանելոյ ոչ միայն կատարեցաւ 'ի վր̄ նոցա , որք արժանի էին այնմ , այլ և 'ի վր̄ նց̄ որք ազատ էին յայնմանէ բանաւորապէս : Ա՛անիկ 'ի յղութեն , և 'ի ծննդեան ք̄ի տ̄ն մերոյ լուծան օրէնք բնութե անքակ պահեալ 'ի նմանէ . [illegible] է ծնանիլ մրդյ 'ի մրդյ սերմամբ , բռնաբարելով զամբողջութի մարց իւրեանց . Բայց զի մե̄ և 'ի ք̄ս այս անցք անցցեն , արար ա̄ծ բռնութի բնական օրինաց կրկնակի սքանչելեօք , [illegible] զի յղացի անսերմնապէս , և ծնցի 'ի կոյս մօրէ : Այլ ոչ արար զնա ազատ յօրինաց մահուն , զի թէպէտ ա̄ծ էր և օրէնադիր անպարտական էր մահու , և ազատ յա̄մ մեղաց . Նաև 'ի սկզբնականէն , որ պարտաւորս առնէ զմեզ մահու : մանաւանդ թէ անկ իսկ էր անմահութեն ամենայնք մարմնոյ նր̄ , նկատմամբ չորից օժտից փառացն , որ ծագի 'ի տեսութե ա̄ծային էութեն , զոր վայելէր ունէր ամենամբք հոգի նր̄ : Բայց համդերձ այսու ամ՟ի ոչ արար նմա զիրաւունս զայս արդար, այլ ամենակարող բազկաւն արդել զծիրս փառաց, որք 'ի փառաց հոգւոյն զեղանելոց էին 'ի մարմինն. ո՟մ զի մեռցի:

3 Արդ թէպէտ և որդւոյն ա՟յ. զի յանձն էառ կատարել զփրկութի՟ն մարդկային ազգի, ձաւ լինէր մեռանիլ մահուամբ խաչի՝ վ՟ս ն՟ր անբաւ մարդասիրութեն. բայց այսպիսի անցք անցանել և յամենայնի մայր ն՟ր չունէր տեղի. զի անարատ լեալ նա 'ի սկզբնական մեղաց, ոչ էր ը՟ օրինօք մահու. սակայն և զնա ոչ կամեցաւ առնել ազատ յանբռնադատ օրինաց անտի հասարակաց: Այս եթէ չէր քան զմահն ստուգագոյն, և հրապարակեալ լինէր. զի՞ է, զի ոչ գտնեմք հաւաստի և ստոյգ իմն զայն 'ի միտս մեր:

4. Վ՟ս որոյ այնպիսի ինչ է մահն. զի թէև անհաւաստի իմն լիցէր մեռանիլն, սակայն արժան էր մեզ կալ զգոյշ և պատրաստ առ այն: Աղէ՛, եկ ասա՛ դու ցիս, եթէ ստեղծեալ էր ա՟յ զաշխարհս ը՟ մարդկամբ. և յառաջ քան զգիտել ն՟ց, թէ գոյ մահ, դէպ լինէր միայն 'ի նոցանէ ընբռնել յանկարծակի 'ի խստագոյն ախտէ. և առաջի ամենեցուն կրել զամ՟ դառնութիւնս այնր ախտի, զ՟ր զչարաչար դողումն. և զտագնապ մահու, զատա

տխէ

ոխկ ծարաւ. զանհանգստութե. զյիմարս մտաց, զուշադրացութեն, զտկարութեն. զոգնութ. զտաղտկութ. և այս տեսանելի յամենեցունց այլադունելի, և անկանիլ 'ի տագնապ մահու. և ժամանել 'ի տուրևառութեն յետին շնչոյ. և 'ի սպառիլ նո՛ր դեղնիլ առհասարակ մարմնոյն. և մնալ անշարժ, սառուցեալ. ոչ ապաքէն սովկացեալ մնայցեն 'ի տեսլենէ անտի ամենեքին: Իսկ եթէ յետ երից, կամ չորից աւուրց ակնանէր դին նեխել, և հոտել. և լի լինել որդամբք, առանց կարծեաց ամենեքին ըմբռնեալ լինէին 'ի մահաբեր տրտմութե մի երկիւղի այնորիկ մեծակի պատահելոյ և լիքեանց.

5, Այլ եթէ ասէր ած ցնա: ոչ կամիմ զմեռանիլն ամենեցուն, այլ շատ է ինձ, թէ ոմանք մեռցին 'ի ձէնջ, և ոչ յայտնէր. թէ ո՛վ և ոյք իցեն մեռանելոց, կայր մնայր յանժամ իւրաքանչիւրոք 'ի մեծի դողութե, թէ գուցէ ինքն իցէ 'ի մեռանողացն: Արդ՝ զի՞ է, զի չե ևս սոսկամք. և ոչ զմտաւ ածեմք, որովհետև ստուգիւ պատահելոց է այս ամենեցուն: Եթէ միայն երկբայելի մահն է այսպէս ասոսկալի. զիա՛րդ ապա անտարակոյս չիցէ զարհուրելի: Եւ եթէ ած ասէր. մեռանելոց է մի միայն մարդ.

մարդ յա͞մ մարդկանէ աշխարհիս առանց յայտնելոյ զովոքն , ամենեքին սարսէին . զի՞ է , զի դու ոչ սարսիս այժմ . որովհետև ամենեքեան մեռանելոց են . և դու թերևս յառաջ քան զնոսին : Ապա թէ ա͞ծ յայտնէր ամենեցուն զայն մի միայն մարդն , որ մեռանելոցէ . և նա կայր անհոգ իբրև զքեզ . ասա՛ ցիս . զի՞նչ առնէին ցնա այլ մարդիկ . զիարդ ապուշ հիայէին 'ի վե͞ր խելացնոր յանդգնութեան նո͞ր 'ի ստունգամանելն զայնու՝ որ է զարհուրելի ինչ : Զո՞ր թամբասանս . զոր յանդիմանութիւնս , և զո՛ր կշտամբանս ոչ առնէին նմա . և ասէին , այր դու , զիարդ կեաս անհոգ . և անփոյթ , և անկասկած . որովհետև դառնալոց ես 'ի հող , և 'ի մոխիր : այր դու , զիարդ համարձակիս դդոհել զքեզ որովհետև կերակուր լինելոց ես որդանց . և ճճեաց . Զիարդ ոչ 'ի միտ ածես զհամարն զոր տալոց ես ա͞յ , յորժամ երևեսցիս առաջի ատենի նո͞ր : և զիարդ ոչ համարիս մեծ ինչ զայս , թէ ունիս վերջանալ . և զայդ ը͞ քեզ վերջասցի ա͞մ ինչ քո : Մեզ արժանէ զբաղիլ 'ի շինուածս ապարանից , ժողովել զգանձս . և զբազմութիւն ընչից . վա͞ զի միշտ ապրելոց եմք . Իսկ դու որ միայն ունիս անցանել ը͞ կեանս քեզ պար_

գև_

գնեալ. և 'ի վաղիւն ժողովես զայն, զիարդ առաջի արկանես զանձն քո կանգնել քեզ օթեւանս, և պատուաղիլ յայն, որ չէ քեզ պիտանի: Զիարդ եղեւ 'ի միջի մերում: Զիարդ ոչ խոյս տաս յանապատս տեղիս 'ի պատրաստել զանձն քո առ սոսկալին այն վտանգ, որ քեզ սպասեալ մնայ:

6. Առ 'ի հանել զմեզ 'ի պատրանաց աստի դրէ մեծն Յօհաննէս զպատմութիւն մի յոյժ վայելուչ առ այս: Ասէ թէ էր զօրական ոմն, որ ծառայեաց 'ի բազում ամս մեծաւ հաւատարմութեամբ ումեմն իշխանի. և եգիտ շնորհս առաջի նորա: Ապա դէպ եղև զօրականին անկանիլ 'ի հիւանդութիւն մահու, և զայն իբրև լուաւ իշխանն, գնաց վաղվաղակի տեսանել զնա ը̃ իւր առեալ զբազմութիւն բժշկաց. և եհարց զողջունէ նորա, և մխիթարեաց զնա բանիւք քաջալերութե̃ն և սիրոյ, և խոստացաւ առնել զա̃մ, որ յօգուտ և 'ի թեթեւացուցումն էր ախտին, Ապա աղաչէր զնա և ասէր, խնդրեա յինէն, զոր ինչ կամիս. զի ոչ 'ի ծախս, և ոչ 'ի ջանս խնայեմ, եթէ կարող իցեմ հանել զքեզ: Իբրև կարի ստիպեցաւ խնդրել ինչ, պատասխանի ետ հիւանդն. և ասէ. խնդրեմ. զի զմի 'ի յերից շնորհես

ցես ինձ , ո՟ ոք ցուցցես զհնար ինչ փախչիլ ինձ ՚ի մահուանէ . զոր տեսանեմ առաջի իմ . կամ դոնէ ցածուսցես ժամ մի զխստագոյն ցաւս իմ , զոր կրեմ . և կամ յետ փախելոյս յաստեացս , տացես ինձ լինել յայնպիսի տեղւոջ , ուր զօր մի միայն կացից հանդիստ , և հանդարտ : Իսկ իշխանն պատասխանի ետ և ասէ . այդ. ա՟մ , զոր խնդրես : միայն ա՟յ է առնելի : Ուստի խնդրեա՛ զայն , որ երկրաւ̂որացս է կարելի , և ես ստուգիւ̂ կատարեցից զխնդիրդ : Կրկնեաց անդրէն հիւ̂անդն , և ասէ . ապա ՚ի զուր և ՚ի նանիր եղև ա՟մ վաստակ իմ, զոր վաստակեցայ վ՟ք քո , և ոչ կարեմ ՚ի նոցանէ ընդունել զօգուտ ինչ : Եւ̂ ապա դարձուցեալ զերեսս իւր առ նոսա , որք անդն կային , ասէ մեծաւ̂ աղէտիւ̂ , և արտօսրալից աչօք . ուսարուք եղբարք , թէ որչափ յանօգուտ վատնեցի զժամանակն իմ . զակն զայն ասեմ պատուական , ՚ի ծառայել իշխանիս այսմիկ , կատարելով զհրամանս սորա փութով , և վտանգաւ̂ հոգւոյս (որ է մեծագոյն ցաւ̂ , որ այժմ ը՟ սիրտ իմ թափանցէ ,) տեսէ՛ք , թէ որչափ դոյզն ինչ է զօրութի՟ն ն՟ր որովհետև չկարէ օգնել ինձ ժամ մի միայն յանձկութե՟ս տառապանաց՝ իմոց : Վ՟ որոյ խրատ տամ ձեզ եղբարք, բանալ զաչս ձեր. և զգոյշ լինել ժամանակի ձերում, և սխալանք իմ եղիցին ձեզ յուսումն: Ուստի զգոյշ լերուք 'ի վտանգէ աստի. և ջանացարուք ծառայել յաշխարհի այնպիսի տ՟ն, որ ոչ միայն կարող իցէ փրկել 'ի չարեաց, այլև 'ի կեանսն յա՛ւիտենից պսակել զձեզ փառօք: Ե՛ւ թէ հաճեսցի տ՟ր ձերով աղօթիւք տալ ինձ զառողջութ՟ի, խոստանամ ոչ ևս ծառայել այնպիսի տ՟ն, որ այսպէս սակա՛ւ կարող իցէ հաստատել վարձս ծառայութ՟ե իմում. այլ պարապեցայց ամենայն ջանի՛ւ ծառայել այնպիսի ամենակարող տ՟ն, որ կարող է փրկել զիս, և զաշխարհս ամենայն: Ե՛ւ այսպէս եռաբորբոք սրտի՛ զղջացեալ՝ ա՛ւանդեաց զոգին, և եթող զզօրաւոր, և զբարի օրինակ ծախելոյ զժամանակն, որ տուա՛ւ մեզ յոյժ առ 'ի ընդունել նովա՛ զվարձս անեղծական:

Յօդուած երկրորդ:

Նկեսցուք այժմ առ հանդամանս անստուգութ՟ե մահու, զի որ չափ ստոյգ է՝ թէ մեռանելոյ եմք. նոյնչափ անստոյգ է, թէ զիարդ մե֊

ռա

ռանելոց եմք : «Քանզի աստ ցիս , ով է . որ կարող իցէ գիտել զանձնէ , թէ յերիտասարդու՟ն մեռանելոց է , եթէ 'ի ծերութ՟ն : Հիւանդու՟բ , եթէ կայծակամբ . տրտմութ՟բ , եթէ սրով և հրով : յանկարծակի , եթէ առ սակաւ սակաւ : 'ի մէջ բազմութ՟ն , եթէ յանմարդաբնակ վայրի : աստ մինչև ցամ մի , եթէ յայսմ աւուր : Զի հանապազ բաց են դրունք մահու . հանապազ ունի թշնամին ուղղեալ առ մեզ զնիզակն , և յորժամ ոչ խորհիմք զնմանէ , յայնժամ յարձակի 'ի վ՟ր մեր : Ո՞վ անտանելի աղէտիցս : Պահեն միշտ հովիւք զպահպանու՟ն հօտից իւրեանց տքնութ՟բ ահաւոր զամփոփեալ , միայն երկուցեալք , թէ կարէ գայլն գալ մտանել 'ի մէջ հօտից . թէպէտ յերկքայս ևս են , թէ գուցէ ոչ եկեսցէ : Պահեն քաղաքք պարսպաւորք՝ ամրանիգ դրամբք , և պահակօք նաև 'ի ժամանակի խաղաղութ՟ն . յորժամ չիք ուստեք երկիւղ թշնամեաց , միայն վ՟ն այսորիկ . թէ կարելի է գալ թշնամւոյն յաւուր միում : Եթէ ոք 'ի կարծիս լիցի , թէ գողք կամին աւար հարկանել զտուն նր՟ . հսկէ զգիշերն ողջոյն . զի մի 'ի նինջելն յափշտակեսցին ինչք նորա : Ապա զի՞ է քեզ այս : զի ոչ կաս միշտ արթուն , որովհետև անտարակոյս է մեռանիլդ. և ոչ գիտես զժամ նր̄։ Տե՛ս թէ զիարդ կայիր յերկիւղի, յորժամ կախեալ լինէիր զնրբագոյն թելէ յայնպիսի վայրի, ուստի Է̄ կտրիլ թելին, գահավէժ լինէիր 'ի բարձանց, և անկեալ 'ի խոնարհ. խորտակեալ մեռանէիր։ Այս զիարդ չերկնչիս, և կամ որ դիմօք համարձակիս կալ և Է̄ մի րոպէ 'ի մահուչափ մեղս, գոլովդ կախեալ 'ի վերայ դժոխոց զնրբագոյն թելէ կենացդ, զոր բաւական է հատանել երակ ինչ կտրեալ 'ի ներքս 'ի սիրտդ. կամ կտրօն ինչ աղեացդ. կամ գոլորշիք ինչ 'ի գլուխ ելեալ. կամ թիւնաւոր կաթուած ինչ 'ի սիրտդ իջեալ։ կամ կղմինտր ինչ 'ի վերուստ սահեալ։ կամ հողմն ինչ դժնեայ, կամ պատահար ինչ վնասակար. և կամ այլ անհամար դիպուածք, որոց իւրաքանչիւրն է ճանապարհ մահու։ Տե՛ս թէ զիարդ ժողովուրդն ա̄յ յանապատին զամս քառասուն կայր միշտ 'ի պատրաստի առ ճանապարհորդութիւն վ̄ն ոչ գիտելոյ, թէ երբ չուելոց իցեն։ Այսպէս և դու պատրաստ լեր միշտ, զի ոչ գիտես, թէ երբ չուելոց ես։ Զինչ է այս ասացիս. զի յորժամ երթալոց ես զճանապարհ օր մի, պատրաստես զա̄մ ինչ մեծաւ՛ ջանիւ՛, և սակայն զկնի բազմաջման պատրաստութեղ. վասնես զքեզ յոլով անգամ մատուցեալ զբազում կարեւոր իրս: Այս ոչ վս երկարաձիգ. Ճանապարհորդութե յաճախենական կենաց, կարծես թէ ունիս արարեալ զքաջ պատրաստուն · եւ այն զի ոչ պատրաստես զքեզ վս նորա բնաւին: Ո՞վ է, որ ոչ ըղձանայ չմեռանիլ դոնէ զկնի ծառայելոյ իւր համատարմութե զամս երկուս: Իսկ դու՝ որ ոչ ունիս համատար նաեւ զմի ամ, զիարդ ոչ սկսանիս ծառայել նմա: Վս որոյ մի ապաւինիր 'ի յուժեղութեիդ, եւ մի յերիտասարդութեիդ · քանզի գայ բազում անգամ մահն իբրեւ նենգաւոր, եւ յարձակի 'ի վր · յորժամ ենք յապահովի · ուստի ասէ առաքեալն, ԵԿԵՍՑԷ ՕՐ ՏՆ ԻԲՐԵՒ ԳՈՂ ԳԻՇԵՐՈՅ, առանց գիտելոյ, յորժամ տանուտէրն մտեալ է 'ի քուն թանձրութե: Քանի մեծամեծք, եւ քանի իշխանք եգիպտոսի միով աւուրբ յառաջ քան զելանելն անտի որդւոցն իսրայէլի ունէին 'ի միտս իւրեանց առնել 'ի վաղուեան · կամ 'ի գալ ամին զայս ինչ · եւ զայն ինչ, եւ սակայն ոչ ոք 'ի նոցանէ եկաց մինչեւ ցմիւս օրն: Վնկ խմաստութնն Սեքառդաւիթոս · ոչ պատմէ Գուիղոնէս բիտորիկենացին իբրեւ յումեմնէ բարեկամէ իւրմէ հրաւիրեցաւ առ վա-

ղուէն

զի՞ն գալ 'ի ճաշ նր̃ . Պատասխանի ետ նմա և ասէ , զիարդ ո՞վ բարեկամդ իմ հրաւի՞րես զիս առ վաղի՞ն , որովհետև բազում ամք են արդէն , յորս ոչ համարձակեցայ խոստանալ ինձ զօր վաղուի՞ն , և յա̃մ ժամու ակն ունիմ մահու :

8. Արդ զի՞նչ է բանն այն , զոր ասէ մարգարէն ամոս , Մտցէ արեգակն 'ի մէջօրէի , ոչ զայլ ինչ կամի ասել , եթէ ոչ զայս , թէ յորժամ մարդիկ խորհին , թէ են 'ի մէջ գնացից կենաց իւրեանց , և 'ի ծաղկափթիթ հասակի յուսալով ապրել ամս բազումս , ունիլ զհարստութի̃ս մեծամեծս , առնել զմեծաշուք հարսանիս , և վայելել յաշխարհական պայծառութի̃ս , յայնժամ յառնէ 'ի վ̃ր մահն , և յա̂ուրն , յորում զմեծահանդէս ուրախութի̃ս կատարելոց էին , 'ի սուգ , և 'ի յողբս փոխարկէ զա̃մ ինչ . ոպ̃ պատահեցա̂ երբեմ̃ն , զոր պատմէ Աղեքսանդր փայաս , զի ասէ . Կլադիսլայոս արքային բոյեմիոյ , և Պաննոնիոյ , այն ինքն է մահճառաստանի՝ առաքեաց զմեծահանդէս և զշքեղապատի̂ հրեշտակութի̃ս առ Կարոլոս արքայն գաղիոյ տալ զդուստրն նր̃ զխօսեցեալն 'ի կնութի̃ արքայորդւոյն իւրոյ : Եւ̂ գլխա̂որ հրեշտակն ճանապարհորդութեան այս

էր Ուդաղրիկոս եպիսկոպոսն Պասսավենայց , ածել զհարսն 'ի մահճառաստան : Եւ՛ ընտրեցան կարգեցան յուղեկցուե նորա ասպետք երկերիւր 'ի յունգարիոյ , և երկերիւրք 'ի Բոյեմիոյ , և այլ երկերիւրք յԱ՛ւստրիոյ ամենեքին որք փառաւորք , և իշխանազունք զգեցեալ հանդերձս ոսկեհուռս , և պանծալիս , և արժանապատիւք ամենեքեան արքունի վեհափառուե , Թող զորս կարգեաց եպիսկոպոսն յիւրոց անտի արս հարիւր մի : Այս կարգեցան , կազմեցան , և յուղի անկան առ. դամ՛լինացւոց աշխարհն ասպետք շքեղաշուքք , և դերապանդք եօթն հարիւր : Եւ՛ զի մի ինչ պակասեսցի յայն չու սքանչելահրաշ · կարգեցան ը̄ նա̄ օրիորդք չքնաղագեղք չորեքհարիւր զարդարեալք 'ի զարդս ոսկեճամուկս մարգարտայեռս , և ոսկենկարս · որք և լի էին ակամբք պատուականօք : Կառք ամենայն էին ոսկւով պատեալ ներքոյ և արտաքոյ · և զարդարեալ լուսաճաճանչ ակամբք և մարգարտովք , և ռ̄ նոցին երիվարք պայծառակայք , և սրանթռիչք , Թող զանհամար բազմութե ընծայիցն · զորս տանէին 'ի նուէր : Բայց դու ե՛կ տե՛ս զանհնարին աղէտս դառնութե · զի յաւուր՝ յորում եմուտ 'ի փարկսդե

է րաբանհրաշ հանդէսն այն, և յառաջ քան զիջևանել յապարանս այնր աշխարհաժողով բազմութե̄ն, եկն եհաս սուրհանդակ 'ի քաղաք անդր, եթէ մեռա՛ւ փեսայ որդի արքային: Յայնժամ անտանելի աղէտ ցաւ՛ոցն՝ որ էանց ը̄ սիրտ արքային գաղղիացւոց յանակնունելի լրոյ անտի, այնչափ սաստիկ եղև. մինչ զի և ոչ կարէր տալ բան մի պատասխանի հրեշտակութեն, և ոչ ելք խօսիլ ընդ հրեշտակին, և ոչ ընդ նոսա, որք եկեալ էին ընդ նմա: Վ̄ն որոյ ամենեքին կոր 'ի գլուխ, և լի ցաւ՛օք դառնութե̄ մեկնեցան 'ի փարեսոյ. և գնացին այր իւրաքանչիւր 'ի բնակութիւնս իւրեանց: Եւ՛ այսպէս 'ի միջօրէի լուսապայծառ տուընջեան ելից մծ̄ խաւ՛արաւ՛, և ողբովք 'ի ձեռն մահու՛ան՝ զերկիր, ը̄ս վերոգրեալ բանից մարգարէին:

9. Արդ զինչ է այս քեզ. զի հանապազ 'ի վաղուէ՛ն ձգես զապաշխարութի̄ քո, ապաւ՛ինեալ յողորմութ̄ի ա̄ն: Զի՛ գիտես դու, թէ տացի քեզ ժամ և ժամանակ. զի կարդասցես. և պաղատեսցիս առ նա. և կամ թէ յետ պաղատելոյդ, արժանի գտցիս, զի լու՛իցէ քեզ: Զիարդ ասես, թէ սարսիմ յարդարութէ̄ ա̄ն, որովհետև գիտես, զի կարէ քեզ օր մահու

հասանել. իսկ դու յամաց յամս յապաղես զշարժ քո ցայնչափ, մինչև մոլութիք յանկս զքեզ թողուն, քան թէ դու զնոսին:

10. Են, որք առնեն ընդ մ̃յ զայն, զոր արար արքայն Դիոնիզէս ընդ ապօղոնեայ դից. զի մերկեաց զնա յոսկի վերարկուէն ասելով. չէ սա յարմար վ̃ս ձմեռան, զի ցուրտ է. և ոչ վ̃ս ամառան, զի կարի ծանր է: և չէ վայելուչ մեծապատիւ անձանց: Այնպէս են բազումք, որք ոչ գտանեն երբէք զեղանակ ինչ ամաց դառնալ յա̃մ սրտէ առ ա̃ծ. և ծառայել նմա:

11. Զի մինչդեռ պատանի են. ասեն, կարի վաղքաջ է. պարտ և պատշած է ամենայն հասակի ընձեռել զիւր վայելչական ժամանակն: և մինչ երիտասարդ են. ասեն. պարտ և պատշած է արդարև պարապել յառաքինութիւ. բայց չէ արժան խառնութ̃ աշխարհուն տկարս գործել. և թառամեցուցանել զզօրութ ծաղկափթիթ ամաց. և կալ մնալ անզօր. վատեալ, և անօգուտ վ̃ս մնացեալ ամաց կենաց իւրոց: Իսկ յորժամ հասանեն յամս ծերութ. (միայն թէ մարթասցին հասանել առ այն) յայնժամ սկսանին սրբասիր առնել զանձինս. և ասել. տկար եմ. և հիւանդ, և

ե

լի զանազան ցաւօք . և ոչ կարեմ խստութբ̃ ճնշել զանձն իմ : Ահա այսու օրինակաւ խնդրեմ խաբել զա̃ձ . բայց ինքեանք իսկ լիցին խաբեցեալք : Ոչ թուեցաւ վայելուչ առաքելոյն Յակոբայ խօսիլն այսու եղանակաւ . Եւ Երթիցուք 'ի վաղիւն յայս անուն քաղաք , եղիցուք անդ տարի մի ևայլն . որք ոչ գիտէն զվաղիւն : Արդ եթէ և մի ժամանակաւոր իրաց չէ բան իմաստնոյ ասել , 'ի վաղիւն արարից զայս ինչ և զայն ինչ . այլ որչափ յիմարութի̃ է մի հոգևորական փրկութե̃ ասել . աստի մինչև ցտասն ամ . կամ մինչև ցքսան ամ . և կամ յորժամ եղէց ծեր , պատրաստեցայց 'ի հոգևոր շահն իմ : զի ոչ գիտես , եթէ կարող իցես ապրել ցայնչափ ժամանակ : Զինչ օգուտ է յապաղել՝ և առ վաղիւն ձգել զայն , որ հարկաւոր է , թէ եղիցի այսօր . զի թէ ոչ եղիցի այսօր , թերևս առ վաղիւն չկարիցէ լինել : Այր երբեմն և երանելին օգոստինոս յայս և 'ի սոյն պատրանս խաբէութե̃ . միոյ ասէր , Տեսանէի զանձն իմ բռնադատեալ 'ի նոցանէ , և աղիողորմ ձայնէի . մինչև ցերբ . մինչև ցերբ առ վաղիւն , և ընդէր ոչ յայսմ ժամու կատարած վայր պղծութէ իմոյ : Զայս ասէր , և ողբայր դառն կսկծմամբ սրտի իմոյ :

Յօդուած երրորդ։

Ստուգութիւն մահու յաւելեալ լինի և միուն նոր. այլ ասէ առաքեալն. կայ մնայ մարդկան միանգամ մեռանիլ. Ուստի չէ հնար զչարիս նախկին մահուան վերածել յուղղումն երկրորդ մահուամբ։ Զբաղում ինչ պարգևեաց Ած մարդոյն կրկնակի. զոր օրինակ զերկուս աչս. զի 'ի պակասիլ միոյն. միւսովն վարեսցի։ զերկուս ականջս. զի ընդ խլանալ միոյն, միւսովն լուիցէ. զերկուս ձեռս. զի ընդ պակասիլ միոյն, միւսովն ոչ մնասցէ անգործ. այսպէս և բաց 'ի զգայութեանց. զայլ անդամս մարմնոյն։ Բայց ոչ ետ նմա մեռանել կրկին անգամ. վն որոյ և մինն այն թէ եղիցի յոռեպէս, և 'ի չարիս, կայցուք մնասցուք նոյն օրինակ 'ի յաւիտեան։ Սոսկալի է և զարհուրելի արդարև այս հանգամանք մահու. մի թէ այն, որ քան զամենայն ինչ յաւէտ պիտանի է մեզ. ոչ իցէ նոր փորձ, և ոչ քննութիւն. և ոչ դեղ դարմանի. և թէ այն, յորմէ կախի յաւիտենականութիւն. իցէ միանգամ միայն. և չարիքն գործեալք 'ի նմա կցեն աննորոգելիք և անդարմանք։

Պատմէ Պղուտարքոս զԼամակոսէ հարիւրապետէն, թէ 'ի յանդիմանելն երբեմն զզօրական ումն վն՟ իրիք վրիպման, պատասխանի ետ զօրականն խոստմամբ հանդերձ թէ յայսմ հետէ ոչ արարից զայդպիսի ինչ: Առ որ ասէ իմաստուն հարիւրապետն. վաշվաշ. ոչ գիտես, թէ 'ի պատերազմի անհնար է կրկին անգամ վրիպիլ: Տե՛ս թէ յոր խորս տրտմութե և տարակուսի անկեալ մնայ դեղջուկն այն. որ չիցէ տեսեալ երբէք 'ի կեանս իւր զնետ, և զաղեղ. և տուեալ նմա 'ի ձեռս զկապարճ, և զաղեղն. պատուէր տայցէ ձգել զնետ 'ի նպատակ ինչ տարաձիգ այսու պայմանաւ. զի թէ 'ի յառաջին ձգման անդ թիւրեսցի 'ի նպատակէն, կենդանւոյն այրեսցի 'ի հուր. բայց թէ ուղիղ ձգեսցէ 'ի նպատակ անդր. մեծապատիւ, մեծապարգև ճոխասցի: Արդ որ տագնապ. որ մինչ ոչ պատեալ պաշարէր զողորմելին զայն, յորժամ տեսանէր զանձն հարկեալ առ այնպիսի դժուարին փորձ, յորում չէ ընտանին կրթեալ. և ոչ կարէ կրկին անգամ զփորձ առնուլ. և չէ օրէն ուղղել երկրորդ ձգմամբ զվրիպեալն յառաջնում նուագի:

2. Ահա այսպիսի ինչ է առ ժամս վիճակ մեր. զի չեմք երբեմն մե-

ուեալ · և չեմք զփորձառեալ այնպիսի դժուարին իրաց · և մեռանելոց եմք միանգամ միայն · և յետ այնորիկ կայ մնայ պատահիլ մեզ կամ յաւիտենականուե̃ տանջանաց ’ի գեհենի , և կամ երանուե̃ ’ի յերկինս ։ Ապա զիարդ կամք ցնորեալ · և անկեալ ’ի մօռացօնս բարեպէս մեռանելոյ · և զղջալոյ ’ի մեղաց · որոյ վն̃ միայն ծնաք յշ̃ի ։

3· Գործք մարդկան են այնպէս · զի թէ մին եղիցի յոռի , կարէ միւսն լինիլ ազնիւ · և որ միանգամ կորնչի · կարէ յայլում նուագի գտանիլ ։ Եթէ նաւ մեծատան ուրուք ընկղմեսցի յայսմ ամի ’ի ծով · կարէ նա ’ի յաջորդ ամին հատուցանել ’ի նաւահանգիստ զայլ նաւ լցեալ բազմապատիկ գանձիւք քան զառաջինն · որով վճարի և վնաս կորստեանն ։ Սոյնպէս եթէ ճարտասան ոք յատենի դատաւորաց կորուսցէ զհամբաւ իւր , կարէ միւսանգամ գտանել զայն ։ Բայց ոչ այսպէս է մահն · զի թէ միանգամ լիցի մեռանիլ ’ի չարիս · անհնար է , թէ միւսանգամ լիցի ’ի բարիս ։ Վասն այսորիկ իմաստուն̃ ասաց ոմ̃ն ’ի հոգևոր վարդապետաց · թէ որք կամինն կրթիլ յարհեստս ինչ · կամ առնել զգործ ինչ կարևոր , ջանան զառաջինն ուսանիլ

զպէտս

զպատշաճեալսն առ կատարելուե̃ նոցա · Թէև իցէ դիւրին իմն · ապա որ անմտուե̃ է մեզ · որք ստունգանեմք զուսմամբ բարուոք մեռանելոյ · որովհետև չիք ինչ դժուա̂րին · և մեզ կարի կարևոր յաշխարհի քան զայս : Եթէ զմիոյ ոստնլոյ եղելոյ բարեպէս , կամ յոռեպէս, կախեալ կայր լինիլ ինձ իշխան , կամ գերի · արդարև չառնէի զայս ինչ · եթէ ոչ : յառաջագոյն կրթել զանձն իմ վասն այնորիկ · ապա թէ ոստնուլն իցէ վտանգաւո̂ր յոյժ · և վայրն՝ զորով ոստնու ոք՝ ընդարձակագոյն · սովոր է յետս յետս ընթանալ առ ՚ի ոստնուլ թափով մեծաւ̂ : Արդ՝ դիտելով մեր , թէ յոյժ ընդարձակագոյն, և զարհուրելի է ոստնուլն ՚ի կենաց ՚ի մահ · պարտիմք ապա առ ՚ի քաջ գործել զայն , սկսանիլ զընթացս մեր յետս յետս գնալոյ յայնմ ժամէ · յորժամ արձակի բանավարութե̃ մեր : Ազէ կեցցուք որպէս մահկանացուք · և ցուցցուք ՚ի գործս մեր , թէ գիտեմք · եթէ մահն մեզ սպասեալ մ̃այ միանգամ · բայց ոչ գիտեմք զնորա ժամն : Վասն այսորիկ ջանս դիցէ ամենայն ոք առնել զգործս իւր այնպէս · որպէս թէ իցէ այն վերջինն , և թէ յաւարտիլ նորա , մեռանելոց իցէ ·

և մի՛ հեղգասցի սրբել զանձն 'ի մեղաց, և ընդ իշխանութ՟ գրաւել զանկարգ բաղձանս հոգւոյն, և հեռացուցանել զխորհուրդն յերկրաւորացս, և համբառնալ 'ի յերկինս ուղղեալ զմիտս և զյօժարութ՟ իւր միշտ առ ա՟ծ ։ Տե՛ս զի եթէ ծառ ինչ թիւրեալ իցէ 'ի կողմն մի · յորժամ հատանի տապարաւ, 'ի հարկէ անկանի յայն կողմն · այսպէս եթէ 'ի կենդանութ՟ մերում հակեալ իցէ միտս մեր առ ա՟ծ, 'ի հարկէ է
մեռանելն անկանի 'ի յերկինս ։
այլ դու երկի՛ր և 'ի
գեհենէ ։

ԳԼՈՒԽ Խ. Գ:

Յաղագս սարսափելի րոպէին կատարածի առ ժամանակեայ կենացս, որ է 'ի մէջ ժամանակի, և յաւիտենականութ̅ե:

Սարսափելի, և սոսկալի է յոյժ րոպէն այն. որ է կատարած կենաց, և սկիզբն յաւիտենականութ̅ե. զի 'ի նմա սպառի կենցաղս այս, և նովաւ մտանեմք յանծանօթ և յանհասանելին յայն աշխարհ: Կայ մնայ ինձ. զի 'ի մի միայն րոպէի սպառեսցի կեանքս իմ. 'ի մի միայն րոպէի երևեսցի դատաւորն իմ: 'ի մի միայն րոպէի յամօթ արասցեն զիս մեղք իմ բազում: և 'ի մի միայն րոպէի կուտեսցին 'ի վ̅ր իմ ա̅մ բարերարութի̅ք տ̅ն, և լիցի վճիռ կամ յաւիտենական փրկութ̅ե. և կամ դատապարտութ̅ե: Զարմանալի իմն է արդարև. թէ ոչ տացի վ̅ս այսպիսի կարևոր իրի այլ ժամանակ. եթէ ոչ բաւէ մի ժամանակի. և թէ ոչ տացի տեղի կրկնելոյ, կամ բողոք բառնալոյ. և կամ փութոյ, և ջանի : Ո՛վ վայրկեան կարի կարեւոր 'ի մէջ բովանդակ ժամանակի, եւ յաւիտենականութեան : Ո՛վ վայրկեան, որ ոչ ես ժամանակ · եւ ոչ յաւիտենականութիւն : այլ եզերս ժամանակի եւ յաւիտենականութեան, եւ բաժանես զմշտնջենաւորս յառժամանակեացս : Ո՛վ անձուկ վայրկեան, եւ բայց անեզրական, ուր գումարին, եւ բովանդակին իրք մեծամեծք :

2. Ե՞րբ զի մեծ համարեսցուք զայս բայց սահմանելի, ուր ոչ կարէ մեղաւորն զերծանել 'ի ցասմանէ դատաւորին իւրոյ ոչ բարեխօսութ̃ք ս̃րբց · ոչ աղօթիւք քահանայից, եւ ոչ այլ ինչ ձեռնապարհան · բերցուք 'ի մէջ զպատմութիւն մի, զոր գրեաց ս̃բ Պետրոս Դամիանեանն 'ի թղթին, որ առ Աղեքսանդր · Է · պապն · զորմէ ասէ նոյն ս̃րբն, թէ քանիցս յիշեմ զայն, սոսկացեալ մնամ : Արդ պատմէ նա, թէ երկու արք գեղջուկք եկին 'ի լեառն հատանել զփայտ · եւ ահա ընդ առաջ ել նց վիշապ մի ահագին երկգլխանի · յորոյ աչացն հատանէին բոցք հրոյ, եւ բացեալ զժանիսն · եւ արտաքս ձգեալ իբրեւ ղոլաք զերկուսին լեզուսն, դիմեաց 'ի վր նց : Ե՞րբ մին 'ի նոցանէ, որ քաջասիրտն էր 'ի մերձենալ վիշապին, եհար տապարաւն, եւ 'ի բաց ընկէց զմի գլուխ նր, եւ ը̃

հարկանելն անկանէ տապարն 'ի ձեռաց նր̃ ։ Իսկ գազանն կատաղեալ յարձակեցաւ և կալեալ կաշկանդեաց տոտամբ զվիրաւորիչն։ Այլ ողորմելին գոչէր առ ընկերն հասանել նմա յօգնութիւն․ կամ գոնէ տալ զտապարն, զի հատցէ և զմիւս գլուխն և թափեսցէ զանձն 'ի գազանէն, որ ածէր զնա յորջ իւր․ իսկ նա ահաբեկեալ՝ փախչէր․ և ոչ դադարէր, և թողոյր զընկերն 'ի ձեռս վիշապին․ և թէպէտ ձայն աղաղակին նր̃ հասանէր մինչև յերկինս․ սակայն չէր ոք նմա ձեռնտու։ Ասէ ո̃ք Պետրոս Դամիանեանն․ ոչ կարեմ բացատրել զտագնապ սրտիս, և զսոսկումն 'ի խոկալս իմ ողորմելի զայն դիպուա̂ծ․ և յիշեմ միշտ թէ զիարդ կային այրն այն և գազանն 'ի միասին յորջ անդր․ զի չէր խաղաղարար ոք 'ի միջի․ և չէր ոք ձեռնտու առն, փրկել զնա 'ի թշուա̂ռութէ̃ անտի․ զի ոչինչ զօրութի̃․ և կամ գոչումն կարէր օգնել նմա, և ոչինչ արտա̂սուս խաղաղել զգազանացեալ սիրտ վիշապին․ մանաւա̂նդ յաւելեալ իսկ էր 'ի վե̃ր բնածին գազանութե̃ն և կատաղութի̃ն ընկալեալ 'ի վիրաց անտի․ և խնդրէր վրէժս 'ի վիրաւա̂որչէն՝ գէշագէշ պատառել զնա ։ Արդ եթէ տեսանելն անձեռնհաս լինել փրկութ̃ առժամանակեայ կենաց. և անյոյս լինիլ մեզ ուստեք ազատութե՟ն 'ի ձեռաց մի շապի միոջ, է այսչափ աղէտալի, և ողբալի. այլ որչափ սարսափումն և անձկութե՟ն եղիցի, յորժամ 'ի սոսկալին յայն վայրկեանն դատաստանին ից, մեղաւոր ոք զրկեալ յա՟մ յուսոյ փրկութե՟ն մատնեսցի 'ի ձեռս դժոխային վիշապին, որ կապեալ զհոգի Նո՟ր ածցէ 'ի վիհն անդնդոց: Այդ յիշեսցուք երկիւղիւ և դողութե՟բ զբանն մարգարէին, որ ասէ զգուշայ. Գուցէ երբէք յափշտակիցէ որպէս առիւծ զանձն իմ, ոչ ոք իցէ, որ փրկիցէ, և ոչ այն որ ապրեցուցանիցէ: (Սաղմ. Է:) Ո՛վ որչափ սոսկալի է տեսանել ումեք մատնեալ զանձն 'ի ձեռս բանսարկուին, և ոչ միայն լքեալ 'ի մարդկանէ, այլև 'ի հրեշտակաց, 'ի թագուհւոյն երկնաւորաց և երկրաւորաց. և յարարչէն ամենեցուն 'ի Հօրէն գթութեանց:

2. Ասէր հայրն Եղիայ. եթէ յերից երկնչիմ և դողամ. Մի, յորժամ հոգիս մեկնեսցի 'ի մարմնոյս: Երկրորդ՝ յորժամ կացից յատենի Տ՟ն 'ի դատիլ և Երրորդ, յորժամ հասցէ վճիռ վճռո, որոց բնաւ՟րն լինին 'ի միում և եթ վայրկենի: Ո՛վ վայրկեան սոսկալի, որ հատանես զթել ժամանակին. և սկսանես զկտաւն յաւիտենականութե՟ն: Զի յաւիտենականութիւն կախի զմա-

հուանէ, մահն զկենաց. և կեանքն զթելէ մխոցէ՝ որ 'ի միում վայրկենի հատանի, կմ̃ բեկանի և կամ կիզանի. և այս յայնժամ յորժամ ոչ խոկասցէ զկենի. և մանաւանդ յայնժամ, յորժամ պարապէ ոք երկարել զկեանս իւր: Այլ քաջ վկայուի առ այս է դիպուածն այն, զոր պատմէ Պօղոս Եմիլեանն վ̃ն Կարոլոսի արքային Նաւառրայ, թէ սա յղ̃գս յաճախելոյն յանպարկեշտ հեշտութիւս տկարացաւ յոյժ. և անկաւ 'ի մահիճ. և եկեալ բժշկաց հաստատեցին առնել նմա զայս դեղ. զի թացեալ զպաստառակալ ինչ 'ի յօղի պատեսցեն նովաւ 'ի մերկուց զմարմինն ողջոյն: Եւ նա որ յետ պատելոյն կարէր զպաստառակալն շուրջանակի, մերձեցոյց զմոմեղէն ինչ վառեալ առ 'ի հատանել բոցովն զասղանիքն, և էանց փութանակի բոցն յասղանւոյն 'ի պաստառակալն թացեալ 'ի յօղի, որով պատեալ կայր արքայն. և հուրն սկսաւ վառվառակի ճարակել. ուստի բոցակիզեալ արքայն, մեռաւ: Ահա զմիոջէ թելէ կախեալ կայր կեանք թագաւորիս այս, զի մահ նմ̃ եղև այսպիսի պատերջան: Եւ՞ իրաւի չէ դժուարախզելի թելն կենաց մերոց, քան զասղանւոյն 'ի վշոյ: Ո՞վ է, որ կարօղ իցէ 'ի համար և 'ի հաշիւ արկանել զշաւիղս մահուան, և զայն, թէ զորչափ մանրիկ-

բաց

րաց կախեալ կայ կեանքս մեր . որով հետև կախեալ կայ ոչ միայն նրբագոյն թելէ . այլ և զկարի նրբին մազէ ։ Ահաւասիկ փաբիոս պրետորն՝ ՚ի մազէ միոջէ , զոր ը̄ կաթին էարբ, և կռուճեցաւ̂ այն ՚ի կոկորդ նր̄, եղև խեղդամահ ։ Ուստի չիք դուռն ինչ, զոր փակել զօրեսցեմք ը̄դդէմ մահու , զի և անդ ուր օդն ոչ մտանէ . (ո̄պ յընթերս երկրի .) սա համարձակ մտանէ . և ՚ի գործս կենաց մերոց ը̄ առաջ ելանէ մեզ ։ Ահաւասիկ ՚ի հատէ միոջէ չամչոյ մեռաւ̂ Անակրենթէս ։ ՚Ի փոքրիկ խնձորոյ միոջէ , որով խաղայր ՚ի վեր ձգելով Տրուսոս Պոմպէոսն . և անկաւ̂ այն ՚ի բերան նր̄ . եղև յանկանթօլթափելն խեղդամահ ։ Նաև կիրք հոգւոյն . և յօժարութիւնք մարմնոյն հորդեն զնմ̄րս ը̄ արձակ առ մահն ։ Ահաւասիկ Հոմերոս մեռաւ̂ ՚ի տրտմութէ ։ Սոփոկղէս ՚ի սաստիկ խնդութենէ ։ Արքայն Դիոնեսիոս յուրախութէ լրոյ նորոյ յաղթութե̄ ։ Օրէ դէանոս մեռաւ̂ ՚ի կաքաւելն , յորժամ հարսանեացն ինքեան զդուստրն Դոմետիանոսի կայսեր ։ Թալէսոս մեղիլանեցին ելեալ ՚ի թէատրոն ՚ի զննելն խաղուցն , մեռաւ̂ ՚ի ծարաւոյ ։ Կուռնելիոս Գաղղիացին . և Տիտոս Եթերացին սատակեցան ՚ի գերկս պոռնկաց ։ Յադետոսոս Սալուղեան ՚ի նոյն գործ

վովմ շուտութեն մեռու՞ զայդ ը սեղեխին և ելին 'ի մխախին յատակս դժոխոց: Աղէ զգոյշ լեցի ամ օր, և մի ասասցէ, թէ գոնէ ոչ մեռայց այսօր: Վնզի ամենեքին, որք յանկարծակի մեռան, ոչ խորհէին, թէ յայնմ աւուր մեռանելոց իցեն, և սակայն մեռան, յորժամ ոչ երկնչէին: Զի որ այլոց պատահեցաւ, կարէ և քեզ պատահել:

ԳԼՈՒԽ. Դ:

Թէ վասն է՞ր սարսափելի իցէ համարած առժամանակեայ կենացս:

1. Եթէ այսչափ սարսափելի է մահն վն լինելոյ կատարած կենդանականացս. ապա որչափ եղիցի սոսկալի վն համարս տալոյ 'ի նմա առաջի ահաւոր, և անհաս, և արդարադատ դատաւորին, թէ զիա՞րդ 'ի գործ արկաք զամ կենս իւր արժանւոյն: Երանելին Յոբ, թէպէտ կարէր տալ զհամար բարի առաջի այ. այլ և ինքն ած վկայէր. և համարէր զնա բարեկամ իւր. և ինքն հոգին սբ վկայէ, թէ յամ բանս, զոր ասաց 'ի փորձութեան,

և 'ի վիշտս իւր, ոչ մեղաւ երբէք, և թէ ոչ տանջեաց զնա ոք վ՟ս մեղաց ն՟ր, այլ զի լիցի մեզ յօրինակ համբերութե՟, և այլոց առաքինութե՟ց. և ինքն իսկ ասէ, յոչինչ իրս ստգտանէ զանձն իմ խիղճ մտաց իմոց. և սակայն սոսկացեալ 'ի վերջին դատաստանաց ա՟ծն, որ անաչառ քննէ, ասէր. ո՛ տայր ինձ, զի 'ի դժոխս թագուցես զիս: Քանզի տեսիլ դիմաց զայրացեալ ա՟ծն, որ նա ինքն է դատաւորն՝ միանգամայն և վկայն, եղիցի այնմ ահաւոր և սոսկալի. մինչզի ասէ ս՟բ Յոհան Ոսկեբերանն. ('ի ճառն. ի՟ը. 'ի վ՟ր մատթ.) Լա՛ւ է բիւր անգամ շանթահար լինել, քան զայն հեզահամբոյր գորովական դէմս մեզ զայրագին տեսանել. և զհաշտ աչան հայէցուածս յառ մեզ հայելոյ հրաժեշտ:

2. Արդ՝ եթէ 'ի կեանս յայս, որ վայր է ողորմութե՟, դէպ եղև, զի երբեմն պատկեր խաչելոյն Ք՟ի իբրև հայեցեալ զայրագին 'ի վ՟ր ումանց չարագործաց, որք կային առաջի ն՟ր, մին եհար զգետնի զերկուս 'ի նոցանէ, մին չև զկնի հարուստ մի ժամուց ապա մեռաբերեցին. ապա զո՞րպիսի սոսկումն և զդողումն դարձեացէ ոչ պատկերն, այլ նոյն ինքն Յ՟ս Ք՟ս կենդանին, ոչ 'ի խոնարհութե՟ խաչի, այլ բազմեալ յաթոռ փառաց յահաւոր բեմի արդար դատաստանին իւրոյ. ոչ 'ի ժամա_

մանակի գթութե՟ և ներողութե՟, այլ յանհրաժեշտ դատողութե՟. ոչ մերկ ՚ի խաչին բևեռեալ. այլ զգեցեալ զկէնս արդարութե՟ ը՟դէմ մեղաւորաց, և ածեալ զսուրն վրէժխնդրութե՟, և մանրաղննին քննութե՟. յորժամ երևեսցի ՚ի դատել զյանցանս նց՟, և վրէժս պահանջել. Քանզի այնչափ սիրէ ած՟ առնել զարդարութի՟, որչափ զգթութի՟ և զողորմութի՟:

3. Տե՛ս թէ զի՞արդ յանբաւ՞ս առատացեալ դիզանայ դեռ մինչ յորդախաղաց, յորժամ ամս քան, կամ երեսուն ապրեցեալ ամաց յընթացին, իսկ ՚ի ժամու՝ յորում բարձցի կրծիցն, տե՛ս թէ ոմ՟ դարձի՞ և դարձի՞ և արշաւասոյր հոսմամբ ընթանայ. որ դիմակալ. որ արգել. և որ պատնեշ կարէ զդէմ ունիլ նմա: Այլ ե՛կ և տե՛ս ինձ, թէ որչափ ապա արդարութի՟ն ա՟յ, որ ՚ի դանիէլէ մարգարէէն առակեցաւ՞ ՚ինմանութե՟ հրեղէն գետոյ, զեղացեալ բարդի ՚ի վր՟ տուն մեղաւորի, որ ամս քան, կամ երեսուն ամաց ՚ի մեղս. և թէ ՚ի ժամ մահուան նր՟ որչափ բարկութբ՟ հեղցի ՚ի վր՟ նր՟: Զայս ածմ՟ խստութի՟ տեսցէ եղկելին այն ՚ի դէմս դատաւորին իւրոյ, յորմէ զահի զամօթի հարեալ՝ քստմնեսցի:

4. Վս՟ այսորիկ ասաց մարգարէն դանիէլ, թէ գետ հրոյ յորդեալ ելանէր

նէր յերեսաց նո՟ր ։ Յաւել ասել, եթէ աթոռ նո՟ր էր իբրև զբոց հրոյ • անիւք նո՟ր իբրև հուր բորբոքեալ • զի եղիցի բովանդակն հուր • խաւարն • և արդարութի՟ն ։ Եւ զի ասէ, ատեան նո՟ր էր աթոռ անուաւոր՝ առ 'ի ցուցանել մեզ զերագութի՟ն Թափոյ ամենակարողութե՟ նո՟ր 'ի կատարել զվրէժխնդրութի՟ն իւր ։ Իսկ մարգարէն Ովսէէ առակէ 'ի նմանութե՟ զայրագին գազանի, վա՟յ ասէ 'ի դիմաց ո՟յ • ես լինիցիմ հակառակ կացից նց՟ • ա՟ պատահեցայց նց՟ 'ի ժամուն յայնմիկ իբրև արջ, որոյ զկորիւնսն դողացե՟լ իցեն • և պատառեցից զպարունակս սրտից նց՟ • և եղէց նց՟ իբրև զյովազ 'ի սատակել զնս՟ա • Վա՟ զի չիք կենդանի ինչ առաւել դժնեայ քան զյովազ, և քան զարջ, որ իբրև եղանէ 'ի խնդիր կորեանցն, յարձակի լի կատաղութ՟ 'ի վ՟ր, որոց պատահին նմա զառաջինն ։

5• Խոկումն Ճշմարտութեն այս այնչափ զօրաւոր եղև առ Հայրն Ագաթոն, յորժամ մերձ էր 'ի մեռանիլ • մինչզի եկաց մնաց աւուրս երիս անթարթափ աչօք, անշարժ և պշուցե՟լ լի երկիւղիւ և դողութ՟ ։ Ով որչափ սարսափելի է յորժամդայ ա՟ր 'ի հասուցանել զվրէժ աւուրցն, յորս լռեաց մեծամեծ համբերութ՟, գոչեսցէ յաւուր յայնմիկ, զորմէ ասէ մարգարէն • Լուեղէ 'ի սկզբանէ. միթէ միշտ լռեցից, և անսայցեմ. ժուժկալեցի իբրև ծննդական. արդ զարհուրեցուցից, և ցամաքեցուցից միանգամայն. (Եսայ. խբ. ժդ։) Այսինքն յաւուր յայնմիկ, և 'ի ժամուն՝ յորում եղիցի արդարութիւն անապակ, վճիտ և անխառն 'ի գթութէ, անյոյս 'ի ցաւակցութէ. անակնկալ յօգնութէ, 'ի ձրից. և յայլոց նպաստից. բաց անտի յայնմանէ, զոր ընկալցի իւրաքանչիւր ոք ըստ գործս իւր.

6. Ո՜վ մարդ, որ դեռ ունիս զժամ և զժամանակ. խորհեա՛ց թէ հասեա՛լ կաս 'ի ժամն յայն, յորում ոչ զոք տեսանես քեզ ձեռնտու. և ոչ ևս գտանի քեզ օգնական, ոչ արիւնն փրկչին հեղեալ, ոչ որդին այ 'ի խաչելն. ոչ բարեխօսութի մօրն գթութե. ոչ աղաչանք սրբոց նմ. և ոչ գթութիւն ածական. այլ միայն տեսանես զածն քո սրտմտեա՛լ և արդար, որ զգթութի ողորմութեցն քո խարկեսցէ 'ի յանաչառ արդարութե։ Յայնժամ տեսցես, թէ զոչինչ ունիս 'ի քոյոցդ. և ոչ զոք ունիս քեզ նպաստաւո՛ր, այլ ամենեքեան ընդդէմ քոյ դարձցին։ Նոյն ինքն մայրն ողորմութե. նոյն ինքն գթութիւն ածական, նոյն ինքն արիւնն փրկչական, նոյն ինքն հրեշտակ քո պահապան. և ամ սրբք քո պաշտպան։ ամենեքին զինեսցին ընդդէմ քոյ. և լքցեն թողցեն զքեզ. և

միայն գործք քո ոչ թողցեն , կամ լքցեն զքեզ : Տե՛ս թէ զիա՞րդ պատրաստես զանձնդ վ՟ն աւուրն այնորիկ. և ջանա՛ յօգուտ քեզ առնել զարիւնն տ՟րունական , որ հեղաւ վ՟ն փրկութե՟ քոյ . ապա թէ ոչ յեղափոխեսցի քեզ 'ի դատապարտութի՟ մեծ : Սոսկացեալ դողացաւ ս՟ս ամ՟ քրիստոնէից յեղանակէ անտի , որով պապն Թէոդորոս դատապարտեաց զհերձուածապետն զՊիւրոս . զի գումարեաց զժողով'ի Հռոմ . և առաջի մեծապատիւ , և մեծահրաշ ժողովոյն առ գերեզմանի սրբ՟յն Պետրոսի առաքելոյն . և առեալ 'ի ձեռս զբաժակ արեան տ՟ն , եարկ 'ի կաղամարն և թացեալ զգրիչն 'ի կենարար և յահաւոր արիւն տ՟ն , գրեաց ձեռամբ իւրով զորոտընդդատ վճիռ նզովից նր՟ , որով իբրև անդամ ինչ նեխեալ արտաքս ընկեցաւ Պիւրոս 'ի կաթուղիկէ եկեղեցւոյն : Եւ որք տեսին , և լուանն զայս , սոսկացեալ սասանեցան : Արդ այսպէս սոսկալ և դողալ պարտի նա . որում կարէ պատահիլ , թէ արիւն փրկչին իւրոյ արասցէ զվճիռ յաւիտենական դատապարտութե՟ նր՟ . զի յաւուր յայնմիկ այնչափ խիստ եղիցի արդարութիւնն տ՟յ առ մեղաւորն , մինչզի առ'ի հաստատութիւն առնել զվճիռ դատապարտութե՟ նր՟ , պատշաճ համարեսցի հաստատել զայն արեամբն ք՟սի .

զոր եհեղ վս̃ փրկուե նր̃ 'ի վր̃ խաչին. և լիցի յայնժամ արիւնն այն դատախազ 'ի դատապարտել զնա ։ Եւ՜ զի այս ճշմարիտ է քան զամ̃ ճշմարտութի. զի՞ է, զի ոչ խոկամք զայս . և կամ զիա՞րդ զբաղիմք յայլ անօգուտ խորհուրդս, որք արգել լինին մեզ խոկալ զայն ։ Եւ՜ զիա՞րդ ոչ ճ̃ունիմք և պահեմք զխրատ մր̃ հօրն Ամոնայ, յորմէ իբրև խնդրեաց եղբայր մին, եթէ զինչ արարից հայր զի շահեցայց յառաքինութիս, պատա̃խնի ետ նմա, և ասէ. երթ, և արա՛ զխորհուրդ քո ոպ̃ զբանտարկելոց, որք միշտ հարցանեն, ուր իցէ դատաւորն, երբ գայցէ, և ակնունելով տանջանաց, որք մնան նց̃, միշտ ողան, և ողբան ։ Ըստ այսմ արժան է կալ դողութ̃ ամ̃ կրօնաւորի. որ և կշտամբելով զանձն ասասցէ, ով անձն իմ եղկելի. ոպ̃ երևեցայց առաջի ահաւոր բեմին Քս̃ի. զորպիսի համարս տաց վս̃ ամ̃ գործոց իմոց ։ Եթէ զայս հանապազ 'ի միտ ածէիր, արդարև փրկութե̃ ժամանէիր, և ամ̃ վաստակ և ջանք քո առ'ի ժամանել առ այն ոչ լինէր աւելորդ։

Յօդուած երկրորդ

1. ԵՐԿՐՈՐԴ տեսիլն ահաւոր և սոսկալի, որ եղիցի 'ի ժամու մահուան, որով ժամն այն լինի յոյժ սարսափելի. է այս, զի տեսցէ յայնժամ մեղաւորն զմեղս իւր, որոց զարշութիւնն, մեծութիւնն, և բազմութիւնն յայտ յանդիման երևեսցի։ Ե՛ւ զայս ծանոյց մեզ Դանիէլ յասել անդ իւրում, եթէ աթոռ դատաստանի նն էր բոց հրոյ: Քանզի զորօրինակ բոցն բաց 'ի յայրելոյն լուսաւորէ ևս, այսպէս և 'ի դատաստանի նն ոչ միայն լիցի խստութիւն արդարութեանն նյ, այլ և բացցի և յայտ յանդիման երևեսցի զարշութիւն մարդկային չարութեան, որպ ասէ Սաղմոսերգուն. ԵԴԵՐ ԶՄԵՂՍ ՄԵՐ ԱՌԱՋԻ ՔՈ, և ԶՅԵՏԻՆՍ ՄԵՐ 'Ի ԼՈՅՍ ԵՐԵՍԱՑ ՔՈՑ : (Սաղմոս. ձթ. ը։)

2. Յորժամ գերան ինչ մեծ կայ 'ի մէջ ջրոյ. կարէ զայն նաև մանուկ ոք շարժել հեշտեաւ այսր և անդր, և կայ կիսով չափ 'ի մէջ ջուրց թաղուցեալ. և կիսով չափ արտաքս երևի։ Բայց յորժամ արտաքս հանեալ լինի, այնչափ ծանրի, մինչև չզօրել բազմաց շարժել զայն 'ի միասին. և բովանդակն երևի, և ոչինչ թագչի 'ի նմանէ։ Այս

պէս և 'ի լայրծին. և յալեկոծեալ ծովու կենցաղոյս ոչ երևին մեզ մեծ ինչ մեղք մեր. և թաքչին 'ի մէնջ կիսով չափ. բայց յելս մեր յաշխարհէ երևեսցին մեզ յոյժ մեծամեծք, և ամբողջք: Յաղագս որոյ այնչափ ամօթս կրեսցէ մեղաւորն, մինչև իբրև յերկուց սուր սուսերաց խոցոտեսցի խիղճ մտաց նր̅. ի̅ց յանհամար բազմութէ մեղաց, և 'ի զարհուրելի և յանձառելի մեծութեց նց̅:

3. Արդ՝ սկիզբն արարեալ զբազմութէն ասեմ. թէ մնասցէ յայնժամ մեղաւորն բոլորովին զարհուրեալ, սասկացեալ, և ամաչեալ, մանաւանդ իբրև յաւելե̃լ լինի 'ի վր̅ բազմութե մեղացն, զորս ոչ տեսանէր. նաև զոլ մեղանչական այն, զոր նայն համարէր իբրև զբարեգործութիւն, ըստ այնմ, զոր ասէ սաղմոսերգուն, Յորժամ ժամ առնից, ես ուղիղ դատեցայց: (Սաղմ. հդ̅. գ̅:) Յայնժամ երևեսցի, թէ որչափ զանազան են դատաստանք ին 'ի մարդկայինն դատաստանաց. զի ինքն Հոգին սբ̅ ասէ 'ի ձեռն մարգարէին: Ոչ են խորհուրդք իմ իբրև զխորհուրդս ձեր, և ոչ ճանապարհք իմ իբրև զճանապարհս ձեր, այլ որք հեռի են երկինք յերկրէ, այնպէս հեռի են ճանապարհք իմ 'ի ճանապարհաց ձերոց: (Եսայ. ծե̅. ը̅:) Զի եթէ աչք արանց հոգևորաց այնչափ նրբահայեացք են, մինչզի զորս ծանէբք

գովաբանեն, նոքա զնոյնս դատապարտեն՝ որչափ ապա լուսապայծառ, և ամենաքննիչ աչք ամենակալ արարչին տեսանեն զամ՟ բիծս նաև ՚ի հրեշտակական մաքրութն։ Եւ թէ ՚ի հրեշտակս իւր որպ՟ ասէ Յոբ եգիտ զթերութն․ զիարդ ապա թագչել կարիցեն ՚ի նմանէ մեղք և անօրէնութիւնք մարդկան։ Եթէ խնդրեսցին անօրէնութիւնք սբ՟յ քաղաքին եղ՟էմի ճրագաւ՞․ զինչ եղիցի վն՟ բաբելոնի։ Եթէ ը՟ արդարս լինի այնչափ խստութն․ զինչ եղիցի ը՟ թշնամեաց ա՟յ։ Անդ յայտ յանդիման հրատարակեսցեն ամ՟ գործք մեր, զորս արարաք․ և զոր զանց արարաք, և արձանասցի իբրև անօրէնութն ոչ միայն չարին, զոր գործեցաք, այլ և բարին զոր պարտական էաք առնել, և ոչ արարաք․ և կամ ոչ ըս՟ արժանւոյն, և ոչ բարւո՞ք արարաք, բովանդակքն քննեսցին, դատեսցին․ և ուրոյն ուրոյն տրոհեսցին։ Յառաջեսցէ քան զքեզ դևն դատախազ․ և ամբաստանեսցէ զքէն՝ զորս նոյն գիտէ։ և մի՛ կարծեր՝ թէ զորս նա ոչ գիտէ, մոռացեն այնոքիկ ՚ի խաւարի․ քանզի խիղճ մտաց քոց բողոքեսցէ վն՟ նց՟ ը՟դէմ քոյ։ Իսկ թէ դէպ լիցի, զի և ոչ խիղճ մտաց քոց յուշեսցէ զամ՟ չարիս քո․ յայնժամ հրեշտակ քո պահապան, որ է քեզ այժմ պաշտպան, եղիցի ոսոխ անհաշտական։

կան։ Այս թէ՝ ոչ դեն, ոչ խոստովանուն̃ խղճի մտաց քոց, և ոչ վկայուն̃ հրեշտակին ցուցցեն զա̃մ, զի պատահել կարէ, թէ ոչ գիտիցեն, յայնժամ դատաւորն քո, որ միանգամայն է վկայ, անբաւ իմաստուբ̃ն հրատարակեսցէ զա̃մ։ Վ̃նզի անհամեմատ սրատեսութբ̃ն քան զյովազ, և քան զարծուի թափանցեսցէ ՚ի խորս կամաց մերոց, ցուցանելով զբազում ինչ լինիլ մոլուն, որ մեզ երևէր առաքինուն։ Բոմբէ անհաս, և զերահրաշ եղանակի դատաստանացս. ուր ոչ ոք իցէ, որ ուրացցի. ուր ամենեքեան եղիցին ամբաստանք, նաև նոյն ինքն պարտաւորն. ուր ամենեքեան եղիցին վկայք. նաև նոյն ինքն դատաւորն։ Ով դատաստան սարսափելի, ուր չէ ոք պաշտպան և բարեխօս. այլ չորեքին ամբաստանօղք։ Զի ամբաստան լիցին զքէն դևն. հրեշտակն. խիղճ մտաց քոց, նա ինքն իսկ դատաւորն ամբաստան լիցի զքէն, ևս և մ̃այնց բազմաց՝ զորս դու համարէիր ջատագովս լինիլ քեզ։ Այլ դու ե՛կ և տես, թէ որչափ ամօթով եղիցիս, յորժամ չար համարեսցի զայն ա̃ծ, զոր դու այժմ համարիս բարի։ Ասա ինձ, իցէ՞ ոք, որ խորհեսցի, թէ չէր բարի ինչ զոր արարին Ոզայ, յորժամ ձգեաց զձեռն ունիլ զտապանակն, զի մի՛ անկցի 'ի գետին, ամենեցուն երեւի այս բարի իմն. այլ սակայն ա՟ծ իբրեւ զմեղս իմն ծանր պատուհասեաց զնա մահուամբ, որով եցոյց, եթէ այլ է դատաստան ն՟ր, եւ այլ մերն: Ո՞վ է, որ ոչ խորհեսցի. թէ խոհեմ եւ քաջ կառավարուե օրէն էր, զոր աբարին Դաւ̂իթ. յորժամ կամեցաւ̂ դիտել զթիւ̂ համարոյ ժողովրդեանն. եւ սակայն ա՟ծ այնչափ մեծ յանցանք համարեցաւ̂ զայն. մինչզի պատժեաց զն՟ն այնպիսի մահուամբ, որոյ նմանն ոչ երեւեցաւ̂: Անպաշտութե՟ն իմն մեծ համարէր սաւ̂ուղ. յորժամ 'ի յամել սամուէլի գալ առ նա, հարկեալ 'ի թըշնամեաց՝ ժտեցաւ̂ եւ մատոյց զողջակէզս. այլ սակայն ա՟ծ այնչափ մեծ անօրէնութի՟ն համարեցաւ̂ զայն. մինչզի զմ՟ ն՟ր անարգեաց զնա չլինիլ թագաւոր. Ո՞վ իցէ. որ ոչ համարեսցի զթուե՟ն մեծի ներողութե՟ն, որով աքայաբ արքային իէ՟լի ոչ միայն շնորհեաց զկեանս որդւոյ ադերայ արքային ասորւոց, որ պարտեցաւն 'ի նմանէ, այլ եւ էհան զնա 'ի կառս իւր արքունի. եւ սակայն այնչափ չար թուեցաւ̂ այն յաչս ա՟յ, մինչզի առաքեաց զմարգարէ առ աքայաբ արքայ՝ ասել ցնա, փոխանակ զի հաներ դու զայրն վնասակար 'ի ձեռաց իմոց, եղիցի անձն քո փոխանակ անձին ն՟ր. եւ ժողովուրդ քո փո

խա

խանակ ժողովրդեան նորա : (Գ. Թագ. Ի. ԽԲ:) Արդ եթէ 'ի կեանս յայս երեւեցաւ̂ այսպէս այլ գոլ դատաստան ա̃ծն 'ի դատաստանէ մարդոյ · ապա զի՞նչ եղիցի 'ի սոսկալի ժամուն յայնմիկ, ուր գանձեալ պահէ նա զա̃մ մթերս խստութեանց արդարութեան իւրոյ : Զի՞նչ եղիցի տեսանել զա̃մ դարշութիւն մեղաց· զանյարմարութիւն նր̃ ը̃ լուսոյ բանին , զտգեղութիւն , զոր 'ի հոգին գործէ , զծանրութիւն արհամարհանացն , զոր ա̃ծն ա̃մի առնէ , զապերախտութիւն զոր առ փրկչին ցուցանէ· զվ̃տս կործանմանն, զոր վ̃ս անձին մեղուցելոյ գրաւ̂է , զգեհեանն · յոր զնա դահավէժ առնէ · եւ զփառս երկնից , յորմէ զնա զրկէ: Որոց իւրաքանչիւրն առանձին շատ է 'ի շարժել յոյժ անմխիթարս · եւ 'ի լացս ցաւ̂ագինս · ապա զի՞նչ գործեսցեն բնաւ̂քն միահաղոյն : Եթէ տեսանել զմի միայն դեւ՝ է այնչափ ահռելի , եւ սոսկալի , մինչզի բազումք 'ի ծառայիցն ա̃յ մեռեն , եթէ լաւ̂ է կրել զա̃մ վիշտ կենցաղոյս , քան տեսանել զնա ը̃ մի միայն րոպէ , որոյ անտանելի տգեղութիւն եղեւ 'ի մ̃ի եւեթ մահուչափ մեղաց : Զի՞նչ եղիցի ապա յայնժամ եղկելի մեղաւ̂որին , որ ոչ միայն տեսցէ զձառադէմ երեւս դիւ̂ին կատաղեալ ընդդէմ ինքեան , այլ եւ տեսցէ զինքն դարշելի հանդոյն նմին , եւ

Թերեւս դարշելագոյն քան զբազում դեւս՝ այնչափ ատելութբ, որչափ մեղաւն ներելի, և անհուչափ մեղօք: Աղէ՛ զգոյշ լեր 'ի մեղաց, որովհետեւ բնաւքն յայտ յանդիման խայտառակեսցին. և զբնաւիցն խնդրեսցի համար մանրաղնինն :

4. Արդ՝ ոչ է առնելոց զայս հաշիւ վեր 'ի վերոյ առհասարակ. այլ և զփոքունս մեղս ը̅ դրով արկանէ մի ը̅ միոջէ: Ասա դու ցիս. ո՞վ է տանուտէրն այն, որ յառնուլ զհամար տնտեսութեն հազարապետի տան իւրոյ, խնդրեսցէ 'ի նմանէ զհամար նաև զասարեաց պատենից. և 'ի գանձապետէ իւրմէ; խնդրեսցէ զհամար նաև զփողոյ միոյ. եթէ ուր արդեօք ծախեաց զայն: Ուստի և մարդկային խելօք կարգեցաւ, զի դատաւորք ոչ խնդրեսցեն զհամար վ͞ն փոքունց իրաց: Բայց սակայն չէ սահմանեալ այսպէս 'ի դատաստանի տ͞ն, զի անդ այնչափ մանրաղնին համար պահանջեսցի վ͞ն իրաց փոքունց, որչ͞ վ͞ն ծանունց: Պատմեն բազումք առ 'ի զայն զայս հաստատել. թէ էին միայնակեացք երկու սրբակեացք, որք սերտ սրտիւ մերձէին զմիմեանս. և եղև զի մեռաւ մինն, և մինչդեռ կայր միւսն յաղօթս, երևեցաւ նմա մեռեալն լի անտանելի տըրտմութբ, և զգեցեալ հանդերձս անարգս: Եհարց ցնա կենդանին, և

ասէ, զի՛ է քեզ եղբայր. զի կաս տրտում. և զի պգեցեալես այդպէս: Պատասխանի ետ նմա երիցս անգամ. և ասէ. ոչ ոք հաւ̂ատայ, ոչ ոք հաւ̂ատայ. ոչ ոք հաւ̂ատայ: Յայնժամ ասէ ցնա ընկերն, մեկնեա ինձ թէ զինչ կամիցի այդ լինել: Պատասխանի ետ մեռելոյն. և ասէ, չէ ոք, որ մարթասցի իմանալ. և հասու լինել, թէ որչափ վ՟ն իրաց մանունց համարս պահանջէ ա՟ծ. և որչափ անհնարինս պատժէ վ՟ն նոցա: Ե̂ զայս ասացեալ անյայտ եղև:

5. Ե̂ արդ յայնմանէ, որ պատահեցա̂ւ բազմաց ծառայից ա՟ծ, մինչ դեռ ն՟ք յաշխարհի էին. կարէ փոքր 'ի շատէ իմացեալ լինել սաստկապահանջ համարն, զոր առնլոց է տ՟ր զկնի մահու̂ան: Պատմէ Յօհաննէս Կղիմաքոսն, թէ էր միայնակեաց ոմն ստեփաննոս անուն, որ յետ բազմամամանակեայ խստակրօն վարուց, և միակեցական ճգնութեանց. և յետ ստանալոյն զշնորհս արտասու̂աց, և պահոց և այլոց մեծամեծ առաքինութեանց, ել 'ի հանդարտութէ վանից առ ճգունս անապատական վարուց. և շինեաց զսենեակ առ ոտամբ լերինն քորեբայ, ուր երբեմն երևեցա̂ւ տ՟ր Եղիայի: Ե̂ զի կամեցա̂ւ առաւ̂ել խստակրօն ճգնութէ՟ վճարել զկեանս իւր, փո-

խեցա՛ւ անտի 'ի տեղին, որ կոչիւր Մի դէս , ուր բնակէին անապատականք եւեթ : Որոյ մերձենալ յամ ընկերակցուէ մարդկան՝ բնակեցա՛ն առանձինն հեռի յամ բնակութենէ մղոնս աւելի քան զեօթանասուն : Ե՛ս յետ ը̃երկար բնակելոյն անդ անտանելի ձգամբք, և վշտօք, դարձա՛ւ անտի յառաջին սենեակ մ̃ք վանիցն , ուստի ելեալն էր , առ 'ի կատարել զկեանս իւր անդ : Ե՛ւ էին ը̃ հովանեա՛ւ խրատուց ն̃ր աշակերտք երկու յերկրէն պաղեստինեայ. ընդ որս իբրև եկաց ա՛ւուրս ինչ . անկա՛ւ յախտ մահու : Արդ՝ ա՛ւուրք միով յառաջ քան զմեռանելն եկաց մնաց յապշութե . և 'ի սոսկալի սասանմանն . և անքթիթ ակամբ հայէր մերթ 'ի մի կողմն . և մերթ 'ի միւս կողմն մահճին . և որք զնովաւ նստեալ կային ուշ եդեալ 'ի նա հայէին : Ե՛ւ ապա սկսա՛ւ նա խօսիլ իբրև առ այնոսիկ, որք համարս պահանջէին 'ի նմանէ . պախնի տայր . և ասէր . արդարև այդ այդպ̃ է, այլ ես վ̃ դորա իսկ պահեցի ամս բազումս : Ապա միւսանգամ ասէր . ոչ է ճշմարիտ , սուտ ասէք , չարարի երբէք այդպիսի ինչ : Յետ սակաւուց դրձլ ասէր . չժխտեմ զայդ, այլ վ̃ դորա հեղի զաղբիւրս արտասուա՛ց . և ցուցի առ ընկերս իմ զայնչափ գործս սիրոյ : Ապա նոյնհետայն

յաւել

յաւե՛լ ասել. յայդմ չունիմ զդիմակալ ինչ ձերումդ ամբաստանութեան, բայց ՚ի յողորմութէ տն ։ Եւ էր արդարև տեսիլ իմն սոսկալի. և սարսափելի տեսանել զանտեսն զայն սաստկապահանջ դատաստան։ Այլ աւա՛ղ ինձ թշուառականիս, ասէ աստանօր մի Հայրն Յօհաննէս. զի՛նչ լինիցի ապա և ինձ, որովհետև անապատասուննս մեծ. և հանդարտեալն ՚ի ծուլածուփ կենցաղոյս ասէր. ոչ գիտեմ. զի՛նչ տաց առ այդ պխնի։ Եւ էր Նր կեցեալ ՚ի միայնակեցութե անդ ամս քառասուն, և ստացեալ զպարգևս յորդահոս արտասուաց։ Ա՛ւաղ [illegible] եղկելույս, աւա՛ղ թշուառականիս։ Յաւե՛լու ասել սուրբ Հայրն, եթէ էին ոմանք, որք ասէին ցես հաստատելով. թէ տեսեալ է մեր զայս Հայր տալ ձեռամբ իւրով զկերակուր ամեհի ընձառիւծու միոջ, մինչ կայր Նա յանապատի անդ. և սակայն ՚ի մեկնիլ Նր յաստեացս խընդրեցա՛ւ ՚ի Նմ՛նէ այնպիսի սաստկպ՛հնջ համար. որ զմեզ յերկիւղս ընկեց, եթէ որպէս եղև վճիռ իրաւա՛նց Նր։

6. Գրեալ կայ ՚ի ժամանակագիրս եղբարց Մինորից, թէ Նորընծայ ոմն ՚ի կարգէ մի հօրն Ֆրանչիսկոսի, իբրև եհաս յելս կենաց իւրոց, և մե քառեր ը մահուա՛ն, աղաղակեաց սոսկալի ձայնիւ՛, և ասէ, վայ ինձ. ե-

քանի թէ չէր ծնեալ բնաւ երբէք: Ապա յաւելեալ իսկոյն. և ասէ, կշռեմ արդարութեամբ: կրկնեաց անդրէն, և ասէ, դի՛ր փոքր ինչ և յարդեանց չարչարանաց Տեառն իմոյ: Ապա նոյնհետայն ասէ. արդ բարի է այժմ: Իսկ եղբարքն հիացեալ ապուշ կային, տեսեալ եթէ պատանեակ ոմն անմեղ և արդար բարբառէր 'ի ձայն ահեղ զսոսկալի բանսն զայնոսիկ: Այլ իբրև յուշն դարձաւ, հարցին զնա. եթէ զի՞նչ էր աղաղակն այն. և զի՞նչ էր մեկնութիւն բանիցն: Եւ նա ետ պատասխանի այսպէս, և ասէ, տեսի յանաչառ դատաստանի Տեառն. զի խնդրէին զմանրաքննինն, և զսաստիկ համարս յաղագս դատարկ բանից. և յաղագս ամենայն բանի փոքու. և զի կշռէին այնպէս ճշդիւ և անվրէպ, մինչզի բարեգործութիւնք իմ հանդէպ մեղաց իմոց թեթև ինչ երևէին. և գրեթէ ոչինչ. և վասն այսորիկ աղաղակեցի 'ի ձայն ահեղ և ցաւագին: Ապա տեսի, զի կշռեալ լինէին չարիքն մեծաւ զգուշութեամբ. և զբարիսն ոչինչ համարէին. և վասն այսորիկ ասացի զերկրորդ բանն: Տեսեալ ապա, թէ սակաւ էին բարիքն. և գրեթէ ոչինչ, ասացի զերրորդ բանն: և զի արդիւնք չարչարանաց Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի ծանրեցին զթաթ կշռոյն, ուր կային գործք իմ բարիք, վասն այնորիկ հատաւ վաղվաղակի վճիռ վս՟ իմ 'ի բարին : Եր՞ վս՟ այնորիկ ասացէ , արդ բարի է այժմ : Եր՞ դուք գրեսջիք զայս 'ի մատեանս . և զայս ասացեալ՝ աւանդեաց զոգին 'ի ձեռս արարչին իւրոյ:

Յօդուած երրորդ:

1. Երրորդ հայելին սարսափելի զոր ունեցին մեղաւորք 'ի ժամու մահուան իւրեանց է տեսանել, և ճանաչել, եթէ ապերախտք գտան անբաւ բարերարութեցն այ՟ : Զայն զայս ծանոյց մարգարէն դանիէլ. յոր ժամ ասաց, եթէ գետ հրոյ յորդեալ ելանէր առաջի նր՟ . որով ցուցանէ մեզ թէ իբրև զյորդահոս գետ դիզացեալ կան բարերարութիւնք տն՟ . զորս հաղորդէ, և հեղու . և առատաձեռն պարգևէ ար՟ծոց իւրոց: Իսկ աւելն, թէ յայնմ աւուր յորդեղաց գետս այս է հրեղէն՝ ծանուցանէ մեզ զ[illegible]ակութէ խստութեանցն , որով պարտաւորս առնեն յոյժ բարերարութիւնք տն՟ զմեզ առ նա , և միանգամայն ծանուցանէ զլուսաւորութիւն . որով պարտիմք ճանաչել, թէ զինչ հատուցաք բարերարութեց տն՟ , և կալ յերկիւղի և 'ի դողութէ վս՟ ապերախտութէ մերոյ: Երկեցեն, և զարհուրեսցին, և ցնո-

ընացին ապաքէն մեղաւորք 'ի տեսանելն, եթէ արար նմ̅ ա̅ծ զայնչափ և զայնպիսի բարերարութիւն, քան զորս կրեթէ չկարէր առնել աւելի. իսկ նք̅ ը̅դ վայր կորուսին զայն ամենայն:

2. Այժմ ձեռնարկցուք բացատրել մի ըս̅ միոյէ զբարերարութիւնս ա̅յ: Արդ առաջինն է ստեղծագործութեն պարգև, զոր նշանակեալ եցոյց մեզ Քս̅, յորժամ ասաց զտանուտեառնէն, եթէ տնկեաց այգի, Եւ իրաւի զինչ կարէր ա̅ծ առնել քեզ աւելի քան զայս, որովհետև ստեղծագործութին ետ քեզ զհոգի և զմարմին. և երբև զայդի վայելուչ տնկեաց զքեզ յդ̅ի:

3. Արդ զինչ է այս, զի եթէ չունէիր դու զձեռս, և շնորհէր ոք քեզ ձեռն, մեծա̅պ շնորհակալ լինէիր զնմանէ. իսկ այժմ ամենևին չգոհանաս զն̅նէ, որ առեալ է քեզ ոչ միայն զձեռս, այլև զսիրտ, զհոգի. զկեանս և զքեզ իսկ զլիովին: Տես թէ զինչ էիր յառաջ քան զլինիլդ. ոչ ապաքէն ոչ ինչ. իսկ այժմ սեփականեալ ունիս զայնպիսի ազնուագոյն գոլ, քան զոր չիք 'ի տարրական [illegible] լաւագոյն:

3. Ասեն իմաստասէրք, թէ անբաւ տարածութիւն է յանգոյից առ գոյութիւն. կամ 'ի չգոյէ 'ի գոյ. վ̅յ տես թէ ուստի եհան զքեզ ա̅ծ: Արդ ապերախտական ես անհնարին ստեղծողին

քում ոչ միայն յաղագս տալոյ քեզ զայսպիսի ազնուագոյն գոլ. այլ և յաղագս տալոյ քեզ զայն յաւիտենական և անբաւ սիրով, ընտրութեամբ, և արարչագործ ձեռամբն զքեզ 'ի միջոյ անհամար մարդկան, զորս ստեղծանել կարօղ էր : Եւ զայս ամ արար քեզ առանց երբեք քոյդ արժանաւորութեան : Եւ դարձեալ ոչ միայն ստեղծ զքեզ ընտրութեամբ, և ետ քեզ զգոլ ազնուագոյն. այլ և ստեղծ զքեզ վս գերբնական երանութեան, որ 'ի վեր է քան զբնութիւն քո. և ունկեաց 'ի քեզ զգերագոյն վախճանն վերջին. զի զանեզրական ստացումն արարչին, և այսպ չիք արարած, որ 'ի գերազանցութեն քոյդ վախճանի զանցանիցէ զքեւ : Տեսանե՞ս, թէ զինչ այլ ինչ կարօղ էր առնել ած, զոր ոչ արար քեզ : ուստի վս այսր բարերարութեն ևեթ՝ արժան է առնել զամ ինչ, մինչև զաչացն խսկ զթարթափել. և զձեռացն զշարժել միայն վս այ : Տես զի այգեգործ ոք, որ ունկէ զծառ, ունի իրաւունս 'ի վր իւր պտղոյ նր. ապա ուրեմն և ած որ իբրև այգի վայելուչ ունկեաց զքեզ ստեղծմամբ, իրաւունս ունի 'ի վր գործոց քոց, որք են պտուղ քո : Վն այսորիկ ի հնումն կախեալ կային 'ի հանդերձից քահանայապետին, (որ ցուցանէր զայս ստեղծագործուն զբարերարութն) բաղում՝ զարդք 'ի ձև նռան, որ է չքնաղագոյն պտուղ 'ի մէջ այլոց պտղոց . և ունի զպսակիկ ինչ 'ի գլուխ իւր , առ 'ի ցուցանել քեզ, թէ զորպիսի պտուղս բարեգործուն առնելոց ես վն այս պսակելով զնա կատարեալ և ամենայնիւ:

դիտաւորութի:

4. Արդ՝ թէպէտ մեծ է ստեղծագործութեն բարերարութի · սակայն մեծագոյն է պահպանողութեն բարերարութի, որով պահէ զքեզ մինչև ցայժմ, և մնայ դարձի քում, և ոչ դատապարտէ զքեզ բիւր անգամ 'ի դժոխս վն մեղաց քոց : Տե՛ս թէ զքանիս յետ միանգամ մեղանչելոյն դատապարտեաց 'ի գեհեանն խաւարին, և ոչ պահեաց զնս 'ի կեանս: Ուստի եթէ դէպ լինէր ումանց 'ի նոցանէ հասանել թողութե, մինչ էին 'ի կեանս յայս, արդարև զանբաւ երախտիս ցուցանէին առ բարեգործ տրն իւրեանց զոր դու ամենևին ոչ առնես : Տե՛ս զբազմութի այնչափ հրեշտակաց, զորս վն առաջին մեղացն ընկէց յերկնից 'ի գեհեանն անշէջ, և ոչ մնաց ապաշխարութի նց, այլ այժմ մնայ քումդ ապաշխարութե : Այլ տես, թէ զիարդ առաւել պարտական ես նմա վն պահպանողութեն, քան թէ վն ստեղծագործութեն: Վնզի 'ի պահպանողութեն

կա

ետ քեզ զնմին, զոր ետ 'ի ստեղծագործութեն անդ. և բաց յայնմանէ զայն ևս, զի մինչդեռ թշնամին էիր. և կմ որ այժմդ ես, համբերէ քեզ. և զգուշութբ պահպանէ զքեզ: Ընդունիլ զստեղծագործութեն բարերարութի թէպէտ չէիր արժանի, բայց չէիր ևս անարժան. այլ սակայն յոլով անգամ անարժան դատար բարերարութեն պահպանողութե:

5. Բայց սակայն անցանէ զանցանէ քան զսոքօք բարերարութի մարդեղութե բանին այ, զոր ծանոյց մեզ Քն յասելն, թէ ապա առաքեաց ամենատէրն յայգին զորդի իւր: Հայեաց, եթէ կարող էր ած առնել ինչ աւելի առ փրկութի քո, քան թէ առաքել զորդին իւր միածին յ՟ առ 'ի մարդանալ վս քո: Ոչ կարէր ամենազօր բազուկ ան առնել զգործ ինչ մեծագոյն քան զայս, ոպ ասեն վրդպք. զի զոր ոչն արար վս հրեշտակաց, արար զայն վս քո. և այն զի սերովբէք և քերովբէք առաւել սիրէին զնա քան զքեզ: Տէր զի կարող էր փրկել զքեզ առնլով և զհրեշտակային բնութի. սակայն ոչ զայն, այլ զմարդկային էառ առ 'ի չզրկելոյ զբնութի քո յայնպիսի մեծաշուք պատուոյ: Եւ եթէ ճշմարիտ է այն, զոր ասեն ոմանք 'ի վրդպաց, թէ պատճառ անկման հրեշտա-

տակաց եղև այս, զի ոչ կամեցան հնազանդիլ խոնարհագունի բնութե՟ն քան զիւրեանցն, յորժամ առաջի եդ ն՟ց ա՟ծ երկիրպագանել մարդոյ, որ միանգամայն էր և ա՟ծ, և վեհագոյն քան զդասակարգութիւ ն՟ց: Տե՛ս թէ որչափ պարտական ես ա՟յ յաղագս մարդանալոյն ն՟ր վ՟ն քո. Ո՛վ զի մի՛ կորիցես դու, թէև կորիցեն անհ՟ր հրեշտակք լաւագոյն քան զքեզ: Հայեա՛ց ևս, զի սովին բարերարութ՟ եհան զքեզ 'ի մեղաց, և 'ի դժոխոց, յորժամ անյոյս էիր 'ի մարդկային օգնութենէ: Հայեա՛ց. զի վերացոյց զքեզ 'ի շնորհս իւր, և արար զքեզ ժառանգորդ երկնից: Հայեա՛ց յեղանակն, որով զայս ա՟ծ արար, տես որպիսի սիրա սիրով. և որպիսի խոնարհութ՟բ, զի զանձն ունայնացոյց ը՟ս առաքելոյն. առ 'ի առնել զքեզ գերապանծ, և գերաշխարհիկ. և զի ոչ 'ի հարկէ. այլ վ՟ն պատուելոյ զքեզ էառ զբնութի՟ քո. և ոչ զհրշ՟տկի: Նայեա՛ թէ զինչ արար ա՟ծ առնելի վ՟ն քո: և տես, թէ զինչ առնելի կարասցես առնել դու վ՟ն ն՟ր քան զայն, զոր առնես: Ո՛ւր թողից և զսքանչելափառ զփրկութե՟ն մերոյ զբարերարութիւն, զոր արար ամենողորմ տ՟րն մահուամբ և չարչարանօք միածնին իւրոյ. ո՛վ և նոյն ինքն միածին յառաջքան զմեռանիլ իւր ծանոյց մեզ յասելն, եթէ որդի տանուտէն, զոր առաքեաց յայգին, սպանաւ ՚ի խնդրելն զպտուղ այգւոյն։ Զինչ այլ ինչ աւելի քան զայն կարէր առնել վ̅ս քոյ որդին ա̅յ, որ մեռաւ, և արեամբ իւրով փրկեաց զքեզ։ Քանզի թէպէտ հարկաւոր էր մարմնանալ որդւոյն ա̅յ, առ ՚ի փրկել զքեզ ըստ խստագոյն պահանջմանն արդարութ̅ե. բայց չէր հարկաւոր մահուամբ խաչի փրկել զքեզ։ Եւ տես զայն գերահրաշ, և զանճառելի եղանակն, արդ. որ և կամեցաւ չարչարիլ, բայց ոչ ո՛ և իցէ եղանակաւ, այլ հաճեցաւ առնել զայն այնպէս գերազանցօրէն, մինչզի թուի՝ թէ չկարէ ոք տանջիլ յշ̃ի աւելի քան զայն։ Արդ՝ ե՛լ մտացդ աչօք ՚ի լեառն գողգոթայ, և հայեա՛ց ՚ի խաչեցեալն Ք̅ս. և տես եթէ զանի քան զնա այր վատահամբաւեալ և անարգեալ. զի եղաւ ՚ի մէջ երկուց աւազակաց, իբրև այն թէ խռովէ զժողովուրդն, ուսուցանէ ն̅ց վարդապետութիս մոլարս, ապստամբ է ՚ի կայսերէն, առնէ զանձն թագաւոր, ամբարիշտ է, և խաբեբայ. և մոլորեցուցիչ։ Եւ տես, զի այսոքիկ են այնպիսի յանցանք, որք ոչ միայն վատահամբաւ առնեն զգործօղն, այլ և զբովանդակ ազգատոհմն ն̅ր։ Հայեաց եթէ որպիսի դառն աղքատութ̅բ մեռաւ.

ուա՞ծ. և զայն յանձն էառ, զի դու տեսցես, եթէ նա կարող էր առնել ինչ աւ՞ելի վ՟ն քո, և ոչ արար: Զի մինչ կենդանին էր, չունէր զտեղի ուր դիցէ զգլուխ իւր. սակայն ունէր զհանդերձս, որով ծածկիւր վայելչապ՟ս, բայց ՚ի մեռանելն չունէր և զհնոտիկ կապերտիկ ինչ առ ՚ի ծածկել: Ոչ տուա՞ւ նմ՟ և կաթիլ մի ջրոյ առ ՚ի զովացուցանել զլեզու ն՟ր: Ոչ կարաց հանգուցանել զգլուխ իւր: Ե՞ պակասեցա՞ւ նմա և գետինն իսկ. զի ՚ի մեռանելն և ոչ զմի ՚ի յոտիցն ունէր ՚ի վ՟ր ն՟ր: Հայեաց, եթէ որպիսի անտանելի ցաւօք մեռա՞ւ, զի յոտից մինչև ցգլուխն կայր անընդհատ ՚ի տանջանս ցաւագինս. ոտք և ձեռքն էին բևեռեալ, և գլուխն փշով պսակեալ: Ե՞ զայս ա՟մ կրէր ՚ի ծայրագոյն, և ՚ի խանդակաթ սիրոյն, որ առ քեզ: Հայեաց ապա և յայն, զոր և դու պարտիս առնել և կրել վ՟ն ն՟ր. որ կրեացն, և արար վ՟ն քո, զոր ինչ կարէրն: զի կարող է ա՟մ, զոր և կամի:

6. Յետ ա՟մ բարերարութե՟ցս այսոցիկ խորհեաց և զայն դորովական և կաթողին բարերարութի՟ն, որով ետ մեզ զանձն ՚ի կերակուր յամեն՟ ամք հաղորդութե՟ն որդւոյն ա՟յ: Զի արդարև մեծ էր, և ՚ի նշանակ մեծի սիրոյ, զոր արար Հայրն

երկնաւոր՝ յորժամ եւս զորդին իւր միածին առ 'ի մահ վն̃ սիրոյ մերոյ : Բայց ահա և որդին միածին եցոյց մեզ զայլ մեծագոյն նշանակ սիրոյ. և որ է այն, խորհուրդն ամենասր̃ հաղորդութեն̃. զի նովաւ 'ի մեզ բնակի, և մեք 'ի նմա: Վյ̃ և կոչեցաւ խորհուրդս այս յոմանց վարդապետաց ծաւալ լայնատարած ներմարդկութեն̃. զի 'ի նմա տեսանի տնօրէնութեն̃ կենագործ չարչարանացն, և է համառօտութի̃ իւր և յիշատակ սքանչելեացն այ̃: 'Ի սմա եղ արդարև որդին այ̃ զկատար սիրոյ իւրոյ. և աստ առաւել ցոյց ըստ կերպի խօսակցութեն̃ մերոյ զբարերարութիւն աստուծոյ, որովհետև տալով զինքն 'ի կերակուր, մատնէ 'ի սիրտս մեր 'ի զարթուցանել զսէր մեր առ ինքն : Ուստի և կարէ յարմարել առատանօր այն երգն. զոր երգեաց Անակրեոնտոս, թէ Սիրոյ աստուածն սքանչելի, յելանելն անդ 'ի կուլի մարտի, ընդ թշնամեաց բազմապիսի, այսուիկ զտաւ քաջ կորովի : Զի երբ զնետսն ապառեաց, և ոչ նք̃ եղեն յաղթած, 'ի ծոց նց̃ անց բնակեաց. որով եպառնց̃ յաղթեաց : Արդ՝ զայն զայս կարեմք յարմարել բանիս մերում. զի զի՛նչ այլ ինչ էին բարերարութիւնք ան̃, եթէ ոչ նետք սիրոյ, որով մարդն

ու

ոչ լինէր յաղթ՟հրեալ· այլ կայր և մնայր ՚ի խստութեան կռուում: Վ՟նզի ոչ պարտեցաւ· և հպատակեցաւ մ՟ն, ոչ անեղծագործութ՟են բարեկարգութ՟ե· ոչ պահպանողութ՟են երախտեօք, ոչ ներմարդկութ՟են պարգևօք· և ոչ չարչ՟րանացն արդեամբք, այլ այն շնորհօք ամենազօրխորհրդոյ Յ՟ց Քրիստ՟ ընկճեալ և յաղթեալ· որովհետև սովիմք մտանէ որդին աստուծոյ աղբիւրն սիրոյ ՚ի ծոց Նր՟, և իբրև զհրեղէն նետ թափանցէ մինչև ՚ի ներքս ՚ի սենեակ սրտին· և զարթուցեալ ընդոստուցանէ զսէր Նր՟· իսկ թէ ոք և ոչ սովիմք պարթիցէ, տես թէ ո՛ր խստութի անաչառ դատաստանի· և որ անհրաժեշտ պատիժ դառնութ՟ց ոչ դանձեալ պահեսցի վ՟ն Նր՟: Վ՟ս այսորիկ երանեմք ասաց սրբն Պօղոս· Զի որ ուտէ և ըմպէ անարժանաբար, դատաստան անձին իւրում ուտէ· և ըմպէ· ց՟ արբցէ· և կլցէ զամենայն խստութի ատ՟այլին դատաստանաց:

7. Արդ՝ վ՟նչ պատասխանի տալ կարող լիցէ մեղաւորն, յորժամ պահանջեսցի ՚ի նմանէ համար ոչ միայն վ՟ն եղանութեն Նր՟, և վ՟ն կենացն, այլ և վ՟ն աստուծոյ, ց՟ վ՟ն մարդեղութեն, վ՟ն չարչարանաց, և վ՟ն կենաց և մահուանն Քր՟ փրկչին մերոյ, և վ՟ն բաղում անդամ ընդունելոյն

լոյս զկենարար մարմինն· և զարիւն նր՟։ տե՛ս զհամբոյր երկուցեալ սատանի սպանօղն յորժամ տեսանէ զմահ այլոյ չարագործի· մի՛ գուցէ և ինքն ըմբռնեսցի· և հատցի ՚ի վր՟ նր՟ վճիռ մահու։ Այս նա, որ պտուղն է կենաց ծառոյ, զհամբոյր ոչ սատանեալ դողայ։ Ո՞վ կարիցէ անբասիր առնել զանձն· յորժամ նստեալ տ՟ր յաթոռ դատաստանց, յանդիման հարկանիցէ նմա զայս· և զայլ ամ՟ բարերարութիս ընկալեալ ՚ի նմանէ։ Զի ո՞չ ասէ սր՟ Ոսկեբերանն, ասասցէ ցնա այսպ՟։ Մինչ ոչն էիր, արարի զքեզ և եղեր· և փչեցի ՚ի քեզ զհոգի անմահ, և արարի զերապատիւ· և զերազանց քան զա՟մ երկրաւորս։ Վ՟ն քո հաստեցի զերկինս, զծով, և զցամաք· և զա՟մ արարածս։ Իսկ դու անարգեցեր զիս, և արհամարհեցեր աւելի քան զբանսարկուն· այլ ես ՚ի վր՟ այսր ա՟մ յաւելի զբիւրնորոդ պարգևս ՚ի վր՟ յառաջագունիցն։ Վ՟ն քոյ տ՟րս և ա՟ծս, եղէ ծառայ և բատրուկ· անարգեցայ, ապտակեցայ, զթուք նախատանաց յերեսս ընկալայ· և դատապարտեցայ ՚ի տանջանս չարագործաց։ Ես վ՟ն փրկելոյ զքեզ յանեզրին մահուանէ, համբերի խաչի և մահու· և ապա ելի յերկինս լինել վ՟ն քոյ բարեխօս, և առաքեցի քեզ զսր՟ Հոգին, և հրաւիրեցի զքեզ յերկնից արքայութիւն։ Հաճեցայ լինել քեզ գլուխ, և փեսայ,

հո

հովիւ̂ և եղբայր․ յարկ․ և զգեստ մերկութեան․ կերակուր և ըմպելի ։ Ընտրեցի զքեզ ժառանգորդ յաւ̂իտենական փառաց․ և հանի զքեզ 'ի խաւ̂արէ մեղաց 'ի լոյս շնորհաց ։ Զի՞նչ կարեմք տալ պատասխանի վ̅ն անբաւ̂․ և ամենամեծ սիրոյն․ ոչ ինչ բնաւ̂ին, այլ կալ և մնալ կոր 'ի գլուխ․ լի ամօթով․ և զահի հարեալ վ̅ն ապերախտութեան մերոյ ։ և վ̅ն տալոյ մեր պղպատճառ դիւ̂ին, անարգել․ և դիւրեթէ ծաղր առնել զվաստակս փրկչին մերոյ, ատելով ։ Դու ստեղծեր զնա, ծնար վ̅ն ն̅ր, աշխատեցար․ և մեռար 'ի տանջանս ։ Իսկ ես չարարի ինչ վ̅ն ն̅ր , այլ յաւ̂էտ ծարաւ̂ի էի արեանն․ և կամէի նմա զբիւր չարիս․ և նա այսու ամ̅ին̂ ջանայ ինձ ծառայել, քան թէ քեզ ։ Դու պատրաստեցեր վ̅ն ն̅ր զանեզրական փառս, իսկ ես կամէի ածել 'ի տանջանս գեհենին․ և սակայն նա ինձ գտաւ̂ հաւ̂ատարիմ․իսկ քեզ մատնիչ և դաւ̂աճան ։ Թէ ես էի փոխանակ քոյ, չէի զնա ստեղծեալ․ և ոչ իսկ փրկեալ․ որովհետև գտաւ̂ ապերախտ այսչափ շնորհաց ։ Ո՞չ արժան է, զի ինձ տացի, և ինձ լինիցի, քան զի բազում՝ անգամ բիւրեղինկաւ̂ ինձ շնորհեցաւ̂ ։

8․ Բայց և զայս արժան է գիտել,

թէ ոչ միայն պահանջեսցի 'ի մէնջ համար յաղագս մեծամեծ և հասարակ բարերարութեանց, այլ և յաղագս փոքունց և մասնաւորաց, զ՟ի յաղագս բարի օրինակի, զոր տեսաք. յաղագս աստուածային բանից, զոր լուաք. յաղագս ներքին ազդեցութեան, զոր յոյժ ընկալաք. յաղագս մեր խորհրդոց, որոց արժանաւորեցաք. և այլն որ 'ի կարգի։ Զինչ կարեմք տալ պատասխանի յաղագս այսր ամ՟ի, և կամ զոր խրատուն ցուցանել։ Սարսափեցուք արդեօք 'ի սաստկապահանջ. և 'ի դառնակուռ դատաստանաց ա՟ծ։ Ո՜վ սարսափելի դողայլերանելին տալիկես, և ողբալի դառն արտասուօք և որոց հարցանելինն, պատասխանի տանել. Պարգևեսցէ մեզ ժամանակս այս. և ճշտագոյն պահանջեսցէ 'ի մէնջ, եթէ զայս ընդվայր կորուսցուք։

ԳԼՈՒԽ Ե:

Թէ նաև յառաջ հեշտանօք առնէ ա՟ծ զխստագոյն դատաստանն :

1. Արդ՝ ոչ զի ըստ արժանւոյն հասու լիցուք, թէ ոչ անաչառ դատաստան լինի հոգւոյն յելս յաստեաց, յառաջ բերցուք փոքր 'ի շատէ զխստութիւն, որով ա՟ծ դատէ զնս՟ 'ի կենանս յայս, որոց ողորմած է և գթած • զի իմաստասիրել մարթասցուք, թէ ապա որչափ խստագոյն եղիցի, յորժամ միայն արդարութիւն դատեսցէ: Վայ այսպէս բարբառի առ ժողովուրդ իւր 'ի ձեռն Եզեկիելի մարգարէին, և ասէ, Արդ այժմ 'ի մօտոյ հեղից զբարկութիւն 'ի վ՟ր քո, և կատարեցից զսրտմտութիւն իմ. և դատեցայց զքեզ ըստ ճանապարհաց քոց, և տաց 'ի վ՟ր քո զա՟մ պղծութիւնս ապականութեանց քոց: (Եզեկ. 7. 8.)

2. Բայց չէ այս մեծ ինչ, եթէ այսպէս խստագոյն դատէ աստուած զնս՟ • որք թողին զնա, և 'ի բաց կացին 'ի նմանէ, որովհետև նաև զնս՟,

որք նախանձախնդիրքն էին փառաց նր̃, դատեցաւ անաչառ և անողորմ խստութբ̃։ Զայս տեսանեմք ՚ի Յեսու քահանային մեծ յորդւոյն յովսեդեկայ, թէ որպէս մարգարէն զաքարիա ցուցանէ մեզ ՚ի նմա զդատաստան տն̃։ Եւ՛ զիա՞րդ. զի ասէ։ Եւ՛ եցոյց ինձ տր̃ զյեսու քահանայ մեծ, զի կայր առաջի հրեշտակի տն̃, որ առնէր զդատաստան. և սատանայ կայր ընդ աջմէ նր̃ չարախօս լինել զնմանէ, յեսու զգեցեալէր հանդերձս աղտեղիս, և կոչեաց զնա տր̃ խանձող մի զերծեալ ՚ի հրոյ։ Արդ՝ եթէ առաջի հրեշտակին յամօթ եղև քահանայապետն նախանձախնդիր վն̃ ունելոյ հանդերձս աղտեղիս. և երևեցաւ՞ իբրև խանձող մի զժոխոց. ապա որում նմանութն̃ նմանեցուսցէ ՚ի տնէ իւրմէ մեղաւո՞րն այն, անօրէնեալն չարաչար, և արհամարհօղն ծածկելին պաշտաման. և զինչ դատաստան եղիցի վն̃ նր̃։

2. Զայս քաջ նշանակեալ եցոյց մեզ ՚ի գիրս յայտնութն̃ տրն մեր Յս̃ Քս̃ի, որ դատեաց զեօթանեսին եպիսկոպոսունս, որք դեռ կենդանիք էին և գտանէին ՚ի մէջ նց̃ արք ընտիրք, և հաւատարիմ ծառայք տն̃, ո՞չ էր սբ̃ն Տիմոթէոս սիրելի աշակերտ սրբ̃յն պօղոսի. սբ̃ն Պօղիկարպոս. Կոնա-

դրա

դըրատոս․ Կարպոս․ և սագարիոս, ամենեքին այրք անուանիք, և սրբակեացք: Բայց զառաջինն տեսցուք, թէ ուր նստեալ կայր Քս՟ ՚ի դատել զնս՟, և զորպիսի դատաստան խոստութե՟ արար մն՟ նց՟: Կայր ՚ի մէջ եօթն ոսկի ճրագարանաց, լուսապայծառ և փայլակնացայտ ծագելեաց, որով ցուցանէր, թէ ոչինչ թագչի յերեսաց նր՟: Ունէր յաջ իւր աստեղս եօթն ճառագայթարձակս, և լուսատուրս: Այլ և առաւել արփիափայլ ճառագայթէին երեսք նր՟ ոպ՟ զարեգակն ՚ի միջօրէի, որով և ոչ մանրամաղ իրաց, շուրջ զնովաւ հնարէր թագչիլ, և աչք նր՟ ոպ՟ զբոց հրոյ թափանցէին առաւել քան զլոյս: Եւ թէպէտ այս ամ՟ վկայ էր անաչառ քննութե՟ն, որով որոշէ զամ՟ մեղս ՚ի դատելն, բայց առ ՚ի տալ մեզ զմեծագոյն և զկենդանի օրինակ, ելանէր ՚ի բերանոյ նր՟ սուր երկսայրի սրեալ, առ ՚ի ցուցանել զխստութե՟ գործոց իւրոց քան զամենեցուն, թէպէտ և բանքն իսկ էին իբրև զհատու սուսեր: Եւ միանգամայն ասացից․ էր յամ՟ այնմ՟ ահաւոր և սոսկալի, մինչև անկանել աւետարանչին առ ոտս նր՟ ոպ՟ զմեռեալ ՚ի յահէն․ թէպէտ և ոչ մե՟ րաբերեալ լինէին առ նա իբրև առ դատելի՝ այն ամ՟ խստութիք: Արդ՝

եթէ մի՛ ածատարանիցն տեսեալ միայն թէ տէրն ընդդէմ նմա, որոց ինքն զողորմութեն կամէր ցասուցեալ է, անկաւ կիսամահ յերկիր, և այն զի չէր սրտմտութեն այն ՚ի վր իւր. ապա զի՞նչ եղիցի. յորժամ յետ սաստեացս երևեսցի տէրն սրտմտեալ ՚ի վր մեղաւորին անյոյս անակնկալ յամ գթոյ ողորմութե։ Չաճատամ, զի թէ հնար էր մեռանիլ հոգւոյ, ընդ տեսանելն զայն ահեղ և զսարսափելի դէմս արարչին, նոյնհետայն չքանայրն։

3. Այլ այժմ տեսցուք, եթէ զի՞նչ դատին. կամ տեսին բոցանշոյլ աչք տն Յոր ՚ի քննել զգործս եօթնիցն այնոցիկ եպիսկոպոսաց, զորս կոչեաց տէրն Հրեշտակս։ Եգիտ արդարև բազում ինչ արժանիս կշտամբանաց ՚ի նմ, ոմ զի ճշգրտեալ արձանացի բան երանելւոյն Յոբայ, որ ասէ. եթէ եգիտ զթիւրութի ՚ի հրեշտակս իւր։ Ո՞վ ոք համարձակեսցի ասել, կամ խորհիլ, եթէ արժանի էր սպառնալեաց տն երանելւյն Տիմոթէոս հրեշտակն եփեսոսեայ, յոր յուսացեալն էր առաքեալն, մինչև ասել ցնա տն. Յիշեա՛ ուստի անկարն. և ապաշաւեա՛. ապա թէ ոչ՝ գամ վաղվաղակի. և մերժեցից զքեզ յեկեղեցւոյդ. եթէ ոչ ապաշխարեսցես. և ոչ ելցես ՚ի գաղջութէդ յառաջին ջերմութիւն։ Ե-

թէ եպիսկոպոսն Պերգամոյ, և հրեշտակն Թիւատրոյ · որ էր երանելին Կարպոս, յորդորեցին աշխատել ՚ի մոլորութենց և ՚ի մեղաց իւրեանց: Եւ՛ թէ եպիսկոպոսն Սարդինեայ · որ էր այր առաքինաշնորհ, ցուցցի ՚ի քնէ լինել ի մեղս մահուչափս: Այնպէս և եպիսկոպոսն Լաւոդիկեայ · զոր յոչ իմիք խիղճ մտաց իւրոց ստգտանէր · այնպէս երևեցի յաչս տեառն ա͞յ · մինչ զի կոչեցի ՚ի նմանէ՝ ողորմելի, հեղգ · և աղքատ · մերկ · և կոյր: Կ͞ա այսորէն բարւոք ասաց իմաստունն · ոչ գիտէ մարդ, եթէ սիրոյ կամ ատելութեն իցէ արժանի: Եւ՞ դարձեալ իրաւամբք ասաց · ՚Ի Ժողովողին Գլուխ Է̅. Համար ի̅ա̅: Չիարդ ապա ո՛վ մարդ մեղաւոր չերկնչիս յարդարադատ տնէ գոնէ ՚ի մ͞ի այնց մեղաց, զոր դուն ճանաչես: Այնչափ մանրազննին, և անաչառ եղև դատաստան տեառն առ եօթանեսին եպիսկոպոսունս, որք համարեալ լինէին մի մի հրեշտակ, մինչ զի գրեթէ ՚ի բնաւս եգիտ արժանի ինչ կշտամբանաց: Յումն զթուլութն · յայլ ումն զդաղձութն · յայլում զպոռնկութն, դարձեալ և յայլում զանկայունութն · ՚ի միւսումն զերկիւղ · և յայլ միւսումն զծուլութն և զանմտութն: Իսկ երկուքն ՚ի նոցանէ գտան պարտաւորք մահուչափ մե-

մեղաց: Արդ՝ եթէ 'ի հրեշտակայսաստիկ դասին աչք տեառն զբաղում յանցանս, ապա զի՞նչ գտցեն 'ի մեզ 'ի մեղաւորս:

9. Այլ դու ե՛կ և տե՛ս, զի՛ այնչափ օգտեաց նց̃ գիտելն՝ թէ դատեցան 'ի Քս̃է, մինչզի յորդորեալ մխեցան 'ի մեծագոյն ջերմեռանդութի. և որոց 'ի նոցանէ անուա՛նք ծանուցեալ են մեզ, գիտեմք, զի փոխեցան սըրբութի̃. և երբեմն մեծանուն սր̃ պատուին 'ի կաթուղիկէ եկեղեցւոյն: Ուստի և մեզ քաջ օգնէ առ 'ի ոչ գործել զմեղս ընդդէմ արարչին մերում, առ 'ի ոչ լինիլ գաղջ 'ի ծառայութե̃ նորա, և առ 'ի առնել զմեծամեծ գործս բարեաց և կատարելութե̃՝ խոկալն, թէ նաև մեք երբեմն զնո̃ ունիմք խստագոյնս դատիլ: Իսկ արդ՝ զի մի՛ լիցի մեզ լսել զայն, զոր ասաց Քս̃ միում 'ի նոցանէ: Այլ դու գաղջ ես, և ոչ ջերմ, և ոչ ցուրտ, հանդերձեալ ես փսխել 'ի բերանոյ իմմէ: (Յայտ. 3. 16.) մի՛ լիցին գործք մեր գաղջ գուցէ եղիցին տաղտկալի տեառն մերոյ. այլ լի և կատարեալ. այսինքն մի՛ լիցի սէր մեր առ սիրելիս, և ոչ առ ատելիս, զի չէ այս սէր կատարեալ: Մի՛ լիցի մեզ կամիլ բարիս միայն բարերարաց, և զզուիլ 'ի չարարարաց: Մի՛ միայն գործեսցուք

ղրարին , այլ համբերեսցուք չարեաց ։ Բարձցուք զծանրութն եղբարց մերոց · երբեք զմերս ։ Մի՛ նախամեծար արասցուք զկամս մեր քան զայլոց ։ Գիրկս արկցուք յօժարութբ ընդ վշտաց և ճգնաց առ ՚ի հաճոյ լինիլ այ ։ Եւ մի՛ միայն սիրեսցուք բանիւք զեղբարս մեր , այլ արդեամբք և ճշմարտութբ ։ Տե՛ս զի յայնժամ կատարեալ է խոնարհութն քո , յորժամ ոչ միայն փախչիս ՚ի փառաց · այլ և դիրկս արկանես նախատանաց · ոչ միայն նախամեծար չառնես զքեզ այլոց , այլ վերջադասես ամենեցուն ։ Տե՛ս , զի յայնժամ կատարեալ է համբերութն քո , յորժամ ոչ միայն համբերես դառնութն միոյ · այլ միւսոյ ։ Ոչ միայն տանիս համբերութբ , այլ ուրախութբ ։ Տե՛ս , զի յայնժամ կատարեալ է հնազանդութն քո , յորժամ ոչ միայն հնազանդիս դերադունից , այլ ծանունց և դժնդակաց · ոչ միայն քեզ հաւասարիդ , այլ և փոքրագունիդ , ոչ երբեք մարդոյ , այլ երբեք այ , զորոյ զփոխանորդութին յանձին բերէ · ոչ դժուարութբ , և ՚ի հարկէ , այլ յօժարութբ սրտի ։ Եւ ապա տե՛ս , թէ զի՞նչ ասէ Քս ցեպիսկոպոսն Սարդինեայ ։ Յիշեա՛ , զիարդ ընկալար · (Յայտ · 3· 3·) Տե՛սեր · զի ոչ ասէ , զոր ընկալարն , այլ յիշեա՛ ասէ զլսարդն և զորպէսըն ընկալընլըդ. քանզի 'ի բարերարուի̃ս ա̃յ ոչ միայն պարտաւո̂րս առնէ զմեզ խսկուէ̃ պարգևացն և տրոց, այլ և եղանակն. և հանգամանք նո̃ց։ Ուստի ո̃պ ած 'ի գործ էարկ զամենակարողութի̃ իւր վ̃ն օգտի քո̃յ. այսպէս և դու 'ի գործ արկ զհմ̃ զօրութի̃ և զկարողութի̃ քո վ̃ն փառաց, և ծառայուէ̃ նր̃։

ԳԼՈՒԽ Խ. Զ:

Յաղագս չափաւորածի ամ ժամանակի :

ԲԱց 'ի կատարածէ, զոր ունի մանաւ̂որ ժամանակ կենաց իւրաքանչիւր մարդոյ. ունի առ.հասարակ նա և բովանդակ ժամանակն վերջանալ. և ընդ նմա ամ ինչ: Վ͞զ ո͞պ ոչինչ են և անցական այնք, որովք բերկրի ոք 'ի կեանս իւր. այսպէս և ոչ ինչ, և անցական են, զորս թողեալ մեռանի, և յանկանայ ունիլ նոքօք գյիշատակ ինչ գոնէ զկնի մահուան: Քանզի թէ կանգնեսցէ ոք ապարանս մեծակառոյցս, թէ արձանս կձեալս և մեծամեծս, թէ շինեսցէ քաղաքս բազմամարդս. թէ թողցէ ընտանիս յոգնաթիւս. թէ գրեսցէ գիրս գիտնականս. և թէ քանդակեսցէ զանունն 'ի տախտակս պղնձիս, բովանդակքն վերջասցին: Վ͞զի քաղաքք հիմնայատակ տապալեսցին. արձանք յերկիր կործանեսցին, ազգատոհմք դադարեսցին. մատեանք հրով կիզցին. և անուանց յիշատակք ջնջեսցին. և ամ ինչ վերջացի, զի ժամանակն իսկ գլխովին դադարի : Թէպէտ ախորժէր ունել զհամբաւ պերճախօսին, և բանաստեղծն կիկերոն, յորժամ մի ոմն՟ ՚ի բարեկամաց իւրոց ստէպ խնդրէր ՚ի նմանէ գրել զդաշնակցութե՟ կատիլենեայ • (զոր տեսեալն էր), պերճաբանութ՟ ՚ի մատենի միում առ ՚ի թողուլ նովաւ զանուն քաջի առ յետագայս • բայց խոկալով նա զկատարածծիս, յորում ոչինչ փառք. և ոչինչ յիշատակ կարէ կալ և մնալ, ասաց (՚ի տեսիլսն շիպիոնի) : Յաղագս անդընդասոյզ խործանման, և հրայրեաց լինելոյ տիեզերաց, որում հարկ է լինել ապառնի յերում ժամանակի, ոչ զբազմաժամանակեայ, և ոչ զանեզրական ժամու սպառնալ մարդկան : Գրէ աւետարանիչն Յովհաննէս ՚ի գիրս յայտնութե՟, թէ տեսի զայլ հրեշտակ զօրաւոր, զի իջանէր յերկնից, և զգեցեալ էր զամպ • և ծիածան ՚ի գլուխ նր՟ • և երեսք նր՟ իբրև զարեգակն • և ոտք նր՟ իբրև զսիւն հրոյ : Եւ եդ զոտն իւր զաջ ՚ի վր՟ ծովու, և զձախն ՚ի վր՟ երկրի • և աղաղակեաց ՚ի ձայն մեծ և ահեղ, և գոչեաց իբրև զառիւծ : Եւ յորժամ աղաղակեաց խօսեցան եօթն որոտմունքն յիւրեանց ձայնսն ահեղագոչ • Եւ վաղվաղակի հրեշտակն, որ եդ զոտն իւր ՚ի վր՟ ծովու, և զմիւսն ՚ի վերայ ցա-

ցամաքի , համբարձ զձեռն իւր զաջ յերկինս ։ Եւ՞ արդ զի՛նչ են այս ամ՟ ցոյցք հրաշալիք ։ Եւ՞ առ ի՛նչ այլատարազ զգեստաւորութ՟ն , և տեսիլ սքանչելի զարդուցն ․ և ահեղագոչ թնդիւնք որոտմանցն ։ Եղև ամ՟ն 'ի քարոզ կատարածի և մահուան ժամանակի , և յանշուշտ ստուգութե՟ն նր՟ ։ Ուստի և հրեշտակն երդուաւ 'ի կենդանին յաւիտենից ․ որ հաստատեաց զերկինս , և զորս 'ի նմա , և զերկիր , և զորս 'ի նմա ․ և ասէ ․ Զի ոչ եւս կայ այլ ժամանակ ։ (Յայտ․ 10․ 6․) Տե՛ս արդ՝ թէ կարէ՞ր ճշմարտութիւն այս կատարածի ժամանակի ցուցանել աւելի ․ քան զոր եցոյց հրեշտակն մեծաշուք և մեծազօր երդմամբ հանդերձ

արդարև ոչ կարէր ։

2․ Եթէ մահ թագաւորի , կամ իշխանի միոջ գուշակեալ 'ի խաւարմանէ լուսաւորաց , կամ յերևելոյ գիսաւոր աստեղ , զարհուրեցուցանէ յոյժ զմարդիկ ․ ապա զոր սարսափ , զոր սոսկումն , և զոր սասանումն ոչ բերցէ մեզ մերձանալն աշխարհիս , և ամ՟ կենդանեաց ․ և ժամանակին իսկ է՟ աշխարհի ․ և այս անշուշտ քարոզութե՟բ , և ահեղագոչ ձայնիւ սքանչելատեսիլ հրեշտակին ։ Եւ՞ իրաւի այնչափ սարսափելի է առ մարդիկ մարգարէութիւն՝ որ վ՟ն կատարածի աշխարհիս ․ մինչզի թէ զայն չասէր հոգւոյն մր̄, ոչ ոք հաճատայր այնմ: Վն̄ այսորիկ և Քս̄ տր̄ն մեր յետ խօսելոյն ը̄ց̄ աշակերտսն զկատարածէ Յիս, երբև ետես զնս̄ 'ի խելս մարդկայինս տատանեալ, ա՛մարտեաց զբան իւր հաստատելով այնա՛ծիկ եղանակաւ՛ երդման զոր 'ի կէր առնոյր 'ի բանս կարևորս, վս̄յ ասէ, Ամէն ասեմ ձեզ, ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամ̄ եղիցի: (Ղուկ. 21. 32:)

3. Եւ՛ զի ճշմարիտ է այս, թէ նաև մշտնջենաւոր յիշատակք արանց քաջաց վերջանալոց են, որովհետև նաև մարդկայինս ազգ վերջանալոց է. փոյթ յանձին կալցուք կալ մնալ և եթ 'ի յիշատակս անեզրականս: Ուստի ը̄ ասելոյ մարգարէին, կացցէ արդարն յանեզրական յիշատակս ն̄յ: Զի յիշատակ մարդկան ստորանկեալ է կորստեան, ոպ̄ և մարդիկ ն̄մ:

ԳԼՈՒԽ. Է:

Թէ ոչ փոփոխին տարերք եւ երկինք ՚ի կատարածի աշխս:

Նկատեսցուք այժմ յեղանակն, որով աշխս վերջանալոց է, որպէս զի անհարկութիւն նորին դադարեսցուք ՚ի չարաչար վարելոյ կենդանականօքս: Քանզի չլինէր աշխս այսպէս լի թշուառութե՟, եթէ չլինէին գործեալ ՚ի նմա բազմութիւնք անօրէնութեանց եւ չարեաց: Պատմէ երանելին կղէմէս հայրապետն հռովմայ. եթէ ուսայ ՚ի սբ՟ առաքելոյն պետրոսէ, թէ ած՟ յաւ՟տենից հաստատեաց զօր, յորում բերել ՚ի մարտ պատերազմի գումարեսցին զօրք ամ՟ պատժոց. եւ զօրք ամ՟ յանցանաց: Զայս օր ահեղ եւ սոսկալի սովոր են ածային գիրք կոչել՝ օր տն՟: Վն՟ անհարկութե՟ այսր աւուր գոլով համեմատ չափու բազմութե՟ եւ ծանրութե՟ մեղաց, է յոյժ սարսափելի. ոչ ասեն սբ՟ գիրք. եւ սբ՟ հարքն: Եւ որպէս յառաջ քան զպատերազմն կանխեն ասպատակութիւնք հինից. եւ մա-

մասնաւոր մրցմունք. այսպ՟ և յառաջ քան զայն ահեղ օրն, յորում կռուեն պատիժք ը՟ յանցանաց, առաքեսցէ ա՟ծ փոքր փոքր զբազմազան թշուառութիւնս, որք իբրև զերիվարս թեթևս յառաջագոյն վազս առնեն ՚ի տեղի ճակատուն, ոպ՟ նշանակեալ եցոյց մեզ աւետարանիչն Յօհաննէս ՚ի գիրս յայտնութեան ՚ի հեծեալսն, զորս ետես ելանել՝ նստեալ՝ ՚ի ձիս, ոմն ՚ի ձի կարմիր, ոմն ՚ի սեաւ, և ոմն ՚ի շլոռաս։ Զի երբեմն առաքեսցէ զսով, երբեմն զժանտախտ. երբեմն զպատերազմ, երբեմն զդետնաշարժութիւն, երբեմն զմրրիկ, երբեմն զհեղեղս սաստիկ ամպրոպաց՝, և երբեմն զերաշտութիւն երկրի։ Արդ տես, զի եթէ այսոքիկ առժամս նեղեն այսչափ զմարդիկ. զի՞նչ եղիցի ապա, յորժամ անհնարինս բորբոքեսցի իբրև զհուր արդարութիւն ա՟ծային, և վառեսցին զինեսցին ա՟մ տարերք ը՟դէմ մեղաւորին, լինելով զօրագլուխ և առաջնորդ նախանձն ա՟ծային արդարութեան. ոպ՟ ասէ և իմաստութիւնն. Պատերազմեսցի խառն ընդ նմա և աշխարհս առ անզգամսն։ (Իմաստ. 5. 21.)

2. Բարւոք ասաց աւետարանիչն. թէ ցամաքեսցին յահէ մարդիկ իբրև զտերևս ծառոց, ՚ի տեսանելն զաւեր կործանմանն Հիս ՚ի կատարածի իւրում։ Քանզի ոպ՟ ՚ի մահուան մարդոյ, որ

է փոքրիկ Ճ, խռովին հիւթք, որք՚ի ներքս են իբրև տարերք նորա. խաւարին աչք, որք են իբրև արև, և լուսին. աներևոյթ լինին. այլ զգայութիք իբրև աստեղք մանրիկք, և շարժեսցի ՚ի ծըլխ նեաց իւրոց բանն՝ որ է իբրև զգօրութե̄ երկնից: Այսպ̃ ՚ի մահուան, ոպ̃ ՚ի կատարածի մեծի Ճիս, խաւարեսցի արև, դարձցի լուսինն ՚ի յարիւն, թօթափեսցին աստեղք. և Ճագլխովին շարժլեալ խորտակեսցի խորտակումն մեծ յաւաղ քան զվերջնայն, յորժամ մերձի ՚ի վախճան իւր: Եւ դու տե՛ս, զի եթէ արև, և լուսին, և այլ մարմինք երկնայինք, որք են անապականք, այսպէս փոփոխին. և խաւարին. ապա զի՞նչ լինիցին տարերք, որք կախեալ կան զնոցանէ, և ը̅ ինքեանց են փոփոխականք: Զի՞արդ յեղյեղեսցի յայնժամ օդն ՚ի բռնի խռովութեց ՚ի խաւարին մրրկաց, սաստկահնչիւն որոտ ը̅ որոտ թնդմանց, և ՚ի յահեղ արագընթաց շանթից: Զի՞արդ ահեղագոչ գետնաշարժութը̅ լիցի յերերի երկիրս առհասարակ. և բացեալ ՚ի բերս խոռոչս յորդեսցին հրաբուղխք մեծամեծք: Զի՞արդ բաժանեալ ը̅ մեծամեծս բարձրացեալ աշտապակաց, տապալեսցին. և քաղաքք ողջոյն յանդունդս սուզեսցին, և բարձրաբերձ լերինք հարթա-

յույատակ լիցին ։ Եւ զի՞նչ ասասցուք զծաղկաւ, յորժամ լեռնացեալ կուտակին այլք նո՟ր, և երևի, թէ ծածկեն արդ զերկիրս ա՟մ. Թէպէտ և ծածկեն բակ զբազում տեղիս ։ Գոչեսցէ ահագինս համատարածն ովկիանոս. և ահաբեկ արասցէ զորս բնակին 'ի միջերկրեայ գաւառս, ոպ՟ և Քս՟ ասէ ։ Եւ յերկրի տագնապ հեթանոսաց յահեղ բարբառոյ ծովու, և խռովութենէ, յելանելոյ հոգւոց մարդկան յերկիւղէ և 'ի կարծեաց եկելոց 'ի վ՟ր աշխարհս ։ (Ղուկ. 21.

3. Արդ՝ տես թէ զի՞նչ եղիցին յայնժամ մարդիկ 'ի խռովութենէ անտի ։ Ամենեքեան այլագունեսցին, սոսկասցեն, և կիսամահ յերկիւղ կործանեսցին, և չգտցի ոք զօրավիգ նց՟ ։ Ոչ կարասցեն զմայլել տեսութ՟բ միմեանց, և իւրաքանչիւր 'ի հայեցուածոյ ընկերին կրկին յերկիւղ անկցի, տեսանելով 'ի նմա զպատկեր մահու ։ Լռեսցեն յայնժամ վաճառք. դատարկասցին 'ի բազմութենէ հրապարակք, և ատեանք ։ Ոչ զհետ լիցի փառաց պատուամոլն, ոչ հեշտութեանց մարմնասէրն. և ոչ գանձուց ագահն ։ Ոչ ոք ախորժեսցէ մնալ յապարանս. ոչ ոք յիշատակեսցէ զուտել և զըմպել. այլ իւրաքանչիւր ոք փութայ զերծանել 'ի ջուրցն հեղեղաց. 'ի գետնաշարժ կործանմանց. և 'ի շանթից կայ-

ծա

ծականց, խնդրելով զտեղի ապահով: Ով մեծ ինչ համարեցի յայնժամ զազգատոհմն. ով զքաջութի՟ն. և ով զզգօնութի՟ն: Ո՛վ յիշեսցէ զգեղեցկութի՟ն: Ո՛վ զշնուցու 'ի կին: Ո՛վ զարմացեալ հայեսցի 'ի շինուածս մեծամեծս: Ո՛վ ընթերցցի զգիրս նրբութ՟ մտաց գրեալս. և ով սքանչասցի 'ի վ՟ր ուշիմութ՟ց մարդկան: Ե՛ւ թէ ա՟մ ոք զիւրան մոռանայ. զիարդ զայլոցն կարէ յիշել: Ո՛ւր յիշատակեսցի յայնժամ քաջութ՟ մեծին Աղեքսանդրի. իմաստութի՟ն Արիստոտէլի. և այլոց իմաստասիրաց. որոց համբաւն ծածկեալ թաղեսցի, և մեռցի ը՟ ծի 'ի յաւիտեան:

4. Տես թէ զիարդ նաւորդք և նաւաստք, յորժամ յալէկոծութ՟ մերձ են յընկղմել. ուշադնաց եղեալ սարսափին 'ի տեսանելն զխռովութ՟ ջուրցն ծովու. զոր պաղատանս, զոր ուխտս և զոր աղաղակս ոչ առնեն: Ո՞վ առ ոչինչ համարին զա՟մ երկրաւորս, որովհետև թափեն 'ի ծով զինչս իւրեանց, յորս տառապեցանն: Ապա զինչ եղիցին մարդիկ 'ի տեսանելն լինել վեր 'ի վայր ոչ միայն ծովու, այլ բովանդակ տիեզերաց: Զինչ արասցեն յայնժամ մեղաւորք, վ՟ս որոց լինին ա՟մ արհաւիրքս այսոքիկ:

Յօդուած Երկրորդ.

1. ԵՐկիւղն , որ պատեալ պաշարեաց զմիտ ինչ , յորժամ վառեցին արարածք ընդդէմ մեղաւորաց ցուցանի 'ի մասնաւոր փոփոխութե̃նց նց̃ . զի եթէ մասնաւոր պատահար ինչ՝ է այսչափ սարսափելի . զի՛նչ եղիցի ապա խուռն միաբանութե̃ ա̃մ թշուառութե̃ց և չարեաց։ Պատմէ կարդինալ Յակոբ Պաւ՛իացին , թէ 'ի ժամանակի իւրում յամի տ̃ն . 1456 . 'ի հինգեր̃դ աւուր դեկտեմբեր ամսոյ եղև դետնաշարժ մեծ 'ի բովանդակ թագաւորութե̃ Նապօլսոյ մերձ ը̃ արշալուսին իբրև ժամս երիս , յորում խորասոյզ եղեն բազում ամրոցք . և մեռան ոգիք իբրև վաթսուն հազար . կէսք 'ի փլատակս , և կէսք կլեալք յերկրէ : Արդ՝ զո՞ր ապահովութի̃ ունիլ կարեն մարդիկ 'ի կեանս յայս , որովհետև չեն ապահովք դէթ 'ի յերկրէ , զոր կոխեն : Որպիսի ամրութի̃ գտանիլ կարէ յաշ̃ի , որովհետև այն , որ մեզ երևի առաւել հաստատուն , է այսպ̃ անկայուն և երերուն : Ուստի չկարիցէ մահն պատահիլ . որովհետև ը̃ ոտիւք մերովք տեսանեմք ծնանիլ: Բայց չէ ինչ զարմանք , թէ դետնա-

շարժն 'ի միում թագաւորութեան կորոյս զայսչափ բազմունի · որովհետև զայն արար և 'ի քաղաքի միում ևեթ։ Քանզի գրէ Եւագրիոս, թէ յերրորդ պահու գիշերոյն, յորում առնէր զհարսանիս կայսրն Մաւրիկիոս 'ի քաղաքին Անտիոքայ եղև այնպ՟ գետնաշարժ սաստիկ · մինչ գրեթէ ամ՟ շենուածք կործանեցան, և մեռան 'ի փլատակսն ոգիք վաթսուն հազար : Արդ՝ եթէ 'ի մասնաւոր գետնաշարժս եղև երկիրն այնչափ անողորմ և դժնեայ · ապա որչափ դժնդակ իցէ լեալ յայն մեկ, զոր պատմէ Պլինիոս, թէ յամս Տիբերեայ կայսեր անդնդասոյզ եղեն 'ի գետնաշարժէ երկոտասան քաղաքք մեծամեծք 'ի յասիայ : Սարսափելի եղև և այն, զոր պատմէ Նիկիփորոս, թէ յամս Թէոդոսի կայսեր եղև գետնաշարժ ահեղ և ընդհանուր, որով կայր երկիրս յերերի ամիս վեց անընդհատ · և հասանէր շարժն 'ի քերսոնէ մինչև ցաղէքսանդրիա, 'ի բիւթանիոյ մինչև ցանտիոք · յելեսպոնտեայ մինչև ցփռիւգիայ · և 'ի ծագաց արևելից մինչև 'ի ծագս արևմտից :

հ· Եւ զինչ լռեսցուք պատմել նաև զգոռնուէ և զխստուէ ծովու ընդդէմ նոյ · որք ոչ գոլով 'ի վր՟ նր՟ համարին ապահով զանձինս, յառաջ բերցուք զայն ահեղ գետնաշարժն, զոր պատմեն սբ̃ն Հերոնիմոս , և ամմիանոս մարկեղինոս իբրև ականատես վկայք , թէ յետ մահուան յուլիանոսի ուրացողին երկիրս ամ̃ շարժեցաւ դողացա̂ւ . և ծովն եանց զկապարա̂ն խորով . և իբրև թէ եղև երկդ. ջրհեղեղ . և երկիրն կայր աներևոյթ իբրև զառաջինն . զի բարձրացա̂ւ յոյժ ծովն , և 'ի բազում տեղիս նա̂ւք նստան 'ի վր̃ լերանց : Իսկ 'ի յաղէքսանդրիայ բարձրացան ջուրք քան զբարձրաբերձ շինուածս , և ծածկեցին դրեթէ զքաղաքն ողջոյն . և իբրև թողացա̂ւ և զիջա̂ւ ջուրն , գտան նա̂ւք 'ի տանիս տանց քաղաքին այնորիկ , ոպ̃ պատմէ նիկիփորոս : Ձէ փոքր սարսափելի և այն մրրիկն , զոր պատմէն նա̂ւկղերոս , և տրիտեմիոս , թէ յամի տն̃ , 1218. բարձրացա̂ւ ծովն և եմուտ 'ի փրիսիայ գաւառն հօլանդիոյ , և մեռան 'ի տունս իւրեանց ոգիք հարիւր հազար : Յա̂ւելու լանգոս , թէ միւսանգամ' յամին . 1287. ծածկեաց ծովն զգա̂ւառն զայն . և մեռան ոգիք Ութսուն հազար : Բայց չէ այս այնչափ զարմանալի 'ի միում գա̂ւառի բաղդատեալ այնմ , զոր արար ծովն 'ի միում ևեթ քաղաքի : Պատմէ սուրիոս 'ի գիրս մեկնուե̃ . թէ յամի տեառն . 1509 'ի սեպտեմբերի 14. յա̂ւուր տօնի վերացման սբ̃յ խաչին դիզացա̂ւ ծովն , որ 'ի մէջ կոստանդնուպօլսի և զալաթէոյ այնչափ, մինչև բարձրացաւ 'ի վերոյ քան զպարիսպս երկաքանչիւր քաղաքաց, և սպան զբազումս: Եւ ջրահեղձոյց եղեն միայն 'ի կոստանդինուպօլիս տաճիկք երեքտասան հազար. 'ի մանուանց յայսցանէ դիպուածոց երևելի թէ ճշմարիտ է և այն, զոր պատմեն պղատոն, և տերտուղիանոս. և հաստատեն բազումք 'ի նոր հեղինակաց, թէ կղզին այն՝ մեծ քան զափրիկէ և քան զասիայ, լի բիւր բնակութ̃բ և մարդկամբք, որ կայր յարևմուտս ը̃ մէջ սպանիոյ, և արևմտեան հնդկաստանի 'ի համատարածն ովկիանոս, ընկղմեցաւ 'ի միում գիշերի և տուընջեան սահանաբաց անձրևօք, և բարձրացմամբ ծովու իբրև այն, որ եղև առ նոյիւ. և եկաց մնաց այնպէս մինչև ցայսօր: Արդ՝ զինչ եղիցի. յորժամ արարիչն ամ̃ի հրաման տայ տարերաց պատերազմիլ ը̃ մեղաւորս. և ամ̃ արարածք վառեսցին 'ի խնդրել զվրէժ արհամարհանաց հաստչին իւրեանց 'ի մարդկանէ, որք ապերախտ գտան անբաւ բարերարութեանց նորա:

4. Այլև օդն, որ է տարր հեղիկ և քաղցրաախգ, յորում շնչեմք և կեամք, յորժամ արարիչն արձակէ ըզսանձ նր̃. եղիցի 'ի տկարութ̃է այն-

չափ զօրաւ̂որ, մինչզի զորս ընդդէմ դառնան նմա, խորտակեսցէ և սպանցէ։ Զի տեսան արմատաքի խլել խիտ առ խիտ բուսեալ անտառաց 'ի հողմոց. և հարուստ մի 'ի բաց ձգիլ 'ի տեղւոջէ տնկոց։ Քանզի գրէ սուրիոս, թէ յամի տ̅ն 1507. 'ի 28. յունիսի ամսոյ յարեաւ̂ 'ի մէջ գիշերի հողմ ինչ այն̅փ սաստիկ 'ի գերմանիայ մինչև զտունս շարժլեալ տարուբերէր. զտանիսն 'ի բաց խլէր, և հարուստ մի հեռի արկանէր։ Դարձեալ գրէ կուրանդոս արդենտացին, թէ յամս կայսեր առիգոսի վեցերորդի տեսան բերիլ ը̅ օդս մղոնաւ̂ չափ հեռի գերանս մեծամեծս. զորս խլեալ էր հողմ̅ն 'ի ձեղու̂անց եկեղեցւոյն մադունտիոյ. և էին ծանունք յոյժ իբրև զխայտս բևեկնոյ։ Բայց 'ի վեր քան զա̅մ է կործանում̅ն աշտարակին բաբիլօնի հաստահիմն և ամրակուռ կառուցելոյ, զորմէ ասեն յովսեպոս, և եւ̂սեբիոս կեսարացին, թէ կործանեաց զայն ա̅ծ 'ի ձեռն ուժգին հողմոյ։ Այլ զինչ ասացից զասրսափելի մրրկաց և փոթորկաց, որք եղեն ընդ օդս 'ի պատիժ մեղաւ̂որաց, որպէս այն, որ եղև առ մովսէսիւ̂ յեգիպտոս, յորում սատակեցան գրեթէ ա̅մ անասունք ն̅ց. և կ̅մ իբրև այն, որ եղև առ յեսու̂աւ̂,

յոր

յորժամ եարկ տ՟ր քարինս կարկտի յերկնից 'ի վերայ ամուրհացւոց 'ի պաղէստին , և սատակեաց զանիրաւս 'ի նոցանէ: Գրէ կրատոխվեղոս, թէ յամի տ՟ն 1524· էջ 'ի կրեմոնայ կարկուտ սաստիկ ըստ չափու ձուոյ ընտանի հաւուց · Եւ 'ի բոլոնիայ թօթափեցան յերկնից քարինք մեծամեծք , որոց ծանրութիւն էր գրեթէ ինն հօխայ : Ասէ մեծն ովղայոս , թէ էջ երբեմն ընդ հիւսիսակողմն կարկուտ ըստ չափու գլխոյ մարդոյ : Եւ պատմութիւն եռամասնեայ ճառէ , թէ յամին 369· եղև 'ի կոստանդնուպօլիս այնպիսի փոթորիկ և խռովութ՟ի օդոյ · մինչզի կարկուտն որ էջ · էր որպէս զհատորս վիմաց ապառաժ լերանց : Ուստի չէ ինչ զարմանք , զոր ասէ մարգարէն եզեկիէլ գլ· 38· թէ 'ի կատարածի աշխարհիս իջցեն յերկնից անհամար վէմք կարկտի : Եւ ս՟բն Յօհաննէս ասէ 'ի գիրս յայտնութ՟ե , թէ եղիցին ը՟ չափու տաղանդի միոջ , որոյ ծանրութ՟ին է երեսուն հօխայ : Եւ դու խորհեսցիս · թէ 'ի ձգիլ այսպիսի քարանց , որպիսի ահեղ որոտմունք լինելոց են յայնժամ: 'Ի խռովութ՟ե օդոց, որք եղեն 'ի սկիւթիայ , այնպէս ահեղագոչ ձայնք որոտմանց հնչեցին, մինչ զի մեռան յերկիւղէ բազում մարդիկ : Այլ որպիսի անհնարին կորուածք

ի_

լինիցին 'ի վերջնում յայնմիկ օղ ոչ խռովուն, յորժամ մերձեսցի Տս ը͞ կամաց ոտն : Զի եթէ այս բովանդակ փոփոխումն տարերաց առժամայս է երբեւ մարտ ինչ խուն, և չնչին․ ապա զինչ եղիցի այն ընդհանուր և ահեղ պատերազմ բնաւից 'ի միասին ը͞դէմ մեղաւորաց, յորժամ և երկինք առցեն զպատրաստութին իւրեանց զնմ : Մեծն գրիգորիոս պատմէ՝ թէ 'ի ժամանակէ եղելոյ 'ի հռոմ, տեսի աչօք իմովք, զի անկանէին նետք ակներեւ յերկնից, և խոցոտէին զմարդիկ: Զորմէ ասէ սարկաւագն Յօհաննէս, թէ էր այն անձրեւ ինչ նման նետի : Ապա զի՞նչ եղիցի, յորժամ օդ և երկինք անձրեւեսցեն յայնժամ զգիսաւոր աստեղս : Լցաւ աշխարհս դողութեամբ, յորժամ յամս իրինեայ․ և կոստանդիանոսի աւուրս եօթնուտասն խաւարեցաւ արեգակն : Եւ յորժամ առ վեսպասիանոսիւ ոչ արեւ և ոչ լուսին երեւեցան :

Ե. Զինչ լինիցի ապա 'ի կատարածի աշխարհիս, յորժամ յինքն ամփոփեսցէ արեւ զճառագայթս իւր տրտմագին․ և լուսինն դարձցի յարիւն ա 'ի նշանակել զպատերազմն, զոր առնելոց են արարածք հրով և սրով ընդդէմ մեղաւորաց, որք անարգեցին զհաստիչն իւրեանց․ Զիարդ յարիցէ 'ի վր̅ նց̅ երկնի , որ չհանդուրժելով եւս բառնալ զնս̅ , 'ի բաց հանցէ զնս̅ յինքենէ : Զիարդ ջուր հետաղօտեսցէ զնս̅ 'ի տունս նց̅ . և պատեալ պաշարեսցէ զնս̅ : Եւ՞ զիարդ օդն ոչ ներեսցէ նց̅ կալ ապահով 'ի դաշտի : Վա՜յ չէ զարմանք՝ թէ ասասցեն յայնժամ լերանց , եթէ ծածկեցէ՛ք զմեզ . և բլրոց թէ թաղուցէ՛ք զմեզ 'ի ծերպս ձեր : Արդ՝ այսոքիկ են այնպիսի ինչ , որք յաւէտ նկարել կարեն մտօք , քան թէ բացայայտիլ բանիւ . որոց և խոկումն սպակուցանէ զմարդն : Թւէպէտ և հեծեն այժմ արարածք 'ի տեսանելն , եթէ չարաչար 'ի կիրարկանեն մարդիկ զնս̅ , զ̅ 'ի արհամարհումն անեղծողին իւրեանց : Բայց յայնժամ լծընկեց լեալ՝ վրէժս խնդրեսցեն ապիրատուեց̅ , և ծանրուե̅ մարդկան , որով ծանրացան նց̅ : Փոփոխեսցին եղանակք , շփոթեսցին ը̅ միմեանս տարերք : և ոչ ինչ արարած պահեսցէ զպայման օրինաց իւրոց . և յարիցեն 'ի վր̅ նց̅ , որք անհաւատարիմ գտան օրինացն այ̅ :

Յօդուած երրորդ:

ԲԱյց ցուցցուք զայնչափ աւերած աշխարհիս և վկայութի̃ ա̃ծաշունչ գրոց: Քանզի սր̃ն Յօհաննէս գրէ 'ի գիրս յայտնութե̃ զիւր սոսկալիս, ո̃պ այն թէ եղիցի կարկուտ, հուր, և անձրև արեան մեծ և սաստիկ, և այրեսցէ զերրո̃դ մասն երկրի, և զա̃մ ծառ, և ոչ թողցէ զխոտ դալարի 'ի վե̃ր երկրի: Եւ ոչ այսչափ միայն, այլ և զի վաղվաղակի երևեսցի յօդս լեառն ինչ հրդեհեալ, և անկցի 'ի ծով, և դարձուսցէ յարիւն զերրորդ մասն ն̃ր, և այրեսցէ զլողակս, զնաւս, և զա̃մ ինչ, որ գտանի 'ի ծովու: Երևեսցի և աստղ մի մեծ, կի̃ գիսաւոր ինչ հրաշագան, և հրածորան, բորբոքեալ իբրև զլամբար. և ապա անջատեալ 'ի կայծակունս, անկցի 'ի վե̃ր աղբերաց, և գետոց. և դառնացուսցէ զջուրս ոչ միայն աւելի քան զօշինդր, այլև սպանցէ զորս կամին ըմպել: Վիրաւորեսցին 'ի հրեշտակէն նաև արեգակն, և լուսին. և ա̃մ աստեղք, զի հարցէ հրեշտակն, և հատցէ զերո̃դ մասն լուսոյ ն̃ց: Եւ զկնի ա̃մ թշուառութեցս այսոցիկ. եղիցի քան զա̃մ ինչ սոսկալի այն, զի

պա

պատառեսցին անդունդք , և բացցի վիհ խորխորին , ուստի ելցէ ծուխ թանձրամած · և խաւարեցուսցէ զօդն , և զարև :

2· Ելցէ և 'ի դրոյ անդնդոց մարախն յերկիր՝ զաղիր յոյժ , և տացին ն՟ց խայթոց կարճի · և զօրաժողով եղեալ դիմեսցեն յե՟ ա՟մ· և ոչ մեղիցեն խոտոյ երկրի , և ո՟չ ծառոց · այլ միայն մարդկան թշնամեաց տ՟ն · և ամիս հինգ չարչարեսցեն զն՟ս , և չարչարանք ն՟ց իբրև զխայթոցս կարճի , որ հարկանիցէ զմարդ , և աւելի եւս : Ե՞ չէ այս զարմանք , զի ո՟պ առեն մեծամեծ վարդապետք · սոքա են դևք կերպարանեալ 'ի ձև մարախոյ :

3· Ելիցեն և այլ՝ զարհուրելի հարուածք յաւուրս կատարածի Նե՟ս : Քանզի զորօրինակ յաւուրքն զընկղմելն ա՟յ զեգիպտացիս , և փրկել զժողովուրդ իւր , եհար 'ի հարուածս մեծամեծս և սոսկալիս զեգիպտոս , ո՟պ պատմի 'ի գիրս ելից · այսպէս յաւուրքն զընկղմելն զմեղաւորս 'ի հրեղէն ծով՟ն յայն , որ ծածկելոց է զերկիրս առ հասարակ · ուստի ապրեսցին ընտրեալքն , հարցէ տ՟ր զերկիր 'ի հարուածս մեծամեծս և սոսկալիս · զի ո՟պ մեծ է երկիրս քան զեգիպտոս · այսո՟պ և մեծամեծք եղիցին հարուածք մ՟ր քան զնորայն · ո՟պ այն , զոր 'ի վե բաղդոյնդ. ասացաք, յա̃ թէ եղիցի գետնաշարժ մեծ, որ հարթեսցէ զլերինս և ընկղմեսցէ զկղզիս: և թէ եղիցին որոտմունք սաստիկ. և կայծակունք մեծամեծք, և իջցէ կարկուտ ը̃ս չափու տաղանդի միոջ. և այն զի ծանրութ̃ն միոյ տաղանդի է երեսուն հօխայ:

Յօդուած չորրորդ.

1. Բայց զինչ եղիցի. յորժամ յետ այսր ա̃մի եկեսցէ հրդեհն և հուրն այն, որ կլանէ զա̃մ ինչ, ո̃չ վկայեն ա̃ծայինն տառք, և այս հուր կամ իջցէ յերկնից, և կամ ելցէ 'ի դժոխոց, մանաւանդ թէ ը̃ս մեծին Ալպերտի՝ երկաքանչիւրն եւս եղիցի. և դարձուսցէ յաճիւն զա̃մ ինչ, որ ընդդէմ ելանէ նմա: Զինչ օգտեսցեն յայնժամ աշխարհասիրաց անօթք ն̃ց ոսկեղէնք, և արծաթեղէնք. և հանդերձք ն̃ց մեծագինք. և պաստառք պատուականք. և բուրաստանք ծաղկաւէտք, և ապարանք մեծակառոյցք. և ա̃մ ինչ, զոր մեծ համարին յ̃ի: Ո՞վ կարող իցէ օգնել ն̃ց, յորժամ տեսցեն հուրբ դաոխլ զա̃մ ստացուածս առաջի աչաց իւրեանց: Ոչ եւս բերցի 'ի վկայութիւն յայնժամ 'ի

դպրոցս արիստոտէլ: եւ ոչ յատեանս դատաւորաց Ուլպիանոս: Ոչ եւս յիշեցին բանք պղատոնի 'ի մէջ իմաստասիրաց. եւ ոչ զհետ լինիցին կիկերոնի կաճառք բանաստեղծից: Ոչ եւս զարմացին իմաստութիւնք է՟ բանին սենեքայի. եւ ոչ անուանեսցի 'ի մէջ զօրավարաց մեծն Աղեքսանդր: Վ՟նզի ա՟մ համբաւ մեռցի. եւ ա՟մ յիշատակ ջնջեսցի: Ով ունայնութե՟ [illegible]. ով ընդունայնութե՟ մարդկան. որոց հաստապինդ յիշատակն չկարէ տեւել աւելի քան զ[illegible]: Ո՞ւր է ասա՛ ցիս արձանն այն ոսկեղէն, զոր կանգնեաց Գորգիաս Լեոնդինէս 'ի Դելփեայ վ՟ն յաւիտեան մնալոյ անուան իւրոյ, ուր է եւ այն, զոր ոսկւով պատեալ կանգնեաց 'ի Հռոմ Գաբրիոնէս. եւ կամ այն, զոր արձանացոյց ոսկի լեզուաւ յաթէնս բերիոս, եւ կամ այլ անթիւք զոր զանազան զօրագլուխք կանգնեցին պղնձիս, կճեայս, եւ արծաթիս: Արդարեւ բազում ամք են, յորմէ հետէ եղծեալ աւերեցան, իսկ որք դեռ կանն եւ մնան, եղծցին, լուծցին. եւ յաճիւն դարձցին 'ի սոսկալի հրոյ անտի: Եւ միայն թէ առաքինութիւն ոչ կիզցի երբէք 'ի հրոյ: Ուր թողցուք զայս եւ զայն, թէ ոչ ամենեքեան գիտա՛ք են քաջութե՟՝ որոց անցեալ գնացեալ են: Զի սակաւք են, որք գիտեն թէ Մետիղ̇ղ̇ոս յաղթեաց արքային գիոգորտայ։ Ակիւղ̇աս արքային Արիստոնիկոսի։ Ատտիղ̇աս արքային Անտիոխոսի։ Մարկոս Անտոնինոս արքային Հայաստանեայց։ Պոմպէոս արքային Միհրդատայ, և Արիստոբուղ̇այ. և յարքայ։ Եմիլիոս արքային պարսեից, և կայսրն Օրեղ̇իոս Զենոբիայ դշխոյին Պալմիրենացւոց։ Ո՞ւր թողցուք և զատուար մատեանս որովք կամեցան բազումք թողուլ զմշտնջենաւոր յիշատակս. որոց և ոչ հետք երեւին այժմ։ Զի ահաւասիկ Կրիսիպպոս գրեաց զեօթն հարիւր հատորս գրեանց. և ոչ գտանէ թերթ մի 'ի թղթոց նր՟ երեւի։ Արիստարքոս գրեաց զանազան մեկնութիւնս աւելի քան զհազարս. և ոչ գտանէ տող մի 'ի նոցանէ երեւի այժմ։ Թէոփրաստոս գրեաց մատեանս երեքհարիւր՝. և այժմ հազիւ հազ գտանին երեք, կմ՟ չորք 'ի նոցանէ։ Բայց առաւել քան զսոսա գրեաց գրամմատիկոս Դիոնեսիոս գիրս երեք հազար հինգ հարիւր այլ ոչ մնաց գէթ և ճակատ միոյն 'ի նոցանէ։ Իսկ 'ի վեր քան զամենեսին գերագոյն գտաւ Տրիսմեգիստոս, զորմէ վկայէ Յամբղ̇իկոս, թէ արար գիրս երեսուն և վեց հազար՝ հինգ հարիւր քսան և հինգ. և այժմ այնք՟ է. իբրու թէ չէ գծեալ և զատառ ինչ. զի այն սակաւ թուղթք, որք յանուն նր̃ աստ և անդ յածին, չեն նր̃ ամենևին։ Եւ՛ դու տե՛ս, թէ որչափ մեծ է անմտութե̃ն մարդկան, որք համարձակին թողուլ զյիշատ̃կ ՚ի թուղթս. և ՚ի մագաղաթս. և այն, զի կորնչին և կճեայք և պղնձիք։ Ո՛չ տեսանես, զի մեծաշէն, և վիմակառոյց անթիթէատրոնն, զոր կանգնեաց ՚ի ժմ̃կս Ներոնի Ստատիլիոս Տորոսն, ոչ կարաց զդէմ ունել ամրութե̃ն բռնութե̃ն հրոյ։ Եւ՛ ճոխութիւնք Կորնթոսի ոսկեղէնք և արծաթեղէնք ժողովեալ ՚ի մի. և դանձեալ յարկեղս, հալեալ լուծան. և ՚ի չիք դարձան ՚ի հրայրեացն։

Յօդուած հինգերորդ ։

1. Ի Միտ ածցուք զսոսկումն, և զերկիւղն, որ լինի ՚ի մարդիկ, յորժամ անկանի հրդեհ ինչ մեծ ուրեք. և անտի իմասցուք թէ որչափ սոսկումն եղիցի ՚ի տեսանելն զընդհանուր հրդեհ աշխարհիս։ Տե՛ս թէ որպիսի աղմուկ խռովութե̃ց եղև ՚ի Հռոմ յորժամ զաւուրս եօթն հրդեհեալ այրիւր քաղաքն։ Որպիսի աղաղակ դուժի լուեալ լինէին ՚ի Տրոյադայ, յորժամ բովանդակ քաղաքն եղև ճարակ հրոյ։ որպիսի շփոթք, և ձայնք ող-

բոց լինէին 'ի Պենտապօլիս, ո̃պ յերկրին սոդոմացւոց, յորժամ իջեալ յերկնից առ յո̃յ հուր և ծծումբ յաճիւն դարձոյց զքաղաքսն զայնոսիկ: Որպիսի տագնապ. որպիսի աղէտ դառնութեանց եղև բնակչացն եղէմի, յորժամ տեսին զտուն Տն̃ հրդեհեալ զգերապայծառ զմարգարիտ թագաւորութե̃ն այնորիկ և զսքանչելին յծ̃ի: Բայց զկարգ բանիս ածեալ 'ի դարս և 'ի ժամանակս մեր, տե՛ս թէ որպիսի աղէտ դառնութեանց էր այն պատահար. յորժամ էջ յերկնից շանթ ինչ 'ի վ̃ր Ստոկոլմայ մայրաքաղաքին Սվետաց. և այրեաց զմեծ մասն մարդկան. ո̃պ ա̂ւելի քան զվեշտասան հազար ոգիս, և որք մնացին կենդանի անհամար բազմութ̃ի կանանց և մանկանց, զեղան 'ի նա̂ւս առ 'ի զերծանիլ 'ի կիզմանէ, և 'ի ծանրաբեռնիլ նա̂ւացն ընկղմեցան 'ի ծով անդր նա̂օքն հանդերձ: Արդ՝ 'ի միտ ածցէ ա̃մ ոք, թէ որպիսի մորմոքումն և կսկիծ սրտի պատեալ ունէր զողորմելիսն զայնոսիկ, յորժամ տեսանէին, թէ վախճան տանց իւրեանց եղանէր յերկինս, և կիզեալ յաճիւն դառնային ա̃մ ստացուածք նց̃. և չէին ձեռնհաս թափել զն̃ա: Զիարդ աղէխորով լինէր հայրն 'ի տեսանել զորդին, զի այրէր, և այրն 'ի լսել զհեծեծանս կնոջ իւրոյ. և չգոյր ուտեք Ած՟յ ապրեցուցանել զնո՟ 'ի կիզմանէ: Եւ որպիսի աղիողորմ էր գոչումն նց՟, որ յանկարծ պատեալ 'ի բոցոյ անտի, աղաղակէր, և խնդրէր զփրկիչ, և այն ը՟վայրապար: Իսկ որք ստիպեալ 'ի հրոյ դիմէին 'ի ծով, և զեղուին 'ի նաւն, որպիսի դառն էր և աղէտ նց՟, յորժամ տեսին զանձինս ընկղմիլ 'ի ծով 'ի շրջիլ նաւացն: Տես թէ զինչ եղիցի ապա տագնապ ը՟ հանուր հրակիզութե՟ն աշխս՟. որովհետև որք զերծեալ 'ի մրրկաց ծովու, 'ի սպառնալեաց որոտմանց, 'ի կայծականց երկնից. և 'ի շարժէ երկրի, փախչէին. և հեռանային, ընդ առաջ ելցէ նց՟ հուրն ամենայրեաց, և բոցակիզեալ զնո՟, ջնջեսցէ զա՟մ մարդ. և զա՟մ յիշատակ մարդոյ:

2. Բայց 'ի յիմանալոյ մեր՝ թէ է ոչինչ այն ա՟մ, որ ը՟ մզ՟ է մեծ, կարեմք 'ի հրակիզմանէ անտի ճանաչել նաև զզարշութիւն մեղաց. որովհետև ա՟ծ առ 'ի մաքրել զա՟շ 'ի պղծութե՟ մեղաց մերոց ջնջէ զնա հրով, ոպ՟ վաղուբեմն ջնջեաց ջրով: Եւ զերծցին յայնժամ 'ի հրոյ անտի ս՟րբք և ընտրեալք, որք գտանին կենդանի, զի ծանիցուք, թէ միայն վս՟ մեղաց լինի հուրն այն, և թէ ոչ ոք կարէ փըրկել զմեզ անտի, բայց միայն առաքինութե՟ և սրբութե՟: Եւ մեծն Ալպերտ նշանա-

կեալ ցուցանէ զյարմարութիւն տարերցըս · որով ա՟ծ հաստատեաց երկեցս ջնջել զ՟ն: Քանզի յառաջնումն ջնջեաց ջրով առ ՚ի մաքրել զնա ՚ի հրոյ ցանկութեն, և ՚ի բոցոյ տռփանաց, որ յառաջ քան զջրհեղեղ զրաւեալ էր զ՟մս ա՟մ, և այսպէս էառ ՚ի ձեռս զջուրն ընդդէմ հրոյ ցանկութե՟: Իսկ յերկրորդումն առցէ ՚ի ձեռս (առ ՚ի ջնջել զ՟մս) զհուրն ընդդէմ ցրտութե՟ և զաղջութե՟ սիրոյ, որ յա՟ւուրս կատարածի ա՟ցէ զ՟մս ՚իծերութե՟ ՚ի սառուցմանէն: Եւ՟ ո՟չ ապրեցաւ՟ ՚ի ՚ի ջրհեղեղէ միայն Նոյ տամբ իւրով յաղագս ողջախոհութե՟ իւրոյ, այսպ՟ ՚ի վերջին հրոյ անտի ապրեսցի նա միայն, որ լի է առաքինութ՟բ սիրոյն: Ոչ հասին ջուրք ջրհեղեղին ՚ի Նո՟, որք չունէին զհուր սիրոյ ցանկութե՟ մարմնոյ · այսպ՟ և ոչ հուրն այն վերջին հասցէ ՚ի Նո՟, որք ունին զհուր սիրոյն ա՟յ:

ԳԼՈՒԽ Խ. Ը։

Թէ զինչ իցէ պատճառն զարհուրելի կատա-րածի Յէս, յորում եղիցի ընդհան-րական դատաստան վն նր̄։

1. ՔԱջ խօսի Դիոնեսիոս Կարտուսեանն յաւելն թէ առաւել սոսկալին և ահռելին յաւուր յայնմիկ է ճշմարտութիւն, որ յայտ յանդիման երևելոց է մեղաւորաց։ Քանզի արդարև ոչ մծբ̄րբառ որոտմունք, ոչ մեծագոյն մրրիկք ծովու. և ոչ այլ ինչ հրէշ զարհուրելի աւուրց կատր̄ծի ահաբեկէ և պակուցանէ զամբարիշտս այնչափ, որչափ տեսանելն. թէ պարտ էին պահել զպատուիրանս Տն, և ծառայել նմա, իսկ ինքեանք անարգեցին զնա, և զբանն նր̄, և յետս կացին ապստամբեալք 'ի նմանէ։ Անկ յոյժ պատշաճաւոր եղև, զի լինի առանձնական դատաստանի իւրաքանչիւր մարդոյ, եղիցի և ը̄հանրական դատաստան ընա՛ւից 'ի միասին, յորում շատասցի արդարութիւն Տն 'ի դատապարտեալս, և 'ի դևս։ Ե՛ւ զի ոչ

մեռանէին ՃԸ մարդոյ ամ՟ ինչք նր՟ , վս՟ զի ոպ՟ ասէ սբ՟ն Թովմաս , մնայ զկնի յիշատակ նր՟ , մնան որդիք , և բազում գործք նր՟ ․ մնան օրինակք , և մարմին նր՟ ․ մնան առարկայք ցանկութե՟ և սիրոյ նր՟ ։ Վս՟ այսորիկ խնդրէ իրաւ̂ունքն․ զի այսոքիկ բնաւ̂ք մտցեն 'ի դատաստան , ոպ՟ զի ծանիցէ մարդ ․ Թէ ոչ միայն ունի տալ համարս վս՟ կենաց իւրոց , այլ և վս՟ նց՟ , որք մնան նմա զկնի մահու̂անն ։

2․ Ո՛վ որչափ 'ի պատրանս նանրութե̂ն ըմբռնեալք երևեցին յայնժամ փառամոլք ․ որք առ 'ի Թողուլ յերկրի զյիշատակ , չգործեցին զարդարութի՟ առ այլս ․ և չարարին զբարիս վս՟ անձանց ։ Զիա՛րդ յանարգութի յեղափոխեցի փառք նց՟ ։ Ասա՛ ցիս , ո՛վ եղև գերահռչակ ․ և գտաւ̂ փառաւ̂որեալ յ☉լի քան զմեծն աղէքսանդր ․ և քան զՅուլիոս կայսր , որք առ 'ի տիրել ☉լի արարին բռնութիս մեծամեծս , հեղին զարիւն արդար ․ և գործեցին զանպատշաճս ․ և եղեն գերահռչակք մինչև ցայժմ 'ի բազում դարս և սակայն յայնժամ 'ի միում աւ̂ուր լցցին ամօթով և անարգութ՟ այնչափ , մինչև անցցէ զանցցէ այն՝ քան զփառօք քան զպատու̂ով ․ զոր յանարժանս ընկալան , և որում մոլեգինս ցանկացան ։ Այսպ՟ և որդիք, (յորս ը՟ սբ՟յն

Թովմայի կեան ծնօղքն.) եղիցին յայնժամ յամօթ նախատանաց հարց և մարց իւրեանց, այնչափ առաւել՝ որչափ ետուն նմ̃ զչար օրինակ. փոխանակ անուան և համբաւոյն, որովք ցանկային ունել յՔ̃ի: Ցուցանէ և ևս երանելին Թովմաս, թէ վ̃ն մարմնոյն, որ մնայ յետ մահուան, պատշաճ է, զի կրկին անգամ հարց ու փորձ եղիցի զմարդոյ յընդհանրական դատաստանի Ք̃իս: Քանզի բազում մարմինք սրբ̃ց կերեալք եղեն 'ի գազանաց, և բազումք մնացին անթաղ: Եւ անդրադարձեալ՝ բազումք մարմինք մեծամեծ մեղաւորաց պատուեցան գերահրաշ յուղարկմամբ. և եդան 'ի մեծաշէն և 'ի փառաւոր տապանս: Զայս անկարգութի̃ հարկ է արարչին աշխարհածոց ածել յուղղութի̃, և 'ի կարգ սքանչելի յաւուր յայնմիկ: Ոպ̃զի մեղաւորն որ այժմ պայծառանայ և ցնծայ 'ի մեծակառոյց դամբ̃րանս, տեսցէ յայնժամ զմարմին իւր խաւարեալ. տգեղպագիր. և մատնեալ 'ի տանջանս ցաւագինս: Իսկ արդարն, որ մեռաւ անթաղ. մանաւանդ թէ կերեալ եղև 'ի յագռաւուց, գտցէ զմարմին իւր փառաւորեալ. և պայծառածկեալ արփիափայլ ճառագայթիւք: Ասա՛ ինձ, զինչ շահ. զինչ օգուտ. և զինչ արդիւնս գործեաց արքային Պորսեննայ տաղնապելն. և պահակ կանոնուն զմարդիկ իւրոյ թագաւորուե առ 'ի շինել զդամբարան հրաշալի վս մարմնոյ իւրոյ. որովհետև 'ի գերահրաշ նկարուն այնր դամբարանի եթող փորագրել զվկայուե մեծ՝ իւրոյ խելայեղ խելացնոր ամբարտաւանութե : որպէս դարձցի 'ի նախատինս Ադրիանու կայսեր փառք և շքեղութի այնր տապանին. որով կարծէր, եթէ հռօմ դերահռչակ լինելոց է յշի : Եւ դարձեալ ուսուցանէ երանելին Թովմաս, թէ կենցաղականքս. յորս բևեռեաց ոք զսիրտ իւր. և յետ մահուան նր մնացին յշի որ սակաւ, և որ շատ, մըտցեն 'ի քննութի դատաստանաց այն : Արդ տեսցուք. և քննեսցուք. թէ յե՞ր վերայ եդաք զիղձ սրտից մերոց: Մի՞ գուցէ կենցաղականքս, զորս սիրեմք. և ախորժեմք զնոցա տևելն. դարձցին մեզ 'ի պատիժ պատուհասի, եթէ չտևիցեն. և կամ եթէ տևիցենն. և 'ի նմ միշտ վայելեսցուք, համարեսցին մեզ այնք 'ի ժամանակաւոր վարձ փոքունց մերոց բարեգործունց. և զվարձ մեր զանեզրական կամ նուազեսցեն. և կամ բովանդակ բարձցեն, յորմէ յոյժ սոսկալ պարտ է մեզ: Եւ դարձեալ, զի մեղաւ մարդն ոչ միայն հոգւով, այլ և մարմնով, հարկ է. զի թէ հոգին. և թէ մարմինն դատեսցին. և 'ի միասին կացցեն առաջի ահաւոր բեմին Քնի. և թէ եղիցի այս հրապարակաւ՝ առաջի ամենեցուն. ոմ̃զի մի՛ ոք 'ի մեղանչելոց ապաւինեսցի 'ի գաղտնութե̄ տեղւոյն. որովհետև յայտ յանդիման երևեսցին մեղք նր̃. և ծանիցեն զայն ամ̃ մարդիկ. որք եղեն. և որք են. և որք լինելոց են: Որ է յոյժ ահաւոր և սոսկալի : Վ̃ս այս անցք արդար դատողութե̄ Տ̃ն երևեցաւ՝ մ̃եցն ո̃յ առաւել սարսափելի, քան զտանջանս գեհենին , ո̃ր յայտ է 'ի բանից երանելոյն Յոբայ: Ե՞ւ սակայն զայս վտանգ դառնութե̄ երկիցս կրեսցեն մեղաւորք . և եղիցի նշ̃ միանգամ ամօթ մեծ քան զառաջինն :

Գ Լ Ո Ւ Խ Թ.

Յաղագս վերջնոյ աւուր ժամանակի:

1. Արդ մատուցեալ 'ի ճառս հանգամանաց ընդհանուր դատաստանին, որ լինելոց է վ̃ն ժամանակաց. և վ̃ն ամ̃ մարդկան դիտելի է, զի հուրն, որ ընթանայ առաջի Քի, յորժամ իջանէ առնել

նիլ զգաստաստան, կացցէ վս̅ մաքրելոյ զտարերս ցայնվայր, մինչև քո̅ վճարեալ զգաստաաստանն վերասցի ը̅ ընտրեալս իւր յերկինս, ոպ̅ ասէ Մեծն Ալպերտ հաւաքեալ զայս 'ի մբ̅ գրոց անտի։ Եւ զի գալուստն այն լինելոց է առաւել ահեղ և փառաւոր, կոր արասցէ անձն ա̅ծայինն ինքնին. և կմ̅ 'ի ձեռն ստեղծուածոյ ուրուք։ Զի եթէ հրեշտակն միայն առ 'ի տալ զօրէնս 'ի դիմաց այ̅ էջ 'ի լեառն սինայ այնպիսի ահեղ. և սքանչելի. և հրակերպ տեսլեամբ, մինչև զարհուրեալ դողային ա̅մ որդիքն իէ̅լի, թէպէտ և պատրաստեալ և սրբեալ ևս էին զանձինս յաղագս այնորիկ։ Ապա որպիսի ահեղակերպ. և բոցանիշ փայլմամբ և փառօք. և հուր առաջի եկեսցէ նոյն ինքն օրէնսդիրն. և հաստիչն ա̅մի 'ի խնդրել զհամար պահպանութե̅ օրինաց իւրոց։ Եւ ո՞րպիսի ահ. և դողումն եղիցի յերևիլ նր̅ յանկարծակի մարդկան, զորս դատելոց է 'ի կատարածի աւուրց։

2. Տե՛ս թէ որպիսի ահագնատեսիլ իմն եղանակաւ եկն հրեշտակն առ որդիսն իէ̅լի։ Զիա՞րդ. կմ̅ ոպ̅։ Յետ յիննօրեայ աւուրց ելանելոյ նց̅ յերկրէն եգիպտացւոց. յետ մեկնելոյ 'ի չարաչար և 'ի դժնդակ հարուածոց եգիպտացւոց. և յետ անցանելոյ ը̅ ծո-

ծովն կարմիր· և ընկղմելոյ հալածչաց նց 'ի ծով անդր, մինչդեռ բանակեալ էին առ լերամբն սինայի· տեսին, զի դայր 'ի հեռաստանէ (այ 'ի լերանց սեիրայ, որ է յեդովմ) բոցանշոյլ, շքեղազարդ· և ամենախնկաւոր Տրն բիւրաւոր բազմութբ հրեշտակաց· ոպ և դաւիթ ասէ· Կառք Այ բիւրապատիկ· հազարք ուղղիչք· և Տր 'ի նս 'ի սինէ սրբութեան իւրոյ · (Սաղմ·) Բայց երևեալս այս մեծազօր իշխանութբ ոչ էր ինքն ած· այլ հրեշտակ մի· ոպ վկայէ սբն Ստեփաննոս 'ի գործս առաքելոց · որ և ըս բազմաց էր Միքայէլ հրեշտակապետն: Եւ զի եկն 'ի դիմաց և յանուն այ, վն այնորիկ կոչեցաւ 'ի սբ գիրս Տր : Եւ ապա հայեա՛ց· զի դայր բարձեալ զօրէնս 'ի ձեռին· և ամպ միգախառն և հրաբորբոք գնոյն· և լինէին ձայնք և փայլատակունք · և ձայն փողոյն հնչէր մեծաձայն· և լեառն սինայ ծխէր առ հասարակ: Վսյ ընդ այգանալ առաւօտուն զարհուրեցաւ ամ ժողովուրդն իբրև յանկարծուստ ին լուան զահեղագոչ որոտումն· և տեսին զլեառն սինայ · որ հրովն վառեալ էր· և մգով· և մառախլով· և խաւարաւ· և մթով· ոպ ասէ առաքեալն: Եւ զայն · զի բիւր անդամ լինէին փայլատակմունք 'ի կատարս լերանց · և բոց հրոյն հասանէր. յերկրէ յերկինս. եւ ծուխն պատեալ պաշարեալ էր զլեառն ողջոյն. եւ ահագին ձայն փողոյն շարժէր զերկիր. եւ հատանէր 'ի բաց յառաջացել̃ եւ սաստկացեալ յոյժ յոյժ. ուստի զարհուրեալ դողայր ժողովուրդն, որ կայր առ ստորոտս լերինն։ Յայնժամ երբեւ պատուէր ետ Հրեշտակն 'ի ձեռն Մովսէսի ժողովրդեան. զի մի՛ ոք մերձեսցի 'ի լեառն՝ ապա թէ ոչ մեռանի, սկսաւ 'ի միջոյ երկիւղալեացն այնոցիկ խօսիլ զպատգամս օրինացն այնպէս ահեղագոչ բարբառով, մինչ զի ժողովուրդն ամ̃. որք բանակեալ էին բացուստ 'ի վրանս իւրեանց. եւ ելք ն̃ց բազմութի̃ն յոյժ եղ խլրտացուոց յեցելոց 'ի նմ̃, լուան. եւ իմացան զբանն պարզօրէն. եւ անկան յերկիւղ մեծ, թէ մահու մեռանիցին. եթէ միւսանգամ կրկնեսցէ Հրեշտակն առ նմ̃ զբանն։ Վ̃ս որոյ պաղատելով ասէին զՄովսէս. Դու խօսեա՛ց ընդ մեզ եւ լուիցուք. եւ մի՛ խօսեսցի ը̃ մեզ ա̃ծ. գուցէ մեռանիցիմք։ Եւ ինքն իսկ Մովսէս թէպէտ եւ արդարեւ էր զբազում սքանչելիս. եւ սովոր էր 'ի հրաշալիս. եւ էր այր արդար եւ քաջասիրտ՝ խոստովանէր զտկարութիւն իւր. եւ ասէր։ Զահի հարեալ եմ. եւ դողամ։

Յ. Բայց զի՞նչ է այս ամ̃ առ համե

մա

մատուցք ահեղ· և աներեկ աւուրն, յորում եկեսցէ ինքնին հաստիչն հրեշտակաց· և տէրն տէրանց 'ի խնդրել զհամար օրինաց իւրոց: Յորժամ տիեզերք ամ հրդեհեալ կիզցին· և պատառեսցին երկինք· և իջցէ փրկիչն աշխի 'ի ձորն Յովսափաթու փառօք մեծաւ· և ը̅ նմա ամ դասք հրեղինաց երևել 'ի ձև մարմնոյ: Կարապետ գոլով կենդանեաց և մեռելոց յանհրաժեշտ ատենին՝ նշան փրկչական սբ̅ խաչին· որպէս ասէ սբ̅ յօհան Ոսկեբերանն· և այլ բազում վարդապետք: Արդարքն, որք գտցին կենդանի 'ի ժամուն յայնմիկ, զօրութբ̅ հոգւոյն թռուցեալ· և բարձրացեալ՝ յափշտակեսցին յօդս ամպովք ը̅ առաջ Քի̅ 'ի յընդունել զնա· որպէս ասէ Առաքեալն: Իսկ չորք հրեշտակք կացեալ 'ի չորեսին կողմանս աշխի փողով մեծաւ· հարցեն ուժգին զփողսն 'ի յարուցանել զմեռեալս, մինչև ձայնք փողոցն ժամանեսցեն յանդունդս երկրի: Յայնժամ 'ի գոչելն փողոյն եկեսցեն արտաքս 'ի դժոխոց հոգիք մեղաւորաց· և մտեալ 'ի մարմինս իւրեանց կենդանասցին· և յայնմ ժամէ սկիզբն կալցեն մարմինք նց̅ տանջել հրով գեհենին յաւտենս յաւիտենից: Նոյնպս̅ ելցեն և 'ի լիմբոսէ հոգիք նց̅, որք 'ի սկզբնական մեղս մեռան, և առցեն զմարմինս իւրեանց

րեանց առանց երիք տանջանաց ։ Իջցեն և յերկնից Հոգիք մեր . և միաւորեսցին ը̃ մարմինս իւրեանց . և փառաւորս գործեսցեն զնս̃ չորեքին օժտօք փառացն , զի փայլեսցին մարմինք նց̃ առաւելքան զարեգակն , եղիցին թեթև քան զթևս Հողմոց . անկիրք և անապական քան զմարմինս լուսաւորաց . նուրբ և անօսր քան զօդ վճիտ ։ Իսկ այնոքիկ արդարք , որք զկնի ընդհանուր Հրկիզութե̃ ծի մեռան կենդանի , չհանդուրժեալ ՚ի մահկանացու մարմնի առաւելութե̃ փառաց , և ցանկութե̃ . և երկեւղի և սիրոյ և սքանչացման , ընդ տեսանելն զքս̃ մեռանելին , և նոյնհետայն տեսանեն զէութին ածային . և Հոգիք նց̃ անդէն վաղվաղակի միաւորին ընդ մարմնոց , որք ոչ տեսցեն զապականութի̃ . և ոչ իսկ անկցին յերկիր . այլ նոյնժամայն մաքրեսցին յա̃մ չար Հեւթոց , և յա̃մ երկրաւոր մրրոյ երանեալ մարմինք նց̃ , և զարդարեսցին փառօք զգեցեալ զբաժինս իւրեանց ։ Արդ՝ ո՞վ կարող իցէ բացայայտել յայնժամ զցնծութի̃ Հոգւոց արդարոց . յորժամ տեսցեն զգեցեալ զանձկան զայն մարմին , որ ՚ի Հաղ̃մեան ժմկս կայր փրտեալ . և յաճիւն դարձեալ . և կերեալ յորդանց և ՚ի ճճեաց ։ Իսկ յայնժամ երևեսցի չքնաղ . և աքփափայլ ։ Զօ՞ր

դոգոհութեան. և զո՞ր շնորհակալութիւնս մեր առաքեսցեն առ ա՟ծ, թէ յետ այնչափ ժամանակաց միաւորեաց զնոսա ընդ Էակցի իւրեանց։ Զո՞ր հրճուանս, զոր զուարճութիւնս. և զո՞ր ուրախակցութիւնս արասցեն 'ի միասին հոգիք և մարմինք նց՟, որք ապրեցան 'ի խստութիւնս և յապաշխարութիւնս, ճգնամբք, խոշտանկութեամբք, գետնախշտութեամբք, քրձօք. և պահօք։ Եւ՞ անդրդարձեալ հոգիք մեղաւորաց զխորհուրդ դժնէացեալ կատաղեսցին ընդդէմ մարմնոց իւրեանց, այնու՝ զի պահեցին 'ի զրգանս հեշտախտութեան. և տեսանեն, զի այն եղև պատճառ աններելի տանջանաց նց՟։

Յօդուած Երրորդ։

1. Արդ՝ 'ի լինիլ յարութեան մեռելոց՝ կացցեն մեղաւորք 'ի մէջ հողոյ 'ի ձորն Յովսափաթու, և ընտրեալքն 'ի յօդս. իջցէ յայնժամ և դատաւորն ահեղ Ք՟ս 'ի գլուխ լերինն Ձիթենեաց, նստեալ 'ի մէջ լուսափայլ ամպեղէն կառաց, որոյ առաջի և զկնի հետևէին բիւրք բիւրուց գունդք հրեղէն զուարթնոց, և երամք լուսաճաճանչ արդարոց։ Եւ՞ սփռեսցի ծաւալեսցի 'ի մարմնոյն Ք՟սի լոյս, որ բիւրանգամ յաղթէ ճառագայթից արե-

դական , և ճառագայթեցին յամենայնք վիրաց նորա նշոյլք անպատմելի լուսոյ վասն արդարոց 'ի քաղցրութեան սիրոյ և ցնծութեան . և վասն մեղաւորաց 'ի դառնութեան սրտմտութեան , և տանջանաց . ուստի անհնարինս կոծեցին յղ̃ս անմասն լինելոյ յարդեանց նորա ։ Եւ այնչափ մեծաշուք , մեծասքանչ եղիցի հրաշափառ մեծութեան փառացն Քրիստոսի . մինչդի դևք և դատապարտեալք , որք ատեին զԱստուած , անկցին խոնարհեցին ընդ ոտիւք նորա ։ Զինչ ասասցեն յայնժամ , որք պսակեցին զնա փշովք , և ետուն 'ի ձեռս նորա զեղէգն փոխանակ արքայական գաւազանի , և արկին զնովաւ հանդերձ ծիրանի , անարգ և պատառոտուն , և կամ որք հանէին նմա ապտակս և թուք նախատանաց յերեսս նորա արկին ։ Եւ զինչ ասասցեն նոքա , որք զարիւնն փրկչին հեղեալ վասն սիրոյ նոցա , առ ոտս կոխեցին մեղօք և անօրէնութեամբ , իբրև թէ իցէ գաղանի , կամ մեծի ուրուեմն թշնամւոյ նոցա ։ Ոչ գիտեմ . թէ զիարդ ընդ յիշելն զայս , ոչ հերձանին յանտանելի ցաւոց սիրտք մեր , մինչև մեր ձեռնալ 'ի դրունս մահու 'ի ցաւագին զղջմանէ ։ Վայ ունկնդիր լերուք խրատուց սրբոյ հօրն այնորիկ անապատաւորի , յորմէ իբրև խնդրեաց եղբայր մի , թէ զիարդ կալայց զխորհուրդ մտացս , զի մի այսր անդր տատանեսցի,

պխնի

պատանի եւ ծերն: Յիշեա՛, թէ զիա՛րդ կալոց ես առաջի ահաւո՛ր բեմին Քն̅ 'ի տալ զհամար գործոց քոց:

2. Ապա արկցի լուսեղէն աթոռ փառաց ընդաջմէ Քն̅. յորում բազմեսցի Մայրն նր̅յ, ոչ 'ի բարեխօսուն մեղաւո՛րաց, այլ 'ի դատապարտուն նց̅. մանաւա՛նդ զի ոչ ախորժեցին վայելել 'ի մայրենի գթութն̅ և պաշտպանութն̅ նր̅ 'ի կեանս իւրեանց. այլ նա յն̅մ ար̅ծոց պատուեսցի. և փառաւորեալ երևեսցի:

3. Արկցին շուրջ զՔն̅ի՛ իբրև պսակ մի բոլորեալ և այլ աթոռք չնաշխարհիկք վն̅ առաքելոց, և վն̅ հոգւով աղքատ̅ց, որք թողին զա̅մ ինչ վն̅ Քն̅ի: Որք նստցին իբրև դատաւո՛րք ը̅ Քն̅ 'ի դատել զմեղաւո՛րս. և դատապարտեսցեն զնս̅, և զն̅ց անօրէն վարս օրինակա՛ւ վարուց իւրեանց: Հաստատեսցեն և զվճիռ վեհագոյն դատաւո՛րին Քն̅ի, և ցուցցեն զարդարութն̅ դատաստանաց նր̅: Յորոց այնպէս ահաբեկ լիցին անօրէնք. և զահի զամօթի հարցին, մինչև ասասցեն յայնժամ զայն բան իմաստնոյն, զոր կանխա՛ւ ասաց 'ի դիմաց նց̅. Այս այն այր է, զոր երբեմն մեք ծաղր առնէաք, և յառակս նախատանաց: Մեք անմիտք զվարս դորա մոլորութիւն համարէաք, և զվախճան դորա անարգութիւն. Զիա՛րդ համարեցաւ ընդ որդիս Ա̅յ

և ընդ սբ̄ս վիճակ դորա ։ Ուրեմն մոլորեցաք 'ի ճ̄ահէն ճշմարտութէ, և լոյսն ողորմութէ ոչ լուսաւորեաց զմեզ. և արեգակն արդարութէ ոչ ծագեցաւ 'ի մեզ։ (Իմաստ. 5. 3։)

4. Զինչ ասասցեն ապա և բռնաւորքն, որք տանջեցին, և մահու սպանին զնահատակսն Քի̄. յորժամ տեսցեն զնս̄ փառաւորեալս և լուսազգեցս ։ Զինչ արասցեն և նք՝ որք խաբեցին զաղքատս, և զտնանկս 'ի դատաստանի, և բռնացան 'ի վր̄ նց̄, յորժամ տեսցեն զնս̄ լինել դատաւոր նց̄ ։ Թէպէտ 'ի կենցաղս յայս չունէին արդարք և մեղաւորք զպատուհասն իւրեանց զանազանս, զի յոլով անգամ ամբարիշտն ունի կայանս փառաւորս. և իբրու թէ կայ ընդ աջմէ, և արդարն յանարգ և 'ի խոնարհ տեղիս ։ Բայց յաւուր դատաստանի բարձցէ Քս̄ զայս նախատինս յարդարոց. և բաժանեսցէ զցորեանն յորոմանց անտի ։ Ուստի բարձրացուցեալ զարդարս 'ի յօդս կացուսցէ ը̄ աջմէ իւրմէ, զի պատուեսցին, և փառաւորեսցին 'ի բնաւից իբրև սր̄ք և բարեկամք իւր։ Իսկ զամբարիշտսն կացուսցէ 'ի ձախմէ թողլով 'ի վր̄ երկրի. զի անարգեսցին, խոտեսցին, և հալածեսցին 'ի բնաւից ։ Եւ յայնժամ որպիսի նախանձու մաշեսցին մեղաւորք 'ի տեսանելն փառաւորեալ զարդարս, և արհամարհեալ

զան֊

զանձինս: Ո՛ր ամօթ անարգանաց պատեալ պաշարելոց է զամբարիշտ թագաւորն. յորժամ տեսանէ 'ի փառս, և յընդակիցս հրեշտակաց զհպատակն և զգերին իւր, և զինքն մատնեալ յանարգութիւն, և գրաւեալ 'ի դունդս դժոխոց: Քանզի ո՞չ հրեշտակք զգենուն զլուսատարր օդեղէն մարմին յուրախութե՟ն արդարոց գեղեցկութե՟ իւրեանց, այսպէս և դևք զգեցցին զգարշատեսիլ մարմին 'ի յօդոյ յամօթ տանջանաց և 'ի նախատինս դատապարտելոց:

Յօդուած Երրորդ:

1. Արդ՝ վաղվաղակի ընդ՝ բանիլ դպրութե՟ն խղճի մտաց, ց՟ ը՟ հրատարակիլն, և ը՟ դատ մտանելն (ո՞չ 'ի վերադոյնդ ասացաւ) ամ՟ բարեգործութե՟նց, կամ ամ՟ մեղաց մարդկան, ամ՟ գաղտեաց սրտի, ամ՟ վախճանի և յօժարութե՟նց և պատճառաց գործոց՝ բանից և խորհրդոց. ամ՟ թագուցելոց յամօթոյ, և 'ի հայթայթանաց կրկնելոյ. կմ՟ 'ի զանցառութե՟ եղելոց. և կմ՟ 'ի չարութե՟ կեղծելոց, նոյն հետայն անյապաղ արդար դատաւորն Ք՟ս բարբառեսցի նախ զդալն ձայնիւ զվճիռն հեշտընկալ, դիւրըն-

բընկալ. և ախորժալուր ձն̄ արդարոց առնելով, Եկայք օրհնեալք հօր իմոյ. ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն 'ի սկզբանէ աշ̄ի: Եւ՝ ապա բարբառեսցի առ. մեղաւորս զհակակայ վճիռ սոսկալի քան զհուր գեհենին, և քան զտանջանս ահագին, ասելով: Երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նր̄ա: Եւ՝ զայս խստութբ̄ մեծաւ, և ահագին որոտմամբ, ոպ̄ նշանակեալ ծանոյց Մարգարէն ասելով. Ահաւասիկ անուն Տն̄ գայ յամայր ամս. յետ բազում ժամանակաց վառեալ բարկութբ̄, և լի փառօք, բանք շրթանց նր̄, և բանք բերանոյ նր̄ լի բարկութբ̄, և բարկութի̄ նր̄ իբրև զհուր կերիցէ: (Եսայ. 30. 27:) Որով որչափ տօն ցնծութե̄ և բարեկենդանութե̄ եղիցի յաւուր յայնմիկ արդարոց. և որչափ դառնութի̄ մեղաւորաց. և կամ զիարդ ճարճատեսցին 'ի նախանձուէ և 'ի մոլեգին կատաղութե̄ սիրտք եղկելեացն: Եւ՝ կամ զիարդ պակուցեալ քստմնեսցին և իբրև զմեռեալս անկցին յահեղ բարբառոյն որդւոյն այ̄: Զի եթէ 'ի լսել անանիայի և սափիրայի զձայն առաքելոյն Պետրոսի ցասուցելոյ, մեռան վաղվաղակի, ապա զինչ եղիցին ամբարիշտք 'ի լսել զձայն ահաւոր արարչին տիեզերաց՝ լի անհնարին բարկութբ̄ բարբառնելոյ։ Արդ՝ հնար է փոքր 'ի շատէ ցուցանել այս անտի, որ պատահեցաւ մ՟րյն կատարելեայ Սենեկացւոյն։ Զի երևեցաւ նմա երբեմն մ՟ր առաքեալն Պօղոս, և յանդիմանեաց զնա վ՟ն 'ի զուր ծախելոյն զդոյն ինչ ժամանակ։ Եւ՛ ասէ սրբուհին, բիւր անգամ ախորժելի յամօթ լինել առաջի ա՟մ մարդկան ծի, քան թէ լինել այնպէս կշտամբեցեալ, զի անպատմելի էր ասէ ամօթն, զոր յայնժամ զգացի։ Ապա զինչ եղիցին կշտամբութիւնք վրէժխնդրութեան ա՟յ յաւուր յայնմիկ. զի եթէ մինչդեռ ածեալ լինէր 'ի դատաստան, երկու բառիւք ևեթ դիթա՛ւալ կացոյց զա՟մ ամբոխ զօրացն, Տ՟ր յորժամ ասաց ես եմ. ապա զիա՞րդ բարբառեսցի, յորժամ նստցի 'ի դատել։ Գրեալ է 'ի վարս հարանց, զոր գրեցին Սևերիոս Սուլպիկիոս։ և Կասսիանոս, թէ երիտասարդ ոմն ցանկայր լինել միայնակեաց. իսկ մայրն առ 'ի արգելուլ զնա յառաջ բերէր զբազում բանս, և նա ոչ լսէր նմա, և յերկիր կործանէր զա՟մ բանս մօրն այսու բանիւ՛ իբրև ամուր վահանաւ՛, ԹԷ ՉԱՄՓՄ ՉԵՑՈՒՑԱՆԵԼ ՊԱՆՋՆ ԵՄ։ Իբրև շատ իմն 'ի վարանս խորհրդոց անկաւ՛ մայրն, և ետես զի ը՟վայր են բանք իւր, եթող զնա առնել ը՟ս կամաց իւրոց, և նա չոգաւ եմուտ վաղվաղակի 'ի կարգ կրօնաւորութեան ։ Եւ ոչ անցին բազում աւուրք, զի նա սկսաւ գաղջանալ, և կալ 'ի կրօնի չարաչար և բազում զանցառութեամբ ։ Ապա յետ աւուրց ինչ մեռաւ մայրն. և նա անկաւ 'ի դժնդակ և 'ի մահաբեր ինչ հիւանդութիւն. և յաւուր միում յայլ խելս լեալ յափշտակեցաւ հոգւով, և ածաւ 'ի դատաստան առաջի բեմին Աստուծոյ. ուր ետես զմայրն, զի սպասեալ մնայր ընդ բազմաց այլոց վճռոյ դատապարտութեան ։ Դարձուցեալ մայրն զաչսն, և տեսեալ զորդին 'ի մէջ դատապարտելեացն, սոսկացաւ, և ասէ ցնա. զի՞ է այս քեզ որդեակ, զիա՞րդ հասեր յայս սահման դառնադառն ։ Ո՞ւր են բանքն, զոր ցիս ասէիր, կամիմ կեցուցանել զանձն իմ. ոչ ապաքէն վասն այնր եղեր միայնակեաց ։ Իսկ որդին այնչափ զահի զամօթի հարաւ, մինչև չկարէր բան մի տալ պատասխանի մօրն ։ Այլ հաճութեամբ Տեառն իբրև դարձաւ 'ի յուշն, և զերծաւ յախտէ անտի, խոկալով թէ այն էր ազդեցութիւն ինչ առ յԱստուծոյ փոխեաց զվարս իւր 'ի լաւ անդր. և 'ի բովանդակ կենսս իւր ողբայր դառն արտասուօք զանցեալ ժամանակն. և ետ զանձն յայնչափ ճգնութիւնս, մինչև ասէին ցնա բազումք, մեղմել փոքր ինչ զայնչափ խստութիւն վասն առողջութեան ։ Բայց նա ոչ անսայր խրատուց նոցա այլ պնդէր առնէր, և ասէր. եթէ չկարացի բառնալ զկշտամբանս և զնախատինս մօր իմոյ· ապա զիարդ զօրեցից բառնալ զկշտամբանս Ք՟նի, և հրեշտակաց նր՟ սրբոց, յորժամ յանդիման եղէց առաջի ահեղ ատենի դատաստանաց նր՟ :

2. Պատմէ Ռափայէլ Կողոմբեանն· եթէ յաւուր միում արքայն Սպանիոյ Փիլիպպոս · Բ· մինչդեռ կայր յեկեղեցւոջ առաջի սե՟ղ պատր՟գին · լուաւ, զի երկուք յիշխանաց իւրոց մերձ առնա եղելոց խօսէին աղաղակաւ ը՟դ միմեանս : Իսկ նա առ ժամն այն եղև իբրև զխուլ· բայց իբրև աւարտեցաւ սբ՟ պատարագն, ասէ ցնս՟ խստութբ՟ մեծաւ· ով թշուառականք, մի՞ ևս այլ երևեսջիք առաջի իմ: Այս բանք սակաւ և լոկ այնչափ խիստ երևեցան նց՟· մինչզի մին 'ի նոցանէ մեռաւ 'ի ցաւոցն, և միւսն եկաց յամ կեանս իւր խելացնոր : Արդ ասա դու ինձ, եթէ զի՞նչ եղիցի լինել զահեղ բարբառն զայն զԹագաւորին երկնի և երկրի· որ՟ է · ԵՐԹԱՅՔ ՅԻՆԷՆ ԱՆԻԾԵԱԼՔ· և այլն որ 'ի կարգի : Եւ եթէ բանք մ՟ն էին այսպէս ահաւոր, զինչ եղիցին գործք անաչառ և անհրաժեշտ դատաստանաց նր՟ :

3. Այսպէս վաղվաղակի 'ի նոյն բոպէի պատեցին պաշարեցին եղկելիքն 'ի հրոյ անտի· և բացցի երկիր· և դժ-

Ժոխք լայնեացեն զանձինս • և անկցին ծածկեսցին 'ի սանդարամետսն յաւիտենականս յաւիտենից : Եւ յանկանել նց̅ անդր • կատարեսցի բանն, որ գրեալ է • Արկցես 'ի վե̅ նց̅ կայծակունս հրոյ • կործանեսցես զնս̅, 'ի տառապանաց մի՛ կարասցեն կեալ : (Սաղմ. ճլթ. ժա̅:) Եւ միանգամայն ասացից , կատարեսցի արդեամբք և այն , զոր ասէ աւետարանիչն Յոհաննէս, սատանայ , և մահ և դժոխք, նեռն , և սուտ մարգարէն • և որք ոչ են գրեալ 'ի գիրն կենաց , արկցին 'ի լիճն հրոյ և ծծմբոյ , և եղիցին անդ՝ և տանջեսցին զտիւ և զգիշեր յաւիտեանս յաւիտենից ը̅ նեռին և ը̅ սուտ մարգարէին : Իսկ անդրադարձեալ արդարքն ը̅ դաւթի• ուրախ եղիցին, յորժամ տեսցեն զհատուցումն մեղաւորաց • և երգեսցեն զերգս հանգոյն երգոյն Մովսէսի • յորժամ ընկղմեցան եգիպտացիքն 'ի ծով կարմիր , և եղանակեսցեն զերգն զխաղաղականաց զգառինն • ասելով ուրախութե̅ 'ի խնճոյս ցնծութե̅ , Մեծամեծ և սքանչելի են գործք քո տր̅ ա̅ծ ամենակալ • արդար և ճշմարիտ են ճ̅ն̅հ̅ք քո թագաւոր ա̅մ հեթանոսաց : Եւ ո՞վ ոք ոչ երկնչիցէ • և փառաւորեսցէ զտր̅ անուն քո : (Յայտ. ժե̅. դ̅:) Սովիմբ , և այլ բիւրապատիկ հաճութե̅ , և ցնծութե̅ , պարուք և ուրախութե̅ վերանասցին , ալյացին, և բարձրացին յաղթանակաւ̂ փառաց ՚ի վերոյ քան զաստեղս ՚ի հրեղէն երկինս ՚ի դասուն իմանալեաց. ուր նստցին ՚ի լուսեղէն աթոռս փառաց, և զմայլեսցին յաւ̂իտենից յաւ̂իտենից։ Պայծառասցի և երկիրս առհասարակ մաքրեալ և ձուլեալ ՚ի յընդհանուր հրոյ անտի դադարելոյ. և զերծցի մաքրեսցի ՚ի յաղտոյ զոր ընկալաւն բառնալով զմարմինս դատապարտելոց։ Երկինք և երկիր, աստեղք և արև նորոգեսցին յական թօթափել. և պայծառասցին եօթնպատիկ քան զառաջինն։ Վասնզի արարածք, որք բռնաբարեցան չարագործութե՟ անօրինաց ընդդէմ կամին Ա՟յ որ ստեղծ զն՟ս, յորժամ տեսցեն զվրէժխնդրութի՟ն Ա՟ծն, ցնծասցեն, ազատեալք ՚ի չարեաց ն՟ց. և հրճուեսցին ՚ի վ՟րյ յաղթութեն Ք՟ի. և զգեցցին զհանդերձ ուրախութե՟։

4. Ահա այս է կատարածն, յորում վերջասցի ա՟մ ժամ և ժամանակ. և յայս օրինակ սարսափելի ածցին ա՟մ ժամանակաւ̂որքս վասն մեղաւ̂որաց։ Աղէ՛ նկատեսցուք, եթէ զիարդ վարիմք արարածովքս։ Եւ̂ առ ՚ի վարել նոքօք ը՟ս արժանին ՚ի միտ ածցուք զվախճան ն՟ց. և զայն օր ահեղ վերջին և անսահման. զայն օր տառապանաց և թշուառութե՟, զայն օր անհրաժեշտ դատողութե՟, և զայն օր եր-

կիւղի և անձկութեն ։ Քանզի չիք զօրաւորագոյն դեղ նորոգութեն վարուց մերոց քան զյիշատակ նորա ։

5. Պատմէ Յօհաննէս գորոպաղատեան, թէ կռապաշտ արքայն Բուլղարաց Բոգորիս սիրէր յոյժ զորս վայրի գազանաց, և զմայլէր 'ի տեսանելն յապարանս իւր նկարեալ զձև ամեհի և դժնդակ գազանաց ։ Սա լուաւ եթէ է միայնակեաց ոմն անուն Մեթոդիոս, քաջ պատկերահան. ուստի պատուիրեաց առ նա նկարել զպատկեր մի ամեհի և սարսափելի գազանաց, ոպզի որ միանգամ տեսցէ զայն, ահաբեկ լիցի ։ Իսկ միայնակեացն խոհական նկարեաց զահարկու պատկեր ինչ ընդհանուր դատաստանին ։ Եւ յետ զգործն վճարելոյ, կոչեաց զարքայն, և եցոյց նմա զպատկերն ահաւոր ։ Զոր տեսեալ արքային, սոսկացաւ և քստմնէին մարմինք նր 'ի գործոյ արդար դատողութեանն ։ Զի տեսս. եթէ զիա՞րդ դատաստանօք որդւոյն այ պսակին արդարք, և բարեգործք. և մատնին յանբերելի տանջանս ամբարիշտք և չարագործք ։ Եւ իմաստասիրեալ 'ի նկարագրէ անտի, եթող զչարաչար վարս իւր, և եղև քրիստոնեայ։ Արդ՝ եթէ նկար պատկերի դատաստանին Քանի՞ է այնպէս սարսափելի, զի՞նչ եղիցի ապա է փորձ նորա անցանելն ։

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ։

Յաղագս զանազանութեան ՚ի մէջ ժամանակաւորին և յաւիտենականին։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

Թէ արհամարհելիս գործէ զժամանակաւորս փոփոխականութի̃ ն̅ց։

ՅԵՏ ԽՕՍԵԼՈՅ ԶԿԱՐճուէ ժամանակի, և ժամանակաւորացս, բուռն հարցուք խօսիլ զնոցին փոփոխականութենէ։ Զի զոր օրինակ մահն է փոփոխութի̃ ինչ կենաց. այսպէս և փոփոխութիւնն է մահ ինչ մասանց կենաց։ Զի աւանիկ հիւանդութիւնն է մահ առողջութե̃. քունն արթնութե̃. տրտմութիւն ուրախութե̃. անժուժութիւն հանդարտութեան. Երիտասարդութիւն պատանեկութե̃. և ծերութե՟ն երիտասարդութե՟ն : Կինն այն, զորմէ գրէ աւետարանիչն 'ի գիրս յայտնութե՟ն . թէ արկեալ էր ը՟դ ոտիւք զլուսինն . վա՞կ էր . (թէպէտ կարէր լինել նոյն 'ի շարս աստեղաց, որք երբև զպսակ կային զգլխով նր՟,) զի ցուցցէ մեզ, ա՟յ ասէ երանելին Գրիգորիոս, առ ոտս կոխել զժամանակաւորս, որք երբև զլուսին անընդհատ փոփոխին, և տարուբերին: Ուստի քաջ խօսեցաւ Եպիփանոս յաւելն. թէ 'ի մի և 'ի նոյն աւուր է, զի է մայր. և է զի է մօրու որդւոց մարդկան: Զայս նշանակեալ ծանոյց հրեշտակն, որ էջ յերկնից. և զգեցեալ էր զամպ. և ծիածան 'ի գլուխ նր՟, բարբառել և ասել, թէ ոչ ևս կայ այլ ժամանակ. զի կոխեաց զծովն աջու ոտամբն, որ ունի զբռնի զօրութի . ուսուցանելով մեզ. թէ զփոփոխելիս, որոց օրինակ է ծովն, պարտ է առ ոտս կոխել ա՟մ զօրութբ՟ :

2. Այս փոփոխութի մեծ յոյժ արհամարհելիս գործէ զկենցաղականս, զի յոլովք են պատճառք, որք զայն առնեն: Զի զո՛րօրինակ ծով ունի զկրկին շարժումն, մին բնական, և միւսն բռնական, և ոչ միայն յա՟մ օր աճէ և նուազի ևս 'ի մեծի խաղաղութե՟ անդ. իբրում. այլ նաև կրէ զմեծամեծ խռովութիս և զբռնութիս

'ի

'ի յարտաքին պատճառաց, պ̃ 'ի հողմոց, և 'ի մրրկաց, որք վեր 'ի վայր շրջշրջեն զնա ։ Այսպէս և կենդաղականքս, որք բնութ̃ են լպրծուն, և անկայուն, փոփոխական և անցական, թէ և չիցէ բռնութի ինչ արտաքին, ինքնին հանապազօր փոփոխին, և դիմեն յապականութի ։ Իսկ յորժամ 'ի վերայ գան և այլք պատահարք անդիմադրելիք, և բռնութիք արտաքինք, իսպառ յարուցանեն փոփոխութիս խռովութեց 'ի ծովու կենցաղոյս ։ Ուստի որ համարի հաստատուն կալ, նա անկարծելի նաւաբեկութն կայ ներքոյ անկեալ ։ Այսպ̃ ծաղիկ պայծառատփիւռ ինքնին թարշամի ․ իսկ յոլով անգամ յառաջ քան զթառամիլն, կամ հողմք զնա խլեն, և կամ կարկուտք զայն հարկանեն ։

3․ Ոպ̃ և չքնաղ գեղեցկութի, ամացն յոլովութ̃ զատուածեալ խանդարի, բայց և զամացն յոլովութի բազում անգամ տեսանեն դժնդակ զառեղծանէ ։ Այսպէս և հանդերձն մեծադին և պայծառափայլ երկարութ̃ ժամանակի մթնի, և մաշի ․ բայց յառաջքան զժամանակն իսկ բազում անգամ զայն գողն տանի ։ Շինուածք մեծակառոյցք հնութ̃ ժամանակի խարխալին, և քայքային ․ բայց կարող է հրայրեաց ինչ առնել ․ զի ոչ ժամա-

նեսնեացեն 'ի հնութե̃ն անդ ։ Քաջ տեսանեմք ա՛հադիկ, թէ որք, զորս մարդիկ համարին առաւել անփոփոխս, քանի փոփոխութե̃ց, և քանի մահու ներքոյ անկեալ դնին ։

4. Ե՛ւ առ 'ի զնոյն զայս հաստատել բերէ 'ի մէջ ս̃ր գրիգոր ա̃ծաբանն զքաղաքն եգիպտացւոց զթեբայիդ, համարելով զնա առաջին 'ի մէջ եօթն հրաշալի իրաց աշխ̃իս, զի էր մարդաշատ մեծագանձ և գեղեցիկ յոյժ ։ Ե՛ւ էին պարիսպք ն̃ր 'ի պաղպաջուն և յոսկիապատ կճոյ, և պարտէզք հրճուանաց 'ի վ̃ր ն̃ց, կոչեցեալ, կախանք ։ Դրունք ն̃ր էին հարիւր. յորոց 'ի լինել հարկի ելանէին լռելեայն իշխանք ն̃ր զօրօք հանդերձ, և ոչ ոք իմանայր զել և զմուտ ն̃ց ։ Ե՛ւ ասէ պոմպէոս մելասն, թէ յա̃մ դրանց անտի ելանէր արտաքս բիւր մի զօրաց. և ընդ ա̃մ հարիւր բիւր, զի զայն առնէ գումար ն̃ց 'ի միասին ։ Ե՛ւ սակայն սա այսպէս կուռ վառեալ՝ ոչ կարաց զդէմ ունել երիտասարդի միոջ փոքու ամաց՝ եկելոյ 'ի վ̃ր ն̃ր սակա՛ւ զօրու, որ զնա սպառասպուռ ջնջեաց 'ի միջոյ, ո̃պ վկայէ ս̃բն հերոնիմոս ։ Պատմէ մարկոս պօղոսն. եթէ անցի երբեմն ը̃ քաղաքն կու՛ինսայ, յորում բնակէին ոգիք եօթն հարիւր բիւր ։ Ե՛ւ հուպ ընդ հուպ յետ սակա՛ւ ամաց

մայ կանց ը̄ այն և Նիկողայոս կամօն, և ասէ թէ զտոի զայն քաղաք աւերեալ, և յայլ իմն ձև կանգնեալ: Եւ հաւաստամ, թէ մեծ քան զայս էր Նինուէ, զորմէ ասէ սբ̄ գիրն, թէ էր ծայրէ ՚ի ծայր իւրև գնացս երից աւուրց ճ̄նհի. և սակայն յոլով դարք են. որ ոչ ևս երևի: Այնպէս և Բաբիլոն, որ որձաքար աղիւսօք. և բարձրաբերձ պարսպօք էր շուրջ փակեալ. և էր գլուխ իշխանութե̄ն Ծիս, եղև աւեր և անապատ, և բնակեցան ՚ի նմ̄ համբառուք և յուշկապարիկք, դևք և ողնիք ը̄ կանխատաւոյ բանիցն մարգարէից: Որոյ պարիսպք նո̄ր վաթսուն և վեց կանգնեան բարձրութե̄, և երեսուն կանգնեան լայնութե̄ ոչ զօրեցին պահել զնա ՚ի ժամանակէ ունաւէ: Այլ ամրակուռ ամրապարիսպ քան զայս էր, քաղաքն Երկնաւորին՝ մայր քաղաքացն մարդոյ, որմ̄ ասէ սբ̄ գիրն, զոր շինեաց արփիաք ատաղ. Թագաւորին մարդոյ, և էած շուրջ զնովաւ պարիսպս ՚ի կոփածու քարանց, և արար զբարձրութի̄ պարապին եօթանասուն կանգուն, և զլայնութի̄ն չորս կանգուն: և սակայն ոչ կարաց այսպիսի զօրութե̄ իշխանութե̄ն մարդոյ զդէմ ունիլ ասորեստանեայց, և Թագաւոր նո̄ր, որ զայն շինեաց, և դողացուցանէր զն̄, ը̄ յաղթական թշնամեացն զօրոյն և սարսէր: Բայց զինչ ասացից զքաղաքաց, յորժամ և թագաւորութիւնք և կայսերութիւնք զնոյն օրինակ փոփոխումն յանձինս բարձեալ բերին: Հայեա՛ց 'ի տիեզերս, 'ի լինիլն իւր ընդ ասորեստանեօք, զի օտարոտի իմն երևեսցի քեզ· յորժամ եկաց ընդ իշխանութեամբ պարսից: Եւ տեսեալ քո զնա ընդ իշխանութեամբ պարսից, այլակերպ իմն թուեսցի քեզ, յորժամ եկաց ընդ իշխանութեամբն յունաց: Եւ ապա երբև էանց 'ի յունաց առ հռոմայեցիս, փոխեաց յամի զնմանութիւնն, և անտի մինչև ցայսօր 'ի բիւր կերպարանս փոփոխեցաւ, զի յոչ իմիք նմանի ինքն այլում, եթէ ոչ լինիլ յաւէտ յինքեան այլազան: Եւ այս պակասութիւն որպէս արժանի է յաւէտ արհամարհանաց· նոյնպէս և զկենցաղականս ցուցանէ արհամարհելիս· վասն զի այնչափ անարգ են, որչափ 'ի հնութեան անդր դիմեն:

Յօդուած Է:

Լուսինն՝ օրինակ իրացս անհաստատութեան, ոչ միայն փոփոխական է 'ի ձևն, այլ և 'ի գոյնն: Զի զերրեակ բնածին գոյն նշմարեն իմաստասէրք 'ի լուսինն այսինքն զդեղին, զխարտեաշ, և զսպիտակ· առաջնոյն պատճառ է պղտորութիւն ջրոց· երկրորդին, ըղհողմն, և երրորդին զխաղաղութիւն օդոց:

Սոյն օրինակ փոփոխի և սիրտ մարդոյ երրեակ գունով. ըստ երրեակ ուժգին բաղձանօք, որք զնա խռովեն: Առաջինն օրինակի 'ի դեղին 'ի գոյն ոսկւոյ, յորժամ ցանկայ մեծութեանց, որք քան զջուրս են դիւրանցուկ: Երկրորդն օրինակի 'ի կարմիր 'ի գոյն ծիրանւոյ, յորժամ ախորժէ զհողմ սնոտի փառաց: Եւ երրորդն 'ի սպիտակ 'ի գոյն ցնծութեան, յորժամ բաղձայ զբօսանաց, և ուրախութեանց կենցաղոյս:

2. Երիւք բաղձանօքս ագահութեան, հպարտութեան, և հեշտասիրութեան տարուբերի և փոփոխի մարդս: Եւ զի զո՞ր օրինակ, են ծաղիկք, որք դառնան յայն կողմն, ուր լուսինն շրջանս առնու, սոյն օրինակ մարդկային խղճքն այլայլակք, այլայլեն զիրս առ նոյն քատակ: Զի ահա՛նիկ, զո՞ր տէրութիւն, զո՞ր իշխանութիւն, և կամ զո՞ր պետութիւն անխռով թողին անյագուրդ խղճքն Կիւրոսի: Իսկ հպարտութիւն Աղեքսանդրի ոչ միայն զպետութիւնս, այլ և զկերպարանս փոխեաց զ՟ին: Այլ ճակաճան սէրն Պերիլթեայ զի՞նչ ելթող յոտին 'ի Տրոյադայ, և զի՞նչ ոչ վեր 'ի վայր շրջեաց յաշխարհն յունաց: Արդարև որպէս ծով 'ի հոլովել լուսնի գայ և գնայ, աճէ և նուաղի, այսպէս և իրք կենցաղոյս ըստ կրից մարդոյ առնուն զշարժումն իւրեանց: Եւ թէպէտ չիք հաստատու-

թի

թն յիմիք, բայց յաճէտ 'ի մարդն, որ ոչ միայն փոփոխի, այլ և պատճառ լինի իւրացն փոփոխութե̃ն։ Վ̃ն վայելուչ իմն կարդեաց մարգարէն դաւիթ զվերնագիր վաթսներորդ ութերորդ սաղմոսացն, ասելով, 'ի կատարած վ̃ն զառանցելոցն, ո̃ր փոփոխելեաց։ Վ̃զի 'ի նմա խօսի զժողովրդենէն եղէմ, որք ընկալան զք̃ զառաջինն ոստովք ձիթենեաց և արմաւենեաց, և ովսաննայ երգով, և մեծասքանչ փառօք, որոյ նմանն ոչևս ընծայել հնար է մարդոյ։ Ե՞ւ այս վաղվաղակի ետուն նմա նախատինս անարգանաց, որոյ նմանն ոչ երևեցա՞ւ յ̃խի։

3. Վ̃ն չէ արժան, չէ պատշաճ դնել զյոյս 'ի մարդիկ, որք մերթ սիրեն, և մերթ ատեն, մերթ բաղձան, և մերթ պշկան, մերթ վարկանեն, և մերթ զզու՞ին։ Ո՞վ ոչ հիացեալ զարմասցի ը̃ փոփոխումն առաքելոյն Պետրոսի, զի որ խոստանայրն, և պնդէր 'ի մահ և'ի բանտ երթալ վ̃ն վր̃դպտին, չև էր անցեալ բազում ժամ, զի հաստատէր երդմամբ հանդերձ, թէ ոչ գիտեմ զայրն զայն։ Զի՞ արասցեն եղէգն և կնիւն, յորժամ մայրք և բևեկնիք տատանին, և անկայուն են։ Զի՞նչ ասասցուք և յղ̃ջս ամոնայ, որ այնչափ ուժգին սիրէր զԹամար, մինչև ծիւրեալ յախտիցն անկա՞ւ 'ի մահիճ, բայց

վաղժողովողին նողկացաւ̂ ՛ի նմանէ այնչափ, մինչև հալածեաց ՛ի տանէն, և չախորժէր տեսանել անգամ զերեսս նր̃։ 4. Այլ ոչ կարեմ առաջի մատուցանել զայլ օրինակ մեկին մեկնաբանօղ զփոփոխուն մարդկային մտաց, քան զայն արժանին յիշատակաց, որ պատահեաց ՛ի քաղաքն Եփեսոս։ Էր անդ տիկին ոմն համեստ և աղնուա̂կան յոյժ։ Եւ̂ եղև, զի մեռաւ̂ այր նր̃, և նա ՛ի սաստիկ ցաւ̂ոյն լայր հանապազօր անմխիթար, և ձեռօքն իւր չարաչար վիրաւ̂որէր, և կոծէր զանձն անդադար։ Ո՛չ շատանայր լալ ը̃ օրէնս այրեաց, այլ և երթայր արտաքոյ քաղաքին յանմարդի վայրս ՛ի դամբարան առն, և մտեալ ՛ի ներքս առ սիրելին, լայր անմխիթար անճաշակ և անընթրիք գոլով։ Եւ̂ եկաց այսպէս անճաշակ անդ զաւ̂ուրս չորս։ Արդ՝ դէպ եղև, զի ՛ի նոյն աւ̂ուրս դատապարտեցան առ՛ի կախել աւ̂ազակք ոմանք, և բերեալ մերձ առ գերեզմանատունն հանէին ՛ի կախաղանս․ և զի մի՛ գողասցին մարմինք կախելոցն եդ դատաւ̂որն զօրականս երիս, կամ չորս ՛ի պահպանութի̃։ Եւ̂ զի մինն ՛ի զօրականացն գիտէր զանձն տիկնոջն, և թէ արդ ՛ի դամբարանին կայ առնն, և լայ, գթացեալ ՛ի վե̃ նր̃ տարաւ̂ ճաշս նմա․ և յորդորէր զնա ուտել, և ոչ մեռանել

՛ի

'ի սովոր: Եւ՛ թէպէտ 'ի սկզբան անդ անհնար եղև նմա առնուլ զպատառ մի 'ի բերան, սակայն այնչափ աղաչանօք, և զանազան բանիւք թախանձեաց զնա զօրականն, մինչև էած զնա 'ի ճաշակել զկերակուր: Ապա 'ի ձգել խօսակցութե ևս անդր, սկսաւ զօրականն համոզել զնա առնուլ զինքն 'ի յայր, զո՞ր օրինակ առեր ասէ զկերակուրն յինէն, և կէին 'ի հրճուանաց, և 'ի ցնծութէ հարսանեացն յիշատակէ, համեցաւ առնուլ յայր զզօրականն, զոր ոչն խոկայր յառաջագոյն: Իսկ յայնմ վայրի տեսեալ ազգականաց միոյն 'ի կախելոց, եթէ պահապանքն հեռի են 'ի տեղւոջէ անտի, զիմեցին 'ի վր, և գողացան զմարմինն, և առին գնացին 'ի թաղել: Եւ՛ իբրև ել արտաքս զօրականն, ետես զխաչն եղեալ, և երկուցեալ 'ի պատժէ զատաւորին. գնաց վշտագին առ կինն և պատմեաց նմա: Եւ՛ նա քաջալերեալ մխիթարեաց զնա, և ապա ինքնին էառ զմարմինն առն իւրոյ, զոր փոքր ինչ յառաջ կոծէր ուժգին, և ցուցանէր զաստատուն սէր առ նա, և կախեաց զն կախաղանն 'ի տեղի գողացելոյն: Ահա այսպէս է անհաստատութի մարդկային սրտի, զի զոր յանչափս սիրէր· աւ անիկ եհան 'ի կախաղանս: Այլ այս գուցէ ոմանց յառասպելս երևեսցի·

ասակայն ո՞վ է, որ ոչ գիտէ, թէ ամէն նմանն յոլով անգամ ճշմարտի՛ն՝ այլ դիպո՛ւածք պատահեալ են յաշխարհի:

ԳԼՈՒԽ. Բ.

Թէև մեծամեծ և անյոյս 'ի երկնուէ իջեն
ժամանակաւոր չարեաց, սակայն հարկ է
մեզ յոյս ունել բարեաւ
գործել զնա:

Անհաստատութին կենցաղականացս պարտի պտձնուել 'ի սիրտս մեր զհաստատութին: Նախ ծնանելով 'ի մեզ զքաջասիրտ, իմն արհամարհութին 'ի փոփոխելեաց, և անցաւորաց: Եւ երկդ զհաւատալի իմն ստուգութին, թէ չիք 'ի վատաբաղդութին հաստատութին ինչ: Քանզի զո՞ր օրինակ բարիք մեծամեծք պատահեն երբեմն զմեծամեծ չարիս. սոյնպէս և մեծամեծ չարիք կարեն 'ի վերբերել զմեծամեծ բարիս:

2. Զի ահաւասիկ յորժամ Ապպլիոս ընտանեօքն համդերձ, և ամ ընչիւքն մտեալ 'ի նաւ փախչէր 'ի մահուանէ, զի էր գրեալ 'ի դատաւորէն սպատամբ, եղև 'ի ծառայից իւրոյ եդեալ 'ի կուր, և տուեալ հողմոյ, զի մու-

ցի. ոպ̃զի ինքեանք ժառանգեսցեն զինչս նր̃. բայց յանբաղդութէ̃ անտի եկն յառաջ բարեբաղդութի̃ նր̃. վ̃զի նաւ՛ն ընտանեօք նր̃ ընկղմեցաւ՛, և ինքն ողջանդամ զերծաւ՛ 'ի սիկիլիայ։ Այսպէս և Արիստոմենէս կալեալ 'ի Թշնամեաց արկաւ՛ 'ի վիրապ խորին մահապարտաց. ուր այն կալեալ հ̃այլ մահու սրով. կէ̃ սովու, և կէ̃ դարշահոտութ̃։ Այլ մինչդեռ կայր անյոյս 'ի փրկութէ, ետես, զի եկն է̃ ծակ մի է̃ հողով աղուէս մի, և մտեալ 'ի ներքս մերձեցաւ՛ առ նա, (քանզի աղու՛էսք արարեալ ծակ 'ի վիրապն, և մտել̃ է̃ այն ուտէին զմարմինս մահապարտաց։) Եւ՛ կալեալ ա̃մ զօրութ̃ն զձետ աղու՛էսուն՝ գնաց զհետ նր̃. և զի աղու՛էսն է̃ որ եմուտ, է̃ այն խնդրէր արտաքս ելանել. սա ևս միով ձեռամբն կալեալ զձետ նր̃, և միւսովն զհողն յետ կոյս ձգելով, լայնէր զճ̃պ̃հն, և յառաջադէմ լինէր. և այսպէս պեղելով զհողն եկն, ել 'ի դաշտ տափարակ. և զերծաւ՛ կենդանի, մինչ Թշնամիքն համարէին զնա մեռեալ։

3. Չի՛ք չար ինչ 'ի կենցաղս յայս, որ չիցէ կարող լինել շա՛ւիղ իմն առ մեծագոյն բարիս։ Զի ա՛անիկ 'ի դատապարտիլ դիոգինեայ առ 'ի մահ, Թէ հատեալ է զսուտ դրամս, եղև

այնքան բարեբախտիկ և փառաւոր յծ՟ի · մինչզի եկն յայցելուն նր՟ մեծն Աղ՛եքսանդր իշխանն ծ՟աց ։ Սապէս և 'ի խոցոյ սրոյ թշնամւոյն, զոր ընկալաւ փալերէոս 'ի լանջս իւր, բժշկեցաւ 'ի յուռուցիկ խաղաւարտէն, յորոյ բժշկութենէն անյոյսք էին բժիշկք ։ Եւ Գալենոս պատմէ, թէ անբժշկելի բորոտ ոմն բժշկեցաւ 'ի բորոտութէն ըմպելով զգինի, յորում մեռեալ էր իժ մի ։ Քանզի 'ի հնձել ոմանց զարտորայս, տեսին, զի իժն անկաւ յանօթ գինւոյն, և յոչ կամելն ըմպել զայն, ետուն ըմպել ողորմելւոյն այնմիկ, ոպ՟զի մեռցի, և ազատեսցի 'ի դառնութէ ցաւոցն · բայց ը՟ ըմպելն, նոյնհետայն սրբեցաւ 'ի բորոյն ։

4. Վկայէ բենիբենիոս, եթէ գիտեմ զմանուկ ոմն, զի կաղ էր յերկոցունց ոտիցն, և ոչ կարէր քայլել · եթէ ոչ յեցեալ 'ի գաւազանս · բայց իբրև ըմբռնեցաւ 'ի ժանտամահէ, և բժշկեցաւ անտի, ը՟ նմին և ոտքն ուղղեցան, և քայլէր համարձակ ոպ՟ զայլ մարդիկ ։ Պատմէ դրձ՟լ նոյն, թէ ճարտարապետ ոմն միով ոտամբն կաղ և կարճ յանկանիլն յաշտարակէ, 'ի վեր վաղեաց ուղիղ ոտամբք ։ Պատմէ Աղեքսանդր բենեդիկտեան, թէ տեսի զզաչացու զոմն, որ վէրս ընկալեալ չարաչար 'ի գլուխն, բացաւ աչք նր՟ ։

Հիւեն-

Հանդերձեալքս պատմէ, թէ կին ոմն խելացնոր, հարեալ զգլուխն յանօթ ինչ և պատառեալ, եղև մտացի: Պատմէ Պլուտարքոս զումեմնէ. եթէ ունէր պղժնդակ պալար ինչ 'ի մարմնի, զոր իբրև վիրաւորեաց թշնամին, վայթեցաւ ժահրն, և զերծաւ 'ի ցաւոցն:

5. Ահաւանիկ և չարիքն, զոր արարին Յովսեփայ եղբարքն նր, կազմեցին նմա զաթոռ փառաց և իշխանութե 'ի յեգիպտոս: Եւ հոյք դառուց թշուառութեանց երանելոյն Յոբայ. կրկնապատիկ գործեցին զբարին նր: Եւ ցուպ 'ի ձեռին փախուստ Յակոբայ 'ի ձեռաց եսաւայ եղբօր իւրոյ 'ի հայրենի երկրէն, գործեաց. զի դարձցի 'ի տարագիր երկրէն մեծութ և երջանկութ պարառեալ յոգներամ բազմութ ընտանեաց: Ճշմարիտ է արդեօք. թէ մինչդեռ տևէ կենցաղս՝ չիք թշուառութի ինչ անմասն 'ի յուսոյ բարութե. և թէ բազում չարիք ծնանին զբազում բարիս նկատեալ զայս նաև 'ի կարգի բնականացս:

6. Ապա եթէ 'ի յոյս նախախնամութեն այ համբարձցուք զաչս մեր. յայնժամ չիք ամենևին չար ինչ անդարման, և անբժշկական: Ասա՛ ցիս, յո՛ր վայրս նեղութեց. յո՛ր աղէտս դառնութեց, և յո՛ր սահման չարեաց անկեալ ածել կարեն չարիք կենցաղոյս զմարդն. քան զայն, յոր-

ժամ հասարակաց հաճանուքն ածի ոք առ՚ի մահ, ոչ եղև սրբուհին շուշան ։ Բայց ահա ՚ի նոյն իսկ ճգ̃հի · Ը̃ որ ածեալ լինէր առ՚ի մահ դարձոյց ած զզարշունի անպարտ մատանութեն՚ի սքանչացումն մեծի առաքինութե նր ։ Այսպ և դանիէլ ոչ գտաւ անօգնական, յորժամ արկաւ ՚ի գուբն առիւծուց · զի անդ ուր մարդն տկարանայր · ած լինէր նպաստաւոր ։ Սապէս և երեք մանկունքն ընկեցեալք ՚ի հնոց հրոյն բաբելոնի , գտին ՚ի մէջ բորբոքեալ բոցոյն և մահու զհանդիստ և զուրախութի ։ Ըստ այսմ և դաւիթ յորժամ պաշարեցաւ ՚ի զօրաց սաւուղայ · և մերձ էր ՚ի դրունս մահու, զերծաւ անտի, յորժամ էհաս դուժկան առ սաւուղ · եթէ այլազգիք արշաւեցին յերկիրս ։

ԳԼՈՒԽ Գ։

Թէ արժան է ՚ի մտ ածել · եթէ յորդնոյ առնման չարէ մարդ ժամանել։

ԲԱյց զի մի բևեռեսցուք և ապաւինեսցուք ՚ի յաջողուն երջանկուեց Ձիա ,

պսպարտ և արժան է. զի իմաստասիրեսցուք յանհաստատութենէ անտի կենցաղականաց զայն, թէ չէ պարտ ապաւինիլ՚ի մարդկային յաջողութիւնս։ Քանզի ոչ թագաւորութի̅, ոչ կայսերութի̅, և ոչ քահանայապետութիւն կարեն փրկել զմարդ ՚ի թշուառութեանց կենցաղոյս, զի յա̅մ տեղւոջ, և յա̅մ կարգի կարեն պատահել։

2. Կարէ լինել, զի իշխան ոք անկեալ ՚ի փառաց, իբրև զմուրացիկ շրջեսցի դրանէ ՚ի դուռն ՚ի գտանել զկերակուր։ Կարէ պատահել. զի թ̅գւոր ոք զրկեալ յարքայութենէն լիցի ռամիկ արհեստաւոր։ Հնար է, զի վեհափառ կայսր ոք մատնեսցի ՚ի մէջ զօրաց և նախարարաց իւրոց ՚ի ձեռս դահճաց։ Եւ՛ կարէ լինել. թէ հայրապետ ոք զրկեալ ՚ի հայրապետութենէն խոնարհեսցի այլում, որ էառն զիշխանութի̅ նր̅։

3. Տե՛ս, թէ զի՞նչ եղև վախճան մեծի կայսերն վիտելլիոսի։ Զի մեծացաւ յոյժ յոյժ, և ոչ միայն զարևելեայս, այլև զարևմտեայս էարկ ՚ի ծառայութի̅ հարկի. և մեծութե̅ նր̅ ոչ գոյր բաւ. զի առաւել քան զաւազ ծովու էր ոսկի առաջի նր̅. և ՚ի հռոմ ամենեքեան ՚ի փողոցս և ՚ի կրպակս գովէին, և բարձրացուցանէին զնա. բայց յի՞նչ աւարտեալ վերջացաւ փառքն նր̅. ոչ յայլ ինչ, եթէ ոչ ՚ի մեծագոյն խայ-

տառապակութ՟: Քանզի արկեալ առն զպարանոցաւն. կապեալ զձեռս 'ի յետս. արկեալ զնովաւ հանդերձս պատառատունս, և ցցեալ զսուր 'ի յանջոն, ածէին, ձգէին, և քարշէին ընդ հրապարակս, ընդ փողոցս, և ընդ պողոտայս հռօմայ յանհնարին նախատինս նորուն: Ո՜ բիւր թշուառութ՟ աղէտս առնէին նմա. և զմօրուօքն ողմաձէգքնէին՝ մինչև ածին կացուցին 'ի տեղի սպանման 'ի հրապարակ անդր առաջի անհամար բազմութ՟, ուր խողխողեցին զնա չարաչար, և արկին 'ի վայր ընդ սանդուխսն գեմոնեայ, և ապա 'ի կերակուր թռչնոց երկնից եթող զդի մեծամեծ ապիրատաց, որոց չէ օրէն առնել զթաղումն: Արդ՝ զի՞նչ քան զայս այլակերպ և այլայլականի, բարձրանալ, ձոխանալ ու մեծ 'ի հեշտութիս, 'ի փառս, 'ի պատիւ, և 'ի մեծութիս այնչափ ղդօնութ՟, և ապա զչարաչար, և զանարգ կատարած մահու անձին դրաւել:

4. Ո՞վ է, որ 'ի կատարած անդր վիտեղղեալ հայեցեալ և յառաջ քան զայն տեսեալ զնա ծնեալ 'ի փառս. յուսմունս իմաստից սնեալ. բեհեզս և ծիրանիս զգեցեալ. յամենեձևաձևակն զարդարեալ. յերկիւղալի աշտանակէն, 'ի զննելին կրկէսաց հանդիսացեալ, և յամենից կայսր մեհեծան կարդացեալ համարձակեսցէ ածել

ծել զմըտաւ՛, եթէ մեծաշուք փառաւորութիւն այն զայն կատարած դժնդակ ժառանգելոց է հարկին՛: Ո՛վ հաստատուն համարեսցի զերջանկութի մարդոյ, երբ զառաջինն հայեսցի ՚ի վաղերիանոս յերիվար օգոստափառելի աշտանակեալ, ծիրանիս զգեցեալ, լուսաճաճանչ թագիւ՛ պճնեալ, և յանհամար բազմաւէ երկրպագեալ. և ապա ոչ յետ բազում ա՛ւուրց իբրև զամեհի գազան ՚ի գառագղի արգելեալ. և պատուանդան ոտից Շապուհ արքային պարսից եղեալ, յորժամ նա կամէր յերիվար ելանել: Որ և զթիկունս նո̃ր ետ քերել, և ապա աղել իբրև զմիս ապխտի: Հայեա՛ց և ՚ի կայսրն զենոն, որ զկնի բազմամեայ փառաց և հեշտութե̃, և մեծահանդէս խրախճանութեց՝ չ̃չահեղձոյց եղև. և իբրև մեռեալ թաղեցա՛ւ, թէպէտ կենդանի էր. և անդ ՚ի գամբարանի եկեր առ սովոյն զմարմին իւր, յորժամ ՚ի յուշն դարձա՛ւ:

Է. Հայեա՛ց և ՚ի բելիսարիոս, որ յաղթանակեաց վանդալաց և գթաց, և եարկ ՚ի շղթայս զթագաւորս նց̃: Եւ ՚ի հարկի ծառայութե̃ զաֆրիկէ և զսիկիլիա. և նուաճեաց զպարսիկս յարևելս. ժառանգեաց զանուա՛ն գանձս ոսկւոյ և արծաթոյ ՚ի միում ժամու, զոր վանդալք ժողովեցին ութսնամեայ ժմ̃նկօք: բայց զրկեալ յանձէ, և մերկեալ

կեալ ՚ի փառաց կայր ը͞ մուրիկս ընդունիլ ողորմութեն առ հոյակապ եկեղեցւոյն սրբուհւոյն սոփիայ ՚ի կոստանդնուպօլիս. և շրջէր ը͞ փողոցս քաղաքին աղքատ, կոյր, և մերկ:

6. Եւ դիոնեսիոս երկ͞դ արքայն սիկիլեայ անկեալ ՚ի փառաց թագաւ̂որութեն եղև դաստիարակ մանկանց իբրև զռամիկ ումն: Եւ̂ թագաւ̂որն ադոնիբեզեկ յաղթականն եօթանասուն թագաւ̂որաց, ՚ի գերութեն վարեցաւ̂ յորդւոցն իէ͞լի. որք ՚ի նախատինս նր͞ կտրեցին զծայրս ձեռաց և ոտից նր͞: Եւ̂ թագուհին դոսւինդայ սիրեցեալն և փառաւ̂որեալն յարքայէն լեւիգիլդոսէ առնէն իւրմէ, սպանաւ̂ ՚ի հրապարակս թոլեդայ առաջի անհամար ժողովրդոց խեղդամահ եղեալ ՚ի դահճաց: Եւ̂ դշխոյն Մարիամ կին կայսերն ովդոնի եղև դատապարտեալ առ ՚ի մահ յառնէն իւրմէ վ͞ն խնդրելոյ զվրէժ մահու անմեղ և անպարտ կոմսին մուտինայ, որ ոչ համաձայնեցաւ̂ պագշոտ թախանձանաց դշխոյին, և նա առ սրտմտութեն ամբաստան եղև զնմանէ, իբրև ՚ի հրապոյրս ճակաճանութեն վարեալ ՚ի նմանէ: Աղէ՛ տես, զի ոչ ինքնակալ պետութիք, և ոչ բարձրացեալ արմատացեալ և հաստատեալ իշխանութիք ապահով են յանհաստատութենէ մարդկային փոփոխութեն: Վ͞նկ քաջ խօ-

ժէ͞ սեուսուցաւ երանելի մտաբանն գրիգոր, որ ասաց, մարթ է ապաւինել յաւէտ 'ի Հոգին, և 'ի տառս դրոշմեալս 'ի վր̅ ջրոց, քան 'ի մարդկային բարեբաստիկ երջանկութեան :

Յօդուած Ե̅ :

ԱՅԼ տիրաբար խօսելով չեն սոքա անկմունք, կամ կործանմունք, այլ միայն փոփոխութիւնք : Քանզի ոչ տեսեմք անկանիլ ումեք 'ի սորին տեղւոջէ, զի մարդկային երջանկութիւնք կարի սորին և անարգ իմն են : Բայց ճշմարիտ անկմունք են կործանմունք Հոգևորականք, յորժամ ոք 'ի բարձրութէ շնորհաց դաՀավէժ լինի 'ի խորս մեղաց, և անօրէնութեց : Վասն սորին և զգոյշ պարտիմք, զի և ո̅ն այսմ մասին կամք 'ի ներքոյ անկեալ բիւր փոփոխութեց : Եւ թէպէտ բարիք կենցաղոյս կարեն բառնիլ 'ի մէնջ ընդդէմ կամաց մերոց, սակայն զՀոգևորականսն ոչ ոք կարէ բառնալ, յորժամ մեք ոչ կամիմք կորուսանել զնս · այլ սակայն այնչափ Հեգ և թշուառ եմք, զի կամովին կորուսանեմք զնս · ուստի որք իւրովի անփոփոխ են, առնեմք զնս փոփոխականս մերով փոփոխութ̅բ :

2. Պատմէ սբ̅ պետրոս դամիանեան, թէ ճանաչեմ զմիայնակեաց ոմն 'ի բե-

Նեվենա քաղաքին մադեղինոս անուն, սա էր ասէ այր մի և հրաշագործ, և ՚ի մէջ այլ բազում սքանչելեաց արար և զայս ինչ, զի ՚ի միում աւուր շաբաթու ՚ի կաղմելն և ՚ի յօրդարելն զկանթեղս աւելի քան զերկոտասանս, պակասեաց իւղն վն միոյն. և նա կենդանի հաւատով ելից զջուր փոխանակ իւղոյ, և ելոյց պլպատրոյկսն, և այն մին ևս ոչ զայլոն վառեցաւ զգիշերն ողջոյն առանց իւղոյ: Արդ՝ տեսցուք վայր մի, թէ զի՞նչ եղև առնս այսմիկ սքանչելագործի, և փառաւորելոյ յամենեցուն՝ ի բառնալ ամենակալին զձեռս իւր ՚ի նմանէ: Քանզի անկաւ ՚ի զազիր պղծութիւն մարմնոյ, և արկաւ ՚ի բանտ, և ապա հրապարակաւ հրամանաւ դատաւորաց տանջեցաւ չարաչար:

3. Պատմէ դարձեալ նոյն սբ պետրոս դամիանեանն, թէ ՚ի քաղաքն բենեվենտ էր քահանայ ոմն մեծ ծառայ այ, որում հանապազ՝ ի պատարագին նր իջանէր ակներև հրեշտակ տն յերկնից, և ընկալեալ ՚ի ձեռաց նր զխորհուրդն հրաշալի մատուցանէր այ, և զայս տեսանէր իշխան քաղաքին զօրհանապազ: Արդ՝ այրս այս հրաշալի և առաքինին յետ անչափ սրբութեցն ՚ի նոյն գործ պղծութե մարմնոյ գլորեցաւ: Պատմէ և սբ յօհաննէս կլիմաքոսն, թէ էր միայնակեաց ոմն երիտասարդ, այր

հրաշալի յոյժ, որոյ ակնարկութեն հնազանդէին ցիռք անապատի 'ի ծառայութեն վանիցն։ Զորմէ ասաց սբ հայրն անտոն, թէ նման է երիտասարդն այն նաւու, որ լի է մեծութբ վաճառաց, և նաւարկեալ գնայ 'ի ծովխորլին, և ոչ ոք գիտէ զվախճանն նր։ Արդ անկաւ կործանեցաւ նա չարաչար։ Եւ մինչդեռ ողբայր զմեղս իւր, ետես զի ելանէին եղբարք առ հայրն Անտոն. և պատուիրեաց 'ի ձեռն նց և ասէ. Ասացէք ծերոյն, զի խնդրեսցէ յայ վն իմ զաւուրս տասն առ 'ի ապաշխարել։ Զոր իբրև լուաւ սբ հայրն, ելաց, և զհերս փետեալ զգլխոյն, ասէ, սիւն մեծ եկեղեցւոյ անկաւ այսօր. և յետ բանին այնորիկ, իբրև անցին աւուրք հինգ, մեռաւ միայնակեացն։

4. Ողբալի է և այն՝ զոր պատմէ երանելին վն Հերոնեայ աղեքսանդրացւոյ, որ զամս բազումս եկաց սրբութ և առաքինութ մեծաւ, և կործանեցաւ այնպէս թշուառաբար, մինչ զի զտիւն ողջոյն դեգերեալ շրջէր 'ի քաղաքին։ Նոյնպէս պատահեցաւ և պտղոմեայ եգիպտացւոյ անապատաւորին, որ զկնի հնդետասանամեայ ճգանցն յանմարդաբնակ վայրս, զի կեայր ցօղով երկնից, և լոկ հացիւ, և յաղօթս անդուլս և անդադարս, թողեալ զայն ամ, մատնեաց զանձն

'ի պղծութիւնս գարշութեանց : Ապա եթէ ընթասցուք 'ի յԱստուածաշունչ գիրս, գտցուք և անդ զմեծամեծ փոփոխութիւնս, և անհնարին գլորմունս : Ո՞վ կարէր խորհել, եթէ սաւուղ ընտրեալն այն, հեզն, և խոնարհն, և լաւն 'ի մէջ ամենայն որդւոցն իսրայէլի · անհնազանդեալ հրամանաց այն լինելոց էր իբրև զբանսարկուն սէգ և ամբարտաւան, և հալածելոց անհնարին ատելութեամբ զայրն Աստուծոյ սրտին իւրոյ, որոյ նմանն ոչ գոյր 'ի մէջ իսրայէլի : Ո՞վ համարձակէր զմտաւ ածել · եթէ սաղոմոն, քան զոր ոչ ոք գտաւ իմաստուն, և 'ի մանկութէ կրթեալ էր յԱստուածպաշտութեան, խոնարհելոց է զբարձուն կռոց, և շինելոց զտաճար նոցա վասն սիրոյ կանանց : Եւ ո՞վ համարձակէր զմտաւ ածել, եթէ մին յառաքելոց, ընտրեալն 'ի Քրիստոսէ · որնեալն առ ոտս երկնաւոր վարդապետին, անձամբ զանձն կախելոց է առ անյուսութենէն : Արդ՝ ո՞վ է, որ համարձակեսցի ապաւինել յանձն, և անապարծիլ · և ոչ ահաբեկեալ սարսափեսցի 'ի զմտաւ ածելն զանկանելի կատարածն · որով ունի վերջանալ :

* * *

ԳԼՈՒԽ

ԳԼՈՒԽ Խ. Գ:

Թէ [illegible] [illegible] ցուցանէ զնորին զունայնութիւն եւ զանարգութիւն :

Գելիմերոս արքայն վանդալաց էր արդարեւ մեծազօր, մեծյաղթ, եւ մեծագանձ յոյժ · բայց իբրեւ պարտեցաւ ՚ի Բելիսարիոսէ, եւ զրկեալ ՚ի թագաւորութենէն, ածաւ գաւառադղի՛ ՚ի Կոստանդնուպօլիս, եւ կացուցաւ առաջի Յուստինիանոսի կայսեր, եւ հայեցեալ ետես զվեհափառութիւն զարքունի, զականցն զճաճանչել՝ զպսակին, զորմոցն եւ զձեղունանցն զոսկենկար զկազմած · զկուսակալացն եւ զիշխանացն պար շուրջ զարքայիւ · ոչ ողբաց եւ ոչ եցոյց զնշան դառնութեան Գելիմերոս, այլ միայն ասաց զայն բանն ճշմարիտ՝ զիմաստնոյն · Ունայնութիւն ունայնութեանց · ամ ինչ ընդունայն է : Եւ՛ սովիմբ պատասխանի արար աներկիւղ եւ անկասկած այնմ զոր եցոյց յառաջագոյն ՚ի լերին անդ : Քանզի յառաջ քան զկացուցանելն առաջի կայսեր, իբրեւ պարտեցաւ ՚ի Թշնամեաց, եւ կորոյս զձմ զօրս իւր, փախեաւ ՚ի գլուխ լերին 'ի Նումիդիայ աշխ͞ին , և եկեալ Թշնամեացն պատեցին , պաշարեցին զլեառն , և նա նեղեալ 'ի սովու առաքեաց առ զօրագլուխ զօրաց Թշնամւոյն , և խնդրեաց 'ի նմանէ զհաց , զսպունգ , և զքնար : Զհաց առ'ի կազդուրել զկեանսն , որ նուաղէին · զսպունգ առ'ի սրբել զարտասուսն , որով ողբայր զկորուստ զօրացն , և Ճանաչէր հաւաստեաւ զունայնութե͞ աշխ͞իս , և աւարտել նովաւ զկոծ իւր , զի մի' վերստին լացցէ զայն , որ չէ ապահով , և կորուսեալ ոչինչ վնասէ : Զքնար առ'ի սփոփել զսիրտ իւր տառապեալ , զի ոչ շատացաւ սպունգաւ սրբել զարտասուս :

2. Ո՜վ որչափ ճշմարիտ է բան իմաստոնոյն , թէ ամ͞ մեծութիւնք աշխ͞ս են ունայնութե͞ ունայնութե͞ց · և յօժարութիւնք ոգւոյ : Արդ՝ զի՞նչ կայր մեծագոյն յաշխ͞ի , քան զպետութի͞ հռովմայեցւոց : Ե՞ւ սակայն հազիւ հազ թէ ընտրեալ դնէին զմի ոք 'ի կայսր , ահա նոյն իսկ ընտրողքն կամ այլք զօրաւորք , և խորամանկք սպանանէին զնա : Զի աւանիկ յիննուտասն · կամ 'ի քսան ինքնակալաց , որք 'ի մէջ անտոնինեանց իմաստասիրին , և կղօդեայ երկ͞դին էին , ոչոք մեռաւ օրհասաւն , այլ ամենեքին մեռան յապստամբաց և 'ի բռնաւորաց : Ե՞ւ ցայնչափ էր բռնաւորութի͞ նց͞ յամս գաղղի-

ենայ կայսեր 'ի սպանանել զմիմեանս, մինչեւ մի և նոյն էր առ նմ̃ լինել կայսր, և մեռանիլ չարաչար և դժնդակ մահուամբ։ Ո՛, եթէ 'ի միտ առնուաք, թէ բարեբաստութի̃ք մերս ոչ միայն վերջանան ընդ աղցաւոր կենացս, այլ և յոլով անգամ յառաջ քան զնոյն կեանան վերջանան, և փոխին 'ի թշուառութի̃։

* * *

ԳԼՈՒԽ Ե։

Յղ̃գս անարգութե̃ և թշուառութե̃ ժմ̃կաւորացս․ և թէ որչափ թշուառեցան 'ի հարկէ, որք սիրեցինն զնս̃։

ՈՉ միայն խոտելիք են ժմ̃կաւորքս վս̃ կարճատեւութե̃ և անհաստատութե̃ իւրեանց, այլ զի են նաև փոքրիկ նուաստ, ապականիչք, և թիւրեալք 'ի չարաչար կիրարկութե̃ անօրէն մարդկան․ վ̃յ եթէ մշտնջենաւորք ևս էին, խոտելիք էին վս̃ անարգութե̃ իւրեանց։ Ասէ ո̃ք Յօհաննէս աւետարանիչն 'ի գիրս յայտնութե̃, թէ տեսի, զի ելանէր 'ի ծովէ գազան մի ահաւոր, որոյ գլուխն էր իբրև զառիւծու, մարմինն ընձու, և ոտքն իբրև զարջու, և ունէր գլուխս եօթն, և եղջիւրս տասն: Ահաւասիկ սոյնպէս է ամենեւին և Տաղի 'ի նմա ցանկու՟ն մարմնոյ նմանի արջու, որ է կենդանի վավաշոտ: Ցանկու՟ն աչաց, զ՟ի բաղձանք մեծութ՟ց և ընչից նմանի ընձու, որոյ մորթն է խայտախարիւ՛, ոպ՟ խայտաճամուկ են և ինչք փարթամաց: Եր՟ ամբարտաւանու՟ն աստի կենաց, զ՟ի ցանկութ՟ն փառաց նմանի առիւծու, որ առաւել սիգաձեմ և գոռոզ է 'ի մէջ կենդանեաց: 'Ի հրեշից աստի բաղադրի հրէշն հրէշից, զոր կոչեմք աշխարհ. որ ունի գլուխս եօթն. զ՟ի զեօթն գլխաւոր մեղս, և եղջիւրս տասն, զ՟ի զխոտորումն 'ի տասնաբանեան օրինաց, և յա՟մ պատուիրանաց ա՟ն, որովք մարտնչի ը՟դ ա՟յ:

2. Տեսցուք և ևս, եթէ զիա՛րդ խորհրդեամբ իմն երեւէին մասունք մարմնոյ գազանին: Ոտքն էին ասէ, իբրև արջու, մարմինն իբրև ընձու, և գլուխն իբրև առիւծու: Քանզի ա՟մ յօժարութ՟ն, և ա՟մ գործք կենցաղոյս հիմնին 'ի վ՟ր ցանկու՟ն զգայական բաղձանաց, որ է բնական, և 'ի վ՟ր հիմանս այսորիկ յաւել չարու՟ն մեր զարծաթսիրութ՟ն, և զպատուասիրութ՟ն՝ որք չեն բնական, այլ մարդկային գիւտք: Իսկ արծաթն, կ՟մ ընչասիրութ՟ն է մարմին Տէս. վ՟զի 'ի վ՟ր ն՟ր բարձ-

րաբացեալ բազմի ամբարտաւանութե՟ն իբրեւ գլուխ։ Ուստի կայ արծաթն 'ի մէջ յարմարագ՟ իբրեւ իրան 'ի մարմնի· զի հեշտութե՟ն, եւ փառամոլութե՟ն է կարի կարեւոր, եւ սա է, որ ձեւացուցանէ զմարմին գազանիս այսորիկ։ Արդ՝ զո՞ր իսկութի՟ն, զո՞ր ճշմարտութի՟ն· եւ զո՞ր էութի՟ն ունիլ կարէ այն Ծ, որ է եղջերուաքաղ լինի։ Վ՟զի ը՟ս Փիղոնի իմաստասիրին գլուխ իրացս է մի միայն վախճանն, եւ զի կենդանականքս 'ի չարաչար կիրարկուէ մերմէ զրկեալ 'ի վախճանէն իւրեանց ունին զզանազան եւ զայլանդակ վախճանս մոլութե՟ց· վ՟նկ այս գազան հրէշաւոր, ո՟ր Ծս ո՛չ զմի, այլ զբազում գլուխս ունի։ Քանզի ո՛չ խնդրեն մարդիկ 'ի կիրարկութե՟ իրաց զվախճանն հաճոյ լինելոյ եւ ծառայելոյ ա՟յ, այլ լինելոյ հաճոյ ախտից եւ բաղձանաց իւրեանց, եւ զի սոքա են զանազանք, վ՟ն այն եւ վախճանքն ն՟ց զանազան· յորմէ յառաջ գայ, զի բազում եղիցին եւ գլուխք գազանին։

3· Արդ՝ Ծս զհետ լինելով յաստի կեանս զանազան վախճանաց, որք են հակառակ լուսոյ բանին, եւ բնութե՟, է ունայն եւ սնոտի, եւ ոչ միայն ինքն է ունայն, այլ եւ զպարարածս առնէ ունայն, զի ամենեքեան ստեղծան, ո՟պզի մարդն նոքօք ծառայեսցէ ա՟յ, եւ յորժամ չիք 'ի ն՟ա այս վախճան, լինին ունայն եւ անօգուտ : Զի ո՞չ յորժամ հանեն աչք քաջահմուտ նետաձգի, ոչ ևս օգտեն նմա հմտութիւն նետաձգութեան, և նետք և աղեղն իւր : Այսպէս աչք իմաց է վախճանն նոցա, որոյ ընդ բառնիլն, չեն ինչ յօգուտ : Այդ՝ բազմութիւն ոսկւոյ և արծաթոյ, ակնանց և մարգարտաց, 'ի զգեստս, և յայլ իրս, թէ իցեն յօգուտ ծառայութեան մեր, և թէ ոչ, հարցցուք ցմեծն Աղեքսանդրոս․ և տեսանեմք, զի նա ոչ 'ի կէր էառ զայսպիսիս վասն այսր վախճանի, ապաուրեմն եթէ ոչ են վասն ծառայութեան մեր, են սնոտի և ընդունայն: Սոյնպէս յղփութիւնք հեշտութեանց․ և խնճոյից․ խաղուց և կաքաւմանց, ուրախութեանց և զբօսանաց թէ իցեն վասն հաճոյ լինելոյ մեր, և թէ ոչ, հարցցուք ցմեծն բրոնոնոս, և տեսանեմք զի նա ոչ ընտրեաց զայնպիսիս վասն այսր վախճանի․ ապա սնոտիք են բնաւքն : Սապէս թէ իշխանութիւնք, և թագաւորութիւնք, պատիւ և մեծութիւնք իցեն վասն ծառայելոյ մեր, և թէ ոչ, հարցցուք ցմեծն Յովասափ, և տեսանեմք, զի նա փոխեաց յառժամկեայ թագաւորութենէն առ 'ի ծառայել թագաւորին երկնաւորի : Ապա սնոտի է ամենայն մեծութիւն, յորժամ նովաւ ոչ կարեմք ստանալ զերկնայինն :

Յօդուած Է։

ՈՉ միայն այս անկարգութիւն թիւրելոյ զժամկաւորս յուղիղ վախճանէ նոցին, ցուցանէ զունայնութիւն նց՟, այլև ցուցանէ՝ թէ չունին զհամեմատութիւն նաև առ այն վախճան, զոր մարդիկ խնդրեն 'ի նս՟։ Զի զի՞նչ խնդրէ մարդս յընչից, 'ի փառաց, և 'ի ճոխութեց, որք են գլուխք նր՟, ոչ զայլ ինչ եթէ ոչ զերջանկութիւն յաստիս· իսկ ժամկաւորքս ոչ միայն փոքր մի ոչ օգնեն նմա առ այս, այլև անհնարինս տառապեցուցանեն զնա։ Տե՛ս դու ինձ, թէ առ'ի ունել զփառս, ո՞րպիսի անոտի և անբանագոյն օրէնք կարգեցան յաշխարհի· որք զհանգիստ և զկեանս մարդոյ ունին 'ի վտանգի։ Զի՞նչ մոլեգին յիմարութիւն քան զայս, զի մեծ ինչ համարեցեալ բարին աշխարհիս, իցէ լի չարեօք և թշուառութք· և իցէ դիւրին 'ի կորուստ, և դժուարին 'ի գիւտ· և թէ որ կամի, կարող է բառնալ զայն 'ի մէնջ· և մեք չեմք ձեռնհաս անդրէն հաստատել 'ի մեզ։ Զի՞նչ վատթարագոյն, կամ ապիրատագոյն օրէնք քան զայս գտանիլ կարէ· թէ նուաստ և անարգ ոմն ասելով ցքեզ· թէ սուտ խօսիս, բարկցիս զպատիւ քո. թէպէտ ինքն իցէ սաստասայց : Եւ թէ զայս պատիւ. զոր 'ի քէն եբարձ միով եւեթ բանիւ, դու չկարիցես միով պատասխանեաւ տանել զայն, այլ հարկ իցէ քեզ բռնանալ 'ի վ՟ր նր՟. Զի՞նչ վատթարագոյն քան զայս : Ոչ ապաքէն ջանալն տանել զպատիւ բռնութ՟ ցուցանելոյ զճշմարտութ՟ն, է յիմարութ՟ն եւ խելագարութ՟ն. եւ այս վ՟ս երկուց : Նախ՝ զի լինելն կորուսիչ եւ զօրաւոր ո՛չ առնէ զանձն ուրուք պատուելի. կա՛մ ճշմարտասաց : Երկր՝ զի վնասակար է այս առաքինեաց. վ՟զի բազում անգամ որչափ առաքինի է ոք եւ ս՟բ ի՟ր հոգւոյն, այնչափ տկար է ի՟ր մարմնոյն :

2. Արդ՝ գալով առ փարթամութիւն ասեմ, թէ այնչափ արար զն՟ս չարութ՟ն մարդկային, մինչզի եղեն առաւել տանջողք եւ դահճիք, քան թէ դիւրիչք կենաց մերոց : Վ՟զի որ մեծատունն է. ո՛չ շատանայ, եւ ո՛չ հանգչի, մինչ եւ ոչ լիցին եւ ամ՟ ինչք տան նր՟ ազնիւ եւ մեծագին : Ո՛չ շատանայ զգեցեալ բեհեզս, եւ ծիրանիս, եւ զհանդերձս պայծառս, այլ ախորժէ, զի առաւել քան զանձն եղիցին զարդարեալ որմունք տանն զանազան նկարուք, յախճապակեալ յօրինուածովք, եւ ազգի ազգի զարդուք ոսկեզօծ ձեղուանց. որք ոչինչ բնաւ օգտեն

առ հանդիստ. այլ միայն են առ 'ի ցոյց։ Վկայ և կարի արժանահաւատ լինի այն, զի մեծատունք ելիցեն առաւել կարօտք քան զայլս. քանզի ունին զկարիս մեծ անձին. և մեծ իրացն, զոր ստացեալ ունին։

3. Այս լծիւրութ անկարգութե երևի և յայլ իրս, որք կարգեցան մեծ պիտոյից մարդոյ, իսկ չարութ մարդկային և զնոսին խանգարեաց։ Զի աճանիկ չեն 'ի համարի զանկապանք, և ճարմանդք, բայց եթէ իցեն զուսպք և տաղտապիչք, խոչ և արգել բազում գործոց մարմնոյ։ Պաճուճանք զարդու, և մեհեանդք ոսկեղէնք, և այլ աւելորդ մեծաշուք զարդք են առաւել տառապանք, քան թէ զարդարանք։ Այնպէս և կերակրոց կերառութե, որ կարգեցաւ 'ի պահպանութի կենաց, եղև 'ի չարութէ մարդկան աղդի աղգի խառնուածովք յօրինել զնա՝ հակադարձ յապականութե կենաց, և առողջութե. որովհետև 'ի նոցանէ ծնանին զանազան ախտք հիւանդութեց։ Վկայ ասէ Մարկեղ Դոնատոս. եթէ աստի յառաջ եկին բազում նորոգ ախտք ցաւոց։ Եւ Եկտոր Պայեսիոս 'ի պատմութիս եգիպտացւոց ասէ, թէ ոչ երևեցաւ 'ի եգիպտիայ ժանտախտ, կամ տենդ սաստիկ յոյժ երբէք. մինչև ոչ եմուտ 'ի նա համադամութե կերակրոց։

7. Արդ՝ եթէ բաց 'ի յունայնութենէ իրաց, զոր ունին ըստ ինքեանց, նկատեսցուք 'ի նոյն և զբաղմունս ախտից, որով մարդիկ առնեն զնոյն զօրհանապազ վատթարագոյնս. ո՞ւմ արդեօք տանելի եղիցի այս հրէշագայրագին գլխոց գազանին, կամ հարուած վիրաց՝ եղջերց մերոցս ախտից։ Զի՞նչ ապիրատութիւնք ոչ գործեցին։ Զի՞նչ շողոմութիւնք համոզկերաց ոչ եղիցին։ Զի՞նչ նենգութիւնք խարդախութեանց ոչ արձանացին։ Զի՞նչ վրիժուց հատուցմունք ոչ գործեցին։ Եւ զի՞նչ վտանգ յափշտակութեանց ոչ գտցին 'ի նոյն։ Զի ագահութիւն բոլորովին զազիրս գործէ. բղջախոհութիւն ամենևին ապականէ, և ամբարտաւանութիւն գլխովին խառնախորլթս առնէ։ Վա՜յ թէ տեսանէաք զայն դառնութիւն, և զայն վնաս, զոր ունի Ծս ընդ կեղծաւորիր տեսլեամբ իւրով։ որպէս յայտ է 'ի յառաջիկայ պատմութենս։

5. Էր քահանայ ոմն սրբակրօն Վողկանեա անուն՝ նախանձախնդիր հոգւոյ փրկութեան։ Սա կամեցաւ ձգել առ ած զմեծատուն ոմն ընկղմեալ 'ի սէր Ծի։ Ուստի ջանս եդ, զի միանգամ մեծատունն այն հրաւիրեսցէ զինքն 'ի ճաշ։ Եւ եղև. զոր խնդրէրն, զի հրաւիրեաց զնա յաւուր միում մեծատունն ուտել զհաց ընդ նմա։ Արդ՝ մտեալ քահանային

'ի

'ի տունն ասէ ցնա, զի՞նչ ունիս մեզ պատրաստեալ այսօր 'ի ճաշոր : Եւ՛ նա պատասխանի ետ եւ ասէ, զամենայն որ ինչ գտանի 'ի քաղաքիս ազնիւ՛ եւ մեծագին։ Յայնժամ եւանդնոտն վոզկանէս ել գնաց 'ի տեսանել զայնոսիկ։ Եւ՛ առեալ զնա մեծատունն, ընդ որում էին եւ բազմութիւնք մարդկան էած 'ի խոհակերոցն, եւ հրամայեաց խոհակերին բերել առաջի զսկուտեղան մի ըստ միոջէ՝ եւ ցուցանել զկերակուրսն։ Ո՛վ սքանչելեացս, զի իբրեւ 'ի վեր առին զխուփսն սկուտեղացն, յորս եդեալ կային ծաղկազարդ յօրինուածովք ազգի ազգի խորտկօք թռչնոց, փասիանաց եւ սիրամարգաց, աղաւնեաց եւ տատրակաց, տեսին զնոսա փոխարկեալ զոմն յօձ. զոմն 'ի կարիճ, զոմն 'ի գորտն, եւ զայլս 'ի յայլ ճճիս : Զոր տեսեալ մեծատունն, սոսկացաւ յոյժ, եւ ուսաւ, թէ տալ զանձն 'ի շուայտութիւն եւ 'ի հեշտութիւն, չէ փոքր վնաս, քան թէ ոք կերիցէ զայնպիսի թիւնաւոր ճճիս եւ թէ բազումք մեռան 'ի հեշտութէ, քան յառիւծուց, եւ յամեհի գազանաց :

* * * * *
* * * *
* * *
* *

ԳԼՈՒԽ

ԳԼՈՒԽ Զ:

Յղ̃ս թերութե̃ն ժամանակաւորացս:

ԲԱյց տեսցուք. եթէ որչափ ժմ̃կաւորքս բայց 'ի գոլոյն անուանի, են և փոքրիկ, և կարճատև: Աղէ՛ սկիզբն արասցուք խօսիլ զբարեացն աշխարհի, որ համատարած սփռի, և մեծ համարի, մր̃ զփառաց՝ զհամբաւոյ, և զանուանէ: Ցանկան և ախորժեն մարդիկ. զի համբաւ իւրեանց հնչեսցէ յաշխարհ ամ̃, և ամենեքին ծանիցեն զանուն նց̃: Այլ զի՞նչ. ոչ ապաքէն բիւրք բիւրուց են յաշխարհի. որք ոչ գիտեն թէ դոյ կայսր Գերմանիոյ. կմ̃ թագաւոր Սպանիոյ: Յառաջ քան զծնանիլ քոյ էանց մշտնջենաւորութի̃ մի, յորում ոչ ոք գիտէր զքեզ. և յետ լինելոյդ անցցէ նոյնպէս և այլ մշտնջենաւորութի̃, յորում ոչ ոք յիշեսցէ զքեզ: Իսկ 'ի դուզնաքեայ ժմ̃կդ, յորում ես դու, սակաւք են, որք ճանաչեն զքեզ, և բազումք 'ի նոցանէ ամբարիշտք են. Ապա զի՞ զհետ կրթիս այդպիսի ունայն, կարճատև, և անարգ իրաց, և հաշեալ հիւծիս, և մաշիս :

2. Զի՞նչ ասացից ապա զունայնութ՟է նց՟, որք բազմացուցանեն զվերնագիրս, զի ճանաչեսցին յայլոց : Խորհէին ծառայքն եքեքերայ արքային հնդկաց . թէ ունելոց է նա զանուն և զյիշատակ 'ի յաւիտեան, և թէ մինչդեռ կենդանին է նա, զի ամ՟ ծանիցէ զնա, և սարսեսցի 'ի նմանէ. բայց ոչ իմանային զայս, զի թէ ոք հարցանէր զնմանէ յեւրոպիայ . ոչ ոք իմանայր, թէ զումմէ արդեօք խօսէր հարցանողն : Քաջ գիտեմ ես, զի սակաւք գտանին ևս 'ի յարանց գիտնականաց, որք 'ի գիրս դեդերին, թէ գիտիցեն զանուն նր՟ . այլ միայն նք՟՝ որք զայս մեր մատեան աստ ընթեռնուն, իմանան, թէ այսպիսի ան՟ թագաւորեալ է 'ի հնդիկս : Այնպէս ո՞րչափ սակաւք գտանին, որք լուեալ իցեն զայս անուն, մեծհաստատապատին բաջոյ : որ է անուն թագաւորի միոյ հնդկաց : Այլ նա ինքն մեծամեծս փքայր, և խորհէր, թէ ոչոք 'ի կանանցածնացս անգիտանալոց է զանուննր՟ . և յայս մոլորութե՟ կային և այլք թագաւորութե՟ նր՟ . մյ՟ կոչէին զնա տր՟ թագաւորուե՟ց և կայսր մեհափառ : Ուստի և մակադիրք իւր, զորս մեծ համարէր, և արձանագրութիւնք 'ի սկիզբն գրոց իւրոյ՝ էին այսոքիկ : փեսայ բարերատուե՟

տուն, արքայ մեծամեծ գաւա՛ռաց ․ Թագաւո՛ր մեծազօր Թագաւո՛րաց, և ա̃ծ արքայից ․ տ̃ր ա̃մ ասպետաց ․ վարժապետ անխօսից ։ կայսր երկից կայսերաց ․ յաղթական երևելեաց ․ խնամատար նուա՛ճելոց ․ սարսափելի տիեզերաց ․ տ̃ր գաւա՛ռաց ․ եղծիչ զօրացն մահմետականաց ․ կործանիչ ճոխութ̃եց սեղանոյ, բարձօղ գլխոյ անյաղթին բիւրավաղեննոսի, և որսորդ փղաց ։ Այս են գովեստ փառաց դիւցազինն և զօրավարին պատերազմաց վէնկատապատինոսին բաշայ ․ որ Թագաւո՛րէ և կառավարէ զաշխարհս ա̃մ առհասարակ ։

3․ Արդ՝ ո՞վ գիտէր ասել ինձ զայսոսիկ, եթէ չէր իմ յայտնեալ ՚ի մատենի աստ՝ թէ սա էր Թագաւո՛ր ոմն Հնդկաց յաշխարհէն Նարսինգայ ։ Եւ՛ արդ ո՞չ մեծազօր Թագաւո՛րքս այսոքիկ չեն ծանօթ բնակչաց եւ՛րոպիոյ ․ նոյնպէս չէ ծանօթ բնակչացն ասիոյ և ափրիկէի կառոլոս հինգերորդ քաջ պատերազմականն, և այլ արք քաջակորովք, որք ՚ի դէնս, և ՚ի գիրս ծաղկեալ երևին յարևմուտս ։

4․ Իսկ եթէ հայեսցուք յիսկութ̃ն և ՚ի ճշմարտութ̃ն մակագրաց, և վերնագրաց, զոր ՚ի կէր արկանեն մարդիկ, տեսանեմք, զի են ամենևին ունայնութ̃ն ։ Քանզի ստացան զանուն մեծութ̃ն և

մեվեհափառութե, որք հոգւով էին տնանկք անարգք, և 'ի մեղս ընկղմեալք. և զի՞նչ քան զայս ապերախտագոյն, և անարգագոյն: Զի՞նչ անմտագոյն քան զայս, զի բազումք կամին ունիլ զմակաղիրս՝ պայծառափայլ ծն, որք ըխուր ախտիւք խաւարեալ ունին զմիտս, և ապականեալ զկամս: Ե՞ գիտեն, զի ոչ ոք է աւելի քան զայն, որ է յաչս այ: Քանզի ոչ, որոյ պայծառ են ազգատոհմք, մեծ է առաջի այ. այլ որ ունի զուղղափառ հաւատս, ոչ՝ որ ծնեալն է 'ի մեծակառոյց ապարանս, այլ որ վերստին ծննդեան աւազանին արժանացեալ է: Զի՞նչ է ծնունդն 'ի յազնուազարմից առ ծննդեամբ մարդոյ 'ի կողիցն քի: Զայս քաջ վկայեաց ակներև տեսլեամբ սրբուհի ապաշխարող կինն սանկիա կարտոնեանն: Զի սա քանիցս անգամ առաջիկայ գտանէր մկրտութե երեխայի. տեսանէր, զի քն կայր 'ի վր խաչին բացեալ զկողսըն. և մանուկն, զոր մկրտէին, ելանէր 'ի սրտէ անտի քնի արտաքս: Ե՞ ամլա՞ ցուցանէր քն զնորոգ ծնունդն զոր մեզ պարգևէ արեամբ իւրով: Զի սա է, որ պայծառս առնէ զմեզ յաչս այ. և ոչ այն, որ է 'ի մեղս ցանկութե ծնունդ անարգութե. սա ծնունդ արքունե, և այն ծնունդ մեղաց: Սա ծնունդ հոգւոյ, որ տայ զկեանս, և այն ծնունդ մարմնոյ, որ ապականէ: Սովաւ լինիմք որդիք այ, և նովաւ որդիք մարդկան: Սովաւ լինիմք ժառանգ երկնից. և ընդունիմք աստ զշնորհս, և 'ի հանդերձեալն զփառս, Արդ՝ զի՞նչ անմտութն քան զայս, պարծել և պանծալ 'ի մարդկեղէն ծնունդս, ուր ծնեալն է մեղաւոր, իսկ ոչ համարել ինչ զծնունդն ածական, ուր ծնեալն է արդար, և սբ:

5. Վասն արժանապէս ստաց մատալթի ցորդիս իւր յղէս փառաց Տէրս. փառք նք աշխեղէնք են, և ղաղէրք: Իսկ երանելին անսեղմաս նմանեցուցանէ զնս, որք զհետ լինին փառաց, մանկանց, որք զցայգն ողջոյն տարժանին տառապին մեծամեծ վտանգօք զհետ լուսատու ճճեաց: Եւ մարգարէն եսայի նմանեցուցանէ սարդից, որք աղէթաւ լինին յանկանել զոստայնս առ 'ի որսալ զճանճս, որ և 'ի նոյն իսկ ճանճից պատառոտի: Եւս և փառք և պատիւք բաց 'ի փոքրուէ և յանարգուէ իւրեանց, կորուսին և կորուսանեն զբազմաց հոգիս. ուստի եթէ դաւիթ անէծ զլերինս գեղբուայ, յոր անկան սաւուղ և Յովնաթան, յոյժ արժանաւ և իրաւամբք պարտ և պատշաճ է անիծանել զբարձրամուր լերինս փառաց, որք զբիւրս բիւրուց կործանեցին և կորուսին:

Յօդուած Ե:

Արդ՝ նկատեսցուք, թէ զի՞նչ եղեն և փարթամութք, զորս դրեգոր Ադրիանն հենդնելով կուտէ այնոմագին և մեծագանձ աղբեւ: Իմաստասէր կայսրն Անտոնինոս կուտէ զարծաթ և զոսկի դիրտ և մրուր հողոյ: զկինձս պատուական՝ ամրակուռ կարծրութս: զապրշում՝ թելս որդանց: Եւ զի՞նչ է հրամուշկն օծանելեաց, եթէ ոչ քիրտն այլատարազ ինչ կատուի: Զի՞նչ է ամպարն մեծագին, եթէ ոչ յածելուած կէտ ձկան: Զի՞նչ է մուշկն եթէ ոչ ապականեալ արիւն կենդանւոյ:

2. Իսկ թէ որչափ ինչ են քաղաքք, և գաւառք, աշխարհք և թագաւորութիւնք, հայեաց 'ի պարունակէ անտի լուսնի: Զի ըստ ղուկիանու աստղադիտին, եթէ ոք իցէ 'ի լուսնի պարունակին, և հայեսցի յերկիր, երևեսցի նմա ամ̃ թագաւորութիւնաց վայր մի չորս մատնաչափ, և բովանդակ Պեղոպոննիսս ոտնաչափ: Իսկ գունտ երկրիս, հատոր ինչ միայն: Տե՛ս թէ որչափ փոքր էր բոլոր թագաւորութիւն հերովդէի, զի եթէ տայր զկէս նր̃ վարձս կաքաւման աղջկանն, սակաւ

ինչ մնայր նմա : Եւ Համան, որ ունէր զանչափ մեծութիւն գանձուց . բերանովն իսկ խոստովանէր . թէ այս ամ ոչ թուի ինձ հաճոյ . այսու՝ զի ոչ երկիր պագանէր նմա մուրթքէ :

3. Ապա եթէ նկատեսցուք 'ի հեշտակիս ճաշակելեաց , են իրք զզուականութէ և անարգութէ : Քանզի զի՞նչ են թռչունք և հաւ՛ք պարարեա՛լք կերակուրք հեշտասիրաց և մեծատանց . եթէ ոչ անօթք որդանց , որք շարժեն զմարմին 'ի դարշութի : Քանզի եթէ ոք 'ի սանն , կմ 'ի պղոյտն , ուր եփի կերակուր , արկցէ զորդունս , զաղբ , և զճճիս հողոյ , ոչոք ուտէ զայն կերակուր : Արդ զի՞նչ են թռչունք , և հաւք , եթէ ոչ անօթ ճճեաց , որդանց և աղբեաց , և այլոց զզուելեաց , զորս ուտենն , որք են յաւելուածք պղամին , և այլոց դարշութեց մարդոյն : Եւ եթէ ճճի ինչ անկեալ իցէ 'ի կերակուր , կմ թէ խոհակերին թքեալ իցէ 'ի վր նր , զզուելի եղանի մեզ այն, և դադարեն շիջանի ախորժակ մեր անտի , ապա զի՞արդ ոչ լինի մեզ յաւէտ տաղտկալի, քան ախորժելի ուտել զայնս որք բարձեալ բերեն յանձինս զիրս զզուականութե , և դարշութեան : Զնոյն զայս կարեմք ասել և վս խոզի ապխտոյ . տե՛ս թէ զիարդ՝ և զինչ եղև կերակուր , և սնունդ կենդանւոյն :

Սոյնպէս և վ̅ս օձաձկան, որ պատուական ինչ համարի 'ի սեղանս մատուցեալ: Միայն հացն և ջուրն, և խաւարտք (կերակուրք ձկնաւորաց) են առաւել մաքուրք և ընտիրք քան զայլ կերակուրս, որք գտանին յծ̅ի:

4. Իսկ եթէ ակնարկեալ հայեսցուք 'ի զգայական հեշտութիս մարմնոյ, գտանեմք, զի են զազիրք և կարճատևք: Վ̅ս զի բաց 'ի փաղփաղ անցանելոյն, խառնեալ են և դառնութ̅ ցաւոց, որք յառաջեն . ուղեկից լինին, և զհետ գանն̅ց: Տե՛ս դու ինձ, եթէ յո՛ր վայրս տառապանաց և անձկութ̅ սրտի մատնել կայ, և է̅ վտանգս անցանէ պատճառն, մինչև առ ձեռն բերցէ, որում տենչայ: Եւ ո՛րպիսի ահ, և դողումն է̅ անձն ն̅ր անցանէ 'ի գործել զայն պիղծ գործ: և յետ կատարման գործոյն յո՛ր ցաւս դառնութ̅ փոխարկի հեշտութի̅ն, ո՛րպիսի երկարաժամանակեայ հիւանդութիւնք, ցաւք խստագոյնք, վրէժխնդրութիւնք, մահ, և ապականութի̅ն պատահին նմա: Եւ այն զի վ̅ս այսպիսի դուզնաքեայ հեշտութեա, կորուսանեմք զանանց բարիսն· առ ոտս կոխեմք զա̅ծային պատուիրանսն, և ապերախտք՝ ապաշնորհք գտանիմք փրկչին մերում · որ մեծամեծս խոստանայ մեզ տալ վարձս · եթէ վ̅ս ն̅ր արհամարհեսցուք զկարճատև,

տե, և զարհամարհ հեշտալիս զայսոսիկ:

5. Եւ զայս քաջ հաստատէ պատմութին այն, զոր պատմէ Կղիկաս. սաղով: Էր անապատաւոր ոմն. որ զամս քառասուն մնեալ էր յանապատի պարապեալ միայն 'ի շահ հոգւոյն պաշտմունք միակեցական վարուց: Սացանկացաւ գիտել, եթէ իցէ ոք հաւասար ինքեան առաջի այ 'ի յերկրի. և խնդրեաց 'ի տնէ յայտնել նմա զայն. որում պնի արար տր յերկնից եթէ 'ի չափ քո է և կայսրն Թէոդոս. քանզի արքունի մեծութն իսկ չէ պակաս քան զքեզ 'ի խոնարհութն, և 'ի սանձահարել զանձն: Զայս պատասխանի առեալ անապատաւորին 'ի տնէ, գնաց վաղվաղակի առ կայսրն, Թէպէտ մեծանուն ևս էր անապատաւորն. և մտեալ առ նա. (որ յարգէր յոյժ զծառայսն այ.) խնդրեաց յայտնել նմա զքաղաքավարութի իւր: իսկ երանելին Թէոդոս զառաջինն ոչ յայտնեաց նմա զմեծամեծ քաղաքավարութին իւր, այլ ասէ, չիք իմ արարեալ հայր զմեծ ինչ, այլ զի առնեմ ողորմութին բազում, պահեմ պահս ոչ սակաւս, զգեցեալ ունիմ 'ի ներքուստ զխարազն, պահեմ անբռնադատ զամուսնական հաւատարմութին, և առնեմ զարդար քննութի 'ի դատաստանի. Հաճեցաւ յոյժ անապատաւորն ը քաղաքավարութե նր. բայց

Թուեցաւ նմա, թէ իւրքն առաւել մեծամեծք էին քան զնորայն, զի առաւել է ասէր 'ի միտս իւր թողուլս իմ զա՟մ ինչ վ՟ Քի. քան թէ առնել մ՟ր զմեծամեծ ողորմութ՟ս. առաւել է ոչ գիտելս իմ զկին ոք 'ի կեանս իմ. քան զպահելն մ՟ր զողջախոհութ՟ : մեծ է ոչ առնելս իմ զզրկանս ումեք երբէք, քան զմ՟ր ջանսն, զի մի' եղիցին զրկանք մարդկան: խարազն և պահք իմ մեծ են յոյժ, զի են համապատոր ամբիծք ը՟ս միակեցական օրինաց, քան զորս հրաժարիլն զաւուրս ինչ 'ի մաղ: Վ՟յ սկսաւ ուժգին թախանձել զկայսրն, զի մի' ինչ թագուսցէ 'ի նմանէ, զի ասէ. տ՟ր առաքեաց զիս առ քեզ. զի գիտասցես զա՟մ քաղաքավարութ՟ քո: Յայնժամ ասէ ցնա թէոդոս. ծանի'ր հայր ս՟բ. զի յորժամ լինին ձիրնթացիկ խաղարկութիւնք. կա՟ այլ հանդէսք խաղուց 'ի թէատրոնս, և ես անդ գտանիմ, հեռի կամ յոյժ. և զրկեմ զանձն իմ 'ի տեսութ՟է նոցին. և ես յորժամ 'ի խաղարկութ՟ս սկսանի արդ իսկ լինել գործն սքանչելի, և արժանի տեսանելոյ, դարձուցանեմ յայնժամ զաչս իմ յայլ կողմն, կա՟ թէ այնպէս նայիմ, զի թէպէտ և բաց ունիմ զաչս իմ բայց ոչ տեսանեմ ինչ ո՟պ զկոյր: Զայն իբրև լուաւ անապատաւորն սոսկացաւ յոյժ 'ի վ՟ր այնպիսի մեծի ճգնութե՟ արքայլին, և ուսաւ, թէ իշխանութիք և ծիրանիք չեն արդեւք վարձուց առ ի՟ծ, յորժամ ոք զսպէ 'ի նմ՟ զհեշտութի՟ անձին : Յաւել ասել ցնա Թէոդոս. ծանի՛ր և զայս, զի կերակրիմ ես միայն 'ի վաստակոց ձեռացս. քանզի գիտեմ զգրչութի՟, և գրեմ գիրս աղնուագիրս, և վաճառեալ զն՟ս, գնեմ զկերակուր իմ : Ապուշ մնաց անապատաւորն տեսեալ զայնպիսի օրինակ աղքատութե՟ 'ի մէջ հարստութե՟, և զժուժկալութի՟ 'ի մէջ հեշտութե՟. և ծանեաւ, եթէ այն զրկեալ զանձն 'ի բերկրութե՟ց որկորոյն և աչացն էր, որ առնէր արդիւնաւոր զնա առաջի այ՟ : Եւ մեք 'ի մեր առցուք, թէ բերկրութիք ձիս եթէ 'ի դոյն օրինաւոր, խոչ են հոգևոր զարգացման մերոյ (բաց'ի լինելոյն կարճատեւք.) ապա զո՛րպիսի անպատմելի վնաս գործեն մեզ, յորժամ են ընդդէմ օրինաց :

6. 'Ի վերադոյն ասացելոցդ առցուք և զայն խրատ ճշմարտութե՟. զի է, ոչ հայիլ 'ի մեծութի՟ ձիս, և ոչ բաղձալ երկրաւոր հեշտութեց, զոր քաջ ծանոյց և ուսոյց Երանելին ակիրիոնին միում ումեք յաշակերտաց իւրոց : Քանզի դէպ եղև, զի յաւուր միում մոլին ինքն և աշակերտ իւր յապարանս կայսեր : Եւ աշակերտն սկսաւ հայիլ և պշնուլ 'ի զարդս ապարանիցն, 'ի յօ-

րինուածան սքանչելի· ՚ի ձեղուանս ոսկենկարս, ՚ի զգեստս ոսկեդիպակս· ՚ի յակունս ճառագայթարձակս, և ՚ի մարգարիտս պատուականս: Բայց որ գեր քան զայլս յապուշ կրթէր զիս, էր տեսանելն զկայսրն նստեալ յաթոռ փառաց պարառեալ ՚ի մեծամեծ իշխանաց· յորոց միջի փայլէր իբրև զարփի: Իսկ երանելին սպիրիդոն կամեցեալ ուղղել զաշակերտն ՚ի մոլորութենէ, եհարց զնա, և ասէ· ցո՛յց ինձ զկայսրն թէ ո՛ է· զի ես ոչ ճանաչեմ զնա, և ոչ զանազանեմ յայլոց: Եւ աշակերտն ոչ դիտելով զպատճառ հարցմանն, ձգեաց զձեռն, և եցոյց զկայսրն, և ասէ, ահա սա է: Յայնժամ ասէ ցնա երանելին· և արդ զի՞նչ ունի սա, վս̄ որոյ առաւել համարեսցի քան զայլսն, եթէ ոչ՝ զի առաւել պայծառ և փառացի են հանդերձք սորա քան զդոցայն: Միթէ ոչ և սա մեռանելոց է իբրև զն̄ս, և իբրև զանծանօթ մուրիկ ոք: Մի՞թէ ոչ և սա հանգոյն նոցին թաղեսցի ՚ի ծոց հողոյ: Մի՞թէ ոչ և սա իբրև զայլս կացցէ առաջի անհրաժեշտ ատենին, և առաջի անաչառ դատաւորին: Ապա զի՞արդ համարիս զանցականս իբրև զանանց, և մեծ ինչ հաշուես զն̄ս·

ԳԼՈՒԽ. Է։

Թէ որչափ աղէտալի, և [illegible]
իցէ ժմկաւոր կեանքս ։

1. ԱՅն օրինակ տեսցուք արդ 'ի մասնաւորի, թէ զի՞նչ իցէ իսկութ̃ ժմկաւոր կենացս, որ սիրելի է յոյժ մարդկան. և նկատեսցուք թէ զի՞ արդ 'ի սուղ շրջանի կենացս ընդ առաջ ելանեն անբաւ ձախորդութիք, և պատեալ պաշարեալ ունին զնա անհամար թշուառութիք ։

2. Ասէ փալերիտէս ակրականդացին, եթէ ոք յառաջագոյն քան զծնանիլն գիտէր, զոր ինչ կրելոցն է 'ի կեանս իւր, բայց 'ի բաց մերժէր արդեօք զծնանիլն ։ Եւ Պլինիոս հաստատէ, թէ բնութն է մօրու որդւոց մարդկան ։ իսկ սիւղենոս իբրև հարցաւ, թէ ո՞րն իցէ մեծագոյն երջանկութ̃ի յշ̃ի, պատասխանի ետ և ասէ, ոչ ծնեալ լինիլն, կմ̃ վաղվաղակի մեռանիլն ։ Ուստի իրաւամբք ասաց իմաստունն, Ամ̃ աւուրք նր̃ ցաւոց, և բարկութե̃ զբօսանք իւր. և 'ի գիշերի ոչ ննջէ սիրտ նր̃ ։ (ժողով. 2. 23.) ։

3. Եւ դու տե՛ս, զի ոչ միայն հիւան-

դուգունեք, այլ և դեղք դարմանաց նց̃ են թշուառունք մեծամեծք, զոր կրեմք: Քանզի բազումք 'ի յախտից և 'ի ցաւոց բուժին խարանս արկանելով. զանդամսն յօշելով. զոսկերսն սղոցելով. զորովայնն հերձանելով, և զփորոտիսն արտաքս ձգելով: Ե՛ւ այլք վն̃ սաստկուե̃ ցաւոցն բուժին ճշդութե̃ կերակրոց. զորոց ասէ կորնեղիոս կելսոս, թէ այնպիսի հի՛ւանդք բազումանգամ վն̃ սաստկուե̃ ծարաւո՛յ ըմպէին զմէզ իւրեանց, և վն̃ խստուե̃ քաղցուուտէին զսպեղանիս իւրեանց: Բայց 'ի վեր քան զա̃մ խստուե̃ դեղոց եղև այն, որով բժշկեցա՛ւ երկդ̃ Պալեոլոգոս կայսր կոստանդինուպօլսի. քանզի զկնի անհնարինս տառապելոյն զամ̃ս ողջոյն 'ի հի՛ւանդութե̃ իւրում, ոչ գտա՛ւ այլ դեղ դարմանի 'ի բժշկաց, եթէ ոչ՝ զի սաստիկս և անհնարինս 'ի սրտմտուե̃ բարկուե̃ բորդեցուցեն զնա՝ մերձ 'ի մեռանիլ: Ե՛ւ զի կին նր̃ տիկնայ ոխկինն յոյժ սիրէր զնա. վն̃ նորին առողջութեան զայրացուցանէր զայրն. և զնոյնն հրամայէր ծառայից իւրոց առնել ապստամբութ̃. և անըրսողութ̃: Արդ՝ եթէ դեղք ցա՛ւոցն են այսպ̃ դժնդակ, զի՞նչ եղիցին ապա նոյն իսկ ախտք ցա՛ւոցն: Իսկ ցա՛ւք Անգեղոսի պօղիկեցւոյ էին այնչափ սաստիկ, մինչզի զգլուխն հարկանէր զորմով. Եւ՛ մեկենաթասինն էին այնչափ խստագոյն, մինչզի զամս երիս ոչ բնաւ՛ ննջեաց: Բայց Անտիոքայ կայսեր էին այնչափ զզու՛ելի նեխութիւնք մարմնոյն, մինչեւ 'ի նեխոյ հոտոյ զօրացն ամի նեղիլ տագնապաւ. և յաչաց նր̃ եռանդն որդանց բղխեալ տորատարիլ՝ և կենդանութե̃ իւրով առ ախտին ցաւոց զանդամսն 'ի միմեանց յօշէր:

Յօդուած Է:

ՕԻ՞նչ ասացից ապա զհիւ՛անդութէ ժանտախտին. որ ոչ միայն զքաղաքս ողջոյն, այլ և զհամատարած գաւառս բնաջինջ արար: Պատմեն բազումք, թէ եղեւ երբեմն 'ի Կոստանդինուպօլիս սարսափելի ժանտախտ. մինչև խելացնոր լինել ախտացելոց յերկիւղէ անտի պատկերակերպուէ, թէ 'ի դրացեաց իւրեանց մեռանելոց են, և այնու մեռանէին չարաչար: Տոկիդիդէս պատմաբանն յունաց գրէ. թէ 'ի ժամանակի իւրում եղեւ 'ի յունաց աշխարհին սաստիկ իմն ապականուէ օդոյ, և անբա՛ւք մեռանէին և ոչ գտաւ՛ դեղ ինչ մեղմիչ այնմ չարաչար ախտի: Եւ՛ յաւելու ասել, զի եթէ ոք ը̄ պատահման առողջանայր յախտէն, այնպիսին մնայր տակաւին առանց յիշողութեն, և ոչ ճանաչէր ըզհայր, կամ ըզմայր, և կամ զորդիս իւր։ Պատմեն ևս. թէ գտան երբեմն զօրք Անգղեայ կասախոսի 'ի սելևկեայ քաղաք բաբիլացւոց. և մտեալ 'ի մեհեան ապողոնեայ դիցն, գտին անդ զարկղ, կամ զտապանակ ինչ. և իբրև բացին զայն ակնունելով գտանել 'ի նմա զդրամս, բուրեաց անտի արտաքս հոտ ինչ այնպիսի ապականուէ, մինչև ապականեաց յապականուէ մահու զբովանդակ գաւառն բաբիլոնի, և անտի էանց առ յոյնս, և 'ի տանէն յունաց 'ի հռովմ, և ապականեաց զօդն ամ Յաց, և մեռան եբիր մասն մարդկան։

2. Եւ արդ իսկ 'ի ժամս մեր ոչ փոքր աղէտք ժանտախտի անցին ընդ մարդիկ, քանզի ոչ ոչ նուազեաց մեղք, այսպէս և ոչ թուլացոյց ած զպատիժ պատուհասի նոցա։ Արդ՝ զկնի միոյ ամի առնլոյ փիլիպպոսի արքայի Փրանցիոյ 'ի կնուէ զտիկինն ընտրոսա 'ի տանէն Աւստրիայ, եղև 'ի բովանդակ գերմանիայ ժանտախտ սաստիկ, և սպանանէր զորս ախտն ըմբռնէր. 'ի մէջ քսան և չորս ժամու 'ի հասել նց զքրտունս մահացուս և տարածեալ մահուն ը̄ ծն առ հասարակ՝ ընաջինջ արար զբազումս գա-

ճառս: Եւ 'ի բրիտանիայ, այնինքն է [illegible] անգղիայց. Թռչունք լքանէին զձմեռն բունօք հանդերձ. գազանք զխշտիս իւրեանց. և սողունք, օձք և խլուրդք աքանչելի իմն կարգաւ փախչէին դաս դաս, և հեռացեալ մեկնէին չհանդուրժեալ մահաբեր թունիցն, որ 'ի ծոց հողոյն ամփոփեալ պարունակէր: Եւ ևս յամի տն̃· 1536· յելս ամսեանն մայիսի անկաւ աղէտ ժանտախտի 'ի ստիքս քաղաք Պրովենկիայ գաւառէն Փրանսիոյ, և տևեաց զամիսս ինն, և լցան գամբարանք մեռելովք: Եւ այնք բազումք էին 'ի յախտացելոց, որք յաւուրն երկրորդի զկնի հանելոյն զախտ մահու, խելացնոր լինէին, կէսք 'ի ջրհորս զանձինս արկանէին, այլք 'ի պատուհանաց դահավէժ լինէին, և կիսոցն արիւն ընդ ըռնգունս իբրև գետակ հոսէին, որոց ընդ դադարիլն մեռանէին: Եւ կէսք ընդ ըմբռնելն 'ի մահուճանէ անտի, ինքնին արկանէին զանձամբ զպատանսն, և որք մեռանին ընդ այսմ, էին աւելի քան զտասն հազար: Ահա այսպիսի ընթացից ներքոյ անկեալ դնի անցաւոր և առժմեայ կեանք մարդոյ:

Յօդուած Գ։

Սովք մեծամեծք.

Չէ փոքր դժնդակ և դժնեայ դիմակալ մարդկային կենաց և սովն, որ ոչ զմասնա̂ւոր մարդիկ, այլ զգա̂ւառս ողջոյն կլանէ։ Ա̂ւանիկ 'ի պաշարմանն Հռովմայ, զոր պաշարեաց Ալարիկոս, մարդիկ 'ի ներքս անդ 'ի քաղաքին ոչ միայն առ սովուն կերին զձիս, զշունս, զկատուս, և զմկունս, այլև զմիմեանս։ Եւ̂ Շիպիոն ասէ զնումանտացւոց, որք պաշարեցան 'ի Հռովմայեցւոց, թէ առ սովուն ելանէին որսալ զՀռովմայեցիս իբրև զգազանս։ Իսկ 'ի ժամանակս յովրամայ արքայի իջէլի առ եղիսէի̂ եղև այնպիսի սով սաստիկ 'ի սամարիայ, մինչև եղև խայլամ մի իշոյ յիսուն սկեղ արծաթոյ, և չորրորդ կապճի աղբոյ աղա̂ւնեաց հինգ արծաթոյ։ Եւ̂ կին մի 'ի սամարացւոց աղաղակեաց առ արքայ, և ասէ, կինս այս ասաց ցիս, տո՛ւր զորդի քո. և կերիցուք զդա այսօր, և զորդի իմ կերիցուք առ վաղի̂ւ, և եփեցաք զորդի իմ, և կերաք զնա, և ասեմ ցսա յա̂ւուրն երկրորդի, տո՛ւր զորդի քո, և կերիցուք զդա, և թաքոյց զորդին իւր։

2. Այլ յովսէպոս յեօթներորդ գիրս, որ զմ̄ն պատերազմաց Հրէից պատմէ իբրև զայս, և առաւել ևս դժնդակագոյն և ասէ : 'Ի ժամին յորում պաշարեցաւ Եղ̄էմ 'ի Հռովմայեցւոց, էր 'ի ներքս անդ 'ի քաղաքին կին մի՝ ազնուական և մեծազգի, և յոյժ մեծատուն, որ թաղուցեալ ունէր 'ի տան միում զմասն ինչ գանձուց իւրոց, և ուտէր անտի ծախելով : Բայց զօրք պարսպապահք քաղաքին ոչ միայն սպառեցին զայն ամ̄, այլև զպատառն, զոր 'ի բերանն դնէր, յափշտակէին 'ի ձեռաց նր̄ : Այդ տեսեալ կնոջն, եթէ մեռանի 'ի սովոյ, և չիք ուստեք օգնութի̄, սկսաւ զինիլ ընդդէմ օրինաց բնութե̄ն . և հայեցեալ յորդին իւր, զոր դիեցուցանէր, հառաչ յարտասուս, և աղաղակեաց 'ի ձայն բարձր ասէ, ո՛վ որդեակ իմ տարաբախտիկ և ապերջան, բայց առաւել ապերջանիկ մայրս եղկելի, զի՞ արարից քեզ և կ̄մ ո՛ւր թաղուցից . եթէ զքեզ պահեցից կենդանի, գերի լիցիս Հռովմայեցւոց : Այս լաւ է . զի հատուածեսցես զմայր քո . և սարսափեցուսցես զանիծեալ զօրականս զայսոսիկ . որք բարձին յինէն զամ̄ յոյս փրկութե̄ , և լիցիս օրինակ գթութե̄ առյապայն եկելոց , և շարժեսցես 'ի ցաւակցութե̄ զամ̄ մարս : Զայս ասացեալ՝ խողխողեաց

եայ զորդին, և կորեալ ընդ մէջ, խորովեաց զկէսն, և եկեր, և զմիւս կէսն պահեաց յայլ նուա՛գ: Եւ՛ հազի՛ հազ կատարեալ էր զայն աղէտ ապանուե, և զուտելն, 'ի վր հասին զօրականքն, և զհոտն առեալ զխորովելոյն, սպառնալիս մահու կարգեցին 'ի վր նր, և ստիպէին յայտնել զկերակուրն, զոր ուտէր: Իսկ նա վա ապիրատ գործոյն այնչափ ըմբռնեալ էր 'ի մոլեգին յուսահատուե, մինչև կամէր անձամբ զանձն սպանանել, ուստի 'ի բաց մերկացեալ զամ ամօթ, և զերկիւղ, ասէ ցնս, լուռ լերուք բարեկամք իմ անհնուէրք, ընդ որոց վարեցայ իբրև քոյր Է եղբարց: Եւ նոյն հետայն զկնի բանիցն եհան արտաքս զնշխարս որդւոյն և եդ 'ի վր սեղանոյն առաջի նց: Զոր տեսեալ զօրականացն սոսկացան, և շիկնեալ չկարէին տալ պատասխանի բան մի: Իսկ կինն մոլեգնեալ ասէ ցնս զայրագին, զի՞նչ է այս ո՞վ քաջամարտիկք, ո՞չ սա է պտուղ որովայնի իմոյ. ո՞չ սա է որդեակ իմ քաղցրիկ, ո՞չ սա է ազնուա՛կան զաւա՛կ իմ: Զի՞ է, զի ոչ ուտէք, և այն՝ զի ես կերի: Մի՞թէ առաւե՛լ զգո՛իք քան զիս, կամ առաւե՛լ գորովագէտ էք քան զմայրս, որ զնա ծնայ: Բայց նք չհանդուրժեալ այնր դարշատեսիլ աղէտից, փախեան անտի, և Թաղին զմայրն եղկելի ընդ յաւելեալ որդւոյն նշխարի, զի յամենայն ընչից նորա, այն միայն մնացեալ էր նորա:

Յօդուած Դ:

Աւերք պատերազմաց:

ԲԱՆ զամենեսին զայսոսիկ դժնդակագոյն են Թշուառութիւնք, որք լինին 'ի պատերազմաց: Այլ 'ի բիւրուց յառաջ մատուցուք քաջ վկայ այսմ զնորոգ մարտն աղէտալի, որ եղև 'ի Գերմանիայ յամս յայսոսիկ: Արդ՝ 'ի պատերազմիլ Գերմանացւոց ընդ սվետաց, հեղան զեղան սվետքն 'ի Գերմանիայ, և աւար հարկանէին և քանդէին զամենայն առ հասարակ, և չարաչար սատակէին զմարդիկ: Միայն անդ 'ի գաւառն բաւարիոյ հուրբ կիզուին զերկու հազար շէնս: Եւ ոչ լաւէ եղեն, և ոչ տեսան ուրեք խստութիւնք անգթութեանց 'ի զօրացն յաղթողաց այնչափ որչափ եղև սոցայս առ գերմանացիս, զի ստիպէին յաղթելոցն յայտնել ըզթաքուստ կողոպուտ նոցա: Անդ ճարմանդիւք հրազինաց պրկէին զճակատս ոմանց, և յոլորել բրովք զճարմանդսն, և 'ի սեղմել զքունսն, ցայտէին վտակք արեան, և 'ի խորտակել ոսկերացն ցրուէին ուղեղքն: Զայլս կապեալ ձե-

ձեռօք եւ ոտիւք զառայացուցանէին յերկէր կմ̃ 'ի տախտակս, եւ արձակէին 'ի վր̃ նց̃ զշունս, եւ զկատուս սովեալս առ 'ի գիշատել զորովայնս նց̃ կենդանւոյն· Զոմանս կախէին յօդս զձեռաց, եւ 'ի ծանրիլ մարմնոյն նոյնհետայն հուր բորբոքէին 'ի ներքոյ ոտից նց̃: Զկիսոցն զունչսն եւ զականջսն հատանէին: Եւ՛ զայն համարէին 'ի փառս պարծանաց խստասրտութե̃ն իւրեանց: Եւ՛ ը̃ բերանս ոմանց հեղուին 'ի ներքս ձագառօք ջուրս՝ իբրեւ մարս երկուս, կմ̃ երիս, եւ ապա 'ի կոխել ոտիւք զորովայնս նց̃ ուռուցեալս, արտաքս ցայտէին ջուրքն ընդ բերանն, եւ ընդ ռունգունս, Զայլս 'ի ցից կապեալ, զմորթս նց̃ հանէին իբրեւ զառաքելոյն բարթուղիմեայ· Զոմանս կոտորմահ առնէին դառնադառն, եւ զայլս կենդանւոյն 'ի չորս մասունս ճարճատէին· Զկանայս խայտառակէին պղծուը̃, եւ ապա զբազուկս նց̃ իբրեւ ը̃ խաղս 'ի բաց հատանէին: Իսկ կէսք 'ի զօրականաց ուտէին գազանացեալք զմանկունս· քանզի ունէին զնս̃ գոտից կախեալ, եւ ապա բեկանէին զսրունսն, եւ ծծէին զարիւն նց̃ բազում ցաւօք մանկանցն: Եւ՛ զգերեալսն պրկէին, եւ ծակէին զբազուկս նց̃, եւ անցուցեալ ը̃ այն զպարան, կապէին յաղխս երիվարացն, եւ ը̃ քարշ ածէին:

Եւ՛ զոմանց զփորն ճեղքէին, և ապա զփորոտիսն արտաքս հանեալ, լնուին անդ զյարդ և զգարի իբրև 'ի մսուր, և կերակրէին զէրիվարս։

Յօդուած Ե։

Թշուառութիւնք, որք լինին 'ի կրից մարդոյն։

ԱՅԼ լրումն ա՟մ չարեաց ոչ 'ի սովու, ոչ 'ի ժանտախտէ, և ոչ 'ի պատերազմաց ծնանի, այլ յանկարգ կրից մարդոյն. Ուստի ասէ ոսկեբերանն, Դժնդակ է քան զա՟մ չարիս, դժնդակ է յոյժ մարդն։ Ա՟մ գազանք զկերեանյն ունին զմի միայն չարիս, այլ մարդն զա՟մ։ զի և բանսարկուն առ արդարս մատչել անգամ չհամարձակի, այլ մարդ չար, և ամբարիշտ ոչ երկնչի, այլ 'ի բաց հերքէ։ ('ի Ճառն. Է 'ի մեկն. մատթէ.) Անհնարատալի իմն արդեօք երևի, զոր ինչ կրէ մարդ 'ի մարդոյ։ Տե՛ս, թէ զո՞ր վիշտս աքսորանաց, զո՞ր տառապանս սովու, զո՞ր աղէտս պատերազմաց, և զո՞ր վտանգս մահու ոչ կրեաց դաւիթ 'ի նախանձոտէ անտի սաւուղայ։ Տե՛ս թէ յո՞ր վիշտ տառապանաց մատնեցաւ մարգարէն եղիա, 'ի ցասմանէ անտի յեզաբելայ։ Ո՞չ ապաքէն ագահութին Աքաաբու եբարձ զկեանս Նաբովթայ առաւել վաղվաղակի, քան զոր արարն երբէք ժանդմահուն։ Ո՞ր ցաւ ժամանակաւոր արար զայնչափ անողորմ սատակումն, զորչափ արար ամբարտաւանութին Հերովդէի անմեղ մանկանցն Բեթղեհեմի։

2. Զո՞ր ազգ չարաչար և դառն տանջանաց, և մահու ոչ եգիտ մարդկային միտք յածեալ 'ի կրից անտի։ Աճանիկ որփէոս, որոս, մեղխիխոս, և հեղիոդորոս, և այլք բազում հեղինակք գտին զհնարս հարիւր ազգս տալոյ զկթոյնս դաղանին. և յետ այնորիկ յաւելան և այլք բազումք. իսկ 'ի ժամանակս մեր կարի յաճախեցին. և ոչ մնաց ճիգ զգուշանալոյ առ 'ի չհնիլ թիւնաւորելոյ։ քանզի և անդուր 'ի յողջունելն կալնուն մարդիկ զձեռս իրերաց, բազումք, թունաւորեցան։ Եւ՞ միայն զգայարանք լսելեաց չէ տակաւին թունաւորեալ։ իսկ 'ի ձեռն այլ զգայարանաց մեռեալ են թունով անբաւք, զի բազումք մեռան հոտով վարդից, ուտելեամբ տերևոց թունաւոր խոտոց. շօշափմամբ թունաւորեալ ասղանեաց, և ճաշակմամբ բերոց որթոց։

3. Զիք լինել, որ այնչափ չարիս թշնամութեան կուտեցէ 'ի գլուխ մարդոյ, որչափ արարին ախտք անկար-

գադացեալք, որովք ոչ խնայեցին մարդկի անձանց իւրեանց ։ Ահաւանիկ հպարտն հաշի և մաշի բարեբաստութ՟ այլոց ։ Նախանձոտն սատակամահ լինի ՚ի տեսանելն զբարեբաստիկ կեանս այլոց, և զնց՟ յառաջադիմելն ։ Ագահն կորուսանէ զնմ՟ զխաղաղութ՟ն զհետ անշահից և անելորդաց ։ և բարկացօղն խելացնորի անտի, որ ոչ պշահ, և ոչ զվնաս բերէ անձինն ։ Քանիք վն՟ ոչ սանձելոյ զախտ ինչ, կորուսին զինչս և զհանդիստ, և որ դժնդակագոյնն է՝ զմերձաւոր կեանս, և զյաւիտենիցն ։ Որում քաջ վկայ եղև համան, որ ցանկալով ք՟ զարժանն փառաւորել, կորոյս զպատիւն, զինչս, և զկեանս իւր կախեալ անարգաբար զփայտէ ։ Այսպէս և ամբարտաւանութիւն աբեսաղօմայ կախեաց զնա զհերացն ՚ի ծառոյն ։ Սոյն օրինակ և անզգուսպ ցանկութիւն ամնոնայ յառաջ քան զկատարումն գործոյ պղծութ՟ն ․ դողացուցանէր զնա չարաչար ջերմամբ ք՟ զնմ՟ ջերմախտութ՟ ։ Պատմէ դունկրաբիոս ․ թէ վինկեսլաւոս արքայն բոյեմիոյ ՚ի բարկութ՟ բրդեցաւ յոյժ ՚ի վր՟ միոյ ուրուք ՚ի պալատականաց իւրոց, թէ զի՞արդ ոչ ազդ արարեր ինձ վաղվաղուկ խռովութ՟ն յարուցելոյ ՚ի պրագայ ՚ի զինկայ խռովարկութ՟ն, և յարձակին ՚ի վր՟ նր՟ մերկեալ սրով առ ՚ի սպանանել, իբրև արգելաւ 'ի նոցանէ, որք շուրջն կային, նոյն ժամայն մեռաւ 'ի թունաւոր խայթուածոյ իջելոյ 'ի սիրտն։ Սոյնպէս և մահ ներվայ թագաւորին, եղև 'ի սաստիկ բարկանալոյն, ոպ՟ պատմէ օրելիոս վիկտորէս։ Իսկ յաղագս դիոդորայ կրովեայ գրէ Պլինիոս, թէ 'ի չպատասխանելն ը՟ արժանւոյն հարցմանն եստիլպոնեայ, մեռաւ նոյնժամայն 'ի յամօթոյն։ Եւ դու տե՛ս, թէ քանի՛ք մեռան 'ի տրտմութ՟է, 'ի խնդութ՟է, և յանկարգ սիրոյ։ Այլ աստանօր առաջի մատուցից միայն զայն աղէտալի դիպուածն, զոր ճառէ պօղոս յովեանն և ասէ. թէ այր ոմն կանամբի՝ անկանէր հանապազ 'ի դարշանս պղծութ՟ ը՟ ումեք կնոջ. և այնչափ եղև գայթակղութ՟ին դրացեաց, մինչև եպիսկոպոս քաղաքին բանադրեաց զերկոսինն՝ զայրն և զկինն։ Իսկ այրն չնաբարոյ և եղկելի կուրացեալ 'ի կրից, և արհամարհեալ զբանադրանս եպիսկոպոսին, գնաց 'ի ծածուկ առ սեղեխ իւր գործել զչարիսն։ Բայց նա զզջացեալ 'ի նախկին չարեացն սկսաւ յանդիմանել խստութ՟ զյանդգնութ՟ առն, և ասէ 'ի բա՛ց գնա վաղվաղակի, և մի՛ ևս երևեսցիս առաջի իմ. իսկ այրն չնաբարոյ սկսաւ անարգել և հայհոյել զնա կակծել բանիւք , և ապա տարածեալ զձեռս իւր 'ի յուսահատութէ՟ անտի , և ամբարձեալ զաչսն 'ի վեր , մեռաւ տրտնջելով , և 'ի նոյն կէտն կորոյս զմերձակայ և զյաւիտենականն զկեանսն · և ոչ թաղեցին զմարմինն նր՟ 'ի սբ՟ տեղիս ։

4· Ո՛վ որչափ ճշմարիտ է բանն այն , թէ մեծամեծ թշուառութիւնք են այնոքիկ , զորս մարդիկ պատճառեն յինքեանց ոչ սանձելով զկիրս իւրեանց։ Զայս նշանակեալ ծանոյց բանն այն Ժողովողի , յորում բովանդակեաց զամ՟ բանս իմաստասիրաց · որք խօսեցան զթշուառութէ՟ մարդկան , այ՟ է , Եւ՟ գովեցի ես հասարակ զմեռեալսն , որք յառաջագոյն մեռանին՝ քան զկենդանիս՝ որք կենդանիքն են ինքեանք մինչեւ ցայժմ։ Եւ՟ լաւագոյն քան զնոսա զերկոսեան , որ չեւեւս է եղեալ , որ ոչ ետես զամ՟ արարած չար՝ որ արարաւ 'ի ներքոյ արեգական։ (Ժողով·4·2·)

5· Վս՟ որոյ տիմոնէս իմաստասէրն աթենացի տեսեալ զմարդիկ վայրենացեալս յանզուսպ կրից իւրեանց հաճեցաւ բնակիլ առանձինն 'ի մէջ անտառաց ը՟ գազանս , և չտայր թոյլ ումեք այց առնել նմա բաց 'ի յաղկիբիատեայ իմաստասիրէն · քանզի յառաջատես լինէր , թէ նա լինելոց է խստագոյն կշտամբիչ աթենացւոց ։ Արար տիմոնէս զբաղում կախաղանս 'ի մէջ ծառոց դարաստանեին իւրոյ, որպ̅զի ամ̅ յուսահատք և յուսակտրոյք դիմեսցեն անդր առ 'ի կախել զանձինս ։ Եւ՛ իբրև յետ ամաց ինչ հարկ եղև նմա բառնալ զկախաղանն զայնոսիկ յղ̅ս ընդարձակելոյ զտուն իւր. գնաց 'ի յաթէնս, ուր 'ի ձայն փողոյ ը̅ հրապարակս քաղաքին ժողովէր առ ինքն զմարդիկ ինքնակամ գումարեալ, և ժողովուրդքն ևս 'ի լսել զձայն ահեղ փողոյն, հաւաքէին, և մի զմիմեանկանէին պար առեալ զնովաւ 'ի լսել զբանս նր̅ ։ Իսկ նա իբրև ետես, եթէ ժողովեցան բազումք 'ի քաղաքացւոց ազնուականք և ռամկականք, սկըսաւ 'ի ձայն բարձր ասել. լուարուք ինձ արք աթենացիք. ահաւասիկ վս̅ պիտոյից ինչ կամիմ բառնալ 'ի դարաստանէ իմմէ զկախաղանն. վս̅յ եթէ ոք 'ի ձէնջ կամի կախել զանձն, արասցէ զայն վաղվաղակի։ Եւ՛ ոչ յերկարեալ զբանսն, մատոյց նր̅ զայնպիսի սիրալրական հրաւիրումն, և դարձաւ 'ի տուն իւր ։ Իսկ իբրև եհաս 'ի վախճան կենաց իւրոց, մն̅ զզուելոյն 'ի մարդկանէ՝ հրամայեաց մի թաղել զմարմին իւր ը̅ հողով որպ̅ զայլ մարդկան, այլ առ ափն ծովու, որպ̅զի ալիք ծովուն պահեսցեն զոսկերս նր̅ 'ի տեսութէ և 'ի լրոյ մարդկան ։

5. Արդ՝ իմաստասէրս այս զուրկ գո-

լով 'ի հանճարոյ, և 'ի սիրոյ, և ոչ զանազանելով զմարդկային չարութիւն 'ի բնութէ, տարապարտուց գարշեցաւ միանգամայն և յերկոցունց, սակայն եցոյց գործովք, թէ որչափ այլանդակ ինչ են կիրք մարդոյ, որչափ պղշկալի են մոլութիւնք նց· և որչափ ատելի է աշխարհս, որում առաջնորդէ ոչ բանն ուղիղ, այլ յօժարութի սրտի, և ախտ անզուսպ: Վայ ծառայք ոն, թէպէտ ոչ պարտին իբրև զտիմոնէս ցանկալ տեսանել զմարդիկ հեղձուցեալս, և մեռեալս· սակայն պարտին ցանկալ· զի տեսցեն հեղձուցեալս և ապականեալս զանկարգ կիրս, և զապիրատ գործս, որք յառաջ գան 'ի կրից մարդոյն: Պարտ և արժան է զխեղճութե և զխառնամոլութե զզարդան հեղձուցանել, և բառնալ 'ի միջոյ· սոյնպէս զամ անպատշաճ հեշտութիւնս· զանոտի ցոյցս մեծութեց· զանապարծութիւն ընդունայն, զմակադիրան հպարտութե, զնախանձն դժնդակ, զբարկութիւն անկարգ· զվրէժն անարդար, և զամ զախտիցն զբռնակալութե· զայս ամ պարտին հեղձուցանել մարդիկ, ոպզի կեալ մարթասցին աստ և 'ի հանդերձեալն:

* * *

ԳԼՈՒԽ

ԳԼՈՒԽ Ը։

Թէ ո՞րչափ դուզնաքեայ ինչ է մարդն գոլովն ժմկաւոր :

Արդ թէ զի՛նչ իցէ և մարդն նկատեալ ազատ 'ի կրից, և մնացեալ յիւրումն բնութ̃ գոլովն ժմկեայ: Լո՛ւր բանիցն սենեքայի, զի ասէ : Զի՞նչ է մարդ, անօթ ջախջախեալ, և յամենայն շարժման դիւրաբեկ : Բայց լիագոյն ևս ասէ Ենովկենտիոս պապն . Խորհեցայ արտասուաբեր աչօք, թէ ուստի եղև մարդն. զի՞նչ առնէ. և զի՞նչ լինելոց է. և տեսի զի կազմեալ է 'ի հողոյ, յղացեալ 'ի մեղս, և ծնեալ 'ի վիշտս : Գործէ զխոտորնակս, որ ոչ է արժան, զգարշանս, որ ոչ է վայելուչ, զանպէտս, որք ոչ են ինչ յօգուտ : Լինելոց է ճարակ հրոյ, կերակուր որդանց . և զանգուած նեխութեան: (Գիրք . ա . յղգս արհամարհ . գլ̃ :)

2. Բայց սակայն ոչ միայն ըստ մարմնոյն է մարդն անարգ մինչ կենդանի է, և առաւել ևս մինչ մեռեալ է, այլ նաև ըստ հոգւոյն: Քանզի թէպէտ հոգին ըստ ինքեան է ազնիւ և չքնաղ, սա-

սակայն միաւորեալ ը̅ մարմնոյն, անկեալ դնի ը̅ ախտիւք, որք զնա դարշելի առնեն քան զմարմինն:

3. Արդ՝ դու տես, թէ զիարդ յորժամ հոգին մեռեալ է մահուչափ մեղօք, է առաւել զզուելի առաջի Հրեշտակաց, և առաւել զնեխումն հոտս բուրէ քան զութօրեայ դին մեռելոյ ուրուք: Քանզի թէ սա լի է որդամբք զազրութեց, նա լի է դիւօք, և մոլութ̅ք: Եւ ոչ միայն յորժամ է 'ի մահուչափ մեղս, գարշելի է, այլև յորժամ գործէ զներելի յանցանս, և զանկատարութ̅ յանցուածս: Զի թէպէտ այսոքիկ ոչ մահացուցանեն զնա, սակայն առնեն զնա տկարագոյն, և աղտեղի քան զմարմինն: Ջերմեռանդ հարսն ք̅ն սանկտա կարիգդեանն զ՛նի հրաշալի վարուցն, որում եկեաց զամս յոլովս, խնդրեաց 'ի տ̅նէ, զի հաճեսցի առնել նմա զայս շնորհ, զի տեսցէ զհոգի իւր, ո̃զի տեսեալ զգարշուի̂ մեղացն, առաւել բորբոքեսցի զզուե̂լ 'ի նոցանէ: Եւ̂ ընկալաւ̂ 'ի տ̅նէ, զոր խնդրեացն. զի 'ի գիշերի միում մինչդեռ նստէր յընդարձակագոյն սրահի անդ տան իւրոյ դրօքն բացելովք. եսես, զի ձեռն առեալ շրջէր անդ միայնակեաց ոմն ծերունի, սպիտակահեր, յեցեալ 'ի գաւազան: Յորոյ տեսութէն, և 'ի հանդերձիցն

'ի

'ի մթին անդ վայրի սոսկացուց յոյժ սրբուհին. բայց քաջալերեալ զանձն, եհարց ցնա, եւ ասէ. զի՞նչ խնդրես աստ հայր: Եւ ծերունին պատասխանի ետ, եւ ասէ, 'ի վե՛ր առ զվերարկուն, զոր ունիմ 'ի վ̃ր իմ, եւ տեսցես զայն, զոր խնդրես դու: Լուաւ նմա աղաչելինն էն, եւ լերե 'ի վեր եառ զքղանց վերարկուին, ետես ը̃ նովաւ զմանուկ մի զազրատեսիլ. փոքր, եւ զարշելի յոյժ, որունէր զերես իւր ծածկեալ 'ի զազրաթորմի ձանձից: Եւ առեալ զայն 'ի ձեռս իւր, ասէ ցծերունին, զի՞նչ է այս հայր: Յայնժամ ասէ ցնա ծերունին. ո՞չ յիշես, յորժամ ժտեցերն յիմ̃ տեսանել զհօրն քո: Արդ՝ ահանիկ տե՛ս զպատկերն նր̃ 'ի մանուկս յայսկի այս է որպիսութե̃ն հոգւոյ քոյ, եւ զայս ատացեր̃, անյայտ եղեւ տեսիլն: Իսկ սրբուհին այնչափ մնաց սոսկացեալ, եւ ահաբեկեալ. եւ 'ի տագնապ մահուհասեալ, մինչզի թուէր նմա, եթէ 'ի ցաւոյն խախտեալք են յօդք ոսկերացն. ապ̃ նա ինքն յետ այնորիկ հաստատէր: Արդ՝ եկաց զգիշերն ողջոյն ահաբեկեալ եւ ալէկոծեալ 'ի խորհրդոյն, եւ հիւծեալ եւ մաշեալ 'ի տեսլենէ մանկանն, եւ 'ի զմտաւ ածելն. թէ այն էր պատկեր հոգւոյն իւրոյ, դողայր վ̃ կացից իւրոց: Իսկ տեսիլ զազրաթորմի ճճեացն կրկնապատիկ

զորգործէր զցաւ նր՟ · զի թուէր նմա , թէ էին այնորիկ նշանակք մեծամեծ մեղաց , և հնադոյն վիրաց : Ուստի վերատաքէր առ իր զհառաչանս հեծեծանաց՝ մաղթելով զնպաստ և զողորմութ՟ն : Այլ ը՟ այգն ը՟ առաւօտն զնաց փութանակի առ խոստովանահայր իւր , որ էր այր առաքինի , և գիտնական , և պատմեաց նմա զա՟մ մի ը՟ս միոջէ , և ապա արտասուալից պաղատանօք խնդրեաց 'ի նմանէ մեկնել նմա զտեսիլն և միթէ ճճիքն այնոքիկ նշանակէին զմեծամեծ մեղս , զորս ինքն ոչ ճանաչէր : Իսկ խոստովանահայրն յանձն արարեալ զպատասխանին ա՟յ , եկաց վայր մի · և ապա ասէ ցնա : Մ՛ի խռովիր տիրուհի , և մի՛ վշտանար · այլ յաւէտ գոհացի՛ր զա՟յ յղ՟ա շնորհացն , զոր արար քեզ · և ծանի՛ր , զի վատութ՟ն և տկարութ՟ն այն զոր տեսեր 'ի պատկերին անդ հոգւոյդ է գործ ներելի մեղաց , որք նիհարացուցեալ թուլացուցանեն զհոգին , բայց ոչ սպանանեն , նուաղեն զսէրն , բայց ոչ շիջուցանեն : Զի եթէ դու էիր այժմ 'ի մահացուչափ մեղս , տեսանէիր զմանուկն մեռեալ , և ոչ կենդանի : Արդ՝ եթէ մեծամեծ ս՟ք և ծառայք ի՟ն տեսին զհոգիս իւրեանց լցեալ այնչափ թշուառութ՟ք , ապա զի՞արդ կարէ մնապարծել մարդ , որ հոգւոյ և մարմնոյն է բովանդակ թշուառութիւն, և աղբիւր չարեաց։

ԳԼՈՒԽ Խ. Թ.

Թէ որչափ պատրողական են ժամանակաւորքս։

Յայնմանէ, զոր մինչև ցաստ ասացաք, կարեմք իմաստասիրել, թէ որչափ պատիր և ընդունայն է ամ̅ ինչ, որ ժմկաւ սպառի և անցանէ. և թէ մերձակայքս ոչ միայն անարգք, անհաստատք, և անցաւորք են, այլև լի են ստութ̅, խաբէութ̅, և վտանգօք: Ուստի ՚ի գիրս յայտնուն̅, պոռնիկ կինն այն, որ նշանակեալ ցուցանէր զերջանկութն̅ աշխս, և նստեալ էր ՚ի վր̅ կարմիր և ահեղ գազանի, (որ զաշխա օրինակէր), զգեցեալ էր հանդերձս ՚ի գոյն փայլուն պղնձոյ որ երևէր իբրև ոսկի: Եւ զորօրինակ արուեստին խաղարկուաց ՚ի սենեակս ինչ մտեալ փոքր մի լուսոյ ը̅ անձկագոյն ճպրհ, ցուցանէին վայելչագեղ պատկերք ՚ի վր̅ որմոյ. Բայց յորժամ բանին լուսամուտք, և ծագէ լոյսն յամ̅ կողմանց, յայնժամ չքանան ամ̅ վայ_ ժէ:

Եղջուէք պատկերացն, և միայն միայն ստուէ՛րք նց, կմ՛ շաւիղ իմն նորքաւդոյն:

2. Այնպ՟ են ը̂ ամի և իրք աշխարհիս, զի նոցա, որոց նուաղ է լոյսն ճանաչելոյ զերկնայինս, երևին գեղեցիկք, և մեծամեծք. բայց մք, որոց ծագէ լոյս կենդանի հաւատոյն, և ազատք են 'ի պատրանաց աշխարհիս, ոչ գտանեն 'ի նմա զգեղեցկութի իմն, և կմ՛ զարմութի ինչ: Զի ահաւասիկ խոստանայ աշխարհ զբարիս, և կարկառէ զչարիս. խոստանայ զհանգիստ, և տայ զաղաւմն. խոստանայ զապահովութի, և տայ զվիշտ, և զվտանգ. խոստանայ զլրումն խնդութե, և տայ զտրտմութիւնս մեծամեծս: Խոստանայ զհեշտ և զքաղցր կեանս, և մատուցանէ զդառն աւուրս կենաց: Եւ զի զո՞ր օրինակ ստուէր երկրիս որչափ բարձրանայ և հեռանայ յերկրէ, այնչափ մերձի 'ի սպառիլ, և 'ի չիք դառնալ: Նոյնպէս և երջանկութի աշխարհիս ո՞րչափ 'ի բարձունս բնակի, այնչափ չարաչար կործանի: Բայց և յառաջ քան զչքանալն, ոչ տայ բնա՛ զխութի երջանկութե մարդկայնն սրտի, յորում կարգի և դոցի:

3. Արդ՝ զինչ մեծագոյն երջանկութի 'ի վր երկրի, քան զլինելն թագաւոր. և սակայն լուր զնոյն իսկ զբանս թագաւորց թէ զինչ ասեն վս նր: Ահաւանիկ կայսրն կոստանդիանոս կոչէ զնա,

հեռանջ սաշտա մի տանէն նստատա՛որ · բայց առաւել ևս վշտալի քան զհովլուացն։ Իսկ Թագաւորն Նէապօլսի Ալփոնսոս կոչէ զնա կեանս երջանիկ վս̃ ծանրութե̃ բեռանցն, որք զնա ճնշեն։ Վս̃ որոյ երանելի է բանն յորայ, որ ասէ, ահա՛անիկ հաւայջ հեծեն 'ի ներքոյ ջորոյ։ Եւ՛ մեծն Ալբերտոս ասէ, թէ հսկայք են իշխանք ծ̃իս, 'ի մէ̃ որոց իջանեն հեղեղք աշխատութե̃ց, և վշտաց, որք 'ի սբ̃ գիրս օրինակին անուամբ ջրոց։ Յաւուրս բարեկենդանին, և յայլ աւուրս հանդիսի տարւոյն շուրջ ածեն ը̃ փողոցս և ը̃ հրապարակս քաղաքին զպատկեր ինչ հսկայից մեծաշուք զարդարե̃լ բեհեզօք և ծիրանեօք, ոսկւով, և ակամբք պատուականօք։ այս այն է՝ որ երևի, բայց որ ոչն երևի, ոչ է սուտ այլ է այր մի փոքրիկ, որ բարձեալ ունի 'ի յուսն զայն աշեղ և հրաշալի կազմած։ Եւ՛ զայս խոստովան լինի զանձնէ մեծ արքայն Դաւիթ, զի ասէ, ոպ̃ զանասուն համարեցայ, և 'ի ծանրութէ բեռինն զոր ունէի 'ի մէ̃ միջնորդացս, հիւծեցաւ մարմին իմ, և եղէ մերձ 'ի մեռանել։ Իսկ Անտիգոնոս արքայն Մակեդոնիոյ 'ի ժամուն յորում պսակէին զնա արքայական թագիւ · ասաց, ո՛վ պսակ ազնուական · այլ յոյժ ապերջան, եթէ էր ծանուցեալ մարդկան, թէ ո՛րչափ բարձեալ ունիս վտանգս , և վիշտս ծանրութե՟ , կարծեմ թէ չէր ոք խելացնոր այնքան՝ որ վերաւե՟լ զքեզ ՚ի գետնոյ՝ դնէր ՚ի գլուխն իւրական :

4. Բայց լուիցուք և բանից սաղոմոնի, թէ որպիսի ոք էր, և զի՞նչ ասէ. Էր թագաւոր մեծազանձ, մեծափառ, և սքանչելի, որ ՚ի վայելելն ՚ի բարութե՟ կենցաղոյս՝ անցոյց զանցոյց ք զա՟մ մարդ: Վ՟զի ընտրեաց և հաճեցաւ յլիանալ ա՟մ երկրաւոր հեշտութե՟ : Ունէր կանայս հազար, ա՟յ զեօթնհարիւր տիկնայս, և զերեք հարիւր հարճս ՚ի սպասաւորութ՟ի տուփանաց իւրոց : Շինեաց ապարանս մեծամեծս . արար պարտէզս , և դրախտս , տնկեաց ՚ի նո՟ փայտս ամենապտուղս , և անտառս զուարճացեալ ծառոց , ստացաւ զխուղս և ագարակս, և վայրս անտառամուտս, արար աւազանս ջրոյ . և ձկնարանս որսալ զձուկն , և եղանել յանտառսն որս երէոց . արար զուսանս և երգեցիկս քաղցրահնչուտս , իսկ ծառայք և աղախնեայք , մանկունք անարատք , և գեղեցիկ տեսլեամբ ՚ի սպասն՟ան բաւ՟ք էին առ նմա , զորս ոչ ոք ՚ի թագաւորաց ստացաւ : Այլ կարգն սքանչելի ՚ի հանդերձանսն՟ , ՚ի բազմուն՟ ընտանեացն , ՚ի կայանս բնակութեցն . ՚ի յերգեցիկս, և յարս պալատականացն յիմարեցոյց զտիկինն սաբայ :

Այ

Այժ անօթք սպասուց նր՟ էին ոսկի, որոյ նմանն ոչ երևեցաւ 'ի մէջ իշխ. Զիք մատակք քառասուն հազար էին նր՟ 'ի կառս ամենեքին մեծագինք: Գանձք արծաթոյ և ոսկւոյ որք մնացին նմա 'ի դաւթայ, աւելի էին տասնպատիկ քան զգանձս դարեհի՝ ը՟ հաշուին բուդէոսի: Եւ էհաս ժամանեաց յայն կատար երջանկութե՟ յա՟մ իրս, մինչև ինքն անձամբ անձին, ասէր: Մեծացայ առաւել քան զամենեսեան եղեալսն յառաջ քան զիս: Եւ զա՟մ ինչ, զոր խնդրեցին աչք իմ, ոչ զրկեցայ 'ի նոցանէ. և ոչ արգելի զսիրտ իմ յա՟մ ուրախութենէ: (Ժողով: 2: 9:) Եւ սակայն, թէ զո՞ր դատապարտանս արար, յորժամ առանց աչացն խտտանաց հայեցաւ 'ի նմ՟, լուիցուք. հայեցայ ես յա՟մ արարս իմ, և ահա ա՟մ սնոտի է, և յօժարութի՟ ոգւոյ. Եւ ոչ այսչափ միայն, այլև 'ի զզուանաց և 'ի ձանձրութե՟ անտի իւրոցն հեշտալեաց նախանձէր ը՟ կեանս սոսկականաց, և զօրաց պահապանաց. և համեղաճաշակ համարէր զքրտնաջան աշխատութը՟ պատրաստեալ զաղքատիկ կերակուրս այլոց, քան զիւր համադամ հանդերձանս կերակրոց: Արդ՝ եթէ շեղջաշեղջ կուտակութի՟ երջանկութե՟. և բարեբաստութե՟. մեծութե՟ և հեշտութե՟ խաբեաց և վրիպեցոյց զնա, որոյ նման ոչ դտաւ իմաստուն յորդիս մարդկան, այս ո՛վ մնասցէ անխաբ և անպատիր 'ի նոցանէ ։

ԳԼՈՒԽ Ժ։

Յաղագս [illegible] [illegible], զորս [illegible] [illegible] [illegible] ։

Սակաւ վնաս էր. թէ ոք 'ի սիրելոյ զմերձակայս՝ լինէր միայն պատրեալ՝ ոչ գտանելով 'ի նմա զայն, որում ցանկայր. բայց գտցէ զայն, յորմէ փախչէր. զի գտցէ ոչ զմեղր հանգստեան, այլ զթոյն մահուան ։ որպէս պատահեցաւ աբեսաղոմայ. զի 'ի յոսկեթել հերացն, որովք ճոխայր ամբարտաւանութեամբ. կախեցաւ ընդ երկինս և ընդ երկիր զծառոյ ։ Եւ քանիք իբրև զկեանս իւրեանց սիրեցին զինչս՝ որք եղեն նոցա պատճառ մահու ։ Ուստի ոչ միայն հայիլ պարտ է մեզ 'ի ժամկաւորս իբրև 'ի մնօտիս և յունայնս, այլև իբրև 'ի մատնիչս, և 'ի դահիճս ։ Վասն որոյ իրաւամբք մեծ մարգարէքն եսայի և եզեկիէլ նմանեցուցանեն զեգիպտոս, որ օրինակ է աշխարհիս և բարեացն, ջախջախեալ եղեգնեայ գաւազանի յոր թէ ոք յենուցու, ընդ

ձեռն

ձեան եղանէ ։ Եւ՛ դու յառաջ քան զմեռանելն ընձեռեսն ժամնլ՝ որքա ըզկեանս դառնագոյն քան զմահ , և աստ իսկ մատուցանեն զճաշակ իմն հանդերձեալ գեհենին , հոգօք , նեղութ՟բ , տատանմամբ , կասկածանօք , տառապանօք , նեղսրտութ՟բ , աշխատութ՟բ , վշտօք , և կարեօք որ վ՟ն նց՟ ։

2. Եւ՛ ոչ այսչափ միայն , այլ և 'ի մէջ նոյն բարեբաստութ՟ց և հեշտութ՟ց բուսանին և 'ի վեր բղխեն այսոքիկ ։ Ուստի և ս՟րբն յօհաննէս ասէ 'ի յայտնութ՟ե , թէ մահ և դժոխք մատնեցան 'ի նոյն լիճ հրոյ և ծծմբոյ · քանզի կեանք ամբարշտաց , զորմէ խօսի անդ առաքեալն ս՟ր նկարագրին , է մահ և դժոխք ։ և ասէ , թէ սոքա , ա՟յ մահ և դժոխք բմբռնեցին յայլ դժոխս ։ Զի 'ի ժ՟մկաւոր դժոխոց կենացս անցցէ ամբարիշտն 'ի մշտնջենաւո՛ր դժոխս յետ մահուա՛նն ։ Այլ սքանչելի իմն է , թէ ոք պարուրեալ 'ի հեշտալեաց , 'ի զբօսանաց , և 'ի բերկրութ՟ց չունիցի զհեշտութ՟ի 'ի նմ՟ ։ Եւ՛ շրջապատեալ յախորժելեաց , բարձեալ տանիցի 'ի սրտի զգեհեանն · և 'ի մէջ շղթայատող ուրախութ՟ց , լի իցէ վշտօք ։ Քանզի 'ի դժոխս , ուր անբաւ՛ են տանջանքն , չէ ինչ զարմանալի , թէ մեղաւ՛որն իցէ 'ի վիշտս · բայց թէ 'ի մերձակայս 'ի մէջ ամենակերպ ուրա-

խուեց ո՟չ գտցէ զհաճութի՟, այս է սքանչելի իմն և գերահրաշ հանգամանք ժամկաւորաց, և այս վնկ· զի անընդունակք են ս՟ք տալ զլիալիր հաճուխս ։

3· Բայց զայս ա՟մ յառաջատեսութին ո՟չ գործէ · զի զոր օրինակ ս՟րբքն, որք արհամարհեցին զմերձակայս, ունէին 'ի մեծամեծ տանջանս զսրտի բերկրութի՟, և զուրախութի՟ իբրև 'ի յերկինս · ո՟պ երանելին լաւրէնտիոս, զի ունէր 'ի սրտի զուրախութին արքայութե՟ 'ի մէջ բորբոքեալ կայծականց ։ Նոյնպէս և մեղաւորն, որ յերկիր բեւեռեալ զմերձակայս սիրէ, և զայնս մեծ վարկանի, գտցէ զդառնութի՟ մահու 'ի մէջ քաղցրութե՟ սատի կենաց ։

4· Այլ վատթարագոյնն և դժնդակագոյնն քան զա՟մ է, զի բարիք կենցաղոյս առնեն տոյժս, և մեծամեծ չարիս հանդերձեալ կենաց ։ Ուստի քաջ խօսեցաւ ս՟րբն Հերոնիմոս յասելն, Դժուարին իմն է, վայելել բարեօք ներկայից և ապագայից, լնուլ աստ զփորն, և անդ զմիտսն, և լինել առաջին 'ի յերկրաւորաց յաւիտեանս ։ Քանզի որ աստ հաստատէ զերջանկութին միայն 'ի գրգուանս, անդ եղիցի 'ի յարամնաց տանջանս ։ Նա, որ աստ յանարժանս պատուի և շողոմի · անդ արդարութե՟ արհամարհեսցի ։

5. Ե՛ւ զայս քաջ պարզաբանէ մեզ մր̅ վինկենտիոս փեռերացին օրինակա՛ւ բազէի, և ընտանի հա՛ւուն ։ Քանզի որ ինչ զանազանութի̅ն է 'ի մահու և 'ի կենանս 'ի մէջ երկուց թռչնոցս ․ նոյն զանազանութի̅ն է 'ի մէջ յղփացելոց ժմկա՛ւորօքս, և նց̅, որք առ 'ի զհետ գնալ քի̅, կեան 'ի մր̅ աղքատութե̅ն ։ Զի հա՛ւն, մինչդեռ կենդանի է, կայ յաղբևս տանն, և կերակուր նր̅ պատո՛ւական է թեփն և կոպիճն ։ Իսկ բազէն է 'ի պատո՛ւի, և բարձեալ բերի 'ի վր̅ ձեռաց, և կերակուր նր̅ են սիրտք թռչնոց, և ուղեղք կաքա՛ւուց, բայց 'ի մահո՛ւան փոխի այն հանգամանք, զի դի բազէին արկեալ լինի յաղբևս, իսկ հա՛ւն առեալ դնի 'ի սեղանս առաջի թագա՛ւորաց ։ Վն̅զի ոպ̅ Յակոբ 'ի դնելն զձեռս 'ի վր̅ գլխոյն եփրեմի և մանասէի թոռանց իւրոց, փոխեաց զձեռն, զի եդ զաջն 'ի վր̅ նր̅, որ էր 'ի ձախմէ, և զձախն 'ի վր̅ նր̅, որ կայր ը̅ աջմէ, նախամեծար արարեալ այսու զփոքրն ք̅ զմեծն ։ Սոյն օրինակ և ած̅ 'ի մահո՛ւան մարդոյ փոփոխէ զձեռս իւր, և դնէ զաջն 'ի վր̅ փոքրկանց, աղքատաց, և արհամարհելոց յաստիս, տալով նց̅ զանվախճան ուրախութի̅ն ։

6. Վկ̅ տայ ք̅ս փրկիչն մր̅ . Վա՛յ ձեզ մեծատանցդ, զի ընկալայք զմխի-

թարութիւն ձեր: Վայ ձեզ. որք ծիծաղիք այժմ, զի սգայցէք եւ լայցէք: Վայ ձեզ, որք յագեցեալք էք այժմ. զի քաղցիցէք, եւ ծարաւիցէք: (Ղուկ. 6. 24.) Ե՜ւ բիւր վայ նմա, որ աստ շինեաց զտուն իւր զերկնային, զի անդ պահեսցի նմա տուն անշէջ գեհենին: Սոսկացուք արդեօք 'ի բանիցն, որ առ ագահ մեծատունն ասացաւ, Յիմա՛ր, զի ընկալար անդէն զբարիս քո 'ի կեանս քում. եւ վա՛յ 'ի մահուան նր̄ եւ աղքատին ղազարու փոխեաց ած̄ զձեռս իւր, տալով նմա զանվախճան տանջանս: Զի որ 'ի կենդանութեն ընկղմեալ կայր 'ի մէջ անուշահամ ըմպելեաց, ոչ եգիտ յետ մահուան զկաթիլ մի ջրոյ. իսկ մուրացիկն ղազարոս, որում զխնայր մեծատունն եւ զփշրանս սեղանոյն, յետ մահուան ընծայեցեալ բազմի յամենառատ եւ յանկեալ սեղանն արքայութե̄ 'ի կեանսն յաւիտենից: Գրէ մարգարէն Երեմիայ, թէ նաբուզարդան դահճապետ խաղացոյց 'ի գերութե̄ յեղ̄էմէ 'ի բաբիլոն զմեծատունս եւ զձոխս քաղաքին. իսկ զտնանկս եւ զաղքատս եթող յեղ̄էմ: Այսպէս եւ սատանայ ածէ զսիրօղս մեծութեց գերեալս 'ի նացանէ 'ի բաբիլոն, այ̃ 'ի խառնակութե̄ դժոխոց. իսկ զաղքատս հոգւով թողու յեղ̄էմ, այ̃ 'ի տեսութե̄ խաղաղութե̄, որք վայելեսցեն պայծառափայլ 'ի ներ_ ներկայութե՟ն տ՟ն ։

Դ. Յայսցանէ, զոր մինչև ցայս ասացաք, կարեմք իմաստասիրել. թէ առժմկեայքս ոչ միայն խոտելիք են, այլև նողկալիք և ատելիք յղ՟ս լինելոյն խաբօղք, և վնասակարք, և խոչք խութք փրկութե՟ն մերոյ, որով ոչ միայն խաբեալ զրկեն զմեզ յուրախարար խաղաղութե՟ կենցաղոյս, այլև յերջանկութե՟ հանդերձելոյն, և 'ի հաստչէն բոլորեցուն ։ Տե՛ս թէ որչափ ատէ հարսն մաքուր, պարկեշտ, և հաւատարիմ զշնաբարոյ զայր ոք, որ մտեալ 'ի կերպարանս և 'ի հանդերձս առն իւրոյ, բռնաբարեսցէ զնա. և յետ բռնաբարելոյն բացցէ նմա զնենգապատիր չարութի՟ն ։ Ահա զնոյն զայս զնենգագործ չարիս առնեն մեզ ժմկաւորքս ։ Զի երևին մեզ իբրև անեղծ անշուշտ և ճշմարիտ բարիք. և առնեն զսիրտս մեր սեղեխս իւրեանց, տալով մեզ 'ի բաց թողուլ զօրհնաւոր փեսայն, և զճշմարիտ բարին, որ է ա՟ծ ։ Ապա կարի առաւել արժանի են նողկալոյ առ'ի մէնջ ։

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

Յաղագս զանազանութեան 'ի մէջ ժամանակաւորին, և յաւիտենականին։

ԳԼՈՒԽ Ա։

Յաղագս բնութեան յաւիտենականութեան։

Որպէս վերագոյնդ ասացաք. թէպէտ արհամարհ, և անարգ են առժամեայքս ըստ ինքեանց. սակայն առաւել յայտ յանդիման երևեսցի նոցին անարգութիւն համեմատեալ մեծութեան անանց և մշտնջենաւոր բարութեանց, զորոց սկիզբն արասցուք այժմ խօսել աստանօր։ Վասնզի այնչափ է մեծութիւն մշտնջենաւոր փառաց, մինչ զի սուրբն Օգոստինոս ասէ. Եթէ զօր ամենայն հարկ 'ի մեր կայր կրել զամենայն տանջանս դժոխայինս. և զնոյն ինքն զգեհենեանն յամայր ամս, զի զՔրիստոս 'ի փառսն իւր տեսանել մարթասցուք, և ընկերակից սրբոց նորա լինիցուք, ոչ ապաքէն արժան էր զհազարամեանս զայս յանձն առնուլ, զի այնչափ բարուէց, և փառացն հաղորդ լինէաք :

2· Եւ՛ մեծն Հերոնիմոս սքանչացեալ զարմանայ, զի քարինքն ե̄ տուխք դատապարտելոց, ոչ դառնանին 'ի վարդըս առ 'ի մեղմել յառաջադոյն զչարչանս զոր կրելոց են : Եւ՛ հակադարձեալ առաւել ևս զարմանայ, զի ե̄ տուխք փրկելոցն ոչ լինին փուշք · և յատից 'ի գլուխ նց̄ անցեալ ոչ խոցոտեն, և պատուհասեն զնս̄ վս̄ մեղաց · և յետ այնորիկ ստացին նք̄ զանպատում բարիս փոխան սակաւ տանջանաց : Եւ այն զի մեծութի̄ անանց բարութեանցն բաց 'ի լինելոյն յաւիտենական, է ևս անհուն, և անբաւ : Ուստի թէև ե̄ մի միայն օր վայելելոյ էր ոք 'ի նս̄, արժան էր յանձն առնուլ զհազարամեան խստութիւնս տանջանաց : Վս̄յ ասէ Երանելին Օգոստինոս · Այնչափ է արքայութեանն գեղեցկութի̄, այնչափ է մշտնջենաւոր լուսոյն զուարճութի̄, զն̄ է անփոփոխ ճշմարտութի̄, և իմաստութի̄, մինչզի եթէ ընդ միմիայն օր միայն վայելել յայն, պարտ և պատշաճ էր միայն վս̄յ զամենայն ամս կենցաղոյս լցեալս հեշտութբ̄, և շուրջ պատեալ լս փառօք առ ոտն հարկանել :

3· Պատմէ Հերալդոս : Թէ մեծն յորդանոս գլխաւոր առաջնորդն կարգին քարոզչաց, 'ի յերդմնեցուցանելն երբեմն զդև մի, էհարց զնա և ասէ, ո՞ւր ախորժես գնալ դև դու։ Պ՟խ՟ի ետ դևն և ասէ, յերկինս։ Ասէ ծերն, վ՟ս է՞ր։ Ե՛ւ դևն ասէ, վ՟ս տեսանելոյ զերեսս ա՟յ։ Ասէ ծերն, և ո՞ր չափ ախորժես տեսանել զայն։ Պ՟խ՟ի ետ դևն, և ասէ, տեսի միանգամ յական թօթափել զերեսն ն՟ր, և եթէ հնար էր միւսանգամ և սնոյնչափ տեսանել՝ յօժարութ՟բ և ուրախութ՟բ յանձն առնուի կրել մինչև ցօր դատաստանի զա՟մ տանջանս, զորս կրեն ընկերք իմ։ Ապուշ մնաց ծերն ը՟ պ՟տ՟սխանին ը՟ այն· և յետ վայրի մի խոկալոյն, ասէ ցդևն· բարւոք ետուր զպ՟տ՟սխանին· բայց կամիմ, զի նմանութ՟բ իմն պարզաբանեսցես փոքր՝ ի շատէ զգեղեցկութ՟ին ա՟ծային· պ՟խ՟ի ետ այսն չար, և ասէ, անմտութ՟բ խնդրեցեր զբանդ զայդ։ Քանզի թէ ա՟մ գեղեցկութիք արարածոց՝ ի մի գումարեսցին, և թէ աստեղք պայծառասցին և ծագեսցեն իբրև զարեգակն· և արեգակն բիւրապատիկ ք՟ զնս՟, այս ա՟մ իբրև ոչ ինչ է առ գեղեցկութ՟ն ա՟յ· և այնպէս է, ո՟պ թէ համ՟մատեսցէ ոք զխաւարչոտին և զաղջամղջին գիշերին ը՟ լուսապայծառ տուընջեան։

4· Արդ՝ յայսմ պատմութ՟ե արժան է գիտել, զի դևն ոչ երբէք ետես զա՟ծ այնպէս, ո՟պ տեսանեն այժմ հրեշտակք 'ի փառս, այլ միայն էառ զճաշակ իմն գեղեցկութեան, մեծութեան, և կատարելութեանցն նորա. և այս բաւական եղև նմա առնել, զի թէ հնար էր միւսանգամ ունիլ զայն բողէական վայելումն, յօժարութեամբ կրէր զայն երկարաժամեայ խստութիւն տանջանացն: Այսպէս քանի՛ առաւել մեծ լիցի տեսանել զերեսս նորա պայծառ տեսութեամբ յաւիտեանս յաւիտենից. որովհետև առօրեայ վայելումն նորա է իբրև ամաց բազմաց:

5. Եւ զայս քաջ ցուցանէ պատմութիւնս, որ զկնի: միայնակեաց ոմն յառաւօտու պահուն մինչդեռ ասէր զժամն ընդ այլ եղբարս վանաց, իբրև եհաս յայն առուն սաղմոսացն. Հազար ամ յաչս քո որպէս օր երէկի, որ անց. Թուեցաւ նմա հրաշալի իմն, եթէ զիարդ մարթի այնմ լինել, Եւ զի էր նա մեծ ծոյ ոմն. յետ վճարման առաւօտեան ժամուն, մնաց յայն գիշեր ըստ սովորութեան 'ի դասի, և սկսաւ խոկալ զայն, և ժտէր յԱյ ցուցանել նմա զճշմարիտ իմացուած, այնր տան սաղմոսաց: Եւ մինչդեռ կայր յաղօթս, երևեցաւ նմա 'ի դասն ճնճղուկ մի գեղեցիկ. որ երգէր ախորժական ձայնիւ, և հեզիկ թռանէր այսր անդր առաջի նորա մինչև զմայլել ծառային Այ 'ի ձայնէ՛ նորա. և իբրև ել ճնճղուկն արտաքս քան զեկեղեցին, ել ընդ նմա և միայնակեացն.

կեացն. և էած զնա ճնճղուկն յանտառն արտաքոյ վանաց, և նստեալ յոստ մի ծառոյ, սկսաւ երգել զքաղցրալուր մեղեդին իւր։ Նստաւ և միայնակեացն ը̅ ծառոյն, և ունկն դնէր նմա։ Եւ յետ սակաւուց թռուցեալ գնաց մեկնեցաւ անտի ճնճղուկն, և այլ ոչ երևէր։ Իսկ միայնակեացն եկաց մնաց դառնացեալ սրտիւ, և սկսաւ ասել։ Ո՞վ քաղցր և անուշ ճնճղուկ, ո՞վ մխիթար տառապելոյս, ո՞ւր արդեօք գնացեր, ի՞նչ թէ դարձցիս երբէք անդրէն։ Եւ իբրև ետես, թէ ոչևս դառնայ. ել անտի երթալ 'ի վանս, կարծէր թէ դեռ երեք ժամք են աւուր։ Եւ մերձեցեալ 'ի վանս իւր, որ մօտ էր յանտառ անդր, ետես պարիսպ 'ի տեղի դրան, և զդուռն վանից փոխեալ յառաջին տեղւոյն անդր, ուր պարիսպ էր նախ. և ետես զա̅մ ինչ այլայլեալ։ Եւ ապա զկնի սքանչանալոյն մեծա̅պ, մատեաւ առ դուռն, և բաղխէր զնա։ Ել արտաքս դռնապանն, և ոչ ծանեաւ զնա. եհարց զնա, և ասէ, ո՛ ես եղբայր. ուստի՞ գաս. և զո՛ խնդրես։ Ասէ միայնակեացն, ես եմ պաշտօնեայն աւանդատան վանացս, և ահա սակաւ ժմ̅ է, յորմէհետէ ելի աստի, և այժմ 'ի դառնալս իմ, տեսանեմ զա̅մ ինչ փոփոխեալ, և ոչ գիտեմ, թէ զինչ է այս։ Եհարց ցնա զունապանն, և ասէ, զի՞նչ անուն է աբբային, և զի՞նչ անուն աթոռակալի նր̃, և զի՞նչ անուն պաշտօնէիցն. և նա ասաց զանուանս նց̃, և հիացեալ զարմանայր ընդ չճանաչել զնա̃ դռնապանին, զի ասէր, թէ չիք իմ լուեալ զայդպիսի անուանս։ Եւ ազդ արար դռնապանն աբբային, և մուծին 'ի ներքս զմիայնակեացն, բայց ոչ նա զաբբայն ծանեաւ, և ոչ աբբայն զնա։ Վա̃յ սկսան քննել և ընթեռնուլ զմատեանս ժամագրութե̃ն, և տուեալ ծանեան, զի ամք երեք հարիւր էին անցե̃լ 'ի մահուանէ անտի աբբային, զոր միայնակեացն յիշէր։ Յայնժամ սկսա՛ երանելին պատմել մի ըս̃ միոջէ զիրս թռչնոյն և զսաղմոսացն։ Եւ նք̃ ընկալան զնա իբրև եղբայր իւրեանց։ Իսկ նր̃ ընկալեալ զխորհուրդս եկեղեցւոյ՝ հանգեա՛ւ 'ի տր̃ քաղցրութե̃ն։

6. Արդ. եթէ զուարճու̃ն լսելեացն միայն այնչափ զմայլեցոյց զմիայնակեացն զայն երջանիկ. ապա զի՞նչ եղիցի յորժամ ոչ միայն լսելիք, այլև տեսանելիք՝ հոտոտելիք, ճաշակելիք. և բովանդակ իսկ մարմինն և հոգին լցին և մացեն 'ի խնդութե̃ս համեմատ զգայարանաց մարմնոյն, և կարողութե̃ց հոգւոյն։ Զի եթէ ախորժալուր ձայն թռչնոյ այնչափ արբեալ զմայլեցոյց զե-

լարանելին զայն · զի՞նչ ապա արասցեն քաղցրանուագ և ուրախարար երգք հրեշտակաց ։ Զի՞նչ արասցէ ամենապայծառ տեսութիւն երրորդութեան ։ և զի՞նչ արասցեն հրճուանք բարեացն, և հրաշալի գործոցն· զորս արար ած առ ՚ի ցուցանել զամենակարօղ զօրութիւն իւր ։ Ո՛վ անարգութիւն, ո՛վ նուաստութիւն անցաւոր բարեացս, զի՞արդ նախամեծար լինիս այնչափ բարութեանցն ։

Յօդուած Է ։

Երանելին անսխալս դնէ զայս զանազանութիւն ՚ի մէջ բարեաց և չարեաց կենցաղոյս, և ՚ի մէջ բարեաց և չարեաց հանդերձելոյն, զի բարիք և չարիք կենցաղոյս են ընդ միմեանս խառն և շփոթ ։ Ուստի բարիքն են անկատարք, զի խառնեալ ունին զբազում չարիս ընդ իւրեանս · և չարիքն են փոքունք, և զուգախառնին ՚ի բարեաց ։ Բայց ՚ի հանդերձեալն, ուր բարիք փառացն են ծայրագոյն, անապակ, և անխառն ՚ի չարեաց, և ոչ ինչ կերպիւ տաղտկալիք · այսպէս և չարիք գեհենին են անապակ և անխառն ՚ի յուսոյ բարեաց, և մեղմացման · և վն̃կ են անտանելիք, և սոսկալիք ։ Եւ զոր օրինակ ասէ մարգարէն զնոյ. Թուէ որչափ հեռի էն արեւելք յարեւմտից, այնչափ հեռի արար 'ի մէնջ զանօրէնութիւնս մեր. այսպէս եւ մեք կարեմք ասել. թէ ած հեռի առնէ յընտրելոց իւրոց զչարիս եւ զպատուհաս այնչափ, որչափ հեռի են երկինք յերկրէ։

2. Եւ թէպէտ տարածութիւն հոգեւորական եւ անանց բարեացն 'ի կենցաղական բարեացս է յոյժ առաւել. քան զտարածութիւն երկնից յերկրէ, բայց առ'ի հասու լինել փոքր ինչ ճոխութեն նց, եւ մանաւանդ մեծութեն հրեղէն երկնից, առաջի մատուցուք, թէ որչափ փոքրիկ է երկիրս առ երկնիւք, ոպզի տեսցուք ըստ այնմ համեմատութեն. թէ որչափ նուաստ, եւ իբր թէ ոչինչ են բարիք կենցաղոյս քան զերկնայինս։ Ներհուն չափաբեր հայրն Քրիստափոր կղաւիոս ասէ, թէ երկինք լուսնի, որ խոնարհագոյն է քան զայլ երկինս, է հեռի, կմ բարձր 'ի դնայ երկրիս միլոնս մետասան բիւր, (որ է այս 110000:) եւ երկինք, կմ պարունակ արեգական հեռի է յերկրէ միլոնս չորեք հարիւր հնգետասան բիւր (այս՝ 4151800:) իսկ հաստատութին, կմ աստղալից երկինք հեռի է յերկրէ միլոնս երրու եօթնհազար բիւր (այս. 69050872:) ուստի ասէր պղատոն, թէ պարտ է աստ զկայ առնուլ չափաբերից, վասն պակասին աստ հա֊

շուք

շիւ̂ք 'ի չափել եւս անդր։

3. Եւ̂ տակայն դիտել արժան է, զի աւ̂ելի հեռի է հրեղէն երկինքն 'ի հաստատուէ̃, քան հաստատուե̃ն յերկրէ, վ̃զի միայն սոււ̂որուե̃ պարունակի հաստատուե̃ն, ուր աստեղքն են, է այնչափ տարածուե̃ վայրաց, որչափ է վայրն յերկրէ մինչեւ ցհաստատուի̃ն ։ Վ̃զի ասեն բազումք, զի թէ անկցի երկանաքար ինչ 'ի խոնարհ 'ի կորնթեաց անտի հաստատուե̃ . հազի̂ւ զամս երեսուն ժամանել կարէ այսր յերկիր, թէեւ 'ի միում ժամու ընթասցի մղոնս վեց հարիւր, կա̃ եօթն հարիւր ։ Եւ̂ հաստատեն բազում չափաբերք, եւ ներհուն ա̃ծաբանք, եւ մեկնիչք սր̃ գրոց, թէ աւ̂ելի հեռի է հրեղէն երկինքն 'ի կորնթեաց հաստատուե̃, քան թէ կորնթիք նո̃ յերկրէ. ուստի ասեն, եթէ ոք կեցցէ զամս երկու հազար, եւ ընթասցի յաւ̂ուրն հարիւր մղոնս 'ի վե̃ կորնթեաց հաստատուե̃, հազի̂ւ կատարէ յայնչափ աւ̂ուրս զփոքրիկ վայր ինչ այնր պարունակի աստեղաց ։ Ապա եթէ կրկնեսցէ զնոյնն միւսանգամ, դեռեւս ոչ կատարէ զշրջանս նո̃ ։ Իսկ եթէ երեքկնեսցէ զնոյնն նովին ընթացիւք արագուե̃, համեմատեալ առ հրեղէն երկնիւք, ոչ կատարէ գոնէ զփոքրագոյն մասն ինչ նորին ։

4. Ո՜վ անչափ կարողութեան շնորհացն Քո, որ առնէ, զի արդարք 'ի միում րոպէի ժամանեսցեն յերկրէ յերկինս, և յական թօթափել կատարեսցեն զայն երկարաձիգ ճ՟պհ: Այս խոկումն էր, որ մխիթարէր, և քաջալերէր զորբուհի և զմեծազգի տիկինն զայն, որ նահատակեցաւ յանդիմաց Տ՟ն: Քանզի նա մինչդեռ յանհնարին տանջանս էր, զի եղեալ էին զնա 'ի վ՟ր ծայրասուր վիմի, և բարձեալ 'ի վ՟ր ն՟ր զանբաւ ծանրութիւն, նա զայն ա՟մ վիճակ բարի համարեալ ասէ ցայնոսիկ, որք շուրջն կային 'ի զննին նահատակութ՟ն ն՟ր, և սոսկացեալ ցաւակցէին. այնչափ հակիրճ և համառօտ է ճ՟պհն, որ ածէ յերկինս. մինչզի աստ յետ վեց ժամուց բարձրացայց 'ի վերոյ քան զարև, և զլուսին. կոխեցից զաստեղս ոտիւք, և մտից 'ի հրեղէն երկինս 'ի յառագաստն լուսոյ:

5. Արդ ը՟ս համեմատութե՟ տարաձգութե՟, և մեծութե՟ տեղւոյն, նոյնպէս մեծամեծ և անպատմելի են բարութիք երկնից քան զբարիս կենցաղոյս: Ո՜վ որչափ անմիտ են և խելացնորք, որք վ՟ս երկրի. որ է կէտ մի, կորուսանեն զայն անբաւ ընդարձակութի՟ տեղւոյ արքայութե՟ն երկնից. և վ՟ս փոքու և դուզնաքեայ իմն հեշտութե՟,

կորուսանեն զանանց և զանհուն հեշտութեան ուրախութեանց : Եւ այնչափ են բարութիւնք այնր լուսածեմ գաւառին · մինչզի իբրև կամէր երանելին Օգոստինոս առնել 'ի ձեռս զհրաշալի գիրսն իւր գրել բանս ինչ 'ի վերայ նորա , ետես զի ծագեաց 'ի սենեկին լոյս մեծ և սքանչելի , և բուրեաց հոտ անոյշ , մինչև զմայլեալ յափշտակեցաւ միտք, և լուաւ զձայն, որ ասէր, զի՞նչ գործես Օգոստինէ · միթէ կարո՞ղ իցես զամ զանդունդ հողոյ 'ի մի բուռն բովանդակել, կամ զամ ջուրս ծովու ցամաքեցուցանել · և կամ զզնացս լուսաւորաց արգելուլ : Այլ դիւրին է անկարելեացս այսոցիկ լինել կարելի , քան քեզ բացայայտել դրով զփոքրիկ մասն ինչ փառաց , զոր ունի սբ ոք 'ի յերկինս :

Յօդուած Գ :

Որպէս չարիք , և ցաւք կենցաղոյս են իբրև ոչինչ առ մեծութեան յաւիտենական չարեաց : Քանզի զոր օրինակ վերոյիշեալ սբ միայնակեցին երեք հարիւր ամք , յորս եկաց երկնային վայելմամբ և ուրախութ. ձայնիւ թռչնոյն · Թուեցան նմա այնոքիկ երեք ժամք , այսպէս և երեք ժամք, տանջանացն դժոխոց՝ երեւեսցի դատապարտելոց իբր եւ դարքեան ընդերկարագոյն։

2. Եւ առ 'ի հաստատարմացուցանել զայս՝ յառաջ բերէ սրբն Անտոնինոս Փլորենտացին զդիպուած մի, յորում առժամեայ տանջանք քաւարանին թուեցան ումեմն յոյժ երկարագոյն, եւ դիպուածն էր այսպիսի։ Առաքեաց Տր̃ առն միում զընդերկար հիւանդութիւնս, ոպ̃զի զգաստացի յանուղղայ վարուց իւրոց։ Այլ իբրեւ յոյժ վտանգեցաւ այրն 'ի դառնուե ցաւոցն, խնդրեաց յայ̃ ազատել զնա 'ի բանտէ մարմնոյն։ Եւ երեւեալ նմա հրեշտակ յայ̃, ասէ ցնա, ընտրեա քեզ զմի 'ի յերկուցս։ կա՛մ կալ այսպէս հիւանդ եւս զամս երկուս, կա՛մ մեռանիլ այժմ, եւ մնալ 'ի քաւարանի զերիս աւուրս։ Իսկ հիւանդն ձանձրացեալ 'ի ցաւոց թուեցան նմա փոքրագոյն երեք աւուրք քաւարանին քան զերկուս ամս հիւանդութե. ուստի ընտրեաց զերիս աւուրսն։ Եւ եղեւ մեռանիլ նմա, եւ գնալ 'ի քաւարանն, եւ ահա հազիւ հազ անցեալ էր ժամ մի երեւեցաւ նմա հրեշտակ տն̃, եւ զկնի մխիթար բանիցն, ասէ ցնա, Ճանաչես զիս, թէ ո՛ եմ։ Եւ նա ասէ ոչ։ Յայնժամ ասէ ցնա հրեշտակն, Ես եմ պատգամաւորն այ̃, որ ասացի

ցքեզ, կ՟մ կալ աստ զերիս աւուրս, և կ՟մ 'ի հիւանդութեան զերկուս ամս, և դու զայս ընտրեցեր: Իսկ տառապեալն այն ասէ, ոչ հաւատամ, եթէ հրշ՟տկ ես դու ի՟մ, զի ոչ ասեն մ՟ք հրեշտակք. ո՟վ ասեցեր դու ինձ, զի ահա բազում ամք են, յորմէ հետէ աստ տանջիմ, և այն զի ասացեր մնալ ինձ աստ զաւուրս երիս: Յայնժամ ասէ ցնա հրեշտակն, գիտասջիր. զի հազիւ մի ժամ է, յորմէ հետէ աստ ես, և դեռ ջերմ է մարմին քո, և չև ևս թաղեալ է: Յայնժամ ասէ հոգին ցաւալից. ա՛ղէ խնդրեա 'ի տ՟նէ, զի մի՛ հայեսցի յանդիմանութիւն իմ որով ընտրեցի զայս տեղի, այլ պարգևեսցէ դառնալ ինձ անդրէն 'ի կեանս և պատրաստ եմ ոչ միայն զամս երկուս, այլ որչափ և հաճեսցի տ՟ր, թէ ապրեցայց, կրել յօժարութ՟ զայն ախտ ցաւոց: և այսպէս յարուցեալ 'ի մեռելոց, և ճաշակեալ զփոքր քաւարանին, կրէր իբրև թեթև ինչ զա՟մ դառնութ՟ ցաւոց կենցաղոյս ոչ միայն համբերութ՟, այլև ուրախութ՟:

3. Արդ՝ եթէ այսպէս երկարագոյն թուեցան տանջանք քաւարանին, որչափ եղիցին ապա տանջանք գեհենին: Զի եթէ մի ժամ քաւարանին երևի ամ մի, որ բաղադրի 'ի յութն հազար եօթն հարիւր վաթսուն և վեց

ժամուց. ապա ուրեմն մի ամն 'ի դժոխս լրեւեցի ութն հազար, և ահելի յաւիտեան : ո՛վ որքան դուզնաքեայ են հեշտութիւնք մարմնոյ. որոց վ՟ն մատնի մարդն յանչխախձան, և յանեզր տանջանս : Երբ դու տե՛ս, թէ զի՛արդ հիւանդութիւնք, ցաւք, և թշուառութիւնք կենցաղոյս են իբր արժանի ծաղու համեմատեալ յաւիտենականացն, որով հետև վիշտք ն՟ց փոքունք, են և դիւրանցք :

* * *

ԳԼՈՒԽ Խ. Բ.

Յղ՟գս մեծութ՟է յաւիտենական փառաց արդարոց.

ԶՄտաւ՞ ածցուք մի ը՟ս միոջէ զմեծութին բարութե՟ն հանդերձելոյն, ուր են անբաւ՞ փառք, և մեծութիւնք. և զուա՞րճութիւնք հոգւոյ, և մարմնոյ. Բայց զառաջինն սկիզբն արասցուք խօսիլ զփառաց, որում բանաւոր արարածք բերանաբաց տենչան. և զոր ք՟ս խոստացաւ ն՟ց, որք սիրեցին յաստիս զխոնարհութին : Քանզի ասէ. Որ յաղթէ, տաց նմա ուտել 'ի մանանայէն թագուցելոյ. և տաց նմա վճիռ ընտրութե, և գրեալ անուն նր 'ի վճիռն, զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն որ առնու:

(Յայտ. 2. 17.)

2. Ո՞վ անչափուն փառաց արդարոց: Հասու՜ թագաւորին պարսից քանզի պատուասէր էր յոյժ. կոչեաց զինքն եղբայր լուսնի և արեգական, և այլ մոլորակաց, շինեաց զկազմած ինչ ապակեայ գնդաձև, և եդ 'ի բարձրագոյն ինչ տեղւոջ, և էր շինեալ այնպիսի ճարտարութ̄, զի յորժամ ելեալ բազմէր 'ի մէջ նր̄, ը̄ հոլովել անուոյն 'ի ներքուստ ոտին. վերանային պատկերք լուսնի, և արեգական, և աստեղաց, և ճառագայթարձակ կացեալ 'ի վերուստ գլխոյն, զարդարէին զնա սքանչելապէս, և այսպէս պատկերօք լուսաւորաց ձգէր յանձն զմեծաշուք փառս: Արդ՝ դու տե՛ս, թէ ո՞րչափ եղիցին փառք սըրբոց յորժամ ոչ միայն նստցին 'ի վր̄ արեգական, և լուսաւորաց, և հաստատութե, այլ 'ի վր̄ նոյն իսկ աթոռոյն քն̄, զորս ոչ միայն մարդիկ, այլ և հրեշտակք, և նոյն ինքն Ած̄ պատուեսցէ և փառաւորեսցէ:

3. Ասէ կղեմէս աղեքսանդրացին. եթէ երբեք լինինք էին յորին պարսից, ուր թէ ոք մերձենայր յառաջինն

ջինն

չինն, լսէր զձայն մարտի պատերազմի իբրև 'ի հեռուստ մղելոյ . և որ մերձենայր յերկրորդն, յատակ ևս լսէր զձայն զինուորաց, և զթնդիւն մարտին . իսկ որ յերրորդն մերձենայր, լսէր զերգս և զգովութիւս վ՟ն յաղթութենն: Այսպէս պատահի և արդարոց, որք ունին անցանել ը՟ երիս խորհրդաւոր լերինս, որք են այսոքիկ, բան, շնորհք, և փառք: Զի որ մերձի 'ի ճանաչումն բանի եբրաւանց, զգայ և տեսանէ յանձին զկռիւ մարտի 'ի կրից և'ի մոլութենց . զոր մղէ շնորհօք հզօրեղապէս, և յաղթէ ն՟ց: Իսկ որ յետ յաղթութե՟ մերձի 'ի փառս արքայութե՟, յայնժամ տեսանէ, զի երգեն զերգս յաղթութե՟ ն՟ր երկնայինք՝ ա՟մ ցնծութ՟բ, և ուրախութ՟բ, և անթառամ պսակօք և անգին ակամբ պսակեն զնա: Յաշխարհի աստ մեծ և յոյժ մեծ պատիւ համարի 'ի մէջ մարդկան, եթէ ոք նստցի 'ի տեղան ը՟ թագաւորի: Բայց չէ լուեալ բնաւին թէ թագաւոր ոք ծառայեալ իցէ իւրում ծառայի . և ոչ իսկ անկեալ է այս ընդ միտս մարդկան:

4. Վ՟նկ յիրաւի աստ դաւիթ ցն՟ծ, Ինձ յոյժ մեծարգոյ եղեն բարեկամք քո ա՟ծ: Քանզի չիք պատիւ ինչ եղեալ երբէք ումեք յ՟ծյ, որ հաւասարեսցի . փառացն, որով պատուէ ա՟ծ զմ՟ս իւր:

Չէր մեծ ինչ պատիւն, որով պատուեաց դաւիթ զմեմփիբոսթէ, կարգելով զնա ը̅ այնոսիկ, որք ուտէին 'ի սեղանոյ իւրմէ, ք̅զի նա էր թոռն թագաւորի, և որդի յովնաթանու, քան զոր չգտանէիւր ոք բարեգոյն 'ի մէջ իէլի. և պարտական էր դաւիթ վ̅ն երախտեացն յովնաթանու պատուել զորդի նր̅. և սակայն չկարէր փառաւորագոյն ևս պատուել զնա։ Այնպէս և պատիւն այն, զոր մեծ համարէր հպարտն համան, ի̅մ զի արտաշէս փառաւորեսցէ զնա նստուցանելով յերիվարն արքունի, և տալով շուրջ ածել ը̅ հրապարակս քաղաքին 'ի փառաւորագոյն իշխանէ միոջէ. չէր մեծ ամենեւին, վ̅զի չէր նոյն ինքն արքայն, որ երթայր առաջի նր̅ ը̅ հրապարակս, այլ մի ումն յիշխանաց նր̅, և ոչ իսկ էանց այն ը̅ միտս համանայ։

5. Բայց ե՛կ տես դու ինձ. թէ որպիսի կերպիւ պատուէ ա̅ծ զս̅բս իւր, որ անցանէ զանցանէ քան զհատուցմն մանց մարդոյն։ Վ̅զի ոչ միայն պատուէ և փառաւորէ զընտրեալս իւր նովին իսկ ա̅ծութ̅ն իւրով, ո̅պ զի ժառանգեսցեն զինքն, և զմայլեսցին ինքեամբ, այլ պատուէ հրաշափառապէս և զգործս քաջութ̅ն և յաղթութ̅ն նր̅։ Պատմէ թովմաս կանտիպրատեցին վ̅ն ա̅յն ալէքսանդրի որդւոյ թագաւորին

րին սկովտացւոց, և եղբօր սր̅ կուսին Մատիլդայ. թէ երևեցաւ զկնի մահուան կրօնաւորի միոյ, և ունէր զերկուս պսակս։ Եհարց կրօնաւորն զնա, և ասէ. զի՞նչ են պսակքդ այդոքիկ։ Պատասխանի ետ սր̅ն և ասէ, պսակն զոր 'ի գլուխս ունիմ, է հասարակ ամ̅ սրբոց, իսկ զոր 'ի ձեռս բարձեալ ունիմ, է վարձքն, զոր ստացայ յղ̅ս հրաժարելոյս 'ի թագաւորութէս վս̅ Քս̅ի։

6. Այսպէս և նահատակք կուսանք, և վարդապետք պայծառացին զանազան ոսկեղէն և մասնաւոր պսակօք. և նոյն իսկ անդամք սր̅ց, որք եղեն մասնաւոր իմն եղանակաւ զէն արդարուե վս̅ քի̅, եղեցին մասնաւոր իմն կերպիւ պայծառացեալք։ Ո՞վ ոչ ճառագայթարձակ փայլեցին այնք տեղիք մարմնոյ սր̅յն ստեփաննոսի, որովք վիրաւորեցաւ նա 'ի քարկոծիլ իւրում։ Ե՞ւ ո՞րպիսի ճաճանչաւոր, և լուսապաճոյճ արկանելեօք սփածեալ պատեցի Առաքելոյն բարդուղիմէոս յղ̅ս մորթաղերծ լինելոյն։ Ե՞ւ ո՞րպիսի շքեղ և գեղեցկագոյն ճառագայթիւք զարդարեցին ամ̅ յօդուածք մարմնոյ սր̅յն Յակովկայ պարսկին, որոյ հետև վս̅ քի̅ յօդ առ յօդ հատեալ եղեն ամ̅ մասունք մարմնոյ նորա։

7. Այսպէս և խոստովանողք յան-

դատեն յայնոսիկ · զորս մեռուցին մասնաւո՛ր լինին կրթութ̃ · պայծառացին մասնաւո՛ր լինին կերպի՛ւ : Գրեալ է վս̃ սբ̃ կուսին մետիղդայ , թէ երևեցաւ նմա երբեմն սբ̃ աւետարանիչն Յօհաննէս , և տեսանէր կոյսն զի փայլակնացայտ վառէին աչք առաքելոյն , և լուա՛ւ զձայն , որ ասէր · վս̃կ փայլին աչք իմ , զի 'ի բովանդակ ժմ̃կն յայն, յորմէհետէ յանձն արարի ինձ քս̃ զմայրն իւր ամէնօրհնեալ, ոչ երբէք վս̃ պատկառանացս հայեցայ համարձակութ̃ 'ի դէմս նր̃ : Ո՛վ պատիւ և փառք երկնայի՛ն , որք ոչ էք ը̃ վտանգօք , և ընդպատահմամբ · ոչ կախե̃լ 'ի նկարուց , կմ̃ 'ի գրոց , և յարձանաց ստորանկելոց փոփոխուն մարդկեղէն մտաց , և ստորանկախանձ ժմ̃կին , այլ անյեղ և անփոփոխ 'ի պատուեալս , և յերանեալս յաւիտեանս յաւիտենից : Ե՛ւ ո՞ր պատիւ մեծարանաց ոչ մատուսցի հոգւոյ սբ̃ց 'ի յերկինս , որոց մարմինք պատուէին 'ի յերկրի սքանչելի փառօք 'ի մարդկանէ և յայ̃ : Զո՞ր հրաշագործութիւն ոչ արար ած̃ նշխարօք ծառայից իւրոց , և զո՞ր նշանս և արուեստս ոչ գործեաց 'ի մարմինս նց̃ : Պատմէ սբ̃ ոսկեբերանն , թէ 'ի մարմնոց սբ̃ցն յուվենտիոսի և մաքսիմոսի փայլատակէին այնպիսի ահեղահրաշ նշոյլք ճառագայթից , մինչև ոչ

կո_

զօրէին տեսանել զնա մարդիկ 'ի խատղանացն : Եւ Սուլպիկիոս սեւերոս գրէ յղգս սբյն մարտինոսի , թէ եղեւ մարմին նր իբրու փառաւորեալ , զի էր ամենեւին մաքուր և ամբիծ իբրև զակն վանի, և սպիտակ իբրև զկաթն։ Այսպ և մարմինք սբ թագաւորին եդվարդոսի , և սբյն Ֆրանչիսկոսի քսաներեցուոյ պահեցան անապականք զամս յոլովս , և արտաքնոքօք ած զբազում նշանս : Արդ՝ եթէ սովին օրինակաւ փառաւորեաց ած զմարմինս ծառայից իւրոց , որք ընդ հողով են գրաւեալք · զի՞նչ ոչ արասցէ ընդ հոգւոց նց 'ի յերկինս : Եւ կմ զի՞նչ ոչ արասցէ ընդ հոգւոց և ը մարմնոց նց յորժամ 'ի հասարակաց յարութեն միաւորեսցին փառաւորեալ ընդ իրերաց · և յետ դատաստանին , մտցեն յաղթանակեալք 'ի վերինն եդեմ 'ի քաղաքն այ, 'ի սբ և 'ի մշտնջենաւոր օթեւանս արդարոց :

* * *

ԳԼՈՒԽ Խ. Գ.

Յաղագս ճոխութե՟, և անանց թագաւորութե՟ն երկնից :

1. Ըստ փառացն են և ճոխուն՟ք մեծութեցն երկնից. ուստի և քո՟ տր՟ն մեր առ'ի ցուցանել զայնոսիկ, խօսէր ըստ արքայութե՟ն առակօք և նմանութե՟ք մեծագին իրաց: Զի երբեմն կոչէ զնա՝ գանձ ծածկեալ յագարակի, երբեմն պատուական մարգարիտ. և երբեմն բազմութե՟ քանքարաց: Եւ՛ այս յոյժ իրաւացի. քանզի թէ երանութի՟ն արդարոց կայանայ 'ի ժառանգութե՟ն տ՟յ, ապա ո՞ր մեծութե՟ կենցաղական հաւասարիլ կարէ ընդ նմա: Ո՞ր ժառանգութե՟ մարթի գտանել մեծագոյն քան զժառանգելն զա՟ծ: Ո՞ր ստացուած մեծութե՟ գանձուց, քան զստացուածն զեթերականն: Ո՞ր այն պատուական քան զարիւն զայն ա՟ծութե՟: Եւ՛ ո՞ր ոսկի մաքուր և ազնիւ, քան զհաստիչն ոսկւոյ ճշգրտիւ, որ տայ մեզ զանձն 'ի ստացուած ժառանգութե՟, զի մի՛ զրախնդիր տարժանեա-

ցուք զհետ ժառանգութեց և ստացուածոց անարդ, դուզնաքեայ, և տաժանելի բարեաց կենցաղոյս :

2. Բայց 'ի մեծութէ գանձուց և ստացուածոց, որ է նոյն ինքն ած, արժան է նկատել ապա և զթագաւորելն արդարոց. վզի իւրաքանչիւրն եղիցի թագաւոր մեծափառ, և տր բազում գաւառաց : Քանզի այնչափ է մեծութիւն երկնից, մինչզի ոչ անտանի չափաբերից. եթէ տացէ ած իւրաքանչիւր արդարոց կալուածս ժառանգութե այնչափ, որչափ է բովանդակ շրջան երկրիս, տակաւին մնայ տալ այլոց զնոյնչափ ևս, և ոչ նուազի կալուած ժառանգութենն :

3. Եւ յաւելուն ասել առ'ի հաստա լինիլ մեզ փոքր'ի շատէ մեծութե այնր լայնատարած գաւառին երկնից, թէ ձգի երկայնութի նր միլոնս հազարիցս հազար և հազար չորս հարիւր բիւր. (որ է այս, 10014000000 :) և 'ի լայնութե միլոնս երեք հարիւր երեսուն բիւր, (որ է այս, 3300000[illegible] :) Իսկ ածաբանք, և այլ վարդապետք եկեղեցւոյ ասեն, թէ ընդարձակութիւն այն հրեղէն երկնից գրեթէ անհուն, և անչափ է, վյ ասեն, առաւել է սքանչանալի, քան ընդ չափու դրաւելի : Ուստի և ոմանք յածաբանից յաւելուն ասել, եթէ ած հաստաւա-

զոյգ՝ առ ախս ծուլու եղելոց լինէին առ յո͞յ ը͞ս չափու մեծութե͞ն գնոյ երկրիս, ոչ զօրէին լինել զայն ընդարձակութի͞ն մեծ զերկնից, զոր միայն լցեալ բովանդակէ քաղաքն այն վերնական, լայնանիստ, ս͞բ եւ լուսաւոր, որ ը͞ս վկայելոյ ս͞բ գրոցն է շինեալ ՚ի մաքուր ոսկւոյ, եւ յականց վանեայց, եւ ՚ի պատուական գոհարաց․ դրունք ն͞ր մարգարիտք են անգին․ եւ հիմունք պարսպաց ն͞ր, եւ նոյն իսկ պարիսպք շափիւղայ, յասպիս, զմրուխտ, տպազիոն, յակինթ, ամեթոս, եւ բիւրեղ։ Ո͞պ ասէ առաքեալն ՚ի յայտնութե͞ն իւրում։

4․ Գրեալ է վ͞ս ս͞բ հօրն Փրանչիսկոսի․ թէ կայր վշտացեալ երբեմն ցաւօք աչացն այնչափ․ մինչեւ ոչ կարէր հնջել աւուրս բազումս, եւ ՚ի վ͞ր այսր ա͞մ յաւէլ եւ դեւն նեղել զնա․ քանզի լնոյր զխուց ն͞ր մկամբք, զի նոքօք ծանրացուսցէ զհանգիստ ն͞ր։ Իսկ երանելին սքանչելի համբերութ͞բ տարեալ ա͞մ, գոհութիւն մատուցանէր ա͞յ յղ͞գս հայրախնամ ձեռացն եւ գորովական գթոյն, որով տանջէր զնա, եւ ասէր․ տ͞ր ա͞ծ իմ Յ͞ս Ք͞ս, արժանի եմ եղկելիս եւեւս դժնդակագոյն տանջանաց քան զայսոսիկ՝ զոր կրեմ․ բայց խնդրեմ ՚ի քէն տ͞ր, տուր ինձ զայս շնորհ, զի մի՛ նեղութիւնք հեռացուսցուցեն զանձն իմ 'ի քէն ։ Եւ՛ մինչդեռ զայն զմտաւ՛ ածէր, լուաւ՛ յաներեւոյթ ձայնէ զայս պատգամ, Փրանչիսկէ․ եթէ բովանդակ երկիր լինէր առ հասարակ ոսկի ընտիր եւ մաքուր, եւ գետք հոսէին զբալասան, եւ լերինք եւ բլուրք լինէին կարկեհան, եւ բիւրեղ, ո՛չ ապաքէն երեւէին քեզ այսոքիկ գանձք մեծամեծք, այլ ծանի՛ր, զի համեմատեալ այս ա̃մ երկնային գանձուցն է ո՜չ կաւ առ ոսկին․ ո՜չ ջուր առ բալասան, եւ ո՜չ հող երկրի առ ակն պատուա՛կան․ եւ ահա այսպիսի գանձ ամենահարուստ տացի 'ի վարձ տկարուե̃ քում, եթէ բարձցես զայն յօժարութ̃ սրտի ։ Ուստի յիրա՛ւունս արժան է համարիլ զձայն աղաղակի գոչման երանելւոյն Փուղգենտիոսի, որ իբրեւ եմուտ 'ի հռոմ, եւ ետես վասն տօնախմբուե̃ իրիք զքաղաքն ողջոյն զարդարեալ 'ի զարդս պայծառագեղս․ 'ի մեծուի̃ս ճոխուե̃ց, 'ի պաճուճանս ապարանից, եւ հոյակապ տաճարաց, եւ 'ի սքանչելատեսիլ յօրինուա՛ծս արուեստաւո՛րաց․ ասէ, ո՛վ որչափ արդեօք գեղեցիկ եւ մեծ է լինելոց վերինն երուսաղէմ, եթէ այսչափ չքնաղ է երկրայինն հռոմ ։

5․ Ահա այսպիսի անհամեմատ գանձուց մեծութե̃ եղիցին սր̃բք ժառանգորդք եւ տեարք․ եւ ոչ միայն տեարք, այլև Թագաւորք , և ժառանգեցին իւրաքանչիւրքն զարքայութին զբովանդակ . զի ոչ արեգակն ջերմացուցանելով առ հասարակ զամ ոք , ոչ պակաս ջերմացուցանէ զիւրաքանչիւր ոք 'ի մասնաւորի . այսպէս և արքայութին ժառանգեսցի բովանդակ 'ի յամ սրբոց առ հասարակ . և բովանդակն 'յիւրաքանչիւրոց 'ի մասնաւորի : Իսկ արդիւնք գործոց երկնային գանձուց են յոյժ մեծ և պատուական քան զերկրայինս . և զանազանս : Քանզի՝ ասա՛ ցիս . յի՞նչ պէտս են մեծութիք երկրի . ո՞չ ապաքէն առ'ի ունիլ նոքօք զիշխանութն զհեշտութն , և զպատիւ . այլ զամ զայսպիսիս ոչ կարէ ստանալ բովանդակ ոսկի աշխս : Զի ահաւասիկ երկնաւոր տրուն , հեշտութին և պատիւ բարձեալ բերեն յանձինս զբիւր ոսկարս իս զանարգութիս . և զատապանաւիկ երկնայինքն ազատք են 'ի խացանէ : Վսէ ասաց ծաղրածու ոմն ճարտարամիտ ցփիլիպպոս . ե . արքայն սպանիոյ , զի՞նչ կարող էիր առնել . եթէ այնմ , զոր վեհափառ տրուեդ հրամայէ , ոչ ոք հնազանդեսցի : Որով ցուցանէր նմա . թէ տրուե նր կախի 'ի կամաց այլոց :

6. Բայց տրուե արդարոց ոչ կախի 'ի մարդկեղէն կամաց , այլ այնչափ զօրաւոր է ըս սրյն Անսելմոսի , մինչ-

զի ոչ ոք կարէ հակառակիլ այնմ · ուստի թէ կամեսցի փոխել զլեառն ինչ 'ի տեղւոջէ յայլ իմն տեղի · արասցէ զայն այնպիսի հեշտեաւ , որպ̂ մեք փոփոխեմք և շրջշրջեմք զարտեւանունս աչաց մերոց ։ Իսկ պատիւ̂ փառաց արդարոյն է այնչափ , մինչզի և դեք զլխովին սարսեսցին 'ի նմանէ, և պատուեսցեն զնա հանապազ ։ Եւ̂ ևս հեշտութի̃ արդարոց անխառն է 'ի պակասութե̃ց , և 'ի տառապանաց ։ Եւ̂ որ սքանչելին է քան զամ̃, զի պատիւ̂, օգուտ , և հեշտութե̃ կենցաղոյս հազի̂ հազ կարեն միաբանիլ 'ի միասին աստ 'ի յերկրի · այլ յաւէտ հակառակին միմեանց · զի ահա դեղք առողջարարք դառնիք են , և հեշտութ̃իք ամուսնկ̃նք ամաչելիք են, և պատիւ̂ն դժուարաւ̂ միաբանի ը̃ օգտակարս ։ Իսկ 'ի վերինն եդեմ մեծութի̃ անանց գանձուցն ը̃ հակառակս անցականաց բովանդակեալ գումարին 'ի միում , և առնեն, զի իցէ պատուելի այն , որ հեշտացուցանէն, և հեշտութի̃ն ընծայեսցէ զպատիւ̂ , և պատիւ̂ն զօգուտ ։

* * *

ԳԼՈՒԽ. Դ:

Յաղագս Վճռութէ յաւէտենական ուրախութեանց:

Գլխաւոր ուրախութին արդարոց է ժառանգել զած: Զի զոր օրինակ ասացաք 'ի վերադոյնդ. թէ օգտակարն, հեշտալին, և պատուելին միաբանեալ գտանին 'ի յարքայութե. նոյնպէս և հոգիք արդարոց անդ միայն ունին անբաժան և անքակ զերիս օժիտս էականս երջանկութե այնր կենաց, որք համեմատին երրեակ բարեացն, զորս ասացաք: Եւ կոչին սոքա յածաբանից, տեսութի. ըմբռնումն. և զմայլումն: Զի առաջինն է ամենապայծառ տեսութին այ. որով վարձատրին արդիւնք գործոց արդարոյն. և է պատիւ ինչ անհամեմատ և անբաղդատ. յորժամ տեսանէ, զի պսակին գործք բարեաց և առաքինութեց իւրոց առաջի այ հրեշտակաց վարձուք, որ գեր 'ի վերոյ է քան զամ ինչ. զի է այ: Երկրորդն է ժառանգութին, որով ստանայ հոգին զած իբրև զգանձ, և զժառանգութի սեփհական։ Երրորդն է անճառելի խնդութիւն, որ զուգեալ և միաւորեալ է ը՟ տեսութե և ժառանգութեանն։

2. Արդ վայելումն, կ՟մ ուրախութիւն որով երջանկարար տեսութիւն այն յափշտակէ զհոգին, այնպէս լնու, և ընկղմէ. և պատարուն գործէ, զնա մինչև յորդեալ զեղանիլն 'ի հոգւոյն օժխոք անհնարապայծառ և գերահրաշք 'ի մարմինն։ Ո՞վ թէ առաջի լինէր աչաց մահկանացուացս մարմին ինչ արդարոյ պարգևօք փառացն, զոր ունի, և տեսանէաք զամենահրաշ գեղեցկութի ն՟ր, և զհոտն առնուաք զանուշահոտութե ն՟ր քաղցր քան զա՟մ անուշունս, և յայնժամ իմաստասիրել զօրէաք փոքր'ի շատէ, թէ ո՛րչափ ապա անճառելի և անբաւ՛ է լինելոց լոյսն, և ուրախութիւն հոգւոյնորին, որ այնչափ զարդարէ զմարմինն։ Զի ոչ ինչ է յծ՟լի, որ ոչ հառաչեսցէ առ կատարելութի իւր, և որչափ մեծ է կատարելութիւն. այնչափ մեծ է և ուրախութիւն 'ի ստանալն զայն։ Իսկ ոչ գտանի մեծագոյն ինչ կատարելութի քան զայն։ Եւ՛ ահա գերածաւալ առատաձեռնութի նորին հաղորդս առնէ անչափ կատարելութեց զհրեշտակս, և զհոգիս արդարոց գեր'ի վերոյ քան զպայման բնութե նց՟։ Ո՜վ մեծ և անհաս է ու-

րախութիւն արդարոց: Եւ դր՟ձլ որչափ միանգամ հեշտալին է՟ կարողութե՟. այնչափ մեծագոյն է հեշտութիւնն: Իսկ ինձ, որ է առարկայ իմոյ հեշտալի դեր ք՟ զա՟մ հեշտալիս, միանգամ, եւ ոգեխառնի՛ յերանութե՟ անդ է՟ հոգւոց արդարոց ներքսագոյն ի՟մ դիրկ ընդ խառն լինելով. վ՟ն այնորիկ ուրախութիւն որ բղխեալ յորդի անտուստ՝ անցանէ զանցանէ անչափապէս քան զա՟մ իմս:

3. Ուստի հայեա՛ց, թէ զի՞արդ մեծ եղիցի վայելումն յանքաւ գեղեցկութե՟ անդ հաստչին բոլորեցունց՝ դոյզ է՟ անչափ կատարելութե՟ նորուն: Զի թէ ծառայելն յակոբայ վասն չորեքտասան 'ի տան լաբանայ՝ սակաւ ինչ երեւեցաւ՛ վ՟ն գեղեցկութե՟ն հռաքելայ, ո՞ր վիշտ աշխատութեց երեւելոց է մեզ մեծ ինչ յղ՟ս մերձենալոյ նոքօք 'ի վայելումն ի՟յ. առ որոյ համեմատութե՟ն աղեղ են իմ գեղեցիկք, որք ոչ են ինձ: Գեղեցիկք էին յոյժ աբեսաղօմ եւ ադոնիայ որդիք դաւթի, եւ տեսանելն զն՟ս անդամ զմայլէր զմարդիկ: բայց եկ տե՛ս դու ինձ, զի թէ յայնժամ մինչ հայէաքն յաբեսաղօմ, եկեալ կայցէր մեր առաջի այլ ոմն տասնապատիկ գեղեցիկ քան զնա, ո՞չ ապաքէն նոյն հետայն թողեալ զառաջինն, հայէաք յերկրորդն: Ապա թէ այլ ոք հարիւրապատիկ գեղեցիկ ք՟ զերկրորդն

երևեցիւր մեզ. Թողուաք վաղվաղակի զառաջինն և զերկրդն, և հայէաք յերրորդն: Իսկ թէ յայտնեցիւր և այլ ումն հազարապատիկ գեղեցիկ քան զերրորդն, արդարև լքեալ զայլսն 'ի նա անթարթափ պշուցեալ հայէաք:

4. Այդ՝ եթէ ա̃ծ է անչափապէս գեղեցիկ քան զամ̃ գեղեցիկս, զոր միտք մարդոյ խորհել կարէ, և զի յարակցին գեղեցկուե̃ նր̃ և այլք առատութի̃ք նորին. պ̃ իմաստութի̃, ամե̃նակար զօրութի̃, արքութի̃, առատաձեռնութի̃, բարութի̃, և այլ անթի՛ւք և անհամարք: Ո՛վ է, որ 'ի տեսանելն զնա ոչ զուարճացեալ ցնծասցէ անճառելի. անմեկնելի, և անչափ բորբոքմամբ սիրոյ քաղցրութե̃:

5. Տե՛ս, թէ զիարդ ուրախացեալ բերկրի նա, որ գտցի յիմիք թէատրոնի, կա՛մ 'ի դաշտի, ուր եօթանեքին հրաշալիքն, որք եղեն յ̃ծի, ցուցցին նմա: Ե՞ւ կա՛մ թէ տեսցէ զխրախճանն արտաշէսի արքային, և այլոց թագաւորացն պարսից, և համարձակ ճաշակեսցէ 'ի նոցանէ: Ե՞ւ կա՛մ մեծափառ և սքանչելի տեսիլք խաղուց և խնջոյից. զորս արարին հռովմայեցիք, առ նմա կատարեսցին: Ե՞ւ կա՛մ նուագ քաղցրաձայն երգոց, և բուրմունք անուշահոտութե̃ց, և գանձք ամենաճոխք, զորս ստացան կրեսոս, և դա_

ւիթ

ւիլթ , և այլ կայսերք ասորեստանեայց, և հռովմայեցւոց , նմա շնորհեցին : Ո՞վ ոչ համարէր զանձն երջանիկ և երանելի , թէ յաներկբայս լինէր զամս հարիւր վայելել՝ի ստացուածս այսքան բարեաց : Իսկ թէ յաւելեալ լինէր ՝ի վերայ · եղանիլ իմաստուն քան զսաղոմոն , և քան զարիստոտէլ · հզօր քան ըզ սամփսոն · քաղցրաբան քան զկիկերոնէս , և քան զարիստոմենէս : Եթէ գեղեցիկ քան զաբեսաղոմ , և քան զպարիդէս : անպատմելի լինէր արդեօք բերկրութեան հոգւոյ նորին :

6. Եթէ սակայն այս ամենայն է ոչինչ , և իբրու դիրտ առ ոսկւով , և առ պատուական ակամբ համեմատեալ ընդ տեսութեան Աստուծոյ , զոր վայելեն արդարք , զի ՝ի նմա զանձեալ ամբարին ամենայն բարիք և մեծութիւնք արարածոց . և գտանին անդ գերազանցօրէն հարստութիւն ոսկւոյ , գեղեցկութիւն ծաղկանց · անուշութիւն կերակրոց · ճառագայթ արեգական · ընդարձակութիւն երկնից · քաղցրութիւն հովանեաց : և ախորժակք ամենայն զգայութեանց · և բովանդակ հրաշալեաց, և ուրախութեանց , որք գտանին յաշխարհի · Եւ յաւելեալ բարդի նա և այս , զի անճառելի վայելումն այն տեսութեան Աստուծոյ բաց ՝ի լինելոյն անչափ , է և անթիւ , և անհամար : Վասն զի բազմանայ ընդ բազմութեան հոգւոց սրբոց տեսանողաց

զԱստուած

զա՟ծ ։ Քանզի իւրաքանչիւրն ընդունին զժամանա՟ւոր ուրախութի՟ իւրեանց անտի, որով տեսանեն իւրաքանչիւրքն զա՟ծ ։ Ե՞ւ զի գրեթէ անհամարք են մե՟ք և արդարք, նոյն օրինակ անհամար եղիցին և ուրախութե՟ք իւրաքանչիւրոցն։

7. Աղէ՞ ուրախասցուք և մեք քրիստոնեայքս տեսեալ՝ եթէ առ այսչափ մեծամեծ բարութիս սահմանեալ կարգեցաք առ յա՟յ ։ Ցնծասցուք, զի մ՟ի մեր արար ա՟ծ զարքայութիւն երկնից, և յոյս մեծամեծ ուրախութե՟ցս հալածեսցէ 'ի սրտից մերոց զա՟մ դառնութ՟ տրտմութե՟ ։ Պատմէ պաւղոս վ՟ս ս՟բ հօրն ապօղոնի, թէ յորժամ տեսանէր զմի ոք 'ի միայնակեցաց իւրոց տրտմեալ, վաղվաղակի յանդիմանէր զնա ասելով· զիմ՞րդ մարթի տրտմութե՟ ունիլ 'ի մեզ զատեղի եղբայր, որովհետև խոստացաւ մեզ ք՟ս զերանութ՟ փառաց ։ վշտասցին, և տրտմեսցին ն՟ք, որք չունին յոյս գնալ անդր 'ի յերկինս· և ոչ բնաւ՞ մեք ։ Մարգարէն եղիա, յորժամ էառ զճաշակ իմ՟ն երկնային ուրախութե՟ց, վաղվաղակի ծածկեաց մաշկեկաւ՞ն զաչսն, զականջսն, և զբովանդակ երեսս իւր ։ Սոյնպէս և հայրն սիլովանէ յորժամ յառնէր յաղօթիցն, ծածկէր զաչսն, զի մի՛ տեսցէ զմեծութ՟ կենցաղականացս, համարելով զն՟ս ոչ միայն անարժան աստացէ՟ լինելոյ, այլ-

և տեսութեան անդամ. զի ոչ ինչ են և զաղիրք յորժամ բաղդատին ը̃ երկնաւորաց. յուսով որոց միայն զուարճանալոց եմք։

ԳԼՈՒԽ. Ե։

Յղ̃գս Գերազանցութե̃, և կատարելութե̃ մարմնոց սրբոց 'ի կեանսն յաւիտենից։

Եթէ արքայն Հերովդէս յաւուր մեծի փառաց իւրոց ըզգեցեալ զհանդերձս ոսկէճամուկս նկարեալս սքանչելի ասղնեգործութ̃, համարեցաւ իբրև ա̃ծ մի̃ դուզնաքեայ շողշողմանց այնց հանդերձից, որոց առ 'ի շողշողելն պէտք էին լուսոյ արեգական. ապա զի՞նչ համարեսցի արդարն անդ 'ի յերկինս, որ ոչ եթէ զգեցեալ է հանդերձս ոսկէնկարս, կամ զարևն, այլ նոյն ինքն մարմին նո̃ ճառագայթեսցէ առաւելապատիկ քան զարև։ Եւ դրձ̃լ եթէ աստ յերկրի 'ի միջի թշուառ համարի մեծ իմն զարդ պաճուճանաց, թէ ոք ունիցի զմատանի ինչ անդամանդեայ. կամ զյահուանդ ինչ ականակապ. յորում կարկեհան ակունք ճառաղայթարձակ փայլփայլեսցին . ասա զինչ եղիցի ունիլն զձեռսն, և զոտսն, և զբովանդակ անդամսն մարմնոյն առաւել պայծառ, և լուսաճաճանչ քան զակունս պատուականս : և այն՝ թէ չէ լինելոց այս պատահական ինչ . կա՛մ դնածոյ, կա՛մ պարգևեալ, և կա՛մ անբնական, այլ սեփհական լինի մարմնոց մերոց :

2. Եւ՛ տես զայլ . թէ որպիսի մեծ երջանկութիւն իցէ ոչ ունիլ պէտս լուսոյ արեգական կենցաղոյս, զորմէ դրեթէ կախեալ կայ կեանք Ձեր : Իսկ արդարք են այսպիսիք . զի չիք վ՟ն խաւար գիշերոյ, այլ անձամբ անձին են տիւ լուսապայծառ, և ճառագայթեն եօթնպատիկ քան զարև, և ոչինչ է առ նո՟ համեմատութիւն լոյս անհամար մեծամեծ զամբարաց լուցելոց յիմ մարդկանէ Ծի յաշխարհամար ժողովի տեղ իւրեանց յուղարկաւորութի նոցին : Ահաւանիկ առաքեալն պօղոս 'ի տեսանելն զՔ՟ս միայն պարգևօք պայծառութեան առ ճանապարհաւն դամասկոսի . անկաւ յերկիր կիսամահ, և զարհուրեալ : Եւ՛ աւետարանիչն Յօհաննէս միայն տեսեալ զլուսապայծառ դէմսն նո՟ր 'ի տեսլեան իւրում, եղև իբրև զմեռեալ, զի ոչ համդուրժէ մարմին եղծանելի բառնալ զայնչափ լուսոյն զգերազանցութ՟ն:

իսկ առաքելոյն պետրոսի երև եւս զպայծառութիւն տն̃ յայլակերպութեան նորին դեռևս 'ի մահկանացու մարմնի, համարեցաւ այնչափ շքեղ զայն վայր լերինն, մինչև չկամէր ևս մեկնիլ անտի։ Բայց եթէ ոչ երևեցի ումեք զարմանալի ինչ այս պարզև պայծառութե̃ 'ի Ք̃ս․ ահաւանիկ և պայծառութիւն լուսոյ երեսացն մովսէսի, որ էր լոկ մարդ դեռևս յեղծանելի մարմնի, էր այնչափ սաստիկ, մինչև ոչ կարէին որդիքն իէլի հայիլ յերեսն նր̃։

3․ Պատմէ կեսարիոս զգիտնական և զմ̃էյ վարդապետէ միոջէ բովանդակ երկրին փարիզու, թէ յորժամ մերձ էր 'ի մեռանիլ․ սկսաւ խոկալ, եթէ զիարդ մարմին իւր կաւեղէն պայծառանալոց է իբրև զարեգակն առ յ̃յ։ Իսկ ած̃ առ 'ի մխիթարել զնա, և հաստատել 'ի հաւատս յարութե̃՝ արար նմա զայս պարգև, զի յոտից նր̃ սկսան ճառագայթել այնչափ պայծառութիւնք լուսոյ․ մինչև ոչ կարէր հայիլ 'ի նմ̃, և չհանդուրժէր այնչափ լուսոյն։ Եւ այս տեսիլ մեծ սքանչելեաց՝ որ պատահեցաւ ոմանց սր̃ց 'ի մահկանացու մարմնի․ եղև ևս մեծագոյն 'ի մեռեալ մարմինս ոմանց 'ի նոցանէ, որպ̃ այն, որ պատահեցաւ մարմնոյ սրբուհւոյն մարգարիտայ դստեր թագաւորին մաճառաց, յորմէ հատանէին այնպիսի սքանչելահրաշ ճառագայթք լուսոյ, մինչև թուէր բազմաց, եթէ յարքայութեան անդ իցեն։ Սոյն այս փառք մարմնոյ պատահեցաւ և այլոց ոմանց։ Արդ եթէ յանշունչ մարմնի եղև այսչափ գեղեցիկ այս տեսիլ լուսոյ փառաց, ապա ո՛րչափ գեղեցկութիւն և շքեղութիւն երևեսցի անդ 'ի յերկինս 'ի մարմինս ոմանց, յարուցեալս, կատարեալս, և կենդանացեալս փառաւորեալ Հոգւով, և անզրաւ կենօք։ Ո՛րչափ և ո՛րպիսի եղիցի պայծառութիւն արքայութեան լուսաւորեալ յայնչափ լուսաւորաց, կամ լաւ ևս ասացից յայնչափ անթիւ արեգականց։ Եւ եթէ տեսութիւն իւրաքանչիւրոցն ածի մեծապէս ուրախութիւն, ապա տեսութիւն անհամար բազմութեան զիարդ յորդեսցի անչափապէս ցնծութիւն, որ ծագի 'ի գեղեցիկ տեսարանէ անտի.

Յօդուած Ը։

Արդ զոր օրինակ պայծառագոյն արդարքն լուսով, այսպէս և ժառանգեսցեն զհանգամանս լուսոյ, զի որպէս լոյսն չունի ընդդիմակ ինչ, և է անկիրք, և անապական, սոյնպէս և փառաւորեալ մարմինք նոցա եղիցին անկիրք, և անապական, և ոչ ինչ ընդդէմ դարձցի նմ՟: Եւ դրձլ՟ ում՟ չիք քան զլոյսն երագընթաց ինչ, կմ՟ թեւթեւ, և սրաթռիչ, ոպ՟ է ոտսանել 'ի մարմինս լուսաւորս, և պայծառս, զոր օրինակ 'ի հուրն. իսկ արեգակն և աստեղք, որք առաւել լուսաւորք են, արագընթաց ևս են քան զամ՟ մարմնականս, այլ ինքն այնչափ սրաթռիչ և երագընթաց է, մինչ զի 'ի միում վայրկենի ախուի առ հասարակ ը՟ բովանդակ տիեզերս: Այսպէս և փառաւորեալ մարմինք սրբոց եղիցին թեթեւք, և սրաթռիչք յոյժ. և արագ քան զաստեղս շարժեսցին, և դիմեսցեն, ուր ախորժեն: Դրձլ ոպ՟ լոյսն նրբութ՟ իւրով անցանէ ը՟ ամ՟ դիմակայս, թէպէտև պնդակազմ մարմինք իցեն ը՟դիմակ նմ՟: Նոյնպ՟ յոյժ առաւել քան զլոյսն եղիցին նուրբ մարմինք սրբ՟ց, և անցցեն, և թափանցանց եղ՟ին նրբութ՟ ը՟ ամ՟ մարմին, և ոչ ինչ դիմակայ լիցի նմ՟:

2. Այսոքիկ պարգեւք, կամ օժիտք փառաւորեալ մարմնոյ արդարոց, մերժեսցեն, և բացէ 'ի բաց հալածեսցեն զամ՟ չարիս կենցաղոյս, վ՟զի միայն պարգեւն այն անչարչարելութ՟ բառնայ 'ի միջոյ զամ՟ թշուառութիս, որք նեղեն զմեզ յաստիս. զի 'ի բաց վանէ զցրտութ՟ ձմերայնոյ, և զտապ ամառայնոյ. զաշխատութիս հոգւոյ, ը՟

ցաւս մարմնոյ , զարտօսր աչաց · և զամենայն կարիս կենցաղոյս : Ահաւա՛սիկ քեզ անհամեմատ փառք , և բարութիւն անաշխատ և անխռով · վասն միայն զերծելոյն զմեզ 'ի կարեաց ուտելոյ · բառնալ 'ի միջոյ զբիւր տաժանմունս զբազմանց · և սնոտի հոգոց : Եւ՛ դու 'ի մէտ ած · եթէ որչափ տառապէին մարդիկ 'ի խնդիր կերակրոց վասն պահպանութեան կենաց : զի աւա՛նիկ մշակք գործեն զերկիր , սերմանեն · հնձեն , և յայլ բիւր աշխատութիւնս տառապին : Հովի՛ւք դողան 'ի ցրտոյ · և կիզին 'ի տօթոյ : Ծառայք և ընդանիք ճնշին , և հպատակին կամաց այլոց · և մեծատունք մտայոյզ լինին , և յերկիւղէ չարեաց սարսափին : Տեսանե՞ս եթէ յորչափ վտանգս մատնի ամենայն մարդ 'ի ստանալ զկերակուր : Եւ՛ ահա 'ի բնաւի՛ց աստի ազատ է արդարն պարգևօք անչարչարելութեան : Դարձեալ հոգք զգենլոյ , և հիւա՛նդութիւնք մարմնոյ յոյժ նեղեն զմարդիկ : Իսկ որ անչարչարելի և անկիրք է , ոչ միայն ազատ է 'ի բնաւի՛ց աստի , այլ թէպէտ և մտցէ 'ի դժոխս · սակայն և ոչ հեր մի 'ի գլխոյ նորա վտանգեսցի 'ի հրոյ անտի:

3· Այսպէս և պարգևն թեթևութիւն կամ երագընթացութիւն է յոյժ մեծագոյն : Զի ահա տեսանեմք , թէ յոր վտանգս մատնի ոք 'ի ստիպել հարժէ:

կին առնել զընդերկար ճպհ։ Զիարդ լքանի, և վաստակի բազում անգամ ՚ի ճպհին։ Զիարդ պէտս ունի պաշտպանութե ըդդէմ պատահարաց չարաց։ Զիարդ վտանգի ՚ի խորաց, ՚ի ձորոց և ՚ի գետոց։ Ե՞ւ յորչափ իջևանս դադարեցուցէ, մինչև հասցէ ՚ի տեղին զոր դիտէ։ Բայց արդարն պարգևօք թեթևութե յակումն թօթափելն դնայ ուր և կամի. և երկարագնաց ճպհքն բևրաւոր մղոնից այնպ հեշտեաւ կատարին ՚ի նմանէ, որպ քայլ մի ոտին։ Ահաւանիկ հիացեալ սքանչանամք ը՟դ երիցս երանեալ ս՟ր հայր անտոն պատուացին, թէ զիարդ ՚ի սակաւ ժամուն գնաց յիտալիոյ ՚ի լիւսիտանիայ, ՚ի փրկել զհայրն ՚ի դատապարտուէ անտի առ՚ի մահ։ Սոյնպէս սքանչանամք և ը՟դ ս՟ր հայրն մեր իգնատիոս, թէ զիարդ ՚ի մէջ երկուց ժամուց ևեթ գտաւ ՚ի հռոմ, և ՚ի կողոնիայ գերմանացւոց, և անտի վերստին ՚ի հռոմ։

4. Տե՛ս դու ինձ, թէ որպիսի մեծ երջանկութե համարեալ լինի առ մարդիկ, թէ կարող իցէ ոք ՚ի միում ժամու տեսանել զամ սքանչելի մեծութիւ հռոմայ։ Ե՞ւ անտի փոխիլ վաղվաղակի սրաթռիչ ընթացիւք յայլ միւս ժամու ՚ի կոստանդնուպօլիս ՚ի զննին տեսլեան իշխանութեն արևելեայց։ Անտի ՚ի միում ժամու փոխիլ ՚ի քաղաքս

եգիպտացւոց : Անտի յայլում ժամու 'ի կովայ յարքունիս Հնդկաց 'ի տեսանել զգանձս նր̄ : Անտի յայլում ժամու 'ի Պեկին մայրաքաղաք թագաւորացն չինէացւոց 'ի տեսանել զընդարձակութի սահմանացն նր̄ : Անտի յայլում ժամու փոխիլ 'ի Մէակով քաղաք Հանդիսից կղզւոյն յափոնայ որ է յաւարտ սահմանացն ասիոյ : Անտի յայլում ժամու 'ի մանիլայ կղզին փիլիպեան : Անտի յայլում պահու 'ի տերնատէ կղզի , որ է մի 'ի մոլուքայ կղզեացն Հնդկաց : Անտի յայլում ժամու փոխիլ 'ի լիմա մեծագանձ քաղաք Պերուացւոց , որ է յամերիկայ : Անտի 'ի մեքսիկով նորոյն սպանիոյ որ յամերիկայ : Անտի 'ի լիսբոնայ քաղաք լուսիտանացւոց : Եւ անտի 'ի մադրիտ մայրաքաղաք սպանիոյ տեսանելով և վայելելով արագապէս զնմ̄ բարիս , և զհրաշալիս որք յիւրոքանչիւր համածաւալ թագաւորութեան գտանին:

5. Արդ եթէ այս երեւի մեզ սքանչելի իմն ազատութի . ապա որչափ հիանալի և սքանչելի է արդեւն այն թեթեւութի , կմ̄ երագընթացութի փառաւորեալ մարմնոյ , որք յական թօթափելն վայրաբերին յարքայութէ յերկիր , պատին զերկրաւ , ձգին զարեգակամբ , և շրջին զհաստատութե , և նկատեն զաստեղս , և զորս են յար-

քայուէն երկնից : Պատմէ երանելին գրիգորիոս 'ի տրամաբանութիս իւր , թէ զօրական ոմն ամբարիշտ յարձակեալ 'ի վր̃ առն միոյ սր̃յ 'ի սպանանել , իբրև վերացուցեալ զսուրն 'ի յօդս կամէր հարկանել զնա , աղաղակեաց այրն ա̃յ , և ասէ ; հա՛ս ինձ յօգնութի̃ սր̃ Յօհաննէս , և կա՛լ զձեռն զօրականիս . և նոյնժամայն սր̃ն Յօհաննէս անշարժ կալաւ զձեռսն զօրականին : Տե՛ս եթէ որպիսի երագութ̃ լուաւ սր̃ն Յօհաննէս երկնից նմա , որ կարդայրն զնա 'ի յերկրի աստ : Որպիսի սրաթռիչ ընթացիւք էջ երկնից նմա յօգնութե̃ , կալեալ զձեռսն զօրականին յայնչափ սուղ ժամանակի : Եւ՛ դիտեա ինձ . զի ոչ ունիցին կնուաղ երագութ̃ փառաւորեալ մարմինք սր̃ց ք̃ զայն , զոր այժմէն ունին հոգիք անմարմինք: Սքանչելի իմն երևի մեզ թէ զիարդ սր̃ նահատակքն մա՛րոս , և կուիրինոս , և սր̃ հայրն Փրանչիսկոս պաւլայեցին առանց նաւուց և լաստից գնացին 'ի վր̃ ջուրց ծովու և գետոց:

6. Բայց դու տե՛ս զսր̃ն փառաւորեալս մարմնով . թէ զիարդ քայլեալ 'ի վր̃ ջուրցն ովկիանոսի , անցանեն , զայն ծով ահագին : Զիարդ վերացեալ սլանան ը̃ օդս : Եւ՛ զիարդ անցանեն անվնաս ընդ հուր և ընդ սուր: Պատմեն յղ̃ս սր̃յ հօրն Փրանչիսկոսի

սաիախտացելոյն · թէ յափշտակեալ միայն ընդ օդս զօրութ՟բ տեսութ՟ն մնաց ։ Եւ՛ վ՟ս հօրն դեկոսի մարտինեան առն ս՟րյ և առաքելաշնորհ քարոզչի ընկերուն մերոյ պատմեն, թէ յաղօթելն իւրում յափշտակեցաւ ընդ օդս 'ի վերոյ ք՟ զծառս, և ք՟ զաշտարակս բարձրացեալս։ Արդ եթէ արար ա՟ծ զայսպիսի մեծ պարգևս ծառայից իւրոց 'ի վայրս արտասուա՛ց, զի՞նչ ոչ արասցէ քաղաքացւոցն երկնից ։

7. Արդ պարգևի թեթևութե՟ն ս՟րց զուգեսցի և պարգևն նրբութե՟ն։ Քանզի անցցեն, և թափանցանց ելցեն ընդ ամրակուռ լերինս առանց հեշտեա՛ն, քան զնետն ընդ դիւրանցիկ և ընդ դիւրաանց օդս · զի ա՟մ տեղի լիցի նց՟ անարգել ճեմարան ։ Պատմէ Սիմէոն Մետափրաստէս, թէ զօրական ոմն յազգէ գթաց 'ի քաղաքն Եդեսիայ 'ի պարսպապահ զօրաց անտի հարաւ՛ 'ի սէր օրիորդի միոջ · և խնդրեաց զնա իւր 'ի կնութե՟ · իսկ հայր և մայր աղջկանն չանսային բանից օտարոտի բարբարոսին · և ասէին, զիարդ զդուստր մեր առեալ տարցի յ՟ հեռի, ուր թէ տառապեցուսցէ զնա, ոչ ոքէ՝ որ համոզէ 'ի մէջ երկոցունց։ Բայց զօրականն այնչափ թախանձեաց զնո՟ մեծամեծ ինչ խոստանալով, մինչև հաւանեցան տալ նմա զդուստրն

իւրեանց ։ Այլ մայր աղջկանն կասկածելով ՚ի չարեացն, ոչ կամեցաւ յանձն առնել նմա զդուստրն • մինչև զօրականն մտեալ նոքօք հանդերձ ՚ի տաճար սբ՟ մարտիրոսացն սամոնայ, աբիբայ, և ղուրեայ երդուաւ առաջի ամենեցուն ոչ նեղել ամենևին զդուստրն նր՟, այլ պահել ՚ի գրգանս փափկութե՟ ։ Եւ արարեալ զերդումն, էառ զնա ՚ի կնութի՟ ։ Եւ ապա յետ աւուրց ինչ եած զնա յաշխ՟ իւր ՚ի գութս • ուր յառաջագոյն էր ամուսնացեալ ընդ այլում, և տակաւին կենդանի էր առաջին ամուսինն ։ Արդ առ ՚ի ծածկել զառաջին ապիրատութե՟ իւր այլ իմն նորոգ, և գազանային ապիրատութբ՟ փորեաց զերկիր, և կենդանւոյն թաղեաց զէգ ամուսինն, զոր եած յեդեսիոյ ։ Անդ ողորմելի օրիորդն հարեալ յարտասուս, սկսաւ բողոքել առ սբ՟սն երաշխաւորս իւր վս՟ այնր դժնդակ գործոյն, և խնդրէր զկատարումն բանից երդմանն, զոր արար առաջի նր՟ զօրականն ։ Եւ ահա նոյն ժամայն երևեցան նմա սբ՟քն ՚ի հանդերձս լուսապայծառս, որք արկեալ ՚ի վր՟ նր՟ զքուն թանձրութե՟ ՚ի վայրկեան ժամանակի ածին զնա անվնաս ՚ի հայրենի երկիր իւր, առանց բանալոյ զգերեզմանն • Իսկ վայրենաբարոյ և ապառաւմ զօրականն ոչ գիտելով զեղեալսն, զի համարէր մեռեալ արդ իսկ զօրէորդն , եկն դարձեալ յեդեսիայ · ուր ամբաստանեալ զապիրատուէն , եղև դատապարտեալ առ՚ի մահ։ Արդ եթէ ունին ս՟բք զզօրու՟ն թափանցանց անցուցանելոյ զմարմինս ջերմեռանդից իւրեանց ընդ այլ մարմինս սքանչելապէս · որչափ ապա դիւրա՞ւ ելցեն թափանցանց ինքեանք մարմնով իւրեանց ընդ այլ մարմինս , և ոչ ինչ դիմակալ լիցի ն՟ց։

ԳԼՈՒԽ. Զ։

Յաղ· խնդրելոյ զերկնից արքայութ՟ն , և
նախամեծար առնելոյ զայն քան
զա՟մ կենցաղական բարիս։

ԱՂէ՛ համեմատեսցուք եղբարք զթշուառութ՟ն կենցաղոյս ը՟դ երջանկութեան հանդերձելոյն · զտկարութ՟ն բնու՟եա մերոյ 'ի մահկանացու վայրս ընդ զօրու՟ե և պարգևաց մերոյս բնութ՟ե անդ 'ի կեանս անմահս , որ վ՟ն մեր գանձեալ պահի , ո՟պզի քաջալերեսցուք տանիլ զուզնաքեայ վշտաց կենցաղոյս առ՚ի ստանալ զուրախարար փառս ընդ ա՟ծ յաւիտեանս։ Արքայն կլուրս յորժամ գնաց առնուլ զԹագաւորութիւն մարաց, ժողովեաց զզօրս իւր պարսկական, և հրամայեաց նմ՟ առնուլ տապար 'ի ձեռս, և հատանել զօրն ողջոյն զանտառ ինչ մեծագոյն. և լցան լուծան ամ՟ զօրքն յաւուր յայնմիկ 'ի խստութէ՟ գործոյն: Բայց յետ վճարման գործոյն արար նմ՟ 'ի միւսումն աւուր զխրախճան ինչ մեծահանդէս յոյժ լի ամ՟ բարութ՟, և եհարց ցնս՟ և ասէ, ո՞րն երկուց աւուրց աստի ախորժէք ունել, զերեկեանն, եթէ զսերկեանս: Ե՛ւ նք՟ 'ի մի ձայն բարբառոյ աղաղակեցին և ասեն. զսերկեանն, որ լի է ուրախութ՟ և բարութ՟: Ե՛ւ նա ասէ. ահա այսպէս, եթէ զօրաւջիք ընդդէմ մարաց 'ի մարտ պատերազմի. յետ մարտին վայելեսջիք 'ի բարութ՟ս մեծամեծս: Ե՛ւ նք՟ քաջալերեալք 'ի խոստմանց նր՟, սկսան մարտնչել քաջութ՟: Ուստի այն խստութն՟ հանգստեան բաւական եղև նոցա մտանել զանձինս յամ՟ վտանգս առ'ի ունել զԹագաւորութիւն մարաց:

2. Արդ համեմատեսցուք և մեք զմեծութի՟ արքայութն՟ այ՟ ը՟ փոքրուե՟ գործոյ մերոյ: համեմատեսցուք զբարութս՟ երկնից ը՟ երկրաւորիս. և յայնժամ երևեսցի մեզ հանդիստ ամ՟ վիշտ տառապանաց: Վ՟զի զի՞նչ է անոտի, անարգ, և դուզնաքեայ փառք մեր_

ձա_

ձակայիս առ անանց և անպատում փառօքն, զոր տացէ ա̃ծ արդարոյ 'ի յերկինս · ոչինչ արդարև ընաւին, և անարժան առնելոյ անգամ 'ի բերան ։ Զի՛նչ են անցաւոր մեծութիւնք լի վտանգօք, և զբաղմամբ, և անբաւականք կարեաց նոյն իսկ ստացողաց՝ համեմատեալ առ լիապատար ճոխութ̃ անանց և անկորուստ բարութեան ։ Զինչ են թիւնաբեր հեշտութիւնք կենցաղոյս, ապականիչք առողջութ̃, հիւծիչք մարմնոյ, և համբաւաղերծք առ նոյն դիմողաց՝ առ անչափ խնդութ̃ երկնաւոր փառաց, որ 'ի մի զանգուածս կատարէ զօգտակարն, զախորժելին, և զպատուելին ։ Զի՛նչ են պակասուտ հանգամանք մահկանացու մերոյս մարմնոյ՝ առ մեծագին և առ ամենափառաւոր օժտօք փառաց, զորս ժառանգեսցեն յետ յարութե̃ մարմինք մեր ։

3· 'Ի սկզբանէ քաղաքական պատերազմին գրակքեցւոց ընդ հռովմայեցիս, ովպինոս բդեշխն հրաման ետ քաղաքս կարդալ, թէ որ ոք բերցէ առ իս զգլուխն գայիոսի գրակքեցւոյ, տաց նմա ոսկի ը̃ ծանրութե̃ գլխոյն մատուցելոյ ։ Զայս լուեալ սեպտիմուլէոս զօրականն, բարբոքեալ 'ի սէր զանձուցն ոչ խնայեաց յաշխատութե̃ ինչ, կա̃ 'ի վտանգս, այլ ա̃մ ջանիւ զհետ կրթեալ նմ̃ երեր զգլուխ նր̃, և ժառանգեաց զոսկին ընդ ծանրութեան գլխոյն ։ Աղէ՛ մի՛ լիցուք վեհերոտք , և յետնեալք 'ի յըղձանալն երկնից արքայութեան , քան զայն զօրականն 'ի ստանալ զհող ինչ չիկակարմիր ։ Զի զամենայն զոր առնեմք , և զոր տամք վասն այնորիկ , է իբրև գնել չիւղով յարդի զթագաւորութիւն ինչ համատարած ։ Իսկ ոչ երևեցաւ մեծ ինչ երանելոյն Օգոստինոսի · թէ ոք յանձին բերցէ զամենայն տանջանս գեհենին , միայն թէ մարթասցի ընդ տևող ինչ ժամանակ վայելել 'ի բարութիւնս արքայութեան ։ Քանզի եթէ նկատեսցուք զայն անչափ և անհաս ժառանգութեան մեծութիւն , ոչ երևեսցի մեզ առ նոյն համեմատութիւն խստութիւն ապաշխարութեան սրբոյն Սիմէոնի սիւնակեցւոյն , պահք սրբոյն Ռոմուալդոսի , յետին աղքատութիւն մուրացողութեան սրբոյն Ֆրանչիսկոսի , և ծանակութիւնք սրբոյ Հօրն Իգնատիոսի այնչափ , որպէս թէ ոք 'ի վերառնուցու զչիւղ մի 'ի գետնոյ առ 'ի լինել ինքնակալ կայսր աշխարհի ։

4· Ուստի զօրութիւն խոկմանս ցուցաւ 'ի քնէ աւետարանչին Յօհաննու 'ի չորրեքկերպեան կենդանիս , զորս ետես , որք թէպէտ զանազանք էին ըստ բուոյ բարուց , զի մին էր արծուի , միւս առիւծ , միւս մարդ , և միւս եզն , սակայն ամենեքին ունէին զչորս թևս , միաբան զնային , միաբան զործէին , և միաբան վերանային իբրև զփայլակնս․ Զի որ անկարողն էր 'ի թռչիլ 'ի մէջ նոցա , զո՞ր օրինակ , եզն , միաբանեալ ընդ այլսն , թռչէր իբրև զարծուի ։ Եւ՛ որ ամեհին էր , զո՞ր օրինակ առիւծն․ միաբանեալ ը̅ այլսն, հեզիկ և քաղցրագութ եղեալ էր իբրև զմարդ ։ Այսպէս և թշուառութիք կենցաղոյս , որք մեզ երևին անտանելիք , համեմատեալ երկնային փառաց , լինին քաղցր և ախորժելի ։ Իսկ մարգարէն եզեկիել որ զնոյն չորեքկերպեան կենդանիսն ետես , ասէ ; Եւ՛ Նմանութ․ հաստատութ․ 'ի վ͞ր գլխոյ կենդանեացն ։ Քանզի եթէ ունիցիմք հանապազ 'ի մտի զարքայութիւն երկնից , քաջալերիմք կրել զա͞մ դժնդակս․ և մարդ երկրաւոր հաւասարեսցի հրեշտակաց ։ Գաղանացեալն 'ի վարս և 'ի բարս իւր․ նորոգեսցի ը̅ ուղիղ բանի մարդոյն ։ Հեղգն և ծոյլն իբրև զեզն , թռանիցի չորեքին թևօք ։ Եւ՛ թողցէ լքցէ զերկիր պանդխտութե͞ն , և զբարիս նր̅ զդուզնաքեայս և զանցաւորսն , նա որ յուսայ վայելել յանանց բարիսն ։

* * *

ԳԼՈՒԽ Խ. Է.

Յաղագս յաւիտենիցն չարեաց, և մասնաւորապէս յիշէ մեծի աղքատութեան, անարգութեան, և խայտառակութեան դատապարտելոց։

ՈՉ միայն բարիք կենցաղոյս արհամարհելիք են խոկմամբ երկնային և անանց բարութեանցն, այլև չարիք կենցաղոյս արհամարհելիք են խոկմամբ անվախճան չարեաց գեհենին։ Վասն զի չարիք գեհենին միայն են ճշմարիտ չարիք, և անխառն յամ բարւոյ։ Գրէ Եղիանոս, եթէ 'ի վերջին սահմանս մերոպայ է տեղի ինչ կոչեցեալ անոստոս, որ թարգմանի, վայր անդառնալի. զի էր սահուտ յոյժ. և վիհ խորխորին, ընդ որ սահեալ գնային գետք երկու, մին անուանեալ գետ խնդութեան, և միւսն գետ տրտմութեան։ Զափամբ գետոցս բուսանէին ծառք մեծամեծք պտղալիցք։ Եւ եթէ ոք ուտէր 'ի պտղոյ գետոյն խնդութեան, մոռանայր զամ կիրս չարչարանաց. իսկ որ ուտէր 'ի պտղոյ գետոյն տրտմութեան, դժգայր անմխիթար վիշտս 'ի սրտի, և մինչև ցեւս կենացն ոչ դադարէր 'ի լալոյ, և 'ի ցաւօք տառապելոյ։

2. Այդ զի՞նչ նշանակէին երկոքին գետքս, ոչ այլ ինչ, բայց եթէ մինն զամենաառատ լինելն երջանկութ՟ն, և ուրախութ՟ն, որ ը՟ վկայելոյ դաւթի, յորդեսցի, և ուրախ արասցէ զքաղաքն այ՟, և միւսն զյորդութ՟ն չարեաց և թշուառութ՟եց, որ ողողեալ մոյցէ 'ի բանտ դժոխոց, և լցցէ զնա անվախճան ողբովք և հեծութ՟բ, զղջմանօք, և արտասուօք. ոչ թողլով զյոյս մխիթարութ՟ն։ Եւ յօրինակ այսմ եցոյց տ՟ր մարգարէին երեմիայ երկուս կողովս թզոյ, կողով մի քաղցր թզոյ. և կողով մի ժանտ թզոյ։ Իսկ մարգարէն 'ի խօսիլն զժանտ թզոյն, ոչ շատանայ կոչել զայն թուզ ժանտ, այլ ցուցանէ զառաւելութ՟ն ժանտութ՟են ասելով, թզեանէն թուզ ժանտ, և առաւել ժանտ. որ ոչ ուտիցի 'ի ժանտութ՟է իւրմէ։ (Երեմ. 24. 3.) Վասն զի նշանակ էր թզուցն այն եղկելի կացութ՟ե դատապարտելոց, ուր զուգեալ միացին ամ՟ չարիք անխառն 'ի բարեաց։

3. Այլ մի՛ ոք իցէ, որ զարմասցի ը՟ այս, եթէ զիարդ վա՟ն հեշտութ՟ն միոյ վայրկեան ժամանակի, մատնեսցի մարդն յանմեռելի և յանվախճան տանջանս։ Քանզի եթէ 'ի միտ ածցէ զմեծութ՟ն մահաւչափի մեղաց, կարծեմ, թէ

փոքր դատեայէ զգեհեանն։ Ահաւասիկ երանելին Օգոստինոս ասէր. հեթանոսն, որ ոչ ծանեաւ զա̃ծ, արժանի է միոյ գեհենի. իսկ քրիստոնեայն, որ գիտէ. թէ որդին ա̃յ մարմնացեալ մեռաւ 'ի խաչին յղ̃ս մերոյ նր̃. և սակայն յանդգնեալ գործէ զմեղս, արժանի է կրկին դժոխոց։ Չար է, և յոյժ մեծ չար է մեղքն, զի է անհուն չար, ուստի վայելուչ է պատժիլ անվախճան չարեօք։ Եւ զի է մեծագոյն չար քան զամ̃ չարիս և զթշուառութիս, վա̃ն իրաւացի է, զի մեղաւորն դատապարտեսցի ամ̃ չարեօք պատժոց 'ի միասին խմբելոց։ Քանզի 'ի մեծութէ̃ դեղոյն իմացեալ լինի մեծութի̃ ախտին։ Ա՛ղէ 'ի մի՛տ ած. թէ ո՞րչափ մեծ է ախտն մեղաց, որովհետև 'ի դեղ դարմանոց նր̃ մարմնացաւ, և մեռաւ ա̃ծ։ Ապա քաջայայտ է, զի թէ ա̃ծ է այնպիսի բարի, որ բովանդակէ յինքեան զամ̃ բարիս, ուրեմն և մահուչափ մեղքն, որ անարգէ զնա է այնպիսի չար, որ արժանի է պատժիլ ամ̃ չարեօք և թշուառութք̃։

Յօդուած. է̃։

Արդ տեսցուք, թէ ո՞ր դատանք 'ի դժոխս ամ̃ ազգ տանջանաց

'ի

'ի դերագոյն աստիճանի ։ Մարկոս տուղղիոս , և մեծն ալբերտ ասեն , թէ ութն ազգ տանջանաց և պատժոց գտանին յօրէնս , որք են այսոքիկ . պատիժ վնասու , որով զրկի ոք 'ի բարեաց իւրոց , պատիժ վատահամբաւութե . պատիժ աքսորանաց . պատիժ բանտի . պատիժ գերութե . պատիժ գանից . պատիժ մահու , և պատիժ համեմատ չարիս անօրէնութեն ։ Եւ առ սոսա վերածին ամ պատիժք , զորս 'ի գործ էած արդարութին այ 'ի վս այնոցիկ , որք առ ոտս կոխեցին զողորմութե նր ։

2. Արդ զառաջինն պատիժ վնասուն եղիցի 'ի դժոխս յոյժ խստագոյն և դժնդակ . զի նախ զրկեսցի մեղաւորն յայ ։ Ով որչափ աղքատ , կարօտ , և չքաւոր մնայ , որ կորուսանէ զած յաւիտեան ։ Ահաւանիկ , որ մարդկային օրինօք դատապարտեալ կորուսանէ զստացուածս իւր , կարող է յետ այնորիկ մինչդեռ կենդանի է , շահել վերստին զայնոսիկ գէթ յայլում թագաւորութե , ուր փախուցեալն է . բայց դու տես , եթէ իցէ հնար արդեօք , զի որ կորոյս միանգամ զած , կարող իցէ գտանել վերստին , և կամ փախչիլ 'ի դժոխոց . անկարելի և անհնարին է այսմ լինիլ ։ Եւ զի ած է ծայրագոյն բարի , վն այն և ծայրագոյն

չար է զրկել 'ի նմանէ: Եթէ զի 'ի դըժոխս եղիցի մշտնջենաւորն զրկումն յանհուն բարուոյն այ, վա̃ այնորիկ և պատիժ վնասուն, որով զրկի ոք յանհուն բարուոյն, է մեծագոյն պատիժ քան զա̃մ պատիժս:

3. Արդ եթէ խորտակումն, կա՛մ խախտումն ոսկերաց 'ի տեղւոջէ իւրեանց է ցաւ՛ իմն անտանելի, ապա զի՞նչ եղիցի տարանջատ մնալն բանական ստեղծուածոյն յանդրա՛ւ յա՛ւիտեանս 'ի վախճանէն, վա̃ որոյ ստեղծաւ՛ն: Եթէ այն զի այնչափ մեծ եղիցի այս կորուստ բարեաց. մինչզի և ոչ հետք ինչ յուսոյ մնասցէ 'ի մեղաւո՛րն: Ահաբեկեալ մնամք ը̃ աղքատութե̃ երանելւոյն յոբայ, յորժամ 'ի միտ ածեմք, թէ այր ոմն այնչափ ճոխ և մեծատուն՝ եհաս ժամանեաց 'ի վերջին աղքատութե̃, մինչև հազի՛ւ մնացին նմա կոշտք երկրի առ 'ի զլծարախան քերելոյ. բայց եղկելի դատապարտելոց պակասեսցի և այս որոց չնորհք մեծ էր, եթէ զաղբևս անդամ ունել կարիցէին փոխանակ անկողնոյ. այլ ն̃ք ունիցին փոխանակ անկողնոյ զխանձողս գեհենին վառեալս և փայլակնացայտս, և ոչ ունիցին դոնէ կաթիլ մի ջրոյ առ 'ի շիջուցանելոյ զն̃ա:

4. Տե՛ր, զի խորտկաճաշ մեծատունն որ ըմպէր զգինի ապակի բաժակա՛ւ,

և ուտէր յափսեայս արծաթիս, և զգենոյր բեհեզս և ծիրանիս, զի՞նչ խնդրէ 'ի գեհենի անդ 'ի յետին աղքատուե̄ իւրում 'ի տանջանսն · արդեօք գի՞նի անուշահամ 'ի կրետոյ, ոչ ևս, այլ զկաթիլ մի ջրոյ · և սակայն նաև այն ոչ տուա՞ւ նմա։ մի՞թէ խնդրեա՞ց ոսկի · կամ ապակի պայծառ բաժակաւ ըմպել · ոչ, այլ ծագի՞ մատին ղազարու չարաչար վիրօք խղխայթելոյ։ Այս անցք անցցեն և է̄ մեծատունս Դի, որք յուսան 'ի մեծութիւն իւրեանց։

Ցուցումն · Ը̄։

ՄԻաւորեալ զուգեսցի ընդ աղքատուե̄ս մեծի, և է̄ կորստեանս ամ̄ բարեաց և մեծ իմ̄ վատահամբա՞ւուե̄, և խայտառակ անարգուե̄։ Եւ՞ այնչափ մեծ եղիցի այս, մինչև համարձակեցա՞ւ ասել երանելին ոսկեբերանն, թէպէտ անհանդուրժելի է գեհեանն, և սոսկալի է պատիժ պատուհասից նր̄, սակայն թէ ոք առաջի արկցէ ինձ զբիւր գեհեանս, ոչ ասէ զսոսկալիս, ո՞չ է տարամերժումն այն յերջանկա՞ւէտ փառաց անտի, և լինիլն հրաժեշտ 'ի Քս̄է, և նողկալի 'ի նմանէ, և լսել զբան նր̄, եթէ ոչ գիտեմ զքեզ, և յանդիմանս հարկանել զոչ կերակրելս, և զոչ արբուցանելս իմ զնա, յորժամ տառապեալքն 'ի սովոյ, և 'ի ծարաւոյ:

2. Եւ զայս կարեմք ցուցանել այլու օրինակաւ, այս եթէ թագաւոր ոք մեծազօր ոչ ունիցի զորդի թողուլ նմա զթագաւորութիւն, և որդեգիր առնայցէ զմանուկ ոմն աղքատիկ դրեալ առ դուռս եկեղեցւոյն, և կացուցէ զնա ժառանգ այսու պայմանաւ, զի թէ 'ի զարդանալ հասակին, զարդայցի և առաքինութբ, եղիցի թագաւոր, ապա եթէ խեռ և ստահակ գտցի. դիցի անարգանօք և խայտառակութբ 'ի կալանս նաւաց թիավարաց իբրև ապերախտ, և ամբարիշտ: Արդ՝ եթէ հնազանդեալ այսմ կարգի իշխանաց՝ դիցեն զմանուկն յուսումն դպրոց ընդ քաջահմուտ վարդապետօք. իսկ նա ստահակեալ խեռութբ զնասցէ, և ոչ կամիցի ուսանիլ զդիրս, այլ և արտաքս քան զտունն ընկեցեալ պարապեսցի 'ի խաղս անմտութե ընդ այլ մանկունս, 'ի շինել արկեղս վիճակընկեցուե, և զայլ սնոտի իրս, և ապա կոչեալ զնա խրատեսցեն, և զպայմանն ցուցցեն զարքունի. և նա 'ի մի այսր ամի ոչ ուղղեսցի. այլ որչափ աճեսցի տիօք, այնչափ առաւել անկցի 'ի չարէ 'ի չարագոյն. նք ար-

դարև. յետ առնելոյ զն՟մ փոյթ և զգուշութի՟, ածցեն զնա 'ի հրապարակ ատենի, և մեծաւ ամօթով և անարգանօք ը՟ս պայմանի թագաւորին մերկացուսցեն զնա յարքունի զգեստուցն, և դիցեն 'ի կալանս նաւաց ։

3. Այլ դու տես, զի մեծագոյն անարգութի՟, և ողբ կսկծակիծ ցաւոց քան զայս այն է, յորժամ քրիստոնեայ ոք դատապարտի 'ի դժոխս ։ Որովհետև կանգնեալ զնա ա՟ծ 'ի դրանց մահու, և արար իւր յորդեգիրս այսու պայմանաւ, զի թէ պահեսցէ զպատուիրանս ն՟ր, թագաւորեսցէ 'ի յերկինս, ապա թէ ոչ դատապարտեսցի 'ի տանջանս գեհենին ։ Իսկ նա ոչ ինչ համարեալ զն՟մ, և մոռացեալ զպարտըս իւր՝ ոչ մեծարեաց զխորհրդապետս իւր, զա՟յ զհրեշտակս ․ մանաւանդ զհրեշտակ իւր պահապան, և զառաքելաշնորհ վրդ՟պս եկեղեցւոյ, որք բանիւք և օրինակօք յորդորէին զնա առնել զայն, որ պատշաճի որդւոյն ա՟յ ․ և ոչ ուղղեցաւ պատժովքն, որով պատուհասեաց տ՟ր զմեղս, և զունայնասիրութի՟ ն՟ր, ցանկելով միայն 'ի վ՟ր կարատականաց և ոչ յո՟յս բարկացուցանելոյն զա՟ծ ։ Վ՟կ 'ի ժամու մահուան հասցի վճիռ զնմանէ գոլ անարժան արքայութե՟ն ա՟յ, և արժանաւոր անշէջ գեհենին, ուր անկցի անհնարին խայ-

տառակութ̅ :

4․ Ասէ տէ՛ր․ եթէ գտանի՞ մեծայոյն և դժնդակ անարգութ̃ն քան զայս։ Զի թէ դատապարտիլ մարդկային դատաստանաւ է մեծ իմն անարգութ̃ն և նախատինք․ զի՞նչ եղիցի ապա դատապարտիլ յա̃յ իբրև դաւաճանի, ապստամբ, և մատնիչ ի̃յ : Թո՛ղ զպատուհաս ամօթոյ անարգանացն, զի և յանցանքն անարգանաց կացցէ մնացցէ 'ի դատապարտելո̃ն յաւիտեանս յաւիտենից․ և դևք ծանակեսցեն զնա, և այպն արասցեն, ցորչափ ա̃ծ է ա̃ծ : Ե՞ւ ոչ միայն դևք, այլև ա̃մ արարածք բանաւորք երկնից և դժոխոց հրեշտակք և մարդիկք անարգեսցեն զնա և համարեսցին անարգ, արհամարհեալ, անհաւատարիմ, և ապստամբ 'ի թագաւորէ, 'ի փրկչէ, և 'ի հաստչէ իւրմէ : Այլ այս անարգութ̃ն երևեսցի յայտ յանդիմանն 'ի դէմս մեղաւորաց։ Քանզի որպէս ծառայք փախստեայք շանթիւ դրոշմին 'ի ճակատս, այսպ̃ ը̃ եսայեայ՝ անարգաբար դրոշմեսցին դէմք մեղաւորաց 'ի հրոյ անալի, զի ասէ․ ՓՈՒՆՉԱՅՑԵՆ ԱՅՐ ԸՆԴ ԸՆԿԵՐԻ ԻՒ ԶԱՅՐԱՆԱՅՑԵՆ, ԵՒ ԶԴԷՄՍ ԻՒՐԵԱՆՑ 'Ի ԲՈՑԱԳՈՅՆՍ ԴԱՐՁՈՒՍՑԵՆ : Եսայ․ 13․ 8․

Գ․ ԼՈՒԽ

ԳԼՈՒԽ Խ. Ը:

Յղ՟գս պատճառոյ տարագրութ՟ե միջամօրեայց ; էրէ-
նից արտաքսութ՟ե, և բանտարկեալ
ընկելոյ նց՟ 'ի դժոխս 'ի
տեղին երկնաղագին:

Եւ այլ աղգ իմն տանջանաց յոյժ կսկծագին է վիշտն տարագրութեան: Ո՟պ և մեծ համարէին զայն հռոմայեցիք, յորժամ ոք վ՟ն ապիրատութեն տարագիր եղեալ 'ի հայրենեացն առաքեալ լինէր յաքսորս 'ի կղզի ինչ, և կա՛մ 'ի գաւառ անմարդի: Ուստի ովիդիոս ոչ դադարէր զտիւն ողջոյն, և զգիշերն ամ՟ 'ի լալոյ. յորժամ տեսանէր զանձն առաքեալ յաքսորս 'ի պոնտոս, և հառաչէր անդադար առ անձկալին և առ տարփալին հռոմ, Իսկ մարկոս տուղղիոս իբրև դարձաւ յաքսորանացն, այնչափ ցնծայր. և սքանչացեալ հիանայր, մինչզի թուէր ինքեան, եթէ նորոգ ծնեալ է յշ՟ի. և եղեալ նման որ և թագաւոր: Վ՟յ ասէր, ո՛վ որչափ գեղեցիկ ես իտալիա, ո՜վ մարդաշատ, զիարդ չքնաղ են գաւառք քո, զիա՛րդ վայելուչ են մարգ ոգեալքն դաշտք քո. զիա՛րդ բերրի են լերինք և բլուրք քո. զիա՛րդ ազնուական և մեծազգի են քաղաքացիք քո. զիա՛րդ արժանապատուիք են և վեհագինք խումբք ծերակուտից քոց, և զիա՛րդ փառացի իշխանութիւնք նց:

2. Արդ եթէ մարդիկ այսչափ զանազանութիւն տային 'ի մէջ գաւառի և գաւառի, ազգի և ազգի, ժողովրդեան, և ժողովրդեան, ապա որպիսի եղիցի պատիւ մեղաւորաց յղս զանազանութեան, որ է 'ի մէջ դժոխոց և արքայութեան, և 'ի մէջ վարելոյն ը̃ դիւաց՝ և ը̃ հրեշտակաց: Տե՛ս թէ որպիսի անտանելի աղէտ ցաւոց պատեալ պաշարելոց է զմեղաւորն, յորժամ տեսցէ զանձն զրկեալ յերկնաւոր ապարանից, և 'ի յընդ մէջն քաղաքավարելոյ, և յայն երջանկաւէտ երկրէն կենդանեաց, ուր ամ̃ ինչ է խաղաղութի, սէր, յանդորրութի, և ցնծութի. ուր բովանդակն ճառագայթէ, բովանդակն զուարձացուցանէ, և յամ̃ կողմանց հնչէ բարբառս՝ ալէլուիայ.

3. Ողբայր դառնապէս, և աղէխորով լեալ տոչորիւր երանելին դաւիթ, յորժամ տեսանէր զանձն աքսորեալ յերկրէ իւրմէ, և տարամերժեալ յերկիր այլազգեաց, և հեռացեալ 'ի խորանէն այ: Սոյնպէս և որդիքն իէլի վա-

վարեալք 'ի բաբիլօն , ոչ դադարէին յողբալոյ՝ մինչ յիշէին զսիօն : Մեծ և գազանային էր անգթութին , զոր աղեքսանդր արար կողխատինեայ , յորժամ յետ հատանելոյ զն՟ր զականջս, զունչս , և զշրթունս , եդ 'ի միասին ընդ շան 'ի միում վանդակի : Իսկ դատապարտեալքն ցանկային ոչ միայն կալ 'ի մէջ շանց , այլև 'ի մէջ առիւծուց մանաւանդ , քան 'ի մէջ իւրեանց ծնողաց :

4. Անա՟ծ , և բռնաւոր ընակիչք կղզւոյն յափոնայ , որ յաւարտն է ասիոյ՝ նորագիւտ իմն տանջանօք չարչարէին զնահատակս վ՟մ որ 'ի Քս՟ Յս՟ հաւատոցն · քզի կախէին զն՟ս գլխիվայր ոչ 'ի բարձանց , այլ առ երկրաւ , և բռնային զփոս մինչ 'ի վ՟ր հողոյն , ուր կախեալն կիսով չափ մարմնոյն մնայր 'ի մէջ փոսոյն · և զի անդ լցեալ էին զկարիճս · զգորտունս զօձս , և զայլ ճճիս զազրաթոյնս և սողունս , խայթէին · և չարաչար կրծէին ճճիքն զմարմին կախելոյն :

5. Այլ դու տե՛ս , զի և ոչ մի 'ի ճճեաց աստի հաւասար գտցի ը՟ դժոխային վիշապաց · որք են յայն ահեղ և 'ի սոսկալի վիհն ահագին , ուր ոչ կիսով չափ · այլ բովանդակ մարմնովն ընկղմեսցի անդ եղկելի մեղաւորն: Վաղեմի հռովմայեցիք պատժէին զհայրաս-

պանս առ 'ի երկեցուցանել զայլս ը̃ այսմ սարասի· զի զկնի բազմազան տանջանաց՝ դնէին 'ի զրաւ̂ զյանցաւորն 'ի միում քրջի ը̃ միում աքաղաղի, ը̃ միում կապկի, և ը̃ միում իժի: Արդ զո՛վ ոչ ահաբեկեսցէ գեհեանն սոսկալի, ուր մեղաւորն կացցէ արգելեալ 'ի մի և 'ի նոյն կայարան ը̃ ա̃մ դժնեայ և չարասէր ողւոց, որք բիւրապատիկ դժնդակագոյն են քան զօձս, և զքարբս: Տե՛ս, զի 'ի տան, յորում դևք բնակեն, ոչ ոք է, որ համարձակեսցի ունել անդ օթևանս, կա՛մ բնակել: Ապա ո՞ր ահ պակուցանողական եղիցի բնակել 'ի խորափիտն անդնդային, ուր ոչ մի կա՛մ երկու, և կա՛մ երեք, այլ բովանդակ գունդք դիւաց միաբանեալ բնականան:

6. Տե՛ս, զի ոչ ոք ախորժէ կեալ 'ի Թաղի, ուր գոյ ախտ ուրկութե̃· կա՛մ ուր դրացիք ունին զախտս անբժշկելիս: Ուստի և դեմիստոկլէս 'ի վաճառելն զկալուած իւր, ետ քարոզ կարդալ 'ի հրապարակս, թէ ունի զդրացիս քաջառողջս: Ապա զիա՞րդ համարձակիմք դնել մեզ զգեհեանն· և զայն մեծագին դնով, ո̃ կորստեամբ հոգւոց մերոց, ուր եղիցին դրացիք և ընկերակիցք մեզ ա̃մ ախտասէրք, և մեղսամակարդ ողիք, ուր հարք թէ տեսցեն զորդիս, սոսկասցին և զզու-

և այլն 'ի նոյանէ , ոչ քաջ ցուցանի առաջիկայ պատմութիւնս , որ պատմի 'ի վարս Հարանց :

7. Զի ասի թէ էր այր մի վաճառական 'ի քաղաքի ուրեմն , և ունէր դերկուս որդիս , մին գնաց զհետ հօրն 'ի նոյն գործ վաճառականութեան , իսկ երկրորդն աղաչէր զհայրն և զեղբայրն , զի թողեալ զայն գործ չարաչահութեան , տայցեն զչարաչար շահեալն անդրէն 'ի տեարս իւրեանց : Այլ իբրև ոչ լուան նոքա խրատուց նորին , եթող զնոսա , և գնաց յանապատ , և եղև միայնակեաց , և բնակէր ընդ եղբարս : Եւ եղև մեռանիլ հօրն և եղբօրն անապաշխար 'ի մեղս իւրեանց . զոր լուեալ սրբոյ միայնակեցին , սկսաւ ցաւիլ յոյժ կասկածեալ զփրկութենէ նոցա , և աղաչէր զՏէր յայտնել նմա զորպիսութիւն նոցա : Արդ մինչդեռ կայր յաղօթս , երևեցաւ նմա հրեշտակ Տեառն , որ կալեալ զձեռանէ նորա , էած և կացոյց զնա 'ի կատար լերին միոյ . յորմէ հայեցեալ տեսանէր միայնակեացն զվիհ մեծ , և ընդարձակ խորխորին յոյժ և հրաբորբոք , և լսէր զձայն ողբոց , և սարսափելի գոչման : Եւ ապա յանկարծուստ ետես զհայրն , զի կայր 'ի մէջ հրոյն իբրև զոլոռն յեռանդեան . ետես և զեղբայրն , որ իբրև զնաւ ալեկոծեալ մերթ ընկղմիւր 'ի բոց հրոյն ,

և մերթ երևէր, և տարուբեր լինէր։ Եւ լուաւ, զի ասէր որդին ցհայրն, անիծեալ լիցիս դու յա՟մ ժամ, որ ծնար զիս, զի 'ի պատճառս ժառանգութե՟ չարաշահ ստացուածոց քոց դատապարտեցայ։ Եւ հայրն պխեալ ասէր· բիւրապատիկ անիծեալ լիցիս դու, զի վ՟ն մեծատուն թողլոյ զքեզ, ոչ հայեցայ յիրաւունս, այլ խրատամբք և անիրաւութ՟բ ժողովեցի ինչս։ Եւ իբրև անյայտ եղև տեսիլն, դարձաւ միայնակեացն զարհուրեալ և ահաբեկեալ 'ի սենեակ իւր, ուր եկաց խստակրօն ճգնութ՟բ մինչև ցելս յաստեաց։ Տե՛ս զի յայլ տեղիս աքսորանաց, և 'ի հեռաւոր տեղիս՝ յորժամ պատահին միմեանց հայր և որդի, և կ՟մ այլ ազգակիցք՝ մխիթարեալ լինին յոյժ տեսութ՟բ իրերաց, և երբեմ՟ն նաև թշնամիք հաշտին ը՟ իրերաց։ Բայց անդ յաքսորս դժոխոց որդիք ընդ հարց, և բարեկամք ը՟ բարեկամաց խռովեսցին, և ատեսցեն զմիմեանս։

Յօդուած · Ե։

Այս աքսորանք մեղաւորաց ոչ շնորհեսցէ ն՟ց զայն ազատութին, որով աքսորեալքն 'ի կենցաղս յայս առնեն՝ զոր ախորժենն 'ի մէջ սահմանաց

դաւգաւառին, ուր արգելեալ կան։ Վ՟զի 'ի դժոխս նոյն ինքն աքսորն է բանտ ինչ ասել, լի աղտեղութ՟․ և հոտով գարշութ՟․ ուր կապեսցին պրկեսցին մեղաւորք հրաբորբոք մարմնով իբրև ձեռնակապօք, և արգելցին 'ի հրալից արգելանս, և դէմք նոցա եղիցին նող կալիք և սարսափելիք ը՟ս համեմատութեան մեղաց իւրեանց։ Եւ որ դառնագոյնն է․ զի անհամար բիւրաւոր մարմինք յետ ընդհանուր դատաստանին, լցցին․ դիզասցին․ և բարդեսցին 'ի վ՟ր միմեանց, և ճնշեսցին 'ի միմեանց, իբրև զողկոյզս խաղողոյ, որք ճմլեալ լինին 'ի հնձանս։

2․ Դժնդակ և խիստ էր ազգ տանջանացն այն, զոր ետուն հերետիկոսք մաստրիք քաղաքի հօլանդիայ երից հարց քարոզչաց ընկերութ՟ն Յ՟եան։ Զի կապեցին զօղս կմ՟ զգօտիս ինչ երկաթի լցեալս 'ի ներքուստ սրածայր բևեռօք և ասղամբք, և ապա կապեցին զբազուկս և զոտս նց՟ նոքօք այնպէս․ զի թէ շարժէին սակաւ ինչ, խոցոտեալ լինէին յասղանց և 'ի բևեռաց։ Եւ ապա բորբոքեցին շուրջանակի զհուր՝ այրել զն՟ս, և այրեցան երանելիքն անշարժ մնացեալ, վ՟նզի թէ փոքր ինչ խլրտէին․ կմ՟ շարժէին զձեռս և զոտս, չարաչար խոցոտեալ լինէին 'ի բևեռաց։

3. Արդ՝ զինչ եղիցի տանջանք մեղաւորաց անդ 'ի դժոխս, ուր խորովեսցին կենդանւոյն, և ոչ կարասցեն շարժիլ. զի ուր և մերձեսցին, շօշափեսցեն զհուր և զծծումբ: Բայց զինչ ասասցուք զանհանդուրժելի չարահոտութե̃ն ոչ միայն այնր բանտի, այլև դարշելի մարմնոց եղկելի բանտարկելոցն: 'Ի Լուգդոն քաղաքի Գալլիացւոց դէպ եղև գտնել զոմն մեռեալ 'ի գամբարանի առանց թաղելոյ Ը̃ հողով. և ապա յետ աւուրց ինչ բացին զայն առ 'ի դնել անդ և զայլոք: Եւ իբրև իջուցանէր, որ բարձեալ ունէր զդի մեռելոյն 'ի գերեզմանն անդր՝ բուրեաց անտի այնպիսի չար հոտնեխութեց, մինչ չհանդուրժեալ նր̃ դարշութե̃ հոտոյն նոյնժամայն մեռաւ անդէն: Արդ եթէ մարմին մեռելոյ ուրուք բուրեաց զայնչափ հոտս նեխութեց, զինչ արասցեն այնչափ բիւրաւոր մարմինք մեղաւորաց վատթարագոյնք քան զդիս մեռելոց:

4. Պատմէ գիովիոս յղ̃ս եզեղինոսի բռնաւորին, և անհաշտ թշնամւոյ մարդկային ազգի, թէ արար զզանազան բանտս, յորս կալանաւորք չարաչար տառապէին 'ի դարշահոտութէ, 'ի բեռանց երկաթից, 'ի խաւարուտ վայրէն, 'ի պաղրաթորմի ճճեաց, և 'ի դիոց մեռելոց անդր արկելոց. վր̃

Ճշմարտութե̅ ասել կարէր, թէ անդ մեռեալքն սպանանէին զկենդանիս: Պատմէ վիկտորէս ափրիկեցին, թէ վանդալքն արիոսեանք նահատակէին չարաչար տանջանօք զուղղափառ քրիստոնեայս: Եւ՛ որ դժնդակն էր քան զընաւ՛ն, եդին միանգամ 'ի բանտի զչորս հազար զինն հարիւր զիննսուն և վեց նահատակս 'ի մի և 'ի նոյն սենեակ բանտի: Եւ՛ ասէ, թէ վա̅ անձկութեն տեղւոյն արկանէին զքաջ նահատակսն Քի̅ 'ի վր̅ միմեանց իբրև զհատս ցորենոյ 'ի քրջի: Եւ՛ զի ոչ կարէին հեռանալ յայլուր, այլ անդէն զկարիս որովայնին վճարէին 'ի վր̅ միմեանց, վա̅ գարշահոտութեն որ ոչ միայն անտի, այլև 'ի դիականց մեռելոց և̅ կենդանեօք եղելոց՝ բուրէր, անցանէր զանցանէր քան զա̅մ ազգ տանջանաց:

5. Բայց ունիմք յղ̅ս այսօրինակ և զայլ իմ̅ն նորոգ ապացոյց: Զի էր բանտ ինչ շինեալ 'ի մեծի կղզւոջն յափոնայ՝ ը̅ այսմ ապարանի: Կառուցեալ կայր 'ի կատար բլրոյ, որոյ լայնութիւն էր վեշտասան թզաւ. երկայնութիւն քսան և չորս թզաւ, և բարձրութիւն երկոտասան թզաւ վանդակակապ յօրինեալ. և էր ծածկեալ 'ի վերուստ ցախիւք, և որմունքն էին 'ի դերանաց ցցելոց շուրջանակի բացատ 'ի միմեանց երկու-

մղոնաչափ հեռաւորութ՟բ : Ա՟յ բանտարկեալքն տառապէին ՚ի դառնութ՟ց եղանակաց տարւոյն : Զի յամարան վ՟ն սաստկութ՟ տապոյն անդր յաճախելոյ յա՟մ կողմանց հազիւ կարէին բնակել. նեղեալք ՚ի մշտահոս քրտանց : Իսկ ՚ի ձմերան անտանելի էր վիշտն , որում տառապէին ՚ի ցրտաշունչ հողմոց. յանձրևաց , և ՚ի ձեանց , որք յա՟մ կողմանց մտանէին ՚ի ներքս : Եւ՛ զօրք ՚ի զգուշութ՟ն ն՟ց կարգեալք ոչ թողուին , թէ ոք նպաստեսցէ ն՟ց , վ՟ն դժնդակ և դառն էր ցուրտն , որում վշտանային , և այն զի գրեթէ մերկք էին , վ՟զի և ոչ զպատառատուն և զհնոտի հանդերձս ունէին զանձամբք : Եւ՛ ոչ կարէին ՚ի նմին իսկ բանտի փոխել զքայլ մի ոտին. զի իւրաքանչիւրոցն որոշեալ էր տեղի ը՟ս տարածութ՟ երկուց դերանաց, և փոքր ինչ աւելի, և ոչ թոյլ տային զօրականքն անդր քան զայն փոխել : Ուստի և դժուարա՛ւ վ՟ն անձկութ՟ տեղւոյն կարէին ՚ի գիշերի ընկողմանիլ. և տարածիլ ՚ի մ՟ր զետնոյ առ ՚ի սակաւ մի հանգչել : Եւ՛ այն ևս նեղեալք ՚ի պահապանաց կալ զգիշերն ողջոյն առանց լուսոյ ճրագի : Եւ՛ ը՟ս անձկութ՟ տեղւոյն , էր և նուազութ՟ կերակրոյն : Վ՟զի այնչափ տային ուտել , որչափ հնար էր ապրել. ուստի ոչ բնա՛ւ յագեալ լինէին , այլ էին ՚ի մշտակայ պահս խստուե̃։ Համապազօրեայ կերակուր նց̃ էր եփեալ որիզ լոկ ջրով երկու պնակ, և այն յոլով անգամ ցուրտ, և սեաւ և բորբոսեալ։ Իսկ ըմպելին էր բաժակ մի ջուր հանեալ 'ի դառն ինչ խտոյ, որ հազի՛ւ կարէր ըմպել։ Ե՛ւ դրձ̃լ մասն ինչ երեք արմատոյ անեփ և աղի, կմ̃ զոյգ մի աղած ձկան՝ թացեալ 'ի ջուր ջերմ, կմ̃ ցուրտ։

6. Բայց դժնդակ և անտանելին է̃ զայսոսիկ իբրև անը̃դհատ իմն մարտիրոսուե̃ էր հօտն նեխուե̃ց և գարշութ̃եց, որ լնոյր և ապականէր զայն կայարան. որովհետև յայնմ անձուկ բանտի կային ոգիք երեսուն և երկու, որք անդէն վճարէին զպէտս մարմնոյն, Որոց և ոչ ներէին պահապանքն անօղորմք փոխել զհանդերձս. 'ի սոցանէ մին եղև հայրն կարլոս սպինոլեան, որ զամս երիս ոչ զշապիկն, և ոչ զայլ հանդերձս փոխել կարաց անդ։ Վս̃ գոյացեալ ծնանէին 'ի մարմինս նց̃ զանազան ազգ ճճեաց. որք ոչ ներէին նց̃ առնուլ զփոքր ինչ հանգիստ։ Ուստի ս̃ք կենդանւոյն զփորձն առնուին այնմ, զոր մեռեալք առանց իրիք ցաւոյ կրեն զկնի մահուն։ Ե՛ւ էին յոտից մինչև ցգլուխ լի ամ̃ ազգի որդամբք. որք ելանէին յաղտեղուեց և յաղբևաց անտի, և յա՛ւուրս անձրև-

աց մտեալ տարածանելին ը՟ ամ՟ յատակս բանտին։ Յոյժ անձուկ, դժնեայ և ժահահոտ բանտի եկաց զամս չորս պատուական հայրն կարլոս սպինոզեան ազնուական ազգին գենովացի քահանայն ընկերութե՟ն Յս՟եանց ը՟ երեսուն և այլևս աւելի անձանց։ Յորոց միջի կային յոլովք ա՟ծարեալ, պայծառացեալ, և գերահրաշ խոստովանողք Քի՟, 'ի կարգէ սր՟ հօրն դոմինիկոսի, սրյն Ֆրանչիսկոսի, և Յս՟եան կարգի, որք անպարտելի համբերութբ՟. և անդրդուելի հաստատութբ՟ կրէին զայն աղէտ տառապանաց։

7. Տեսանե՞ս, թէ զոր դժնդակ և զխիստ նահատակութիս յանձին բերէին երանելիքն այնոքիկ արգելեալք յայն բանտ աղտեղութե՟ց և նեխութե՟ց. Արշ մարտեալ 'ի նմ՟ բանից առաքելոյն, որ ասէ. Վս՟ քոյ մեռանիմք զօր հանապազ։ Վս՟զի յամ՟ օր մեռանէին առ սակաւ սակաւ 'ի սովու, 'ի հիւանդութեց, 'ի նեխութէ ապականութե՟ց, և 'ի բիւր նեղութե՟ց, մինչև ետուն զնս՟ ձորակ հրոյ այրել 'ի մէջ բոցոյ, առ սակաւ սակաւ ուր կատարեցան անմահակն փառօք. յամի տն՟. 1622. ին։

8. Աւանիկ տեսե՞ր. թէ զիա՞րդ 'ի վերջին դառնութե՟ թշուառութե՟ց անկեալ կային ողորմելիքն յայն բանտ տաղտկալի։ Բայց զի՞նչ. ի՞ցէ արդեօք

և բանտ դեհենին իբրև զայս, ոչ ընդնա՛ այլ սա առ նմա՛ իբրև ոչինչ է։ Քանզի աստ չէին շանթիւ՛ դրոշմողք, ոչ գանք, և ոչ կատականք։ Իսկ անդ ՚ի դժոխս դեք Է անարգագոյն ծաղու խայտառակութն զուգեսցեն և ըղդառնութեց կտտանս։ Աստ չէին ձայնք գոչմանց ահեղ հրէշից. իսկ ՚ի դժոխս ձայնք հնչեն սարսափելի գոչմանց յաւիտեանս ժամանակաց։ Աստ չէին բոցք հրոյ. իսկ անդ ՚ի դժոխս այրեսցին տոչորեսցին մինչև ՚ի ներքս անդ ՚ի փորոտիս։ Աստ չէր ամենեին հատեալ և բարձեալ յոյս ելանելոյ ՚ի բանտէն. իսկ անդ ՚ի դժոխս բարձեալ է գլխովին այս յոյս փրկութ։ Աստ գտանէին բանտարկեալք զփոքր ինչ կերակուր. իսկ անդ ՚ի դժոխս ոչ գտցէ քաղցն գազանային ՚ի բերս ամաց՝ զփշրանս ինչ հացի, և ոչ ծարաւն սաստիկ՝ գոնէ զկաթիլ մի ջրոյ։ սոյն օրինակ ահաւասիկ եղիցի Թշուառութ այնր աղջամղջին, անբեր, և անդընդախորշին, որ միայն զփուշ, և զտատասկ բուսուցանէ։

* * *

* * *

ԳԼՈՒԽ ԽԹ.

Յղ՟գս գերութեան, գանիցն և անվախճան պատժոյ։

ՍՈյնպէս մեծ իմն տանջանք էր առ հռոմայեցիս աղէտն գերութե՟ն. Վս՟յ գերիքն համեմատեալ լինէին մեռելոց։ Ուստի որպէս պատմէ Եղանիոս դժնդակ էր յոյժ վիճակ գերեացն բռնաւորին տրիպոսի. զորս ոչ միայն չարաչար ծառայեցուցանէր կտտամահ առնելով զնս՟. այլև արգելոյր չխօսիլ բնաւ ը՟ն իրերաց. Եւ՛ զի նք՟ նշանացի խօսէին ը՟ն իրերաց երկուցեալք խօսիլ ձայնիւ՛ բարբառոյ, զայն ևս արգել սրտմտէր 'ի վր՟ նց՟։ Զայս տեսեալ ողորմելեացն, եկեն գումարեցան 'ի միասին 'ի հրապարակ անդր, և սկսան աշխարել զիւրեանց զաւր հասարակ զթշուա՛ռութիւն աղեխարով արտասուօք։ Իսկ անօրէնն այն և զայս փոքրիկ զմխիթարութի՟ն նց՟ արգել։ Արդ խաւարագոյն քան զայս լինիցին մեղաւո՛րք 'ի տանջանս իւրեանց 'ի մէջ գեհենին։

2. Ողբայր լայր և աշխարէր մար-

դազարչն երեմեայ հեղլով զաղբիւրս արտասուաց զընդ հարկաւ լինիլն եղեմի զրկեալ յինքնակալ պետութէ իւրմէ ։ Ապա ո՞ր ողբոց, և ո՞ր արտասուաց արժանի է դերուն քրիստոնէին, որ զրկեալ 'ի ժառանգութէ իշխանութե երկնից արքայութե, լինի ծառայ և գերի սատանայի, և մատնի յանվախճանս տանջանս գեհենին, որոց զայնչափ ունի տալ զհարկս, զորչափ ունի զանդամս, զզգայութիս, և զկարողութիս ։

3. Այլ տեսցուք և զայս. թէ ո՞րչափ է բռնաւորութի սատանայի ևս 'ի վր նց, որք չեն նր դերիք ։ Զո՞ր աղէտս չարեաց կուտեաց 'ի վր արդարոյն յոբայ, յորժամ էառ զհրաման 'ի տնէ ։ Էհար զնա յոտից մինչև ցգլուխն չարաչար կեղով յոյժ, մինչև լինիլ նմա շարաւալից, և սորսորիլ 'ի մարմնոյ նորա եռամեղն որդանց, և փտութեց. և հազիւ մնալ 'ի հիւծմանէն մարմնին ինչ սակաւ զշրթամբքն առ 'ի զբարբառս յօդելոյ ։ Գիշերք ցաւագինք տուան նմա, զի ցայգն, որ զտանջանս այլոց թեթևացուցանէր, նմա պատկերակերպութբ և տեսութբ տանջանաց աճէր ։ Իսկ և կին նր չկարէր հանդուրժել հոտոյն գարշութե, որ 'ի նմանէ բուրէր զտիւն, և զցայգն ամ։ Այլև երեքին բարեկամքն որք եկին մխիթարել զնա յապուշ կրթեցան տես-

եալ զնա յայն աղէտ չարեաց, և զեօթն տիւ և զեօթն գիշեր ոչ կարացին խօսել ընդ նմա և ոչ զբան մի ։

4․ Արդ զերկուս ունիմք աստի իմաստասիրել ։ Նախ զի եթէ մեծ առ 'ի յամօթ առնել զսատանայ, և ցուցանել 'ի փորձ մատուցեալ զանմեղութիւն, զաստուածպաշտութիւն, զերկիւղ, զմաքրութիւն և զսրբութիւն յոբայ, թոյլ ետ սատանայի այնպէս չարաչար տանջել զնա, ապա զիա՞րդ մատնելոց է զմեզ 'ի ձեռս դիւաց առ հասարակ անդ 'ի գեհենին․ յորժամ մտցէ 'ի դատաստան, և դատապարտեսցէ զմեր զդաւաճանութիւն, զխստասրտութիւն․ զանամօթութիւն, և զանպարկեշտութիւն ։ Երկրորդ զի եթէ երանելին յոբ այնչափ չարչարեցաւ 'ի դիւէն․ մինչև եղև իբրև զկենդանի դի մեռելոյ լցեալ անհամար որդովք զազրութեան, որոյ նմանն ոչ երևեցաւ յերկրի, որպէս և սուրբ գիրք անուանեն զնա պարզ հարուած մի Աստուծոյ, տալով Աստուծոյ զայն, զոր դևն առնէ, զո՞ր օրինակ դատաւորին տուեալ լինի տանջանքն, զոր դահճին տայ մահապարտին ։ Ապա զի՞նչ եղիցի․ յորժամ նոյն ինքն Աստուած ծանրասցի զօրութեամբ ամենակարող բազկին 'ի վերայ դատապարտելոյն 'ի տանջանս գեհենին ամենայն դառնութեամբ և խստութեամբ ցաւոց ։

5․ Այլ այժմ մատիցուք առ պատիժն դանիլից, ընդ որում խմացեալ լինին

նին ա̃մ պատիժք ցաւ̂ոց , որովք տանջին չարագործք ։ Զայս ետես մարգարէն երեմիայ , յորժամ եցոյց նմա տր̃ զգաւ̂ազան մորչ ընկուզի , որովք 'ի հնումն ձաղկէին զպատժապարտս , և հուպ այնմիկ եցոյց նմա զկաթսայ յեռանդեան նշանակելով սոքօք , թէ հարո̂ւածք արդարութե̃ն ա̃յ դեղցին մշտնջենաւ̂որ հրով գեհենին 'ի վր̃ մեղաւ̂որաց ։ Բայց ոչ հարո̂ւած գաւազանի , կա̃մ խարազանի . այլ խստագոյն կռանաց . ուստի ասէ իմաստունն ը̃ս լատին թարգմանութե̃ . Պատրաստեալ են խստահերգողաց դատաստանք . և կռանաց հարո̂ւածք մարմնոց անմտաց ։ (Առակ . 19 . 29 ։) Եւ̂ յիրաւ̂ի կոչին անմիտ մեղաւ̂որքն , զի ոչ գիտացին գնել զարքայութին երկնից , զոր տայր ա̃ծ ընդ այնքան թեթև գնոց , այլ անկան մատնեցան յանվախճան տանջանս գեհենին յղ̃ս բոպէական իմ̃ն հեշտութե ։

6 . Բայց ոչ միայն անձրևեսցէ իբրև զհեղեղ ջուրց ա̃մ ազգ տանջանաց 'ի վր̃ մեղաւ̂որաց . այլև իւրաքանչիւր զգայարանք ընկալցին 'ի սեպհական առարկայէն զատուանձին իմ̃ն պատիժ ։ Զի անդ աչքն , ոչ միայն կրեսցեն զսաստիկ ցաւ̂ս յղ̃ս կիզանելոյ բբացն 'ի բոցոյ հրոյն , այլև տանջեսցի տեսութին 'ի սարսափելի հրէշից , և 'ի ձառաղէմ երեսաց անդ եղելոց ։ Պատ_

մէն

մեն , թէ կրօնաւո՛ր ոմն մինչ դեռ կայր յելսն կենաց , ետես զդևս այնպէս ձառաղէմս՝ դժոխերեսս , և սարսափելիս . մինչզի ցնորեալ ՚ի մտաց յահեղ տեսուէ նոցին , աղաղակեաց և ասէ , անիծեալ լիցի ժամն , յորում եղէ կրօնաւոր ։ Ե՞ւ իբրև եկաց վայր մի , և դարձա՛ւ ՚ի յուշն , և հանդարտեաց , ասէ ։ ոչ բնաւ , այլ յաւէտ օրհնեալ , և բարեբանեալ լիցի ժամն , յորում մտի յայս կրօն ։ Գովեալ և բարձրացեալ եղիցի մայր ան , զոր սիրեցի յամ սրտէ ։ Զարմացեալ ընդ այս որոց մերձն կային առ նմա , աղաչեցին ասել ցնա , եթէ ընդէ՞ր աղաղակեաց այնպ ։ Ե՞ւ նա պխի ետ , և ասէ ։ Այս էր շփոթ և տագնապ սրտիս ։ զի տեսի զերկուս դևս այնչափ գարշելիս , մինչզի եթէ առընթեր կայր աստ ծըծումբ բորբոքեալ , և հրահալելիք ՚ի բովս հալեալք , առաւել ախորժէի կալ ՚ի մէջ նց , քան տեսանել միւսանգամ զդժոխերեսն զայնոսիկ ։

4. Արդ եթէ երկու միայն դևք պտճռեցին զայնչափ սարսափումն, զի՞նչ լինիցի ապա ՚ի տեսանելն զլէգէօնս նց, մին զազրադոյն քան զմիւսն , և ամենեքին կատաղեալք , և վառեալք ՚ի տանջել , և զօրհանապազ ածել զխշտա տանջանաց ։ Երանելին գրիգորիոս ՚ի վր այնր բանի յոբայ ։ Ելանէ ծոյէ ՚ի նմա

(ա

(ք՞ 'ի դժոխս) Երկիւղ Մշտնջենաւոր. (Յոբ. 10. 22:) մանրակրկիտ խոկացեալ, ասէ. զիա՞րդ կարէ գտանել երկիւղ 'ի դժոխս, ուր վարակեալ լինին մեղաւորք անտանելի ցաւօք: Վն̃զի ցաւն է 'ի ներկայ չարէն, իսկ երկիւղն 'ի հանդերձելոյն: Ուստի և մարդըն յորժամ հասանէ 'ի կատար Թըշուառութեան, ոչ ևս երկնչի յետ այնորիկ: Եւ զի չունիլ զերկիւղ, է բարի ինչ, արդ զիա՞րդ կարէ լինել այս 'ի դժոխս, ուր չէք բարի ինչ: Եւ պատասխանեալ ասէ. զի ոպ̃ մահն ապականելով զդատապարտեալս, Թողու զնս̃ կենդանիս, ոպ̃զի կեցցեն մեռանելով. Այսպ̃ և պատիժ տանջանաց նց̃ ընդ չարչարելն զնս̃ զոյգ ընդ նմին և երկեցուցանէ:

8. Դրձ̃լ մեծ եղիցի տանջանք աչացն՝ յորժամ տեսանէ հայրն մատնեալ զորդին 'ի դառն տանջանս. որդին զմայրն, և եղբայրն զքոյրն կոծել դառնադառն չարչարանօք: Պատմէ Եգեսիպպոս. Թէ Աղեքսանդր որդին Հիւրկանու իբրև կամեցաւ տալ զխստագոյն պատիժ ինչ ումանց՝ ետ բևեռել զութն հարիւր 'ի խաչի, որ էր ոչ այժմ կախաղանն: Եւ 'ի նոյն ժամանակի մինչդեռ մեռեալք էին, ետ սպանանել առաջի աչաց նց̃ զկանայս, զուստերս և զդստերս նոցին, ոպ̃զի յայն

ցաւալից նշաւակէ մեռցին եղկելիքն, ոչ միով այլ բիւր մահուամբ: Այսպէս խստագոյնս տանջեսցին, և վարակեսցին ցաւօք 'ի դժոխս հարք 'ի տեսանելն զորդիս, զեղբարս, և զբարեկամս իւրեանց լողալ 'ի լիճ հրոյ տանջանաց: Այն օրինակ մեծ եղիցի տանջանք աչաց նց՟, որք եղեն միմեանց քար գայթակղութե՟, և առիթք մեղաց, յորժամ տեսցեն անդ զմիմեանս: Բայց որ սքանչելին է. զի միանգամայն տեսցեն զսոսկալիս, և զցաւալիս, և կացցեն մնացեն յայն մթին և խաւարին վայրի:

9. Ասէ Նիկողայոս Լիրացին, եթէ վակ կոչեցաւ ահեղ և քստմնելի խաւարն այն եգիպտոսի, զի տեսանէին եգիպտացիք 'ի մէջ խաւարին զսոսկալի տեսիլս պատկերաց յերևակայութե՟ նց՟ տպելոց, որ արկանէր 'ի վ՟ր նց՟ զերկիւղ ահագին: Սոյնպէս եղիցի և խաւար դժոխոց, զի ըս՟ մասին չարչարեալ տաղնապեսցէ զաչս մեղաւորաց տեսլեամբ այլանդակ, և սոսկալի դիմաց չարայոյզ ոգւոց. և ըս՟ մասին աղջամղջին և անլոյս մշտնջենաւոր գիշերուն:

10. Ականջ, կ՟մ լսելիք ոչ միայն խստագոյնս տանջեսցին 'ի հրոյ անտի, որ թափանցանց ելցէ ընդ նոսին. այլև դղրդմամբ. և ահեղագոչ թնդմամբ փողոց. և ահագին ձայնիւ հեծութե՟ց,

անի_

անիծից. և հայհոյութեց դատապարտելոց : Սիլլա դատաւորն հռոմայեցի իբրև կամեցաւ երբեմն սպանանել արս վեց հազար , հրաման ետ ժողովել զնս 'ի հրապարակ , կամ 'ի Թէատրոն ինչ . և ևս հրաման ետ , զի 'ի նմին ժամանակի մերձ 'ի նոյն տեղի գումարեսցի ծերակոյտ քաղաքին 'ի տաճար ինչ . զի կամէր խօսիլ բանս ինչ նդ : Բայց պատուէր ևս ետ , զի ընդ հրապարակախօս լինել նորին , սպանցեն զօրականքն ձեպ 'ի ձեպոյ զայն բազմութն 'ի մի հաւաքեալ : Եւ ահա հազիւ հազ սկսաւ սիլլա բանալ զբերանն 'ի խօսիլ , անկարելի եղև զնր բանս իմանալ յղս բարձրագոյն ողբոց և աղաղակաց հնչելոց 'ի ժողովրդենէն Ը մէջ կոտրելոց , սոսկացեալ և հիացեալ ամենեցուն 'ի շփոթ խռովութէ ժողովրդեանն , որ 'ի կոտորածէ անտի հնչեն դղրդէր զքաղաքն ողջոյն : Ապա զինչ եղեցի յանմիաբան և 'ի խառնակ աղաղակէ ողբոց անտի դատապարտելոց :

11. Սոյնպէս և հոտոտելիք կրեացեն զիւրեանց սեպհական տանջանս 'ի մահաբեր ժահահոտութէ : Պատմէ վիրգիլիոս , թէ սոսկալի իմն էր տանջանքն , որով տանջէր Թագաւորն մեզինակէոս պչարագործս : Քանզի զնեխեալ և զորդնալից մարմին ինչ մեռեալ մարդոյ կապէր ընդ կենդանւոյն.

և Թողցո՛ւր այնմ̃ , ոպ̃զի մեռցի կենդանին 'ի ժահահոտութ̃է մեռելոյն : Եւ̂ երանելին բոնավենտուրայ ասէ , եթէ մարմին դատապարտելոյ ուրուք եղանէր 'ի վր̃ ծիս , բաւական էր նեխութ̃ ժահահոտութ̃ իւրոյ ապականել զբովանդակ երեսս երկրի : Եւ̂ դու տես , թէ ապա որչափ անտանելի եղիցի տանջանք մեղաւորին · 'ի կալ և 'ի մնալ նորա անբաժան յաւիտենանս յաւիտենից ը̃ ժահահոտ մարմնոյ իւրոյ , և ը̃ այլ բիւր ժահահոտ մարմնոց · զորոց ասէ մարգարէն · Եւ̂ Վիրաւորք նց̃ դիաթաւալ անկցին , և ելցէ հոտ նց̃ · (Եսայ · 34· 3 :)

12· Բայց զի՞նչ ասացից յաղագս դժնդակ տանջանաց լեզուին , որովհետև բիւրս մեղանչեմք նովաւ , բամբասելով · չարախօսելով · շողոմելով · ստելով · դատարկաբանելով · և զազիրս խօսելով : Եւ̂ կի՛ յղ̃ս տանջանաց բերանոյն , որով շուայտիմք , և արբենամք : Անդ կատարեսցի 'ի վր̃ մեղաւորց̃ բանն , որ ասէ , Սրտմտութ̃ վիշապաց գինի նց̃ , և սրտմտութ̃ իժից առանց բժշկութ̃ : (2· օրին· 32· 33 :) Եւ̂ ոչ այսչափ միայն , այլ և լլկեսցին , և տառապեսցին 'ի սաստիկ սովու և 'ի ծարաւու : Եւ այն , զի սովն է այնչափ մեծ վիշտ տանջանաց · մինչզի ը̃ կու̂ինտիլիանոսի , երջանիկս կոչէին առ նովաւ աղէտք մարտից, և ժանտախտից։ Արդ՝ եթէ սով սակաւ աւուրց այնչափ դժնդակ եղև յՃին, մինչզի հարկեցան մարդիկ ուտել ոչ միայն զշունս, զկատուս, զմկունս, զգորտունս. և զաղբս, այլև մարք կերին զորդիս իւրեանց, և այրք զմարմինս բարեկաց իւրեանց, ոմ̃ պատմեն յդ̃ս զեննոնի կայսեր։ Ապա զինչ եղիցի անվախճան սով և ծարաւ գեհենին։

13. Այլև զգայութի̃ շօշափելեացն՝ քանզի առ հասարակ ձմպաղեալ գտանի յամ̃ անդամս քան յայլ զգայութ̃ս, վն̃կ խստագոյնս տանջեսցի քան զն̃մ ՚ի հրոյ անտի. որ միշտ կիզէ զնա, և ոչ երբէք սպառեսցէ։ Սոսկալի իմ̃ երևի մեզ միայն ՚ի միտ ածելն զայն ազգ տանջանաց, որով պատժէր փալարիդէս զչարագործսն, քանզի կազմեալ էր ասեն երինջս պղնձիս դատարկս ՚ի ներքուստ. զորս հուրբ ջեռուցեալ՝ արկանէր մերկանդամ զմարդիկ կենդանւոյն ՚ի փոր նր̃. ուր խորովեալ ձենձերէին եղկելիքն։ Բայց այս ամ̃ իբրև խաղ իմ̃ է առ հրով գեհենին. որով ոչ միայն մորթք զըլխոյն, և անդամոց մեղաւորաց կիզցին, այլև փորոտիք գաղտնածածուկք։ Յաղագս որոյ պատմէ պետրոս կղոնիակեցին, թէ քահանայ ոմ̃ մոլի մինչ դեռ մերձ էր ՚ի մեռանել, երևեցան

նմա դեւք երկու դժնեայք և դժոխերեայք, որք ունէին տապակս հրեղէն 'ի ձեռին, և ասէին ցհիւանդն, սովա՛ւ տապակեսցիս 'ի դժոխս: Եւ ապա անկաւ կաթիլ մի 'ի յիւղոյ անտի՝ որ եռայրն 'ի տապակի 'ի վր̅ ձեռաց հիւանդին, և նոյնժամայն կիզաւ մարմին նո̅ր ոսկերօքն հանդերձ. զոր տեսեալ ամենեցուն, որոց մերձն կային, սոսկացան 'ի բռնուէ̅ անտի հրոյ գեհենին: Վա՛յ ասէ Նիկողայոս Նիւսացին, ոչ տանջեսցէ այնչափ հրդեհ ինչ եղեալ յամ̅ փայտից ճի 'ի մի կուտելոյ, որչափ տանջէ կայծ ի̅մն փոքրիկ հրոյ գեհենին:

14. Եւ ը̅ն այսմ պատմէ կեսարիոս, թէ ունէր Թէոդորիկոս եպ̃ն մաստրիքայ զծառայ մի անուն Երբերբաք, որ առ 'ի կարօղ լինելոյ զվրէժ առնուլ 'ի թշնամւոյն ընծայեաց զանձն և զհոգին սատանայի: Արդ՝ դէպ եղև, զի զ՚նի ամաց ինչ անկաւ սա 'ի մահաբեր ախտս հիւանդուե̅, և իբրև մերձ էր 'ի մեռանել, յափշտակեցաւ մտօք, և ետես զանձն մատնեալ 'ի լիճ հրոյ. իսկ որք առ նովաւ կային, տեսեալ զնա անշարժ, համարեցան ստուգիւ մեռեալ: Եւ մինչդեռ յայն տանջանս կայր, երևեցաւ նմա հրեշտակ ա̅յ, և ասէ. տե̅ս արդ զհատուցումն, որ առնելոց լինի ծառայողաց սատանայի.

այլ տա՛ս ցիս , ապաշխարեա՛ս 'ի մեղաց: Եթէ որ շնորհեացէ քեզ զկեանսդ : Եւ նա պխնեալ ասէ , այո՛ տէր , միայն թէ փրկեցայց 'ի տանջանացս: Ցայնժամ գթացեալ տէր 'ի վր̄ նր̄ , եհան 'ի հրոյն: Եւ նա իբրև 'ի յուշն դարձաւ, և յախտէն զերծաւ. սկսաւ անյապաղ տալ զանձն 'ի խիստ ճգնունս ապաշխարութե , մինչև զարմանալ և ահաբեկ լինել ամենեցուն: Քանզի բոկ ոտիւք քայլէր և գնայր 'ի վր̄ փշոց , սայրասուր վիմաց , և ցցուեալ շերտից ծառոց , 'ի ցանկս և 'ի մացառս , ուստի իբրև զվտակ աղբեր հոսէր արիւնն 'ի վերայ: Ուտէր զլոկ հաց , և ըմպէր զջուր միայն , և զայն ճշդիւ և չափով և հազիւ երբեք . և զժամ զոր ունէր բաշխէր աղքատաց : Եւ 'ի սքանչանալն բազմաց , և 'ի յասելն զի մեղմեսցէ փոքր ինչ զայնչափ ճգանցն զխստութի , պնդէր . մի՛ սքանչանայք ը̄ այս եղբարք , զի թէ ուր գտայ ես երբեմն , դուք ևս զայն տեսեալ և զփորձն առեալ էիք , և զսոյն զայս ոչ յանձին բերէիք , յայնժամ կարող էիք դատել զիս: Եւ առ 'ի ցուցանել զմեծութի հրոյն, զորոյ զփորձն առեալ էր . ասէ , եթէ ոք 'ի մի հաւաքեալ զա̄մ փայտս և զծառս ծի , արասցէ նոքօք զհրդեհ ինչ մեծ . ախորժելի անդ տանջիլ յաւէտ մինչև ցօր դատաստանին , քան կալ ժամ մի 'ի մէջ հրոյն, զորոյ զփորձն ճաշակեցի: Ա՛ղէ 'ի մի՛տ առ զայս ա՟մ ո՛վ դու, որ մեղարք երբեմն առ ա՟ծ, և յա՟մ վիշտս քո ասա· Զխստագոյնս քան զորս զայս կրել արժանի էի վ՟ մեղացս· վ՟յ անվայելուչ է ինձ տրտմիլ յաղ՟ս փոքու այս տառապանաց:

15· Ե՛ւ զի ա՟ծային տառք կոչեն զգեհեանն լիճ հրոյ, կամ եղև և ինձ յառաջ բերել աստանօր զպատմութիւն ինչ, զոր պատմէ սբ՟ պետրոս դամիանեան զի մարթասցուք 'ի միտ առնուլ զաստակութ տանջանաց գեհենին: Այր ոմն էր, ասէ, 'ի լոնգոբարդիոյ գաւառի իտալիոյ ճարտարաբան յոյժ, և խորամանկ, և անյաղթ 'ի բանս, որ ինքնզին առանց ուրուք աղաչելոյ մտանէր 'ի դատս և 'ի շփոթս այլոց, և ճարտարամտութ՟ն յաղթական լեալ՝ զա՟մ իրաց եւս յաջողութ՟ գտանէր: Ե՛ւ թէ դէպ լինէր երբեմն անկանել 'ի վտանգըս ինչ· յա՟մէ զերծանէր· և յա՟մի էր մի յայնցանէ, որք քաջ գիտէին վարել զ՟ծս: Բայց 'ի մահուն ոչ եգիտ զայն յաջողութի: Քանզի յետ մահուն իբրև թաղեցա՛ւ յեկեղեցւոջ· և ետես միայնակեց՟ ոմն սբ՟ 'ի տեսլեան մինչդեռ աղօթէրն զլիճ մի չարաչարանաց հրոյ, որ եռայր, և արձակէր սաստիկ շանթս հրալիցս, և մրրիկ բոցոյն որ անտի ելանէր, դիզանայր, և բարձրանայր մինչև յերկինս, կլինս , և հնչէր ձայն ահեղ որոտման ։ Եւ ապա ետես , զի հողի բարբանջօղ ճարտարախօսին այն մատնեալ կայր անդ 'ի մէջ հրոյն ։ Ետես ևս , զի պատեալ պաշարեալ էին օձք , և վիշապք սոսկալիք զլեզուն բովանդակ բացեալ զժանիս ընդդէմ դատապարտելոյն , որք և նկրտէին մի զմիով յաղթեալ՝ չթողուլ ելանել կալ զափամբ լճին ։ Եւ տեսանէր զի յայն շփոթ գազանաց , և ահագին հրոյն գոչէր և ոռնայր իբրև զշուն ճարտարախօսն չարաբախտ , և ջանայր , նկրտէր հասանիլ յափն լճին ։ Բայց իբրև հասանէր առ ափն լճին , ահա անդէն վաղվաղակի յարձակէր 'ի վր օձ մի մեծ, որ երկայնեալ զպարանոցն , և բացեալ զբերանն , կամէր զնա ողջոյն կլանել ։ Նա եղկելին ընդ կրունկն դարձեալ անցանէր ընդ մէջ հրոյն · և դիմէր առ ափն լճին ընդ այլ ինչ կողմն · և չև էր հասեալ անդր , և ահա անդէն յետս կործանէր 'ի տեսուէ սոսկալի վիշապաց ։ Եւ ուր և դիմէր զխստագոյնս տեսանէր ։ ուստի կայր 'ի լճին , բոցակիզեալ բոլորովին ։ Եւ յաւելու ասել երանելին պետրոս · եթէ արդարացի եղև սմա պատժիլ ընդ այսմ օրինակի , զի ամ խորամանկութեն մրցանէր յամ ձախորդութեանց , նոյնպէս 'ի դժոխս անկար եղիցի նմա զերծանիլ

'ի

'ի բոցոյ հրոյն : Այլ որ դժնդակն է, զի ցորչափ կայ մնայ ա՟ծ 'ի գոլ իւր· նոյնչափ լեղլասցի չուառականն յայն լիճ սաստկացել՟ հրոյ :

Յօդուած · Է :

ՏԱնջեսցին լլկեսցին մեղաւորք եւս ըստ կարողութե՟ց հոգւոյն իւրեանց : Նախ ըստ երեւակայութե՟ն, որ զդառնութ՟ե ցաւոց զներկայից և զապառնեաց յա՟մ ժամ խորհրդոյ ակամբ առաջի իւր նկարէ, որով անհնարինս վշտանայ : Պատմէ Ալեքսանդր ափրոդիսանեան, թէ կին ոմն, որ զտիւ՟ն ողջոյն, և զգիշերն ա՟մ կայր յանտանելի վիշտս տրտմութ՟ե միայն յերեւակայութ՟է անտի իժի միոյ, զոր կլեալ էր, և որ սքանչելին է, զի ասէր եւս, թէ զգամ, զի 'ի ներքս կրծէ զփորոտիս իմ: Արդ՝ տես դու, թէ զի՞նչ արասցէ ճշմարիտ երեւակայութ՟ե չուառականացն, յորժամ որդն խղճի մտաց ն՟ց կրծեսցէ կծեսցէ զսիրտս ն՟ց : Ուստի թէ քաջ զննեսցուք, տեսցուք, զի կարողութ՟ք հոգւոյն սաստկագոյնս տանջեսցին մեղաւորք 'ի դժոխս :

2· Ընդ խստագոյնս տանջեսցի կամքն անվախճան իմն ատելութ՟բ, բարկութ՟բ, և անտանելի տրտմութ՟բ, որով նողկացի յինքենէ, յարարածոց, և 'ի հաստաչէն բոլորեցունց: Եւ միանգամայն ցանկացի անկարելեաց, և յուսահատեացի յամ̃ բարեաց: ուստի ասէ երանելին բեռնարդոս. Ո՛ր աղէտ տանջանաց քան զայս մեծագոյն գտանի. զ̃ի միշտ զայն կամիլ, որ ոչ երբէք լինի, և միշտ զայն չկամիլ, որոյ չլինելն է անհնարելի: Վա՜յ անհետ լիցի 'ի մեղաւորաց յոյսն, որով մարդիկ սփոփին յաստիս 'ի վիշտս իւրեանց. վ̃զի քաջ տեսանեմք, զի յոյս հանգստեան, և վարձուն զի բարեանալիս գործէ մշակաց զտապայն, և զցուրտ դաշտաց: զտքնութիւն, և զվէրս զօրականաց: զպահս, զքուրձս, և զդեռնուի շատուծս խոստովանողաց: Զչարաչար տանջանս. և զդահճաց խոշտանգանս նահատակաց: Այլ այս ամբարձցի 'ի մեղաւորաց: Վա՜յ անտանելի ցաւ է նց̃ կրել զայն ամ̃ դառնութի̃ տանջանաց յանօգուտս, և յանվարձս: Եւ այն զի 'ի միտ ածեն. թէ կրելով զդուղնաքեայս, 'ի կեանս իւրեանց ստանալ կարէին զերջանկութիւն անեզրական:

3. Ո՜վ որչափ վարանեսցին ցաւօք մեղաւորք, տեսեալ թէ բաղձելով մի անգամ միայն զկուրծս իւրեանց 'ի բեկեալ սրտէ անտի, կարէին ստանալ զերանութիւն անմահական. և ոչ մտանիլ յայն դառնութի̃ տանջանաց հրոյ, որ բոցակիզէ զնս̃. և անցանէ մինչև

ցորոշումն ոգւոյ և ուղղոյ. և ոչ կրել զայն աղէտ քաղցու, և զծարաւու, և զայն բովանդակ չարիս զհոգւոյ և զմարմնոյ, զայն լուծումն անդամոց, և զայն անշարժութիւն. որով չըկարեն կողմանէ 'ի կողմն փոփոխիլ: Ուստի ցանկացին մահու. բայց մահն փախիցէ 'ի նոցանէ: Եւ՛ տեսանել թէ յանօգուտս կրեն զայն ամենայն վիշտ, յուսակորոյս լիցին բոլորովին: Ա՛հանիկ յանհնարին յուսահատութեան յայսմիկ վերջասցի ամենայն յանդդնական յոյս մեղաւորաց: Չի լի է արդարև գեհեանն նոքօք, որք ոչ յուսային գնալ անդր: Եւ՛ լի է նոքօք. որք յուսահատեալ են զերծանիլ անտի: և զի մեղան յուսալով ոչ մեռանիլ 'ի մեղս, այլ առնել զապաշխարութիւն, վասն ունայնացեալք 'ի յուսոյ՝ անկցին յանդունդ յուսահատութեան:

4. Յիշողութիւնս եղիցի անդ 'ի դըժոխս դժնեայ, և չարաչար դահիճ մեղաւորին: Վասնզի զամենայն զոր գործեաց զչարս, և զբարիս՝ յիշատակեսցէ, և դարձցին նմա այնոքիկ 'ի դառնութիւն ցաւոց: Բարին, զի կորոյս զայն, և չարն, զի նովաւ մատնեցաւ 'ի տանջանս: Վ՟յ յիշատակեսցէ եղկելին, եթէ բիւր անգամ առնել կարէր զգործս բարեաց, որով հնար էր ժառանգել զարքայութիւն, իսկ նա գործելով զչարիս արժանի գտաւ

գեհեն հրոյն։ Աստի ասասցէ ցանձն իւր։ Ո՜վ քանիցս կարէի յաղօթս կալ, բայց յանէտ կամեցայ 'ի խաղս պարապիլ, և կորուսանել զժամանակն, զորոյ զպարտսն այժմ բռնադատիմ վճարել։ Քանիցս կարող էի ծոմապահել, իսկ ես որկորստութե̅ պարապեցայ։ Քանիցս յանառակութե̅ վատնեցի, զոր պարտ էի տալ աղքատաց։ Քանիցս խնդրեաց յինէն զթողութի̅ թշնամին, և ես ոչ ներեցի նմա, այլ վրէժս պահանջեցի։ Քանիցս պատահեաց ինձ առիթ առնել զապաշխարութ̅ի. և ես զանց արարի։ Քանիցս կրթել կարէի զանձն իմ 'ի խոնարհութի̅ և 'ի սէր, այլ ես մեծամտեալ 'ի վր̅ եղբարցս արհամարհէի զն̅ս̅։ Քանիցս կարող էի յաճախել առ ս̅բ խորհուրդս եկեղեցւոյ. իսկ ես չկամեցայ բառնալ 'ի միջոյ և զպատճառս մեղանչելոյ առ իս։ Վ̅յ իրաւամբք ունիմ զսոցին զբնաւ̂ից զպարտսն չարաչար տանջանօք վճարել։ Ո՜վ անձն իմ եղկելի. և անիծեալ. և չարասէր, որում ընդ անգամ դիպեցաւ̂ քեզ առիթ ծառայելոյ ա̅ծ, և դու անպտուղ արարեր զայն. տե՛ս, եթէ զիա՞րդ վ̅ն դուզնաքեայ հեշտութե̅ կորուսեր զանգին̂ բարութիւնս երկնից։ Այս ճշմարիտ է, զի թէ կամեցեալ էիր, կարող էիր լինել երջանիկ 'ի յաւիտեան։

եան : Եթէ կամեցեալ էիր · այժմ կայիր 'ի դասս հրեշտակաց և սրբոց : Եթէ կամեցեալ էիր, այժմ պարառեալ կայիր յանբաւ և յանվախճան քաղցրուէ արքայուե , Իսկ դու վս՟ վայրկենական հեշտուե, կորուսեր զայս ամ՟ : Ո՜վ յիմար , ո՜վ խելայեղ անձն իմ եղկելի : Աղաչէր և պաղատէր առ քեզ փրկիչն քո զերկինս խոստանալով · իսկ դու զնա անարգեցեր յղգս՟ անարգ և չընչին իրաց ծխս : Քոյ է յանցանքն, քոյ է պարտաւորութիւն , և քոյ է մեղադրութիւն · վս՟ իրաւացի է · զի դառնութե՟ պատժոց զպարտսդ վճարեցես : Ե՛ւ զի չախորժեցեր լինել ըն՟ ոյ երանեալ · զրկ՟ եղիցիս 'ի նմանէ, և 'ի հրեշտակաց նր՟ անբաժեալ :

5· Ե՛ւ եւս կարողութիւն իմացական, կա՛մ միտքն տանջեսցի 'ի տրամաբանութէ անտի իւրմէ, զի զայլ ոչ ինչ խորհեսցի , բայց եթէ զայնս , որք յաւելուն նմա զտանջանս : Ոչ քաղցրասցի անդ արիստոտէլ իմաստութե՟ իւրով: ոչ սենեքայ սփոփեսցի դիտութե՟ իւրով: Ոչ գալլենոս գտցէ զդեղ և զդարման իւրովք դեղօրէիւք : Ե՛ւ քաջ ռիտորականն , և իմաստուն աշակերտօքն օգտեսցէ իւր ճարտասանական մակացութե՟: Պատմեն , թէ վրդպ ոմն· քաջ դիտնական երևեցաւ զկնի մահուան եպիսկոպոսին փարիզու · և ծանոյց նմա · թէ մատնեցայ 'ի հուրն անշէջ։ Եհարց ցնա եպիսկոպոսն և ասէ։ Զի՞նչ իմանաս դու անդ 'ի դժոխս. և մի՞թէ գուցէ՞ անդ գիտութի՟։ Եւ պ՟խնի ետ և ասէ, ոչ ինչ գիտեմ, և ոչ ինչ իմանամ անդ՝ բաց յերից աստի. նախ՝ գիտեմ դատապարտեալ զանձն իմ 'ի հուրն անշէջ։ Երկրորդ՝ թէ վճիռն որ վ՟ իմ հատաւ, է անհրաժեշտ, և անփոփոխ։ Եւ երր՟դ՝ գիտեմ զայս, զի վ՟ հեշտութե՟ մարմնոյս, և դիւրութե՟ կենցաղոյս, զրկեցայ 'ի տեսութենէ այ՟։ Եւ ապա ինքն եհարց ցեպ՟սկ՟պսն և ասէ, ասա՛ աղաչեմ. եթէ դեռ շէն է աշխ՟, թէ ոչ։ Ասէ ցնա եպ՟կսն, և զի՞ խնդրես իմանալ զբանդ զայդ։ Եւ նա պ՟խնի ետ՝ և ասէ. յաւուրս յայսոսիկ այնչափ հոգիք իջին 'ի դժոխս. մինչզի թուէր ինձ, թէ վերջացաւ աշխ՟, և ոչ ևս դատանին այնչափ մարդիկ 'ի վ՟ երկրի, որչափ իջին 'ի դժոխս։

6. Արդ՝ 'ի կարողութե՟ յայսմիկ, այ՟ 'ի միտս ծնցի որդն խղճի մտաց, զոր ամենայն տառք յառաջագոյն յիշատակեն քան զտանջանս հրոյն աւելով. Ուր որդն նց՟ ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի։ Եւ այնչափ խիստ և սաստիկ է տանջանք խղճի մտաց, մինչզի Քս՟ Տր՟ն մեր 'ի միում և եթ կարճառօտ խօսակցութե՟ ընդ աշակերտսն, երիցս սպառնացաւ մեղաւորաց զայս աղէտ տանջանաց, այ՟

զանմահ որդանց զկրծումն ասելով. որդն նց ոչ մեռանի. և հուրն ոչ շիջանի. զի սա է՝ որ զսիրտս նց կրծեսցէ յաւիտենական ժամանակաց, և խստագոյնս չարչարեսցէ զնս։ Ուստի ասէր երանելին Օգոստինոս. Թէ չար խիղճ մտացն նաև յաւէտ կեանս է մեծագոյն վիշտ հոգւոց մեղաւորաց քան զամ վիշտս նց։ Զի է ասէ, մեծագոյն պատիժ ինքն ինքեան։ Տե՛ս դու ինձ, թէ որչափ խիստ և անհնարին աղէտ դառնութեան է ստիպել զհայր ոք լինել առաջիկայ մինչ կախեն զորդին։ Բայց խստագոյն է, եթէ հարկեսցեն զնա լինել դահիճ որդւոյն իւրոյ։ Այլ խստագոյն ևս է, եթէ կապեսցեն զկախաղանն հանդէպ դրան նր կախեալ ՚ի վր նր զորդին, ամգի յելս և ՚ի մուտս իւր տեսցէ հանապազ զտեսիլն զայն ցաւագին։ Իսկ մեծագոյն անդթութիւն քան զասացեալս է. եթէ ստիպեսցեն զնոյն ինքն զպարտաւորն լինել դահիճ անձին, և ստիպեսցեն, զի ատամամբք իւրով յօշեսցէ զմարմին իւր ուտելով։ Այս է առանձին անդթութիւն և դժնէութիւն չար խղճի մտաց, որով մեղաւորքն յայն բոց անեզրական հրոյն կրծեսցեն զանձինս, և դառնադառն լլկեսցին ՚ի խղճէ մտաց։

7. Յաւելցի և բարդեսցի ՚ի վր տանջանաց մեղաւորաց և ցաւ նախան֊

ձուն, յորժամ տեսցեն զմ՟րսն ժառանգել զերկնից արքայութիւն փոքու իմն աշխատութ՟բ, զոր ինքեանք կորուսին փոքու իմն հեշտութ՟բ. ուստի հաշեցին և մաշեցին ընդդէմ նց՟: Ո՞վ պատահեաց այս եսաւայ, զի իբրև լուաւ եթէ յակոբ եղբայր իւր էառ զօրհնութի՟ն նր՟, գոչեաց 'ի նախանձու և 'ի յուսահատութ՟է իբրև զառիւծ, հաշեալ և մաշեալ անտանելի տրտմութ՟բ: Ապա զի՞նչ եղիցին, և զի՞նչ կրեսցեն մեղաւորք, յորժամ տեսցեն, թէ զօրհնութիւն, զոր ինքեանք թողին, այլք ժառանգեն, և զայն միայն անմտութ՟բ իւրեանց, և ոչ եթէ արդարք նենգութ՟բ յափշտակեցին 'ի նոցանէ:

ԳԼՈՒԽ. Ժ:

Յղ՟գս յաւ՟տենական մահուան:

Մահն յաւ՟տնին դատապարտութե՟ կոչի յա՟ծային գիրս՝ մահ երկրորդ. վ՟զի զհետ երթայ այլում մահու, որ է մահու մարմնոյն, զի յետ մարմնաւոր մահու մեղաւորաց, զհետ գայ մահն դատապարտութե՟. յայն սակս կոչի մահ երկրորդ:

եկրորդ: Այլ սակայն է մահ կենդանի, և մահ կրկնակի. կամ կրկնակ: Քանզի 'ի մահու անդ յաւիտենականն դատապարտութեան կրելով մեղաւորն զպատիժս, միշտ մեռանի. և է կենդանի, և որպէս չիք դժնդակագոյն քան զմահն, այնպէս չիք վատթարագոյն ինչ քան զմահ դատապարտելոց. զորմէ ասէ երանելին Օգոստինոս. Չիք մեծագոյն և յոռեգոյն մահ, քան ուր ոչ մեռանի մահն: Եւ երանելին Գրիգորիոս ասէ. 'Ի գեհենի լինի եղկելի մահն առանց մահու. վախճանն առանց վախճանի, վասնզի անդ մահն կենդանի է, և վախճանն միշտ սկսանի, Եւ դարձեալ կրկնակի է մահն 'ի գեհենի. զի դոյ անդ մահ մեղաց. և մահ տանջանաց: Դոյ մահ մեղաց, զի ճշմարիտ մահ հոգւոյ է մեղքն, և ահա 'ի նմին անկեալ մնան 'ի յաւիտեան դատապարտեալքն: Եւ զի մեղքն է անհուն չար, և ծայրագոյն տգեղութիւն. վասն այն և դժնէագոյն է մահ մեղաց 'ի դժոխս քան զհուրն մշտնջենական: Դոյ և մահ տանջանաց. Քանզի զի՞նչ կայ այլ պատիժ մեծագոյն, քան զպատիժն, որ տուեալ լինի վասն մեղաց. վասն գեհեանն բովանդակ լինելով պատիժ մեղաց. է մեծագոյն քան զամենայն մահ: Եւ ահա այս է մահ տանջանացն 'ի դժոխս: Ո՛վ որչափ դեր 'ի վերոյ անցանէ արդարութիւն դատաստանաց տեառն քան զմարդկան, և ո՛րչափ խստագոյն է պատիժն տանջելոյ քան զտանջեալն ՚ի մարդկանէ. որովհետև պատիժ մահուն, զոր դատաստան մարդկային իբրև զմեծագոյն քան զամ ինչ տայ նց, զորս դատապարտէ, է դատապարտելոցն առ յայ ուխտիւք բաղձալի, զի ցանկասցին մեղաւորք մահու, և ոչ գտցեն: Արդ՝ եթէ ՚ի մտածելն միայն, թէ չիք մահ, կմ զրաւ ՚ի դժոխս՝ ո՛չ տանջանացն, և ո՛չ տանջելոցն, այսչափ զարհուրեցուցանէ, զի՛նչ եղիցի ապա ը փորձ նց անցանելն:

2. Ճառի. Թէ այր ոմն եղեռնագործ յայտնեաց յաւուր միում զմեծամեծ եղեռն անօրէնութեց իւրոյ սուրբ կուսին լիգորինայ: Բայց տեսեալ սբ կուսին եթէ չունէր նշան ինչ զղջման, ասէ ցնա, ես ապաշխարեցից վն քո եղբայր, միայն թէ դու զայս գիշեր ՚ի ննջելդ յանկողնի, մի՛ փոխեսցես կողմն ՚ի կողմանէ մինչև ցառաւօտ. այլ ոպ ընկողմնեսցիս ՚ի սկզբան, այնպ մնասցես: Իսկ այրն ծիծաղելով ասէ ցնա. եթէ այդ միայն լինէր քո՛յր, ապաշխարութն իմ, և չունէի առնել զայլ ինչ. վաղվաղակի արդեօք կատարեալ էր իմ խստութն ապաշխարութեմ: Այլ սակայն թէպէտ ծաղր արար զբանն նր, բայց իբրև եմուտ յանկողին, յիշեաց զբանն նր. և կամե-

ցա՜ւ կատարել: Եւ՜ ահա դեռ չէր անցեալ ժամ մի, կամէր դառնալ ՚ի միւս կողմն, զի տառապէր մնալ միշտ ՚ի մի կողմն, և թուէր նմա, թէ չէր երբէք մնեալ յայնպիսի անկողնի կարծրագոյն: Ո՞վ սկսա՜ւ ասել ցանձն իւր, անկողինս իմ փափուկ է. և ես առողջ և կորովի եմ, արդ զի՞նչ պակաս է ինձ. ոչ ինչ, եթէ ոչ դառնալ ՚ի միւս կողմն: Այլ համբե՛ր անձն իմ մինչև ցառաւօտ: Եւ՜ ապա զմտա՜ւ ածեալ զյա՜ւիտենականութիւն, սկսա՜ւ խոկալ և ասել. Զի՞ է քեզ, զի ոչ կարես զգիշեր մի կալ հանդարտ յանկողնի, և համբերելն թուի քեզ տանջանք, և տառապիս յոյժ, ոչ կարելով դառնալ կողմն ՚ի կողմանէ: Ապա զի՞նչ լինէր քեզ, եթէ գերիս, կամ զօրս գիշերս միմեանց զկնի անշարժ պառակէիր: Մահ էր այն քեզ ստուգի՜: Ոչ կարծէի երբէք. թէ իցէ այսպիսի դիւրինս տանջանք մեծագոյն: Ո՞վ թշուա՜ռականիս, թէ որչափ փոքր է համբերութիւն իմ, որովհետև տագնապիմ վ՟ս չնչին և փոքու նեղութե՟: Զի՞նչ լինէր, եթէ հարկէին զիս կալ անքուն ՚ի բազում եօթնեակս: Եւ՜ զի՞նչ լինէր. եթէ անկեալ կայի ՚ի ցա՜ւս ոսկերացն խորտակման, կա՛մ յախտս միզարգելութեն, և կա՛մ յախտ ծիւրականն: Այլ ծանիր անձն իմ եղկելի. զի չարչարան-

քա՜ւս

բաւս դժնդակագոյն քան զայսոսիկ քեզ ապառնալ մնան 'ի գեհենի, ուր դիմեալ դնաս բազմութ՟ մեղաց քոց։ Տե՛ս եթէ որպիսի մահիճ պատրաստեալ կայ 'ի տարտարոսն անդնդոց, կամ որ անկողին 'ի յընտիր վշոյ, և կամ որ պատուանդրեալթել մանելոյ։ Անկցիս, պառակեցիս, և դիցիս 'ի վե՛ր հրացայտ խանձողաց, և ծածկոյթ քեզ եղիցի ծծումբն։ Տե՛ս եթէ վա՟ միոյ և եթ գիշերոյ լինելոց է անկողին քո այս, թէ վա՟ անանց յաւիտենկնութե՟, յորժամ անկեալ կայցես անշարժ, և անկար դառնալոյ կողմն 'ի կողմանէ։ Աղէ՞ փոխեա զվարս քո, և սկիզբն արա ծառայել արարչին քում։ Զայս այսպ՟ խորհեցաւ, հաստատեաց 'ի միտս իւր, և սկսաւ 'ի գործ դնել։

Յօդուած. Է։

Այլ նմ՟ պատմոցս այսոցիկ յարակցեացի և պատիժն համեմատ չափու անօրէնութե՟, զոր վերադոյնդ 'ի թիւս պատմոց յիշատակեցաք. որ և տիրապ՟ գտանի անդ 'ի դժոխս. ոպ՟ ասի 'ի տեսլեան. Որչափ փառաւորեցաւ զինքն, և եղև 'ի գրգանս. այնչափ հատուցէք դմա սուգս և տանջանս։ Յայտ. 18. 7.)

28. 7.) Արդ՝ առ՚ի ցուցանել զայս՝ առաջի մատուցուք զօրինակ մի հազիւ՜ հազ լուեալ, որով՚ի միտ առցուք, թէ զիարդ հեշտութիւնք և զուարճութիւնք ծիս պատժին անդ ՚ի գեհենի համեմատ տանջանօք : Պատմէ կանտիմպրատենսէս՝ թէ յաշխարհին գերմանիացւոց էր զօրական ոմն այր քաջ և կորովի, և ըղձակերտ յոյժ ՚ի ձիընթացս, այլ անառակ յոյժ կենաւս իւր: Մեռաւ սա ՚ի չարիսն, և կին նր̃, որ էր սրբակրօն և ճշմարիտ աղախին այ̃, ետես ՚ի տեսլեան զայր իւր ոպ̃ էր մինչդեռ կենդանին էր ՚ի մարմնի և այսու ծանեաւ զթշուառութիւն նր̃ . քզի ետես շրջապատեալ զնա բազմութ̃ դիւաց . ետես, զի իշխանն դիւաց պատուէր տայր արբանեկացն, և ասէր, ագուցէք դմա, որ նորոգ հիւր եկն առ մեզ՝ զբաճկոնդ շղթայագործ զցցեալդ սրածայր սուսերօք . անդէն խոց ձնացէ մարմին դորա յամ̃ կողմանց, և ապա հրամայէր դնել ՚ի գլուխն, զսաղաւարտ երկաթի որ ունէր ցցեալ զսուր երկայնատուր ՚ի միջի . և իբրև եդին զայն ՚ի գլուխ նր̃, մխեցաւ սուրն, և հասանէր ՚ի գլխոյն մինչև ցոտսն : Եւս հրամանն տայր կախել ըզ պարանոց նր̃ զվահան մեծ և ծանր, զի ճմլեսցին անդամքն ՚ի ծանրութենէ նորին : Եւ զայն հրամանն իշխանին խաւարի, իբրև վաղ

վաղակի կատարեցին, ասէ ցնա: Քանզի սա 'ի կենդանութեան դինի ձիընթացիկ լինելոյն, մտանէր փափկանալ յանուշահոտ բազմանիս, և յետ այնորիկ ելանէր յանկողնին փափուկ, և հեշտանայր շօշափմամբ դարշունց. վսն՟ տո՛ւք դմա այժմ ճաշակել զերկրութիս, որք աստ գտանին: Եւ՝ ահա նոյնժամայն խորովէին զնա 'ի բոց հրոյ գեհենին, և առ'ի թեթևանալ վայր մի 'ի վշտայն, դառնացուցանէին զնա 'ի վր՟ հրաբորբոք երկաթեղէն մահճի. ուր ընկողմնեալ կայր զազրատեսիլ գորտ մի մեծ ը՟ չափու մահճին, և ունէր զաչս սարսափելիս և տռակալիս, և ստէպ ստէպ հայեցեալ առ եղկելին զօրականն, յարձակէր 'ի վր՟. փարէր զնովաւ, համբուրէր զնա, և չարաչար լկէր, և այս էր դառնագոյն 'ի մէջ ամ՟ տանջանացն՝ զոր կրէր եղկելին, և դժնդակ էր նմա այն քան զամ՟ մահ դառնադառն: Իսկ երանելի կողակից նորա՝ որ ը՟ խնամոցն այ՟ եսեա զամ՟ դառնութե՟ տանջանաց առն իւրոյ. սոսկացաւ յոյժ. և անջնջելի պահեաց 'ի մտի զյիշատակ այնր տեսլեան զամ՟ աւուրս կենաց իւրոց հանդերձ անպատմելի ցաւօք սրտին: Երկի՛ր արգեօք և դու յահեղ դատաստանաց արդարութե՟ այ՟, և դիր հաւատեաւ 'ի մտի, թէ զորչափ հեշտութիս զգայեք 'ի մեղս, զայնչափ խստագոյն պատիժս կրելոց է 'ի գեհենի:

* * *

ԳԼՈՒԽ. ԺԱ։

Պտուղն, զոր հաւաքել պարտիմք 'ի խոկմանէ անտի յաւիտենին չարեաց:

Որ ինչ ասացաք յաղագս տանջանաց գեհենին է սակաւ առ համեմատութեան այնր իմի, որ են յինքեանս: Քանզի յոյժ զանազան է արդեամբք ընդ փորձ գործոյ ինչ անցանել, քան զնմանէ պատմել: Ահանիկ՝ որք զմակաբէիցն էին, թէպէտ և գիտէին զպղծութիւն և զաւեր տաճարին, թէպէտ և ողբային զայն, սակայն ոչ այնպէս ուժգին, որպէս յորժամ աչօք տեսին զսրբութիւնն աւերեալ, և զսեղանն ապականեալ, զդրունսն այրեցեալ, զվարագուրաձիգսն խաթարեալ, և միայն սրբութիւն սրբութեանցն մնացեալ: Ձեռս զօձեօք արկանէին, զպատմուճանս պատառէին, հող 'ի գլուխ լինէին. ընդ երկիր թաւալէին, յարտասուս հարկանէին, և ցաւագին յերկինս աղաղակէին: Արդ՝ թէպէտ այս այսպէս է․ այլ ատկայն խորլին, և ուժգին խոկումն դժոխոց է յոյժ օգտակար ։ Վ՟ որոյ ասէ երանելին բեռնարդոս. Աղէ՞ իջցեն այժմ ('ի դժոխս առ կենդանութ՟)․ զի մի՛ իջցեն անդր 'ի մահուան ։

շ. Այլ գլխաւոր պտուղք խոկման անվախճան տանջանաց կարեն լինիլ այսոքիկ ։ Առաջինն է սէր ծայրագոյն, և գոհութի՟ մեծագոյն առ ա՟ծ յղ՟գս այնորիկ, թէ գթացաւ՝ 'ի մեզ և ոչ եթող անկանիլ 'ի դժոխս հրոյն վ՟ս մեղաց մերոց, որովք բազում անգամ արժանի գտաք այնմ։ Ասա՛ ցիս, զո՞ր երախտիս մատուցեր դու ա՟յ յղ՟գս այնորիկ, ՟ թէ մեղանչելով քոյ բիւր անգամ աւելի քան զբազումս 'ի դատապարտելոց, 'ի գործ էած տ՟ր առ քեզ զողորմութի՟, և առ նս՟ զարդարութի՟։ Տե՛ս թէ զո՞ր անբաւ երախտիս մատուցանէր այդ դատապարտելոց, եթէ հանէր զնս՟ ա՟ծ 'ի տագնապէ բոցոյ դժոխոցն։ Տե՛ս թէ ո՞րպիսի զաքաւարէր առ յապայն․ զո՞ր ճգանս ապաշխարութե՟ ոչ յանձին բերէր․ և զիա՞րդ իբրև թոյնք մահաբերք՝ երևէին նմա ա՟մ հեշտութիք կենցաղոյս ։ Արդ զի՞նչ ունիս ասել․ մի՛ թէ փոքր բարեգործութե՟ շնորհք են առ քեզ ոչ թողուլն զքեզ անկանիլ անդր, քան թէ հանել զքեզ վերածելն ։ Ոչ՟ եթէ իցեն երկու պարտապանք, որոց միոյն պարտի դահեկանս տասն բիւր, և միւսն հազար. ո՛չ ապաքէն մեծ է բարեգթութիւն պարտատեառն առ առաջինն, որում ոչ միայն շնորհէ զպարտսն, այլև ոչ մերժէ մինչև ցմազ մի հանդերձից նորա, քան թէ առ երկրորդն, որում թէպէտ թողու զպարտսն, բայց նախ 'ի բանտ արկանէ զնա, 'ի շղթայս պնդէ, և սովու և ծարաւու լլկէ:

3. Երկրորդ պտուղն՝ զոր պարտիմք քաղել և կթել 'ի խոկմանէ անտի գեհենին. է անպարտելի իմն համբերութիւն, որով կամակար մտօք բարձցուք զամենայն դառնութիւն վշտաց կենցաղոյս՝ առ 'ի ոչ անկանիլ 'ի չարչարս հանդերձեալ կենաց: Երանելի աւետարանիչն Յօհաննէս յետ ասելոյն. թէ ծուխ տանջանացն դատապարտելոց ելցէ յաւիտեանս յաւիտենից. և ոչ հանգիցեն 'ի տուէ և 'ի գիշերի, 'ի վերայ եբեր, և ասէ. Ե՛ համբերութիւն սրբոցն աստ է: (Յայտ. 14. 12:) Վասնզի տեսանելով սրբոցն Աստուծոյ, եթէ ամենայն վիշտ կենցաղոյս անցանէ 'ի ձեռն ժամանակի. և տանջանք հանդերձելոյն կան մնան յաւիտեանս յաւիտենից, զամենայն նեղութիւն փոքր համարէին: Վասն որոյ և սուրբ առաքեալն յորդորէ և խրատէ զմեզ տանիլ համբերութեամբ զամենայն դառնութիւն պատժոց մերձակայիս խոկմամբ յաւիտենականին: Ա՛ղէ և մեք փոր-

ձիւ՛ փոքրագունիցս՝ 'ի մէջ ածցուք զմեծամեծս : Ուստի եթէ մտեալ 'ի բաղանիս, կարի խիստ ջերմանաս, մինչև խնդրես զզով տեղիս, յայնժամ 'ի մէջ ած զանտանելի ջերմութն գեհենին : Եթէ տեսանես սաստկագին՝ կիզու զքեզ ուժգին, 'ի մէտ ած յայնժամ զբոց գեհենին : Եւ՛ ասա ցանձն քո, եթէ բաղանիքս ջերմին և տենոս սաստիկ՝ նեղեն զմեզ այսպ ուժգին, զի՞նչ եղիցի մեզ ապաքէն. եթէ անկցուք յայն

յորձանս ահագին հրոյն :

4. Երրորդ պտուղն զոր պարտիմք կթել 'ի խոկմանէ գեհենին է արհամարհել յիշատակաւ չարեացն հանդերձելոյն զամ բարիս կենցաղոյս : Քանզի ամ վայելչութն, և ամ ինչ աշխարհիս երազ է, և սուտ պաճուճանք. ամ փարթամութն աղբ է և կղկղանք. ամ պատիւն նախատինք է և անարգանք և ամ քաղցրութին լեղի է դառնութե, եթէ ոք յետ աստեացս անկցի 'ի հուրն յաւիտենական : Ո՞վ է, որ 'ի մէտ ածեալ զայն օր աղէտից կայսեր մաւրիկոսի. յորժամ երկոքին որդիք, և երկոքին դստերք. և կին նր սպանան առաջի նր. և հուպ է հուպ նաև ինքն հրամանաւ անօրէն, և անարգ ապստամբի միոջ սպանաւ, ոչ ասասցէ, 'ի միտս իւր թէ նա չհամարեաց ունայնութն զքսանամեայ փառս մեծութն, և

իշխանութե, որում տիրեաց Տի : Թէպէտ տանջանք նորին չեղեւ մշտնջենական, զի մեռաւ թողեալ զմեծ յոյս փրկութե հոգւոյն : Արդ՝ եթէ մեծագոյն բարեբախտութի Տիս յետ քսանամեայ տեւողութե, եղծաւ, լուծաւ և կործան անկաւ 'ի միոյ ևեթ օրէ, ապա զի՞նչ արասցէ ոչ միամն · կմ բիւր ամն տանջանաց, այլ յաւիտենականութին անհատանելի, և անըմբռնելի : Ո՞վ է, որ տեսեալ զփափկակեացն և զհեշտասէրն եղիոգաբաղոս յետ ամ հեշտախտութեց և փափկութեց իւրոց՝ խողխողեալ, և ընկեցեալ յաղտեղի և 'ի նեխեալ աղբեւս · և անտի արկեալ 'ի տիբերիս գետ, մեծ ինչ համարեսցէ զամ բարեբաստութիս իւր : Ա՞զէ հայեաց 'ի յեղիոգաբաղոս, որ թաղեալն է այժմ յանդունդս դժոխոց, և լլկի չարաչար 'ի դիւաց · և ընկղմեալ կայ յայն լիճ ծծմբոյ ը ամ յաւիտեանս, և տես եթէ զիա՛րդ ոչինչ են երկուամքն, և փոքր ինչ աւելի, յորս եկաց ինքնակալութին նր առ բիւրաւոր ամօքն յաւիտենականութե, յորս միշտ լիցի լինել խստատառապութե տանջանօք : Ո՞չ տեսցի արդարև այլ ինչ լինիլ նշուլից նորին երջանկութե, եթէ ոչ իբրև վառեալ օդապայթիկ ինչ · որ 'ի շարժիլն և 'ի բարձրանալն, թէպէտ արձակէ բիւր շողշողիւնս լուսոյ իբրև զարփի լուսապայծառ, բայց յական թօթափել յաճիւն դառնայ՝ և 'ի ծուխ սակաւ ինչ թղթոյ ։

5. Չորրորդ պտուղն, զոր ունիմք կթել 'ի խոկմանէ անտի դեհենին՝ է չթողուլ զժամանակն անցանել ը͞ ունայն, և անպտուղ։ Քանզի խոկալով, թէ յանօգուտ կրեն դատապարտեալք զանձինս դեհենին 'ի յաւիտեան, զուն գործեսցուք ոչ թողուլ զվայրկեան մի ժամանակի անցանել առանց քաղելոյ և կթելոյ մեզ օգուտ ինչ յայնմանէ ։ Պատմէ Պետրոս հռեգինալդոս. թէ միայնակեաց ոմն սբ͞ մինչդեռ յաւուր միում կայր յաղօթս, լուաւ զձայն ողբոց և ցաւագին հառաչանաց ։ Եւ եհարց միայնակեացն և ասէ. ո՛ ես դու, որ հառաչես այդպ͞, և զմէ՞ ցաւես դառնապէս ։ Պատասխանի ետ ձայնն և ասէ, ես եմ հոգի մի 'ի դատապարտելոց անտի ։ Եւ միայնակեացն ասէ, և զի՞ ողբաս դառնագին ։ Եւ ձայնն կրկնել անդրէն ասէ. ես, և որք ը͞ իս են հոյլք դատապարտելոցս չտանջիմք յայլ ինչ իրէ այնչափ խստագոյն, որչափ յիշատակէ անտի ժամանակին, զոր մեղօք մերովք կորուսաք ։ Տեսանե՞ս զեղկելեան զայնոսիկ որք կորուսանելով զդուզնաքեայ զայս ժամանակ՝ կորուսին զժամանակս անբաւ

յաւ̂իտենանց: Ապա և մեք մի՛ կորուսցուք այժմ ունայնութե̄ և հեշտութե̄ զայն, զոր ոչ կարեմք ողբովք և ցաւ̂օք գտանել առյապայն: Ողբասցուք այժմ զմեղս մեր առ՚ի շա՛հ հոգւոց մերոց, զի մի՛ ողբասցուք յետոյ յանշահս զպատիժ յանցանաց մերոց:

Ե. Իսկ հինգերորդ պտուղն մեծ, և կարի կարևոր, զոր ունիմք կթել ՚ի խոկմանէ անտի գեհենին, է անհաշտելի իմն ատելուի̄ ը̄դէմ ա̄մ մահուչափ մեղաց. տեսեալ թէ սովաւ̂ անկանիմք յայն դժնդակ չարիս տանջանաց: Վ̄զի սոսկալի իմն է մեղքն, և ահարկու յոյժ, որովհետև չկարէ ջընջիլ անեղրական բոցով գեհենին: Վ̄ այն և խնդրէ զխոկումն երկայնաձիգ և լայնածաւալ, ո̄պ տեսցուք վաղվաղակի:

ԳԼՈՒԽ. ԺԲ.

Յղ̃ս անհուն մեծութէ մահուչափ մեղաց . որով զրկեցին անեզրական բարեաց երկնից արքայութէ , և գրաւեն չարեաց անվախճան գեհենին :

Այնչափ գազիր և տգեղ և անիծեալ է այլանդակ չարութիւն մահուչափ մեղաց զոր գործեն մարդիկ 'ի մի կէտն առ 'ի գնել զթշուառութիւն յաւիտենից բոպէական իմն հեշտութբ . մինչզի արժանի է սոսկալի և անվախճան տանջանաց գեհենին ը̃ ամյաւիտեանս . Թէպէտ ոմ̃ ասեն ինծաքանք, և ոչ սակաւ լինի ը̃ արժանին պատուհասել : Որոյ պատճառն է . զի այնչափ ծաւալեալ տարածի չարութիւն սորա , մինչզի համեմատի տարածութեան անչափ և անսահման չարեաց և թըշուառութեանց : Զի զինչ է պատիժ դժոխոց առ մահուչափ մեղօք . Եթէ ոչ ստուեր իմն առ մարմնով . ուստի այնչափ զանազանութիւն է չարութեան մահուչափ մեղաց 'ի չարեաց պատժոյն դժոխոց , որչափ է մարդոյն առ իւրն ստուեր :

Քանզի ճշմարիտ չար միայն մեղքն է. և առ համեմատութ̃ն յաւիտենականին հուր գեհենի է միայն ստուեր իմն չարի, և այն զի պատիժն այն ը̃ որում գործիք և սպասաւոր ա̃ծային արդարութե՝ բարի ևս է:

2. Արդ՝ ոչ 'ի ստուերէն իմացեալ ճանաչի մեծութե̃ն մարմնոյ, այսպէս տես դու ինձ, թէ որչափ մեծ և ահագին չար է մեղքն, որովհետև իբրև ստուեր իմն է ն̃ր չար գեհենին: Եւ դրձ̃լ երևի մեծութի̃ մեղաց աստուստ. զի է ծայրագոյն արհամարհումն ա̃յ: Զի ո՞վ ոչ գիտէ, թէ որչափ մեծ է անձն արհամարհեալ, այնչափ մեծ է և արհամարհանքն. և զի անհուն է մեծութի̃ ա̃ծեղէն փառացն, որ մեղօք անարգի, վ̃նկ և մեղքն որ զնա արհամարհէ, է անհուն: Ահաւասիկ մեծ համարի առ մարդիկ յանիրաւս արհամարհիլն, քան իրաւամբք պատուհիլն: Ո̃ք մեծ է ապտակահար լինիլ փառաւոր իշխանի միոջ 'ի ռամիկ առնէ, քան զն̃ր փառաւորիլն յա̃մ ժողովրդենէ առ հասարակ: Վ̃նկ չէ ամենևին զարմանալի. թէ մեծ իցէ մի միայն մահուչափ մեղք արարեալ ը̃դէմ ամենակալ արարչին, և անհուն էին քան զա̃մ պատիւ մեծարանաց, զոր ա̃մ հրեշտակք և արդարք մատուցանել կարեն նմա: Ուստի և այնչափ

սուտոկալի է չարուն մահուչափ մեղաց, մինչդի անհնարին է, թէ արդիւնք լոկ ստեղծուածոյ բաւական իցէ արժանաւ̃ վճարել պարտուն զայն, և ընդունիլ զթողուն̃:

3. Գիտուք, թէ չէ եղեալ յաշխարհի մեղքն ադամայ, որ զմարդկայինս բնուի̃ առ հասարակ ապականեաց: Ոչ մեղքն դաւթի, և ոչ առաքելոյն պօղոսի, ոչ մեղքն սբ̃յն օգոստինոսի, և ոչ մարիամու մագդաղենացւոյն. ոչ մեղքն մարիամու եգիպտացւոյն, և ոչ մեղք այլ մարդկան, կամ հրեշտակաց. այլ մի միայն մեղք մահուչափ փոքրիկ 'ի մէջ բնաւից՝ արարեալ յառնէ միոջէ յանբնակ վայրի, և այն միայն խորհրդով, և առանց վկայելոյ. և սակայն այսու ամ̃իւ այնչափ է մեծուն̃ այս մեղաց. մինչդի ոչ ինչ դժնդակ տանջանք ստեղծուածոյ բաւեն վճարել ա̃ծային արդարուն̃. զո՞ր թէ յղ̃ս այնր մեղաց լուծցէ և եղծցէ ա̃ծ զերկինս ա̃մ. թօթափեսցէ զաստեղս իբրև ըզտերև, սպառեսցէ զհամատարածն զովկիանոս. աւերեսցէ զտարերս բովանդակ, յառաջին դարձուսցէ զմարդիկ հրեղէն շանթիւք. յերկնից 'ի խոնարհ արկցէ զհրեշտակս ա̃մ, և 'ի չիք դարձուսցէ զա̃մ ինչ, ոչ բաւեն լինիլ զուգահաւասար վճարք ա̃ծային արդարուն̃: Վ̃զի այս ա̃մ աւեր երկնի

և երկրի, կատարած ա՟մ մարդկան, և կործանումն ա՟մ դասուց հրեշտակաց է հունաւոր ինչ, և կոչարաւ սահմանեալ· իսկ արհամարհեալն, որ է ա՟ծ, է անհուն և անչափ: Եւ զի չիք բաղդատութի հունաւորին առ անհունն, վ՟ն այնորիկ չիք համեմատութի 'ի մէջ պատժոց ա՟մ արարածոց, և 'ի մէջ մեղաց ընդդէմ ա՟յ գործեցելոյ: Եւ դրձլ թէև ա՟մ նահատակք ընծայեսցեն ա՟յ զիւրեանց տանջանս և զվիշտս զա՟մ· և խոստովանողք զիւրեանց ճգունս զապաշխարուե, նաև նոյն ինքն մայրն ա՟յ լուծցի բովանդակ յարտասուս, և ընծայեսցէ զարդիւնս իւր զա՟մ ա՟յ, ոչ կարեն ընդունիլ առ յա՟յ զթողուի այնր մեղաց: Այլ միայն որդին ա՟յ կարէ վճարել զպարտն զայն արժանաւ՟պ: Արդ 'ի միտ ածցեն զայս մարդիկ, ո՟ք զծանրութի անարգանացն ա՟յ, և սոսկասցին 'ի խոկալն, եթէ կարող են մեղանչել:

Յօդուած Բ՟:

Ցուցցուք բացայայտեսցուք ևևս զարհամարհութի՟ն որ լինի առ ա՟ծ մահուչափ մեղօք ոչ միայն յիակութէ մեղաց, այլ նաև 'ի պարագայից որք զուգընթաց լինին նմա: Արդ՝ թուլէս, որում զհետ գնայ ա՛յն Թովմաս, և այլ ճարտաբանք, յառաջբերեն զեօթն պարագայս, յորոց բարոյական գործք առնուն զտեսակ և զտարբերութիւն, և են այսոքիկ. առաջին՝ ո՛ է որ զայն գործէ։ Երկրորդ՝ զի՛նչ գործէ։ Երրորդ՝ ո՛ւր գործէ։ Չորրորդ՝ ո՛ր նպաստիւք գործէ։ Հինգերորդ առ ի՛նչ վախճան գործէ։ Վեցերորդ՝ որով եղանակա՛ւ գործէ։ Եօթներորդ՝ երբ գործէ։ Եւ յաւել այսոցիկ արիստոտէլ զութերորդն. որ է, շուրջ զորո՛վ գործէ։ Ապա եթէ գործողութիւն վերաբերցի առ անձն մի երրորդ. յայնժամ մտածի և այլ իմն պարագայ, որ է ընդդէմ ո՛րոյ գործէ։ Աղէ նկատեսցուք այժմ, եթէ զհա՛րդ Ը իւրաքանչիւր պարագայիցս այսոցիկ լինի մեղքն զարշելի՝ զազիր, և սոսկալի։ Զառաջինն եթէ նկատեսցուք, թէ ո՛ է, որ զայն գործէ, տեսանեմք զի է մարդ 'ի յետին անարգաց, և մարդ ամենաթշուա՛ռ, որ համարձակի ձեռն ամբառնալ ընդդէմ արարչին իւրոյ, եթէ տակաւին մեծ էր, զի որ անարգէրն զնա, լինէր անձն ոք անհուն և հաւասար նմա, ապա զի՛նչ լինիցի, յորժամ որ անարգէն զնա, է տիղմն աղտեղի, նեխումն ապականութեան, և աղբ զազրութեան։

2. Այլ տեսցուք և զերկրորդ պարա-

դայն․ դ՟ թէ զի՞նչ առնէ մեղաւո՛րն, յորժամ մեղանչէ: Ասեմ, թէ ա՟ երանելոյն Անսելմոսի կամի բառնալ զթագն զիշխանական ՚ի գլխոյ տ՟ն, և դնել ՚ի գլուխ իւր․ բ՟ սբ՟յն բեռնարդոսի՝ կամի սպանանել զնոյն ինքն զա՟ծ․ և գ՟ առաքելոյն պօղոսի կամի առ ոտն կոխել, և վերստին ՚ի խաչ հանել զորդին ա՟յ: Տե՛ս, զի թէ ոք զմին ՚ի գործոց աստի կամէր և ցանկայր առնել ընդդէմ երկրաւո՛ր թագաւո՛րի՝ բաւ՛ական էր նմա յղ՟գս այնորիկ շանթի՛ դրոշմել՝ յագիս երիվարաց կապել․ և դ՟ քարշածիլ․ կենդանւոյն ճարճատիլ՝ և տան նր՟ առհասարակ աղարտ վարել․ և սերնդոց նր՟ անարգ, և անհամբաւ լինել: Ապա զի՞նչ եղիցի․ յորժամ ոք ոչ միայն կամի․ այլև գործէ զմեծամեծ եղեռն ընդդէմ ա՟յ ամենակալ թագաւո՛րին, և տ՟ն ա՟մ արարածոց: Եթէ միայն խոկալն զայս պակուցանէ, և յապուշ զմարդն կրթէ ո՞վ հաստիչդ ա՟մ եղականաց ա՟ծ, ապա ո՞վ կարէ ը՟ արժանին ցուցանել զմեծութի՟ արհամարհանացդ, յորժամ մեղաւո՛ր ոք ընդդէմ դառնայ քեզ․ անարգէ զփառս քո, առ ոտն հարկանէ զօրէնս քո, այպն և կատակ առնէ զարդարութի՟ս քո, ծիծաղի ՚ի վերայ խոստմանց քոց, և յանդիման ա՟մ արարածոց հրաժեշտ տայ երկնից ար-

քաքոյունդ · առ որ զնա սահմանեցերն․ լեալ մշտնջենաւո՛ր գերի բանդարկու՛ին, և ախորժի տալ յաւ՛էտ զհաճումն դժոխային և գլխաւ՛որ թշնամւոյ քոյ, քան քեզ բարեկամիդ և ա̄մ բարւոյն իւրոյ, կամելով յաւ՛էտ 'ի յոչ առնելն զկամսդ մեռանիլ 'ի յաւ՛իտեան, քան քեզ ծառայելով կեալ յերկինս ը̄ ա̄մ յաւ՛իտեանս ։

3· Տեսցուք ա՛ղէ և զերրորդ պարագայն, յս̄ զտեղին, ուր գործէ մարդ զմեղս, և լինի մատնիչ ա̄յ իւրոյ ։ Արդ ուր գործէ զանպատեհս, յաշխարհի 'ի տան նր̄, յանդիման նր̄ · և առաջի նրբահայեաց աչաց նր̄ · և այն զի գիտէ եղկելին, թէ դիտէ, և անքուն ակամբ յինքն հայի նա, զոր անարգէ։ Ո՛վ յանդգնութն ժպրհութեա ։ Եթէ ըզմեղսն գործէր 'ի տեղւոջ, ուր ոչ տեսանել կարող էր ա̄ծ, տակաւ՛ին ապիրատութի մեծ էր և սոսկալի, ապա որ դժոխոց չէ արժանի, որովհետև 'ի տան նր̄ և յանդիման աչաց նր̄ գործէ ։ Վասնայսորիկ իրաւամբք մարգարէն դաւ՛իթ հեղոյր վտակս արտասուաց, և իբրև երկսայրի սրով վիրաւ՛որեալ աղաղակէր և ասէր · Ե՛ւ զչար առաջի քոյ արարի ։ Բայց զի՞նչ, ոչ միայն զմեղսն գործեմք 'ի տան նր̄, և առաջի աչաց նորա · այլև 'ի վր̄ բազկաց նր̄, որովհետև ամենակալ ձեռն նր̃ կալեալ պահէ զմեզ 'ի գոլ : Զի՞նչ համարէին մարդիկ զորդին զայն անզգամ և անօրէն , զոր մի՞նչ մայրն գգուեալ ողջագուրէ , և 'ի ծոց իւր սիրողապէս հանգուցանէ , նա դարձցի նմա ընդդէմ , զգէսսն փետտեսցէ զնր̃ , զդէմն ապտակեսցէ , զկառափն հարցէ , և սրով զսիրտն հարկանել նկրտեսցի , արդարև ամենեքին համարէին զնա դև զմարմին զգեցեալ : Արդ միթէ չէ այսպիսի մարդն մեղուցեալ , զոր միշտ պահէ ած̃ , կալեալ 'ի վր̃ ձեռաց : Յայտ է , թէ վատթարագոյն և ապերախտագոյն ևս է քան զորդին զայն :

4. Եթէ նկատեսցուք և զչորրորդ պարագայն գործոց , ջ̃ զնպաստն , տեսանեմք , զի յոյժ մեծացեալ աճէ չարութ̃ մեղաց : Քանզի մեղաւորն նպաստիւք և բարերարութե̃ն այ̃ մարտնչի ընդդէմ այ̃ , և զինուքն , զոր 'ի նմանէն էառ , զնա նկրտի սպանանել : Ո՛վ յետին չարութ̃ մեղաց : Եթէ միայն երախտամոռաց լինիլ բարերարութե̃ , է գարշելի իմն ապերախտութ̃ , զի՞նչ եղիցի ապա 'ի կռիւ մարտի ելանել ընդդէմ բարեգործին : Տե՛ս թէ որչափ մեծ ապերախտութ̃ է զօրականին , որ հազիւ թէ զօրապետն իւր առ ինքն ամփոփեալ է զձեռն 'ի սպառազինելոյ զնա շքեղաշուք զինուք իբրև

թէ զապետ ոմն գերապանծ, նա անդէն վաղվաղակի մերկեալ զսուրն 'ի պատենից՝ խնդրէ զնա հարկանել: Սոյն սարսափ է ամենեւին մեղաւորին, զի զայն իմացուին, որով շքեղազարդ պըճնեաց զնա ա՟ծ 'ի մէջ արարածոց, 'ի գործ ածէ առ 'ի գիւտ եղանակաց գործելոյ զմեղս, և որ առատաձեռն պարգեւեաց նմա զբովանդակ կարողութիւնս հոգւոյն, նա ինքն գուն գործէ նոքօք զնա անարգել: Եւ ոչ այսչափ միայն, այլ և յայն սահման ժամանէ մարդկային յանդգնութիւն անպատկառ, զի կամի, թէ 'ի գործել զմեղսն օգնեսցէ նմա ա՟ծ: Զորմէ զառնապէս ամբաստան լինի ա՟ծ բերանով մարգարէին, և ասէ. 'Ի մեղս քո ծառայեցուցեր զիս. և յանօրէնութիւնս աշխատ արարեր զիս: (Եսայ. 43. 24:) Վ՟սն զի ոչ կարէ մարդ առնել զգործ, կամ զշարժումն ինչ բնական առանց ա՟յ զուգընթաց գործակցութ՟ե. վ՟ն այն յորժամ շարժէ զլեզուն 'ի բամբասել, և զձեռսն 'ի գողանալ, վարի օգնութ՟ե ա՟յ ընդդէմ ն՟ր:

5. Նկատեսցուք և զհինգերորդ պարագայն, այ՟ զվախճանն, վ՟յ գործէ մարդ զմեղս, որով և մեղքն լինի անպատմելի կերպիւ դժնդակ: Ասա աղաչեմ, վ՟ն էր մեղաւորն զզուէ զհաստիչն իւր. վ՟ն էր արհամարհէ զա՟ծն իւր. վ՟նէր մատ-

նիչ և դաւաճան լինի Թագաւորին Թագաւորաց, և Տ՟ն տիեզերաց : Վս՟է՞ր առ ոտն կոխէ զփրկիչն իւր Քս՟: Ե՞ւ վս՟ է՞ր 'ի խաչ հանէ վերստին զորդին Այ՟ : Զի՞նչ է պատճառ դժնեայ չարութե՟ա, և ահագին անօրէնութե՟ա : Իցէ՞ արդեօք զի մի՛ ջրահեղձոյց կորիցէ աշխարհս ա՟մ : Իցէ՞ վս՟ այն, թէ մարդն փրկեսցի : Իցէ՞, թէ մարդն եղիցի Ա՟ծ, և Տ՟ր մեծութե՟ : Իցէ՞, թէ այլում Այ՟ հաճոյ լիցի, ոչ ընդա՛, այլ միայն վս՟ անարգ ընչին, և աղտեղի իմն հեշտութե՟, և այն յետին անմըտութ՟ն, և վերջին կամակորութ՟ն, որով կամի լինել 'ի զրա՛ւ այնմ այնմ՟, և ոչ այլազգ : Ո՞վ սոսկալի յանդգնութե՟ա, ո՞վ մոլեգին սրտմտութե՟ա, որ յղ՟փս ընչին բերկրուն, և յոչինչ պէտս զզուէ, և անարգէ զհաստիչն իւր : Այս ա՟մ, եթէ զիա՛րդ արդարացի է, թէ երկինք շանթաձիգ լիցին, և բիւր մահունս գործեսցեն առ ժամ առժամուն որ զայս գործէ . և յոչինչ լուծցեն զնա որ այսչափ յանդգնի՛ յորժամ մեղանչէ :

6. Այնփ՟ և վեցե՟րդ պարագայն, ա՟մ եղանակն, որով ոք մեղանչէ, զարհուրեցուցանէ յոյժ, որ զայն քաջ մտածէ : Քանզի զիա՛րդ համարձակի անօրինել, և զիա՛րդ չերկնչի մեղանչել նա, որ լուա՛ւ, և ետես զբիւր օրինակս

պատժի պատուհասի առեալ յոյժ վ՟ն մեղաց : զի զկնի տեսանելոյն , եթէ վ՟ն մի միայն մեղաց խորհրդով գործելոյն եղեն խաւարաբորբ և սևաթոյր խանձող դժոխոց պայծառագեղ և լուսափայլ դասք սերովբէից և քրովբէից : Զկնի տեսանելոյն , եթէ վ՟ն մի միայն մեղաց որկորստուէ արտաքս վարեաց ա՟ծ զնախահարսն մեր 'ի դրախտէն փափկուէ յայս վայր արտասուաց և նեղութե : Զկնի տեսանելոյն , եթէ ապականեալ երբեմն կորեաւ ջուրցն հեղաւ՝ ա՟շս ամ՟ վ՟ն մեղաց , և երբեմն երկնատեղեաց հրով դատեցան քաղաքք սոդոմացւոց և գոմորացւոց վ՟ն քստմնելի յանցանաց : Զկնի տեսանելոյն , եթէ որք հակառակ կացին մովսէսի , և ոչ լուան բանից նորա . իջին կենդանւոյն 'ի դժոխս կլեալք յերկրէ ինքեանք , և որդիք , և ամ՟ աղխք նոցա : Զկնի դիտելոյն զդատապարտուի անհամար մարդկան յանդգնելոց 'ի գործս անօրէնութե : Եւ՞ նա զկնի այսր ամ՟ի համարձակի մեղանչել յոչինչ պէտս , կամելով յաւէտ հաճել զդեն , քան զա՟ծ զկեցուցիչ իւր . և բաղձալով տեսանել յաւէտ զդեն յաղթող 'ի վերջի . որ վ՟ն հոգւոց մերոց , քան զՔ՟ս ըզփրկիչ իւր :

7. Այն օրինակ և յեօթներորդ պարագայէն , զի 'ի ժամանակէն ոչ փոքր

քան յայլոց մինչև ցայժմ ասացելոց երևի մեծուի̃ մեղաց մերոց : Քանզի մեղանչեմք յայսմ 'ի սոյն ժամանակի, յորում լցեալ կայ երկիրս գիտութե̃ տեառն : Մեղանչեմք զկնի որոյ ուսաք զորդին ա̃յ բևեռեալ 'ի փայտ խաչին առ'ի տալ մեզ զկարողուի̃ զի մի՛ մեղիցուք : Զկնի հաստատելոյն նորա զխորհուրդս եկեղեցւոյ 'ի դեղ հոգւոց մերոց , մանաւանդ զհրաշափառ խորհրդ ամենասր̃ մարմնոյն , և պատուական արեանն : Եւ զկնի բիւր օժանդակուե̃ցն , և մեծամեծ շնորհացն , զոր և ոչ հրեշտակաց անգամ արար ա̃ծ յառաջ քան զմեղանչելն նոցին : Արդ միթէ չէ՞ այս վատթարագոյն լինել մեզ 'ի մեղանչելն քան զա̃մ այսս չարութե̃ , և միթէ չէ՞ ա̃ծ այսմ մասին արժանաւոր լինել մեզ նոր իմն դժոխոց , ո̃պ ասէր երանելին օգոստինոս , թէ արժան է , զի արասցէ ա̃ծ զնորոգ իմն գեհեան մեղաւոր քրիստոնէին : Որով հետև ունիմք մեք զանչափ լուսապայծառ գիտուի̃ ա̃ծեղէն բարուե̃ն 'ի հաւատոց անտի , զոր ոչ ունէին կռապաշտք 'ի հնումն , և ոչ 'ի նորումս առաջնորդելք միայն յօրինաց անտի բնութե̃ : Եւ զայս քաջ վկայէ բան քրսին բարբառելոյ առ սբ̃ն մակար . զի գըրեալ է 'ի վարս հարանց , եթէ մինչդեռ շրջէր երբեմն երանելին մակարիոս յանապատի, եւտես զգանկ մի մեռեալ մարդոյ, և իբրև մերձեցոյց 'ի նա զգաւազանն, սկսաւ խօսիլ գանկն։ Եւ եհարց ցնա մակարիոս, և ասէ, ո՞յր գանկ ես, և նա ասէ՝ քրմի միոջ հեթանոսի, որք բնակէին երբեմն 'ի կողմանս յայսոսիկ. և այժմ 'ի միասին կամ ը̃ ա̃մ բարեկամս իմ 'ի ծով անչափ և անբաւ հրոյ, և դիզացեալ կայ 'ի վ̃ր գլխոյս այնչափ բոց հրոյ, որ մինչ յերկինս ժամանէ, նոյնպէս և 'ի ներքոյ ոտիցս։ Մակար ասէ. է անդ և տեղի քան զքոյդ առաւել վշտալի, և տանջանօք լի։ Եւ նա ասէ, այո, անպատմելի և անմեկնելի են տանջանք ն̃ց, որք կան 'ի ներքոյ մեր. և ն̃ք են, որք ծանեան զա̃ծ, բայց զնա ուրացան, և ոչ զկամս ն̃ր առնել հաճեցան։

8. Այլև ութե̃րդ պարագայն. ա̃յ որպիսուե̃ն անձին, ընդդէմ որոյ մեղանչեմք, առաւելու յոյժ զմեղս մեր։ Զի աւասիկ ոչ միայն մեղանչեմք ը̃դէմ ա̃յ, որ ինքեամբ ամենակատարն է, ամենիմաստ և ամենակալ, ամենաբարի, և ամենագեղ, անչափ, և անհուն այլև անօրինիմք ընդդէմ նմա, որ անչափապէս սիրեաց զմեզ և ամենայն շնորհօք ելից զմեզ, և հանապազ 'ի մեզ գթացեալ համբերէ մեզ։ Տե՛ս զի առնել չարիս բարեկամին, և ոչ

ամեհի գազանք ժպրհին։ Իսկ առնել զչար բարեգործին, և գազանք իսկ զնա դատապարտեն գլխովին։ Ա՛ղէ հայեաց եթէ որչափ մեծ է անօրէնութիւն քո, որովհետև զնա անարգես, որ սիրեացն զքեզ առաւել քան զանձն իւր, և զնա արհամարհես․ որ պարգևեաց քեզ զա՟մ բարի․ զի մի՛ զչար ինչ գործեսցես։ Ապա երկի՛ր 'ի նմանէ, տո՛ւր պատի՛ւ փառացն ն՟ր, սիրեա՛ զբարութիւն ն՟ր, և մի՛ միւս անգամ զնա անարգեր։

Յօդուած․ Է։

ԱՅնչափ տգեղ և զազիր է ըստ ինքեան մեղքն, մինչզի թէև չլինէր յԱծյ ած, պարտ և պատշաճ էր մեզ զգուշիլ առաւել քան յա՟մ չարեա՟ց, և թշուառութեանց։ Զայս այսպէս դատեցին և փիլիսոփայք։ Յորոց միջի եղեն Աննեքայ, Մարկոս Թուլլիոս, և Արիստոտէլ, որ և ասէ․ Բարի է մեռանել․ քան գործել ինչ ընդդէմ բարուց առաքինութեան։ Վասնզի մեղքն է թշուառութիւն 'ի կարգէ բնութեան, յորմէ և անբանք պժգան։ Պատմի թէ կոմս ոմն ունէր զձի մատակ գեղեցիկ, որ և ծնաւ զձի գեղեցիկ, և իբրև կացոյց առաջի որդւոյն զմայրն․ անհնար եղև մօրն՝ թողուլ նմա ելանել 'ի վ՟ր իւր. մինչև 'ի խաբա նո՟ր ծածկեցին համադերձիւք զորդւին, և նո՟ր ոչ ծանուցեն զնա. թոյլ ետ վերանալ 'ի նա, բայց իբրև ծանեաւ զխաբան, թախծեալ 'ի տրտմուԷ, մեռաւ կամովին 'ի սովու:

2. Պատմէ յովիանոս պոնտինեան, թէ էր իմ սկունդ, կ՟մ շուն փոքրիկ, գեղեցիկ, և ընտիր: Զսա, ասէ, արգելի 'ի սենեկի Է՟ շան արուի ծնելոյ 'ի նմանէ զի ստացայց 'ի նմանէ զգեղեցիկ շուն, բայց անհնար եղև մօրն թողուլ նմա վերանալ 'ի վ՟ր իւր: Եւ թէպէտ էին ոմանք. որք պինդ զնա կալնուին, սակայն նա հաչէր ընդդէմ նց՟, և զձեռսն խածանէր, և այնչ՟ զերծեալ փախուստ տայր 'ի նոցանէ, և ապա յարձակեալ 'ի վ՟ր որդւոյն ի՟ր անհնարին բարկութ՟ չարաչար զնա խածատէր: Արդ՝ ասկայցին և գարշեսցին այսչափ անբան անասունք յուրուականէ անտի մեղաց, որպէս յամօթ լիցին մարդիկ պճնեալք բանականուԷ լուսով, և պարտաւորք են, յորժամ ոչ ընդդէմ կան մեղաց քաջութ՟ քան զանբանս: Ուստի յիրաւի ասէր երանելին օգոստինոս. Եթէ արջ բէն խածանել կարօղ էաք զօր գալստեան ահագին և անհրաժեշտ դատաստանին, չէր մեզ պարտ և պատշաճ վ՟ճ կեալ 'ի չարիս, կամ զանձն պատճառան գործել:

3. Բայց այս հրէշ մեղաց զազիր և սոսկալի ցուցաւ 'ի մէնջ 'ի դիպուածն յայն հրաշալի զոր պատմէ վիճանկոս: Զի ասէ թէ յամի փրկութե̃ն մերոյ հազարերր̃դի, երկերիւրորդի, և իննսուն և ութերորդի թագաւորն թաթարաց կասսանոս չու արար՝ խաղաց գնաց քան բիւրուք հեծելազօր զօրօք յծ̃է անտի իւրմէ յարևելից, և դիմեաց յարևմուտս կոյս, և տիրեալ ասորւոց էարկ ը̃ լծով հարկի ծառայութե̃ զա̃մ դիմակալս իւր, և սարսեալ դողային 'ի նմանէ ա̃մ թագաւորք որք շուրջ զնոքօք էին: Վա̃կ և թագաւորն հայոց ետ նմա կնութե̃ զդուստր իւր արարեալ նախ զսէր սերտ միաբանութե̃՝ ը̃ նմա, թէպէտ կասսանոս հեթանոս էր, և նա քրիստոնեայ: Այլ յետ ժամանակաց իբրև յղացաւ թագուհին և մերձ 'ի ծնունդս եղև, ոչ եթէ ծնաւ և 'ի լոյս ընծայեաց զմանուկ մարդկային կերպարանօք, այլ ծնաւ զայլանդակ իմն հրէշ: Իբրև զայն լուաւ և ետես թագաւորն, սոսկացաւ յոյժ զառաջինն, այլ յետ այնորիկ 'ի բարկութե̃ բորբեալ հրաման ետ սպանանել զկինն իբրև զշնացեալ: Իսկ թագուհին անմեղ տեսեալ թէ մեռանի զուր տարապարտուց, յանձն արար ա̃յ զելան գործոց, և ապա յաստուածուստ շարժեալ խնդրեաց յարքայէ յառաջա-

գոյն քան զմեռանիլ իւր մկրտել զերեխայն ։ Եւ ահա երբեւ մկրտեցին զնա փոխեցաւ հրեշն այն սոսկալի 'ի չքնաղագեղ մանուկ հրաշալի։ Եւ թագաւորն հիացեալ ը̅ սքանչելին փըրկեաց զմայրն 'ի մահուանէ , և թողեալ զհեթանոսութիւն դարձաւ 'ի Ք̅ի հաւատոն ճանաչելով 'ի դիպուածն յայն հիանալի զգեղեցկուե̅ շնորհաց , և զթողուե̅ մեղաց ։ Արդ՝ եթէ մանուկն այն միայն վս̅ սկզբնական մեղաց , և ոչ բնաւ վս̅ ներգործականացն երևեցաւ այնչափ զազիր և նողկալի ․ ապա որչափ եղեցինմք̅ , որք կամակար մտօք մահուչափ մեղանչեմք։ Ահաւասիկ հիացեալ սքանչանայ Պլինիոս ընդ ներգործուե̅ ոմանց կայծականց , որք հալեալ 'ի ծուխ լուծանեն զարծաթ և զոսկի, և թողուն անվնաս զպահարանս նոցա։ Եւ այս օրինակ է մեղաց ․ զի և մեղք այրեն զհոգին զթագուցեալն ը̅ մարմնով․ և թողուն ողջ և առողջ զմարմինն ։ Զի արդարև մեղքն է շանթ ինչ․ որ 'ի վեր ցոլանայ 'ի խորոց դժոխոց դժնդակագոյն քան զդժոխս , և երբեւ մերձենայ 'ի հոգին , մերկէ զնա,
և կիզու բոլորովին ։

4․ Բայց զինչ ասացից յղ̅ս չարեաց, զորս ներգործէ։ զի թէև պատուական և գերագանց իմն լինէր մեղքն քան զա̅մ ինչ․ սակայն պարտ և արժան էր մեզ դարշիլ և փախչիլ 'ի նմանէ առաւել քան 'ի մահուանէ յղ̃գս չարաթոյն և անիծեալ ներգործութե̃ցն, զորս առնէ մեզ: Քանզի նա մերկէ զմարդն 'ի շնորհաց, և հալածական առնէ 'ի հոգւոյն զսբ̃ հոգին ա̃ծ. զրկէ յերաւ̂անց անանց երկնային փառաց, և աւ̂ար հարկանէ զա̃մ արդիւնս նորին վըշտաց. անարժան առնէ խնամոց ա̃ծութե̃ն և 'ի հանդերձեալն դատապարտէ 'ի տանջանս անվախճանս. և անդ 'ի բիւր աղէտս թշուա̂ռութե̃: Եւ̂ թէ քաջ քննեսցուք, սա է պատճառ և առիթ պատերազմաց և խռովութե̃ց մերոց. սովու և ծարաւու, ժանտախտից և հիւ̂անդութե̃ց, և այլ բիւր թշուա̂ռութե̃ց: Վա̃յ՝ որք ողբանն ը̃դ վիշտս իւրեանց. փոխեսցեն զայն և լացցեն զպատճառն վշտաց, այս է զմեղս իւրեանց և զայլոց: Զսա կոծեսցեն. և զնմանէ ամբաստան լիցին, որ այնչափ դժնդակ է և խիստ 'ի մէջ ա̃մ չարեաց, մինչ զի արժան է աշխարել զսա, մինչև պակասեսցին, և սպառեսցին արտասուք մեր: Քանզի և ողբ, և արտօսր ա̃մ տիեզերաց չեն բաւ̂ական ողբալ զսա արժանապէս: Ուստի յիմարութի̃ է յղ̃գս այլ ինչ պատճառաց ողբալ դառն արտասուօք: Այս հրէշ մեղաց է, որ ախորժելիս գործէ մեզ զժամանա՝ սնոյս. և անախորժ զյաւիտենականս: Ուստի խորհեսցի եթէ ուր ձգի ախորժ կամաց քոց, և ուր զետեղեալ կայ սիրտ քո, զի առէ իմաստունն, Սիրտ իմաստնոյ յաջակողմն նորա: (Ժող. 10. 3:) Զոր մեկնելով երանելին Հերոնիմոս, ասէ. Իմաստունն դնէ զյօժարութի սրտին յանանց և յանվախճան բարիս. իսկ յիմարն 'ի հոսանուտս և յանցաւորս: Վ̃ոյ ծաղր և ծանակ եղիցին Յասէրք, յորժամ տեսցեն զանձինս ը̃ ձախմէ Ք̃ի դատաւորին կենդանեաց և մեռելոց վ̃ս մեղաց իւրեանց առ. 'ի դատապարտիլ 'ի յաւիտեան: իսկ որք սիրեցին զա̃ծ ցնծասցեն և զուարճասցին, յորժամ տեսցեն զանձինս ը̃աջմէ Ք̃ի առ'ի ժառանգել զփառսն անվախճանս: Վ̃ոյ հեռասցին, մեկնեսցին, և հալածեսցին 'ի սրտէ անտի առայօքինեաց բարիք կենցաղոյս, զի յըղ փուլի նշ̃, և նուաղուլին քան զպատշաճն, ճշ̃գս յորդէ առ մեղս:

5. Գրեալ է. Թէ իբրև մակաբեանք առին միաբանգամ զեղէմ, և մտեալ 'ի տաճար ա̃ծ, տեսին զաւերան ողջակիզաց, պղծեալ, իհեթանոսաց, խորհուրդ կալան 'ի վ̃ր ն̃ր, թէ զի՞նչ արասցեն զնա, եթէ պարտէ հանել ողջակէզս 'ի վ̃ր ն̃ր, որ նուիրեալն էր ա̃յ, եթէ քակել զայն, և նոր կանգնել յղ̃ա լինելոյ'ի ն[illegible] զոհի դից նուիրեալ-

ն

՚ի թշնամեաց անտի: Եւ ասէ անդ սր՟ գիրն, թէ հաստատեցաւ բանս այս ՚ի խորհրդի անդ, քակել զսեղանն և տանիլ դնել զքարինս ՚ի դիպան տեղւոջ. և նոր հաստատել զա՟մ: Արդ՝ խորհուրդ քաջ է այս և վ՟ մեր. ց՟ փախչիլ հեռանալ յա՟մ պատճառաց, որով երբեմն մեղաք, և քակել խլել զայն բոլորովին: Վ՟զի եթէ բաւական եղև մակաբեանց քակել զսեղանն զնուիրեալն ա՟յ յղ՟ս մեղանչելոյ այլոց ՚ի վ՟ նր՟. ապա որչափ ևս առաւել պարտ և պատշաճ է մեզ բնաջինջ առնել զա՟մ առիթս մեղաց, յորս ոչ այլք, այլ մեք մեզէն մեղաք: Զո՛ր օրինակ, տեսե՟լ թէ իղձ երկրաւորաց ձգեց՟ զմեզ յոլով անգամ ՚ի մեղս, պարտիմք խլել ՚ի սրտից մերոց զա՟մ իղձ, որ ոչ ձգի առ անանց և յանվախճան բարիս: Եւ ոչ միայն արժան է ՚ի բաց կորզել զայն յերկրաւոր բարեաց, այլև կեալդողուք, և սարսափիլ ՚ի նոցանէ իբրև ՚ի շողոմաբարոյ վտանգաց:

* * *

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Յաղագս զանազանութեան 'ի մէջ ժամանակաւորին, և յաւիտենականին :

ԳԼՈՒԽ. Ա:

Յաղագս մեծի զանազանութեան ժամանակաւորին և յաւիտենականին վասն լինելոյ միոյն վախճան, և միւսոյն ճանապարհ առ այն : Եւ յաղագս վերջին վախճանի, վասն որոյ ստեղծաւ մարդն :

Այժմ նկատեցուք զզանազանութիւն մեծ, որ է 'ի մէջ ժամանակաւորին և յաւիտենականին այնու, զի յաւիտենականքն են վախճան, իսկ ժամանակաւորքն ճանապարհ կամ միջոց առ այն : Արդ՝ զյաւիտեանս, քանզի զերանական կեանս հաստեաց և կարգեաց Աստուած վախճան մարդոյ․ իսկ զմարդն վախճան ժամանակաւորացս :

Զի մարդ կարգեցաւ վասն յաւիտենից, ուստի նոքօք կարող իցէ ստանալ զվերջին իւր կատարելութիւն, և զերանութիւն անանց և անպատում : Իսկ ժամանակաւորն վասն մարդոյ, ուստի նովաւ վարեսցի մարդ ցայնչափ և ըստ այնմ, միայն ըստ որում առ՛ի ստանալ զյաւիտենականն արբանեկել կարեն : Ա՛ղէ սթափեսցի՛ս, և տե՛ս ո՛վ մարդ զվախճանն, յաղագս որոյ հաստեցարն, զի մի՛ իսպառ կորուսցես զայն : Տե՛ս, զի փառքն անպատում, որ չէր քեզ անկ ըստ բուսոյ բարուց ծննդեան, պարգևեաց և հաստատեաց քեզ զայն տէր ըստ իւրում բազում գթութեան, զի որ կարողն էր հաստել զքեզ միայն վասն բնական երանութեան, հաստեաց զքեզ վասն գերբնական երջանկութեան, զի ժառանգեսցես զայն 'ի յաւիտեան : Արար զարարածս վասն քո. իսկ զքեզ միայն վասն իւր:

2. Եւ ըստ վերջին վախճանի չէ ոք քան զքեզ ազնուական, ոչ հրեշտակք, ոչ հրեշտակապետք և ոչ սերովբէք միանգամայն : Վա՛ն խորհեա՛ց զպարտսդ, զոր ունիս վճարելոյ : Նա արար զքեզ վասն իւր, ուստի և դու պարտիս նմա, և պարտիս առնել զամենայն ինչ վասն նորա : Տե՛ս, զի որ տնկէ զծառ ինչ, իրաւունս ունի 'ի պտղոց նորա : Իսկ արդ ըստ փիլիսոփայից՝ նոյն և ըստ աստուածաբանից վախճանն, առ որ կարգի ինչ, ունի

զմեծ տ՟րուէս և իրաւունս 'ի վ՟ր. վ՟ոյ և ա՟ծ, որ է վերջին վախճան քո, ունի իրաւունս 'ի վ՟ր ա՟մ գործոց քոց. ուստի եթէ վ՟ս ստեղծելոյն զքեզ պարտական ես ընծայել նմա զանձն քո բոլոր, յոյժ առաւել պարտիս նմա յղ՟ս լինելոյ նր՟ վախճան քո վերջին։ Վ՟զի ա՟ծ առաջնոյն ընկալար 'ի նմանէ զգոյ սահմանեալ, և հունաւոր. իսկ ա՟ծ երկրորդին կարգեցար 'ի գոլ ա՟ծեղէն, անհուն, և անեզրական։ Արդ՝ զո՞ր օրինակ, ա՟մ ինչ ա՟ծ իւրում կարի դիմէ առ իւր վախճան, և այնմ ըղձանայ, ո՞չ է տեսանել 'ի հուրն որ ձգի միշտ առ իւրն պարունակ, 'ի քարն որ ձգի առ կեդրոն տիեզերիս, այսպէս և դու ա՟մ տարփանօք պարտիս 'ի խնդիր լինել միայն ա՟յ. և կաթոգին նմա ըղձանալ, և զհետ լինել, և զնա խնդրել զօրութ՟բ հոգւոյդ, կարողութ՟բ մարմնոյդ, և տենչանօք սրտիդ և ոչ առ այլ ինչ դիմել։ Տե՛ս զի քարն առ 'ի ժամանել ուղիղ անդր 'ի վախճան իւր՝ ոչ 'ի հրոյ խուսէ, և ոչ 'ի ջրոյ խուսափէ, և ոչ 'ի խորտակմանէ զանգիտէ։ Սոյն օրինակ և դու առ 'ի մերձիլ յա՟ծ քո, մի՛ ինչ հոգար, եթէ կորուսցես զինչսդ, և զհամբաւսդ, և կամ զանդամս մարմնոյդ։ և ո՞չ քարն զհանգիստ իւր բնական գտանէ միայն 'ի կեդրոնի. այսպէս և սիրտ մարդոյ գտանէ զխաղաղութի̃ իւր միայն 'ի յա̃ձ:

3. Քաջ վկայեն ամենեքին, թէ յորժամ ոչ համեմատին գործք ը̃ վախճանին իւրեանց, յիմարութի̃ք են և անմտութի̃ք: զո՞ր օրինակ. եթէ ոք առ 'ի ոչ ցրտանալ 'ի ձմերան մերկասցի յա̃մ զգեստուց, և հեռացեալ մեկնեսցի 'ի հրոյ: Արդ՝ զի՞նչ ասէիր վս̃ նր̃, ոչ ապաքէն, եթէ յիմար է և խելայեղ: այլ ծանի՛ր, զի չես դու մտացի քան զսա, յորժամ ցանկանալով բարւոյ, փախչիս յա̃յ, և յայլ ուրեք զայն հետաղօտեալ խնդրես: Ո՞չ և վկայէ երանելին օգոստինոս, եթէ այս է պատրանք խաբանաց մարդկան, զի սիրեն զերանութի̃ն անվախճան, բայց զրկեալ անտի մնան չուառական, զի ոչ դիտեն, ուր խնդրեսցեն ո̃յ արժան: Ահա̂ւասիկ ամենեքին դատեն խելացնոր. և կապանաց արժանի զնա, որ զծարաւ̂ իւր զսաստիկ, աղտաղտին ջրով կամի շիջուցանել: կամ թէ ըղձանալով լուցանել զկանթեղ ինչ. փոխանակ իւղոյն զջուր լնու 'ի նմա: Այսպէս է և մերս անմտութի̃. զի զհետ լինիմք ոչնչից, և զայնս 'ի կիր առնումք, որք ոչ վերածեն զմեզ առ ա̃ծ, և չեն կարօղք լուցանել 'ի մեզ զհուր սիրոյ նր̃, և ոչ պահել պահպանել զնշոյլ ճառագայթից, և զպատի̂ մեծութե̃ հոգւոյս բանականի:

ՅՕԴ.

Յօդուած. Է:

Այնչափ մեծ է զօրութ՟ վախճանին, մինչզի որք նմա համեմատին՝ պատուականս գործէ զնս՟, թէև անարգ իցեն և չնչին : Իսկ որք ոչ համեմատին իւրեանց վախճանին, թէև մեծ և պատուական իցէ այն, առ որ կարգին, խոտանք են և չնչին : Ո՞չ բահ և բրիչ պատուական են և գեղեցիկ, յորժամ 'ի գործ ածին պեղել զերկիր. ուստի և յերկրագործաց դրամով գնեալ լինին. բայց անդէպ և անպատշաճականք են առ նկարս պատկերաց, զի չէ այն վախճան նց՟, վ՟յ թէև ձրի տայցեն ցպատկերահան որք առ 'ի նկարել նոքօք, և ոչ զլինիլ նց՟ 'ի տան թոյլ տայ, կմ՟ ներկէ : Դեղ ինչ, կմ՟ սպեղանի, թէև դառն իցէ և կըսկծեցուցիչ, մեծագին է քան զամ՟ ինչ, վն՟ ախտացելոյն, բայց անպատշաճ՝ և վնասակար է վն՟ առողջին : Անօթն աղտեղութ՟ եղեալ յանկիւնս և 'ի խորշս տան, խնդրի, և կարևոր է 'ի ժամու հարկաւորութ՟, բայց դնել զայն 'ի վ՟ր սեղանոյ, անդէպ է և զզուական, և արժանի իսկ խորտակման : Տեսանես զի ամ՟ ինչ կարգի առ իւր վախճան, ուստի թէև անարգ իցեն և նուաստք, յորժամ համեմատին վախճանին վայելուչ են և պատուական․ իսկ յորժամ չունին զհամեմատութի՟, խոտանք են, թէև ը՟ ինքեանց յոյժ գեղեցիկք և վայելուչք իցեն ։ Արդ՝ բա՛ց զաչս քո ո՞վ քրիստոնեայ․ և տե՛ս եթէ առ ինչ կարգեալ ես և դու, զի կարգեցար առ գերամբարձ և վսեմական վախճան, որ է փառքն ա՟յ ։ Ուստի թէև ստեղծեալ էր ա՟յ զքեզ միայն առ՚ի ծառայել նմա յաշ՟ի․ տակաւին մեծ իմն պարգև փառաց էր այս քեզ․ ապա ո՛րչափ մեծ է այն, որ ոչ միայն արար, զի վախճան քո եղիցի ծառայել նմա, այլև ժառանգել զնա, և հաղորդ լինիլ ա՟ծեղէն փառաց նո՟ր ։ Եւ սովաւ ոչ միայն լինիս նման հրեշտակաց, այլ և հաղորդ ա՟ծեղէն բնութե՟ն․ զի ո՟պ ա՟ծ ունի երանութի՟ և վախճան ինքեան զանձն իւր, այս՟պ կամի, զի և դու զնոյնն ունիցիս, և ոչ զայլ ինչ ։

2․ Աստուստ կարես իմանալ զմեծութի՟ անեզրական բարութե՟ցն, որք վախճան քո են․ և զնուաստութի՟ ժամանակաւորացս, զորս պարտիս միայն այնչափ հաշուել, որչափ են յինքեանս, և ոչ աւելի, և կ՟մ այնչափ․ ը՟ որում արբանեկել կարեն քեզ առ քոյդ վախճան ։ Ուստի և առ այս միայն պարտին խնդրել, և սիրել․ ք՟ ը՟ որում առաջնորդել կարեն քեզ առ ա՟ծ, և բաց յայսմանէ ոչինչ հաշու̂էլ պարտիս զնա̃։ Քանզի ով ճպ̃հորդն, որ ունի գնալ առ տեղի ինչ, ընտրէ զայն ճպ̃հ միայն, որ ածեալ հանէ 'ի տեղին դիտեալ։ և չէ նմա փոյթ, եթէ յաջ եցէ, կա̃մ յահեակ. եթէ ը̃ լերինս և ը̃ բլուրս իցէ, և կա̃մ ը̃ դաշտս հարթածաւա̂լս։ Այնպէս պարտիմք և մեք վարել ժամանակա̂ւորօքս։ Զի մի՛ սիրեսցուք զաւարի ինչ. և մի՛ երկիցուք 'ի չարէ ինչ. եթէ ոչ ա̃ որում մերձեցուցանէ, կա̃մ հեռացուցանէ զմեզ յա̃յ մերմէ։ Ուստի եթէ անընչուին ածեալ տանի զքեզ առ ա̃ծ, բո՛ւռն հա՛ր զնմանէ ուժգին, և համարեա՛ զնա քան զա̃մ ինչ սիրելի և մեծագին։ Եթէ մեծուի̃ք և հարստուի̃ք մեկնեն զքեզ յա̃յ քումմէ, առ ոտս հար, անարգեա՛, և մերժեա՛ զնա̃ 'ի քէն իբրև զթոյն դառնուե̃։ Եթէ արհամարհանք և ոչ հոգալն հաճոյ լինել մարդկան, օգնեն յաւ̂էտ քում փրկութե̃. ուրախ լեր յաղագս քոյին արհամարհման։ Եթէ լինիլդ քոյ 'ի պատու̂ի 'ի մոռացօնս զքեզ ձգէ քոյին հատուչի, եղիցի այն քեզ ը̃ զմահ զզու̂ելի։ Եթէ տանջանք և տառապանք ձեռնտու լինին քեզ ճանաչել զքոյդ փրկիչ, ուրա՛խ լեր և ցնծա ը̃ ցա̂ւդ քո խիստ մորմոքիչ։ Ե̂ւ եթէ հեշտուի̃ք կենցաղոյս հանեն 'ի մտացդ զբարեգործն քո զա̃ծ, 'ի բաց լեր յա̃մ ժամանակաւոր բերկրանաց, զի մի՛ կորուսցես զբարիսն անվախճան կենաց : Եւ սովիմբ կարեմք իմանալ զայն տարբերութիւն, զոր երանելին օգոստինոս, և այլ ա՜ծաբանք ասեն, թէ են իրք ինչ· զորս ժառանգելոց եմք, և են որովք վարելոց եմք : ա՜յ է, թէ զանվախճան բարիս ժառանգելոց եմք, և զժամանակաւորս 'ի կիրարկանելոյ, և ոչ նոքօք զմայլելոյ, այլ զայն և եթ առնուլ 'ի նոցանէ, որ կարևոր և օգտակար է մեզ 'ի փրկութիւն, Քանզի ո՜պ ասէ նոյն ս՜բ վ՜րդպն, ախտաւոր կեանք մարդկան այն է, որ վարի կենցաղականօքս չարաչար, և վայելէ 'ի նո՜ց վատթարութե՜· իսկ գովելի կեանք առաքինեաց այն է, որ վարի մերձակայիւքս բարեպէս, և վայելէ յա՜ծ արժանապէս :

3· Արդ՝ գիտել արժան է, զի յոյժ գովելի վարուն արարածովքս առ 'ի զտանել զարարիչն՝ է առ ոտս հարկանել և արհամարհել զն՜ո : Վ՜նզի հաճեցաւ տ՜ր այնպ՜ դիւրին գործել քեզ ստանալ զվախճանն, ա՜յ զկեանսն յաւիտենից, մինչզի և ոչ մի ինչ պակասեսցի քեզ առ այն, որովհետև նաև պակասութիք ժամանակաւորացս օգնեն քեզ 'ի ստանալ զայն : Զինչ կարէ իրաւամբք նեղել և տառապեցուցանել զքեզ յաստի կեանս, զի թէև

ի: պա-

պակասեսցի քեզ ամ՟ ինչ, ոչ պակասի քեզ ճն՟պհ առ 'ի կեանս անվախճան, քանզի և պաշտամունք իւրաց արքանեկեն քեզ իբրև անմոլար ճն՟պհ առ այն: Եւ դրձ՟լ եթէ այնչափ մեծ և կարևոր է ճն՟պհ, կամ միջոց փրկութ՟ե քոյ, մինչև նոյն ինքն արարիչն արարածոց, որ սկիզբն է և կատարած ամ՟ի, հաճեցաւ լինել ճն՟պհ, զի զքեզ փրկեսցէ, ք՟զի յանձն էառ մարմ՟նանալ և մեռանիլ և տալ զանձն կերակուր վ՟ն սիրոյ քոյ: Եւ եթէ ած՟ գործեաց զայնպիսի զօրաւոր միջոց, և զայն վարկաւ յոյժ պիտանի քեզ ստանալ զվախճան քո. ապա որչափ և դու ոչ պարտիս 'ի բաց մերժել զո՛ և իցէ իր ը՟դէմ զգայութե՟նդ դիպեալ, որ կարէ լինել միջոց փրկութ՟ե քոյ, թէև փոքրիկ իցէ այն, և սկ՟իկ մի դիւրացուցէ զփրկութ՟ի քո, որպիսի են հիւանդութիք և վիշտք, նախատինք և արհամարհանք: Զորս համբերեսջիր դու արդիւնաւորս վ՟ն արքայութ՟ե: Ասա՛ ցիս, ո՛վ է մարդ. որ թէ կամեցի նաւել 'ի հնդիկս, ոչ ախորժեսցէ մտանել 'ի նաւ նորակերտ, քաջաղէն, ամրակուռ, և բազմաղօր, այլ 'ի խարխուլ, յանդէն, և յանպաճոյճ նաւս: Արդ. ճն՟պհ կամ նաւարկութ՟ի առաւել ապահով վ՟ն քոյ յերկնային գաւառ անդր չիք քան զխաչն Յ՟ի, քան զխոնարհութի՟ն յամ՟ի, և իմ:

քան զմեռուցանել զանձնդ յերկրի. ուստի և դու բուռն հար զսոցանէ իբրև զամրակուռ նաւուց քոյդ ճպհորդուե : Ո՛չ ապաքէն յամենայնի բղձաս ունիլ զլաւագոյնն. Այլ ծանիր, զի միայն կեանք առաքինի շահեկան է քեզ առ երանութիւն, և զի այն հաստատեալ կայ ՚ի ժամանակաւորաց արհամարհութիւն, վասն այսորիկ և դու առ՚ի լաւագոյնս և շահեկանս գործել զբարիս, արհամարհեա՛ զժամանակաւորս, որպէս արար Քրիստոս, և ջանա՛ երթալ զհետ նորա :

4. Առաջի աչաց կալ հաստատապինդ հանապազ զվախճան քո, զի ցորչափ ոչ հայիս ՚ի նա, վրիպիս ՚ի ճանապարհէդ, և կաս միշտ ՚ի վտանգի մեղաց և գլորման : Վասնզի նման է առ ժամանակեայ կեանքս անձուկ և բարձրակառոյց կամրջի ՚ի վերայ խորխորին գբոյ, ուր հազի՛ւ հազ գտանի կոխտեղին, և անդ ՚ի սոսկալի խորափորին կան օձք և վիշապք բացեալ զբերանս ժանիս դառնութեան, և մնան առ ՚ի կլանել զորս անկանին ՚ի չարահոտ վիհն այն : Արդ՝ ո՞վ է, որ յընթանալն ՚ի մթին և ՚ի խաւարին գիշերի ընդ այն կամուրջ ունելով առաջնորդ զճրագ փոքրիկ հաստատեալ ՚ի գլուխ կամրջին, համարձակի շրջել զաչսն յայլ ուր ընդ մի միայն վայրկեան ժամանակի : Այս օրինակ կամք և մեք յերկրի,

ուր և ոչ ը̄ մի միայն ժամ պարտ է ընթանալ առանց հայելոյ յայն լոյս վերնային յարկաց, և անպատում բարեաց : Զի կեանքս մեր կարճատև է կամուրջն այն անձուկ և նեղ , ը̄ որ անցանեմք 'ի մթին գիշերի կենցաղոյս. բայց ոչ կարեմք անցանել ը̄ այս վտանգաւոր ճն̃հ երջանկապէս , եթէ ոչ ակնակառոյց լեալ միշտ 'ի վախճան մեր երանաւէտ , և յայն լոյս ա̃ծեղէն , որ լուսաւոր առնէ զա̃մ մարդ , որ գալոց է յա̃շ : Ուստի թէյանհոդս լիցուք աշնուլ հանապազ 'ի նա , գլորեսցուք 'ի մեղս , և կորիցուք զյաւիտենից կորուստն : Ահա աստ հաստատեալ կայ ճշմարիտ խաղաղութ̃ի մեր , զի̃ ոչ խնդրել զայլ ինչ , բայց միայն զա̃ծ , և զորս ենն վ̃ն ա̃յ : Աստ է ազատութ̃ի որդւոցն ա̃յ , և արհամարհել զա̃շ , և հանդիստ հոգւոյ , և համաձայնութ̃ի ը̄ կամսն ա̃յ , և ճշմարիտ խոհեմութ̃ի : Իսկ հի̃ն ա̃մ առաքինութեց է ունել 'ի մտի անընդհատ զայս ճշմարտութ̃ի , թէ ծնաք և եկաք յա̃շ միայն առ 'ի ծառայել արարչին մերում :

* * *

ԳԼՈՒԽ Խ. Բ.

Թէ 'ի սեպհական ճանաչմանէ անձին, հարկէ մարդ ճանաչել, եթէ զ՚որդ պարտի 'ի ձեր առնուլ զծամանակաւորս, և զ՚որդ պարտի արհամարհել զն̃ա:

Ո՛չ հարկէ ճարտար և իմաստուն բժշկի ճանաչել ոչ միայն զյատկութիւս և զվախճան, առ որս կարգին դեղք և դարմանք, այլ նաև զբնութիւն և զխառնուածս հիւանդին, այսպէս և առ պատշաճական կիրառութիւն իրաց պարտ և արժան է, զի մարդ ոչ միայն զնոցին բնութիւն և զվախճան ծանիցէ, այլ և զանձն իւր ճանաչեսցէ, ո̃պ և ս̃բ ոսկեբերանն ասէ, Որ ոչ ճանաչէ զոք, ոչ կարէ յանձն առնել նմա զծառայութի̄ն ինչ իւր. այպ որ ոչ ծանեա̃ զանձն իւր, ոչ կարէ ծառայեցուցանել զնմա կ̄ իւր: Արդ՝ պարտի նկատել մարդ յանձին զայն զոր յո̃յ ունի ընկալեալ և զոր յանձն է սեփականեալ: Զա̃մ տուրս, զոր յո̃յ ունի, բարի են իսկ, և պատուական. բայց ոչ կալ է յղ̃ս այնոցիկ տալ պարծանս անձին, զի տուրք են ա՟յ բարերարութե՟ն։ Իսկ զայնս զոր յանձնէ ունի, Ժողովն արաւսիկեան բովանդակեաց մեկին յերկուսին բանս յայսոսիկ ասելով. Միայն ունիմք յանձնէ զմեղս, և զստութի՟ն։ Այս է աւասիկ ոչինչն, զոր իբրև զծուխ բարդութե՟ն ծխեմք առ Ա՟ծ, և չարեք դառնութե՟ն, յորս անկեալ դնիմք, և եմք։ Բա՛րձ մտօք 'ի քէն, զոր միանգամ ընկալար յա՟յ. և տեսցես զանձն քո, բոլորովին սուտն, զ՟մ ոչինչ և ունայնութ՟ն։ Ապա զայն ա՟մ, զոր արարիչ քո բարդեալ կուտեաց 'ի վ՟ր ունայնութեդ, պարտիս նմա վերընծայել, զի իւր է այն ա՟մ. վ՟ս ոչ պարտիս ծառայեցուցանել զայնս ը՟ս կամաց քոց, այլ ը՟ս հաճութե՟ն և ը՟ս կամաց նր՟։

2. Ա՛ղէ հայեաց, եթէ որչափ խոնարհել պարտիս զքեզ յղ՟գս լինելոյդ ոչինչ, հող և մոխիր, և որդն անարգ։ Վ՟զի 'ի յոչ գոլոյ առ գոլ դնեն փիլիսոփայք զանհունն և զանբաւ՛ հեռաւորութ՟ն։ Այնչափ ոչինչ ես և չնչին, մինչզի և ոչ քև գոլ, կ՟մ լինիլ կարէիր, զի զայդ ունիս յա՟յ. վ՟յ ունիս աստ սաստիկ իմն զանձնդ խոնարհել, որովհետև լինիլդ ոչինչ է վիհ, կամ խորխորատ իմն անյատակ։ Եւ՛ սակայն այս լինիլդ քո ոչինչ առ 'ի խոնարհել զանձնդ չէ ինչ ամենևին դրե-

թէ առ համեմատութեան գործոյ մեղաւոր, և յանցաւոր առաջի Աստուծոյ· զի թէ յայս հայեսցիս, ոչ եթէ միայն խոնարհել զանձնդ արժան է, այլ հալիլ, և մաշիլ պատշաճ և կարևոր է։ Զայս 'ի միտ ածելով սուրբքն Աստուծոյ, սոսկային, և քստմնեալ դողային, որոց իբրև ոմանց 'ի նոցանէ եցոյց տէր, թէ 'ի մեղս են, այնչափ սոսկացին, և սարսափեցան, մինչզի մեռանէին· եթէ չէր նորա օգնեալ ձեռն Տեառն։ Վասնզի յոլովքս մեղուցեալ· ես դրեթէ նոյն ինքն չարութիւն, որ ինչ է մեղքն· կամ յանցանքն, Աղէ 'ի միտ ած զայն ամենայն դառնութիւն չարութեանց, զոր վերադոյնդ ասացաք վասն մեղաց։ Զի, թէ է անտանելի գարշութիւն, ատելի արհաւիրք, և անարգութիւն խայտառակութեանց։ Եւ ծանիր զի ունի զայս ամենայն և նա, որ մեղանչէ, և անցանէ զօրինօք Տեառն։ Զի ով, որ ունի զապականութիւն, այնչափ ապական է, որչափ է իւրն ապականութիւն· այսպէս և որ ունի զմեղս, այնչափ զզուելի և գարշ է, որչափ է մեղքն, զոր յանձին ունի։

3. Տես արդ ով մեղաւոր· եթէ իցէ արդարացի 'ի կիր առնուլ քեզ զարարածս, ոչ կարէ 'ի կիր առնուլ անմեղ ոք, որ չէ բնաւ մեղուցեալ։ Տես, եթէ արժան է անարգ և զզուելի առն այսպիսւոյ վարիլ արարա-

ծովքս ա՟յ կամաց. ա՟յ հաճութե՟, և ա՟յ մոլեգին դոռոզութե՟ց իւրոյ, և 'ի պատիւ՛ անձինն: Հրէշ իմն է արդարև տեսանել զմարդն, որ 'ի մեղս է, և ախորժէ լինել 'ի պատու՛ի: Յանցաւ՛որ է, և ոչ կամի բառնալ զվիշտ կենցաղոյս, այլ ախորժէ փափկանալ: Զի՞նչ է այս հրէշ պակուցանողական, ա՟յ է, թէ նա որ է 'ի խայտառակութե՟ս ﬓի, խնդրեսցէ լինել 'ի փառս և 'ի պատու՛ի. նա որ է մատնիչ և դաւ՛աճան ա՟յ, խնդրեսցէ զհեշտութե՟ս մարմնոյ: Ե՛ւ նա որ արժանի է գեհե՟ն հրոյ 'ի յաւ՛իտեան, զխո՞րդ չհանդուրժէ փոքր ինչ հի՛ւանդութե՟, և նեղութե՟, որով ստանալ կարէ զփրկութի՟ն յաւ՛իտենական, և զկեանսն երանական: Ո՞վ անտանելի թիւրութե՟ս, և անհնարին աղէտից: Որդին ա՟յ, որ ս՟ն է սրբոց, և ինքն աղբիւրն սըրբութե՟ և անմեղութե՟, մինչդեռ զգենլոյն զկերպարանս մեղաւ՛որի, ոչ 'ի կեր էառ զբարիս ﬓի իբրու անվայելուչ իմն համարելով, այլ յաւ՛էտ յանձնէառ զնորին դառնութի՟ն և զցաւ՛ան: Իսկ որ ճշմարտի՛ և արդեամբք մեղաւ՛որն է, համարձակի խնդրել զփառս, և զբօսանս, և զգրգանս: Ո՞վ թիւրութե՟ս մեծի, և խոտորնակ հետոցս շաւ՛ղի.

4. Ա՞ղէ ուսիր զմիջոցս 'ի կիր արկանելոյ, զոր Ք՟ս ուսուցանէ: Ե՛զինչ

է այն ճգնութե̄ն, մեռուցումն ախտից· և խաչ վշտաց և տառապանաց: Ահաւ՛ասիկ սովին խոկմամբ ա̄ծարեալն և սքանչելին Ֆրանչիսկոս բեղ՛սինացի, արհամարհիչն Ծի, և անձին իւրոյ կայր ուրախ և զուա՛րթ 'ի մէջ ա̄մ առժամանակեայ վշտաց և կարեաց, փախչելով 'ի հեշտութե̄ց, և դիմելով առ կիրս տանջանաց և նեղութե̄ց: Հիացուցանէր զամենեսին, որք միանգամ 'ի նա հայէին, յորժամ տեսանէին զնա 'ի վերջին աղքատութե̄, և 'ի մեծամեծ վիշտս ճ̃պհաց, մինչ յայց ելանէր շրջել 'ի զանազան ժողովարանս ընկերութե̄ն Յ̄ի ը̄ ա̄մ սպանիայ: Եւ՛ յա՛ւուր միում իբրև եհարց աշակերտ ոմն զնա, եթէ զիա՛րդ կարեհա՛յր տոկալ այդչափ վշտաց ճ̃պհի. Պ̃նի ետ նմա այրն ա̄յ, և ասէ. մի՛ կարծեր ո̄ր, եթէ անհոգ, անփոյթ, և զանցառու եմ ես հոգալ զանձն իմ. ուստի անելորդ է հոգալդ քո վ̄ իմ, զի ես միշտ առաքեմ յառաջագոյն զսուրհանդակ 'ի վանսն՝ ուր իջևանելոցն եմ, և կազմ յարդարէ վ̄ իմ անդ զա̄մ ինչ: Եւ՛ 'ի հարցանել աշակերտին, եթէ ո՛ իցէ սուրհանդակդ այդ, պ̃նի ետ. ճանաչումն սեպհական անձինս, որով և մեծամեծ պակասութիւնք իրաց կարի կարևորաց, երևին ինձ յղփութի̄ւնք փափկութե̄ց:

ԳԼՈՒԽ

ԳԼՈՒԽ. Գ։

Թէ ներմարդկութեն որդւոյն այ ցուցանէ
զի մեծ ին վարկանել զյաւի-
տենականս ։

Աց 'ի բանից բնաւից բոլորից մինչև ցայսվայր ասացելոց՝ քաջ ցուցանէ ներմարդկուն միածնի որդւոյն այ, և չարչարանք նորին զանհամեմատ զանազանութին, որ է 'ի մէջ ժամանակաւորին, և յաւիտենականին։ Քանզի թէ ստանալ զյաւիտենական է մեծ ինչ, յայն սակս մարմնացաւ որդին այ. և թէ արհամարհել զժամանակաւորս արժէ յոյժ, յանձն էառ փրկիչն մեր զչարչարանս՝ և զմահ. Արդ՝ ո՛չ դիտեմ, եթէ ո՛րով իւիք կարօղ իցէ մարդ աւելի հաստ լինել, կամ մեծ համարել. և ճանաչել զմեծութին անվախճան կենաց և զանարգութին ժամանակաւորաց, քան զոր յայտ յանդիման ցուցանէ մարմնանալն, և մեռանիլն որդւոյն այ։ Բայց առ'ի աւել բանս ինչ վերկուց հրաշափառ անօրէնութեցս, և նախ զներմարմնութէն, խորհեսցուք և նկատեսցուք 'ի նմա զչորեսին իրս : Նախ՝ զմեծութն գործոյն : Երկրդ՝ զեղանակ կատարման նորին : Երրդ՝ զչարիս որք յառաջ եկին 'ի մենջ : Եւ՝ չրրդ զբարիս, զոր շահիմք նովաւ :

2. Յղս գործոյն մեծութն գիտելի է, թէ ազգ մարդկային քանզի գերի էր բանսարկուին, և մեղօք անարգեալ անհնարին. և դատապարտեալ յանվախճան պատիժս ահագին. և թշնամի լեալ այ գլխովին, կայր կործան անկեալ յանտանելի աղէտս թշուառութն և վնասապարտութն, որոյ նմանն չէր ուրեք : Ոչ և դեղ դարմանոց նր գրեթէ անկարելի իմն երևէր : Քանզի թէև ամ մարդիկ 'ի սկզբանէ անտի Դի կրէին բիւր մահուանս, և ամ դասք հրեշտակաց մատուցեալ լինէին յողջակէզս. և յանձին բերեալ զամ դառնութի տանջանաց գեհենին, չէին բաւական վճարել զպարտս դէթ մին մի մահուչափ մեղաց : Ուստի անկարելի էր ստեղծուածոյ ումեք, վճարել զայս պարտ պատուհասի, և յանցանաց : Այլ՝ ակնունել զայս յայ, ո՞վ կարէր համարձակել, որովհետև նա ինքն էր անարգեալն, և վշտացեալն : Ո՞վ յուսալ կարէր, եթէ մարդացի ած փառաց յղս չնչին և անարգ մարդոյ եղելոյ 'ի հողոյ. որում անկարօտ էր բոլորովին ամենաբաւականն,

թէև այս էր իսկական միջոց նորին փրկութե՟ ։ Քանզի սոյն այս գործ հրաշափառ՝ էր այնպիսի ինչ, որ վայելչական, և պատշաճական էր լինել յղ՟գս պահելոյ զկեանս, կ՟մ զա՟ծութի ինքեան ո՟յ, (այլ շնորհեացի խօսիլ մեզ ը՟ այսմ եղանակի առ՚ի ծանուցանել փոքր ՚ի շատէ զանճառելի մեծութի խորհրդոյս, և զանհասանելի նորին զբարութի ․) Բայց յաղագս կենաց դժրողի և մատնչի, յաղագս փրկութե՟ ապիրատի և նենգաւորի ․ յղ՟գս փառաց թշնամւոյ և ապստամբի, ո՞վ համարձակէր ակն ունել, մանաւանդ թէ զմտաւ՞ իսկ ածել զայնպիսի ինչ ։ Եւ՞ այն, զի թէ մարդն եղեալ էր հաւատարիմ բարեկամ ա՟յ և առ՚ի պահել զպատուիրա՞ն ա՟ծուն ն՟ր, մատնեալ էր զանձն յայսպիսի աղէտս թշուառութե, չէր թերևս յանդգնութի ինչ, անցանել ը՟ միտս ն՟ր, թէ ա՟ծ վ՟ն երախտեաց ՚ի ձեռն առցէ զը՟մ միջոցս փրկել զնա ․ բայց զի անարգեալ էր զնա, բարձեալ էր զպատուիրա՞ն ն՟ր, և կամեցեալ էր հաւասարիլ նմա ․ ո՞վ համարձակիլ կարէր զմտաւ՞ ածել, թէ խոնարհեսցի ա՟ծ ՚ի փառաց անտի իւրոց, և ունայնացուսցէ զանձն եղեալ մարդ ։

3․ Արդ՝ այս է ահաւորին անչափ նորին բարութի, և գթութ՟ն ա՟ծական, զի բարերարութ՟ն յաղթեաց յուսոյն մերոյ և ակնկալութե՟. և առնէ զմ՟ մեր զայն, որ գերագոյն է 'ի գործս ն՟ր: Ո՞վ սքանչելի մեծափափաք սիրոյս: Ո՞վ անչափ գորովից գթոյ հաստչին բոլորեցուն: Ո՞վ անճառելի առատաձիր պարգևացս ողորմութե՟, որ անհամեմատ գնով վճարել հաճեցաւ զայն, զոր պարտ էր թշնամին իւր, որ իւրովքն ծախիւք արար նմա բարիս, որ արար ինքեան չարիս:

Յօդուած. Է:

Արդ այժմ նկատեսցուք զմեծութ՟ գործոյս. զորմէ ասէ երանելին Օգոստինոս. Ո՛չ կարէր Ա՟Ծ զմեծագոյն ինչ քան զայս առնել, և ո՛չ զբարեգոյն ինչ առնել: Քանզի ոպ՟ չիք ինչ մեծագոյն քան զա՟ծ, նոյնպ՟ չէ հնար գտանիլ գործոյ մեծագոյն քան զայն, որով մարդիկ լինին ա՟ծ: Ետես ա՟ծ, եթէ մարդն 'ի մեղանչել իւրում, արար զգործ ինչ այնպիսի, քան զոր վատթարագոյն ինչ չէր կարող առնել. ուստի և ինքն սահմանեաց առնել զգործ ինչ այնչափ բարեգոյն, քան զոր 'ի սէրս բարեաց չկարիցէ լինիլ մեծագոյն: Սա՟յ այս գործ ամենակալին ա՟յ ո՟չ միայն ը՟ս լինելութե՟ն է յանհունս բարի.

րի, այլ նաեւ ը̅ ա̅մ պարագայիցն։ Է յանհունս բարի ը̅ իսկութ̅ն գործոյն. զի նովաւ եղեւ ա̅ծ մարդ, եւ արար զմարդիկ ա̅ծ, գո՛րծ, քան զոր չիք մեծագոյն ինչ եւ բարեգոյն։ Է յանբաւս բարի, զի նովաւ հաղորդ եղեւ ա̅ծութ̅ն նուաստին եւ անարգին 'ի մէջ բանաւոր արարածոց։ Է յանհունս բարի, զի բարութ̅բ իւրով յաղթեաց անբաւ չարութ̅ն, եւ փրկեաց զմեղաւորն յանվախճան տանջանաց, որում արժանի էր ը̅ մեղաց։ Է յանհունս բարի, զի ցուցանէ մեզ զանբաւ սէրն ա̅յ, զոր ունի 'ի ներքսլ եւ 'ի բարեգործել գժտողին իւրոյ, եւ ցուցանէ զանհնուն ա̅ծային արդարութ̅ն, այնու՝ զի հաճեցաւ յանձին բառնալ զա̅մ, զոր պարտ էր մարդն ապիրատ եւ նենդաժէտ. եւ կամեցաւ խոնարհիլ 'ի մահ խաչի, եւ մեռանիլ, զի կեցցէ դատապարտեալն 'ի մահ մշտնջենաւոր։ Է յանհունս ա̅մ հանգամանօքն բարի եւ կատարեալ. զի նովաւ անթերի վճարեաց արդարութ̅ն իւրոյ, եւ առատաձեռնօրէն եցոյց զգութ արարչական սիրոյն այնու՝ զի եղեւ խիստ առ ինքն, զի եղիցի առ մեզ բոլորովին գթած, եւ ողորմած։

Յօդուած Գ։

Նկատեսցուք և զեղանակն սիրողական և խնկելի, որով արար զայս գործ սքանչելի։ Զի ահա այնչափ եղև գերազանցութի՟ն սիրոյ նր՟, մինչզի ոչ միայն հաճեցաւ փրկել զմարդն այլև կամեցաւ առնել զայս 'ի ձեռն մարդոյ, այ՟ 'ի ձեռն Յն՟ Քն՟, որ միանգամայն ած՟ էր և մարդ ճշմարիտ։ Եւ՛ս եղև մարդ, և ոչ հրեշտակ, ոպ՟ զի ոչ միայն փրկեսցի մարդն, այլ և պատուեսցի, և բարձրասցի 'ի յառաջնեան։ Տեսանե՞ս զպատիւն հրաշափառ, որ տուաւ մարդկութեան, և ոչ հրեշտակաց, թէպէտ նք՟ վսեմ էին և կատարեալ բնութե՟ քան զմեզ. և ոչ այսչափ միայն, այլև ոչ ներեաց նց՟. իսկ մեզ ոչ միայն ներեաց զյանցանս, այլև զազգակիցն մեր բարձրացոյց քան զնս՟։ Եւ դրձ՟լ յորժամ մեղաւ մարդն, ամ՟ ծնունդ նր՟ գրաւեցաւ ը՟ մեղօք, և ը՟ մահու, և չէր ոք արդար յազգս մարդկան։ Բայց յորժամ մեղան հրեշտակք, բազումք 'ի նոցանէ մնացին անմեղք. և ոչ ապականեցաւ բովանդակ բնութի՟ նց՟, այլ այսու ամի՟ ած՟ հաճեցաւ առնել զայս շնորհս մարդոյն, և ոչ հրեշտակաց։

Սոյն․

2. Նոյնպէս եթէ նկատեսցուք և 'ի ժամանակն, յորում արար ՏՐ զայս գործ զերագոյն գթոյ և ողորմութեան, չէ փոքր ցուցակ անքաւ սիրոյ Նր առ մարդկայինս ազգ։ Վասն զի արար յայնմ և 'ի նոյն ժամանակի, յորում Ծս մոռացեալ էր զլխովին զԱծ, և ամ մարդ ջանայր՝ և ըղձանայր լինել պաշտեցեալ իբրև զԱծ, և որք ոչ կարէին զայս առնել, երկրպագանէին իբր Այ այնպիսի մարդոց, որք դժնդակ ևս էին քան զդևս։ Յայսմ ամենաթշուառ ժամանակի, յորում մարդ կամէր լինիլ Ած ընդդէմ կամացն Այ, կամեցաւ Ած լինել մարդ վս փրկութեն Նր։

3. Այլ տեսցուք և զբարիսն, զոր արար մեզ ՏՐ սքանչելահրաշ գործովն ներմարդկութեն։ Արդ՝ ճշմարիտ է, զի թէև չէր Նր արարեալ զբարի ինչ մեզ տուեալ, շատ էր այն, զի փրկեաց յանքաւ չարեաց, որք ոչ ներէին մեզ ըղգլուխս ամբառնալ։ Վասն զի Նր մարմնութեն ազատեաց զմեզ յանարգութէ կմ 'ի վատահամբաւութեն մեղաց, թափեաց 'ի դերութե քանսարկուին, և զերծոյց 'ի սպառնալեաց գեհենին։ Բայց թէև չէր փրկեալ զմեզ 'ի չարէ ինչ, և ոչ արարեալ զբարի ինչ. միայն փառք բնութեա մերոյ՝ որով եղաք ազգակից և բնութենակից Այ, էր անհամեմատ մեծ բարիք՝ որ անցանէ զանցանէ քան

զիմն ինչ. Պատմէ յուստինոս, թէ մեծն աղեքսանդր իբրև ետես, եթէ չարաչար վիրաւորեալ էր ՚ի թշնամեաց գլուխ լիւսիմաքեայ առն սիրեցելոյ ՚ի նմանէ, և հոսէին վտակք արեան ՚ի վիրացն անտի, եառ ՚ի բաց զփակեղխուրին, որ ՚ի գլուխ իւր էր, և պատատեաց այնու զգլուխ նորին, և արգել զբղխումն արեան: Մեծ էր արդեօք պարգևս այս, թէ թագաւոր ոմն մեծազօր, և մեծաձեռն հաճիցի բժշկել զմասնաւոր ոք, և զայն ընդ այսմ եղանակի. նորա բառնալով ՚ի գըլխոյն զնշանակն արքունի փառաց, և տալով ծառային իւրում: Այլ սակայն ոչ եթէ ձրի տայր նմա զայն, այլ փոխանակելով իմն, քանզի՝ ոչ եթէ լիւսիմաքոս էր. որ վշտացոյցն զաղեքսանդր, այլ աղեքսանդր էր, ՚ի պատճառս որոյ ընկալաւ նա զխոց վիրին: Ուստի չէր մեծ ինչ, եթէ ջանայր զնա բժշկել, և բարիս առնել նմա: Բայց մեծն, և սքանչելին այն է, զի մարդն էր, որ վիրաւորեալ էր զանձն իւր մահուչափ, և զայն արարեալ էր վըշտացուցանելով և անարգելով զաստուած. և սակայն ինքն անարգեալն աստուած փութայր զնա բժշկել, և զայն առնէր պատուելով և մեծացուցանելով զնա, ընդ ազգակից և եղբայր նորա լինելով. և դնելով զթագն զաստուածութեան իւրոյ ՚ի

գլուխ

զլուխ նորին: Ո՞վ զերահրաշ բարութե̃ս. ո՜վ մեծութե̃ պարգեւացս, զոր արար մեզ տ̃ր:

* * *

ԳԼՈՒԽ. Դ:

Թէ չարչարանք և մահ տեառն Յի̃ ցուցանէ զանարգութի̃ ժամանակաւոր բարեացս:

Չիք ինչ, որ այնչափ ուժգինս ցուցցէ մեզ զանարգութի̃ ժամանակաւորացս, և զնոցա ոչինչ համարումն, զոր պարտ է մեզ ունել, որչափ ցուցանեն չարչարանք և մահ որդւոյն ա̃յ: Տե՛ս, եթէ զիարդ ոչ միայն բանիւ փուշս կոչեաց զմեծութի̃ս աշ̃ի, և երանելի զաղքատս, այլ և օրինակաւ գործոց արհամարհեաց զբարիս աշ̃ի, և յանձն էառ զվիշտս ա̃մ: Վ̃ն զի ոչ գտանի բարի ինչ առժամանակեայ, զորս արհամարհելով, ոչ յանձն էառ զը̃դեմակս նց̃, և ոչ կրեաց 'ի նմ̃ զվիշտս անտանելի. զի ահա փոխանակ մեծութե̃ կրեաց վիշտս մերկացեալ լինելով յա̃մ զգեստուց իւրոց: Փոխն̃կ փառաց, համարեալ լինելով անարգ ոք, և ռամիկ:

մէկ : փոխանակ հեշտութեանց, ոչ դատանելովք 'ի ծարաւէին զկաթիլ մի ջրոյ և լինելովք առաւել հանդիսի դառնութեան ցաւոց, զի իւրաքանչիւր անդամք նորա զիւրեանց սեպհական ցաւսն ունէին : Այնչափ հաճոյ է, նմա յոյժ զի տպաւորեալ կացցէ 'ի միտս մեր յիշատակ չարչարանաց իւրոց՝ յօրինակ մեզ :

2. Պատմի թէ տիգրան թագաւորին հայոց՝ ընդ իւրում կնոջ՝ դերի վարեցաւ 'ի կիւրոսէ արքայէն պարսից : Եւ եղև, զի յաւուր միում մինչդեռ բազմեալ էին 'ի սեղան, դարձաւ կիւրոս առ տիգրան և ասէ, զի՞նչ տայիր յաղագս ազատութեան կնոջ քոյ տիկնաց տիկնոջս: Եւ նմա պատասխանի տիգրան և ասէ. ոչ եթէ միայն տայի զիմ թագաւորութիւն իմ, այլ նաև զկեանս իմ արեամբ չափ : Զայս լուեալ կիւրոսի հիացաւ յոյժ : Պատասխանեաց առն սիրոյ և կնոջ. քանզի յորժամ գթացեալ 'ի նոսա, արձակեաց զնոսա կիւրոս և դարձան յընտանիս իւրեանց և 'ի տէրութիւն իւրեանց, եհարց տիգրան զտիկինն և ասէ, զի՞նչ զմարդուց, և զշնորհութեանց, և զփառաց տեսեր դու զկիւրոսի : Նա պատասխանի ետ և ասէ. հաւատա՛ ինձ, զի ոչ հայեցայ երբէք յեր ինչ նորա, և ոչ ընաւ պշեցի 'ի նմա, այլ միայն սևեռեալ ունէի զաչս իմ 'ի նա, որ ընծայեաց ըզկեանս իւր ամենայն յօժարութեամբ փրկել զիս 'ի

գե_

գերունէ: Արդ՝ եթէ տիկնայց տիկինս այս այնչափ երախտագէտ դստաւ առ բարի կամս առն իւրոյ, զոր ոչն եղ ՚ի գործ, այլ միայն ըղձայր, մինչզի բոլորովին ՚ի նա պշուցեալ ոչ հայեցաւ, և ոչ փարկաւ ինչ զա̃մմեծութեա պարուց, այլ զինչ պարտի առնել հարան երկնաւոր Թագաւորին. զոր առ՚ի փրկել ՚ի գերունէ բանսարկուին, ոչ միայն ըղձիւք կամեցաւ, այլև արդեամբք գործոց յանձն էառ զմահ փեսայն նր̃: Քանզի չունի իր̃ զբարի ինչ, որ կարող լիցէ խափանել զյիշատակ չարչարանաց ամենաօրհնելի և տարփալի փեսային նր̃, և արդելուլ կարիցէ ՚ի մըշտահայեցոյն լինելոյ ՚ի նոսին: Ասէր մեծն ալպերտոս, թէ մի միայն խոկումն չարչարանաց տն̃ Յի̃ զաւելի օգտուտս մատակարարէ հոգւոյն, քան զպահելն զամն ողջոյն հացիւ միայն և ջրով. և քան զձաղկելն զմարմինն յա̃մ աւուր արեամբ չափ, և քան զասելն զըողմանդակ սաղմոսն հանապազօր: Երևեցաւ երբեմն տր̃ն մեր Յս̃ Քս̃ մի̃ կուսին գեղորուդայ (յետ բազում տեսլեանցն, որովք յորդորէր զնա կալ հաստատուն ՚ի ջերմեռանդութե չարչարանաց իւրոց) և ասէ ցնա, տե՛ս դուստր իմ, զի սակաւ ժամքն, յորս կախեալ կայի ՚ի խաչին, այնչափ մեծապատիւ և պատուական արարին զնա,

մինչչև տիեզերք ամ լցան փառօք նո՛ր ; ապա յո՛ր պատիւ փառաց վերացեալ բարձրասցի հոգին այն, որ զամս բազումս ունիցի զյիշատակ իմ · և զխաչի
և զչարչարանաց իմոց :

3 · Արդ՝ առ՚ի կթել և քաղել մեզ զշա՛հ օգտի յամենայն յիշատակէ չարչարանաց տն Յի · պարտ և պատշաճ է 'ի միտ ածել զայնս՝ ըստ եօթնեակ պարագայիցն, զոր Թուլլիոս յիշատակէ, զոր և մեք վերադրոյնք 'ի մէջ մատուցաք : Աղէ՞ նկատեա՛, թէ ո՛վ է, որ կրէ զչարչարանս խաչի · նա՛ որ է սրբուն ո՛րց · և աղբիւր անմեղութե՛, որում չէր արժան կրել երբէք զայնպիսի աղէտս դառնութե՛ : Նա ինքն մարդասէրն, և աղբիւրն ողորմութե՛ց և գթութե՛ց, որ յանձն էառ զարհամարհանս, և զտանջանս, զի մի՛ արարած իւր կրեսցէ զայնս : Նա ինքն տէ՛րն ամի, և երկրպագելին և սոսկալին սրոբէից, և քրոբէից · ո՛պ և առաքեալն ասէ, Ա՛ղէ ածէք զմտա՛, որ զայսպիսի համբերութի՛ 'ի մեղաւորաց հակառակութե՛ անձին իւրեայ : (Եբր․ 12․ 3․) Վ՛նզի Նա ինքն, որ նստեալն է ընդ աջմէ հօր, կախեալ կայ զխաչէն 'ի մէջ երկուց աւազակաց : Տես թէ ո՛ է, որ բևեռեալ 'ի փայտին, չունի տեղի 'ի վ՛ր երկրի, և յիշեա՛ զի է նա՛ որ դատաւո՛ր է կենդանեաց և մեռելոց : Տես թէ

ո՛

ո՛ է մեռեալն 'ի խաչին, և յիշեա՛ զի է նա որ կեանքն է երանական և անվախճան: Խորհեա՛ց թէ ո՛ է, զոր կախեան թշնամիք նր̃, և գան հարին, և 'ի խաչ հանին, և 'ի մի՛տ ած, զի է նա ինքն, որ 'ի սրբուե̃ց անտի իւրոց հըրդեհս յորդեալ՝ հուրբ դատեցաւ զնոսին, որք զօրինօք նր̃ անցին:

4. Արդ նկատեսցուք և զտանջանս թէ որպիսի ինչ էին: Արդ՝ այնպիսի էին, զորս ոչ ոք 'ի մարդկանէ կրեաց: Եղեն այնչափ դառնադառն, դժընդակք, և մեծամեծք. մինչզի վէմք առաջի նր̃ 'ի սարսափմանէ պատառէին, ժայռք և ապառաժք զերծեալ 'ի բաց խլէին, տաճարք դղրդեալ սասանէին, երկինք զթախծուե̃ հանդերձս զգենուին. արեգակն և լուսինն խաւարէին, և հրեշտակք խաղաղուե̃ արտասուէին: Եղեն այնչափ սաստիկ և խիստ չարչարանք նր̃, մինչզի յորժամ 'ի պարտէզի անդ երևակերպէր զայնոսիկ, յահէ և յերկիւղէ նոցին հոսէին 'ի նմանէ կաթիլք արեան քրտանց աւելի քան զհազար. ո՞չ յայտնեցաւ ումանց 'ի սբ̃ց: Իսկ յորժամ կրէին ըզնոսին, հեղոյր զարտօսր յաչացն յաղագս նոցին սաստկուե̃ աւելի քան զհազար. ո՞չ ասէ Պետրոս կաղէնտինացին: Իսկ թիւ̃ դանիցն, յորժամ ձաղկեցին զնա, էին վեցհազար վեց

հարիւր վաթսուն և վեց, ո̄պ յայտնեցաւ ս̄բյն բեռնարդոսի 'ի տեսլեանն: Այլ չիթէ արեան, և թիւ հարուածոցն էին աւելի քան զբիւրս · որպէս գրէ լանսպերգիոս, թէ ծանեաւ յերկնից ոմն ծառայ ա̄յ: Իսկ վիշտ տանջանացն, յորժամ ամենայնք գլուխ նորին փշով պսակեցաւ, էր գրեթէ անտանելի իմն, և յոյժ խստագոյն · զի ո̄պ ասէ երանելին անսելմոս՝ աւելի քան զհազար էին խոցք վիրաց ա̄ծազարդ ս̄ր գլխոյն: Եւ ո՛ կարող է բացայայտել զանչափ վիշտս տանջանացն յորժամ կախեալ կայր զխաչէն ոտիւք և ձեռօքն բևեռեալ: Եւ այն զի միայն խոկումն այսպիսի դժնդակ տանջանաց՝ գործեաց յերանելին լոդուբինայ հեղուլ զարեան վտակս արտասուաց: Ուստի և չէ՛ երկբայելի, թէ ս̄բ ա̄ծածինն մեռեալ մայր 'ի ցաւոց անտի, եթէ չէր զօրացուցեալ յա̄յ: Վ̄ոկ և ս̄բն բեռնարդինոս սենացին ասէր յղ̄գս ցաւոց ս̄բ ա̄ծածնին, թէ այնչափ սաստիկ էր վիշտ ցաւոց ս̄բ կուսին, մինչզի թէ բաժանիւր այն 'ի մէջ մարդկան, նոյն հետայն ամենեքին մեռանէին վ̄ս սաստկութե̄ ցաւոց այնք̄ բաժնին միայն, որ իւրաքանչիւրոցն անկանէր: Արդ՝ եթէ աղէտք ցաւոց մօրն այնչափ խիստ էին և տարապայմանք, որպիսի ինչ էին ապա ցաւք տ̄ն Յ̄ի, որք 'ի վեր անցանէին յոյժ քան զմօրն։ Վ՜զի կիրք չարչարանաց ը̃ իւրին եղեն 'ի նմին, և բաց յայսմանէ ցաւ՛ակցութ̃ի նորին որ առ մեզ՝ մեծ էր քան զմօրն որ առ նա ։

5. Ա՛դէ հայեցարուք և 'ի տեղի՞ն, ուր կրեաց նա զայս ամ̃ ։ Ե՞ւ ո՞ւր կրեաց։ Անդ յերուսղ̃մ ազգատոհմի և 'ի մէջ ժողովրդեան հրէաստանի, ուր հուպ ը̃ հուպ յամենամեծ փառաց, և'ի մեծաշուք հանդիսէ յաղթանակաց անցանէր 'ի ծայրագոյն անարգութեան խաչի և տանջանաց։ Տե՛ս, զի կրեաց զայս ամ̃ 'ի նոցանէ, և'ի մէջ նց̃, որոց արար բիւր բարիս շնորհաց։ Որք յամի գտան ապաշնորհք, և խստացան ը̃դէմ նր̃․ զորոց զկատարեալ սրտմտութի̃ն'ի չարչարելն զնա անտուստ'ի վերուստ նմանեցուցանէր դաւ՛իթ շանց կատաղելոց, և ցլուց՝ և առիւծուց, և միեղջերուա՛ց մոլեգնելոց։ Տե՛ս և զեղանակն չարչարանաց․ թէ զի՛արդ անարգ եղև և արհամարհ, զի յանձն էառ զայնպիսի ազգ տանջանաց, քան զոր ոչ գտանիւր 'ի ժամանակին յայնմիկ անարգագոյն։ Տե՛ս և զժամանակն․ զի յայնժամ կամեցա՛ւ կրել զայն, յորժամ ամենեքին գունդագունդ յեղէմ ժողովէին։ Խորհեա՛ց և զայն, եթէ գտա՛ւ նմա արդեօք յայնչափ աղէտան տանջանաց դէթ դոյզն ինչ մխիթա-

րութե̄ն: Ոչ բնա՜ւ, այլ յաւէտ լքա՜ւ, և թողա՜ւ ո՛չ միայն 'ի մարդկանէ, այլև 'ի Հօրէ իւրմէ: Փոքր էր մխիթարութիւն զոր աստուստ ունիլ կարէր, զ̃ թէ բազումք օգտելոց էին չարչարանօք իւրովք, քանզի տեսանէր թէ առաւել բազումք էին այնք, որք չէին օգտելոց անտի: Ոչ մխիթարէր զնա աշակերտացն հաւատարմութե̄ն, քանզի 'ի նոցանէ ոմն եղև մատնիչ, ոմն ուրանայր, և այլք փախչէին, թաքչէին, և հեռանային: Ոչ մխիթարէր զնա առաջի կայ լինիլն ժրագլուխ՝ արիական մօրն մե̄րյ, քանզի նա յղ̃ս ցաւակցութե̄ն չէր փոքր խաչ նմա քան զայն, յորում բարձրացեալ էր: և ոչ մխիթարէր զնա հայրն ամենակալ. քանզի խաւար եթող զնա 'ի դառնութի̄ն ցաւոց, մինչև աղաղակել նմա, և ասել. Ա̄Ծ ԻՄ, Ա̄Ծ ԻՄ, ԸՆԴԷՐ ԹՈՂԵՐ ԶԻՍ:

6. Նկատեսցուք և զայս, զի թէպէտ չէր նմա հարկ 'ի վե̄ր՝ կրել զայսչափ դառնութի̄ն տանջանաց առ'ի փըրկել զապերախտքս և զանարգքս 'ի գերութե̄ մեղաց և սատանայի, զի և սակաւ՛ն կրեալ 'ի նմանէ, շատ էր յղ̃ս այսորիկ, սակայն յանձն էառ զայն ա̄մ առ'ի ցուցանել մեզ զսէր իւր ըղ սաստիկ, և առ'ի պարտաւո՛րս առնել զմեզ դնալ զհետ նո̄ր, և արհամարհել զմերձակայ բարիս, և զառժամանա-

նա̄:

կեայ բարեբաստութեա ։ Արդ հայեացուք 'ի սքանչելիս յայս հայելի ․ օրինակ վարուց մերոց ունելով զնա , և երախտագէտս լինելով նմա ․ և ցաւակիցս ։ Կոծ միածնի առցուք յղգս անարգելոյն մեր զնա , որ կրեաց ըզդժնդակս և զսոսկալիս բարբարոսութեն իւրով առ'ի առնել զմեզ բարիս ։ Նկատեսցուք և զանբաւ , զանհաս , և զանկշիռ զնր զբարութիւն , որ վն փրկութե անարգացս կամեցաւ ինքն հաստիչն եղականաց անարգիլ , և արհամարհիլ ։ Սիրեսցուք ապա զայսչափ սիրօղն մեր ․ և յոյս ապաւինութեա մերոյ մեծ և հաստատագոյն եղիցի 'ի նմա , որ առանց ինչ խնդրուածոյ մերոյ արար աւելի , քան զոր կարօղ էաք համարձակիլ յուսալ , թող թէ խնդրել կամ զմտաւ ինչ ածել ։ Զհետ երթիցուք ապացուցիս , զոր հայրն երկնաւոր ցուցանէ մեզ 'ի գլուխ լերինն գողգոթայ , ոչ զի 'ի կեանս մեր խոնարհուք , և մերձակայիցս արհամարհմամբ նմանեսցուք մահու նր , ոչ զի այժմ խոնարհելով զանձինս , բարձրասցուք 'ի հանդերձեալն առ'ի նմանէ ․ և ոչ զի 'ի մերձակայս կրելով ինչ վն սիրոյ նր , ժառանգեսցուք զերանութիւն 'ի ժամանակի իւրում , և ճաշակելով աստ զդառն , և զլեղին , տացի մեզ անդ քաղցրն և անուշակն ․ և չնչին և փոեր ։

քու արտասուօքս որ առ այժմս գնեսցուք զխնդութիւնն անմահական և անեզրական։

ԳԼՈՒԽ. Ե.

Թէ ո՞րչափ արժան է մեզ համարել զյաւիտենականս, որովհետև հաճեցաւ ա̃ծ լինել միջնորդ առ՚ի շահել զայն սահմանելութն զմարմին և զարիւն իւր որ̃պ զկերակ՛ մ̃ն նէ։

Այնչափ հարկաւոր է ստանալ զյաւիտենականս, ք̃ն զերանական կեանս, և այնչափ ցանկանալով ցանկայ տ̃ր, զի ստասցուք զայն. մինչ զի զկնի առնելոյն յղ̃ս այնորիկ զանչափ խնամս փութոյ և սիրոյ, ք̃ն է զկնի մարդանալոյն, և զդժնդակս կրելոյն վ̃ն մեր, յաւել ՚ի սէր իւր, որով իսպառ սիրեաց զմեզ լինիլ նաև միջոց փրկութե̃ն մերոյ խորհրդով ամենասր̃ մարմնոյ և արեան իւրոյ։ Զի ով է այնչափ ապուշ մտօք, որ ոչ տեսցէ ՚ի սմին զանչափ բարութի̃ նորին ա̃ծական, որովհետև ամենակարօղն ա̃ծ է սկիզբն, և ամենակատար վախճան ա̃մ իրաց, և ծայրագոյն բարի ամենայն

նայն բարեաց , հաճեցաւ լինել ևս միջնորդ , որ հասարակ է արարածոց , և ոչ ցուցանէ զկատարելուի̅ առաւ̂ել միջնորդ գոլով այնպիսի , որ առ 'ի լինել 'ի կիրարկեալ 'ի մարդկանէ , յաւաստ լինի , և 'ի ներքոյ անկանի կարողուե̅ անձնիշխանուե̅ մարդոյ : Քանզի միջնորդք փրկուե̅ մերոյ կրկնակի նկատիլ կարեն . ա̃յ 'ի կողմանէ ա̃յ , և 'ի կողմանէ մարդոյն . զի մարդ և ա̃ծ գործակցին 'ի փրկուե̅ մարդոյ : Արդ՝ ա̃ծ արար զա̃մ զոր ինչ պարտ էր առնել 'ի մարդեղուե̅ , և 'ի չարչարանս առ'ի փրկել զմարդն . և այն եղև փոր̂ձ մեծի , և սքանչելի սիրոյ նր̃ , զոր չէ մարթ ուրաստ լինել :

2. Դարձեալ արար և զայս , զի եղև անձամբ անձին վախճան մեր 'ի փառս իւր : Բայց եթէ և մարդն առ 'ի փառս իւր կարասցէ ունիլ զա̃ծ իբրև միջնորդ , այս ստուգապ̃ գերաղանցէ քան զա̃մ զարմանալիս : Են̂ է̅ այսմ քն̃ համեմատի , ջրոյ , միւռոնի , և իւղոյ : Քանզի զո՛ր օրինակ մարդիկ վարին ջրով 'ի մկրտուե̅ առ 'ի արդարանալ , և միւռոնաւ 'ի դրոշմին առ'ի զօրանալ՝ , և իւղով 'ի վերջին օծման առ'ի մաքրիլ 'ի մնացորդաց մեղաց . Նոյնպ̃ և'ի Հաղորդուե̅ վարեսցին քնի̂ առ 'ի ստանալ զմեծամեծ շնորհս , և աճիլ 'ի սրբուե̅ : Ադէ՞ տե՛ս , թէ որ-

չափ հարկ է մարդոյ ջանս դնել 'ի ստանալ զվախճան իւր ․ որովհետեւ նա ինքն որ է միայն վերջին վախճան, հանձնեցաւ լինել միջնորդ, զի մարդն կարող լիցի ստանալ զվերջին վախճան: Զգիտեմ, թէ ցոր վայր անքննին մեծութ̃ հասանէ անճառելի բարութ̃ տն̃, և սէր նր̃ կաթոգին, և ցանկութ̃ նր̃ բարի առնել մեզ: Ապա զիարդ ոչ արհամարհեմք զժամանակաւորս առ 'ի ստանալ զյաւիտենից կեանս, որովհետև ած̃ կամեցաւ յղ̃գս այսորիկ նուաստանալ: Եւ եթէ առ 'ի փրկութ̃ քո է օգտակար միջոց բարձրութ̃, ցյետին վայր անտես առնել զպատիւ քոյ, 'ի բաց թողուլ զհաճոյս քո, բաշխել զինչս քո կարօտելոց, մի՛ խիստ թուեսցի քեզ զայս առնել, զի և ած̃ որ արար զանձն իւր միջնորդ վ̃քոյ, տուաւ քեզ ոչ հայելով 'ի մեծութ̃ իւր, որ յանբաւս գերագոյն և պատուական է քան զա̃մ ինչ:

Յօդուած ա̃:

ԲԱյց միւս ևս գերագոյն վախճան կացուցանելոյ զամենահրաշխորհուրդ հաղորդութ̃ եղև այս, զի լիցէ յիշատակ չարչարանացն Քի̃, որ է շարժառիթ զօրաւոր 'ի ստիպել զմեզ առ 'ի արհամարհել զմերձակայս քան-

զի

պի վա̃նկ կացոյց զայս խորհուրդ, ոպ̃ զի յիշատակեալ զչարչարանս Նր̃, քաջացուք արհամարհել զերկրաւորս: Եւ ոչ միայն յայս խորհուրդ հրաշալի եթող զյիշատակ չարչարանացն, այլև յայլ իրս, և 'ի գործիս անօրէնուե̃ն: Զի ահա 'ի պատանս, որով պատեցաւ վիրաւորեալ մարմինն իւր յորժամ թաղեցաւ, եթող տպաւորեալ սքանչելապէս զնշանս վիրացն: Այնպէս տպաւորեալ եթող զպատկեր արիւնաթաթաւ դիմաց իւրոց 'ի գլխաշուքն սրբուհւոյն Վերոնիկայ, յորժամ է̃ առաջ ելանս մինչ երթայր 'ի գողգոթայ բարձեալ յուսն զխաչ, և մատոյց նմա զգլխաշուքն առ 'ի զքրտունս սրբել: Այսպէս յորժամ աղօթէր 'ի պարտիզին առ հայր հեղլով զքրտունս արեան, եթող տպաւորե̃լ 'ի վր̃ վիմի զնշանս ծնգաց, ոտից՝ և ձեռաց՝ և է միւս ևս վէմ փոքր ինչ հեռի անտի, ուր իբրև անկաւ յերկիր 'ի չարատանջ մոլեգնութէ̃ անտի զինուորաց՝ որք զնա կալան՝ եթող տպաւորեալ 'ի նմին զնշան ծնգացն, ոտիցն, և ձեռացն. զորմէ ասէ Բրոկարդոս, եթէ անհնար եղև երկաթոյ դծել ինչ 'ի վիմին յայնմիկ՝ ոպ̃զի անջնջելի մնասցէ յիշատակ չարչարանաց նորին: Այն օրինակ և յաղխողորմ ճմ̃հորդուե̃ անդ մինչ անցանէր է̃ հեղեղատն կեդրոնի, ելթող տպաւորեալ 'ի վր̃ վիմի վնշան ոտիցն և չուանին, որով կապեալ էր: Եւ՛ ահա սոքօք ցուցանէ մեզ, եթէ փոյթ մեծ պարտէ ունիլ մեզ, անջնջելի պահել 'ի մտաց զյիշատակ իւրոց չարչարանաց:

2. Այլ բաց 'ի վերագոյն դրելոց հրաշալեացդ, գտան և 'ի դարս դարս զարմանահրաշ հետք չարչարանաց նորին յազգի յազգի վէմս դրոշմեալ: Գտա՛ն երբեմն յակն ինչ պատուական կոչեցեալ յասպիս 'ի բնուստ կերպաւորեալ դէմք տն̃ Յի̃ ցաւագին յոյժ ունելով 'ի գլուխն պսակ 'ի փշոց: Մինչ զգնայրն երբեմն երանելին Լոդովիկոս գոնզակեան ը̃ ափին ծովու. եգիտ զվէմ մի փոքրիկ, յորում կերպաւորեալ կային 'ի բնուստ հնգեքին վէրք տն̃ Յի̃: Եւ՛ ոչ միայն 'ի վէմս, այլև յայլ ազգս իրաց տպաւորեաց երբեմն բնութի̃ն զուրուական ինչ նմանաւն խաչի և չարչարանացն Քսի̃. ո̃պ ասէ սբ̃ն անաստաս սինայեցին: Ահաւասիկ 'ի ծաղիկն նաւրոս կերպարանեաց զբևեռս, զսիւնն, և ըզպսակն փշեայ: 'Ի հատանելն ը̃ մէջ զպտուղն ծառոյ իրիք կոչեցելոյ մոսայ երևի խաչ մի ունելով զխաչելե̃ն 'ի վր̃ իւր: Իսկ այժմ 'ի քաղաքն գանդէ է արմատ ինչ գեղեցիկ ծաղկան բերեալ յեղէմէ. ձևացեալ 'ի բնուստ

'ի

՚ի ձև խաչի ունելով զխաչելեալն ՚ի վե̅ր իւր, զոր մեծաւ՛ յարգանօք պահեն արք քաղաքին ։ Եւ՛ զի տարերք ևս պանծացին տալիւք մեծասքանչ և պատուական նշանացս, եցոյց տ̅ր աղփոնսոսի առաջներորդ արքային լուսիտանացւոց զվահան ինչ լուսապայծառ ՚ի յօդս, յորում նկարեալ կային հնգեքին վէրք իւր լուսաճաճանչք, և ճառագայթարձակք ։ Իսկ և կայսերն մեծին կոստանդիանոսի եցոյց զամենայաղթ նշան ս̅բ խաչին ՚ի յօդս ։

3. Բայց զի՞նչ վկայութ̅ն դերագոյն նորին հաճութ̅ե, որով կամի ունիլ մեզ յարաժամ ՚ի մտի զյիշատակ չարչարանաց իւրոց կարեմք ունիլ՝ քան զայն, որ տպաւորեաց նա զվէրս իւր ՚ի մարմինս ոմանց ՚ի սրբոց իւրոց ։ Քանզի ոչ միայն ս̅բ հայրն Ֆրանչիսկոս ընկալաւ՛ վէրս ՚ի մարմնի ե̅ վիրացն Ք̅ի ոչ ՚ի մարդկանէ, այլ յա̅յ, այլև ս̅բ կոյսն լուկիա փերրարացին և ս̅բուհին դելորուդայ ։ Ուստի և՚ի վիրաց անտի ս̅բ կուսին լուկիայ յա̅մ ուրբաթու աւ՛ուր հոսէին վտակք արեան ։ Իսկ և վկայութ̅ մեծ առ այս եղև այն, զի զկնի մահուան սրբուհւոյն քլարայ մոնտեփաղկեայ, իբրև բացին զսիրտ ն̅ր, գտին անդստին ՚ի մսոյ անտի ձևացե̅լ զՔ̅ս ՚ի խաչելեալ զձաղկանս, զսիւն զգեղարդն, և զայլ գործիս չարչարա-

նաց ամենևին կերպաւո՛րեալս սքանչելապէս :

4· Երկարապատում և անսպառ իմն լինէր արդարև ասել մեզ, եթէ որչափ մասամբ, և որչափ եղանակաւ հաճեցաւ փրկիչն Քրիստոս ցուցանել յարարածս զնմանութիւն մահու և չարչարանաց իւրոց. առ 'ի հաստատութեան ունել մեզ յարաժամ զյիշատակս նոցա. բայց սակայն գերահրաշ, գերազոյն, և գերափայլ ցոյցք նոցին, զորս եթող մեզ 'ի մէջ ամենայն ցուցակաց եղև ամենասուրբ խորհուրդ մարմնոյ և արեան իւրոյ, զի սա է կենդանի իմն ցուցակ ամենասուրբ մահուան նորին և չարչարանաց: Որով ցուցանէ մեզ, թէ յամենայն նուագս՝ յամենայն [illegible] յամենայն աւուր՝ երբ մատուցանի պատարագ մարմնոյ և արեան իւրոյ. պատրաստ է նա վասն մեր մեռանել: Եւ զի այժմ ոչ ևս խաչիլ և մեռանել կարէ, յաղագս ունելոյն փոխառաւո՛րեալ զմարմինն. սէր նորին անհուն և անեզրական՝ եգիտ զեղանակ ինչ կրկնելոյ և նորոգելոյ առանց չարչարանաց, և առանց հեղման արեան զպատարագ խաչին, և զպտուղ արդեանց փրկութեան մերոյ :

* * *

Յօդուած Բ։

Աս̃ այսորինակ հայեաց և զմտաւ ած, յորժամ գնաս 'ի հաղորդիլ, եթէ ո՛ է նա, զոր ընդունելոց ես, և ո՛ ես դու, որ զնա ընդունիս։ Զմտաւ ած զշուք մեծարանաց, և զպատիւ յարգանաց, որով ընկալաւ ամենամաքուր սբ̃ կոյսն 'ի մաքրազարդեալ որովայնի զբանն ա̃ծ, յորժամ եմուտ բնակեաց 'ի նմին, և ծանիր զի նոյն ինքն բանն է, որ և 'ի սիրտ քո եկաւորի, ուստի նովին մեծարանօք, և սիրով, և պատկառանօք սբ̃ կուսին, մատչիլ պարտիս առ սբ̃ խորհուրդն։ Եւ թէ հնար իցէ, աւելի ևս քան զնորայն. վ̃զի աւելի պարտական ես դու նմա քան զսբ̃ կոյսն. այսու՝ զի վս̃ մեղաց քոց մեռաւ Քս̃, իսկ սբ̃ կոյսն չունէր մեղս, զի և ը̃ն այսմ մեռցի վս̃ նր̃։ Զմտաւ ած, թէ զնա ընդունիս, որ նստի այժմ ը̃ն աջմէ հօր 'ի փառս անպատումս, զնա, որ ինքնիշխան ինքնազօր՝ և ինքնակալ տր̃ է երկնի և երկրի. զնա, որ հաստեացն զմեզ յոչնչէ, և փրկեաց յաւիտենից 'ի մահուանէ. զնա, որ դատաւոր է կենդանեաց և մեռելոց, զնա, որոյ չիք կատար, և եզր սահմանաց՝ իմաստութե̃ն տութե՟ն, զօրութե՟ն՝ գեղեցկութե՟ն, և բարութե՟ն: Ո՛վ թէ տեսանէիր զքո՟, ո՟չ ետես առաքեալն, և կուրացաւ յարփիափայլ լուսոյ ն՟ր, զի և դու յերկիւղէ անտի մեծարանաց՝ սոսկայիր, դողայիր՝ և խռովէիր, այլ դիտեա՛ զի նովին փառօք պայծառութ՟, և ահեղահրաշ ճառագայթիւք կայ 'ի նշխարի ա՟ստ խորհրդոյն. վ՟ս նովին պաշտմամբ երկիւղագին մեծարանաց պարտ է քեզ առ նա մատչիլ, ո՟չ թէ ակներև նստեալ իցէ յաթոռ փառաց ա՟ծութե՟: Տե՛ս, զի աւետարանիչն Յօհաննէս անկաւ կիսամահ յերկիր միայն 'ի տեսանելն զհրեշտակ մի կալ մերձ առ ինքն գեղեցկութ՟ և փառօք իւրովք: Եւ՛ դու ա՛ծ զմտաւ, թէ ոչ մատչիս ընդունիլ 'ի սենեակ սրտիդ զհրեշտակ ոք. այլ զտ՟րն հրեշտակաց՝ և զթագաւորն փառաց:

2. Այլ գերագոյն ևս երևի բարեգթութ՟ տ՟ն մերոյ, յորժամ նկատեսցուք ոչ միայն զմեծութ՟ անձին, որ տաճեալ լինի ամենայն խորհրդով, այլ և զփոքրութ՟ և զանարգութ՟ նորին, որ զնա ընդունի: Ա՛ղէ հայեաց՝ և ա՛ծ զմտաւ, եթէ ո՛ ես դու, որ ընդունիս զտ՟րն տ՟րանց, ոչ ինչ այլ. բայց եթէ անարգ և չնչին արարած ոք, բաղկացեալ 'ի տղմոյ զազրութ՟. լի թշուառութ՟, անգիտութ՟, չարութ՟, և տըկա-

կարութ՟։ Արդ՝ եթէ երանելին հարիւրապետն՝ զանձն անարժան համարէր մտանել Քի՟ 'ի տուն նր՟։ Եւ՞ առաքեալն պետրոս ասէր ցՔս՟, 'ի բաց գնա յինէն տր՟, զի այր մեղաւոր եմ ես։ իսկ և մկրտիչն՝ մեծն 'ի ծնունդս կանանց դողէր ասելով, չեմ արժանի լուծանել զխրացս կօշկաց նր՟, ապա որչափ անարժան և անբաւական պարտ է քեզ դատել զանձն քո 'ի ընդունիլ զնա, որ նստի ը՟ աջմէ հօր յաւիտենականի 'ի փառս։ Հրեշտակք երկնից ոչ գտան բաւական մաքուր և անարատք ամենեքին առաջի աչացն նր՟, տե՛ս, եթէ որ մաքրութ՟ սրբութ՟ պարտ է քեզ ընդունիլ 'ի սենեակ սրտիդ զհաստիչն եղականաց և զտր՟ն մեծութե՟։ Զամս եօթն ծախէր սաղօմոն 'ի շինել զտաճարն առ 'ի դնել անդ զտապանակ ուխտի կտակարանաց. իսկ դու առ 'ի առնել զանձն քո տաճար այ՟, ոչ կամիս ծախել դէթ զաւուրն ինչ ժամանակ 'ի պատրաստել զքեզ առ նորին ընդունելութ՟։ Մովսէս առ 'ի ըզտապանակն կազմել յղղ՟ս պահելոյ անդ զտախտակսն օրինաց, ոչ միայն ընտրէր փայտս անփուտս, այլև մաքուր ոսկւով պատէր զնոսին. իսկ դու որդն զայդրութ՟, ոչ յօժարիս պատրաստել զքեզ, և զարդարել առ 'ի ընդունելի զտր՟ն օրինաց։

Յ. Պարտ և արժան է արդարև հաթողնել մեզ սիրով նորին ամենայն 'ի մտածել զեղանակ սիրոյն որով արար զայսպիսի մեծամեծ բարերարութի̄ս, որ և ախորժէ խառնիլ միաւորել ը̄ մեզ 'ի յաւիտեան. իսկ և սարսափիլ 'ի տեսանել զխոնարհութի̄ն նր̄ սքանչելի, որով տայ մեզ զանձն 'ի կերակուր, ունայնացուցեալ զօրէնս բնութե̄ն մեծաձեռն հրաշիւք քան զոր արար Մովսէս 'ի յեգիպտոս։ Արդ՝ 'ի միտ ած զկնի հաղորդելոյդ, եթէ զի՞նչ պարտիս տալ տրիտուր ա̄ծն ը̄ անճառելի բարերարութե̄ն։ Եւ՞ համարեա՛, եթէ Քս̄ բազմեալ յաթոռ սրտիդ՝ հարցանէ ցքեզ, ո̃պ արար առաքելոցն զկնի զոտս նց̄ լուանալոյն, և ասէ. գիտէ՞ս, զինչ արարի քեզ։ Գիտէ՞ս, զինչ պարգևս պարգևեցի քեզ։ Գիտէ՞ս, զոր պատիւ և զոր ձիրս շնորհաց ընկալար յինէն։ Գիտէ՞ս, եթէ ո՞ է, որ 'ի սրտիդ բնակի։ Ծանի՛ր, զի նա ինքն է Ա̄ծ քո, փրկիչ քո, հայր քո, տէր քո, և արարիչ քո և ծանի՛ր, զի նա ինքն է, որ տարփայ տենչանօք բարւոյ քո։ Աղէ մատո զերախտիս երախտաւորին քո, և մի սիրեր ինչ 'ի վր̄ երկրի բաց 'ի նմանէ. զի նա միայն է ծայրագոյն, անսահման, և յաւիտենական բարի։

ԳԼՈՒԽ

ԳԼՈՒԽ Խ. Զ:

Թէ նպատակ աղօթից մերոց պարտին լինել անեղծականն եւ մշտնջենաւոր բարեաց. եւ թէ զիարդ խնդրելի են ժամանակաւորքս :

Օգնէ եւ մեծապէս առ ՚ի իմանալ զզանազանութիւն, որ ՚ի մէջ ժամանակաւորին եւ յաւիտենականին՝ գիտելն, թէ որչափ չնչին իմն համարի զոր տայ մեզ զժամանակաւոր բարիս, որովհետեւ տայ զայնս երբեմն եւ ՚ի պատիժ չարագործաց : Մեծ խնդիր եւ տարակոյս է ՚ի մէջ իմաստնոց եւ վրդ̃պաց, եթէ իցէ արժան խնդրել զժամանակաւորս ՚ի մէջ յաղօթս : Եւ պ̃խնի տուեալ հրեշտակային վրդ̃պն ս̃րբն Թովմաս, ասէ, բացարձակ խնդրուածովք՝ խնդրելի են միայն հոգեւորականքն, եւ անվախճան բարիքն : իսկ ժամանակաւորք միայն ըստ այնմ չափու, որք նպաստ լինել կարեն առ ատացումն մշտնջենականաց : Ուստի աղօթքն՝ որ վս̃ մշտնջենականաց մատուցանի ա̃յ ասէ ծուխ անուշահոտ

ելըն

խնկոց, որ ուղիղ ելանէ 'ի հոտ անուշից առաջի ա՟յ · վա՟յ գեղեցիկ իմն բարբառի երանելին Գրիգորիոս` ասելով: Աղօթիցն ծուխ խնկոց յորձորձի, յորժամ զերկնայինն ձայն խնդրէ · և 'ի ներքին հողմն անդր վերագոյնին մտանէ, և ոչ 'ի խնդիր երկրաւորաց խոտորի:

2. Զերրեակ պակասութիւն ցուցանէ պաղատմամբ 'ի խնդիրն յայն, զոր արար մայր որդւոցն զեբեդեայ սբ՟յն յակոբայ և յովհաննու առ Քս՟: Առաջինն է սա, զի ոչ պահեաց զկարգ պատշաճաւոր: Երկրորդն է, զի չունէր զանխառն և զմաքուր դիտաւորութիւն յըղձանաց անտի մարմնոյ և արեան: Երրորդն է, զի առարկայ իւրոց խնդրուածոց սնոտի ինչ էր և ունայն: Այդ՝ գործեալ լինին ա՟մ պակասութիւնք և թիւրութիւնք այսօրիկ նաև յայնժամ, յորժամ ոք առանց հայելոյ 'ի մշտնջենաւորս, խնդրէ զերկրաւորս: Վս՟զի չիք անկարգ և խոտորնակ քան զայն, յորժամ խնդրէ ոք զսակաւն, և զանցառնէ զբազմաւն · խնդրէ զփոքրն, և զանցառնէ զմեծաւն · խնդրէ զայն, որ ոչ միայն է աւելորդ՝ այլև վնասակար՝ և զանցառնէ զայնու, որ կարեւոր է և պիտանի: Քանզի զմեծագոյն պէտս ունի հոգին մեր զշնորհաց տեառն, քան մարմինն զկերակրոց: Զյոլով թշնամիս ունի հոգին քան զմար֊

զմարմինն, և վա՟կ առաւել կարօտի նպաստից և շնորհաց տեառն: Ընդդէմ նո՟ր կան հանապազ զինու վառե՟լ դունոք լեգէօն դիւաց մերթ դէմ ընդդէմ մարտուցեալ, և մերթ լեալ դարանակալ. վա՟յ և մեծի պաշտպանութե՟ և օժանդակութե՟ ո՟յ կարօտի: Ուստի որ զանցառնէ խնդրել զշնորհս, և զօգնութիս յո՟յ յղէ՟ս հոգւոյն, և հայցէ ունել զժամանակաւորս, նման է առն յիմարի, որ մինչդեռ անկեալ դնի կիսամահ 'ի սաստիկ ծարաւոյ յանապատ ինչ ամայութ 'ի տապ արևու 'ի հասարակ աւուր նաւասարդի. և 'ի պատահել առն, որ բերեալ ունի զջուր ցուրտ և մաքուր, փոխանակ խնդրելոյ 'ի նմանէ տալ նմա ըմպել փաղփաղակի, խնդրեսցէ զվերարկու ինչ կտաւի, որ միայն վա՟ ձմերան է պիտանի:

3. Երկ՟րդ թիւրութին, որ անդ 'ի հայցուած ժամանակաւորաց գտանի, է այս. զի այնպիսի հայցուած աղօթից չունի զմեռելութի, և զմաքրութի սրտի, որք ընդունելի առնեն ո՟յ զաղօթս մեր: Ուստի յօրինակ այսմ հուրն, որով ծխէր խունկ առաջի տեառն, առեալ լինէր 'ի սեղանոյ ողջակիզաց. որ նշանակէ, թէ արդիւնք գործոց և աղօթից մերոց առ 'ի ընդունելի լինել ո՟յ, պարտին յառաջ գալ 'ի սրտէ անտի որ այրեալ և նուիրեալ իցէ ո՟յ զենմամբ

և ողջակիզմամբ ըղձից իւրոց, և բաղձանաց: Արդ՝ յոյժ սարսափելի և դողալ պարտ է նմա, որ խնդրէ զժամանակաւոր ինչ յայ, զի մի գուցէ բարկացեալ Տր, տայցէ նմա զայն 'ի պատիժ պատուհասի, ոպ պատահեցաւ որդւոցն Իէլի, զի մինչդեռ 'ի բերանս նց էր լորամարգին ըղձալի, զոր և լալով խնդրեցին յայ, եկն բարկութիւն Այն, և տապաստ էարկ զնս յանապատի: Զի արդարև անպատկառութիւն մեծ է 'ի ձեռն առնուլ զած իբրև միջնորդ առ 'ի ընդունիլ 'ի նմանէ զայն, որ հեռի առնէ, կմ առնել կարէ զմեզ 'ի նմանէ, և 'ի վերջին վախճանէ մերմէ: Վնկ ասէ դիոնիսիոս կարթուսեանն, թէ որ խնդրէ յայ զժամանակաւորս, նման է կնոջ, որ խնդրեաց յառնէ իւրմէ, զի կալեալ զձեռանէ տացէ ցոմն 'ի ծառայից առ 'ի շնալ ը նմա· որով հետև մինչ յղփանամք ժամանակաւորօքս· և բևեռեմք զսէր մեր 'ի նոսին, մոռանամք զսէրն այ, և առնեմք զարարածս վախճան երջանկութե մերոյ, անարգեալ զարարիչն, և մոռացեալ զնա: Եւ ոչ այսչափ միայն, այլև կամիմք, զի նա ինքն, որ է վախճան մեր վերջին, օժանդակեսցէ և ձեռն մատուսցէ անկարգ ցանկութե մերում, թէև յարհամարհանս նորուն իցէ: Ադէ մի տացուք այ զայս նախատինս անար֊

անարգութե և արհամարհանաց, այլ հայցեսցուք խնդրեսցուք զայն միայն որ 'ի շահ օգտի է, և նմա 'ի հաճոյս և 'ի փառս ա̃յ է, խնդրեսցուք զհոգևորականս, զյաւիտենականս, զշնորհս նորա. զճանաչել մեր զնա, զհետ երթալ միածնի նորա, արհամարհել ըզմերձակայս, և առնել միայն զայն, որ է ը̃ս նր̃ կամացն։ Ահա զայսպիսիս խնդրել պարտիմք 'ի նմանէ, և զի սոքա են ճշմարիտ բարիք մեր, զա̃մն լիաձեռն պարգևեսցէ մեզ նա։

4. Իսկ երրորդ թիւրութիւնն, որ անդ 'ի խնդիր ժամանակաւոր բարեաց գտանի, է ունայնութիւն նոցին, զոր խնդրեմք։ Վ̃զի ա̃մ երջանկութի և մեծութի առժամանակեայ՝ յաղագս իւրոյ փոքրութե, կարճատևութե, ստութե, և անհաստատութե արժանի է ըիւր արհամարհութեց։ Յօրինակ այսմ կինն այն, զորմէ գրի 'ի յայտնութե, երևէր գեղեցիկ յոյժ. այնու զի արկեալ ունէր զարեգակն զիւրեաւ, և պսակ փառաց 'ի գլուխն յերկոտասան աստեղաց, որք վ̃ն անփոփոխ գոլոյն նշանակ են մշտնջենաւոր բարեաց։ Իսկ զլուսինն, որ յարակայ փոփոխութբ̃ն նշանակ է ժամանակաւորացս, ունէր ը̃ ոտիւք իբրև արժանի ոտնակոխ լինելոյ։ Արդ գիտասցուք ը̃ արժանին յաղօթս կալ, և մի վրիպեսցուք 'ի խնդրելոյ զայն.

որ կարի կարևոր է մեզ։ Զի եթէ այնչափ մեծ է թիւրութիւն, որչափ կարևոր է իրն, զորով ոք թիւրի, ապա որչափ մեծ է թիւրութիւն յաղօթս, որ ը̅ պատուիրանագրութե̅ն ա̅յ է հարկաւոր միջոց փրկութե̅ մերոյ, և անստելի խոստումն ք̅ի, որով ընկալնումք, զոր ինչ խնդրեմք յանուն նո̅ր։ Աղէ մի՛ խնդրեսցուք յանուն փրկչին մերոյ զայն ինչ, զոր նա ոչ կամի, և ոչ վս̅ նո̅ր զմահ ճաշակեաց, այլ զայն, զոր մահուամբ և պատուականին արեամբն ստացաւ, այ̅ զմշտնջենաւոր և զերկնային բարիս 'ի փրկութեն հոգւոց մերոց։

⁂

ԳԼՈՒԽ Ժ.

Թէ որչափ երջանիկ են նոքա, որք հրաժարեն 'ի ժամանակաւոր բարեաց առ 'ի ապահովս առնել ըզ յաւիտենականն։

Արդ և պատշաճ է առանց կարծեաց յոյժ մեծ վարկանել զհրաժարիլն յա̅մ ժամանակաւոր բարեաց, որովհետև որդւոյն ա̅յ հրաւէր լինի մեզ առ այսպիսի հրաժարումն մեծամեծ խոստ

մամբք.

մամբ, ասելով, Որ թողցէ զհայր, կամ զմայր · կամ զեղբարս, կամ զքորս, կամ զորդս · կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ · և զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ: Ահա՛ւասիկ քեզ առաջի դաշտ լայնածաւալ, և ցուցակ պայծառափայլ զանազանութ՟ե, որ է 'ի մէջ ժամանակաւորին և յաւիտենականին: Քանզի նաև յաստիս հրաժարիլն 'ի ժամանակաւորաց՝ յուսով մշտնջենաւորացն, տայ մեզ աւելի քան զոր տալ կարէ տէրութ՟ի ամ՟ անցաւոր բարեաց: Զի առնէ զմեզ տէր ամ՟իրաց, և ազատ առնէ 'ի դառն ծառայութ՟է նոցին, և յետի իսկ տայ զհարիւրապատիկն այնր ամ՟ի, զոր թողաք վ՟ա Ք՟ի:

2. Ո՞վ, որչափ երջանիկք են, որք իմանան զայս ճշմարտութ՟ի. և փոխեն զերկիրս ը՟ երկնից: Ե՛ւ այս քաջ երևի աստ հայրն աբրահամ 'ի կրօնաւորս, որք 'ի բաց թողեալ զամ՟ ինչ զկենցաղոյս կեան 'ի յաղքատութ՟ե: Քանզի աստ, թողին յետի զմի հայր, և գտանեն 'ի կրօնի զհարիւր: Թողին զմի եղբայր. և գտանեն զհարիւրաւորս, որք սիրեն զնա ճշմարիտ սիրով: Թողին զմի տուն, և զմի կայուած, և գտանեն զհարիւրաւորս: Ուստի ոչինչ ունին, և զամ՟ ինչ ունին ը՟ առաքելոյն: Բայց թէև այս պակասեսցի յաստիս,

'ի նմանէ ասէ երանելին Հերոնիմոս, ('ի գիրք Դ. 'ի վր մատթ.) ոչ ընաւ պկսեսցի բիւրապատիկն 'ի յերկինս : Եւ այս յոյս բիւրապատիկ հատուցման այնչափ անշուշտ · և անտարակոյս է առ բարի կրօնաւորս, մինչզի պատմէ երանելին Բեռնարդոս զիւրոց միայնակեցաց պայծառաձոր վանիցն թէ զայնչափ մեծ մխիթարութի . և զհոգևոր բերկրութիս ունէին 'ի ծոմապահութեց, 'ի ճգնութեց, և յաղքատութեց իւրեանց, մինչզի երկնչէին, թէ մի գուցէ այն իցէ արդիւնք վաստակոց իւրեանց, զոր տր կամի հատուցանել նց աստ, և 'ի հանդերձեալն զրկեսցին 'ի վարձուց :

3. Յղգս այսորիկ պատմի, թէ այր ոմն անուն արնոլփոս, շարժեալ 'ի հոգելից և յեռանդնոտ բանից սբյն բեռնարդոսի, հրաժարեցաւ յշէ, և թողեալ զամենայն ճոխութիս մեծութեց, փառաց և հեշտութեց, յանձն էառ զխստութի . և զաղքատութի կրօնի, և եղև կրօնաւոր 'ի վանսն պայծառաձորոյ, և կեայր անդ առաքինութբ և սրբութբ : Այլ դէպ եղև զի 'ի սաստիկ խստուէ ճգնութեց, անկաւ 'ի մահաբեր հիւանդութի, և անդ 'ի հիւանդութե բազում անգամ ցնորէր 'ի մտաց, և յորժամ 'ի յուշն դառնայր, աղաղակէր 'ի ձայն բարձր . և ասէր · ճշմա-

րիտ են բանք քո. զորս ասացեր տէր իմ Յ՟ս։ Եւ յորժամ հարցանէին ցնա, եթէ զիարդ կեաս եղբայր՝ Է՟ պատասխանւոյ դր՟ձլ աղաղակէր, և զնոյն բան ասէր՝ ճշմարիտ են խոստմունք քո ա՟ծ իմ Յ՟ս։ Վ՟ոյ խորհէին եղբարքն, եթէ յայլ խելս է. և ոչ գիտէ զինչ խօսի ՚ի խստութ՟է ցաւոյն։ Այլ նա ՚ի միտս արթունս պխի եա և ասէ. Զայս ասեմ եղբարք՝ զի ինքն տէրն խոստացաւ յաւետարանի անդ իւրում, թէ որ թողցէ զհայր, կ՟մ զմայր, և կ՟մ զեղբարս վ՟ն իմ, ընկալցի յառօրեայ կեանս ճ՟ի զճաշակ երկնային բարութեանց յուսով վայելելոյ ՚ի նոսին։ Զորոյ և ես զփորձ առնում այժմ աստանօր։ Վ՟ոզի այս յորդու՟է ցաւոցս խստութ՟ե յուսով փառացն արքայութ՟ե, այնչափ քաղցր է ինձ և ախորժական, մինչզի ցանկամ, թէ ոչ բարձցին այնք ՚ի յաւիտենան։ Եւ առաւել յուսով հարիւրապատիկ աւելի քաղցր են ինձ սոքա, քան զորս թողի յճ՟ի։ Արդ՝ եթէ ինձ մեղաւորիս այսչափ բիւրապատիկ քաղցր երևին ցաւք իմ քանզանցեալ հեշտութիւն՝ որք յճ՟ի, զինչ եղիցի ապա մաքուր, արդար, և ջերմեռանդ կրօնաւորին։

Յօդուած. Է̅:

ԵՐկին են պատճառք. որք ուրախութ̅ լինուն զն̅ս, որք վ̅ն Ք̅ի յանձն առին զկամաւոր աղքատութի: Առաջինն է նոյն ինքն աղքատութին, որ թեթեւացուցեալ 'ի բեւր հոգոց զսիրօղս եւ զբարեկամս իւր, առնէ ըզ̅ բնիցն սեններքայ, զի առ աւելքաղցր 'ի քուն լիցին 'ի վ̅ր մերկ կոշտից հողոյ, ք̅ 'ի վ̅ր բարականման պաստառակալայ: Երկ̅դն է մասնաւոր շնորհքն ա̅յ, որ լինու վարձուք երկնային ուրախութ̅ց զն̅ս, որք զերկրաւորս արհամարհեն: Եւ դրձ̅լ օգուտքն, զորս ը̅ւ ինքեան բարձեալ բերէ արհամարհելն զերկրաւորս, աւելի են քան զհարիւրապատիկն. քանզի եթէ տալն զ̅ս ամ առ 'ի ոչ գործել զմի միայն մեղս, չէ դեռ եւս զին բաւական երախտեացն̅, որ զայս շնորհս մեզ առնէ. ապա ո՞ր վարձուց չէ արժանաւոր աղքատութին աւետարանական, եւ արհամարհելն զերկրաւորս, որք 'ի բեւր մեղաց զմեզ զերծուցանեն: Վ̅զի ոպ̅ ասի, բարձ 'ի միջոյ զյղփուն̅ ընչից, եւ ահա բարձեալ գտցես զամբարտաւանուն̅, զագահուն̅, եւ զայլ արմատս մեղաց, որք իբրեւ ծուխք ելանեն դիզանան 'ի ճոխութեց ծ̅ի:

Իսկ

2. Իսկ առաքինութիւնք, որք զուգընթաց լինին մերոյ աղքատութեան, որպէս խոնարհութիւն, ժուժկալութիւն. և այլք բազումք, ոչ եթէ հարկաւորապատիկ, այլ յանբաւս արժեն աւելի քան զամենայն գանձն կրեսոսի: Այն օրինակ աւելի է քան զհարկաւորապատիկն՝ հարստութիւն, պատիւն, և փառքն. զորս ունի աղքատն հոգւով: Զի ոչ ամօթ նախատանաց է մեծատանց լինել նոցա գերի տռփանաց իւրեանց, և արծաթոյ, որ տիղմ է աշխարհիս. այսպէս փառք և պատիւ է աղքատացն հոգւով այն, զի ազատք են 'ի բռնութենէ իրաց աշխարհիս իբրև տեարք նոցա, մինչ զի զոր աշխարհասէրք յանօգուտս վատնեալ ոչ կարեն առձեռն բերել, սոքա զօրացեալ տիրեն նոցա արհամարհելով զնոսա: Վասն որոյ գեղեցիկս բարբառի Յօհաննէս կլիմաքոսն, ասելով. միայնակեաց աղքատ տէր է ամենայն աշխարհի. զի յԱստուած ընկենլով զհոգս իւր զամենայն, երևի տէր աշխարհի, և ամենայն մարդիկ ծառայ են նորա: Ո՛վ խորք մեծութեան խրատուցն Տեառն մերոյ, և գիւտք ամենիմաստ գիտութեան նորա, որք աստ 'ի սմին լուսափայլեալ երևին, զի արար զկամաւոր աղքատութիւն գին փառաց իւրոց, և կացոյց կարգեաց, զի ամենայն մարդոյ դիւրին իցէ ստանալ զայն աղքատութիւն:

ԳԼՈՒԽ

ԳԼՈՒԽ Ը։

Երանելիք են, որք արհամարհեցին զժամանակաւորս, և հրաժարեցան 'ի նոցանէ։

ԱՅնչափ յայտնի է անարգութեն ժամանակաւոր բարեաց՝ և տուժանք վնասուցն, զոր առնեն իսկ առժամանակեայ կենացս, մինչի և հեթանոս փիլիսոփայք զուրկք 'ի լուսոյ հաւատոյ ծանեան զայն, և հրաժարեալ 'ի նոցանէ, ընտրեցին զաղքատութի։ Արիստիպէս ազնուական իշխանն աթենացւոց զգենոյր միշտ զհանդերձս հնոտիս, և ոչ երբէք հացիւ յագեցաւ։ Եւ որ սքչելին է, զի թէպէտ դամիսա այր յոյժ մեծատուն առաքէր նմա բազում անգամ զմեծամեծ պարգևս, սակայն անհնար եղև նմա առնուլ գէթ սակաւիկ ինչ 'ի նմանէ։ Իսկ զենոն փիլիսոփայն ոպ պատմէ Գրիգոր Ածաբանն, 'ի լսելն եթէ կորեան ամ ինչք նր, ասաց, յայսմհետէ հեշտութեամբ կարեմ լինել իմաստասէր։ Այլև անաքսագորաս 'ի կորնչիլ ընչից իւրոց ասէր, ոչ էի ես փրկեալ, եթէ ոչ էին սոքա

նք։ կորու_

կորուսանալ: Կրատէս Թեբայեցին ընկեցեալ զբաղում տաղանդս ոսկւոյ ՚ի ծով, ասէր. լաւ է, զի ես զձեզ ընկղմեցից, քան դուք զիս: Դիոգինէս ՚ի բաց հանեալ զամ̃ ինչ, զոր ունէր, պահեաց միայն զփոքրիկ ամանակ մի, և յորժամ ետես, եթէ և առանց նր̃ արբել կարէ. զայն ևս ՚ի բաց ընկէց: Իսկ ոմն ՚ի մեծատանց քաղաքին հռովդացւոյ երբեմն ծաղր արարեալ զփիլիսոփայն եռքինէս զսէրօյն աղքատութե, ասէր ցնա, երդնում ՚ի դիս, զի յորժամ տեսանեմ զքեզ յայսպիսի դառն աղքատութե. ցաւիմ յոյժ, և դորովեմ, պ̃խի ետ նմա եռքինէս և ասէ, երդնում և ես ՚ի դիս. զի յորժամ տեսանեմ զքեզ յայսպիսի ճոխութես հարստութեն, աղէխորով լինիմ, և ափսոսամ, երբև ՚ի միտ ածեմ. եթէ զոր աղէտս դառնութեն պատճառէ մեծութին: Պատկառեսցուք արդեօք ՚ի բանից փիլիսոփայից՝ և ՚ի գործոց սց և այլոց, որոց բաւական եղև բնական լոյս բանին արհամարհելոյ զինչս երկրաւորս. իսկ մեզ չէ բաւական գերբնական լոյսն հաւատոյ: Նաև այն՝ զի լոյսն հաւատոյ այնչափ զօրաւոր է մինչզի որք իմաստութ̃ յանձին բերին, և ընկալան զփոքրիկ նշոյլ ինչ զնորայն հրաժեշտ ետուն ա̃ի, և ամ̃ ընչից նր̃ զարմանալի իմն օրինակաւ, ոչ յայտէ իք:

յանհամար պատմուե՟ց և յօրինակաց, զորոց միայն պիտոքունս ինչ առ՚ի ճաշակ իմաստից աստանօր առաջի ընթերցանելեացդ մատուցից :

2: Էր ՚ի Թեբայիդ առ ափամբ Նեղոս գետոյն վանք ինչ կուսանաց, յորում բնակէին քորք երեք հարիւր, և կայր ՚ի մէջ նց՟ քոյր ոմն անուն Իսիդորա, զոր ամենեքեան համարէին յիմար և բախած, ուստի և խաղալիկ ծաղու, և կատականաց էր եղեալ առ նս՟, զոր և չարաչար վարէին քան զշունս, և զգերիս. իսկ նա իբրև զդառնանամեղ ժուժկալէր զանից, ծաղու, և այպանմանց, և խոնարհամիտ սրտիւ ծառայէր նց՟ ՚ի խոհակերոցն, և յայլ տեղիս ՚ի պաշտօնս անարգութ՟ : և յոյժ ժրաջան էր յաշխատութիս վանացն ծառայելով բոկ ոտիւք, և հնոտի հանդերձիւք, որոյ և քօղ գլխոյն էր իբրև զպատառատուն ինչ ջնջան : Եւ էր ը՟ այն ժամանակս բնակեալ ՚ի պորփիւրիտէս ծեր ոմն անուն Պիտուրինոս այր սբ՟, և գերահռչակ ՚ի ճգունս միայնակեցաց, որում երևեալ հրեշտակ այ՟, ասէ ցնա . մի' համարիր մեծ ոմն զքեզ յղ՟գս բազմամեայ ճգանցդ միայնուե՟, զի լաւագոյն քան զքեզ է ոմն առաջի տեառն : Վ՟նյ արի' գնա' ՚ի վանս քերցն Թեբայիդոյ, և տեսցես անդ զքոյր ոմն, որ ունի պսակ ՚ի գլուխըն,

խըն, և սրբազոյն է քան զքեզ․ Վ՟ն զի զտիւն ամ՟ չ՟րչար վարե՟լ յայլոց և իբրև զկաւ գանեհ՟ց առ ոտս հարե՟լ ծաղու և կատականօք, ոչ երբէք խռովեցաւ, և ոչ երբէք խոտորեաց զխորհուրդս իւր յա՟յ : Իսկ դու յառանձնութե՟ն գոլով, յածիս խորհրդով յ՟ժ ամ՟ : Եւ զայս ասացեալ՝ անյայտ եղև : Յայնժամ յարուցեալ ծերոյն գնաց ՚ի մենաստանն յայն : Եւ կոչեաց զքորսն զամենեսին, և գունդագունդ դիմէին ամենեքին տեսանել զծերն ս՟բ և մեծանուն : Իսկ ծերն շուրջ հայէր տեսանել զայն քոյր, զորմէ ասացեալ էր նմա հրեշտակն : Եւ իբրև ոչ ետես, եհարց զն՟ս, և ասէ, եթէ ոք ՚ի ձէնջ, որ չիցէ եկեալ այսր : Պ՟ի ետուն քորքըն, և ասեն, ոչ հայր պատուական : Եւ ծերն ասէ, ոչ զարդարն ասէք ինձ, զի ո՛չ տեսանեմ ես զնա, զոր հրեշտակ տեառն եցոյց ինձ․ Յայնժամ ասեն ցնա քորքն, է միւս ևս քոյր յիմար, որ ՚ի խոհակերոյն աշխատի : Եւ ծերն ասէ, վաղվաղակի ածէք զնա այսր : Եւ ն՟ց երթեալ բռնու՟թ ածին զնա անդ : Իբրև ետես զնա ծերն, ծանեաւ զնա ՚ի քօղոյ գլխոյն, զոր հրեշտակն պատկեր էր յորջորջե՟լ․ Սատի վաղվաղակի անկաւ առ ոտս ն՟ր, և ասէ աղաչեմ զքեզ մայր ս՟բ, զի օրհնեսցես զիս, և արասցես աղօթս վասն իմ՝ առ Աստուած ։ Յայնժամ շուարեալ քորքն ամենեքին, սոսկացան և ասեն ցծերն, զի՞ գործես Հայր պատուական, և զի՞ կաս ՚ի պատրանս խաբէութեան. զի սա յիմար է և բախեալ ։ Իսկ ծերն ասէ, յիմար և բախեալ դուք էք. և միայն իմաստութիւն ՚ի միջի ձերում է քոյրս այս. և երանի թէ վիճակ իմ եղիցի ընդ վիճակի նորա յաւուր դատաստանին։

3. Պատմէ և Գրիգոր Նիւսացին, թէ էր փիլիսոփայ ոմն անուն Աղէքսանդրոս՝ այր գեղեցիկ տեսլեամբ, և փառացի անձամբ. Սա երկուցեալ՝ թէ գուցէ գեղեցկութեան դիմացն լիցի ինքեան, կամ այլոց ՚ի վտանգս, և ՚ի գայթակղութիւն. գնաց ՚ի կոմանայ քաղաք կապադովկացւոց. և եղև ածխագործ զամս յոլովս. և ներկաւ, սևացաւ ՚ի գործոյն, և ոչ երևէր գեղեցկութիւն նորա։ Աստի և յամենեցուն համարեալ էր անարգագոյն ՚ի մէջ ամենայն ժողովրդոց քաղաքին։ Այլ դէպ եղև, զի մեռաւ եպիսկոպոս քաղաքին, և եկն անդր սուրբ Գրիգոր սքանչելագործն ձեռնադրել նոցա այլ ոմն հովիւ։ Եւ ահա մատուցին կացուցին առաջի նորա զանձինս ազնուականս. և վկայեալս ՚ի ճարտարութեան բանից և յիմաստութեան։ Բայց երանելին Գրիգորիոս ասէ ցնոսա, մի՛ դատէք եղբարք ըստ պատկերի Ծայլին պայծառութեան, այլ ըստ ներքին սրբութեան և

առաքինուն : Ուստի և ասէր մատուցանել առաջի նաև զայլս վկայեալս 'ի սրբուն. թէև լիցին արք անպաճոյճք և ռամիկք : Յայնժամ պիտի եռուն ոմանք 'ի ժողովրդենէն իբրև ը̃ կատակս, և ասեն. եթէ արժան է ընտրել մեզ հովիւ զայդպիսի այր անպաճոյճ. աղէ յառաջ մատիցէ ածխագործն աղեքսանդրոս. քան զոր չիք ստուգի՛ անարգագոյն 'ի մէջ քաղաքին : Իբրև զայս լուաւ երանելին գրիգորիոս, լուսաւորեալ առ. յա̃յ, հրաման ետ ածել առաջի զաղեքսանդրոս, և օրհնեաց զնա նոցա հովիւ : Զի ոչ հաճեցաւ տէր. թէ որ վ̃ն սիրոյ ն̃ր եդ զանձն յայնչափ անարգութիւն. մնասցէ անպատիւ առ յա̃յ, և 'ի մարդկանէ :

4. Բայց դու ե՛կ, տե՛ս ինձ. զի ոչ միայն մարդիկ մասնաւո՛րք, և աղատագլուխք, այլև տէարք մեծամեծք, իշխանք, և ազգք, թագաւո՛րք և կայսերք ընկալան յանձինս սիրով մեծա՛ւ զաւետարանին աղքատութի արհամարհելով զն̃ ամ, և զմեծութի ն̃ր : Կարողաս կայսր գերմանիոյ թողոքեալ 'ի սէր երկնային, եթող զթագաւորութի̃ն եղբօր իւրոյ պիպինեայ, և եկն իբրև զաղքատիկ մուրօղ ոք 'ի հռոմ, և եղև միայնակեաց 'ի լերինն ս̃բյն սեղբեստրոսի : Եւ՛ ապա յետ ոչ բազում ժամանակաց փախեա՛ւ անտի յղշ̃ս պատու-

ունելոյ անդ յոյժ 'ի մարդկանէ, և գնաց, և եկաց ը̄ հնազանդութ̄ հօրն պետրոնակեայ 'ի լերինն կասինու. ուր յղ̄ս սիրոյ խոնարհութ̄ եղև հովիւ ոչխարաց. և յաւուր միում 'ի գութ շարժեալ 'ի վ̄ր ոչխարի միոջ, որ յընթանալն կաղայր, եդ զնա 'ի վ̄ր ուսոյն սրբունի, և էած 'ի փարախն: Այնպէս և սքանչելի է յոյժ այն, զոր արար բամբայ մեծ արքայն սպանիոյ. զի զկնի թագաւորելոյն զամս մետասան, և 'ի գերութ̄ վարելոյն զնաւս հինից և բարբարոսաց աւելի քան զերկերիւր, և զկնի յաղթելոյն և 'ի բանտ արկանելոյն զպօղոս արքայն Փրանսիոյ, որ համբարձաւ ը̄դդէմ նր̄, և զկնի բիւր սքանչելի գործոց, եթող լքեալ զա̄մ ինչ. և եղև կրօնաւոր 'ի վանս ինչ. ուր զկնի եօթնամեան պնդագոյն պահպանութ̄ միակեցական ճգնութ̄, հանգեաւ 'ի տր̄ 'ի փառսն անեղականն:

5. Արդ՝ առ 'ի ոչ երկարագոյնս զբանիւք անկանել 'ի պատմել զնոցանէ, որք վ̄ր երկնից արքայութ̄, թողին զարքայութիւն երկրաւոր. առաջի մատուցից և զմի այլ օրինակ միայն յոյժ հրաշալի: Պատմէ թովմաս կանտիպրացին, որ եկաց առ ժամանակօք սրբուհւոյն մեքտիլդայ դստեր արքային սկովտիոյ. թէ էին նր̄ եղբարք չորք: մինն որ իսկ դուքս եղեալ էր ցանկանալով զհետ

երթալ վՔն աղքատութե, եթող զկինն, զտէրութիւն, և գնաց 'ի տար աշխ։ Երկրդն՝ որ կոմս էր մեծազօր, եթող զամ ինչ աշխի, և գնաց յանապատ, և եղև միայնակեաց։ Երրորդն՝ որ արհիեպկս էր, եթող զեպսութիւն, և եմուտ 'ի կրօն կիստերսականաց։ Իսկ չորրորդն, որոյ անունն էր աղէքսանդրոս, գոլով փոքրագոյն քան զամենեսին, էր տակաւին յաշխի. և յորժամ եղև վեշտասան ամաց, եգիտ շնորհս առաջի հօրն, ուստի և հայրն սկսաւ առ սակաւ սակաւ յանձն առնել նմա զկառավարութի թագաւորութե, զի զնա խորհէր թագաւորեցուցանել։ Բայց քոյր նր սրբուհին մեքթիլդայ. որ յայնժամ էր քսան ամաց, գտեալ զնա յաւուր միում առանձինն, ասէ ցնա. Զի՞նչ գործես, զի՞նչ խորհիս սիրելի եղբայրդ իմ աղէքսանդրէ. տե՛ս, եթէ զիա՛րդ եղբարք քո երեքին լքին զաշխ ամ առ 'ի ստանալ զերկնից արքայութիւն. տե՛ս, զի թէպէտ թողին քեզ զթագաւորութի հզօր. սակայն լինելոց ես 'ի վտանգի կորուսանելոյ վն երկրի զերկինս, և զհոգիդ. այլ խորհեա՛ց, եթէ զի՞նչ գործես։ Իսկ աղէքսանդրոս հարեալ յարտասուս պինդ եառ քեռն, և ասէ, և արդ զի՞նչ խորհուրդս տաս ինձ քոյր իմ, ահաւասիկ պատրաստ եմ ամ ակնարկութե քում առանց ինչ ընդդիմուն : Խնդաց յոյժ երանուհին մեքտիլդայ ը̄ բանս եղբօրն , տեսեալ թէ ոչ ինչ փոյթ է նմա զն̄է : Եւ ապա հաստատեալ բանս ՚ի միտսին , ելին ՚ի տանէ հօր իւրեանց , և մտեալ ՚ի նաւ̂ , գնացին յաջողութ̄ ՚ի Փրանսիայ : Ուր եդ սրբուհին զեղբայրն ՚ի վանս միայնակեցաց կիստերսականաց՝ ծառայել անդ ՚ի սպասաւորութ̄ե հիւրից : Եւ յորժամ տեսին զնա կրօնաւորքն, եթէ քաջ հմուտ է գործել զպանիր , վ̄ զի քոյր իւր ուսուցեալ էր նմա զայն արուեստ յառաջագոյն, պարապեցուցին զնա յայն գործ : Եւ յետ ժամանակաց ինչ ընկալան զնա ՚ի կրօնն լինել եղբայր աշխատաւոր: Զայս տեսեալ սրբուհւոյն մեքտիլդայ , խնդաց յոյժ , և յաւուր միում ասէ ցեղբայր իւր , մեծ է արդարև եղբայր իմ սիրելի վարձքն , զոր տալոց է մեզ տէր յղ̄ս թողլոյ մեր զհայր , և զմայր , և զընտանի [illegible] վ̄ սիրոյ նր̄ . բայց սակայն մեծագոյն եղիցին վարձք մեր , եթէ առյապայն ՚ի ժամանակս կենաց մերոց, որ մեզ մնայ , մի՛ ևս յաւելցուք տեսանել զմիմեանս յայս կենցաղ և մխիթարիլ, ո̄պզի ևևս հաճոյ գըտցուք ա̄յ , այլ յայսմ հետէ եղիցի մեզ տեսանել զմիմեանս միւսանգամ ՚ի հանդերձեալն : Զայս լուեալ եղբօրն հաւան ՚ի դառն արտասուս , և թուէր նմա դժուարին այն քան զայլ ամ̃ենէ՛ զոր թողեալն էր. սակայն զօրացեալ յամ̃ ՚ի բաց ընկէց զամ̃ խոչ և զխութ, և բաժանեցան ՚ի միմեանց, և ոչ յաճելին տեսանել զիրեարս ՚ի վ̃ երկրի: Արդ՝ բնակեցաւ աղէքսանդրոս ՚ի վանս, իսկ սրբուհի օրիորդն շինեաց սենեակ աղքատիկ ծածկեալ վերուստ ՚ի յարդից, հնդետասան մղոնիւք հեռի ՚ի վանացն, և բնակեաց ՚ի նմա. ուր ետ զանձն յանչափ վիշտս ճգնութեց. զի անկողին իւր էր մերկ գետինն, և զհաց իւր ուտէր ՚ի ծունկս անկեալ. և յաղօթս իւր յափշտակէր բազում անգամ ՚ի ժամս հարուստս այնչափ ՚ի խորս ամ̃ծային խոկմանց՝ մինչև ոչ լսէր զձայն որոտմանց, և ոչ տեսանէր ըզ փայլակմանցն զփայլատակիլ: Այլ աղէքսանդրոս եկաց զամ̃ ժամանակսն ՚ի վանս, և ոչ ոք ծանեաւ զնա՝ մինչ կենդանին էր. թէ ո՛ ոք իցէ. բայց յետ մահուն ծանօթս ետ կրօնաւորի միում այսու օրինակաւ. զի կրօնաւոր ոմն, որ ունէր զխաղաղաւոր ինչ դժնդակ ՚ի կուրծսն՝ գնաց ՚ի գերեզման սր̃բյ երիտասարդին մաղթել ՚ի նմանէ զբժշկութ̃: Եւ ահա մինչդեռ աղօթէրն, երևեցաւ սր̃բն լուսապայծառ փայլմամբ իբրև զարփի, և ունէր զերկու լուսաճաճանչ և գեղեցկատեսիլ պսակս զմինն ՚ի գլուխն, և զմիւսն յաջ ձեռին

Եւ 'ի հարցանել կրօնաւորին զնա, եթէ զինչ են պատկերդ այդոքիկ, ասէ, այս՝ զոր 'ի ձեռին ունիմ, է վարձքն յղ͞գս թողլոյ իմ զպսակին ժամանակաւոր թագաւորութեան վ͞ն ա͞յ · իսկ որ 'ի գլուխս է, վարձքն է հասարակ, որ տուեալ լինի ամ͞ սրբոց 'ի յերկինս ։ Եւ զի հաւատարիմ գացի այս տեսիլ, եղիցիս ողջացեալ 'ի վիրացդ, որ զքեզ չարչարէ ։ Եւ իբրև վերացաւ տեսիլն, գտաւ կրօնաւորն բոլորովին ողջացեալ ։ Ահաւասիկ ա͞մ որ ը͞ այսմ խոնարհեցուցանէ զանձն, և խոտէ վ͞ն սպասուելոյ զա͞ծ · բարձրասցի · և պատուեսցի առ յա͞յ ։

* * *

ԳԼՈՒԽ Խ. Թ.

Թէ որպէս ա͞յ ոչ թողացուցանէ մեզ սիրել զժամանակաւորս ։

Սինչև ցայս վայր հաւաքեցաք բանս իրաւացիս բանականս, և շարժառիթս ոչ սակաւ արհամարհելոյ զա͞մ կենցաղականս, և հեռի առնելոյ զսէր մեր 'ի նոյանէ · այնու՝ զի արհամարհք են ինքնին, և անցաւորք ։

այլայլակք, են և փոքունք. և վտանգաւորք։ Եւս, զի Քս̄ յանձն էառ զանչափ կիրս չարչարանաց առ ՚ի յորդորել զմեզ ՚ի յարհամարհումն նոցին. Այժմ առ ՚ի բոլորել զբանս մեր ՚ի վր̄ այսորիկ յաւելցուք և զայս, ո̄ր է, թէ և ունիցին ժամանակաւորքս զազնուութի̄ ինչ. այլ սակայն չէ արժան ամենևին սիրել զնոսին. որոյ պատճառն է. զի այնչափ մեծ է ՚ի վր̄ մեր պարտաւանդութիւն սիրելոյ զա̄ծ, մինչզի ոչ ներէ մեզ սիրել զայլ ինչ բաց ՚ի նմանէ։ Քանզի եթէ մի̄ր միոջէ վն̄ բարերարութե̄ց ոն̄, պարտիմք սիրել զնա յա̄մ սրտէ, և զա̄մ սէր մեր ՚ի նմա գումարել, ապա վն̄ անբաւ բարերարութե̄ց նորին ՚ի միասին առեալ զի՞նչ պարտիմք նմա, ոպ̄ և Դաւիթ ասէ. Զի՞նչ փոխարէն տաց Տն̄ ընդ ամ̄, զոր նա ետ ինձ։ Արդ՝ եթէ դաւիթ խոկայր միշտ, թէ զի՞նչ պարտի հատուցանել տն̄. և այն զի չէր ո̄յ առեալ նմա զմարմին և զարիւն իւր, և չէր մարմնացեալ և մեռեալ վն̄ նր̄. ապա ո՞րչափ արժան է մեզ յետ ընդունելոյ զանչափ երախտիս գթութե̄ հոգալ միշտ, և զցայգ և զցերեկ խոկալ ՚ի ձեռն սիրոյ վճարել ըս̄ կարի անբաւ և անճառելի բարերարութե̄ց նորին։

1. Իսկ սէրն ճշմարիտ կայանայ ՚ի գործս, ՚ի համբերութե̄, և ՚ի հաղոր-

դուն բարեաց: Արդ՝ Հայեաց, թէ որչափ մեծ եղև սէր ստեղծողին քոյ առ քեզ. որոյ արդիւնք գործոցն, զոր արարն քեզ, են մարմնանալ վն̄ քոյ, և փրկել զքեզ 'ի մեղաց և 'ի դժոխոց: Հայեաց. եթէ զիա՛րդ գործէ յամ̄ արարածս միայն վն̄ քոյ: Տե՛ս, եթէ զիա՛րդ տայ տարերց զգոլ. տնկոց զաճումն, կենդանեաց զզգալ, և հրեշտակաց զիմանալ, և ահա 'ի քեզ միայն գործէ զայս ամ̄. Զի պահէ զքեզ 'ի գոլ, տայ զկեանս, զզգայութիւն, և զիմանալ, գործելով 'ի քեզ զայն ամ̄, զոր գործէ յայլ ամ̄ ազգս արարածոց: Ուստի 'ի գործոցն երևի սէրն իւր, որովհետև քեզ, որ արժանի էիր մահու, և կորստեան, արար զայսպիսի մեծամեծ բարիս: Այնպէս հայեաց 'ի համբերուե̃ զսէրն իւր, զի կրեաց 'ի սէր քո դժնդակ տանջանս, և զմահ: Հայեաց և յայն, որով համբերեաց քեզ 'ի մեղանչելդ առ նա բիւրիցս, զի չէ փոքր նշանակ սիրոյ այս՛ քան զառաջինն: Արդ՝ եթէ համբերութի̃ն է փորձ սիրոյ. ապա ուր մեծ է համբերութի̃ն, անդ մեծ և ընտիր է սէրն: Ո՜վ եթէ թագաւոր ոք ընկալցի 'ի միոջէ 'ի ծառայից իւրոց վէրս յոլովս, և յետոյ ոչ միայն շնորհեսցէ նմա զայն այլև բիւր բարիս արասցէ նմա, և հասս և մուտս կարգեսցէ նմա մեծամեծս, մեծա, ո՛վ է, որ տեսեալ զայս ամ՟, ոչ պակուցու 'ի վր՟ անչափ սիրոյն. և ո՛վ է, որ ոչ ասասցէ, եթէ 'ի սէր նր՟ հարեալ է Թագաւորն այն: Ո՛վ սքանչելի մեծութե՟ համբերութե՟ ն՟ն, որ բխուր անդամ տեսանէ, զի 'ի խաչ հանեմք զորդին նր՟, զԹագաւորն փառաց, և զփրկիչն մեր, և սակայն մեծա լռէ, և համբերէ: Այն օրինակ տե՛ս զսէր նր՟ և անդ 'ի հաղորդելն մեզ զա՟մ բարիս իւր. զի ահաւասիկ հայր եւ մեզ զորդին իւր. և որդին զմարմին և զարիւնն իւր. և երկոքին առաքեցին առ մեզ զսր՟ հոգին, որ շնորհօքն տանէ զմեզ հաղորդս ա՟ծեղէն բնութե՟ն: Արդ՝ հայեաց, եթէ իցէ հնար 'ի միտ ածել զսէր ինչ եւս մեծագոյն, հարազատ, և անհամեմատ քան զայս. զոր ցուցանէ առ մեզ ա՟ծ, որով զոր ունի՝ հաղորդէ մեզ: Ե՞թէ սէրն սիրով վճարի, ապա զո՞րպիսի սէր վն՟ այսպիսի սիրոյ պարտիս այ՟:

3. Եւ դրձլ՟ յորժամ 'ի միտ ածեմք թէ ա՟ծ է յանհունս գեղեցիկ և կատարեալ. տեսանեմք, թէ յանհունս է սիրելի, և եթէ յանհունս է սիրելի, ապա և անհուն սիրով պարտ է մեզ սիրել զնա: Արդ՝ եթէ ընդունակութի՟ սրտից մերոց թէև լինէր անհուն. պարտ էաք այսու ամի՟ սիրել միայն զայսպիսի սիրելիս, և կատարեալս,

եալս, ապա որչափ ևս առաւել պարտիմք զնա միայն սիրել, և ոչ զմասնիկ ինչ սիրոյ առ կենցաղականս ձգել, որովհետև սիրտ մեր է չափաւո՛ր, և անձուկ։ Վա̃ղի այնչափ մեծ է և անհուն սիրելութիւն ա̃յ, մինչզի առ ՚ի առաւել սիրել զա̃ծ, և ոչ զանձինս մեր արժան է սիրել։ Արդ՝ եթէ ոչ է պարտ մեզ սիրել զանձինս մեր, ապա զիարդ կարեմք ձգել զսէր մեր առ այլ իրս ՚ի։ Ո՞վ որչափ ցնծայ հոգի իմ տ̃ր, յորժամ ՚ի միտ ածեմ, և տեսանեմ, զի այդչափ բարի ես և գեղեցիկ, և կատարեալ. և սկիզբն ես ա̃մ բարութե̃, կատարելութե̃, և գեղեցկութե̃։ Ուստի և արժան է, զի ոչ միայն յա̃մ արարածոց, այլև յինէն զերծցի սէր իմ, և ՚ի քեզ միայն դադարեսցէ, յորմէդ բղխի ա̃մ գոլ, և կատարելութի̃ իմ, ո̃պ շառաւի՛ղք յարեգակնէ, և ջուրք յականնէ։ Եւ՛ աստի յայտնանէ է. զի որ սիրէ զանձն, կորուսանէ զնա, և որ յանձին զօրութի̃ ապաւի՛նի, անկանի և կործանի։ Իսկ որ ատէ զանձն. գտանէ զնա, ո̃պ վկայեաց ա̃ծային բերան. թէ Որ կամիցի ապրեցուցանել զանձն իւր, կորուսցէ զնա, և որ կորուսցէ զանձն իւր վ̃ն աւետարանին, ապրեցուսցէ զնա։ (մարկ. 8. 35։)

4. Նաև աստի յայտնանէ յառաջգայ նկատել մարդոյ յանձն իւր ոչ իբրև

՚ի

՚ի սեպհականն ինչ իւր, այլ Թէ ը̃ս հոգևորին և Թէ ը̃ս մարմնաւորին ունիլ զա̃մ զգոլ իւր յա̃յ իբրև յանհունն աղբերէ գոլոյ և կատարելութե̃։ Աստի յառաջ գայ Թողուլ զերկրաւո՛րս. և դիմել ա̃մ զօրութբ̃ սիրոյն առ ա̃ծ. քանզի գտանի և ոչինչ սիրելի, և տարփալի բաց յա̃յ. վ̃զի ա̃մ բարութիք արարածոց՝ են գերազանցապ̃ ՚ի յա̃ծ։ Ուստի յորժամ մարդ ժամանէ յայս կացութի, ունի յա̃մ գործս իւր վախճան զնոյն ինքն զա̃ծ. զի կափուցանելով զաչս իւր առ այլ արարածս՝ ո̃պ Թէ ոչ իցեն, նկատէ միայն հաճոյ լինիլ ա̃յ։ Եւ զի որք ժամանեն յայս կացութի, ոչ խորհին զայլ ինչ, եԹէ ոչ առնել զկամս ա̃յ աստ ՚ի յերկրի այնպ̃, ո̃պ լինի ՚ի յերկինս. վ̃նկ ցանկան ելանել յերկրէ. և մտանել յերկինս առ ՚ի լրապէս կատարել զկամս ա̃յ։ Ուստի և ոչ ինչ տաղտկալի է նց̃, և ոչինչ ՚ի գործոց նոցա մնայ Թերի և անկատար։ Կան միշտ պատրաստք. և ունին բաց զականջսն ՚ի լսել զձայն տեառն, որ կոչէ զն̃ս, և բղձակերուք են բանալ վաղվաղակի զդուռն սրտից իւրեանց ՚ի բաղխելն նորին։ Արդ պատրաստեսցուք և մեք վ̃ այսպիսի գործոց զանձինս մեր, զերծցուք անջատեսցուք զսէր մեր ՚ի ժամանակաւորաց, զի մարԹասցուք յա̃ծ հաստատել։

տել : Սիրեսցուք զնա զօրաւոր , հաստատուն և աներեր սիրով , որով և կարող լիցուք բառնալ զա՟մ բեռն ծանրութե՟ , և յաղթել զա՟մ ընդդիմակ , և զդժուարութի՟ : Եւ արհամարհեսցուք զցանկալիս մարմնոյ և արեան առաւել քան բաժանիլ ՚ի սիրոյ նր՟ , կամ անցանել զօրինօք նր՟ թէև յիրս փոքրագոյնս : Զօրաւոր լիցի սէր մեր իբրև զմահ այնչափ մինչև ՚ի դիմի հարցէ նաև մահու խոկ , և զօրասցի ՚ի վր՟ նր՟ սիրով սիրեցելոյն : Եւ՛ զօրասցէ բարձրասցի բոց նր՟ այնչափ , մինչև ոչ զօրեսցեն ջուրք ա՟մ փորձութեց զնա շիջուցանել · այլ առաւել ևս բորբոքել :

5· Սորա է սեպհական գործ առնել , զի սիրեսցուք զաղքատութի՟ : Փաբեսցուք զմերկութ՟ , զսով , և զպապակութ՟ տօթոյ և ցրտոյ : Տարցուք հեզութ՟ հոգւոյ զպարտութեց և արհամարհանաց : Համբերեսցուք հիւանդութեց · զօրասցուք ՚ի հալածանս , և երկայնամիտ լիցուք ՚ի փորձութե՟ · օգնեսցուք եղբարց մերոց ՚ի կարիս նց՟ , և բարձցուք զբեռն նց՟ , և ոչ գարշեսցուք ՚ի տմարդութե՟ նց՟ · և կ՟մ տրտնջեսցուք զապերախտութե՟ նոցին և զզանցառութե՟ : Սորա է գործ առնել , զի մի ՚ի ժամանակի հոգևորական ցամաքութե՟ թողցուք զկրթութի՟ մեր աղօթական · և մի յղ՟գս մխիթարութե՟

հայեցողական կենաց · Ժողցուք զպարտաւորեալ գործս գործնական կենաց։ Զի կարող լիցուք ասել ը՟ առաքելոյն։ Ո՛վ կարէ մեկնել զմեզ՝ի սիրոյն Քի՟։ *Որում արժանի արասցէ զմեզ նոյն ինքն տր՟ մեր Յս՟ Քս՟, որում ը՟ Հօր, և սբ՟ Հոգւոյն վայելէ փառք, իշխանութի՟, և պատիւ · այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից, Ամէն։*

ՎԱԽՃԱՆ։

ՑԱՆԿ

Գլխոց առաջին գրոց։

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ։

Յաղագս զանազանութե՟ 'ի մէջ ժամանակաւորին, և յաւիտենականին ։ ա. 7
Թէ որչափ զօրաւոր իցէ մտածութիւն յաւիտենականութե՟ վասն փոխելոյ զվարս 'ի լաւ անդր։ բ. 15
Թէ յիշատակ յաւիտենականութե՟ ըստ ինքեան զօրաւորագոյն է քան զյիշատակ մահուան։ գ. 20
Յաղագս ողորմելի կացութե՟ մարդկան 'ի կեանս յայս . որք մոռանան զյաւիտենականութիւն։ դ. 31
Թէ զինչ իցէ յաւիտենականութիւն ըստ սբյն գրիգորի ածաբանին . և ըստ սբյն դիոնեսիոսի։ ե. 43
Թէ զինչ իցէ յաւիտենականութիւն ը՟ բոեսիոսի և ը՟ պղոտինոսի ։ զ. 49
Պարզաբանի, թէ զինչ իցէ յաւիտենականութիւն ը՟ մտաց սբյն բեռնարդոսի ։ է. 55
Թէ զինչ իցէ ոչ ունելն յաւիտենականութե՟ զվախճան։ ը. 64
Թէ յաւիտենականութիւն է անփոփոխ։ թ. 81.

Թէ

Թէ յաւիտենականութիւն է անհամեմատ, և անբաղդատ: գլ. Ժ. երես. 92

Թէ զինչ իցէ ժամանակն ը̃ արիստոտէլի, և ը̃ այլոց փիլիսոփայից. և յղ̃ս անկայունութե̃ն կենաց: Ժա̃. 100.

Թէ որչափ խոտելիք իցեն ա̃մ կենցաղականք վասն կարճութե̃ն ժամանակի: Ժբ̃. 106

Թէ զիարդ իցէ ժամանակն առ իթ յաւիտենական կենաց: Ժգ̃. 121

ՑԱՆԿ

Գլխոց երկրորդ գրոց:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Յաղագս զանազանութե̃ն 'ի մէջ ժամանակաւորին և յաւիտենականին: 132

Յաղագս վախճանի ժամանակաւոր կենացս: ա̃. 132

Յայտնի հանգամանք կատարածի առժամանակեայ կենացս: բ̃. 156

Յաղագս սարսափելի բոպէի կատարածի առժամանակեայ կենաց, որ է 'ի մէջ ժամանակի, և յաւիտենականութե̃ն: գ̃. 177

Թէ վա̃ է՞ր սարսափելի իցէ կատարած առժմկեայ կենացս: դ̃. 183

Թէ նաև յատի կեանս առնէ ա̃ծ բղ խստագոյն դատաստան: Ե: 214

Յղ̃ս կատարածի ա̃մ ժամանակի: զ̃. 222

Թէ ոչ փոփոխին տարերք և երկինք 'ի կատարածի աշխարհիս: գլ. Է. երես 226
Թէ զինչ լիցէ պատճառն զարհուրելի կատարածի աշխարհիս, յորում եղիցի ընդհանրական դատաստան մա̃ նորա: Ը̃. 248.
Յաղագս վերջնոյ աւուր ժամանակի: Թ. 252.

ՑԱՆԿ

Գլխոց երրորդ գրոց:

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ:

Յաղագս զանազանութե̃ 'ի մէջ ժամանակաւորին և յաւիտենականին: 270
Թէ արհամարհելիս գործէ զժամանակաւորս փոփոխականութի̃ն նոցա: Ա̃. 270.
Թէ և մեծամեծ և անյոյս 'ի փրկութե̃ լիցին ժամանակաւոր չարիքս, սակայն կարէ միշտ յոյս ինչ թեթեւս գործել զնա̃: Բ̃. 280
Թէ արժան է 'ի միտ ածել. եթէ յո̀ր պիտի սահման կարէ մարդ ժամանել: Գ̃. 284
Թէ փոփոխումն կենցաղականացս ցուցանէ զնոցին զունայնութի̃ և զանարգութի̃: Դ̃. 293
Յաղագս անարգութե̃ և Թիւրութե̃ ժամա-

մանակաւորաց․ և թէ որչափ թիւրեան 'ի կարգէ, որք սիրեցին զնա։ գլ, ն երես․ 295․
Յղ̃ս փոքրութե ժամանակաւորաց։ դ̃․ 304․
Թէ որչափ աղէտալի, և լի թշուառութե̃ իցէ ժամանակաւոր կեանքս։ է̃․ 316․
Սովք մեծամեծք․ յօդ․ դ̃․ 321
Աղէտք պատերազմաց։ յօդ․ դ̃ 324
Թշուառութիւնք, որք լինին 'ի կրից մարդոյն։ յօդ․ ե̃ 326
Թէ որչափ դուզնաքեայ ինչ է մարդն գոլովն ժամանակաւոր։ ը̃․ 333
Թէ որչափ պատրողական են ժամանակաւորքս։ թ̃․ 337
Յաղագս մեծամեծ վնասուց, զորս առնեն իբր ժամանակաւորք։ ժ̃․342

ՅԱՆԿ

Գլխոց չորրորդ գրոց։

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

Յաղագս զանազանութե̃ 'ի մէջ ժամանակաւորին և յաւիտենականին։ 348
Յաղագս մեծութե̃ յաւիտենականաց։ ա̃․ 348․
Յաղագս մեծութե̃ յաւիտենին փառաց արդարոց․ բ̃․ 361

Յա-

Յաղագս ճոխութե՟, և անանց թագաւորութե՟ն երկնից: գլ. Գ. Երես 368
Յաղագս մեծութե՟ յաւիտենական ուրախութե՟ց: Դ. 374
Յաղագս գերազանցութե՟, և կատարելութե՟ մարմնոց սրբոց ’ի կեանսն յաւիտենից: Ե. 380
Յղ̃ս խնդրելոյ զերկնից արքայութի՟ն, և նախամեծար առնելոյ զայն քան զա̃մ կենցաղական բարիս: Զ. 391
Յաղագս յաւիտենից չարեաց, և մանաւորապէս յղ̃ս մեծի աղքատութե՟, անարգութե՟, և խայտառակութե՟ դատապարտելոց: Է. 396
Յղ̃ս պատժոյ տարագրութե՟ մեղաւորաց յերկնից արքայութե՟, և բանտարկեալ լինելոյ նց̃ ’ի դժոխս ’ի տեղին երկիւղագին: Ը. 405
Յաղագս գերութե՟, գանից. և անվախճան պատժոց: Թ. 418
Յաղագս յաւիտենական մահուան: Ժ. 439.
Պտուղն. զոր հաւաքել պարտիմք ’ի խոկմանէ անտի յաւիտենից չարեաց: ԺԱ. 446.
Յաղագս անհուն մեծութե՟ մահուչափ մեղաց. որով կորնչին անեզրական բարութիք երկնից արքայութե՟, և դրաւին չարիք անվախճան գեհեննին: ԺԲ. 453.

ՑԱՆԿ

ՑԱՆԿ

Գլխոց հինգերորդ գրոց։

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Յաղագս զանազանութե՟ն 'ի մէջ ժամանակաւորին, և յաւիտենականին։ 473

Յղ՟ս մեծի զանազանութե՟ն ժամանակաւորին և յաւիտենականին վս՟ լինելոյ միոյն վախճան, և միւսոյն ճնպհ՟ առ այն։ Եւ՝ յղ՟ս վերջին վախճանի, վս՟ որոյ ստեղծաւ մարդն։
գլ. ա՟. երես 473.

Թէ 'ի սեպհական ճանաչմանէ անձին, կարէ մարդ ճանաչել, եթէ զիարդ պարտի 'ի կիր առնուլ զժամանակաւորս, և զիարդ պարտի արհամարհել զնս՟։ Բ՟. 484.

Թէ նկատմարդկութե՟ն որդւոյն ա՟յ ցուցանէ մեզ մեծ իմն վարկանել զյաւիտենականս։ Գ՟. 489

Թէ չարչարանք և մահ տեառն Յի՟ ցուցանէ զանարգութի՟ ժամանակաւոր բարեացս։ Դ՟. 497

Թէ որչափ արժան է մեծ համարել զյաւիտենականս, որովհետև կամեցաւ ա՟ծ լինել միջնորդ առ 'ի շահել զայն սահմանելովն զմարմին և զարիւն իւր որդ՟ զգրաւ վս՟ նր՟։
Ե՟. 506.

Թէ

Թէ նպատակ աղօթից մերոց պարտին լինել անեղրական և մշանջենաւոր բարիք. և թէ զիարդ խնդրելի են ժամանակաւորքս։ գլ. դ. երես 517

Թէ որչափ երջանիկ են նոքա, որք հրաժարին 'ի ժամանակաւոր բարեաց առ 'ի ապահովս առնել զյաւիտենականսն։ Է։ 522

Բազումք են, որք արհամարհեցին ըզժամանակաւորս, և հրաժարեցան 'ի նոցանէ։ Ը· 528

Թէ սէրն այ ոչ թողացուցանէ մեզ սիրել զժամանակաւորս։ Թ·538

[illegible]

Господи[illegible]
Ивановъ
[illegible]

[illegible]
[illegible]